

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բան. գիտ. թեկն.

ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ  
ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրաբար, բայական կայուն կապակցություններ, դարձվածային միավորներ, իմաստային հարաբերություններ, հականշություն, իմաստային հակադրություններ, հականշային շարքեր, հականշահոմանշային շարքեր, հուզարտահայտչական գունավորումներ, խոսքային միջավայր:

**Ключевые слова и выражения:** Грабар, глагольный устойчивые сочетания, фразеологические единицы, семантические отношения, онтанимия, семантические противопоставления, антонимические ряды, антонимосинонимические ряды, экспрессивно-эмоциональные оттенки, речевая среда.

**Key words and expressions:** old Armenian, verbal stable compounds, phraseological units, Semantic relations, antonymy, semantic contrasts, synonymic – antonymic lines, emotionally expressive coloring.

Բայական կայուն կապակցությունները (հետայսու՝ ԿԿ) երկու կամ ավելի բաղադրիչներով ձևավորված (մասամբ կամ ամբողջությամբ) վերաիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություններ արտահայտող պատրաստի վերարտադրելի կառույցներ են, որոնց քերականական արժեքը որոշվում է գերադաս բաղադրիչների խոսքիմասային պատկանելությամբ. այդ կարգի ԿԿ-ների գերադաս անդամն անպայման բայ է<sup>1</sup>:

ԿԿ-ներում ընդհանրապես, գրաբարի այդօրինակ միավորներում մասնավորապես մեծամասնություն են կազմում բայի խոսքիմասային նշանակությամբ արժևորվող կապակցությունները:

Առհասարակ ԿԿ-ների իմաստաբանական ուսումնասիրությունն իմաստային-քերականական մի շարք յուրահատկությունների հետ մեկտեղ

---

<sup>1</sup> Հմմտ. Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 186:

թույլ է տալիս վեր հանել խնդրո առարկա կապակցությունների ներսում, ինչպես նաև նրանց միջև առկա իմաստային հարաբերությունները:

Այս տեսանկյունից կարելի է քննել ինչպես ԿԿ-ների մենիմաստությունը և բազմիմաստությունը, այնպես էլ այդօրինակ կառույցների միջկապակցական իմաստային (մասնավորաբար՝ հոմանշային և հականշային) փոխհարաբերությունները: Ըստ որում, ԿԿ-ների իմաստաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չի կարելի հստակ անջրպետ դնել այդ կարգի իմաստային հարաբերությունների միջև. ԿԿ-ների բազմիմաստությունը և հոմանշությունը, բազմիմաստությունը և հականշությունը<sup>2</sup>, ինչպես նաև հոմանշությունը և հականշությունը սերտորեն փոխկապակցված են:

Սույն հոդվածում քննարկվում է բայական ԿԿ-ների հականշությունը գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով<sup>3</sup>: Կատարվում է բայական հականշային ԿԿ-ների դասակարգում ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների, դիտարկվում են այդօրինակ կապակցությունների հականշային երկանդամ և բազմանդամ շարքերը, ինչպես նաև ներկայացվում են հականիշ ԿԿ-ների իրացումները խոսքաշարում: Ըստ որում, մեր ուսումնասիրության ծիրի մեջ ընդգրկված են ինչպես գրաբարի ոչ փոխաբերական հարադրական բայերի, այնպես էլ դարձվածային միավորների, այդ թվում՝ իդիոմատիկ արտահայտությունների<sup>4</sup> իմաստային-հականշային հարաբերությունները:

Ընդհանրապես ԿԿ-ների հականշությունը, հոմանշության համեմատությամբ, ավելի քիչ տարածված և առավել պակաս հետազոտված լեզվական իրողություն է:

---

<sup>2</sup> Բայական ԿԿ-ների միջև առկա այդօրինակ իմաստային հարաբերությունների վերաբերյալ տե՛ս մեր հոդվածը՝ Գրաբարի բայական դարձվածային միավորների բազմիմաստությունը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «Միմ տպ.», 2011, էջ 30-37:

<sup>3</sup> ԿԿ-ների հոմանշությունը և հականշությունը համաժամանակյա (սինխրոնիկ) լեզվական իրողություններ են:

<sup>4</sup> Լեզվաբանական գրականության մեջ հայերենի կայուն բառակապակցությունները բաժանվում են հետևյալ խմբերի. 1. բաղադրյալ անվանումներ, 2. դարձվածային արտահայտություններ, 3. ոչ փոխաբերական հարադրական բայեր, 4. դարձվածքներ (տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., ՀՊՄԻ, 1990, էջ 5):

Թե՛ բառերի, թե՛ ԿԿ-ների իմաստաբանական այս խումբն օժտված է իմաստային բևեռայնության ներունակությամբ. հականշության համար անհրաժեշտ է հասկացական հակադրություն:

Ե՛ւ հականիշ բառերը, ն՛ հականիշ ԿԿ-ները ձևով տարբեր (կամ մասամբ տարբեր) են լինում, սակայն կարևորը նրանցում առկա ընդհանուր իմաստային հակադրությունն է:

Առհասարակ թե՛ բառերի, թե՛ ԿԿ-ների հականշային շարքի անդամների միևնույն խոսքիմասային պատկանելությունն անհրաժեշտություն է:

Հին հայերենում առկա են գոյականական, ածականական, բայական և մակբայական հականշային ԿԿ-ներ:

Անդրադառնանք բայի խոսքիմասային նշանակությամբ արժևորվող հականշային ԿԿ-ներին:

**Ա. Բայական հականիշ ԿԿ-ների դասակարգումն ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների:** Ընդհանրապես իմաստային հակադրություն արտահայտող ԿԿ-ները կազմության տեսանկյունից բնութագրվում են իրենց բառային կազմի, շարահյուսական կառուցվածքի ընդհանրություններով և տարբերություններով<sup>5</sup>:

Գրաբարի բայական հականշային ԿԿ-ներում եզակի են այն կառույցները, որոնցում իմաստային հակադրությունը կարող է դրսևորվել գերադաս կամ ստորադաս անդամների միջոցով, թեև ԿԿ-ների հականշությունն ընդհանրապես ոչ թե նրանց առանձին բաղադրիչների, այլ նրանց ընդհանուր իմաստային հակադրության հետևանք է:

Հմնտ. հետևյալ հականշային ԿԿ-ները, որոնցում իմաստային բևեռայնությունը դրսևորվում է գերադաս բաղադրիչների միջոցով. իբրև զծուխ **պակասել** (շատ արագ սպառվել՝ պակասել) - իբրև զաստեղս **բազմանալ** (շատ արագ բազմանալ), **ելանել** ըստ ձեռն ուրուք (մեկի ենթակայությունից դուրս գալ՝ ազատվել) - **մտանել** ընդ հնազանդութեամբ // ընդ լծով (մեկի լծի տակ ընկնել, հնազանդվել), **զհետ մտանել** որպես առիծ ընդ նապաստակ (համառորեն հետապնդել) - **խորշել** իբրև ի պղծութեանց (խիստ խորշել, փախչել, խուսափել):

Ստորև բերվող հականիշ ԿԿ-ներում իմաստային հակադրությունն արտահայտվում է կախյալ կամ ստորադաս բաղադրիչների միջոցով.

---

<sup>5</sup> Հմնտ. Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու. Բառ և խոսք, Եր., «Լույս» հրատ., 1978, էջ 162, Լ. Մ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 65:

**Ի վեգ** գալ (վիճել, համառել) - **հաւան** լինել (իմ) (հաշտվել, համաձայնել), **խրախ** առնել (ուրախացնել) - **կոծ** ջերմացուցանել (տխրեցնել):

**Ուշ** առնել (ուշադրություն դարձնել) - **անտես** առնել, **ապախտ** առնել (անտեսել, արհամարհել) ԿԿ-ներում իմաստային բևեռայնությունն արտահայտվում է միմիայն ստորադաս բաղադրիչներով:

Ուշագրավ է եզակի հետևյալ հականշային գույգը, որում իմաստային հակադրությունն ի հայտ է գալիս -**ան** ժխտական նախածանցի միջոցով. **փոյթ** առնել (հոգ տանել, ուշադրություն դարձնել) - **անփոյթ** առնել (անտեսել, անուշադրության մատնել):

Գրաբարում սակավադեպ օրինակներից է **կապարձս դարձուցանել** (ապստամբել) - **դարձուցանել զսուր ի պատեան** (հաշտվել, խաղաղություն հաստատել) բայական ԿԿ-ների հականշային գույգը, որում իմաստային հակադրություն է մտցնում բայ գերադաս բաղադրիչ՝ ուղևորման հայցականով արտահայտված լրացումը:

Հին հայերենում հազվադեպ օրինակներից են **արն կրել** (ապրել) - **անկանել յարևէ** (մեռնել) հականշային ԿԿ-ները, որոնք իրենց կազմում ունեն տարբեր հոլովներով դրված ընդհանուր բաղադրիչ:

Գրաբարում երբեմն բայական ԿԿ-ների և՛ գերադաս, և՛ կախյալ բաղադրիչները միաժամանակ կարող են հականշություն արտահայտել, հմմտ. **իբրև զձին սպիտակել** (չափազանց սպիտակել) – **իբրև զածուխ սևանալ** (խիստ սևանալ):

ԿԿ-ներն ընդհանրապես կարող են նաև իրենց բառային կազմով միանգամայն տարբեր լինել՝ հակադրություն արտահայտելով գուտ իրենց ընդհանուր իմաստներով՝ անկախ բառային ուղղակի հակադրություններից<sup>6</sup>:

Հմմտ. **սրտակաթ առնել** (գերել, հմայել, գրավել) - **յետս հարկանել** (մերժել, վանել), **կապարձս դարձուցանել** (ապստամբել) - **գալ ըստ բանի ուրուք** (ենթարկվել, հնազանդվել, հաշտվել), **ուշ ունել (իմ)** (մնալ, սպասել) – **ի փախուստ դառնալ** (հեռանալ, փախչել), **լքանել (իմ) ի սիրտ** (հուսահատվել) - **կալ պնդակազմ** (դիմանալու ներքին ուժ ունենալ, հուսալ) և այլն:

Մասնագիտական գրականության մեջ իմաստային առումով տարբերակվում են

---

<sup>6</sup> Հմմտ. А. М. Эмирова, Об антонимических противопоставлениях в сфере фразеологии, Сб. Вопросы семантики фразеологических единиц, ч. 1, Новгород, ЛГПИ, 1971, էջ 175:

ա) լիարժեք հականիշներ, որոնց բնորոշ են բառային իմաստի լրիվ հակադրությունը, առարկայական միանման հարաբերակցությունը և ոճական միևնույն առանձնահատկությունը, սակայն դրանք, որպես կանոն, շատ չեն, հմտո. **փոյթ առնել** (հոգ տանել) - **անփոյթ առնել** (անտեսել, անուշադրության մատնել), **ի մտի արկանել** (հիշել) - **մոռացոս առնել** (մոռանալ), **յակն առեալ սիրել** (չափազանց շատ սիրել) - **բերել ատելութիւն** (խիստ ատել), **իբրև զծուխ պակասել** (արագ սպառվել) - **իբրև զաւագ բազմանալ** (արագ բազմանալ) և այլն,

բ) նշված կողմերից որևէ մեկով տարբերվող հականիշներ, որոնք ավելի մեծ թիվ են կազմում<sup>7</sup>, հմտո. **արև կրել** - *խսկց.* (ապրել) - **առնուլ զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս, ի հաւիտենական հանգիստ մտանել** - *գրք.* (մեռնել), **պահել իբրև զմարգարիտ պատուական** - *գրք.* (իբրև ամենաթանկագին բան պահել - պահպանել) - **առ ոչինչ համարել** - *համագործած.*, **առ ոտն կոխել** - *խսկց.* (արհամարհել, դեն նետել), **բանալ զբերան** - *համագործած.* (խոսել, ձայն հանել) - **պապանծել որպէս համր դև** - *գրք.* (լռել, պապանծվել), **ածել ի համբոյր և ի քծինս** - *գրք.* (շողոթորթել) - **թիկունս դարձուցանել** - *գրք.* (արհամարհել), **ձեռն տալ** - *համագործած.* (օգնել) - **խանգար առնել** - *համագործած.* (խանգարել), **ճակատ յուզել** - *համագործած.* (կռիվ պատերազմ բորբոքել) - **դարձուցանել զտուր ի պատեան** - *գրք.* (խաղաղություն հաստատել), **խրախ առնել** - *համագործած.* (ուրախացնել) - **բանիք խոցել որպէս սրով** - *գրք.* (վիրավորել՝ տխրեցնել) և այլն:

**Բ. Բայական ԿԿ-ների հականշային շարքերը:** Ինչպես ԿԿ-ներում ընդհանրապես, այնպես էլ գրաբարի բայական ԿԿ-ներում մասնավորապես տարբերակվում են հականշային երկանդամ և բազմանդամ շարքեր: Ըստ որում, առհասարակ ԿԿ-ների հականշային շարքն ընդգրկում է նվազագույնը երկու անդամ:

Հմտո. բայական ԿԿ-ների հետևյալ հականշային զույգերը. **սրտակաթ առնել** (գերել, հմայել) - **յետս հարկանել** (վանել), **ի մտի արկանել** (հիշել) - **մոռացոս առնել** (մոռանալ), **ի վեգ գալ** (վիճել, համառել) - **հաւան լինել (իւ)** (համաձայնել) և այլն:

Առհասարակ ԿԿ-ների հականշային շարքերին անդրադառնալիս հարկ է դրանք քննարկել հոմանշային շարքերի հետ զուգընթաց. հականիշ ԿԿ-ները մյուս ԿԿ-ների հետ մտնում են հոմանշային հարաբերությունների մեջ՝ կազմելով հականշահոմանշային յուրօրինակ շարքեր:

<sup>7</sup> Հմտո. Օ. Մ. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, Ленинград, ЛГУ, 1973, էջ 9:

Գրաբարի բայական ԿԿ-ների համար առավել հատկանշական են հականշային բազմանդամ շարքերը՝ պայմանավորված այդօրինակ կապակցությունների հոմանիշներով, ինչպես նաև տարբերակներով հարուստ լինելու հանգամանքով:

Հմնտ. **Ձեռտ մտանել որպէս առիծ ընդ նապաստակ, որպէս փախստէից հետամուտ լինել (իմ)** (համառորեն հետապնդել) - **Փախստեայ լինել (իմ), թիկունս դարձուցանել** (խուսափել, փախչել):

**Փոյթ առնել // ~ յանձին ունել (իմ), միտ ուշ դնել // առնել, սպաս ունել (իմ) // տանել (իմ), պահել իբրև գնարգարիտ պատուական // ~ իբրև զբիբ ական (հոգ տանել, ուշադիր լինել, իբրև ամենաթանկագին բան պահել - պահպանել) - Անփոյթ առնել, յետս ընկենուլ, առ ոչինչ գրել // համարել, զանց առնել զումեքէ (զիմեքէ), առ ոտն կոխել, իբրև զաւելորդ ի բաց թքանել, հրաժարել իբրև ի պղծոյ (անտեսել, արհամարհել, խուսափել):**

**Ակն առնուլ, պատուել ոք իբրև զԱստուած, իբրև զԱստուած փառաւորել (ակնածել, խիստ պատվել, փառավորել) - Ապախտ առնել, անցանել ընդ բանիքն նորա, անտես առնել զխրատու (արհամարհել, խոսքը՝ խրատն անտեսել):**

**Ելանել ըստ ձեռն ուրուք, կապարճս դարձուցանել, ճակատ յուզել, եղջիր ւծել (հոխորտալ, ապստամբել) - Գալ ըստ բանի // կամաց // կարծեաց ուրուք, դարձուցանել զտուր ի պատեան, դաշնաւոր լինել (իմ), մտանել ընդ հնազանդութեամբ // լծով, ի ծառայութիւն կալ, սպասաւորել հրամանի, ծառայել իբրև Աստուծոյ (ենթարկվել, ծառայել):**

**Խրախ առնել, տալ քաջալերս // ~ թևս որպէս զաղանուոյ (ուրախացնել, խիստ ոգևորել) - Քան զփուշ ևս չար կտտել, բանիք խոցել որպէս սրով, կոճ ջերմացուցանել, խոցոտել ի մահ (տխրեցնել՝ վհատեցնել, խոր խոցել՝ վիրավորել):**

**Դարձեալ լինել (իմ), դառնալ ընդ կրունկն (վերադառնալ) - չու առնել, ի չու // յուրի անկանել (իմ), հատուած գնալ, թափել յերկրէ (հեռանալ, գաղթել):**

**Ձեռն տալ, օգնել որպէս եղբայր սիրելի (օգնության ձեռք մեկնել) - խանգար // հալածական առնել (խանգարել՝ հալածել):**

**Ողն բեկանել, լքանել ի սիրտ (խիստ թուլանալ՝ հուսահատվել) - կալ պնդակազմ // ժոյժ (դիմանալու ներքին ուժ ունենալ):**

**Գալ ի ծնունդ // յաշխարհ (ծնվել) - անկանել (իմ) ընդ մահուամբ, յաճին վախճանել, վճարել զկենցաղս, ի հող դառնալ (մեռնել) և այլն:**

**Գ. Բայական հականիշ ԿԿ-ները խոսքային միջավայրում:** Հականշային երկանդամ և բազմանդամ շարքերի անդամներից յուրաքանչյուրը կարող է օժտված լինել տարբեր հուզարտահայտչականությամբ և գործառվել խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում:

Գեղարվեստական երկերում առավել արտահայտիչ են դրսևորվում հականշային ԿԿ-ների հուզարտահայտչական տարբեր գունավորումները:

Ստորև բերվող բնագրային օրինակներում ակնառու է խնդրո առարկա հականշային ԿԿ-ների բազմերանգությունը:

1. Օր ըստ օրէ յորդորէր գնոսա **կալ պնդակազմ** ի գործն առաջարկեալ և մի՛ ինչ երկմտութեամբ ստգտանել զանձինս (ՂԵ., ԼԴ):

Եւ իբրև եհաս զրոյց պարտութեան գնդին ի քաղաքն Կարնոյ՝ յայնժամ **լքաւ սիրոտ** արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թոյլ ետուն պաշարման քաղաքին (ն. տ.):

2. Եւ իսկոյն **առեալք զհրաժեշտ մեղանչական կենցաղոյս՝** փոխեցան ի հանդերձեալ յուսոյն ակնկալութիւնն երանելի և քաջ նահատակքն (ՂԵ., ԼԴ): Վասն որոյն յանցմանն **անկաներ ընդ մահուամբ** (Եզն., 73):

Եւ յէգս մարդկան և յանասնոց տնկեալ սերմանք **զան ի ծնունդս** և ի յաճումն (Եզն., 210): Զի որ լաւ որ **եկեալ յաշխարհ** մեռանէր ... զպատկերն ի նկարու հանէին (Եզն., 206):

3. Իսկ յերկին Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի **ժուժկալ լինիցի** բերդին, և մի՛ **ձեռս տացէ** ի պարսիկս (Բուզ., IV, ԾԵ)<sup>8</sup>:

4. **Օգնեսցես** մեզ, **որպէս** արդարև **եղբայր սիրելի** (Խոբ., 334):

Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնէլոյ, և բազում անգամ **հալածական առնէր** զնա (Բուզ., IV, ԺԵ):

5. Եւ գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, **տային քաջալերս** տիկնոջն (Բուզ., IV, ԾԵ): **Տայր** ինձ որ **թնս որպէս զաղաւնոյ** (Ագաթ., 309):

**Բանիք** իւրեանց **խոցեն որպէս սրով** (ԱԲ, 121):

6. Եւ միւսն ... **ածէ ի համբոյր և ի քծինս** (Եզն., 69):

Այլ **ապախտ առնէիք** զխորուրդս իմ, եւ յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք (Առակ Ա.):

Այսպիսով՝

---

<sup>8</sup> Խոսքում բազմիմաստ ԿԿ-ն յուրաքանչյուր դեպքում հանդես է գալիս իր իմաստներից որևէ մեկով: Որքան իմաստներ ունի տվյալ ԿԿ-ն, այնքան հոմանշային և հականշային շարքեր կարող է կազմել: Վերը բերված **ժուժկալ լինել(իմ)** և **ձեռն տալ** ԿԿ-ները բազմիմաստ են, ունեն համապատասխանաբար՝ 1. *դիմանալ մի բանի*, 2. *պահպանել, պաշտպանել* և 1. *օգնել*, 2. *զիջել, խոնարհվել* իմաստները: Տվյալ խոսքային միջավայրում խնդրո առարկա ԿԿ-ները հանդես են եկել իրենց երկրորդ իմաստով:

1. Հականշային ԿԿ-ները կարելի է դասակարգել նաև ըստ խոսքիմասային արժեքի:

Գրաբարի ԿԿ-ներում գերակշիռ մեծամասնություն կազմող բայական ԿԿ-ները ևս դրսևորում են հականշային հարաբերություններ՝ ի հայտ բերելով իմաստային բևեռային հակադրություններ:

2. Խնդրո առարկա ԿԿ-ներում ըստ կազմության տարբերակվում են՝ ա) իրենց բառային կազմում հականիշ (թե՛ գերադաս, թե՛ կախյալ) բաղադրիչ ունեցող, բ) իրենց բառային կազմով լիովին տարբեր հականշային ԿԿ-ներ:

3. Ըստ իմաստային դիտվածքի առանձնացվում են բայական լիարժեք և ոչ լիարժեք հականշային ԿԿ-ներ:

4. Հականշային ԿԿ-ները, հումանշային հարաբերությունների մեջ մտնելով այլ ԿԿ-ների հետ, կազմում են հականշահումանշային ուշագրավ շարքեր:

5. Հականշային ԿԿ-ները հատկանշվում են խոսքի ինչպես նույն, այնպես էլ տարբեր ոճերում հանդես գալու հնարավորություններով, հուզարտահայտչական տարբեր գունավորումներով:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Տիփլիս, 1909:

Առակ Ա. - Առակք Սողոմոնի որդոյ Դաւթի թագաւորի Իսրայելի, Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, Երևան, 1997:

Բուգ. - Փաստոսի Բուգանդացոյ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզն. - Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տիփլիս, 1913:

Ղեւ. - Պատմություն Հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի, Ս. Պետերբուրգ, 1888:

Օգտագործված գրականություն

1. Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, Բառ և խոսք, Եր., «Լույս» հրատ., 1978:

2. Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., ՀՊՄԻ, 1990:
3. Լ. Ս. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996:
4. О. М. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, АКД, Ленинград, ЛГУ, 1973.
5. А. М. Эмирова, Об антонимических противопоставлениях в сфере фразеологии, Сб. Вопросы семантики фразеологических единиц, ч. 1, Новгород, ЛГПИ, 1971.

Լիլիթ Ավետիսյան

Հականշությունը գրաբարի բայական կայուն կապակցություններում  
Ամփոփում

Գրաբարի բայական հականիշ ԿԿ-ները իրենց բառային կազմով հիմնականում միանգամայն տարբեր են և հականշություն են արտահայտում զուտ իրենց ընդհանուր իմաստներով՝ անկախ բառային ուղղակի հակադրություններից:

Բայական հականշային ԿԿ-ները, հոմանշային հարաբերությունների մեջ մտնելով այլ ԿԿ-ների հետ, կազմում են հականշա-հոմանշային ուշագրավ շարքեր:

Խոսքային միջավայրում առավել արտահայտիչ են դրսևորվում հականշային ԿԿ-ների հուզարտահայտչական տարբեր գունավորումները և իմաստային հակադրությունները:

Лилит Аветисян

#### **Антонимия в глагольных устойчивых сочетаниях грабара**

Глагольные устойчивые сочетания (УС) грабара в основном совершенно разные и семантическую противоположность выражают часто своими общими значениями, независимо от своих лексических прямых противопоставлений.

Глагольные антонимичные УС вступают в синонимические связи с другими УС, образуя антонимо-синонимические своеобразные ряды.

Экспрессивно-эмоциональные оттенки, семантические противопоставления антонимичных УС более ярко проявляются в речевой среде.

Lilit Avetisyan

**The antonymy in verbal stable compounds of old Armenian**

In general the verbal antonymic stable compounds (SC) of old Armenian by their lexical structure are different at all and express contrast by their general meanings, independently lexical direct contrasts.

The verbal antonymic SC are included into synonymic correlation with other SC making certain synonymic – antonymic lines.

Different emotionally expressive colorings, semantic contrast of antonymic SC are more brightly demonstrated in speech environment.

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բան. զիտ. թեկն.

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԱԾԱԿԱՆ // ԳՈՅԱԿԱՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱԲԱՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** բարդ բառեր, երկարժեք բառեր, ածական // գոյական տարարժեքություն, վերջնաբաղադրիչ, արմատական վերջնաբաղադրիչ, բայարմատ վերջնաբաղադրիչ, բայահիմք վերջնաբաղադրիչ, բայի առաջին հիմք, բայի երկրորդ հիմք:

**Ключевые слова и выражения:** сложные слова, полисематичные слова, полисемия прилагательного//существительного, последний компонент, коренной последний компонент, последний компонент глагольного корня, последний компонент глагольной основы, первая основа глагола, вторая основа глагола.

**Key words and expressions:** compound words, Divalent words, Noun/ Adjective multi-valency, Immediate constituent, Verb stem immediate constituent, immediate constituent of a base form of the verb, Primary stem of the verb, Secondary stem of the verb.

Գրաբարում կան բառեր, որոնց ձևաբանական արժեքը երկփեղկված է տարբեր խոսքի մասերի միջև. դրանք հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումներով: Այդ բառերը կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր, իսկ քերականական երևույթը՝ խոսքիմասային տարարժեքություն<sup>1</sup>:

Լեզվաբանական գրականության մեջ հին հայերենի մակարդակում մեզ հետաքրքրող հարցին անդրադարձել են գրաբարի քերականները:

Խոսքի մասերի հարաբերակցության մասին խոսելիս Մ.Սեբաստացին առանձին-առանձին սահմանում է գոյականը՝ իբրև «մասն բանի, որ զեություն իրին նշանակէ», և ածականը՝ իբրև «ձայնք նշանականք, որք միշտ նշանակեն զինչությունս և կամ զորպիսությունս իրաց»<sup>2</sup>, գոյականի և ածականի միջև դնում է «միջական» անունները, որոնք հանդես են գալիս մերթ ածականի արժեքով, մերթ՝ գոյականի<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 32-33: Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 39:

Գ.Ջահուկյանն այդ կարգի բառերը անվանում է երկակի և եռակի գործածություն ունեցող բառեր (երկգործառույթ և եռագործառույթ բառեր) (տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 526-527):

<sup>2</sup> Մ. Սեբաստացի, Քերականություն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 193, 231:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 226:

Մ.Չամչյանը, ած./գոյ. արժեքներ համատեղող բառերի պարագայում գործածում է «միջակք» տերմինը՝ նշելով, որ որոշ անուններ, թեև ընդհանրապես գոյական են համարվում, սակայն մասնավորաբար կարող են գործածվել որպես ածական<sup>4</sup>:

Ներկա հոդվածում ձևախմբատային հայեցակետից քննության են առնվում գրաբարի ած./գոյ. արժեքներ համատեղող բարդ բառերը, որոնց խոսքիմասային տարարժեքությունը պայմանավորված է վերջին բաղադրիչի բառակազմական նշանակությամբ:

Երբ խմբավորում ենք այդ բառերը ըստ վերջին բաղադրիչի, ի հայտ են գալիս ընդհանուր վերջնաբաղադրիչով բառաշարքեր: Ըստ այդմ կարելի է առանձնացնել հետևյալ բարդությունները՝

- ա) արմատական վերջնաբաղադրիչով,
- բ) բայարմատ վերջնաբաղադրիչով,
- գ) բայահիմք վերջնաբաղադրիչով:

**Ա. Արմատական վերջնաբաղադրիչով երկարժեք բառեր:** Տարարժեք բառերի կառուցվածքում իբրև արմատական վերջնաբաղադրիչներ հանդես են գալիս **ագն(ագուն), բան** և այլ բառեր:

Բարդության բաղադրիչներն արտահայտում են «նախատիպի ցույց տված առարկան՝ երևույթը ունեցող» կամ «նախատիպի ցույց տված հատկանիշն ունեցող» բառակազմական նշանակություններ: Երկու դեպքում էլ բարդությունն ունի անձանիշ նշանակություն՝ գոյականի և ածականի խոսքիմասային արժեքներով:

**Ագն/ագուն** վերջնաբաղադրիչով կազմություններն արտահայտում են «բարձրաստիճան ծագում ունեցող» նշանակություն, ինչպես՝ **արքայագն (արքայագուն), դիցագն (դիցագուն), թագաւորագն (թագաւորագուն), սկայագն (սկայագուն)** և այլն:

Հմմտ. **Արքայագն (արքայագուն)** – ած./գոյ. Թագավորական ցեղից՝ տոհմից սերած, թագավորի ազգական, արքայորդի. ած. Թէև սակաւք շարագրեցան, Այլ **արքայագունք** են (Նար., 96): գոյ. **Արքայագունքն** ամենայն բերէին իղս անուշունս (Ագաթ., 396):

**Բան** վերջնաբաղադրիչով բարդություններն արտահայտում են «գիտության, արվեստի որևէ ճյուղի մասնագետ՝ այս մասնագիտությունն ունեցող» բառակազմական նշանակություն, ինչպես, ինչպես՝ **առասպելաբան, աստուածաբան, պատմաբան** և այլն:

<sup>4</sup> Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 156:

Հմնտ. **Աստուածաբան** - ած. 1. Աստծո վարդապետությունը դավանող. Ըստ հոգելից բանի իմաստնոյն եւ **աստուածաբան** աւետարանչին (Նար., 258): 2. Աստծո խոսքը տարածող, աստվածային պատգամները գրող՝ պատմող. Առ ի սրբազանից **աստուածաբանիցն** (ԼՀԲ): 3. Աստվածաբանական. Ետ նոցա զգիտութիւն ճշմարտութեան հաւատոցն **աստուածաբանի** քարոզութեան (Բուզ., 30): գոյ. Մարգարե, առաքյալ, վարդապետ. Աշակերտք հեղզք առ ուսումն եւ փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն **աստուածաբանք** (Խոր., 364):

**Բ. Բայարմատ վերջնաբաղադրիչով երկարժեք բառեր:** Գրաբարում կան երկարժեք մի շարք բարդություններ, որոնց վերջին բաղադրիչը բայարմատ է, ինչպես՝ **կիր, գէտ** և այլն:

Այս բաղադրիչների գործառական յուրահատկությունն այն է, որ ինքնուրույն գործածություն և բառական արժեք չունեն: Բոլոր դեպքերում այս բայարմատներով ձևավորված բարդություններն ունեն անձնանիշ իմաստ և արտահայտում են թե՛ հատկանիշի, թե՛ անձի նշանակություններ. հատկանիշի դերով նրանք ածական են, անձնանիշ արժեքով՝ գոյական:

**Կիր** բայարմատը գալիս է **կրել** («մեջքին առնել՝ տանել, վերցնել, ունենալ, մեկի ներգործության տակ լինել») բայից: Որպես բառակազմական ձևույթ՝ հանդես է գալիս «մի բան կրող՝ ունեցող» նշանակությամբ՝ համատեղելով առարկայի և հատկանիշի բառական իմաստներ ու ած.//գոյ. ձևաբանական արժեքներ:

Այդ կազմություններից են՝ **ասպարակիր, բեռնակիր, զինակիր, կապարճակիր, ջրկիր, վահանակիր** և այլն:

Հմնտ. **Ասպարակիր** – ած. Վահանավոր, նիզակավոր. **Ասպարակիր** մարդկանն պատեցին զնովար եւ բարձին զնա վեր վերըմբարձ (Բուզ., 172): գոյ. Զինակիր ծառա. Ազգի ազգի դասուք զօրականաց, գունդ գունդ **ասպարակրօք** (Ոսկ. Փիլիպ.):

**Գէտ**՝ գիտենալ (իմանալ, ճանաչել) բայի արմատն է: Բայարմատը բարդությանն հաղորդում է «նախատիպի ցույց տված մասնագիտությունն ունեցող, այդ բնագավառի մասնագետ՝ գիտակ» բառակազմական նշանակություններ և ած.// գոյ. խոսքիմասային արժեքներ, ինչպես՝ **աստղագէտ, արուեստագէտ, թիկնագէտ, ձեռագէտ, իրաւագէտ, մատենագէտ** և այլն:

Հմնտ. **Իրաւագէտ** – ած. Ճշմարտությունն իմացող, տեղյակ, իրագել. Ահա յերկինս է վկայն իմ, եւ **իրաւագէտն** իմ ի բարձունս (Յովբ. ԺԶ. 20): գոյ. Օրենքները լավ իմացող, օրենսգետ, իրավունքի պաշտպան (անձ.). Ողորձե՛ թէ ամենեքին գոհ են զքէն, բոլորք առ **իրաւագէտս** ունին (Եզն., 62):

**Գ. Բայափիմք վերջնաբաղադրիչով երկարժեք բառեր:** Բայափիմք վերջնաբաղադրիչով երկարժեք բառերը կարելի է քննել երկու սկզբունքով՝ նկատի ունենալով բայափիմքի տեսակը. ըստ այդմ կարելի է տարբերակել 1) բարդություններ, որոնց վերջին բաղադրիչը բայի առաջին հիմքն է, և 2) բարդություններ, որոնց վերջին բաղադրիչի դերում հանդես է գալիս բայի երկրորդ հիմքը:

1) Բարդությունների վերջին բաղադրիչը բայի առաջին հիմքն է: Իբրև այդ կարգի բաղադրիչներ հանդես են գալիս հետևյալ ձևայինները՝ **պահ, վաճառ** և այլն: Այս հարցում պետք է որոշ վերապահում կատարել. դրանք կարող են ընկալվել իբրև բայարմատներ, որոնք համընկնում են բայափիմքերին, բայց այնքանով, որ դրանց մի մասը, իբրև արմատական բառ, անկախ գործածություն չունի, ինչպես **պաշտ, խօս**:

Այս կարգի բարդությունների վերջին բաղադրիչը ցույց է տալիս «նախատիպի մատնանշած առարկայով զբաղվող» դերբայական նշանակություն, ըստ այդմ ամբողջ բարդությունը ձեռք է բերում անձանիշ իմաստ՝ գոյականի և ածականի խոսքիմասային նշանակություններով:

**Պահ** բաղադրիչը բարդություն է կազմում՝

ա) առարկաների հետ՝ **բերդապահ, բանտապահ, գանձապահ, թիկնապահ, լանջապահ, մարմնապահ, պարսպապահ**:

Հմմտ. **Թիկնապահ** – ած. // գոյ. Բարձրաստիճան անձի պաշտպանությունն ապահովող (զինվոր). ած. Եւ **թիկնապահս** իւր կարգէ զինու հանդերձ ի գաւակացն Խոռայ Հայկազնոյ (Խոր., 110): գոյ. Կացուցանէ եւ **թիկնապահս** (Յհ. Կթ., 26):

բ) Ժամանականիշ բառերի հետ՝ **գիշերապահ, ժամապահ, շաբաթապահ** և այլն:

Հմմտ. **Գիշերապահ** – ած. // գոյ. Գիշերվա պահապան՝ պահակ՝ հսկիչ (անձ). ած. Կոտորէր **զգիշերապահ** դոնապանսն (Բ. Մակ. ԺԳ. 15): գոյ. Շուրջ **գիշերապահս** եւ խրամապահս կացուցանել (Գ. Մակ. Ե. 24): գոյ. Գիշերային պահպանություն՝ հսկողություն. Պատրաստականք կայցեն ի **գիշերապահս** գգուշութեամբ (Ագաթ., 237):

գ) Տարածական միավոր նշանակող բառերի հետ՝ **առաջապահ, խրամապահ, կողմնապահ, սահմանապահ, վերջապահ** և այլն:

Հմմտ. **Սահմանապահ** – ած. // գոյ. Սահմանները հսկող՝ պաշտպանող գորական. իշխան, կուսակալ, բղէշխ, սահմանակալ (և նրանց գորքը). ած. Զորագլուխք **սահմանապահք** (Մեսր. Երէց): գոյ. Ապա գայր հասանէր եւ զերծ գտանէր **զսահմանապահսն**՝ որք պահէին զսահմանս Հայոց (Բուզ., 126):

Այս կարգի բարդությունները ցույց են տալիս անձ՝ «նախատիպի մատնանշած առարկան պահելով՝ պահպանելով» նշանակությամբ:

2) Բարդությունների վերջին բաղադրիչը բայի երկրորդ հիմքն է: Իբրև այդ կարգի բաղադրիչներ հանդես են գալիս հետևյալ ձևով՝ **արար, կալ, տու** և այլն, որոնք գրաբարի անկանոն բայերի երկրորդ հիմքն են:

**Կալ** ծագում է ունիմ (բռնել, պատել, ունենալ) բայի երկրորդ հիմքից և բարդություններում ստուգաբանորեն նշանակում է «նախատիպի ցույց տված առարկան ունեցող» բառակազմական նշանակություն, ինչպես՝ **աթռակալ, աշխարհակալ, բերդակալ, բռնակալ, երկրակալ, ծովակալ, մաճակալ, սահմանակալ, տիեզերակալ** և այլն:

Հմմտ. **Աշխարհակալ** – ան. 1. Աշխարհի տեր. Աշխարհակալն Աստուած (ՆՀԲ): 2. Ինքնակալ, բռնակալ. **Աշխարհակալ** Աղեքսանդրէ (Պտմ. Աղեքս.): 3. Համատարած, երկիրը պատած. Սովաու գումարին ի պատերազմի որդիք Սիռնի ընդդէմ աշխարհակալին խաւարի (Նար., 244): գոյ. Թագավոր, կուսակալ. Մարգպան եւ **աշխարհակալ** աշխարհին Հայոց զառաջինն ան ի թագաւորէն Պարսից զՍուրէն (Բուզ., 154):

**Արար** բաղադրիչը ծագում է գրաբարի **արուն** (անել, կատարել, ստեղծել) բայի երկրորդից հիմքից<sup>5</sup>: Դրանով կերտված բառերը անձնանիշ գոյականներ են, որոնք ունեն նաև հատկանշային իմաստ՝ «նախատիպի ցույց տված մասնագիտությամբ զբաղվողի» բառակազմական նշանակություն:

Այդ բառերից են՝ **աշխարհարար, գոյարար, իրաւարար, հացարար, հանդերձարար, հերկարար, նորարար** և այլն:

Հմմտ. **Իրաւարար** – ան. Իրավունք՝ արդարություն պաշտպանող. արդար դատաստան տեսնող. Եղիցի Տէր դատաւոր եւ **իրաւարար** ընդ իս եւ ընդ քեզ (Ա. Թագ. ԻԴ. 16): գոյ. Արդար դատավոր. **Իրաւարարս** ի տանն արքունի, իրաւարարս եւ ի քաղաքս եւ յաւանս (Խոր., 117):

**Տու**<sup>6</sup> բաղադրիչով գրաբարի տալ անկանոն բայի երկրորդ հիմքն է: Բարդություն կազմելիս պահպանում է բայասեռով պայմանավորված ինդրառությունը. բարդությունն արտահայտում է ենթակայական դերբայի իմաստ՝ գործողություն կատարողի հատկանշային կամ գործողություն կատարողի անուն առարկայանիշ նշանակություններով, ինչպես՝

<sup>5</sup> Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ինքնուսույց Ե., 1976, էջ 187, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 191, Վ. Համբարձումյան, Գրաբարի ինքնուսույց, Ե., 2004, էջ 126:

<sup>6</sup> Նան՝ **տ, տա** (տե՛ս Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, էջ 202):

**խրատատու, հրամանատու, կնքատու, ասանդատու, ստնտու, օրինատու** և այլն:

Հմմտ. **Հրամանատու** – ած./գոյ. Հրաման՝ պատվեր տվող, հրամայող, կարգադրող, օրենսդիր. ած. Ի սոսա թեպետ եւ ըստ գահոյ էր ոք ի վեր՝ այլ **հրամանատու** եւ ասագ զօրուն՝ փուշտիպանան սաղար էր (Փարպ., 128): գոյ. Յերկնատր **հրամանատուէն** իշխենցին հրաժարել (Ագաթ., 291):

Այսպիսով, գրաբարի ած./գոյ. արժեքներ համատեղող բառերի տարարժեքության իրողության քննությունից եզրակացնում ենք, որ ած. // գոյ. Արժեքներ համատեղող բարդ բառերի խոսքիմասային նշանակությունը կրողը վերջին բաղադրիչն է. ած. // գոյ. տարարժեք բարդությունները խմբավորվում են ըստ վերջին բաղադրիչի բնույթի՝ ա) արմատական վերջնաբաղադրիչ, բ) բայարմատ վերջնաբաղադրիչ, գ) բայահիմք վերջնաբաղադրիչ:

Քերականական հղումներ

ած. – ածական

գոյ. – գոյական

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1909:

Բուգ. – Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն. – Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Խոր. – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Յհ. Կթ. – Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Նար. – Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840:

ՆՀԲ – Նոր բարգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց

յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ. Գաբրիելի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ հ. Ա.-Բ, Վենետիկ, 1836 – 1837:

Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Տփլիս, 1904:

Մնացած համառոտագրություններով բնագրային վկայությունները, որ վերցրել ենք Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» (Երևան, 2003), գործածված են հայագիտության մեջ ընդունված կարգով,

ինչպես՝ Թագ. (Գիրք թագաւորութեանց Ա\*), Մեսր. Երեց (Պատմութիւն Ս. Ներսէսի Պարթեւի Հայոց հայրապետի, Վենետիկ, 1853), Մակ. (Գիրք Մակարայեցոց Բ. Գ.\*), Ոսկ. Փիլիպ. (Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոցն Պողոսի, Վենետիկ, 1862, հ. Ա, Փիլիպեցոց, .... ), Յովբ. (Գիրք Յոբայ\*), Պտմ. Աղէքս. (Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացոյ, Ե., 1989):

**Օգտագործված գրականություն**

1. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
2. Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004:
3. Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985:
4. Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996:
5. Վ. Համբարձումյան, Գրաբարի ինքնուսույց, Ե., 2004:
6. Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779:
7. Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
8. Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730:

Անահիտ Հարությունյան

**Բարդ բառերի ածական // գոյական տարաբժեքությունը գրաբարում  
Ամփոփում**

Գրաբարում կան բարդ բառեր, որոնք համատեղում են ածական // գոյական խոսքիմասային արժեքներ:

Ածական // գոյական արժեքներ համատեղող բարդ բառերի խոսքիմասային նշանակությունը կրողը վերջին բաղադրիչն է. ածական // գոյական տարաբժեք բարդությունները խմբավորվում են ըստ վերջին բաղադրիչի բնույթի՝ ա) արմատական վերջնաբաղադրիչ (**ագն(ագուն)**)՝ արքայազն (արքայազուն), **բան**՝ առասպելաբան և այլն, բ) բայարմատ վերջնաբաղադրիչ (**կիր**՝ բեռնակիր, **գետ**՝ իրաւագետ և այլն), գ) բայահիմք վերջնաբաղադրիչ, երբ մի դեպքում բարդության վերջին բաղադրիչը բայի

---

\* «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարարանաց», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երևան, 1997:

առաջին հիմքն է (**պահ**՝ թիկնապահ և այլն), մյուս դեպքում՝ բարդության վերջին բաղադրիչը բայի երկրորդ հիմքն է (**կալ**՝ բռնակալ և այլն):

Анаит Арутюнян

**ПОЛИСЕМИЯ ПРИЛАГАТЕЛЬНОГО// СУЩЕСТВИТЕЛЬНОГО  
СЛОЖНЫХ СЛОВ В ГРАБАРЕ**

**АННОТАЦИЯ**

В грабаре есть сложные слова, которые совмещают в себе лексико-семантические значения прилагательного// существительного.

Носителем лексико-семантического смысла сложных слов, совмещающих значения прилагательного// существительного, является последний компонент: полисемические конструкции прилагательного// существительного группируются по характеру последнего компонента: а) коренной последний компонент («ազն (ազուն)՝ արքայազն (արքայազուն)», «բան՝ առասպելաբան» и т.д.), б) последний компонент глагольного корня («կիր՝ բռնակիր», «զէտ՝ իրաւազէտ» и т.д.), в) последний компонент глагольной основы, когда, в одном случае, последний компонент конструкции является первой основой глагола («պահ՝ թիկնապահ» и т.д.), в другом случае - последний компонент конструкции является второй основой глагола («կալ՝ բռնակալ» и т.д.).

Anahit Harutyunyan

**Polysemy of Compound Words ADJECTIVE // NOUN  
in Grabar**

There are complex words in Grabar that combine lexical and semantic values of adjective // noun. The carrier of lexical and semantic meaning of complex words, combining the values of the adjective // noun, is the final component: polysemantic constructions/ structure of adjective // noun are grouped by character of the last component: a) the indigenous final component («ազն (ազուն), արքայազն (արքայազուն)», «բան՝ առասպելաբան» etc.), b) the final component of the verbal root («կիր, բռնակիր», «զէտ, իրաւազէտ», etc.) c) the final component of the verb stem, when, in one case, the final component of the constructions is the first stem of the verb («պահ, թիկնապահ»

, etc.), In another case - the latter component of the constructions is the second root of the verb («կալ, բնակալ» etc.).

**ԼԻԼԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ**  
ԵՊՀ ժամանակակից հայոց լեզվի  
ամբիոնի ասպիրանտ

ԳԵՂԱՍ ՍԱՐՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐԻ ՈՒ ԲԱԼԼԱԴՆԵՐԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** պոեմ, բալլադ, ձեռագրերի ուսումնասիրություն, սկզբնական տարբերակ, լեզվաոճական քննություն, գեղարվեստական խոսք, ստեղծագործական աշխատանոց, արտահայտչական, տաղաչափական, վերջնական տարբերակ, տևական աշխատանք:

**Ключевые слова и выражения:** поем, баллад, исследование рукописей, первоначальный вариант, языковой - стилистический анализ, художественный речь, творческая лаборатория, выразительные поправки, метрические поправки, окончательный вариант, продолжительный работа.

**Key words and expressions:** poem, ballad, manuscripts combines, initial variant, lingual - stylistic analyses, semantic, expressive, metric corrections, final variant, continuing work, creative workmanship.

Գ. Սարյանի ստեղծագործական աշխատանոցը ուսումնասիրելիս կարևորել ենք հիմնականում ձեռագրերում եղած լեզվական, ոճական, արտահայտչական փոփոխությունները: Այդ փոփոխությունները ակնառու են դառնում ստեղծագործությունների ձեռագրերը և տարբեր թվականներին լույս տեսած ժողովածուները համեմատելիս: Մեզ հետաքրքրում են հատկապես հեղինակային ուղղումները:

Այս տեսակետից ուշագրավ են Ս. Մելքոնյանի հետևյալ տողերը. <<Միայն գրական վարպետությանը որևէ կարևորություն չտվողը կարող է ստեղծագործության վրա հեղինակի կատարած լեզվաոճական բնույթի աշխատանքին երկրորդական նշանակություն տալ կամ բոլորովին ժխտել դրա կարևորությունը՝ գտնելով, որ բառի վրա կատարած աշխատանքը կապ չունի ստեղծագործության արտա-հայտչականության հետ>><sup>1</sup>:

Գ. Սարյանը պատկանում է գրողների այն խմբին, որոնք տևական մշակման են ենթարկել իրենց ստեղծագործությունները նախքան հրատարակելը:

Արևելահայ հեղինակներից իրենց ստեղծագործությունների նկատմամբ առավել ընդգծված քննադատական վերաբերմունք ունեցել են հատկապես Հովհ. Թումանյանը և Վ. Տերյանը: Վերջինս ոչ միայն

---

<sup>1</sup> Ս. Մելքոնյան, Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը, Ե., 1969թ., էջ 135:

անընդհատ արտագրել ու մաքրագրել է իր բանաստեղծությունները, այլև կատարել է լեզվաոճական բնույթի կարևոր փոփոխություններ, բայց ինչպես նկատել է Պ. Սևակը. «Վ. Տերյանը, դժբախտաբար, չի սիրում խոսել իր գրական աշխատանքներից ու լաբորատորիայից, իսկ խոսելիս՝ այնքան իմիջիայլոց, կարծես թե դա չէ իր կյանքի գլխավոր գործը: Տերյանական հայտնի խստապահանջության յուրովի անդրադարձումն է դա»<sup>2</sup>:

Ի տարբերություն Վ. Տերյանի՝ Հովհ. Թումանյանը մեծ ոգևորությամբ և համոզիչ մեկնաբանություններով տարբեր առիթներով (հիմնականում իր ընկերներին ուղղված նամակներում) գրել է իր ստեղծագործական մշակումների մասին: Հովհ. Թումանյանի ստեղծագործական աշխատանոցը հանգամանորեն ուսումնասիրել են Ս. Մելքոնյանը և Ջ. Ավետիսյանը<sup>3</sup>, ովքեր առանձնակի կարևորություն են տալիս գրողի ստեղծագործական աշխատանոցի հետազոտմանը: Գրողների ստեղծագործական աշխատանքի տեքստաբանական ուսումնասիրության տեսակետից առանձնահատուկ է արևմտահայ բանաստեղծների՝ Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի ստեղծագործական մշակումների լեզվաոճական քննությանը նվիրված մենագրությունը<sup>4</sup>:

Ռուս լեզվաբանական գրականության մեջ տեքստաբանության հարցերը առավել կարևորվել են դեռևս 1964 թվականից: Պ. Լիխաչովը նշել է, որ տեքստի ստեղծման պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցել գեղարվեստական ստեղծագործության խորքը<sup>5</sup>:

Ռուս մեծանուն գրողներից շատերի ստեղծագործական աշխատանքն է արժանացել տեքստաբանական ուսումնասիրության: Այս տեսակետից թերևս առանձնահատուկ է Մ. Գորկու ստեղծագործության ուսումնասիրությունը<sup>6</sup>: Ե. Պրոխորովը գրում է. «Տեքստաբանության մեջ ուսումնասիրվում են գրողի կյանքի և ստեղծագործության բոլոր կողմերը. այդ թվում նաև լեզվի և ոճի հարցերը»<sup>7</sup>:

Սարյանի ձեռագրերի աշխարհը բազում չնկատված շերտեր է պարունակում: Այն իր ընդգրկմամբ բավականին լայն է ու հետաքրքիր:

<sup>2</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, Ե. 1974, հտ. 5, էջ 60:

<sup>3</sup> Տե՛ս Ջ. Ավետիսյան, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Ե., 1973:

<sup>4</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ, Ե., 2012:

<sup>5</sup> Տե՛ս Դ. Լիխաչև, Текстология, Краткий очерк, М. 1964, ст. 5:

<sup>6</sup> Տե՛ս Ե. Прохоров, Текстология художественных произведений М. Горького, М., 1983:

<sup>7</sup> Նույն տեղը, էջ 3:

Բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայի ուսունասիրության համար հիմնական աղբյուրներն են՝ հեղինակի ձեռագրերը<sup>8</sup>, պոեմների ու բալլադների հրատարակված ժողովածուների մի քանի տարբերակները<sup>9</sup>, հոդվածները, նամակները և այլն:

Հեղինակի տևական մշակումները հիմնականում ունեն երկը կատարելագործելու նպատակադրում: Սարյանը իր մշակումների տարբերակները անվանել է սևագրություններ և դասակարգել է թվային հաջորդականությամբ: Երբ թերթում ենք այդ սևագրությունները, համոզվում ենք, որ Սարյանը գրել է անփութորեն, հաճախ դժվարընթեռնելի ձեռագրով, անընդհատ արտագրել է սևագիր օրինակները: Պոեմների և բալլադների ձեռագրերը լի են ջնջումներով: Բանաստեղծը թանաքի հաստ շերտի տակ թողել է ոչ միայն առանձին բառեր, այլև ամբողջական նախադասություններ: Այդ ամենը անվերծանելի է դարձնում գրողի նախնական մտահղացումները:

Սարյանի պոեմների ու բալլադների ստեղծագործական մշակումներում ոչ միայն տարբեր են լեզվական, ոճական բնույթի փոփոխությունները, այլև դրանք շատ բազմաբովանդակ են, մի հանգամանք, որ չի կարող որոշակի դժվարություններ չառաջացնել այդ ամենը խմբավորելու և ներկայացնելու իմաստով:

Հեղինակային մշակումներում զգալի տեղ են գրավում գեղարվեստական խոսքի կատարելագործմանը նպաստող փոփոխությունները: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է ճշգրտորեն բացահայտել Սարյանի կատարած փոփոխությունների նպատակը: Մենք փորձում ենք այդ փոփոխությունները մեկնաբանել՝ հաշվի առնելով բանաստեղծի ստեղծագործությանը, հուզաշխարհին բնորոշ իրողությունները: Այդ փոփոխությունների կարևորությունը երևում է միայն տվյալ խոսքաշարում, տվյալ երկի ամբողջականության մեջ: Օրինակ՝ «Դեպի կառափնարան» բալլադի առաջին սևագրության մեջ կան էական փոփոխություններ: Այդ երկում Սարյանը պատկերում է երկու հարյուր հայ մտավորականների ողբերգական ճակատագիրը, որոնց մեջ էին հանձարեղ Կոմիտասը, Վարուժանն ու Սիամանթոն.

*Այստեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,  
Սիամանթոն՝ հայացքն ուղղած դեպի եթեր,*

<sup>8</sup> Երևանի Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Ս.-ի ֆոնդ, թիվ 42-315:

<sup>9</sup> Տե՛ս Գ. Սարյան, Բանաստեղծություններ, Ե., 1940, էջ 151-267, Բալլադներ, Ե., 1957, Երկերի ժողովածու 5 հատորով, հտ. 2, Ե., 1969:

*Եվ ո՞վ գիտի թե այդ պահին ի՞նչ էր խորհում  
Կոմիտասը՝ հոգում պահած բազում երգեր...*

Հեղինակը ձեռագիր տարբերակի մեջ <<թե այդ պահին>> արտահայտությունը փոխել է *արդյոք* բառով, որի կրկնությամբ ավելի է սաստկացրել հերոսի մտորումի նկարագրությունը.

*Եվ ո՞վ գիտի արդյոք, արդյոք ի՞նչ էր խորհում  
Կոմիտասը՝ հոգում պահած բազում երգեր...*

Մշակումներ կատարելիս Սարյանը վերափոխել է պատկերները, նկարագրությունները, նպաստել է փոխաբերությունների խորացմանը: Այսպես, <<Դեպի կառափնարան>>-ը բալլադի նախնական տարբերակում գրել է.

*Փովեց ծովի վրա իրիկնաժամ անեղ  
Վերջալույսի վերջին շողերն այդտեղ հանգան...*

Մշակման արդյունքում դարձրել է՝

*Փովեց ծովի վրա անեղ իրիկնաժամ  
Արեգակի վերջին հայացքն այնտեղ հանգավ...*

<<Երգիչ Սավարին>> բալլադի երկրորդ սևագրության մեջ հետաքրքիր են հետևյալ տողի վերամշակումները.

*<<Ինչո՞ւ ես դու տխուր այդպես =>Ասա, այդ ինչ թախիժ է, որ իջել է քո  
աչքերին => Ասա, քեզ ի՞նչն է վրդովել՝ մթազնելով քո հոգին =>Ասա՛, գուցե  
քո սի՛րտն է հրդեհվում մի գույգ այրվող աչքերում, Եվ նրա ծուխն է թուխպի  
պես իջել քո ջինջ հայացքին...>>*

Հեղինակին հաջողվել է մի քանի փոփոխություններից հետո ստեղծել ինքնատիպ փոխաբերական պատկերներ:

Բառի փոխաբերական նշանակությունը խտացնելու, տողին թարմություն, տպավորիչ նկարագրություն ստեղծելու նպատակով են կատարվել հետևյալ փոփոխությունները

*<<Թարթիչներից լույս է ծորում>> =><<Թարթիչներից լույս է  
կաթում>>, <<Դուռն են ծեծում...արթնացավ նա>> => <<Դուռն են  
ծեծում...դողում է նա>>, <<Եվ համբավն այդ հողմաստրաց ծավալվեցավ  
քաղաքում>> => <<Եվ՛ համբավն այդ անհազնաձայն ծավալվեցավ  
քաղաքում>>, <<Հեռվում՝ ծովը փրփրած>> => <<Ընկերը՝ ծովը փրփրած>>, <<Եվ հուր վատվեց երիտասարդ աչքերում>> =><<Եվ կրակ ցուլաց երիտասարդ աչքերում>>, <<Վերջալույսի վերջին շողերն այդտեղ հանգան>> => <<Արեգակի վերջին հայացքն այդտեղ հանգավ>>:*

<<Դեպի կառափնարան>> բալլադի հետևյալ հատվածի նախնական տարբերակը եղել է.

*Եվ ո՞վ գիտի արդյոք աչքերն ուղղած ջրին՝*

*Ի՞նչ խոր մտքեր էին պաշարել նրան...*

Հեղինակը վերջնական տարբերակում *մտքեր* բառը փոխարինել է *հույզեր* բառով, որը ավելի ազդեցիկ է դարձնում նկարագրությունը՝ Կոմիտասի հոգում կատարվող փոթորկումը: Պարզ է, որ միտքը մտածելու, դատողություն անելու կարողությունն է, իսկ հույզը հենց հոգեկան ապրումն է, զգացմունքը, նաև ունի ավելի ծուրան իմաստ<sup>10</sup>:

<<Իրանի>> շարքից <<Երգիչ Սավվարին>> բալլադի առաջին սևագրության մեջ կա բառընտրության հետևյալ հետաքրքիր օրինակը՝ <<*Ու փսփսուքք ծայր առավ, դարձավ շշուկ, դարձավ ձայն, // Ու մարդուց մարդ ու տնից տուն դարձավ արդեն աղաղակ, // Որոտ դարձավ հետզհետե թնդաց քաղաքը համայն // Ու երբ Նադիր շահին հասավ՝ դարձավ վառող =>հրդեհ =>սարսափ =>ցասում ու կրակ>>:*

Հեղինակին հաջողվում է *փսփսուքի* աստիճանական զարգացումը (*փսփսուք =>շշուկ=>ձայն =>աղաղակ =>որոտ*) հասցնել վերջնակետին, այնուհետև *վառող =>հրդեհ =>սարսափ =>ցասում ու կրակ* տարբերակներից ընտրում է *ցասում*-ը, որը ամբողջացնում է պատկերը, նկարագրությունը:

<<Փառքի տաճարը>> բալլադի առաջին սևագրության մեջ կա իմաստային անճշտության օրինակ, որը հեղինակը ուղղել է: Եղել է՝

*Եվ գնաց նա մտորելու շքեղ ձև*

*Ընտիր քարեր հայրենական լեռներում*

*Գույներ, գարդեր և արծիվներ սրայթև*

*Որ հավիտյան չմոռացվի => անմոռաց մնա հավերժ դարերում:*

Ինչպես պարզ երևում է, երկրորդ տողից սկսվում է իմաստային անհարթությունը (մտորելու ընտիր քարեր հայրենական լեռներում): Հեղինակը մշակման ժամանակ *մտորել*-ը փոխարինել է *որոնել* բառով, որը համապատասխանում է ամբողջ խոսքաշարի իմաստին:

Պահպանվել են <<Դրաստամատ>> բալլադի սևագիր և մաքրագիր բնօրինակները: Հեղինակը մաքրագիր տարբերակում էլ է փոփոխություններ կատարել, այսպես՝ սկզբում գրել է.

*Գինու գավերն էին լցվում ու դատարկվում,*

*Եվ հողի մեջ գինու բույրն էր հայրենական:*

Զարմանալի է, որ այս իմաստային անճշտությունը հեղինակը սկզբում չի նկատել: Նկարագրությունից պարզ է դառնում, որ գինու գավերն էին լցվում ու դատարկվում, և գինին խմելիս պետք էր զգալ հողի բույրը, այլ

<sup>10</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 2, Ե., 1976, էջ 910:

ոչ թե հակառակը: Փոփոխության արդյունքում ստեղծվել է իրական պատկեր:

Մշակված տարբերակ

*Գինու գավերն էին լցվում ու դատարկվում,  
Եվ գինու մեջ հողի բույրն էր հայրենական:*

Հեղինակային մշակումներում Սարյանը կատարել է նաև ոճական-արտահայտչական բնույթի որոշ փոփոխություններ, որոնք բանաստեղծի ստեղծագործական աշխատանքի կարևոր մասն են:

Ինչպես արդեն երևաց նախորդ մի քանի օրինակներից, վերամշակումներ կատարելիս գրողը միշտ ձգտել է հասնել խոսքի առավելագույն բարեհնչունության, հրաժարվում է նաև անհարկի նմանահնչունից: Օրինակ. <<Իրանի>> պոեմի առաջին հրատակության մեջ գրված է.

*Ու գայրույթը՝ վանդակած վագրի նման մոլեգին՝  
Նրա կրծքի վանդակին դադար չի տալիս<sup>11</sup>:*

Բացի այն, որ *վանդակած* և *վանդակին* բառերի մոտ տողերում լինելը բարեհունչ չէ, այլև ստեղծվել է միատեսակ հնչյունների անտեղի կուտակում: Այստեղ կա նաև անհաջող համեմատություն: Մշակված տարբերակում (մյուս հրատարակության մեջ)<sup>12</sup> հեղինակը դարձրել է՝

*Ու գայրույթը իր սրտում վագրի նման մոլեգին:*

Սարյանը ստեղծագործելիս մշտապես ձգտել է հարստացնել որոշիչները: Հեղինակային մշակումներում շատ են հատկապես որոշչային մի քանի տարբերակներների ընտրությանը առնչվող փոփոխությունները: Օրինակ <<Չի վատահի իր վաղեմի => **մանկության** => **մտերիմ ընկերոջը կյանքն անգամ**>>, <<Աբդուլ խանի հոյաշեն պարտեզում **վարդաբույր** => **անսահման**>>, <<Եվ խնջույքի նստած **փարթամ** => **ջրեղ սեղանին**>>, <<Ինչպես **ջրեղ** => **վսեմ** Սրարատը ձյունափառ>>, <<Մի **հնամենի** => **հողե** => **կավաշեն** => **հին խրճիթ էր կանգնած**>>:

Այս հետևողական աշխատանքի արդյունքում ընտրված բառերը տվյալ նկարագրությունը դարձնում են ավելի բնական ու արտահայտիչ:

Ստեղծագործությունների նախնական տարբերակները մշակելիս Սարյանը կատարել է նաև լեզվական իրողությունների մի քանի փոփոխություններ, որոնք պայմանավորված են պոեմի, բալլադի թեմայով, ժամանակաշրջանով, միջավայրի նկարագրությամբ, հերոսների խոսքի

<sup>11</sup> Տե՛ս Գ. Սարյան, Բանաստեղծություններ., Ե., 1940, էջ 250:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Սարյան, Բալլադներ, Ե., 1957թ., էջ 31:

ոճավորմամբ: Օրինակ՝ <<Որդի, ինչ եղավ քեզ>> գրական աշխարհաբարով կազմությունը փոխարինել է բարբառային տարբերակով. <<Յարաք ընկա ը, իմ որդի>>: Կատարել է նաև հակառակ փոփոխությունը. <<Ախ, քո մերը մի հավք, Դենդ թռչեր գիրկը բաց>> => <<Ախ, քո մայրը մի հավք>>:

Ժողովրդախոսակցական շերտում գործածական բառերը փոխարինել է գրական տարբերակներով. <<Դև-Բեդի զուլալ ջրերի ափին, Կանգնած էր նա իր բայիկների => մանուկների հետ>>, <<Ոնց => Որպես աշնան մի անպամած օր>>, <<Խնդաց => Հրճվեց հոգին Մամիկոնյան իշխանի>>, <<Եվ բոցերի մեջ կայրենք <<Երգերի գիրքը>> իրա => իր գրած>>:

Գ. Սարյանի ձեռագրերում հանդիպում են նաև անհաջող փոփոխություններ: Ինչպես՝ <<Մատաղ լինիմ => մատաղ դառնամ ես քո բարուն, քո չարին>>, <<Իսկ ջինջ առուն ասես մոր պես շշնջում էր իբրև լաց => շշնջում էր սրբնթաց լաց>>, <<Դու մեր հարձակման աչքն ես սրատես, Քո տեսածից => աչքերից է կախված ամեն բան>>, <<Գայիս է վաղ առավոտյան, Ուշ գիշերին գնում տուն => Վաստակներով գնում տուն>>: Անշուշտ, սրանց վերջնական տարբերակները իմաստով և արտահայտչականությամբ զիջում են նախորդներին:

Այսպիսով, Սարյանը տքնաջան աշխատել է՝ վերափոխելով, կատարելա-գործելով պոեմներն ու բալլադները: Կարծում ենք, բավական ակնհայտ են հեղինակի ստեղծագործական աշխատանոցի հիմնական սկզբունքները, ինչպես նաև նրա՝ իբրև բանաստեղծի կայացման ընթացքը: Հեղինակի լավագույն գործերը տևական մշակման արդյունք են: Իմաստային, լեզվառճական, արտահայտչական, տաղա-չափական ուղղումներն ու սրբագրումները նպատել են նրա գեղարվեստական խոսքի կատարելագործմանը: <<Ստեղծագործական կեղծ որոնումները և սուտ գյուտերը,- ինչպես գրել է Դ. Դեմիրճյանը,- օտար են եղել Գ. Սարյանի թե՛ բնավորությանը, թե՛ պրակտիկային>><sup>13</sup>:

Գեղամ Սարյանի պոեմների ու բալլադների ստեղծագործական մշակումների լեզվառճական քննություն

Գեղամ Սարյանի տևական մշակումները հիմնականում ունեն երկր կատարելագործելու նպատակադրում: Նա մշտապես հարստացրել ու կատարելագործել է իր երկերը: Ընդ որում այդ գործընթացը երևում է ոչ

<sup>13</sup> Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, Ե. 1985, հտ. 12, էջ 361:

միայն նրա վերջին շրջանի (1950 – 60 - ական թ. թ.) գործերում, այլև հների վերամշակման, առանձին տողերի ու բառերի հղկման, փոփոխման աշխատանքներում: Պոեմների ու բալլադների ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սարյանը իր գործերում եղած անհարթությունները հղկել է, մշակել, անգամ նորից սկսել: Կան գործեր, որոնց սկզբնական տարբերակները զգալիորեն տարբերվում են վերջնական խմբագրումից: Հեղինակի լավագույն գործերը տևական մշակման արդյունք են: Իմաստային, լեզվաոճական, արտահայտչական, տաղաչափական ուղղումներն ու սրբագրումները նպաստել են նրա գեղարվեստական խոսքի կատարելագործմանը:

### **Языковой- Стилистический Анализ творческих разработок поем и баллад Гегам Сарьяна**

Гегам Сарьян находится в числе тех писателей, которые разрабатывают свои произведения, прежде чем опубликовать.

Мир рукописей Г. Сарьяна сочетает в себе различные невидимые слои. Он очень широкий и интересный по своему содержанию. Исследование рукописей поем и баллад показывает, что Сарьян разрабатывал, усовершенствовал и даже начинал работать снова над неровностями своих произведений. Есть некоторые работы первоначальный вариант которых значительно отличается от окончательной редакции.

Сарьян работал над тем, чтобы изменить, усовершенствовать поемы и баллады. Лучшие произведения автора являются результатами его продолжительной работы. Семантические, языковые-стилистические, выразительные, метрические поправки способствовали усовершенствованию его художественного стиля: Мы считаем, что основные принципы творческой мастерской автора, а также процесс его становления в качестве писателя очевидны.

### **Lingual - Stylistic Analyses of Creative workups of Gegham Saryan's Poems and Ballads**

Gegham Saryan is in a number of those writers, who worked up their works, before publishing.

The world of G. Saryan's manuscripts combines different invisible layers. It is very broad and interesting by its content. The investigation of poems' and ballads' manuscripts shows that Saryan had worked up, elaborated and even started again irregularities of his works. There are some works the initial variant of which considerably differs from the final edition.

Saryan worked hard in order to change, to refine poems and ballads. The best works of the author are the results of his continuing workup. Semantic, lingual-stylistic, expressive, metric corrections contributed to refinement of his artistic style: We think that the main principles of author's creative workroom as well as the process of his making as writer are apparent.

**ՆԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության  
ամբիոնի հայցորդ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՅԸ

**Բանալի բառեր.** իմաստային սկզբունք, բովանդակության սկզբունք, արտահայտության պլան, բովանդակության պլան, համընդհանուր բաղադրիչներ, ընդհանուր իմաստ, մասնավոր իմաստ, խորքային կառույցներ:

**Ключевые слова:** семантический принцип, формальный принцип, план выражения, план содержания, универсальные компоненты, общее значение, частное значение, глубинные структуры.

**Key words:** semantic principle, formal principle, expression plan, content plan, universal components, general meaning, particular meaning, deep structure.

Ինչպես հայտնի է, լեզվական ցանկացած գործունեություն չի կարող ցուցադրել կենդանի լեզուն իր ամբողջության ու կատարելության մեջ, քանզի արտաքին աշխարհն իր տեսքով, որով արտացոլվում է մարդկային գիտակցության մեջ, բավականին բարդ համակարգ է, և այն պարզապես հնարավոր չէ ենթարկել վերջնական վերլուծության: Հաշվի առնելով այս իրողությունը՝ հարկ ենք համարում նշել, որ սույն հոդվածը չի ներկայացնում լեզուների միջև գոյություն ունեցող նմանությունների ու տարբերությունների բացահայտման վերջնական ու անփոփոխ սկզբունքները, այլ դիտարկում է այդ նմանությունների ու տարբերությունների որոշման համար լեզվաբանների կողմից առաջադրված քայլեր:

Լեզուների միջև նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների հարցը լեզվաբանական աշխատություններում քանիցս քննարկվող և տարակարծությունների տեղիք տվող խնդիրներից մեկն է: Մինչ օրս լեզվաբանները չեն կարողանում գալ լիարժեք համաձայնության այն հարցի շուրջ, թե որն է լեզուների միջև նմանություններ բացահայտող ամենակարևոր սկզբունքը՝ ձևը, իմաստը, թե՞ այս երկուսի ընդհանրությունը. մինչև անգամ չեն կարողանում որոշել, թե որոնք են լեզուների միջև ամենաշատ նմանություններ բացահայտող միջոցները՝ խոսքի մասերը, քերականական կարգերը, թե՞ ընդհանրապես քերականության բաժինները: Մա է պատճառը, որ նրանցից յուրաքանչյուրի աշխատություններում նախևառաջ կարևորվում է ուսումնասիրվող կոնկրետ նյութը, և ապա միայն նշվում այդ նյութի հստակության աստիճանը քիչ թե շատ ապահովող սկզբունքը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ այսօր լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման մեջ նկատելի է երեք սկզբունք. ոմանք, ելնելով ուսումնասիրվող նյութի բովանդակային դերից, առաջին պլան են

մղում իմաստային սկզբունքը՝ միննույն ժամանակ չանտեսելով ձևը, ուրիշները, ընդհակառակը, կարևորում են արտահայտության դերն ու լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքը համարում ձևը (ձևական սկզբունքով առաջնորդվող լեզվաբանները ևս չեն անտեսում համապատասխան նյութի իմաստային կողմը): Այս երկու հակադիր սկզբունքների միջև չեզոք դիրք է զբաղեցնում մի սկզբունք, ըստ որի՝ լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման հարցը քննվում է վերոնշյալ երկու սկզբունքների փոխկապակցված միասնության մեջ:

Սկզբունքների ընտրությունը հիմնականում պայմանավորված է ուսումնասիրող նյութի ընտրությամբ, իսկ վերջինս էլ՝ լեզվաբանի անհատական դիրքորոշմամբ: Այսպես՝ իմաստային սկզբունքով առաջնորդվող լեզվաբանները (նույնն է, ինչ ասել՝ «բովանդակություն->ձև» կադապարը նախընտրող լեզվաբանները) լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար իրենց աշխատություններում կարևորում են ցանկացած նյութի շարահյուսական դերը, այն է՝ ցանկացած խոսքի մասի կամ ցանկացած քերականական կարգի շարահյուսական առանձնահատկությունները. ինչպես ասել է Ա. Սմիթը, «Գոյություն ունի լեզվական գործընթացների յուրատեսակ միօրինակություն, որը, սակայն, ի հայտ է գալիս ոչ թե առանձին բառերում, հնչյուններում կամ թեքություններում, այլ բառերի միջև հարաբերություններում, այսինքն՝ շարահյուսության մեջ»<sup>1</sup>: Այս սկզբունքի ընտրությունը լեզվաբաններին հնարավորություն է տալիս լեզուները միմյանց կապող օղակը գտնել անգամ ձևաբանական համապատասխան միջոցների բացակայության դեպքում, ինչպես, օրինակ՝ «երկակի թիվ» կամ «ստացականության հարաբերություն» քերականական հատկանիշները: Այս երևույթը կարելի է տեսնել նաև «կանացի» և «իգական» բառերում սեռի քերականական կարգի գոյության մասին խոսելիս: Բ. Լ. Ուորթը, որն անդրադառնում է քերականության թաքնված կարգերի գոյության խնդրին, գտնում է, որ այդ կարգերի բացահայտումն է հնարավորություն տալիս ենթադրելու, որ բոլոր լեզուները վերջին հաշվով իրապես նման են իրար<sup>2</sup>:

Հռովի քերականական կարգը, որը միշտ աչքի է ընկել իր իմաստային հարուստ դաշտով, գրեթե բոլոր ժամանակներում համարվել և մինչ օրս համարվում է լեզուների նմանությունների ու տարբերությունների

<sup>1</sup> C. A. Smith. Studies in English Syntax. Boston, New York, 1906, էջ 10:

<sup>2</sup> Տե՛ս B. L. Whorf. Language, Thought and Reality. New York, London, 1956, էջ 69-71:

բացահայտման հնարավոր տարբերակներից մեկը: Դեռ 19-րդ դ.-ում Վ. ֆոն Հումբոլդտը լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար առաջարկում էր իմաստային սկզբունքով քննության առնել հոլովի քերականական կարգը, այն դասում լեզվի այնպիսի համընդհանուր բաղադրիչների շարքին, ինչպիսիք են թիվը, քերականական դասը կամ սեռը, բայի կերպը և նմանատիպ այլ կարգեր: Նա գտնում էր, որ առանձին լեզուներում հանդիպող բոլոր կոնկրետ քերականական կարգերն ընդամենը համընդհանուր կարգերի վերափոխումներն ու վերամարմնավորումներն են, և որ բոլոր համընդհանուր բաղադրիչները միմիայն իրենց կիրառման ձևերով են համարվում ցանկացած լեզվի անհատական ինքնությունը, մինչդեռ բովանդակության պլանի տեսանկյունից՝ բոլոր բաղադրիչները վերջին հաշվով նույնն են<sup>3</sup>:

Լ. Ելմալը, որի համար հոլովը՝ որպես լեզվական ձև, ոչ այլ ինչ է, եթե ոչ մեկ վերացական հասկացություն կրող միավոր, նշում է, որ հենց այդ միավորի բովանդակության պլանի ուսումնասիրությունից է անհրաժեշտ սկսել լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտումը, քանզի հենց այդ միավորից են առաջանում այն ընդհանուր և մասնավոր իմաստները, որոնք կարող են միավորել տարբեր լեզուներով հաղորդակցվող մարդկանց: «Ինչպես ցանկացած լեզվական ձև, հոլովը չի նշանակում մի քանի տարբեր բաներ. այն նշանակում է մի բան՝ լինելով եզակի հասկացության կրող, որից կարելի է դուրս բերել նրա բոլոր կոնկրետ կիրառումները»<sup>4</sup>: Հոլովական իմաստը, ըստ նրա, բոլոր լեզուներում նույնն է, լեզուներում տարբեր են միմիայն այդ իմաստների արտահայտության միջոցները: Այսպես՝ եթե ժամանակի ընթացքում հոլովների համադրական ձևերը փոխարինվում են վերլուծական ձևերով (փոխարինումը լեզուներում երբեք չի կարող բացարձակ լինել, որովհետև համադրական լեզուներում կարելի է հանդիպել բազմաթիվ վերլուծական ձևերի և ընդհակառակը), ապա սա չի նշանակում, որ համեմատվող լեզուների իմաստային դաշտերը չպետք է համընկնեն (խոսքը, իհարկե, մասնակի համընկնման մասին է, քանզի լեզուների միջև լիարժեք

<sup>3</sup> W. von Humboldt. Schriften zur Sprachphilosophie-Werke in sunf Banden. III. Berlin, 1969, էջ 651. մեջբերված է ըստ С. Д. Кацнельсон. Типология языка и речевое мышление. Л., 1972, էջ 12-15:

<sup>4</sup> Hjelmslev. La categorie du cas. Etude de grammaire generale. I. Aarhus, 1935, էջ 85. մեջբերված է ըստ С. Д. Кацнельсон. Типология языка и речевое мышление. Л., 1972, էջ 40:

համընկնում երբեք չի լինում): Լեզվաբանն այստեղ հաշվի է առնում այն հանգամանքը, որ հոլովական իմաստները համընդհանուր (հնարավոր է՝ անգամ բնածին) հասկացությունների մի խումբ են կազմում, որոնք մարդկանց միավորում են շրջապատող առարկաների ու երևույթների մասին ունեցած այնպիսի դատողությունների շուրջ, ինչպիսիք են, օրինակ՝ «Ո՛վ է ինչ-որ բան արել», «Ու՛մ հետ է ինչ-որ բան պատահել», «Ի՞նչն է ենթարկվել փոփոխության» և այլն: Լեզուներում այսպիսի դատողությունների առկայությունը լեզվաբաններին թույլ է տալիս ենթադրելու, որ լեզուների ակնհայտ նմանություններն անհրաժեշտ է փնտրել տարբեր ազգերի մտածողության ձևերի մեջ, որոնք անդադար փոփոխվում են՝ Ա. Ա. Շախմատովը մտածողության ձևերի մեջ կարևոր տեղ է հատկացնում հատկապես մարդու ընթացիկ ապրումներով կատարվող փոփոխություններին, որոնք ձեռք են բերվել նախորդ փորձի միջոցով և համարվում են «հաղորդակցության» գոյության հիմքը<sup>5</sup>:

Հոլովների իմաստային դաշտի դերն ավելի ցայտունորեն է երևում հատկապես այն ժամանակ, երբ հոլովների հիմնական գործառույթների կողքին տեսնում ենք տասից ավելի երկրորդական գործառույթներ: Օրինակ՝ Օ. Ս. Ախմանովան իր «Լեզվաբանական տերմինների բառարանում» առանձնացնում է ուղղականի 10, հայցականի 15, սեռականի 29, տրականի 19, գործիականի 20 երկրորդական իմաստներ<sup>6</sup>:

Լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման սկզբունքների ուսումնասիրության հարցին յուրահատուկ մոտեցում է

---

\* Անգամ ժամանակակից ազգագրությունը, որը վճռականորեն մերժում է տարբեր ազգերի մշակույթների միանման զարգացման ուսմունքը, միևնույն ժամանակ նշում է, որ գրեթե բոլոր ժամանակներում, անկախ ազգությունից, ողջ մարդկության զարգացումը տատանվել է երկու՝ մայրիշխանությանն ու հայրիշխանությանն առաջնություն տվող մշակույթների միջև. մայրիշխանական մշակույթ ունեցող ազգերի, օրինակ՝ բասկերի լեզուներում անցողական բայերն ավելի պասիվ բնույթ են կրել, այսինքն՝ օբյեկտը, որի վրա ուղղված է եղել գործողությունը, արտահայտվել է ուղիղ հոլովով, իսկ գործողությունն իրականացնողը՝ թեք հոլովով, մինչդեռ հայրիշխանական մշակույթ ունեցող ազգերի, օրինակ՝ հնդեվրոպացիների լեզուներում անցողական բայերը կրել են ակտիվ բնույթ. ենթական ուղիղ հոլովով է դրվել, իսկ լրացումը՝ թեք: J. Van Ginneken, *La Reconstruction typologique des langues archaïques del humanité*. Amsterdam, 1939, էջ 91. մեջբերված է ըստ Չ. Филлмор. *Дело о падеже// Новое в зарубежной лингвистике*. М., 1980, էջ 458:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Ա. Шахматов. *Синтаксис русского языка*. Л., 1941, էջ 19:

<sup>6</sup> Տե՛ս Օ. С. Ахманова. *Словарь лингвистических терминов*. М., 1969, էջ 19-20, 29, 119-120, 172, 469-472:

ցուցաբերում Ի. Ա. Մելչուկն իր «Իմաստ<=>տեքստ մոդելի» համընդհանուր տեսությամբ (հայտնի է նաև «Իմաստ<=>տեքստ լեզվաբանական մոդելների տեսություն» անվամբ): Յույց տալով բոլոր բնական լեզուների՝ մակարդակային կառուցվածք ունենալու հատկությունը՝ նա գտնում է, որ լեզուների նմանություններն ու տարբերությունները պետք է փնտրել նրանց բոլորին բնորոշ իմաստային և հնչակարգային (տեքստային) մակարդակների համեմատության եղանակով, որն ապահովում է իմաստից տեքստ և տեքստից իմաստ անցման գործընթացները: Տեսնելով, թե Մելչուկը ինչպես է կարևորում այս երկու կողմերի փոխադարձ կապը՝ առաջին հայացքից թվում է, թե նա լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների հարցում միջին դիրք է զբաղեցնում, բայց իրականում նա իմաստային սկզբունքի կողմնակից է և լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտումը նախընտրում է սկսել իմաստից դեպի տեքստ ուղղվածությամբ պատճառաբանելով, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներին բնորոշ են այնպիսի խորքային իմաստներ, որոնք կարող են միավորել գրեթե բոլոր մարդկանց: Այսպես, օրինակ՝ «կատարյալ հիմար», «ծանր վերք», «թխահեր կին» և «տեղատարափ անձրև» բառակապակցությունների մեջ լեզվաբանը կարևորում է «շատ լինելու» իմաստը և նշում, որ տարբեր լեզուներով հաղորդակցվող մարդիկ այս բառակապակցությունների կիրառման ժամանակ առաջին հերթին ենթագիտակցաբար պատկերացնում են ինչ-որ մի բանի «շատ» լինելը (տեսության մեջ այն ներկայացված է «Magn» անվանումով, որը լատիներենի «magnus»-«մեծ» բառի կրճատ տարբերակն է): Իմաստից դեպի տեքստ ուղղվածության իր նախընտրությունը (այս նախընտրությունն ինքնին պահանջում է իմաստային սկզբունքի կիրառում) Մելչուկը բացատրում է նաև լեզուներում գործող այնպիսի խորքային կառույցների առկայությամբ, ինչպիսիք են *տիպիկ փոխաբերությունները* (կիրք-բոց), *հոգնակիության ու եզակիության* գաղափարները (ձուկ-վտառ, ավազ-ավազահատիկ), *հոմանիշները* (գեղեցիկ-սիրուն), *հականիշները* (գեղեցիկ-տգեղ), *հիպերոնիմները* (*սեռանիշ բառերը*) (հանրապետություն-պետություն, կարմիր-գույն), *ածանցյալները* (ծնել-ծնունդ, հանրապետություն-հանրապետական, իմաստ-ըստ իմաստի, սեր-սիրել) ևն<sup>7</sup>:

Անդրադառնալով Մելչուկի այս տեսությանը՝ Յու. Դ. Ապրեսյանը լեզվաբանի՝ «իմաստից դեպի տեքստ» ուղղվածության նախընտրությունը

<sup>7</sup> Տե՛ս Ի. Ա. Мельчук. Модель «Смысл<=>Текст». М., 1974, էջ 308-312:

բացատրում է աշխարհի բոլոր լեզուներում տարրական, այլևս անտրոհելի իմաստների գոյությամբ, երբ Մելչուկը համեմատաբար բարդ իմաստները ներկայացնում է տարրական իմաստների միջոցով և ցույց տալիս, որ հենց դրանք են, որ լեզուներում իմաստային նմանությունների տեղիք են տալիս, օրինակ՝ «*վերցնել=այնպես անել, որպեսզի ինքդ ունենաս*», «*տալ=այնպես անել, որպեսզի մեկ ուրիշն ունենա*», «*պահել=չդադարել ունենալ*» են:

Իմաստային սկզբունքի անդադար կիրառումը նպաստում է իմաստային հարաբերությունների համակողմանի ուսումնասիրությանը, որի արդյունքում առանձնացվում են լեզուների մեծամասնությանը բնորոշ այնպիսի իմաստային հարաբերություններ, ինչպիսիք են *առարկան և վերջինիս վերագրվող հատկանիշը* (կիտրոն-թթու), *գործողությունը և այն կատարողը* (շուն-հաչել), *գործողությունը և նրա օբյեկտը* (հատակ- մաքրել), *գործողությունը և կիրառվող գործիքը* (կտրել-մկրատ), *գործողությունը և գործողության տեղը* (սստել-աթոռ, պակել-մահճակալ), *գործողությունը և գործողության պատճառականությունը* (ունենալ-տալ, տեսնել-ցույց տալ) են<sup>8</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման իմաստային սկզբունքի կիրառումը համատարած բնույթ չի կրում, և այսօր որոշ լեզվաբաններ կարևորում են լեզուներում համապատասխան նյութի համեմատական քննությունը արտահայտության պլանի տեսանկյունից: *Ձևական սկզբունքի* ընտրության դեպքում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ ձևական միջոցների բացակայության դեպքում իմաստների հաղորդում հնարավոր չէ իրականացնել: Ելնելով արտահայտության պլանը լավագույն ձևով ներկայացնող ձևաբանության դաշտից՝ այս սկզբունքը նախընտրող լեզվաբանները լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտումը սկսում են ձևաբանության միավորների ուսումնասիրությունից, որտեղ ձևական սկզբունքի ընտրությունը նրանց հնարավորություն է ընձեռում գոյություն ունեցող տարբեր լեզուների քերականական համակարգերում համընդհանուր սկզբունքներ ու օրենքներ հաստատել, դրանք ծառայեցնել տարբեր լեզուների ձևաբանական միավորների միջև նմանությունների ու տարբերությունների բացահայտմանը:

<sup>8</sup> Տե՛ս Ю. Д. Апресян. [Лексическая семантика](#) . // Избранные труды. Т. I. М., 1995, էջ 37, 43-44:

Ընտրելով «ձևից դեպի բովանդակություն» կաղապարը՝ նրանք հենց այս կաղապարի տեսանկյունից էլ դիտարկում ու գնահատում են արտահայտության պլանը, լեզվական բոլոր տարրերի մեջ լեզուները միմյանց կապող օղակը փնտրում իմաստների հաղորդման համար լեզուներում կանոնավոր ձևով սահմանված արտահայտության միջոցների մեջ, էական տեղ հատկացնում բառերի կազմության ու փոփոխության հատկություններին՝ չմոռանալով նշել նաև նրանց սերտ կապը իմաստային հատկությունների հետ:

Դեռևս Ֆ. Ֆ. Ֆորտունատովը, որի հայեցակարգը լեզուների միջև նմանությունների ու տարբերությունների բացահայտման հարցում հիմնված է «ձևից դեպի նշանակություն» սկզբունքի վրա, գտնում է, որ լեզուների միջև ամենաշատ նմանություններ բացահայտող սկզբունքը ձևն է. ըստ նրա՝ լեզվական նշանների ուսմունքը (լեզվական նշաններին նա տվել է «մտքի համար նշաններ»<sup>9</sup> անվանումը): Նա հետևողականորեն կիրառում է այս սկզբունքը, բայց չի անտեսում նաև այն հանգամանքը, որ նշանակությունը միշտ պետք է կապակցել այն կրողի հետ: Նրա ողջ հայեցակարգի հիմքում նշանակության գաղափարն է, բայց նշանակությունը ոչ թե լեզվից դուրս, այլ հենց լեզվի ներսում, դրա ձևերի մեջ, որտեղ լեզուն ներկայացված է որպես մտքերի արտահայտման միջոց: Նրա լուսաբանմամբ՝ լեզվի նշանների տեսությանը բնորոշ է նշանից դեպի միտք ուղղվածությունը, մտածողությանը անդադար անդրադարձը, որից անմիջականորեն բխում է լեզվի և մտածողության միջև առկա երկկողմ կախվածության գաղափարը. «...Ոչ միայն լեզուն է կախված մտածողությունից, այլև մտածողությունն է իր հերթին կախված լեզվից. բառերի միջոցով մենք մտածում ենք այն մասին, ինչը հնարավոր չէր լինի պատկերացնել մեր մտածողության մեջ առանց այս կամ այն նշանների, նմանապես մենք բառերի միջոցով հնարավորություն ենք ստանում մտածել այնպես, ինչպես չէինք կարողանա դա անել մտածողության համար նշանների բացակայության դեպքում»<sup>10</sup>:

Ձևական սկզբունքի ընտրությունը լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման հարցում շատ հաճախ կապվում է լեզուների համընդհանուր բազայում (եթե այդպիսին գոյություն ունի) ձևական ու նյութական ընդհանրությունների գոյության հետ: Առաջնորդվելով ձևական և նյութական ընդհանրությունների տեսությամբ՝ լեզվաբանները մի կողմից՝

<sup>9</sup> Փ. Փ. Фортунатов. Избранные труды. Т. I. М., 1956, էջ 111:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 124:

կարողանում են տեսնել աշխարհի լեզուներին բնորոշ հնչյունական հատկանիշները, իսկ մյուս կողմից՝ քերականագետների կողմից առաջադրված վերացական կանոնները (ինչպես, օրինակ՝ եզակի և հոգնակի թվերի արտահայտության համար համապատասխան ձևերի առաջադրումը են):

Իրականում լեզուն այնպիսին չէ, ինչպիսին այն մեզ ներկայացվում է բառարանային և քերականական միակողմանի ուսումնասիրությունների միջոցով: Այն ամենօրյա գործողությունների ու հմտությունների ամբողջություն է, որտեղ ամեն արտասանված նախադասություն խոսողի կողմից իրականացվող բարդ գործունեություն է, որտեղ խոսողն իր միտքն ի մի է բերում արտահայտության պլանում առկա քերականական ձևերի միջոցով, հաշվի առնում իմաստային և ձևական դաշտերի հակադրամիասնական կապը, բովանդակության և արտահայտության պլանների համապատասխանեցման գործընթացը. ինչպես ասել է Ֆերդինանդ դը Սոսյուրը, «Լեզուն ու խոսքը փոխկապակցված են. լեզուն խոսքի գործիքն է և, միաժամանակ, արդյունքը: Բայց չնայած այդ ամենին՝ նրանք միանգամայն տարբեր բաներ են»<sup>11</sup>: Իրողությունն այսպես է մեկնաբանել նաև Լ. Ելմլևը՝ պարզ ու որոշակի ասելով, որ լեզուն և խոսքն անբաժանելի են. լեզուն սխեմա է, նորմա, սովորություն, որն անմիջականորեն կապված է լեզվի անհատական դրսևորման՝ խոսքի հետ<sup>12</sup>: Լեզվում ամեն ինչի գոյության հիմնական սկզբունքը հակադրության սկզբունքի մեջ է տեսել նաև Յու. Ստեպանովը. «Որևէ բան լեզվում գոյություն ունի միայն այն չափով, ինչ չափով հակադրվում է մի այլ բանի, որ կապված է նրա հետ, բայց տարբեր է նրանից»<sup>13</sup>:

Հակադրամիասնությունը՝ որպես ձևի և բովանդակության սերտ կապն ապահովող անհրաժեշտ միջոցներից մեկը, նպաստում է, որպեսզի տարբեր լեզուներով հաղորդակցվող մարդիկ միևնույն առարկան, միևնույն հասկացությունն ու միևնույն իմաստը լեզվական տարբեր ձևերով և տարբեր հնչյուններով փոխանցեն: Լեզուներում միատեսակ բնույթ չկրող այս գործընթացը, որ գործում է «բովանդակություն=ձև» կադապարի շրջանակներում, իր հերթին կախված է այն հանգամանքից, թե լեզուն ինչքանով է կարողանում պահպանել իր լեզվական համակարգում

<sup>11</sup> Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ 37:

<sup>12</sup> Steu Л. Ельмслев. Понятие управления. Метод структурного анализа в лингвистике. Язык и речь.// В. А. Звегинцев. История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях, ч. 2. М., 1965, էջ 59-64:

<sup>13</sup> Ю. С. Степанов. Основы общего языкознания. М., 1975, էջ 144:

գոյություն ունեցող իմաստային դաշտն ու քերականական միջոցները, կամ կարողանում է պահպանել դրանք ընդհանրապես. մի դեպքում հին ձևերն ու իմաստներն սկսում են զուգահեռաբար կիրառվել նոր ձևերի ու իմաստների հետ, իսկ մյուս դեպքում հին ձևերն ու իմաստներն ամբողջությամբ քայքայվում են և արդյունքում նոր ձևերի ու իմաստների առաջացման տեղիք տալիս: Վերջինիս արդյունքում լեզուների միջև բացահայտվում են այնպիսի անսպասելի նմանություններ ու տարբերություններ, որոնք մի կողմից՝ ցույց են տալիս բովանդակության պլանում արտացոլվող իրականության համընդհանուր հատկանիշներն ու հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ այդ հատկանիշներն ու հարաբերությունները ներկայացնող լեզվական համընդհանուր միջոցները:

Ըստ Բոդուենի դը Կուրտենեի՝ լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման տեսության լեզուներն իրար կապող օղակը պետք է փնտրել լեզվական մտածողության և լեզվական ցուցորդների հակադրամիասնական կապի մեջ: Նա առաջնություն չի տալիս այս երկու կողմերից որևէ մեկին և գտնում է, որ լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար հավասարապես անհրաժեշտ է հաշվի առնել թե՛ *լեզվական մտածողությունը*, որտեղից կարելի է դուրս բերել մի ամբողջական յուրօրինակ լեզվական գիտելիք, գիտելիք գոյության և անգոյության բոլոր բնագավառներից, աշխարհի բոլոր դրսևորումներից՝ ինչպես նյութական, այնպես էլ անհատական-հոգեբանական և հասարակական<sup>14</sup>, և թե՛ *լեզվական ցուցորդները*: Ըստ նրա՝ լեզվական ցուցորդները ոչ այլ ինչ են, եթե ոչ լեզվական գիտելիքներում կատարվող փոփոխությունների արտահայտման լավագույն միջոցներ, որոնք, ինչպես բնության ու հասարակական կյանքի հետ առնչվող ցանկացած խնդիր, ժամանակի ընթացքում փոփոխվում են. այն, ինչը երբևէ նշվել է, որոշ ժամանակ անց կարող է գրկվել իր բոլոր լեզվական ցուցորդներից, մյուս կողմից՝ նախկինում բոլորովին հաշվի չառնված առանձնահատկություններն ու տարբերություններն այդ նույն լեզվական նյութի զարգացման հետագա փուլերում կարող են ձեռք բերել որոշակի ցուցորդներ. «Այդպիսին է, օրինակ, գոյականների որոշյալության և անորոշության ձևական տարբերությունը, որն այսօր բնորոշ է ռոմանական լեզվական աշխարհին, բայց խորթ է լատիներենի վիճակին)... Յուրաքանչյուր լեզվի մեջ սաղմնային

<sup>14</sup> Տե՛ս И. А. Бодуэн де Куртенэ. Количественность в языковом мышлении.// Избранные труды по общему языкознанию. Т. II. М., 1963, էջ 312:

վիճակում ննջում են տարբերակումներ, որոնք դեռ չունեն հատուկ ցուցորդներ»<sup>15</sup>:

Այս հարցի վերաբերյալ առավել ծավալուն քննություն իրականացրած լեզվաբաններից մեկը՝ Օ. Եսպերսենը, գտնում է, որ լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտումը պետք է սկսել նախնադարյան մտածելակերպի բացահայտումից, հասնել մինչև մարդու ներկայիս մտածելակերպի բացահայտում՝ միննույն ժամանակ կարևորելով այդ մտքերի ու սպավորությունների արտահայտման համար հասկացությունների քիչ թե շատ վերացական նշաններ ստեղծելու անդադար փոփոխվող գործընթացը, որը պայմանավորված է մարդուն շրջապատող աշխարհի փոփոխական վիճակով. «Որպեսզի հասնենք այդ փոփոխություններին, մենք մեր գիտակցության մեջ կամ ծայրահեղ դեպքում լեզվի մեջ ստեղծում ենք որոշակի, քիչ թե շատ կայուն կետեր, որոշակի միջին միավորներ»<sup>16</sup>: Իրական կյանքում միջին միավորներ չեն լինում, բայց դրանք գոյություն ունեն լեզվում. դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ վերացականության աստիճանն անդադար փոփոխող վերացական բառեր: Նա առանձնակի ուշադրություն է դարձնում այն հիմնական իմաստներին ու հարաբերություններին (*ենթակա՝* ուղղական, *ստորոգելի* - (հատուկ հոլով չկա), *լրացում՝* հայցական կամ տրական, *կապ՝* սեռական, *տեղ, ժամանակ, տարբեր հարաբերություններ՝* ներգոյական և այլն, *չափ* - (հատուկ հոլով չկա), *գործողության ձև* - (հատուկ հոլով չկա), *միջոց՝* գործիական), որոնց հիմքի վրա են կառուցվում աշխարհի բոլոր լեզուները, և որոնք, ըստ նրա, գոյություն ունեն լեզուների մեծամասնության իմաստային դաշտերում<sup>17</sup>: Որպես «բովանդակություն=ձև» կաղապարի կողմնակից՝ նա առաջարկում է լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման ելակետային սկզբունքը փնտրել ոչ թե ուսումնասիրվող օբյեկտների ինչ-որ տարբերությունների, այլ միայն այդ օբյեկտներն ուսումնասիրողների մտեցումների տարբերությունների մեջ, հավասարապես գործ ունենալ բովանդակության և արտահայտության պլանների հետ: Վերջիններս համարելով ձևաբանության և շարահյուսության ներկայացման լավագույն դաշտեր՝ Եսպերսենը գտնում է, որ ձևաբանությունն ու շարահյուսությունն ուսումնասիրում են միննույն առարկան և նշում, որ այն նյութը, որի հետ գործ ունի ձևաբանությունը,

<sup>15</sup> И. А. Бодуэн де Куртене. Язык и языки. Избранные труды по общему языкознанию. Т. II. М., 1963, էջ 83-84:

<sup>16</sup> О. Есперсен. Философия грамматики. М., 1958, էջ 54:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 212:

ոչնչով չի տարբերվում այն նյութից, որի հետ գործ ունի շարահյուսությունը: Ըստ նրա՝ ինչպես ձևաբանությունը, այնպես էլ շարահյուսությունը ուսումնասիրում են լեզվի քերականական երևույթների ամբողջությունը. ձևաբանությունը մոտենում է երևույթներին արտաքինից և ձևից անցնում է բովանդակությանը, իսկ շարահյուսությունը՝ բովանդակությունից դեպի ձևը<sup>18</sup>:

Լ. Վ. Շչերբան լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար առաջնություն չի տալիս կողմերից որևէ մեկին՝ պատճառաբանելով, որ մարդկային միտքը չի դիտվում լեզվի ձևերից անջատ: Այն, ըստ նրա, ամփոփված է այդ իսկ ձևերի մեջ, որտեղից լեզվաբանը այն կարող է դուրս բերել տարբեր լեզուներում նրա արտահայտության ձևերի հետ համեմատելու միջոցով. «Մտածողության ու ձևի դիալեկտիկական միասնության հետևանքով մեր միտքը մշտապես գտնվում է լեզվի ձևերի գերության մեջ և ազատել այն այդ գերությունից կարելի է միայն որևէ այլ լեզվում ընդունված արտահայտության ձևերի հետ համեմատություն կատարելով»<sup>19</sup>:

Լ. Տենիերը լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար միաժամանակ հաշվի է առնում երեք գործոն: Դրանք են՝ **արտահայտության ձևը** (ձևաբանություն), **բովանդակության ձևը** (բառերի միջև ստորակարգային հարաբերություններ արտացոլող կառուցվածքային շարահյուսություն) և **բովանդակության հիմքը** (բառի բուն իմաստով իմաստաբանություն)<sup>20</sup>: Աշխարհի բոլոր լեզուները բաժանելով կենտրոնաձիգ և կենտրոնախույս տիպերի՝ Տենիերն ուսումնասիրում է տարբեր լեզուներում գործող նմանատիպ կառույցների առանձնահատկությունները և փորձում ցույց տալ, թե ինչպես է միննայն միտքն արտահայտվում տարբեր լեզուներում: Դա նրան հնարավորություն է տալիս տարբեր լեզուներում զանազան ձևերի միջև բացահայտելու առկա անսպասելի նմանություններ: Ըստ այդմ՝ նա ամեն կարգի ուսումնասիրությունների համար կարևոր է համարում անդրադառնալ շարահյուսությանը՝ նախադասության ուսմունքին<sup>21</sup>: «Առանձին վերցրած

<sup>18</sup> О. Есперсен. Философия грамматики. М., 1958, էջ 31, 36:

<sup>19</sup> Л. В. Щерба. Избранные работы по языкознанию и фонетике. Т. I. Л., 1958, էջ 27:

<sup>20</sup> Шен У. Л. Теньер. Основы структурного синтаксиса. М., 1988, էջ 24-35:

<sup>21</sup> Կառուցվածքային շարահյուսության ուսումնասիրության առարկան համարվում է նախադասությունը: Գերմանացի լեզվաբանները «շարահյուսություն» բառի թարգմանության համար ընտրել են Satzlehre եզրույթը, որը թարգմանաբար

բառը պարզապես մաքուր վերացություն է, քանզի նախադասությունն այն բնական միջավայրն է, որում ապրում են բառերն այնպես, ինչպես ձկներն են ապրում ջրում»<sup>22</sup>: Հետևելով լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման «բովանդակություն=ձև» կադապարին՝ Տենիերն ընդունում է բովանդակության և արտահայտության պլաններում առկա միավորների՝ մեկը մյուսից «կախված»<sup>23</sup> լինելու հանգամանքը և պահանջում է այս միավորների քննությունը նրանց իսկ փոխկապակցված ամբողջության մեջ:

Լեզուների նմանությունների ու տարբերությունների առաջացման բուն պատճառները լեզվաբանները տեսնում են քերականական կանոնների և մարդկային մտքերի միջև ժամանակի ընթացքում առաջացած անհամատեղելիության մեջ, որտեղ լեզվաբանը մի կողմից՝ գործ է ունենում բազմաթիվ մասնավոր իմաստների հետ, իսկ մյուս կողմից՝ քերականական նոր ձևերի. քերականական ձևերի փոփոխության մեջ Ա. Պոտեբնյան կարևորում է ոչ թե ընդհանուր քերականական ձևերի քանակի փոփոխությունը, այլ ձևերի փոփոխությունը բառի բուն իմաստով, ինչպես, ասենք, հոլովական թեքույթների փոխարինումը նախդիրներով<sup>24</sup>: Հարկ ենք համարում նշել նաև, որ լեզուներում նմանությունների ու տարբերությունների տեղիք տվող միավորները լավագույն ձևով ներկայացնելու սկզբունքները լեզվաբանները շատ հաճախ որոշում են ընդամենը մեկ լեզվի, անգամ մեկ խոսքի մասի կամ մեկ քերականական կարգի շրջանակում կատարված ուսումնասիրությունների մեջ, ինչպես օրինակ՝ հայերենում իմաստաբանական տեսանկյունից բառերի դասակարգումը, հոլովների իմաստային դաշտի կարևորումը ևն<sup>25</sup>: Շատ հաճախ սահմանափակ ծավալ ունեցող հենց այս նյութերն են, որոնք հանդիսանում են երկու և ավելի լեզուների համեմատական աշխատանքի

---

նշանակում է «նախադասության ուսմունք». տե՛ս Լ. Теньер. Основы структурного синтаксиса. М., 1988, էջ 22:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

<sup>23</sup> Կախվածության միտքը շարահյուսության մեջ նորություն չէր: Այն ներկայացված է եղել մի շարք այնպիսի ֆրանսիացի գիտնականների կողմից, ինչպիսիք են Բալլին, Դամուրետը, Պիշոնը և Սեշեն, որոնք նախադասության մեջ առանձնացրել են «գլխավոր և կախյալ անդամի», ինչպես նաև «ենթակայի և ստորոցայի» միջև առկա կախվածությունը. մեջբերված է ըստ Լ. Теньер. Основы структурного синтаксиса. М., 1988, էջ 11:

<sup>24</sup> Տե՛ս Ա. А. Потебня. Из записок по русской грамматике. Т. I. М., 1958, էջ 61:

<sup>25</sup> Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, էջ 33:

նյութ: Եթե հետևենք հոլովն արտաքին աշխարհի առարկաների, երևույթների, իրողությունների միջև եղած բազմազան կապերն ու հարաբերություններն արտացոլող քերականական կարևորագույն կարգերից մեկը համարող հայ քերականագետների տեսություններին, ապա կարծում ենք՝ կարող ենք լեզուների նմանությունների ու տարբերությունների բացահայտման հարցի քննությունը սկսել հոլովվող բառի նշանակության քննությամբ, հոլովները որոշել առարկաների միջև դրսևորվող հարաբերություններով և յուրաքանչյուր հոլով իր համապատասխան ձևով ու նշանակությամբ դիտել իբրև անվան առանձին փոփոխություն: Ա. Մ. Պեշկովսկին, որը «հայրական տուն» և «հոր տուն»<sup>26</sup> բառակապակցությունների մեջ կարևորում է միևնույն իմաստի փոխանցման երևույթը, երկրորդ պլան է մղում նրանց միջև տարբերությունը (առաջինը ցույց է տալիս առարկայի հատկանիշը, իսկ երկրորդը՝ մի առարկայի կապը մյուսի հետ):

Լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների հարցում (խոսքն այստեղ վերաբերում է նաև լեզվաբանական համապատասխան նյութի ընտրությանը) լեզվաբանները հաշվի են առնում նաև լեզուների անդադար զարգացման գործընթացը և այդ զարգացման ընթացքում լեզվական համակարգերում անդադար կատարվող փոփոխությունները:

Դիտարկելով լեզուների միջև նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների համար առաջադրված լեզվաբանական վերոնշյալ տեսությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ լեզուների միջև նմանությունների ու տարբերությունների բացահայտման սկզբունքների հարցը բոլոր ժամանակներում տատանվել և շարունակում է տատանվել «բովանդակություն->ձև», «ձև->բովանդակություն» կադապարների շրջանակներում, որոնց միջև գործում է նրանց իսկ փոխկապակցված ամբողջությամբ հանդես եկող «բովանդակություն=ձև» կադապարը: Այս կադապարները ոչ այլ ինչ են, եթե ոչ լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքները ներկայացնող հաստատուն կառույցներ: Այսօր լեզվաբանական աշխատություններում այս սկզբունքների ընտրությունը պայմանավորված է ուսումնասիրվող լեզվական նյութով, լեզվաբանի՝ համապատասխան նյութի նկատմամբ ցուցաբերած

<sup>26</sup> См. у А. М. Пешковский. Избранные труды. М., 1959, էջ 96:

մոտեցումով, ինչպես նաև լեզուների զարգացման ընթացքում լեզվական համակարգերում անդադար կատարվող փոփոխություններով:

**ՆԱԴԻՆԵ ՄԵԼԿՈՆՅԱՆ**

***Լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների հարցը***

Սույն հոդվածը նվիրված է լեզուների միջև գոյություն ունեցող նմանությունների ու տարբերությունների բացահայտման համար լեզվաբանական տարբեր տեսությունների դիտարկմանը: Սա լեզվաբանական աշխատություններում տարակարծությունների տեղիք տվող խնդիրներից մեկն է, որի լուծման համար առաջադրված լեզվաբանական սկզբունքները տատանվում են «բովանդակություն->ձև», «ձև->բովանդակություն» և «բովանդակություն=ձև» հաստատուն կառույցների շրջանակներում: Այսօր լեզվաբանական աշխատություններում այս սկզբունքների ընտրության համար հաշվի են առնվում այնպիսի իրողություններ, ինչպիսիք են՝ ուսումնասիրվող լեզվական նյութը, լեզվաբանի՝ համապատասխան նյութի նկատմամբ ցուցաբերած անհատական մոտեցումը, լեզվական համակարգերում անդադար կատարվող փոփոխությունները, ինչպես նաև առանձին լեզուներին վերաբերող լեզվական փաստերը:

**МЕЛКОНЯН НАРИНЕ**

***Вопрос о раскрытии принципов сходств и различий языков.***

Статья посвящена наблюдению различных лингвистических теорий для раскрытия сходств и различий языков. В лингвистических работах это один из спорных вопросов, для решения которого были выдвинуты лингвистические принципы колеблющихся в пределах стереотипов "содержания -> форма", "форма -> содержания" и "содержания = форма". На сегодняшний день в лингвистических работах для выбора этих принципов учитываются такие факты, как изучаемый языковой материал, индивидуальный подход лингвиста к соответствующему материалу, непрерывные изменения в лингвистических системах, а также языковые факты отдельных языков.

NARINE MELKONYAN

*On the Disclosure of Principles of Similarities and Differences  
between Languages*

Current article focuses on the observation of various linguistic theories in terms of disclosure of similarities and differences between languages. This issue is considered to be one of the most controversial ones in linguistic studies. For the possible solution of the issue the proposed linguistic principles are examined within the scope of "content -> form", " form -> content" and "content = form" fixed structures. Nowadays, for the selection of these principles some factors are taken into consideration, such as studied language material, individual approach of the linguist towards the relevant material, continuous changes in linguistic systems as well as some linguistic facts of related to particular languages.

ՄԱԹԵՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի հայցորդ

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** փոխառյալ բառեր, իրանական և արաբական փոխառություններ, բառապաշարի հարստացման արտաքին միջոց:

**Ключевые слова и выражения:** заимствованные слова, иранские и арабские заимствования, внешнее средство обогащения лексики.

**Key words and expressions:** borrowed words, Iranian and Arabic borrowings, external means of vocabulary enriching.

Հայոց լեզվի համար փոխառությունը եղել և շարունակում է մնալ նրա բառային կազմի հարստացման կարևոր աղբյուրներից մեկը, որը ուղեկցել է վերջինիս իր պատմական զարգացման ողջ ընթացքում: Փոխառությունների գործածությունը լեզվում պայմանավորված է տարբեր ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային կապերով և հարաբերություններով, ինչպես նաև կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններով և զարգացմամբ: Փոխառվում են այն բառերը և տերմինները, որոնց համարժեքները չկան փոխառու լեզվում կամ տվյալ լեզվի բառակազմական միջոցներով ստեղծված համարժեք բառերը լիովին չեն արտահայտում փոխառյալ բառերի իմաստները: Փոխառյալ բառերից բոլորը չէ, որ մինևսայն դերը և ճակատագիրն են ունենում փոխառու լեզվում: Նրանցից շատերը մերվում, կայունանում են լեզվի մեջ՝ դառնալով վերջինիս սեփականությունը և հարստացնում այն, իսկ մի մասն էլ, եթե անհարկի կամ սխալ փոխառություն է, լեզուն աստիճանաբար մերժում է և ստեղծում իր սեփական ճիշտ համարժեքները:

Ավագյանի արձակի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ այն հարուստ է արևելյան լեզուներից (պարսկերեն, արաբերեն), ինչպես նաև ռուսերենից և ռուսերենի միջոցով այլ լեզուներից կատարված փոխառություններով:

Տարբեր լեզուներից փոխառված բազմաթիվ բառերից գերակշռում են իրանական փոխառությունները, որը պայմանավորված է հեղինակի անհատականությամբ. նրա գրական աշխարհայացքը ձևավորվել է Թեհրանում:

Հայաստան վերադառնալուց հետո էլ Ավագյանը իր տպավորությունները քաղում էր արևելյան այդ աշխարհից, որտեղ նա անցկացրել էր իր կյանքի քսանյոթ տարիները:

Ավագյանի արձակում գործածված իրանական փոխառությունները ներկայացնում ենք հետևյալ խմբերով.

ա) Բուսական աշխարհին և բնության երևույթներին վերաբերող բառեր. **մեխակ, վարդ, պարտեզ, չայ, շահպրակ, նոճի, մեխակ, մանուշակ, մարգ, համեմ, կանեփ, խաշխաշ, արմավ, դաշտ, բրինձ, բամբակ, պիստակ, պղպեղ** և այլն: Օրինակ՝ «Աղջիկը՝ Ֆեթնեն, մեզ պղնձյա սինիով **արմավ** ու **խաշխաշ** մատուցեց և նորից կանգնեց անցքի մոտ» (Պ, 142,1965), «- Կաշի, գորգ, **չայ, պիստակ, համեմներ** էլ կա՞ն» (Պ, 142,1965), ««Ողջ Շիրազը մրափել էր՝ հարբած **շահպրակների** ու դեղին **վարդերի** բուրմունքից... »» (Պ, 158,1965):

բ) Կենդանական աշխարհին վերաբերող բառեր. **կաչաղակ, կապիկ, մոդես, սիրամարգ, վագր, վարագ, վիշապ, բազե, թութակ (թութի)** և այլն: Օրինակ՝ ««Լուսիկը **թութակը** նվեր է ստացել իր տարեդարձին»» (Պ, 23,1973), ««**Վագրերից** մեկը եկավ ինձ հետ»» (Պ, 152, 1965), ««Գնդապետը նայեց շուրջը, օղակը ցրվել էր, խառնվել իրար, ինչպես **բաղերի** երամը, երբ տեսնում է իր վրա խոյացող **բազեին**»» (ՇՀ, 55):

գ) Մետաղներ և հանքային նյութեր. **արձիճ, ժանգ, պղինձ, պողպատ, նավթ, գոհար, զմրուխտ** և այլն: Օրինակ՝ ««**Արձձագույն** ամպերին նայելիս գնդապետի սիրտն ուռչում էր»» (Պ, 101, 1958), ««Որոշեցի գնալ հարավ, այդ **ժանգոտած** լեռնաշխարհը, որտեղ մարդիկ շոգից...»» (Պ, 139,1965), ««Զվարճախոս մարդ է երևում և **պողպատի** պես ամուր»» (ՆԴ, 147):

դ) Գիտության, արվեստի և կրթության ոլորտում օգտագործված բառեր. **աշակերտ, հանճար, մատյան, նկար, պատկեր, քանդակ, տաճար, ճաշակ, ասպետ, դաստիարակ, պայուսակ, պարիսպ** և այլն: Օրինակ՝ ««Անին ասում էր. «**Հանճարը** փյունիկ հավք չէ, որ գա ու նստի ուսիդ»» ԳՀ, 432), ««...Կրեմլի պատերը, հուշարձանները, գեղաքանդակ **տաճարները**, հիանալի մետրոն...»» (Պ, 71,1950), ««...ես պետք է վերջապես պարզեմ, թե ինչպիսին է մեր այդ **ասպետը**»» (Պ, 61,1965), ««...նա օրինակելի **աշակերտ** է, նույնիսկ վերին աստիճանի լուրջ, կարգապահ»» (Պ, 61,1965):

ե) Կրոնական նշանակություն ունեցող բառեր. **հրեշտակ, հրաշք, գմբեթ, գուշակ, դև, դրախտ, կախարդ, մարգարե, նվեր, սանդարամետ (դժոխք), ջաղու, օրհնել** և այլն: Օրինակ՝ ««Եթե ես չընդունվեմ բժշկական ինստիտուտ ու բժիշկ չդառնամ՝ մորս աշխարհը **սանդարամետ** կթվա»» (ՎՀ, 223 - 224), ««- Չգիտեմ, բայց ես վախենում եմ նրանցից, նա սարսափելի կին է, **ջաղու** է նա»» (ՆԴ, 157), ««- Ֆաթի՛մա, - անսպասելի ճչաց տիկին Զոհրեն, - այդ ո՞ր **դժոխքումն** ես կորել, եկ, հավաքի՛ր սեղանը»» (ՇՀ, 5):

զ) Գունանուններ. **կապույտ, սև, սպիտակ, կարմիր, գույն, երանգ, ճերմակ**: Օրինակ՝ ««Վաղ գարնան երկինքը **կապույտ** էր. ամպի ոչ մի ծվեն

չկար>> (Պ, 115, 1965), <<...նստեց դռան մոտ, **սպիտակ** դունչը ցցեց ու սկսեց նայել իրեն>> (Պ, 32, 1973), <<Երբ նա ծխում էր, սենյակի մթության մեջ գլանակի **կարմիր** կրակը... >> (Վ, 15), <<Նրանց ամուսնական կյանքի մեջ պիտի հավիտյան մի **սև**, դառը բիծ մնար>> (Վ, 17):

Է) Զանազան առարկաներ և երևույթներ, վերացական հասկացություններ արտահայտող բառեր. **անգամ, առույգ, արագ, արձակ, ավարտ, բազում, բույր, դժխեմ, երամ, ուժ, նման, թշնամանք, բաժանել, խորտակել, կամք, հակիրճ, ճարակ, ճարպիկ, նշան, ուշ, աշխատել, շնորհ, զգույշ, պատիվ, պատուհաս, ջուխտ, երիտասարդ, սուգ, վիշտ, վտարել, տոթ, վստահ, ուխտ, փառք** և այլն:

Ընդգծված բառերը մեծ մասամբ արմատավորվել են հայերեն լեզվում և գործածվում են ժողովրդի կողմից: Խոսելով հայերենի իրանական փոխառությունների մասին՝ Լ. Հովհաննիսյանը նշում է, որ դրանց <<մի զգալի քանակ մեզանում համընդհանուր տարածում է ստացել հայ մատենագրության միջոցով՝ սկսած 5-րդ դարից: Դրանք հատկապես զրավոր (զրական) լեզվին բնորոշ բառեր են, որոնց մի մասը ժամանակագրորեն հեռանալով փոխառության ակունքներից դադարել է օտար գիտակցվելուց>><sup>1</sup>:

Հայերենում իրանական փոխառությունների ամբողջական ուսումնասիրությամբ զբաղվել է Հր. Աճառյանը՝ ներկայացնելով հայերենին անցած բոլոր իրանական բառերը, որոնք կազմում են 1405 բառ: Ըստ հեղինակի՝ <<Ցուցակը կազմված է այբուբենական կարգով համեմատությամբ նոր պարսկերեն, պահլավերեն և զանդկերեն ձևերի: Ուր որ պետք է, ավելացնում ենք նաև հին պարսկերեն և սանսկրիտ ձևերը: Հին շրջանի բառերը տպված են շեղատառ, իսկ նոր շրջանի բառերը բոլորագիր>><sup>2</sup>: Իրանական լեզուներից կատարված շուրջ 1400 փոխառություններից, - գրում է Ա. Սուքիասյանը, - գրաբարի և միջին հայերենի միջոցով ժամանակակից հայերենին են անցել մոտ 530 բառ, որոնք իրենց բնույթով բազմազան են և վերաբերում են հասարակական կյանքի և գործունեության բոլոր բնագավառներին<sup>3</sup>:

Արևելյան լեզուներից վերցված փոխառությունների մեջ Ավագյանի արձակում առանձնանում են նաև արաբական փոխառությունները: Վերջիններս, ի տարբերություն իրանական փոխառությունների, սակավ են և վերաբերում են հասարակական կյանքի տարբեր ոլորտների. **ագասպ** (Պ,

<sup>1</sup> Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 42:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Ե., 1940, էջ 240:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2008, էջ 199 – 200:

84, 1973), **ափիոն** (ՎՀ, 415), **խսիր** (ՎՀ, 211), **հաշիշ** (ՎՀ, 415), **կավատ** (ՎՀ, 410), **մկրատ** (ՇՀ, 171), **նունուֆար** (ՇՀ, 3), **թարխուն** (Վ, 221), **սինի** (Պ, 142, 1965), **նարինջ** (ՇՀ, 119), **ամարաթ** (Պ, 11, 1973) և այլն: Օրինակ՝ <<- Մեկը հարցնի, - մեջ ընկավ կարկատաններով մարդը, - քառասունդ անցել է, ինչու ես **ազապ** մնացել>> (Պ, 84, 1973), <<- Ինչ պատահի, մարիխունա, **հաշիշ, ափիոն**>> (ՎՀ, 415) և այլն:

Հեղինակի բառապաշարում այլ լեզուներից կատարված փոխառություններում հանդիպում ենք նաև հասարակական - քաղաքական կյանքի, կենցաղի և այլ բնագավառների վերաբերող բազմաթիվ այլ բառերի, որոնք անցել են հայերենին անմիջական կամ միջնորդավորված ձևով: Ըստ Հ. Օհանյանի՝ <<Փոխառյալ բառերը հիմնականում ներմուծվում են ռուսերենի միջոցով, երբեմն էլ հենց ռուսերենից, ուստի ռուսաց լեզուն հանդես է գալիս ոչ միայն որպես փոխատու, այլև միջնորդ լեզու: Ռուսերենն օտարլեզվյան բառերը ենթարկում է իր հնչյունական, ձևաբանական, բառակազմական օրենքներին, հաճախ էլ որոշակիություն և ճշգրտություն մտցնում դրանց իմաստների մեջ և գործածության մեջ դնում: Հայերենը դրանք ընդունում է ռուսերենից արդեն որպես պատրաստի ձևեր, որոնք այլևս գրեթե կարիք չեն գգում էական փոփոխությունների>><sup>4</sup>: Օրինակ՝ **բոլշևիկ** (ՀՏ, 459), **կոմունիզմ** (Վ, 123), **ֆաշիզմ** (Վ, 24), **ոնոյուցիա** (Վ, 10), **կոնսերվատիզմ** (Վ, 69), **օպորտունիզմ** (Վ, 183), **բրիգադիր** (ՎՀ, 71) և այլն: Օրինակ՝ <<Կգա **կոմունիզմը**, և Մարքսն ու Լենինը կդառնան ժամանակի լեզուն>> (Վ, 123), <<-Ղազարն անհավատ մարդ է, **բոլշևիկ** է, աստծուն չի հավատում>> (ՀՏ, 459) և այլն: Ավագյանի երկերում օգտագործված վերոնշյալ բառերը հանդես են գալիս որպես բանվորական շարժման, հասարակական - քաղաքական կյանքի և հոսանքների, սովետական կարգերի կառավարման համակարգի հասկացությունների անվանումներ: Այդ բառերի մեծ մասն արդեն մտել է հայոց լեզվի բառային կազմի մեջ և ձուլվելով համընդհանուր գործածություն ունեցող բառերի հետ՝ հարստացնում են հայոց լեզվի բառապաշարը:

Փոխառված բառերի մեջ կան նաև բժշկության ոլորտում օգտագործվող բառեր, որոնք ժամանակի ընթացքում հայերենում գործածական են դարձել: Օրինակ՝ <<Անին ասաց, որ հիվանդանոցի **զինեկոլոգը**, ում Պետրովա, իրեն ծանոթ է>> (ՎՀ, 355), <<- Եթե կարելի է

<sup>4</sup> Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Ե., 1982, էջ 295:

այն կողմ փչեք,- ընդհատեց նրան Գարսևանը,- ծխախոտի ծուխն ինձ գրգռում է, ես **ասթմա** ունեմ>> (ՎՀ,115), <<Դեղարաններում չկա նույնիսկ մի **ասպիրին**, էլ չեմ խոսում ավելի անհրաժեշտ դեղորայքի մասին>> (ՇՀ,155) և այլն:

Ժամանակի ընթացքում փոխառված բառերին զուգահեռ լեզվի զարգացման տարբեր փուլերում ստեղծվում են դրանց համապատասխան ազգային համարժեք ձևերը, ուստի փոխառված բառերը դադարում են լայն գործածություն ունենալուց և վերածվում են օտարաբանությունների: Օրինակ՝ <<Ինչպիսի անճարակ մարդկանց են բերել ու խոթել **մինիստրությունները**>> (ՇՀ, 50), <<Նրան առաջարկեցին, որպես **տուրիստ**, մեկնել Սովետական Հայաստան>> (Պ, 88 1962), <<Խանութի ցուցափեղկում վառվող **ռեկլամ** տառերի տարտամ կապույտ լույսը քնքշորեն լուսավորում էր նրա դեմքը>> (ՆԴ, 19) և այլն: Ընդգծված բառերը և այս կարգի այլ բառեր. լոգունգ - կարգախոս, կոնտրաստ - համադրություն, կամպանիա - ընկերություն, սեսիա - քննաշրջան, կոմֆորտ - հարմարավետություն, շանս - հնարավորություն, դեմոկրատիա - ժողովրդավարություն և այլն, վերջին տարիների ընթացքում դուրս մղվեցին հայոց լեզվից, քանի որ ստեղծվեցին դրանց համարժեք ազգային ձևերը: Ինչպես նկատում է Էդ. Աղայանը. <<Փոխառյալ բառերի փոխարինումը հայերեն համապատասխաններով մեր լեզվի բառապաշարի կատարելագործում է ոչ միայն նրանով, որ անհարկի փոխառությունները դուրս են մղվում մեր լեզվից, այլև նրանով, որ նպաստում են մեր լեզվի բառակազմական հնարավորությունների ծավալմանը, ինչպես և՛ զանազան անպատեհությունների վերացմանը>><sup>5</sup>:

#### Օգտագործված գրականություն

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
2. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Ե., 1940:
3. Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990:
4. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2008:
5. Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Ե., 1982:
6. Ավագյան Աբ., Պատմվածքներ, Ե.,1950:

---

<sup>5</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 187:

7. Ավագյան Ար., Վաղը, Ե., 1951:
8. Ավագյան Ար., Շիկացած հող, Ե., 1955:
9. Ավագյան Ար., Պատմվածքներ, Ե., 1958:
10. Ավագյան Ար., Նազելի Դալարյան, Ե., 1959:
11. Ավագյան Ար., Պատմվածքներ, Ե., 1962:
12. Ավագյան Ար., Պատմվածքներ, Ե., 1965:
13. Ավագյան Ար. Հարավային տենդ, Ե., 1971:
14. Ավագյան Ար., Եղել է, չի եղել, Ե., 1973:
15. Ավագյան Ար., Վերջին հանգրվան, Ե., 1982:

Համառոտագրություններ

- Վ – Վաղը, Ե., 1951:  
ՇՀ – Շիկացած հող, Ե., 1955:  
ՆԴ – Նազելի Դալարյան, Ե., 1959:  
ՎՀ – Վերջին հանգրվան, Ե., 1982:  
Պ – Պատմվածքներ, Ե., 1950, 1958, 1962, 1963, 1965, 1973:

Սաթենիկ Եղիազարյան

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ  
ԱՄՓՈՓՈՒՄ

Ավագյանի արձակում արևելյան լեզուներից՝ պարսկերենից, արաբերենից և ռուսերենից կամ ռուսերենի միջոցով ուրիշ լեզուներից վերցված փոխառյալ բառերը հասարակական – քաղաքական կյանքի տարբեր ոլորտների բնորոշ առարկաների, երևույթների, հասկացությունների անվանումներ են, որոնք յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հարստացման կարևոր և անհրաժեշտ միջոցներից են:

САТЕНИК ЕГИАЗАРЯН  
ЗАИМСТВОВАНИЯ В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА  
РЕЗЮМЕ

В прозе Авагяна слова, заимствованные из таких восточных языков, как персидский, арабский и русский или слова, взятые из других языков посредством русского, являются названиями предметов, явлений, понятий, типичных для различных областей общественно-политической жизни, которые являются важным и необходимым средством обогащения лексики для каждого языка.

SATENIK YEGHIAZARYAN  
BORROWINGS IN ABIG AVAGYAN'S PROSE  
SUMMARY

In Avagyan's prose words borrowed from oriental languages, such as Persian, Arabic and Russian or words taken from other languages through Russian, are names of objects, phenomena, concepts typical for different fields of social and political life, which are important and necessary means for enriching vocabulary of every language.

ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

ՈՐՈՇՉԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** արևմտահայերեն, որոշիչ, որոշյալ, նախադաս շարադասություն, հետադաս շարադասություն, առարկայական տրոհում, ենթահիմք, վերաբերյալ, տրամաբանական շեշտ, ենթակա, ստորոգյալ:

**Ключевые слова и выражения:** западноармянский, определение, определяемое, препозитивный порядок слов, постпозитивный порядок слов, актуальное членение, тема, рема, логическое ударение, подлежащее, сказуемое

**Key words and expressions:** Western Armenian, definition, defined, prepositive word order, postpositive word order, functional sentence perspective, topic, comment, logical stress, subject, predicate

Արևմտահայերենի շարադասական առանձնահատկությունների ուսումնասիրման մեջ գոյականի և նրա լրացումների շարադասման հաջորդականության քննությունը կարևոր նշանակություն ունի ճիշտ այնպես, ինչպես ենթակայի, ստորոգյալի ու ուղիղ խնդրի շարադասության դիտարկումը:

Հայտնի է, ըստ գոյականական անդամի դասավորության՝ լեզուները բաժանվում են երկու խմբի՝ կենտրոնաձիգ, որտեղ գոյականական լրացումը նախորդում է իր լրացյալին, և կենտրոնախույս, որտեղ գոյականական լրացումը հաջորդում է իր լրացյալին<sup>1</sup>:

Արևմտահայերենին բնորոշ է հատկացուցիչ-որոշիչ-գոյականով արտահայտված բաղադրիչ-բացահայտիչ հաջորդականությունը: Այս շարքից մենք հանել ենք ենթական՝ նկատի ունենալով, որ նախադասության ցանկացած տարր, որն արտահայտված է գոյականով, կարող է ունենալ գոյականական անդամի լրացում(կամ լրացումներ), և ընդհակառակն՝ ենթական կարող է արտահայտվել անդամ բայով և ունենալ բայական անդամի լրացում(լրացումներ):

Սույն հոդվածում քննվում է արևմտահայերենում որոշիչ շարադասությունը՝ հաշվի առնելով նախադասության առկայական տրոհումը:

Արևմտահայերենում որոշիչը դրվում է իր լրացյալից առաջ և նրա հետ կազմում հնչերանգային մեկ ամբողջություն, սակայն «հաճախ հաղորդման նպատակից ելնելով, ոճական նկատառումներով կամ

---

<sup>1</sup> Л. Теньер, Основы структурного синтаксиса, М., 1988, с.33-34.

պարզապես ամբողջ նախադասության կառուցվածքի թելադրանքով որոշիչը փոխում է իր սովորական տեղը, դրվում է որոշյալից հետո»<sup>2</sup>, որի շնորհիվ այն ընդգծվում է և ձեռք բերում արտահայտչականություն, ոճական ու իմաստային լրացուցիչ նրբերանգներ: Այսինքն՝ արևմտահայերենում որոշիչը հանդես է գալիս և՛ նախադաս, և՛ հետադաս դիրքերով. գերակշռողը նախադաս դիրքն է:

Առկայական տրոհման ժամանակ առանցքային նշանակություն ունեն ենթական ու ստորոգյալը, որոնցից առաջինին առավել հասուկ է արդեն տրված տեղեկությունն արտահայտելը, այն է՝ իբրև ենթահիմք հանդես գալը, իսկ երկրորդին՝ նոր տեղեկությունը՝ վերաբերյալը, արտահայտելը: Սակայն առկայական տրոհումը մեկընդմիջ տրված, քարացած երևույթ չէ. հնարավոր է՝ ենթական դառնա սստյթում նորի կրողը, իսկ ստորոգյալը՝ հին տեղեկության կրողը, բացի այդ՝ իբրև վերաբերյալ կարող են հանդես գալ նաև նախադասության երկրորդական անդամները: Մեր հետազոտության ընթացքում փորձել ենք պարզել է, թե որոշիչն որքանով է բնորոշ ենթահիմքի կամ վերաբերյալի դերում կամ խմբում հանդես գալը: Շատ դեպքերում որոշիչը հանդես է գալիս այսպես կոչված վերաբերյալացնողի դերով, այսինքն՝ նշույթավորում, ընդգծում, լրացուցիչ երանգ է տալիս իր լրացյալի իմաստին:

Առկայական տրոհման ժամանակ բառի խոսքիմասային պատկանելությունը նշանակություն ունի դրա՝ իբրև ենթահիմք կամ վերաբերյալ հանդես գալու համար<sup>3</sup>:

Որոշիչը արտահայտվում է ածականով, դերանունով, թվականով, դերբայով, գոյականով, դերբայական դարձվածով, կապային կառույցով:

Որոշիչն ամենից առաջ արտահայտվում է ածականով: Որակական ածականով արտահայտված որոշիչը, եթե դրված է կա՛մ բաղդատական, կա՛մ գերադրական աստիճանով, խիստ ընդգծում է իր լրացյալի իմաստը՝ նպաստելով դրա վերաբերյալացմանը:

*Օրինակ՝ Պոլիս երթալէն ի վեր անոր վրայ լուր բերած էին իրեն: Յետոյ անելի գէշ բաներ ըսած էին փսիսալով (ՀՕԵ, 107)<sup>4</sup>:* Այստեղ առաջին նախադասության վերաբերյալը լուր ուղիղ խնդիրն է, որը որևէ ընդգծում

<sup>2</sup> Ն. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 205:

<sup>3</sup> И. Ковтунова, Современный русский язык: Порядок слов и актуальное членение предложения, М., 1976, стр. 79-94:

<sup>4</sup> Մեջբերումներին կից՝ փակագծերի մեջ, նշում ենք բնագրի համառոտագրությունը և համապատասխան էջը. ցանկը տալիս ենք վերջում:

չունի, երկրորդում ոչ միայն ուղիղ խնդրի ստորոգյալին կից շարադասվելն է նպաստում ուղիղ խնդրի՝ տրամաբանական շեշտը կրելուն, այլև ածականի համեմատական աստիճանով արտահայտված աւելի գէշ որոշիչը, որն ընդգծում, սաստկացնում է լրացյալի իմաստը: Նույնն է նաև հետևյալ օրինակներում: *Տոպիճ իջաւ սրտին աւելի խորունկ տեղեր (ՀՕԵ, 99): Իմ մեծագոյն փափագն է ժամ առաջ հայ ընտանիքին մեկնումը տեսնել (ՄՊ, 33): Հոս հոնկէ ալ բարձր էր (ՀՄԵ, 84):*

Ինչպես կրկնավոր կազմություն ունեցող, այնպես էլ պարզ ածականները, որոնք առանին-առանձին կրկնվում են, ընդգծում են իրենց լրացյալի իմաստը, որը տվյալ դեպքում վերաբերյալն է:

*Օրինակ՝ Ան կը տանի վարի լճակին չա՛տ-չա՛տ բան ( ՀՕԵ, 285): Պարոն Բեննար ամէն օր նորանոր ապսպրանքներ կրներ, օղի, քոնէաք, գինի, վիսկի (ՄՊ, 249): Այս Ատը Կիւզել աղան պգտիկ, շատ պգտիկ մարդ մ'է (ՀՄԵ, 42):*

Ածականով արտահայտված որոշիչը կարող է գործածվել սաստկական բառերի, մակբայների հետ, որոնք, դրվելով ածականից առաջ, շեշտում են այն:

*Օրինակ՝ Հոն պտկողները մինակ ձերմակ մագովներ չէին (ՀՕԵ, 119): Բայց արդէն տկար իր կազմը կը քայքայուէր (ՀՕԵ, 162): Ընդհակառակը, բոլորովին անբնական բան մըն էր (ՄՊ, 263):*

Չեղինակը կարող է շեշտել ածականը պարզապես շեշտը դնելով որոշի վրա՝ ընդգծելով թե՛ լրացման, թե՛ լրացյալի իմաստը:

*Օրինակ՝ Նոր տարուան հետ կը սկսին նոր հոգեր (ՄՊ, 128): Ինչ ցո՛ւրտ սարսուռ ունի այդ օրն իրեն համար (ՄՊ, 411): Հանճարե՛ղ իսող է (ԼՇԵ, 387):*

Խոսքում կարող են հարաբերական ու որակական ածականները ունենալ միևնույն լրացումը, այս դեպքում նախ դրվում է հարաբերականը, հետո՝ որակականը, քանի որ «որակական ածականները հարաբերականներից առաջ դրվելով՝ կարող են վերաբերել նրանց»<sup>5</sup>: Թեև հնարավոր է, որ դրվի նախ՝ որակական, հետո՝ հարաբերական ածականը:

*Օրինակ՝ Զարմանալի սուր յիշողություն ունի (ԼՇԵ, 58): Խոշոր ընկերական համբոյր մը առի: Երկու եղբայրներն ալ հագած էին տեղական կտորէ հագուստ, ոտքերնուն չուշտ, գլուխներուն ձերմակ քուսական գլխարկ, մէջքերնուն դանակ եւ ուսերնուն հրացան (ԼՇԵ, 68):*

<sup>5</sup> Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976, էջ 147:

Որոշիչը արտահայտվում է նաև դերանունով: Դերանունները, հանդես գալով որոշիչի գործառույթով, կատարում են երկակի դեր. մի կողմից իրենց բնորոշ իրադրական իմաստի շնորհիվ մատնանշում են արդեն խոսողին հայտնի առարկա՝ մատնանշելով ենթահիմքը, մյուս կողմից մատնանշում են բոլորովին անծանոթ առարկա՝ դառնալով վերաբերյալ կամ վերաբերյալի ցուցիչ:

*Օրինակ՝ Ականջը դրա փողոցէն եկող ամէն մէկ աղմուկին(ՄՊ,189): Ամէն հասակէ և ամէն դասէ մարդ կար անոնց մէջ (ՀՕԵ,119): Ամէն օրուան նման՝ ամէն տարի ունի իր ցաւի բաժինը (ՄՊ,128): Այլ ինչ յոյս ունիմ ես (ՊԴԵ, 129): Բոցը կլուսցնէր հիւղակը ամբողջ (ՀՕԵ,276):*

Որոշիչի գործառույթով հանդես եկող ոչ մէկ, ոչ մի (վերջինս շատ հազվադեպ է կիրառվում) ժխտական դերանունները իրենց բնորոշ ժխտման իմաստի շնորհիվ տրամաբանական շեշտը կրում են իրենց վրա՝ իրենց լրացյալին դարձնելով վերաբերյալ:

*Օրինակ՝ Ոչ մէկ դիմագիծ կը շարժէր (ՄՊ,234): Ոչ մէկ հայում, ոչ մէկ խօսք կըրնար կարմիրով գունաւորել անոր այտերը (ՄՊ,252): Անիկայ ոչ մէկ յանցանք ունէր (ՄՊ, 263):*

Ինչպէս նկատվել է հայագիտության մեջ, եթե որոշյալն ունի թե՛ ցուցական, թե՛ որոշյալ դերանուն, ապա առաջ դրվում է ցուցականը, հետո՝ որոշյալը:

*Օրինակ՝ Այս ամէնը նոր էին իրենց համար (ՏՉՎԱ, 56): Ընկերներուս ծաղրին չենթարկուելու համար այս բոլորը ի հարկէ ոչ որի չէի ըսէր (ԼՇԵ,86): Այս բոլորը տղուն վրայ քաշող, փայլող ազդեցութիւն մը կընէր (ԼՇԵ,143):*

Նույն բառը կարող է ունենալ և՛ ածական, և՛ դերանուն որոշիչներ, որոնցից նախ դրվում է դերանունը, ապա՝ ածականը:

*Օրինակ՝ Այսպէս աղուոր հիւրասենեակ ոչ մէկ տեղ կայ (ՄՊ,60): Փանջունի այսպէս սիրուն խօսքեր շատ ունէր (ԵՕԸԲՓ,20): Պզտիկ դրդում մը մտածումի ու յուզումի ինչ ուժգին հեղեղներու դուռ կը բանայ (ՄՊ,317): Ինչ ցոլրտ սարսուտ ունի այդ օրն իրեն համար (ՄՊ, 411): Վերը բերված օրինակներից առաջին երկուսում որոշիչները հանդես են եկել ենթահիմքի խմբում՝ դարձնելով այն արտահայտիչ, իսկ վերջին երկուսում ընդգծել են վերաբերյալը:*

Դերանունը կարող է վերաբերյալը առանձնացնող դեր կատարել, երբ նույն դերանունը կրկնվում է՝ լրացնելով տարբեր բառերի:

*Օրինակ՝ Միշտ նոյն խղճուկ գլխարկը կար վարպետին գլուխը եւ նոյն սրճագոյն զգեստը հայուհիին վրայ(ՄՊ,60): Մեքենական այս նոր դարին կախարհն է ան այս նոր աշխարհին մէջ(ՄՊ, 301):*

Իբրև որոշիչ՝ կարող է հանդես գալ թվականը:

*Օրինակ՝ Այսպես, մէկ, երկու ժամեր կանցնին (ՄՊ, 296): Երկու հակադիր սեռերու միջև գոյութիւն ունեցող պայքարն է ան (ՄՊ, 348): Ծննդավայրիս՝ Շապին Գարահիսարի մէջ մենք ունինք երկու տուն (ՄՊ, 381): Երկու հատին երդվեր եմ երկու հատ (ԼՇԵ,387):*

Թվական որոշիչը ընդգծող նշանակություն ունի, երբ գործածվում է ամբողջ, մոտ, շուրջ, լման և նման բառերի հետ. ընդգծվում է հատկապես թվականի արտահայտած քանակը՝ դառնալով վերաբերյալ:

*Օրինակ՝ Այս պատմութիւնը տեւեց ամբողջ տասնհինգ օր (ՄՊ,249): Քարասուն տարեկանի մօտ մարմնէդ ու պարարտ մտերով կին մըն էր (ԵՕԵ,17):*

Ինչպես նկատվել է հայերենագիտության մեջ, թվականներից հազար, հազար ու մէկ և այլ ձևերը արտահայտում են ոչ թե որոշակի թվային քանակություն, այլ սաստկացման, չափազանցման իմաստ:

*Օրինակ՝ Կեանքը հազարումէկ մանր-մունր բաներով կը դիմանայ(ՄՊ,263): Հազար կանաչի մէջէն գարունը ձայն կու տար (ՄՊ, 364): Տիգրան սիրտ չունէր անոնց հազար ու մէկ հարցմանց պատասխանելու (ԳԶԵ,576): Այն ատեն Երվանդին համար ալ սկսան այն հազար ծրագիրները (ԳԶԵ,258):*

Եթե ունենք թվական և ածական որոշիչներ, նախ դրվում է թվականը, հետո՝ ածականը: Այս դեպքում չեզոք է նրանց շարադասությունը և որևէ լրացուցիչ, ընդգծող իմաստ չունեն, բայց երբ թվականը դրվում է ածականից հետո, այս դեպքում արդեն այն ընդգծվում է՝ ընդգծելով նաև իր լրացյալին:

*Օրինակ՝ Երկու ատէի խոշոր ու լայնափող նաւակներուն մէջ լեցունեցան զհողացի ուխտաւորները (ԼՇԵ,102): Եվ ճիշտ այդ վայրկեանին արեւը դիմացի Գեղարքունի լեռներու երկու սուր գագաթներուն մէջ մարը կը մտնէր(ԼՇԵ,108):*

Որոշիչը կարող է արտահայտվել գոյականով՝ թե՛ հատուկ, թե՛ հասարակ: Գոյականով արտահայտված որոշի վերաբերյալ Վ. Առաքելյանը գրում է. «Որոշի պաշտոնով կիրառվում են այն բոլոր հասարակ գոյականները, որոնք ունեն ցայտուն, առանձնապես ընդգծվող, որակական յուրահատուկ մի այնպիսի հատկանիշ, որ իր կարևորությամբ ամբողջվին բնութագրում է որոշյալը և որի համեմատությամբ տվյալ գոյականի մյուս բոլոր հատկանիշները երկրորդական են: Երբ այդ ուժեղ հատկանիշը ի վիճակի է հանդես գալու տվյալ գոյականի փոխարեն, այն ժամանակ գոյականը դառնում է որոշիչ: Կատարվում է յուրահատուկ փոխաբերություն. առարկան արտահայտում է իր գլխավոր հատկանիշը և

նմանեցվում է մի այլ առարկայի»<sup>6</sup>:

*Օրինակ՝ Ակոբ աղբար գեղի մարդ է սակայն, հայ գեղի մարդ(ՄՊ, 301): Մասնոյ Պելլաւ գլիւղէն՝ ութսունամյայ Յակոն կը քալէր Բեյրութի ամէնէն բանուկ պողոտաներէն մէկուն մայթէն (ՄՊ, 481):*

Գոյականով արտահայտված որոշիչը կարող է դրվել ուղղական, բացառական, գործիական, սեռական հոլովներով:

*Օրինակ՝ Տորենագոյն դէմքով, դեղնագոյն մազերով, նուրբ, երկայն աղջիկ մըն էր դարձած ան (ՀՄԵ,91): Ու քիչ-քիչ իր մէջ կեանքի եկաւ հին օրերուն, երիտասարդ օրերուն տղան (ՀՕԵ,103):*

Որոշիչը կարող է արտահայտվել դերբայով ու դերբայական դարձվածներով. դերբայներից որոշիչ են դառնում անորոշի տրական հոլովաձևը, ապառնի, հարակատար ու ենթակայական դերբայները: Դերբայական դարձվածով արտահայտված որոշիչները որոշ հետաքրքրություն են ներկայացնում իրենց իսկ կառուցվածքի շնորհիվ: Դերբայական դարձվածը գտնվում է երկկողմ հարաբերության մեջ մի կողմից իր լրացյալի, իսկ մյուս կողմից իր բաղադրիչների նկատմամբ: Լինելով բայական բառակապակցության գլխավոր անդամը՝ բայը մի կողմից իր լրացումների համար կարող է հանդիսանալ նորի կողմը, իսկ մյուս կողմից դերբայը կախման մեջ է լինում իր լրացյալից: Սակայն, բոլոր դեպքերում այն իր ծավալունության շնորհիվ արտասանվում է հատուկ հնչերանգով, այսինքն՝ կրում է ֆրազային շեշտ, որը միշտ չէ, որ համընկնում է տրամաբանական շեշտին:

*Օրինակ՝ Երբեմն հրապարակէն կանցնէին կթուած, յոզնած, խաղողի ողկոյզներով ծանրաբեռնուած այգեկութթի կտորեր (ՄՊ,133): Եւրոպացիին չափահաս աշխարհ եկած մարդ է (ՄՊ,246): Գեղերուն մէջ քիչ բուսնող ծաղիկ մըն էր ան (ՀՕԵ,171): Բայց տանը մէջ ալ դիմացվելիք բան չէ (ԵՕԼԲՓ,20): Հայած, հատած տարիներուն կոշտովը ծածկուած աւել մըն ալ ինքը իրաւ, մեր Ակոբ աղբարը (ՄՊ,303): Աղուորը քսուելիք կողմ մը ամէնէն չունէր (ՀՄԵ,73):*

Որոշիչը կարող է արտահայտվել նաև կապային կառույցով:

*Օրինակ՝ Պապային գալը, ինքնին, աննման գանձ մը քլայուն պէս բան մըն է իրեն համար(ՄՊ, 304): Շատ մը տուններու մէջ իր տիրուհիներուն նախանձը շարժելուն չափ ընդունելութիւն գտած էր առանց գանգատելու (ԳԶԵ,14):*

<sup>6</sup> Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր I, Պարզ նախադասություն, Եր, 1958, էջ 237:

Արևմտահայերենում որոշիչը կարող է հանդես գալ նաև հետադաս դիրքով: «Ետադաս որոշիչը, ձեռք բերելով որոշ անկախություն, օժտվում է իմաստային յուրահատուկ կշիռով: Ետադաս որոշիչներով հարուստ խոսքը ունենում է լրջություն ու վայելչություն»<sup>7</sup>: Հետադաս որոշիչները շրջունության շնորհիվ ձեռք են բերում արտահայտչականություն, որոշ անկախություն ու ընդգծվածություն: Ուսումնասիրության ընթացքում լեզվական փաստերի հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ որոշիչը հետադաս դիրքում գրեթե միշտ վերաբերյալի խմբի անդամ է և ընդգծում է իր լրացյալին:

*Օրինակ՝ Զվարթ. խնդացող տղա մըն է ան, բեղերը միշտ բերնին մէջ(ՀՕԵ,67): Անոր այս չոր բառերուն մէջ կըմբռնեն ամբողջ պատմութիւն մը, սրտահոյգ եւ եղերական (ՄՊ, 296):*

Երբեմն հեղինակը կիրառում է որևէ բառ, որն այդ ասույթի վերաբերյալն է, ապա նույն վերաբերյալը ավելի շեշտելու համար կիրառում է մի նոր ասույթում առանձին հետադաս որոշիչներով կամ միայն վերաբերյալի համար նոր որոշիչներ է դնում՝ դրան տալով միակազմ նախադասության տեսք: Լեզվական այս հնարքը խոսքին տալիս է մեծ հուզականություն ու արտահայտչականություն:

*Օրինակ՝ Տիգրան ժպտեցաւ, բայց ինչ ժպիտ... երկչոտ, անհամարձակ, դողողօ, գրեթէ ակամայ: Տկարին ժպիտը գորաւարին առջեւ (ՄՊ,235): Իսկ առաջ, ինչ ասքեր ունեցած էր Հայկ: Մեւ, խոշոր ու սրատես, վարվորուն ու անդիմադրելի (ՄՊ, 492): Անգամ մը երիտասարդ մը բանստեղծի մը ձեռքը սեղմեցի ափիս մէջ: Տարօրինակ ձեռք մըն էր՝ գէշ ու խոնար ու կարծես թէ վահկնոտ ու դողահար (ՄՊ,117):*

Հատկապես հետադաս են կիրառվում գոյականի գործիական, բացառական հոլովով արտահայտված որոշիչները:

*Օրինակ՝ Բարակ ու խոնջ ձեռքեր էին աստոնք,կապոյտ երակներով ու արդէն թառամելու վրայ (ՄՊ,134): Գիշերային պահակը, գիրուկ փորով, ուռած ասքերով, հագալէն դուրս կէլլէ գործարանէն (ՄՊ, 299): Երկայթուղիի ձախ կողմին կը տարածուէր լայնարձակ դաշտը, թանձր ու ծփուն մարգերով եւ փարթաւ բանջարանոցներով ու պտղաստաններով ծածկուած (ՄՊ, 413):*

Հետադաս կարող են կիրառվել նաև դերբայական դարձվածով արտահայտված որոշիչները, որոնք ձեռք են բերում ավելի մեծ անկախություն, քան նախադաս դիրքում ունեին:

---

<sup>7</sup> Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 472:

Օրինակ՝ Տարին չանցած պայթեցաւ մեծ Փոթորիկը, կրակով ու արինով շաղուած (ՄՊ, 315): Երկաթուղիի ձախ կողմին կը տարածուէր լայնարձակ դաշտը, թանձր ու ծփուն մարգերով և փարթամ բանջարանոցներով ու պտղաստաններով ծածկուած (ՄՊ, 413):

Հետադաս կարող են կիրառվել նաև գանազան բառակապակցություններով ու կապային կառույցներով արտահայտված որոշիչները:

Օրինակ՝ Յաղթական կեցուածք մը առնելով, յիշեց պզտիկ դէպք մը, մեծ հետեւանքներով յոյ (ՄՊ, 233): Մտոյն կարճահասակ, լայնալանջ, գիրուկ աղջիկ մըն էր երեսունի մօտ (ՄՊ, 252): Ուրեմն սխալ չէր գուշակութիւնս՝ իր ինքնութեան մասին (ՀՄԵ, 127): Բսկ մեզի ամէնէն մոտիկ եղող բնակարանը ուրիշ պզտիկ ամառանոց մըն է, մերինին պէս ձերմակ, մերինին պէս նոր ու մերինին պէս մէկուսի (ԼՇ, Ե, 37):

Բազմակի որոշիչները առավել ընդգծվում են, երբ կիրառվում են համադասական շաղկապների՝ մանավանդ կրկնադիրների հետ. վերջիններս առանձին-առանձին շեշտում, ընդգծում են դրանց իմաստը:

Օրինակ՝ Այս անմոռանալի հանդիպումէն յետոյ Ալին միշտ փնտրեց իր անձանօթ, բայց շատ սիրելի քոյրերը (ՄՊ, 274): Եւ այն ժամանակ դուն կըլլաս արժանի տէրը եւ այս սենեակին, եւ ա՛յս ամրոցին, եւ ա՛յս աշխարհին (ԼՇ, Ե, 392):

Հաճախ որոշիչը՝ թե՛ նախադաս, թե՛ հետադաս, առաջացնում է մտքի շփոթ և դժվար է լինում գանազանելը, թե այն գոյականակա՞ն, թե՞ բայական անդամի լրացում է՞:

Օրինակ՝ Ա՛յ յոգնած, ընկճուած՝ անոնց բթացած ուղեղը չէր աշխատէր (ՄՊ, 449): Երկրէն եկող բոլոր սասունցիները՝ գաղթական և տառապած՝ իրենց հանգիստը կը գրտնեն անոր տան մեջ (ՄՊ, 469): Ուխտաւորները քայլէլէն, ցատկէլէն ու խմելէն յոգնած՝ խմրովին փռուէր էին իրենց խսիրներուն ու կարպետներուն վրայ ամենատարօրինակ դիրքերով (ԼՇԵ, 106):

Եթե դերբայական դարձվածից բացի կան այլ որոշիչներ, ապա դրանք դրվում են դերբայական դարձվածից հետո՝ նրան չվերագրվելու համար:

Օրինակ՝ Գետնին վրայ ձգուած երկու շարք անկողիններու մէջ թէթեւ քայլերով պտտեցայ՝ քանի մը վերմակներ ուղղելով (ՏՉՎ, 51):

---

<sup>8</sup> Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Եր., 1976, էջ՝ 163:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
2. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ս., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., 1976:
3. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. I, Պարզ նախադասություն, Եր, 1958
4. Ավետիսյան Յու., Արևմտահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007:
5. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը,
6. Եր., 1976:
7. Պառնասյան Ն., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 205:
8. Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985:
9. Քոսյան Վ., Ակտուալ անդամատումը և շարադասությունը ժամանակակից հայերենում, Եր., 1990:
10. Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Եր., 1976:
11. Ковтунова И., Современный русский язык: Порядок слов и актуальное членение предложения, М., 1976:
12. В.Матезиус, О так называемом актуальном членении предложения, ПЛК, М., 1967.
13. Л. Теньер, Основы структурного синтаксиса, М., 1988, с.33-34.

Համառոտագրություններ

ԳԶԵ - Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989:

ԵՕԵ – Երվանդ Օտյան, Երկեր, Երևան, 1978:

ԵՕԸԲՓ – Երվանդ Օտյան, Ընկեր Բ. Փանջունի, Երևան, 1989:

ԼՇԵ - Լևոն Շանթ, Երկեր, Երևան 1968:

ԾԵ – Ծերենց, Երկեր, 1983:

ՀՀԼՍ - Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, 1989:

ՀՊԵ – Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1969:

ՀՕԵ – Հակոբ Օջական, Երկեր, Երևան, 1979:

ՀՄԵ - Հակոբ Մնձուրի, Երկեր, Երևան, 1986:

ՇՇՆԱԵ - Շահան Շահնուր, Նահանջ առանց երգի, Երևան, 1994

ՊԴԵ - Պետրոս Դուրյան, Երկեր, Երևան, 1981:

ՍՊ - Սփյուռքահայ պատմվածք, Երևան, 1989:

ՏԿՎԱ - Տիգրան Կամսարական, Վարժապետին աղջիկը, Երևան, 1956:

ՏՉՎ - Տիգրան Չյոկյուրյան, Վանքը, Երևան, 1962:

### Ամփոփում

Այսպիսով՝ արևմտահայերենում որոշիչը արտահայտվում է գոյական, ածական, թվական խոսքի մասերով, ինչպես նաև դերբայներով ու դերբայական դարձվածներով, կապային կառույցներով ու զանազան բառակապակցություններով, որոնք կարող են հանդես գալ թե՛ նախադաս և թե՛ հետադաս դիրքերում:

Առկայական տրոհման տեսանկյունով որոշիչների շարադասության դիտարկումը մեզ բերում է այն եզրակացության, որ դրանք ունեն իրենց լրացյալն հաղորդակցորեն ընդգծող առանձնահատկություն: Սակայն, որքան էլ իմաստով ընդգծված լինեն, իբրև վերաբերյալ՝ դրանք առանձին հանդես գալ չեն կարող: Ուժեղ շեշտվող որոշիչներին առավել հաստուկ է հանդես գալ վերաբերյալի խմբում: Մյուս դեպքերում որոշիչները մըտնում են ենթահիմքի խմբի մեջ: Այս դեպքում այն կարող է իր յուրահատուկ իմաստով ընդծել ենթահիմքը՝ այն դարձնելով արտահայտիչ ենթահիմք:

### Резюме

Синтаксис определения в западноармянском языке – Таким образом, определение в западноармянском языке выражается следующими частями речи: именами существительными, прилагательными, числительными, а также причастием (деепричастием) и причастными (деепричастными) оборотами, связующими структурами и разными словосочетаниями, которые могут выступать как в препозиции, так и постпозиции.

С точки зрения актуального членения рассмотрение синтаксиса определений приводит нас к тому заключению, что они обладают особенностью, коммуникативно подчеркивающей их ремю. Однако как бы они ни выделялись семантически в качестве ремы, они не могут выступать отдельно. Определениям, стоящим под сильным ударением, более присуще выступать в группе рем. В других случаях определение входит в тематическую группу. В этом случае оно может в своей особой семантике подчеркнуть тематическую основу, наделив ее большей выразительностью.

**Annotation**

Definition syntax in the West Armenian – Thus, definition in the West Armenian may be expressed by the following parts of speech: noun, adjective, numeral, as well as participle (adverbial participle) and participle (adverbial) clauses, linking structures and various word combinations which can act both in preposition and postposition.

In terms of functional sentence perspective on consideration of definition syntax we come to a conclusion that they have a feature which communicatively underlines their comment. However, no matter how they are marked out semantically as comments they can't act separately. More emphasized definitions are inclined to act in the group of comments. In other cases definition is included into the topic group. In that case it may underline the topic ground in its special semantics providing it with more expressiveness.

**ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՑԱՆ**

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԱԿԱԶՄԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** համակարգ, հոլով, զուգաձևություն, թիվ, թվակազմություն, հոգնակիակազմություն, հոլովակազմություն, հոգնակերտ մասնիկ, հոմանշային տարբերակ, հիմքի տարբերակ:

**Ключевые слова и выражения:** система, падеж, параллелизм, число, числообразование, образование множественного числа, частица образования множественного числа, синонимический вариант, вариант основы

**Key words and phrases:** system, case, parallelism, number building, plural formation, case formation, plural forming particle, variant of synonyms, root variant.

Գոյական խոսքի մասը գրաբարի թեքական խոսքի մասերից է, որն ունի թվի, առկայացման և հոլովման քերականական կարգեր: Զուգաձևությունները գոյականի համակարգում արտահայտվում են թվի և հոլովի կարգերում: Տարբերակվում են նաև հատկանվանական զուգաձևություններ: Գրաբարի ձևաբանական նորմը սահմանում է, որ գրաբարում հոգնակի թիվը կազմվում է հիմնականում **-ք** հոգնակիակերտ մասնիկի միջոցով: Հոգնակիության իմաստ են արտահայտում նաև հավաքական գոյականները, ինչպես և թվի կարգի դրսևորումներից են անեզական և անհոգնական գոյականները, որոնք դրսևորվում են հատուկ մասնիկների կամ մասնիկազուրկ ձևերի միջոցով:

Գոյականի թվի քերականական կարգը հնդեվրոպական նախալեզվում ներկայանում էր եզակի, երկակի և հոգնակի հակադրությամբ: Երկակի թվի կարգը անհետացել է դեռևս հին հայերենի վաղ շրջանում, և արդեն հին գրական հայերենը հատկանշվում է եզակի-հոգնակի հակադրությամբ, որոնք իրենց բազմանշանակությամբ հանդերձ չունենին կառուցաձևի ակնհայտ տարբերություններ:

Հոգնակիակազմությունը դրսևորվում է միայն մասնիկավորման միջոցով, և ինչպես հնդեվրոպականում, այնպես էլ գրաբարում հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը համընկնում են արտահայտման միջոցներով<sup>1</sup>:

Եզակի թիվը թվակազմության մեջ ելակետային ձևն է:

Թվակազմության մեջ գոյականի զուգաձևությունները գրաբարում կարող են պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով, ինչպես.

1. Իմաստային (ֆունկցիոնալ) տարբերություններով, օրինակ՝ հոգնակի ձևի բազմիմաստությամբ:

Այս խմբի բազմաձևությունների շարքին կարելի է դասել հետևյալ կազմավորումները.

---

<sup>1</sup> Հ.Զ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 118-119:

Ակն - աչք (կենդանու աչքեր) // ակունք (ջրի աչքեր), օրինակ՝ «Ձի՞ քնաւ պիտոյ են աչք օտարոտիք ի մեր վկայութենէ» (ՆՀԲ, I, էջ 28): «Անսահման ծովուն ակունքն՝ ծաւալք ծարաւեաց, և ռոռզմունք տիեզերաց» (ՆՀԲ, I, էջ 25):

Ունկն - ականջք (ականջ) // ունկունք (կարթ, ճարմանդ), օրինակ՝ «Կարումն ունկանցըն նոցին՝ մաքրեաց զխորհուրդս չար օձին» (ՆՀԲ, II, էջ 551):

«Գործեալ է իմ սփրիդս, և ունկունս ոչ ունիմ... քակեաց զունկունս սփրիդոցն, և բերեալ ետ նմա» (ՆՀԲ, 2, 551): «Ամենայնի որ լսիցէ զնոսս հնչեացեն երկոքեան ականջք իւր» (ՆՀԲ, I, էջ 22):

Այդպէս նաև՝

դուռն - դուրք // դրունք, հաս - հասք // հասոյք, բաշխ-բաշխք // բաշխոյք

գահ<sup>1</sup> - գահք // գահինք, գահ<sup>2</sup> - գահք // գահոյք // այլև գահոյանի

հազագ - հազագք // հազագայք և այլն:

Այս զուգաձևությունները առաջ են եկել պայմանավորված իմաստային տարբերություններով, որևէ բառի իմաստային ընդլայնման հետ կապված՝ կարող է հանդես գալ նաև քերականական այս կամ այն ձևի զուգահեռ կիրառություն, ինչն էլ կարող է կա՛մ աստիճանաբար անհետանալ, անգամ կիրառություն չունենալ, կա՛մ հաստատվել ու մտնել կիրառության մեջ և՛ որպէս հավասարազոր տարբերակ, և՛ ընդունվել որպէս առաջնային քերականական ձև:

Իմաստային գործոնի հետ կապված երկձևությունների կամ բազմաձևությունների առկայությունը կարելի է կապել հնագույն հայերենում երկակի թվային ենթակարգի գոյության հետ:

2. Հիմքի տարբերակներով.

Այս տիպի զուգաձևությունների քննությունը կարելի է կատարել ըստ հոլովների: Այսպէս՝ գրաբարի հոգնակի ուղղական հոլովում, ըստ հիմնային տարբերակների, բազմաձևություն էին դրսևորում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝

ծին - ծինք // ծնունք  
ջահ - ջահք // հազվադեպ՝ ջահունք  
կողմն - կողմանք // կողմունք  
սերմն - սերմանք // սերմունք<sup>2</sup>  
ճիրան - ճիրանք // ճիրանունք  
երագ - երագունք // երագք  
աղանդ - աղանդիք // աղանդինք  
արմատ - արմատիք // արմատք // արմտիք  
սարկաւագ - սարկաւագք // սարկաւագունք  
աղախին - աղախնեայք // աղախնայք  
եպիսկոպոս - եպիսկոպոսունք // եպիսկոպոսք և այլն:

Օրինակ՝

«Արմատք բուսոց ի պէտս օգտակարութենէ բուսոց» (ՆՀԲ I, 570): «Եղև նորա անասուն, և արմտիք բագում, կամ արտք» (ՆՀԲ, I, 570):

«Վերջադրական բնույթի հոլովում ունեցող որոշ բառեր ներդրական բնույթի հոլովում ունեցող բառերի նմանակությամբ հոգնակի ուղղականում վերջավորվում են -ունք-ով, օրինակ՝ եպիսկոպոս - եպիսկոպոսունք (նաև՝ եպիսկոպոսք), խոջան - խոնջանունք, ճրագ - ճրագունք (նաև՝ ճրագք), նուագ - նուագունք (նաև՝ նուագք), պատաւ - պատաւունք, պատերագվ - պատերագվունք և այլն»<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, զուգաձև տարբերակներում առկա է հիմքերի տարբերություն՝ որևէ մասնիկի (հնչյունի) առկայություն կամ բացակայություն:

Կարելի է ասել, որ հենց հոգնակի ուղղականից էլ բխում են մյուս հոլովների զուգաձևությունները:

Գրաբարում սակավադեպ են հնչյունափոխ հոգնակիակազմ հիմքերը. բանակատեղք // բանակտեղք, աղբիրք // աղբերք, մեհենանի // մեհենանի, Մարիամանք // Մարեմանք:

<sup>2</sup> Այսօրինակ բառաձևի հոգնակիակազմ հիմքում սպասվող Ու հերթագայվող տարրի փոխարեն առկա է Ա (տես Գ.Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 138:

<sup>3</sup> Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, էջ 20:

Ինչպես տեսնում ենք, այս տարբերակների երկրորդ եզրում առկա են եզակի հիմքի հնչյունափոխությամբ կազմված հոգնակի ձևեր:

Ուշագրավ են հոգնակի որդիք // որդեակք գուգահեռ ձևերը, որոնց առկայությունը պայմանավորված է եզակի որդի // որդեակ բառակազմական-հնչյունափոխական այլաձևությունների գոյությամբ: Օրինակ՝ Որդի՛ք Իսրայելի, արհնեցե՛ք զԱստուած ... (Յուդիթ, ԺԳ): Քաջալերացարո՛ւք որդեա՛կք, եւ մի՛ երկնչիք (Յովհ. Մամ., 34):

Հետաքրքիր են նաև աչք // աչկունք գուգաձևությունները, որոնց երկրորդ եզրում առկա է գուգահեռ ձևի նվազական-փաղաքշական իմաստով (աչիկներ) գործածություն. Ահաւասիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւասիկ կաս գեղեցիկ, աչք քո աղանիք ընդ քողով քով, վարսք քո իբրեւ գերամակս այծից, որք երեւեցան ի Գաղասաղէ (Երգ., Դ): Նա հուր հեր ունէր, (Ապա թէ) բոց ունէր մօրուս, Եւ աչկունքն էին արեգակունք (Խոր., I, ԼԱ/ԼԲ)<sup>4</sup>:

Թվակազմության նորմը սահմանում է, որ գրաբարի հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են **ք, ց, ս** մասնիկների հետ, սակայն կարող են հանդիպել նաև տարբեր հոգնակիակերտներով հանդես եկող հիմքեր: Տվյալ դեպքում բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ հակադրության մեջ կա գործածության անհամարժեքություն:

Գրաբարում գործող հավաքականության իմաստ արտահայտող կառույցների մի մասը նորմատիվ է, տվյալ լեզվի տիրույթում ընդունված և հաճախադեպ, իսկ մյուս մասը կա՛մ կազմավորվելով գրաբարի ընդերքում չի կրել նորմավորված կիրառական բնույթ, կա՛մ կազմավորվել է ուշ գրաբարում: Սրանք որպես ժառանգություն փոխանցվել են միջին հայերենին: Այս կարգի կառույցների մի մասը, ինչպես ամեն սովորական նորագոյացություն, «մրցակցության» մեջ մտնելով ժամանակի նորմատիվ կառույցների հետ, հարթել է իր կենսական ուղին, մյուս մասը մարել է դեռ

---

<sup>4</sup> Հին հայերենում հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը համատեղվում են (հոգնակիակազմ-հոլովակազմ, հոգնակիակերտ-հոլովակերտ վերջավորությունների զուգորդումներ): Գոյականի թվի գուգաձևությունները գործում են նաև հոլովակազմության դեպքում. նկատի ունենք գոյականների հոլովման համակարգում հանդիպող գուգաձևությունները, որոնք արտահայտվում են ինչպս տվյալ հոլովի եզակի, այնպես էլ հոգնակի ձևերում: Այդ հարցի քննությունը տե՛ս մեր հետևյալ հոդվածներում՝ «Գոյականի պարզ հոլովումների գուգաձևությունները գրաբարում» (Հայագիտական հանդես, թիվ 3, 2010, էջ 50-58), «Խառը և անկանոն հոլովումներին պատկանող բառերի գուգաձևությունները գրաբարում» («Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3, 2011, էջ 36-41):

կազմավորման արշալույսին: Ըստ որում, չի կարելի շրջանցել լեզվական այն օրենքը, որ էթե մի իմաստ արտահայտվում է երկու (կամ ավելի) ձևերով կամ մի ձևով երկու իմաստ է արտահայտում, ապա նրանցից մեկը դատապարտված է մահվան<sup>5</sup>:

Այս հոգնակերտ կառույցների կազմավորումն ու գործածությունը գրաբարի թվակազմության որոշակիորեն միակերպության ձգտող համակարգի մակարդակում միանշանակ ենթադրում են գուգաձևությունների, բազմաձևությունների առկայություն:

Գ. Ջահուկյանը, քննարկվելով գրաբարյան հոգնակի թվի կազմությունը, տարբերակել է՝ ա) **-ք**-ով բաղադրված և բ) այլ հոգնակերտ-հավաքական մասնիկներով բաղադրված ձևեր: Վերջիններիս մեջ առանձնացրել է նաև գուգաձև կազմություններ. **որայ // որեայ. արտորայ // արտորեայ, վան(ք) // վանօրայ // վանօրեայ և այլն**<sup>6</sup>:

Ա. Բագրատունին, անեզական, ինչպես նաև հավաքական անունների շրջանակներում քննելով **այք // եայք, իք // ինք, եար // եր, որայ // որեայ, ստայք // ստեայք** հոգնակիակերտներով ձևավորված թվային գուգաձևությունները, այս կարգի բառերի թեք ձևերում ևս նկատում է տարբերակային ձևեր՝ նշելով, որ այսօրինակ բառերը հոլովվում են «եզական ձայնի», բայց «ձայնի եզականքո, մերթ և այլքն յոգնականավերջք, լինին երբեմն և առ բուն հինսս կրկին յոգնակի»<sup>7</sup>:

Քննության առնենք գրաբարում հաճախակի կամ սակավադեպ գործող հոգնակիակերտ համակարգային կառույցներ՝ ըստ նրանց գուգաձևությունների:

Հատկապես հոգնակի **-ք**-ի հավելումով հավաքական հոգնակիակերտ մասնիկներին է անդրադարձել Ս.Աբեղյանը: Նա նկատում է, որ «Մի քանի բառեր, բացի հոգնակի սովորական կազմությունից, ունեն նաև հետևյալ ածանցներով հոգնակի ձևերը հավաքական իմաստով. 1. **-ան // -եան** (երբեմն **-ք**-ի հավելումով), **-եար // երբեմն և -եարք, -որեայ // -որայ** (նաև՝ **-որայք**), **տի // ոտի**, երբեմն՝ **տիք // ոտիք** և այլն<sup>8</sup>:  
**-ան // -անք. ձիան // ձիանք, իշան // իշանք**

<sup>5</sup> Հմմտ. Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 142:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>7</sup> Տե՛ս Ա.Բագրատունի, Հայերեն քերականությունի ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 49:

<sup>8</sup> Տե՛ս Ս.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. Զ, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 757:

Հոգնակիակազմ այս կառույցն ունի խոսակցական բնույթ: Ենթադրվում է, որ այն ունի պարսկական ծագում, ինչը չի ընդունում պրոֆ. Ջահուկյանը. «... այս կարծիքը մեզ անհավանական է թվում: Ընդհակառակն, այստեղ ենթադրելի է եան-ի ծագումը սկզբնական հիմքակազմ **ի-ի** և **-ան** մասնիկի զուգակցությամբ»<sup>9</sup>:

**-ք // -անի՝**

աւագք // աւագանի // նան՝	կանայք // կանանի
աւագանի	ազատք // ազատորեար // ազատանի
զլուխք // զլխանի	աղքատք // աղքատանի
նամակք // նամականի	ջաղացք // ջաղացանի
ամրոցք // ամրոցանի	անուանք // անուանի
վնասք // վնասանի և այլն:	

Վաղգրաբարյան ձևավորում է, որի գործածությունը նվազել է արդեն միջինհայերենյան շրջանում:

**-ք // -անի // -անիք՝**

**անի+ք → անիք** բաղադրյալ կառույցն է, որը գրաբարում հանդիպել է հազվադեպ՝ աւագք // աւագանի // աւագանիք:

**-ք // -անք՝**

Այս հոգնակերտը **ք-ի** զարգացումն է հիմնային **-ան** տարրով, հանդես է գալիս իբրև անեզականակերտ: Հետագայում կառուցը ավելի է կայունացել, օրինակ՝

փշուրք // փշրանք  
խաբք // խաբկանք  
բիծք // բծկանք:

Անշուշտ, բուն հոգնակիակերտով և հավաքական հոգնակիակերտով կազմությունները գործածության հաճախականության տեսակետից հին հայերենում համարժեք չեն. Դրանք մատենագիտական վկայություններում հանդիպում են վիճակագրական տարբեր հաճախականությամբ:

**-այք // -եայք՝**

աղախնայք // աղախնեայք  
միջերկրայք // միջերկրեայք  
արուարձանայք // արուարձանեայք  
հռետորայք // հռետորեայք (եզակի՝ հռետոր //

<sup>9</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 146:

	հրիտոր, նան՝ հոիտոր)
	պուետայք // պուետայք (եզակի՝ պուետ // պուետ)
	ծովեզերայք // ծովեզերայք
- ք // - եայք՝	համատոհմք // համատոհմայք
- եան // -եայք՝	որկորեան // որկորեայք
- ստայք // ստեայք՝	գեօղաստայք // գեօղաստեայք
- անք // - եանք՝	Նոյանք // Նոյեանք
	Ադամանք // Ադամեանք
	ախոյանք // ախոյեանք
- ք // - եան՝	շարաթք // շարաթեան
	նոխազք // նոխազեան
	հեսկք // հեսկք // հեսկիք // հեսկեան
	ջորիք // ջորեան և այլն:

Գրաբարին ոչ հատուկ համակարգային կազմավորում է:  
Հմնտ.

- ք // - եան՝	նախարարք // նախարարեան	գործք // գործեան
	մոզք // մոզեան	գիւղք // գիւղեան
	բերդք // բերդեան	մորթք // մորթեան
	խորդք // խորդեան	
	ճանճք // ճանճեան	
- ենի // -եան՝	ճանճեանի // ճանճեան	
- եար // -եան՝	խոզեար // խոզեան	
	իշեար // իշեան և այլն	
- ունք // -եան՝	եպիսկոպոսունք //	
	եպիսկոպոսեան	
եան // -եանք՝		

Բաղադրյալ **եան-ք** կառույցն է, որն անեզական-հավաքական գոյականներ է կազմում տոհմանուններից՝ հանդես գալով որպես երկձևության մի եզր՝

	Մամիկոնեան // Մամիկոնեանք
	Յարթեան // Յարթեանք
	Պոռոշեան // Պոռոշեանք
- եար // -եանք՝	որեար // որեանք
- եայք // -եանք՝	հայկեայք // հայկազեանք

-եանք // իք՝

Դարեհեանք // Դարեհիք

-եար

Գրաբարում հազվադեպ գործածությանը հանդիպող հոգնակերտ է:

-եար  աձանցի  զուգաձևային  (այլև  բազմաձևային)

կիրառություններից են՝

վանորեայ // վանորայ // վանորեայք // վաներ // վանքեր //

վանեար

բերդք // բերդեան // բերդեար

էշք // իշան // իշանք // իշեար

վարժարանք // վարժեար

բանք // բաներ // բանեար

խոզք // խոզեան // խոզեար և այլն:

-եար // -եր՝ – Ինչպես այս, այնպես էք//իք//ինք, տի// ոտի, որայ//որեայ, այք//եայք հոգնակիակերտներին անդրադառնալով՝ Գ.Ջահուկյանը հոգնակի այդօրինակ կազմությունները համարում է ոչ համակարգային կազմավորումների մեջ ուրույն տեղ ունեցող հոգնակի ձևեր, որոնք զուգորդվում են գրաբարի համար ոչ լայն ընդգրկումներ ունեցող հոգնակիակերտներին<sup>10</sup>:

Ուշագրավ է, որ ըստ Ա.Բագրատունու, -եր-ը ավելի շատ տաղաչափական նկատառումներով էր գործածվում գրաբարում<sup>11</sup>:

Ծագում է -եար մասնիկից և կիրառվել է դեռևս V դարում, զուգաձևություն է ցուցաբերում -եար կառույցի հետ, օրինակ՝

վանեար // վաներ

բանեար // բաներ, նան՝

-ք // -եր՝

շանթք // շանթեր

հայք // հայեր

քարք // քարեր

ազգք // ազգեր

գայլք // գայլեր:

<sup>10</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 138-139:

<sup>11</sup> Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 48:

Այս հոգնակիակերտը գրաբարի թերևս այն նորագոյացություններից է, որ հարթեց իր դարավոր ուղին դեպի ժամանակակից հայոց լեզու՝ անցնելով միջին հայերենի և երկճյուղ աշխարհաբարի ինչպես գրական-համակարգային լեզվի, այնպես էլ բարբառների տարժամանակյա բովով:

Այս համատեքստում նշենք ընդհանրապես գուգաձևությունների առումով ուշագրավ այն դիտարկումները, որ հայերենն իր զարգացման վաղ շրջանից սկսած պարզեցման ու միօրինակության է ձգտել: Հայերենի զարգացման այդ շրջանի ընդհանուր պրոցեսի մեջ սովորաբար հաղթանակել են լեզվական այն իրողությունները, որոնք հայերենի քերականության ընդհանուր սկզբունքներին չհակասելով հանդերձ՝ հանդես են եկել իբրև ընդհանուր որակի հետ կապված տարրեր<sup>12</sup>:

**-ք // -իկ**

Այս կառույցի կիրառությունը հանդիպում է դեռևս դասական գրաբարում և անցնելով դարավոր ուղի, կիրառություն է գտել և՛ ժամանակակից արևելահայերենում, և՛ արևմտահայերենում: Հանդես է գալիս հիմնականում մարդ բառի հոգնակիակազմության մեջ՝ ցուցաբերելով երկձևություն: Հմմտ.

մարդք // մարդիկ

չարեր // չարիք

**-ք // -եր // -իք // -իկ՝** շանթք // շանթեր // շանթիք // շանթիկ

**-ք // -ինք՝**

Հազվադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս գրաբարում և հանդես է գալիս որպես գուգաձևության մի եզր, օրինակ՝

գահք // գահինք

դատք // դատինք

կաթք // կաթինք

ձեռք // հազվադեպ՝ ձեռինք

**-իք // -ստան՝** տանիք // տանեստան

**-ք // -իք**

Գրաբարում ոչ համակարգային կազմավորում է, որը վերջնական ավարտին չի հասել՝

<sup>12</sup> Տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, Եր. Համալս., հրատ., էջ 94:

արմատք // արմատիք // արմտիք  
 պարտք // պարտիք  
**-իք // -ինք՝**  
 աղանդիք // աղանդինք  
 ծանրաբեռնիք // ծանրաբեռնինք  
**-անք // -ունք՝**  
 սերմունք // սերմանք // սերմանիք  
 մահունք // մահուանք

**-ք // -ոտի՝**  
**-Ո + տի** բաղադրյալ, ոչ համակարգային կառույց: Այս հոգնակիակերտով են կազմվել

ոսկրոտի // ոսկերք  
**-ոտի // -ոտիք՝**  
**-որայք // -որայ՝**  
 փորոտի // փորոտիք  
 արտորայք // արտորայ (օ)  
 վանորայք // վանորայ (օ)

**ունք // -տիք // -տի**

Հանդիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում: Հմմտ.

մանկունք // մանկտի // մանկտիք  
 ծակք // ծակտ

**ի-տի // -տիք՝**

**տի + ք** բաղադրյալ հոգնակերտ, հանդիպում է ուշգրաբարյան շրջանից՝ մանուկք // մանկտի // մանկտիք

**-ք // -ունք** - «**-ք**-ի զարգացումն է **-ուն** հիմքային տարրով»:

Ըստ Գ. Ջահուկյանի, գրաբարի **-ունք** հոգնակերտը գալիս է հնդեվրոպական հոգնակի \*-on-es-ից<sup>13</sup>:

Հավաքականակերտ մասնիկ է և կազմում է բազմաձևության մի եզր՝

պառավք // պառավունք  
 ծաղիկ // ծաղկունք  
 ճրագք // ճրագունք  
 պատերազմք // պատերազմունք  
 սարկաւազք // սարկաւագունք  
 փայլակք // փայլակունք

<sup>13</sup> Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 180:

Եպիսկոպոսք // Եպիսկոպոսունք  
Երիցանի // Երիցունք  
մահք // մահունք  
Երագք // Երագունք և այլն:

Գրաբարի բազմաձևություն դրսևորող մասնիկներից են նաև **-որայ** // **-որեայ** // **-որեայք**, որոնք կազմում են հավաքական գոյականներ՝  
արտորայ // արտորեայ // արտորեայք  
վանորայ // վանորեայ // վանորայք // վանորեայք  
**-որեայք** // **-որեք**՝  
**-նեար** // **-ք**՝  
նալկնեար // նալկք  
բարձկնեար // բարձիկնեար  
**-ան** // **-իկ**՝  
մարդիկ // մարդկան և այլն:

Ուշագրավ են նաև **-ութին** ածանցով կազմված գոյականների՝ հավաքականության իմաստով զործածությունները տարբերակային ձևերի մի եզրում. **գերութին** // **գերիք**, **մարդկութին** // **մարդիկ** // **մարդք**, **զինուորութին** // **զինուորք**, **ընտանութին** // **ընտանիք**, **կուսութինք** // **կուսանք**, **հայրապետութինք** // **հայրապետք**, **աշակերտութին** // **աշակերտք**, **քահանայութին** // **քահանայք**:

Երբեմն հոգնակի իմաստն արտահայտվում է միևնույն գոյականի կրկնությամբ. ազգ ազգ // ազգք<sup>14</sup>:

Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, թվակազմության մակարդակում բազմաձևությունն արտահայտվում է՝

ա) բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ

բ) հավաքական հոգնակերտ // հավաքական հոգնակերտ մասնիկավոր կաղապարներում:

Համառոտագրություններ

Երգ. – Երգ երգոց (Աստուածաշունչ):

Խոր. – Մովսիսի Խորենացոյ Պատմութին Հայոց, Տիֆլիս, 1913:

Յովհ. Մամ. – Հովհաննու Մամիկոնենի Եպիսկոպոսի Պատմութին Տարօնոյ, Վենետիկ, 1836:

Յուլիթ. – Յուլիթ (Աստուածաշունչ):

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ..., էջ 49:

Գրականություն

1. Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1974:
2. Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976:
3. Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007:
4. Ա.Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
5. Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1981:
6. Հ.Զ.Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972:
7. Գ.Բ.Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959:

Լուսինե Ենգոյան

Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում  
Ամփոփում

Հոդվածում դիտարկվում են գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենի մակարդակում. Վեր են հանվում քերականական մասնիկների դերը հոգնակիի քերականական իմաստ արտահայտելու տեսակետից. Այդ մասնիկները հանդես են գալիս **երկակի**՝ (ան-անք, ք-եան, եան-եանք, ոտի-ոտիք, տի-տիք, ք-ունք) և **եռակի** (ունք-տիք-տի, ք-անի-անիք) հոմանշային տարբերակներով.

Лусине Енгоян

Числообразовательные параллелизмы существительного  
в древнеармянском языке

Резюме

В статье рассматриваются числообразовательные параллелизмы существительного на уровне древнеармянского языка. Выявляется роль грамматических частиц с точки зрения выражения грамматического значения множественного числа. Эти частицы выступают как двойные (ան-անք, ք-եան, եան-եանք, ոտի-ոտիք, տի-տիք, ք-ունք) и тройные (ունք-տիք-տի, ք-անի-անիք) синонимические варианты.

Lusine Yengoyan

Number Building Parallelisms of Nouns in Old Armenian Language  
Summary

The article considers number building parallelisms of nouns at the ancient Armenian language level. It reveals the role of grammatical particles in terms of expression of grammatical meaning of plurality. These particles act as a double (ան - անք, ք - եան, եան - եանք, ոտի - ոտիք, տի - տիք, ք - ունք) and triple (ունք - տիք - տի, ք - անի - անիք) synonymous variants.

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ  
ՍԵՎԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** փոխառություն, օտարաբանություն, հեզնանք, լեզվաշերտ, միջավայրի ընդգծում, խոսքի տիպականացում, քնարական կերպարի տիպականացում, խոսքի ոճավորում, անհատականացում:

**Ключевые слова и выражения:** заимствования, заимствования иностранных слов, ирония, акцент, ударение, среда типизация слова типизация лирического образа стилистическая речь индивидуализация.

**Key words and expressions:** borrowing words, borrowing foreign words, irony, accent, environment, typing words, typing lyrical image, stylistic speech, individualization.

Եթե խոսքը գրողի ստեղծագործության մեջ հանդիպող օտար բառերի մասին է, ապա հարկ է հաշվի առնել, թե տվյալ բառը լեզվի մեջ եղած բացը լրացնելով՝ նպատակ է հետապնդում, թե՞ ոճական նշանակություն ունի: Առաջին դեպքում, ինչպես հայտնի է, գործ ունենք փոխառությունների հետ: Լեզվի հարստացման աղբյուրներից մեկը փոխառությունն է: Քանի որ հայերենը նոր բառոր ստեղծելու ներքին մեծ հնարավորություններ ունի, այդ պատճառով էլ քիչ է դիմում փոխառությունների<sup>1</sup>: Փոխառությունները, բոլոր դեպքերում, ընդգծված ոճական դեր չունեն խոսքում: Մինչդեռ Սևակը օտար բառերի գործածությամբ գերազանցապես լուծում է ոճական խնդիրներ. գործածում է օտարաբանություններ՝ դրանց օժտելով զանազան արտահայտչական հատկանիշներով:

Օտարաբանությունները Սևակի լեզվում կարելի է բաժանել երկու խմբի: Դրանք գործածում է այս կամ այն հերոսի կամ դեպքերին մասնակից գրողի խոսքը տպավորիչ, անմիջական դարձնելու նպատակով: Գործածում է նաև այն դեպքում, երբ տվյալ հերոսին այդ պահին խոսեցնում է տվյալ լեզվով: Այս դեպքում հերոսների խոսքում հանդիպում են ոչ միայն օտար բառեր, այլև այս կամ այն օտար լեզվով ամբողջական նախադասություններ: Բուն իմաստով դրանք, իհարկե, ճիշտ չէ օտարաբանություններ անվանելը,

<sup>1</sup> Տե՛ս Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 180:

սակայն երկու դեպքում էլ ռճական նպատակադրումը նույնն է՝ միջավայրի ստեղծում, խոսքի տիպականացում, հեզնանք և այլն:

Օտարաբանությունների գործածությամբ գրողն ստեղծում է որոշակի մթնոլորտ, հոգեբանություն: Այս իմաստով բնորոշ են Սևակի նամակները: Բազմաթիվ օրինակներից բերենք ամենատիպականը, որտեղ գրողը գործածում է ֆրանսերեն, նաև ռուսերեն բառեր և ամբողջական նախադասություններ:

«Այնպես որ, երբ մեր auditoireը գաս պիտի տեսնես, որ auditeurներուն հարյուրին ութսունը աղջիկ է:

Արդ օր մը քովի աղջիկս տարօրինակ հարցում մը ուղղեց ինձ.

-Pardon, Monsieur, est-ce que vous pouvez me donner un cadeau?.

Չարմացած ըսի իրեն, թե նվեր մը չունիմ իրեն տալիք:

Բայց աղջիկը շիկնեցավ և պնդեց, թե ունիմ.

-Mais je l' ai vu, vous avez in cadeau:

Խնդիրը երկարեցավ... Ու այն ատեն հասկցվեցավ, թե խեղճ աղջիկը գաղիբերեն չէր գիտեր և պարզապես canif ըսել կուզեր: Tableau!

....Ես հիմա քիչ շատ կհասկնամ իրենց լեզուն: Եվ եթե կ'ուզես գործածական բառերեն քանի մը հաստ ըսեմ քեզի, այս բառերը դո՛ւն ալ տրվե (գալ տարի շատ պետք պիտի ըլլա քեզի):

**-Խորոշո-** գեղեցիկ, **Քակ բաժի վայերթ-** ի՛նչպես եք, **գտրասթվուիչեի-** բարև, **սպասիպո-**մերսի, **ղո՛ւ ւպի-**ավանակ, **տուռաք-** ապուշ, **պառուսքի նիեզ նայու-** ռուսերեն չեմ գիտեր» (387):

Այս օտար բառերն ու նախադասությունները որոշակիորեն բնութագրում են այն մթնոլորտը, որը զգացել է գրողը Եվրոպայում ուսանելու տարիներին: Եթե նա ուղղակիորեն չբերեր ֆրանսերեն բառեր կամ նախադասություններ, ապա դժվար թե հնարավոր լիներ այդքան տպավորիչ ներկայացնել ֆրանսերեն սովորել ցանկացող, բայց անսպասելի, անհարմար վիճակի մեջ ընկնող աղջկան, որ խնդրել է **գրչահասոր**, իսկ արդյունքում ստացվել է **նվեր**:

Նամակի հաջորդ հատվածը, որտեղ գրողը խոսում է ռուսերենի մասին, նրա բերած գրառումներն էլ այս անգամ վկայում են նրա՝ ռուսերենի չիմացությունը: Այսինքն՝ այս ամենի նպատակը երևույթները հնարավորինս իրենց բնական տեսքով ընկերոջը ներկայացնելն է:

Երևույթների արտահայտման նման օրինակներ կան պատումներում. «Չեր աղջիկը **կելենճիկ** է,- ըսավ.- **կելին** ըրեք, որ աղեկնա...» (322): Սա այն հազվադեպ երևույթներից է, երբ գրողը գործածում է թուրքերեն բառը. ընդ որում, դա ոչ թե գրական, այլ խոսակցական բառաշերտից եկած

հասկացություն է և նշանակում է «հարսնացու» է, «հարս դարձրեք», որ առողջանա, լավանա:

Առավել կարևոր է օտար բառերի այն խումբը, որ այլ լեզուների շփման արդյունքում ներթափանցել է գեղարվեստական տեքստ: Այս դեպքում արդեն խոսքը փոխառյալ բառերի մասին է: Դրանք գրական արևելահայերենի հետագա զարգացման ընթացքում փոխարինվեցին հայերեն համարժեքներով՝ **կոնսերվատորիա-երաժշտանոց, պրոֆեսոր-ուսուցչապետ, ռեժիմ-վարչակարգ, իտեալ-գաղափարատիպ** և այլն): «Լայն առումով որպես այդպիսին գիտակցվում են այն բառերը, որոնք վերցված են այլ լեզուներից՝ անկախ այն բանից, թե երբ է կատարվել փոխառությունը...»<sup>2</sup>: Բնականաբար մեզ հետաքրքրում են այն օտար բառերը, որոնք գրողը գործածել է ոճական նպատակով: Հերոսները կամ հեղինակը դեռևս գիտակցում են դրանց փոխառյալ լինելը: Պատահական չէ, որ Սևակը հաճախ այդ բառերը գրում է թավ կամ շեղ՝ դրանով մեկ անգամ ևս ընդգծելով իր խոսքում օտար բառի գոյությունը: Բնականաբար, դրանց դերը կարևոր է համատեքստում: Դրանք մայրենի լեզվի բառերի կողքին պահում են իրենց արտասանական բնորոշ առանձնահատկությունները: «Բայց հենց այդ հակադրությամբ մայրենի լեզվի և օտարաբանության կարող է գրողին հարուստ նյութ տալ... արտահայտչականությունը ուժգնացնելու համար»<sup>3</sup>:

Հաճախ օտարաբանությունը գործածվում է խոսքի տեղային կոլորիտը պահպանելու նպատակով<sup>4</sup>: «Շքեղ նվագահանդես մը սարքեր էին այդ զիշեր **Conservatoire**-ին աշակերտուհիները» (363): Նկատենք, որ «կոնսերվատորիա»-ն՝ ֆրանսերենով գրված, հենց սկզբից դառնում է քաղաքակիրթ մարդկանց հանդիսավայր (ծագում է իտալերեն **conservatorio** բառից): Բառի նման գործածությունը պետք է, որպեսզի հնարավորինս ընդգծվի «հասարակ» մարդկանց և «շրջանավարտուհիների» միջև եղած տարբերությունը: Ակնհայտ է, որ դրա մեջ երգիծական իմաստ կա: Իսպանացի երիտասարդը սիրել է Էնրիքեթային՝ զմայլելի իտալուհուն՝ **Conservatoire**-ում սովորողին: Բայց քաղաքակրթությունն այլ երես ունի. աղջիկը արագորեն փոխում է իր երկրպագուներին. այս անգամ նախընտրում է ուրիշին: «Պրանտ աղքատ ծնողքե էր, դեռ նոր լքեր էր հայրենի տունը՝ **mathematique**-ի հետևելու համար» (365): Բառը ծագում է հունարեն «գի-

<sup>2</sup> Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 181:

<sup>3</sup> Տե՛ս և Литературная энциклопедия: Словарь литературных терминов : В 2-х т., М., Л : Под ред. Н. Бродского, А. Лаврецкого и др., 1925:

<sup>4</sup> Տե՛ս և Томашевский Б., Теория литературы. Поэтика: Учеб. Пособие. М. 1999.

տություն» բառից: Այստեղ էլ նկատելի է գրողի հեզնանքը: Գիտության հետքերով եկած երիտասարդը հեռու է կյանքի խարդախություններից. նա դյուրահավատ է, վստահում է աղջկան, որ պատմում է այն երիտասարդների մասին, որոնք իր զոհերը եղան. դրանք ըստ երևույթին «Բարձր կարգի» մարդիկ են եղել. «Ու հետո երաժշտության իր երիտասարդ **professeur**-ը» (365): Բառը ծագում է լատիներեն **professor**-դասախոս բառից: Այս ամենը վկայելու էր աղջկա բարձր հարգը, իսկ իրականում սա անբարոյական վարքի դրսևորում է: Աղջիկը խաբում է և Պրանտին՝ նորից վերադառնալով նախորդի գիրկը:

Նույնպիսի հեզնական վերաբերմունքի արտահայտություն են «ռեժիմ», «մաքարոն» բառերը: «Ռեժիմ» բառը լատիներենից (regim) անցել է ֆրանսերենին, այնուհետև տարածվել: Այն նշանակում է վարչակարգ, նաև կանոնների ամբողջություն: Գրողը հեզնում է հիվանդի, բայց իրականում իրեն հիվանդ դարձրած հերոսին: Ամեն բժիշկ մի խորհուրդ է տալիս, նշանակում բուժման սեփական կարգը: Գրողը հերոսի բառապաշարում եղած բառը ներառում է հեղինակային խոսքում. «Բայց այս քաղաքին մեջ ստամոքսի աստվածները երկուք են՝ բժշկապետ Պուրժեն ու Քոմպլը, երկուքն ալ հակընդդեմ **բեժիմ**ներով կհաջողին թե՛ հարստանալ... թե՛ հիվանդները առողջացնել» (282):

Սակայն գրողի այս միտումի՝ օտարաբանությամբ երևույթը հեզնելու լավագույն օրինակը «**օբեռասիոն**» բառն է, որ այնպես հմտորեն գործածել է իր հերոսուհու խոսքի մեջ: Սաթենիկը, որ մի ժամանակ փափուկ կյանքով է ապրել, այժմ սպասուհի է: Բարեկամը, որ բժշկին է պարտադրել Սաթենիկին, առանձնացրել է նրա կարևոր առավելությունը՝ «Ժպտո ւն, ժպտո ւն»: Հետո միայն պիտի պարզվեր, որ այդ ժպիտը հոգեբանական չէր, այլ մարդակազմական: Անսրբագրելի, սաղայելական ժպիտ, որ նույնիսկ «գերեզմանին տակեն պիտի խնդար վիրաբույժներուն անճարակության վրա»: Դա նույնիսկ բժշկի մրցակիցներին ուղղված «հեզնոտ ժպիտ» էր, որ շոյում էր բժշկի ինքնասիրությունը:

«-Իմ բարկացած ատենս դուն ինչո՞ւ ցավագարի պես կժպտիս, Սաթենիկ...

-**Օբեռասիոն**...- կկակազեր աղջիկը ժպտելով» (349):

Բառը այլ լեզուների է անցել լատիներենից (operatio) **գործողություն, բժշկական միջամտություն** իմաստով: Հերոսուհին ընդամենը մեկ բառի օգնությամբ պատասխան է տալիս ինչպես տանտիրոջ հարցումին, այնպես էլ բժշկական միջամտությամբ մարդուն բուժելու անկարողությանը կամ նրա դեմքը խեղելուն: Գրողի հեզնանքն ուղղված է բժշկության ինքնամեծար

կեցվածքի դեմ, որ փորձում է ուղղել բնության սխալը և ընկնում է ծիծաղելի վիճակների մեջ:

Նույն կերպ՝ օտար բառը խոսքի կոմիզմի դրսևորման միջոց է դառնում «Տոբտոբ Քոզմոզ» պատումում: Հերոսը սովորական բուժակ է, որ տասնամյակներ շարունակ խաբել է մարդկանց: Հանկարծակի հայտնված երիտասարդ բժիշկը կարողանում է բացահայտել խաբեությունը: Քոզմոզն իբր հիվանդի մեզի միջոցով կարողանում է որոշել, թե հիվանդի ո՞տքը, թե՞ ակռան է ցավում... Պարզվում է, որ «մեզին... հեղինակը ջորին է»: Մեռնելուց առաջ փորձում է արդարանալ. «-Կյանքիս մեջ մեկ սխալ **անալիզ** մը ըրի, գավակներս, ատոր համար ալ կմեռնի՛ մ կոր...» (359):

Ընդհանրապես օտարաբանություններ կարելի է համարել մասնագիտական բառերը, որոնք գործածում է գրողը՝ որպես բժիշկ: Առանձին դեպքերում, օտար բառը գործածելով հայերենի համարժեքի բացակայության պատճառով նաև ոճական որոշակի նպատակ է հետապնդում: Բառի գործածությունը վկայում է եվրոպական կարգի պայմաններ, թեև մնում է և թերահավատ վերաբերմունքը. «Վրացի Գողիաթը կջանար հիվանդի **քանաբեխ** վրա սեղմեցնել իր հսկա մարմինը» (347): Հիվանդի համար նախատեսված ընկողմնաբանը չի կարող «տեղավորել» մարդուն կամ նրա համար ապահով, հարմար բազմոց լինել:

Օտար բառի գործածությունը դառնում է նաև տվյալ հերոսին բնութագրելու լավագույն միջոց: Գյուղից Եվրոպա հասած գյուղացին, գործածելով նոր բառ, արտահայտում է իր վերաբերմունքը արտառոց նորի հանդեպ՝ դրանով վկայելով սեփական ավանդապահության մասին: «Անցած գիշեր մեր պանդոկին մեջ՝ **թանկո** կըսեն, պար մը դարձան, բայց ան ի՛նչ պար, ի՛նչ շարժում, ի՛նչ գալարում, ի՛նչ շփում... մեղա, մեղա... թե շունն ընէ՝ կքարկոծեն» (334):

Առանձին դեպքերում օտար բառը գործածվում է, քանի որ հայերեն համարժեքը գործածելը նպատակահարմար չէ:

«Ո՛վ մահաժպի՛տ, գա՛րշ, արյունալի՛

Հակադարձ երե՛սը այն **«մետալի»**

Ուր ՄԱՐԴ ոսկետառ անունն կփայլի...» (89):

Բառը լատիներենից (metallum) անցել է ֆրանսերենին (medaille), այնուհետև տարածվել տարբեր լեզուներում: Հայերեն «շքադրամ» բառը քիչ գործածական է: Բացի դրանից՝ օտարաբանությունը հնարավորություն է տալիս ավելի ազատորեն բառին հարաբերակցելու բացասական իմաստ՝ «մեղալի հակառակ երես» իմաստով, ինչը դժվար է ասել հայերեն «շքադրամի» մասին:

«Ժեստ» բառի գործածությամբ (ծագում է լատիներեն **gestus- մարմնի շարժում** բառից) գրողը կարողանում է սեղմ ու պատկերավոր արտահայտել ասելիքը. «Պղինիոս պատմաբանը կհավաստե, թե Եգիպտացիք Իպիս թռչունեն սորվեցան փորվացք ընել. «Իպիս իր մարմնին ներսը կլվա՝ կտուցովը ջուր ներարկելով հո՛ն, ուրկե առողջությունը կպահանջե, որ ստամոքսին ավելորդ սնունդները դուրս գան»:

«Պղինոս չեմ գիտեր, բայց Վոլթեր անմահացուց այդ **ժեսթը...**» (316): Գրողը նկատի ունի այն գործողությունը, որ հատուկ է իպիս թռչունին, ինչի մասին երկար-բարակ չի խոսում:

Նոր ժամանակների բերած մոլորությունները ևս արտահայտվում են օտար բառերով: Սևակի նպատակն այն է, որ ցույց տա, թե քաղաքակրթության «ձեռքբերումները» դառնում են անհաղթահարելի հիվանդություն. «Նախ մելամաղձոտ դարձավ, սենյակին մեջ բանտարկված, օրը հարյուր **սիկարեթ** կայրեր ու կմարեր» (241): Քաղաքակրթության այս հնարը չի կարող փրկել մարդուն, քանի որ նա ծանր հիվանդությամբ է վարակված. «**Բարալիզի ժեներալն** էր այս հիվանդությունը... որոնց երկուքին ալ հայրը հինգած **սիֆիլիզ** մըն է» (241):

«Դոկտոր» բառը ծագում է լատիներեն **doctor-ուսուցիչ** բառից: Հետագայում այն ավելի հաճախ սկսվեց գործածվել «բժիշկ» բառի իմաստով: Դրա մեջ գրողը դնում է սովորական բժիշկ բառիմաստից ավելի իմաստ, համենայնդեպս, այդպես են արտահայտվում նրա հերոսները: Օտարահունչ բառը հիվանդի համար դառնում է ոչ սովորական, ավելին, քան սովորական մարդը:

«Ի՞նչ էր այդ խեղճ տղուն ցավը:

-Ցավ մը չկա, **տոքտոր**, «-Այո՛, **տոքտոր...** կոկորդիս մեջ ցավ մը կա, կերակուրս չեմ կրնար ուտել», «Ուրիշ ի՞նչ ըսեմ, **տոքտոր**, այսքանը չի բավեր...» (331):

Այդ հարգանքը ամենակարող մարդու հանդեպ արտահայտվում է ոչ միայն հիվանդի, այլև նրա ծնողի վերաբերմունքի մեջ. «-Կծխե՛ք, **տոքտոր**, մեր երկրի թարմ ծխախոտ ունիմ...» (333):

Գրեթե նույնպիսի վերաբերմունք են դրսևորում Սևակի հերոսները «սանատորիա» օտարաբանության հանդեպ: Բառը ծագում է լատիներեն **sano-բուժում** եմ բառիմաստից: Հայերեն «առողջատունը» հարստության տեր հորը շատ սովորական կարող էր թվալ, իսկ «սանատորիան» իր բուժելու, առողջացնելու հատկություններով ավելի գրավիչ է. «Հայրը կփափաքեր զայն է՛ն սուղ **սանատորիում**ները տանիլ, է՛ն մեծ բժիշկներուն ցուցնել, է՛ն թանկ տեղերը գնել» (279): Նույն կերպ՝ երիտասարդը իր սիրած աղջկան, որ հիվանդ է, պահում է մարդկանցից հեռու վայրում. դա ամեն

մեկին հասանելի չէ, հետևապես բառը դառնում է եթե ոչ խորհրդավոր, ապա ավելի վստահելի, քան «առողջատունը»: «...Աղքատ աղջիկ մը կսիրեր, չգտնվելիք գեղեցկություն մը, որ չեմ գիտեր ո՞ր կե գտեր էր ու իր դրամով, իր **սանաթորիումին** մեջ կպահեր» (341):

**Իդեալ** բառը ֆրանսերենին (ide'al) հունարենից (idea) է անցել և նշանակում է կատարելություն, ձգտումների վերջնական նպատակ: Բառը Սևակը գործածում է և՛ բանաստեղծության մեջ, և՛ արձակում: «Մերը՝ անձնական, կերպարանավոր, երկրային, բնական **իտեալն** է, Կրոնը՝ անանձնական, անկերպարան, տիեզերական, գերբնական **իտեալը**...» (268):

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ օտար բառերը (օտարաբանություններ, փոխառյալ բառեր) Ռ. Սևակի ստեղծագործության մեջ, մասնավորապես արձակում, կարևոր լեզվաշերտ են կազմում: Դրանց գործածությունը գերազանցապես ոճական նշանակություն ունի: Օտար բառերի կիրառությամբ գրողն ստեղծում է հերոսների բնավորության, նրանց ընկալումների, սովորությունների մասին որոշակի պատկերացումներ: Առանձին դեպքերում հայերեն համարժեքի բացակայության հետևանքով բառերի գործածությունը դառնում է անհրաժեշտ:

Օտար բառերը (օտարաբանություններ, փոխառյալ բառեր) Ռ. Սևակի ստեղծագործության մեջ, մասնավորապես արձակում, կարևոր լեզվաշերտ են կազմում: Եթե խոսքը գրողի ստեղծագործության մեջ հանդիպող օտար բառերի մասին է, ապա հարկ է հաշվի առնել, թե տվյալ բառը լեզվի մեջ եղած բացը լրացնելու նպատակ է հետապնդում, թե՞ ոճական նշանակություն ունի: Առաջին դեպքում, ինչպես հայտնի է, գործ ունենք փոխառությունների հետ: Լեզվի հարստացման աղբյուրներից մեկը փոխառությունն է: Քանի որ հայերենը նոր բառեր ստեղծելու ներքին մեծ հնարավորություններ ունի, այդ պատճառով էլ քիչ է դիմում փոխառությունների: Փոխառությունները, բոլոր դեպքերում, ընդգծված ոճական դեր չունեն խոսքում: Մինչդեռ Սևակը օտար բառերի գործածությամբ գերազանցապես լուծում է ոճական խնդիրներ. գործածում է օտարաբանություններ՝ դրանց օժտելով զանազան արտահայտչական հատկանիշներով: Դրանց գործածությունը գերազանցապես ոճական նշանակություն ունի: Օտար բառերի կիրառությամբ գրողն ստեղծում է հերոսների բնավորության, նրանց ընկալումների, սովորությունների մասին որոշակի պատկերացումներ: Առանձին դեպքերում հայերեն համարժեքի բացակայության հետևանքով բառերի գործածությունը դառնում է անհրաժեշտ: Սևակը հաճախ օտարաբանությունների է դիմում այս կամ այն հերոսի խոսքը տիպականացնելու, նրա բնավորության այս կամ այն

գիծը շեշտելու, ինչպես նաև հեղինակային որոշակի վերաբերմունք արտահայտելու նպատակով:

Օտարաբանությունները և փոխառությունները Ռուբեն Սևակի ստեղծագործություններում

Օտար բառերը (օտարաբանություններ, փոխառյալ բառեր) Ռ. Սևակի ստեղծագործության մեջ, մասնավորապես արձակում, կարևոր լեզվաշերտ են կազմում: Լեզվի հարստացման աղբյուրներից մեկը փոխառությունն է: Քանի որ հայերենը նոր բառեր ստեղծելու ներքին մեծ հնարավորություններ ունի, այդ պատճառով էլ քիչ է դիմում փոխառությունների: Փոխառությունները, բոլոր դեպքերում, ընդգծված ոճական դեր չունեն խոսքում: Մինչդեռ Սևակը օտար բառերի գործածությամբ գերազանցապես լուծում է ոճական խնդիրներ. գործածում է օտարաբանություններ՝ դրանց օժտելով զանազան արտահայտչական հատկանիշներով: Դրանց գործածությունը գերազանցապես ոճական նշանակություն ունի: Օտար բառերի կիրառությամբ գրողն ստեղծում է հերոսների բնավորության, նրանց ընկալումների, սովորությունների մասին որոշակի պատկերացումներ: Առանձին դեպքերում հայերեն համարժեքի բացակայության հետևանքով բառերի գործածությունը դառնում է անհրաժեշտ:

Займствования иностранных слов в поэзии Рубена Севака

Вопросы языка и стиля армянских писателей всегда привлекали к себе особое внимание многих филологов. Изучение индивидуального стиля писателя в свете словообразования является актуальным для современной лингвистики. С этой точки зрения всегда привлекали внимание заимствования иностранных слов, которыми пользуются различные авторы. Данная статья является попыткой систематизировать существующие мнения касающиеся творчества Рубена Севака и дать определенное толкование заимствованиям иностранных слов в целом. Севак придает поэтическую окраску своим произведениям частым использованием иностранных слов. Изучая слово Севака, можно прийти к заключению, что для достижения определённых художественных целей поэт пользовался заимствованием иностранных слов. Интенсивным использованием иностранных слов и заимствований автор добивается более объемного и характерного изображения своих персонажей .

Borrowing foreign words in Ruben Sevak's poetry

Questions of language and style of Armenian writers have always attracted the attention of many philologists. Exploring individual style of the writer in light of word formation is relevant for modern linguistics. With this point of view has always attracted the attention of borrowing foreign words used by different authors . There are differences between borrowing and foreign words . This article is an attempt to systematize the existing opinions on Ruben Sevak's creativity and give a definitive interpretation of borrowing foreign words in general. Borrowing foreign words is one of the ways to modify the language factor and its development. Sevak gives poetic coloring their works frequent use of foreign words , special attention to effective arrangement of words. Studying Sevak's word, it can be concluded that in order to achieve specific artistic purposes so enjoy borrowing foreign words. Intensive use of foreign words and borrowing author achieves bole surround and distinctive image of their characters.

ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** լեզվաբանություն, գնահատողական վերաբերմունք, դրական վերաբերմունք, բացասական վերաբերմունք, արժեքաբանություն, հոգելեզվաբանություն:

**Ключевые слова и выражения:** лингвистика, психолингвистика, аксиология, оценочное отношение, позитивное отношение, отрицательное отношение, семантика, лексическое значение, средства выражения, интонация.

**Key words and expressions:** linguistics, psycholinguistics, evaluative attitude, positive attitude, negative attitude, axiology, semantics, lexical meaning, means of expression, intonation.

Լեզվական միջոցներով վերաբերմունքի արտահայտությունը լեզվաբանության մեջ քննության առարկա է դարձել հասկապես 20-րդ դարում: Իմաստաբանության մեջ լրացուցիչ իմաստային երանգները, որոնցից մեկն էլ խոսողի հուզական, զգացմունքային վերաբերմունքն է, ընդունված է կոչել կոննոտացիա՝ հարանշանակություն կամ նշանակում:

Լեզուն արտահայտում է ոչ միայն մտքեր, այլև զգացմունքներ, ապրումներ, տարբեր վերաբերմունքներ: Կարող են արտահայտվել այնպիսի վերաբերմունքներ, ինչպիսիք են համակրանքը, հակակրանքը, իրախուսումը, կշտամբանքը, մի բան լավ կամ վատ, արժեքավոր կամ անարժեք, արդարացի կամ անարդար համարելը, համաձայնությունը, անհամաձայնությունը, և այլն, որոնք բոլորը նշանակում են դրական կամ բացասական վերաբերմունք ունենալինչ-որ բանի նկատմամբ: Վերաբերմունքի արտահայտումը մի շարք հայեցակետեր ունի և կարող է դիտարկվել մի շարք կտրվածքներով, որոնց էլ հաջորդաբար կանդրադառնանք:

ա) Վերաբերմունքը լեզվական հաղորդակցման մեջ կարող է արտահայտվել բացահայտորեն և ոչ բացահայտորեն: Լեզվական միավորը կամ կապակցությունը կարող է գործածվել հենց ուղղակիորեն վերաբերմունք արտահայտելու նպատակով կարող է ինֆորմացիա հաղորդելու զուգահեռ արտահայտել այդ վերաբերմունքը, բայց հնարավոր է նաև այդ վերաբերմունքի արտահայտումն առանց այդ վերաբերմունքն

անվանելու, այն ընդամենն ակնարկելով խոսքի ինչ-ինչ հատկանիշներով (ոչ բացահայտ դրսևորում), օրինակ՝

*Ուրախ եմ, որ նա վերադարձել է:*

*Նա, բարեբախտաբար, վերադարձել է:*

*Նա վերադարձել է:*

բ) Որևէ երևույթի նկատմամբ ցանկացած վերաբերմունք կապված է այդ երևույթի արժևորման, գնահատման հետ: Որքան էլ վերաբերմունքը սուբյեկտիվ լինի, այն ներկայացվում է որպես տվյալ երևույթների արժանիքներից կամ թերություններից բխող:

Այս առումով լեզվում վերաբերմունքների դրսևորման ուսումնասիրությունը կապված է արժեքաբանության (աքսիոլոգիայի) հետ<sup>1</sup>: Արժեքաբանությունը փիլիսոփայական ուսմունք է մարդու գործունեության, արարքների, կողմնորոշումների և դրդիչ ուժերի մասին: Արժեքի գաղափարը փիլիսոփայության մեջ մտցրել է Կանտը: Հետագայում նրա հետևորդները զարգացրել են այդ տեսությունը, սակայն արժեքի հիմքում դրել են գիտակցական, դատողական գնահատումը: Միայն 19-րդ դարի վերջից փիլիսոփաները սկսել են արժեքը հիմնավորել հուզական վերաբերմունքով, տվյալ երևույթի առաջ բերած զգացումներով:

գ) Քանի որ վերաբերմունքը հուզական-զգացմունքային հիմքեր ունի, նրա ուսումնասիրությունը չի կարող ինչ-որ չափով չառնչվել հոգելեզվաբանության հետ: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ վերաբերմունքային իմաստների հոգելեզվաբանական ուսումնասիրությունները, որպես կանոն, կենտրոնանում են բառերի հոգեբանական զուգորդումների վրա: Կատարվա ծ բազմաթիվ գիտափորձեր հիմնականում վերաբերում են իմաստային դաշտերին և հոմանշային շարքերին<sup>2</sup>:

դ) Երևույթներին վերագրվող արժեքները և դրանցից բխեցվող վերաբերմունքները երկու կարգի կարող են լինել՝ ամբողջ հանրության կողմից ընդունված, հաստատված և անհատական: Յուրաքանչյուր հասարակություն ունի իր աշխարհ ընկալումով, ավանդույթներով, պատմամշակութային հանգամանքներով պայմանավորված արժեքների համակարգ, որն ընդհանուր է այդ հասարակության բոլոր անհատների համար: Դրա հետ կապված վերաբերմունքը համապատասխան երևույթի լեզվական նշանակման անբաժան ուղեկիցն է: Այդ վերաբերմունքը դառնում

<sup>1</sup> Հարանշանակությունն արժեքաբանական մոտեցման մասին տես В. Н. Телия. Коннотативный аспект семантики номинативных единиц. М., 1986, стр. 22-29.

<sup>2</sup> Տե՛ս, օր՝. Психолингвистические проблемы семантики. М., 1983.

Է տվյալ լեզվական միավորների իմաստների մի բաղադրիչը և հաճախ հենց դրանով է կարգավորում այդ միավորների գործածությունը խոսքում: Արժեքային և վերաբերմունքային այդ համակարգով է իր խոսքում առաջնորդվում յուրաքանչյուր խոսողանկախ նրանից, թե գործնական կյանքում ինչ վարքագծի տեր է, ինչ չափով է հետևում հանրության կողմից դրական համարվող սկզբունքներին, այսպես՝ *քանի որ գողությունը հանրության աչքում բացասական երևույթ է, դժվար է պատկերացնել մի գողի, որը հայտարարում է՝ Ես գող եմ*»:

Դրան հակառակ՝ յուրաքանչյուր անհատ նաև միայն իրեն հատուկ սուբյեկտիվ վերաբերմունք կարող է ունենալ այս կամ երևույթի նկատմամբ և իր խոսքում արտահայտել այդ վերաբերմունքը: Այդ դեպքում նա գտնում է արտահայտման այնպիսի ձևեր, որոնք կարող են հայտնի դարձնել նրա վերաբերմունքը բացահայտ կերպով: Հետևաբար վերաբերմունքի ոչ բացահայտ դրսևորումները անհատական վերաբերմունք արտահայտելու համար պիտանի չեն: Դրանք կարող են գործածվել միայն բոլորի կողմից ընդունված վերաբերմունքներ արտահայտելու համար, քանի որ դրանք ինքնին հասկանալի են և հատուկ լեզվական ձևավորման կարիք չեն զգում:

ե) Գոյություն ունեն վերաբերմութի ամրագրված լեզվական արտահայտություններ, որոնք իրենց կանոնականության հետևանքով լեզվական համակարգի մաս են դառնում: Դրա կողքին կան վերաբերմութի արտահայտման այնպիսի միջոցներ, որոնք խոսքից և իրադրությունից դուրս չեն կարող հասկացվել, իմաստավորվում և հասկանալի են դառնում միայն տվյալ իրադրության մեջ:

Ոչ միայն վերաբերմունքի արտահայտությունը, այլ նաև հենց վերաբերմունքը մեծապես կախված է իրադրությունից, օրինակ՝ *«հմուտ» գնահատումը միանգամայն դրական երանգ կունենա գիտնականի, մանկավարժի կամ մարզիկի մասին գործածվելու դեպքում, բայց բացասական գնահատական կդառնա, եթե այդ բառով բնութագրվի որևէ հանցագործ կամ խաբեբա*:

Կարող է թվալ, թե այս բաժանումը համընկնում է հասարակական և անհատական վերաբերմունքների հետ, սակայան այդպես չէ: Ե՛վ հասարակական, և՛ անհատական վերաբերմունքները կարող են ունենալ ինչպես որոշակիորեն հաստատված, կայունացված, այնպես էլ իրադրական արտահայտություններ:

Վերաբերմունքի իրադրական արտահայտությունները կարող են դիտարկվել միայն խոսքում. դրանք պարզելու համար անհրաժեշտ է քննել ամբողջական նախադասությունները և դրանց գործածության

պայմանները, այսպես՝ ակնհայտ է, որ տարբեր իրավիճակներում հնարավոր են այսպիսի իրարամերժ դատողություններ.

*Լավ է, որ նա հարուստ է (աղքատ է, ամուսնացած է, ամուսնացած չէ, ուստիկան է, ուստիկան չէ* և այլն) :

*Վատ է, որ նա հարուստ է (աղքատ է, ամուսնացած է, ամուսնացած չէ, ուստիկան է, ուստիկան չէ* և այլն):

զ) Իրադրության հետ վերաբերմունքի (գնահատման) կապված լինելը և իրադրության հաշվառման անհրաժեշտությունը, ինչպես նաև վերաբերմունքների ուսումնասիրումը կապվում է լեզվի գործաբանության (պրագմատիկայի) հետ:

Ինչպես հայտնի է, պրագմատիկան, սեմանտիկան և սինտակտիկան՝ որպես նշանների հարաբերությունների տեսակներ, տարբերակել է Չ. Մորրիսը՝ պրագմատիկան սահմանելով որպես նշանների հարաբերությունը այն «մեկնաբանողների» մարդկանց հետ<sup>3</sup>: Հետագայում գործաբանական հետազոտություններ կատարվեցին Ջ. Օստինի և նրա հետևորդների «խոսքային ակտերի» տեսության մեջ: Ջ. Օստինը, սակայն, քննարկում է նախադասությունների իրադրական իմաստները: Նույնը վերաբերում է նաև այդ ուղղության այլ լեզվաբաններին:

է) Բացասական վերաբերմունքի արտահայտությունը, ինչպես որ ցանկացած վերաբերմունքի արտահայտություն, կապվում է լեզվական բովանդակության մեջ օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրեր առանձնացնելու հետ: «Սուբյեկտի և օբյեկտի հակադրումը այս առումով սահմանվել է որպես ասույթում պարունակվող որոշ օբյեկտիվ պահերի միավորում այն սուբյեկտիվ գնահատականի հետ, որը խոսողի կողմից վերագրվում է լեզվի միջոցներով նշանակվող երևույթին»<sup>4</sup>: Լեզուն արտացոլում է օբյեկտիվ իրականությունը, բայց դա անում է խոսող սուբյեկտի տեսանկյունից, ուստի յուրաքանչյուր լեզվական հաղորդման մեջ օբյեկտիվ ինֆորմացիան գուգակցվում է սուբյեկտիվ վերաբերմունքի հետ:

ը) Բացասական վերաբերմունքի և նրա արտահայտության միջոցների ուսումնասիրությունը կապվում է նաև ոճաբանության հետ, մանավանդ այն դեպքերում, երբ վերաբերմունքի արտահայտման համար հատուկ ոճական հնարքներ են կիրառվում, կամ դիտարկվում են ակնհայտ

<sup>3</sup> Տե՛ս Չ. Մ. Моррис. Основания теории знаков.-Семиотика. М., 1983, стр. 42.

<sup>4</sup> Г. В. Колшанский. Соотношение субъективных и объективных факторов в языке. М., 1975, стр. 10.

վերաբերմունքային երանազավորում ունեցող բառերի և արտահայտությունների գործածությունը խոսքում: Պատահական չէ, որ նշանավոր լեզվաբան Շ. Բալլին իր ոճաբանությանը նվիրված գրքի առնվազն կեսը հատկացնում է հուզաարտահայտչական բառապաշարին և խոսքին<sup>5</sup>:

Վերաբերմունքի արտահայտություններից ոճաբանական արժեք ունեն ոչ միայն բառերը, այլև բառերի իմաստային խմբերը, հատկապես հոմանիշները և հականիշները, ինչպես նաև պատկերավորման միջոցները, հատկապես փոխաբերությունը և համեմատությունը, որոնցից առաջինը վերաբերում է բառային մակարդակին:

թ) Վերաբերմունքի արտահայտմանը կարող են ծառայել ոչ միայն բուն լեզվական, այլև հարալեզվական միջոցները՝ դիմախաղը, ժեստերը: Դրանք ոչ միայն լրացուցիչ դեր կարող են կատարել իմաստային նրբերանգների արտահայտման հարցում, այլև կարող են իրենցով որոշել վերաբերմունքի իմաստը՝ այն փոխելով կամ նույնիսկ լեզվական միջոցներով արտահայտվածի հակառակը դարձնելով, ինչպես *ամենամեծ գովեստը կարող է հակառակ իմաստ ստանալ, եթե ուղեկցվի հեզնական ժպիտով*:

Վերաբերմունքի արտահայտության միջոցներ կան լեզվի բոլոր մակարդակներում:

Վերաբերմունքը կարող է դրսևորվել գործածվող բառերի հնչյունական կազմով: Այս առումով հատկապես տարածված է խոսքի հնչման գեղագիտական արժևորումը: Առավել բարեհունչ է համարվող հնչյունները հոգեբանորեն կապվում են դրական հույզեր առաջացնելու և դրական վերաբերմունք արտահայտելու հետ, իսկ անբարեհունչ համարվող հնչյունների օգտագործումը բացասական հույզերի և բացասական վերաբերմունքի հետ է կապվում: Օրինակ՝ *«խճողված» բառի հնչումն արդեն իսկ բացասական տրամադրվածություն է առաջացնում*: Սակայն հնչյունների միջոցով վերաբերմունք արտահայտելը բացարձակ չէ, այդ նույն հնչյունները գործածվում են շատ այլ բառերում, որոնք որևէ կերպ չեն կապվում նույն վերաբերմունքի հետ: Բացի այդ, հնչյուններով արտահայտվող վերաբերմունքը միանաշանակ չէ և կարող է տարբեր մեկնաբանություններ ստանալ կամ պարզապես չընկալվել:

ժ) Վերաբերմունքի արտահայտման մեջ առանձնահատուկ դեր ունի հնչերանգը: Հնչերանգով տարբերվում են նախադասությունների հաղորդակցական տեսակները: Երբեմն հնչերանգները հուզական հոգեվիճակներ են արտահայտում : Այս կապակցությամբ արժե հիշել, որ

<sup>5</sup> Տե՛ս Յ. Բալլի. *Французская стилистика*. М., 1961.

վերաբերմունքիմաստ ունեցող ձայնարկությունները պարտադիր հնչերանգային ձևավորում են ունենում: Հնչերանգը կարող է հիմնավորապես փոխել նախադասության բառային կազմի արտահայտած իմաստը: *Օրինակ քացականչական հենչերանգով ասված «խելոք» բառը կսկսի նշանակել «անխելք, անհասկացող», իսկ նույն հնչերանգով ասված «անխելք» բառը թեև «խելացի» իմաստը չի ստանա, բայց անպայման ցույց կտա, որ անհամաձայնությունն ուղեկցվում է դրական զգացմունքներով այն մարդու նկատմամբ, որի վերաբերյալ այդ բառը գործածվել է:*

Ծա) Որոշ քերականական կարգեր նույնպես կարող են վերաբերմունքի արտահայտության դեր կատարել: Առաջին հերթին դա վերաբերում է բայի եղանակի քերականական կարգին, «որով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ»<sup>6</sup>: Եղանակի քերականական կարգով արտահայտվում է գործողություն՝ ցանկալի (*Լինեք հեռու մի անկյուն, լինեք մանկան արդար քուն...*), պարտադրական (*Պետք է գնաս...*), պայմանական և այլն: Սա վերաբերմունքի ընդհանուր լեզվական դրսևորումներ են (մոդալություն լայն առումով) և ոչ թե խոսքային:

ԹՎի քերականական կարգը որպես վերաբերմունքի արտահայտման յուրահատուկ միջոց է ծառայում անձնական դերանվան երկրորդ դեմքում, երբ հոգնակիի ձևը գործածվում է մեկ անձի նշանակելու համար և ձեռք է բերում հատուկ ընգծված հարգական իմաստ, օրինակ՝ (*դու-դուք*):

Վերաբերմունքի ոչ ինքնուրույն արտահայտություն կարող է լինել ածականի կամ մակբայի համեմատության աստիճանների քերականական կարգը: Բաղդատական և գերադրական աստիճանները կարող են սաստկացնել ածականի իմաստային հատկանիշը՝ դրական կամ բացասական: *Օրինակ՝ «Հիմա ավելի լավ է ստացվում» զուսպ խրախուսանքը, «Դու ամենագեղեցիկն ես, սիրելի՛ս» հաճոյախոսությունը և այլն:*

Հետաքրքիր է ժխտման միջոցով վերաբերմունք արտահայտելու հնարավորությունը: Ժխտումն իր էությամբ չեզոք կարգ է, և դրական հատկանիշի կամ վերաբերմունքի ժխտումը պիտի արտահայտի՝ բացասական հատկանիշ կամ վերաբերմունք, իսկ բացասականի ժխտումը՝ դրական: Սակայն հաստատումն ավելի շատ զուգորդվում է դրականի հետ, իսկ ժխտումը, բացառումը բացասական երանգ են հաղորդում ասվածին:

<sup>6</sup> Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., էջ 494:

Համեմատենք երկու նախադասություններ և նրանցով արտահայտված մտքերի ժխտումները:

Լավ է: - Լավ չէ:

Քանի որ երկրորդ նախադասության մեջ ժխտվում է դրական արժեք ունեցող երևույթը, դրականի բացակայությունն արդեն ընկալվում է որպես բացասականի հաստատում:

Վատ է: - Վատ չէ:

Երկրորդ նախադասության մեջ ժխտվում է բացասական արժեք ունեցող երևույթը, սակայն բացասականի բացակայությունը դեռևս լիարժեք դրական չի համարվում: «Վատ չէ» ասողը նկատի ունի «Ոչ վատ է, ոչ լավ» կամ «Այնքան էլ վատ չէ», իսկ դրանք դրական գնահատումներ չեն:

Ինչպես տեսնում ենք, ժխտումը ավելի շատ բացասական գնահատման իմաստ է արտահայտում, քան դրական: Դրականի ժխտումով արտահայտվում է բացասական գնահատում, իսկ բացասականի ժխտումն ընդամենը մեղմացնում է բացասական երանգը, սակայն չի վերացնում:

Գնահատողական վերաբերմունքի բազմազան դրսևորումները կարող են կախված լինել ինչպես բառային և միավորների իմաստային կառուցվածքից, այնպես էլ խոսքում դրանց տարբեր կիրառություններից:

### Էդիտա Ասատրյան

#### Գնահատողական վերաբերմունքի դրսևորման միջոցները

Վերաբերմունքը լեզվի արտահայտության միջոցներից մեկն է: Կարող են արտահայտվել այնպիսի վերաբերմունքներ, ինչպիսիք են համակրանքը, հակակրանքը, խրախուսումը, կշտամբանքը, մի բան լավ կամ վատ, արժեքավոր կամ անարժեք, արդարացի կամ անարդար համարելը, համաձայնությունը, անհամաձայնությունը, և այլն, որոնք բոլորը նշանակում են դրական կամ բացասական վերաբերմունք ունենալ ինչ-որ բանի նկատմամբ: Վերաբերմունքի արտահայտումը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից՝ իմաստաբանական, մասամբ քերականական, լեզվական և խոսքային և այլն

Едита Асатрян

#### *Средства выражения оценочного отношения.*

Выражение субъективного отношения является одним из изобразительных средств языка. Такие отношения, как симпатия, антипатия, одобрение, упрек, восприятие явлений как хороших либо плохих, ценных

либо незначительных, справедливых либо несправедливых, приемлемых либо неприемлемых и др., сводятся к положительному или отрицательному оценочному отношению. В статье на материале современного армянского языка выражение субъективного отношения рассматривается в разных аспектах: семантическом, отчасти грамматическом, интонационном, а также с точки зрения их языкового или речевого выражения и т.д.

**Edita Asatryan**

*Means Of Attitude Expression*

Attitude is one of the linguistic expressive means. Sympathy, antipathy, encouragement, reproach, something good or bad, valuable or worthless, fair or unfair judgment, agreement or disagreement all are considered to be the varieties of attitude and denote the speaker's positive or negative attitude towards something. The problem of attitude is viewed from different points of view - semantic, partly grammatical, linguistic, verbal etc.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ԳԻՆԱՎՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԽԱՂԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ  
(Դիմանկարի փորձ)

Գրականություն մուտք գործելու ցանկությունն ունեցող յուրաքանչյուրի համար հույժ կարևոր է նախ՝ թե ի՞նչ է ընդհանրապես նա հասկանում գրականությունն ասելով, այնուհետև՝ ո՞վ իրավունք ունի գրող կոչվելու: Ահա թե ինչ էր այդ մասին գրում Վազգեն Մարգարյանը՝ երջանկահիշատակ Սպարապետը, երբ, որպես երիտասարդ գրող, 1984թ. հրավիրվել էր մասնակցելու երիտասարդ ու սկսնակ գրողների ծաղկածորյան հավաքին. «Եթե փորձ ես արել ծիկրակել գրականության՝ այդ սուրբ տաճարի դուռ-լուսամուտից, դա ինքնին արդեն մեծ համարձակություն է: Հռետտությունն է: Չէ, մտահոգություն, որ էս գլխից ճիշտ հասկանաս բռնածո գործի պատասխանատվությունն ու ծանրությունը»: Եվ հետո՝ «Իմ խորին համոզմամբ՝ գրող կոչվելու իրավունք ունեն բացառապես այն ընտրյալները, ովքեր, ասենք, «Միրհավի» մակարդակով թեկուզ մեկ գործ են գրել»<sup>1</sup>:

Վ.Մարգարյանի պատմվածքներին ծանոթ էի դեռևս 80-ականների մամուլից: Այնուհետև 1986-ին տպագրվեց նրա «Հացի փորձություն» առաջին գիրքը, որը բավականին լավ ընդունվեց ընթերցողների կողմից ու արժևորվեց քննադատական հոդվածներում: Հիմա իմ սեղանին է երջանկահիշատակ Սպարապետի «Խաղը» խորագրով ժողովածուն, որտեղ զետեղված են ինչպես նրա՝ 80-ականներին տպագրված պատմվածքները, «Հացի փորձություն» վիպակը, այնպես էլ մի շարք անտիպներ, հրապարակախոսական հոդվածներ ու ելույթներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս գրողի, զորավարի, քաղաքական-հասարակական գործչի վերաբերյալ ու ամբողջացնում են նրա մարդկային տեսակի կերպարն ու ստեղծագործական դիմանկարը:

Վ.Մարգարյանը «գրական կյանքի տեղատվության ժամանակներից էր» (Հր.Մաթևոսյան) և գրականություն բերեց իր սերնդի կենսագրությունը՝ «ներառելով «մեր ֆանտաստիկ, ֆանտասմագորիկ, մեր բնագանգ

<sup>1</sup> Մարգարյան Վ., Պարտքի զգացում, Գրական թերթ, 1984, 21 հունվարի:

իրականությունից շատ էական եզրեր, եթե կուզեք՝ ներառելով անգամ ինչ-ինչ ծվեններ իր և մեր գլխին գալիքից. այդ վաստակն ահա կայուն դիմապատկերի է բերում երեսնամյա Վազգեն Սարգսյանին»<sup>2</sup>:

Ցանկացած գրող, ինչի և ում մասին էլ որ գրի, «դիմապատկերի է բերում» ինքն իրեն, իր սերնդին, ներկայացնում է գլխավորը՝ երկրի ու գավակի ճակատագրական կապը, հայրենիքի, մարդու ճշմարիտ ու արժանապատիվ ապրելու կերպը»<sup>3</sup>:

Վ.Սարգսյանի «բոլոր գործերում առաքինության և ուժի պաշտամունքն է, խղճի ու խոր կարեկցանքի բացարձակ սկզբունքներն են, որ բնորոշ են բարձր արվեստին, որ միանալով կենսապատումի ու տարեգրության հետ կենսաշերտերին՝ շնչավորում ու ապրեցնում են մարդկանց աշխարհը՝ ծանր հոգսի տակ կքված մի աշխարհ և խիզախ, ընդվզող հերոսներ, որոնց վիճարկված էր կյանքի գնով կերտել Հայրենիքի ամենաողբերգական ու ամենահերոսական էջերից մեկը»<sup>4</sup>:

Վ.Սարգսյանի հերոսները ուժեղ, անկոտրում կամքի տեր, կյանքին սիրահարված, արժանապատվության բարձր զգացումով մարդիկ են, և համարյա բոլորն էլ ունեն միևնույն մտահոգությունը. «Ի՞նչ տվեց և ի՞նչ ստացավ ինքն այս կյանքից»: Այս մտահոգությունն է մտատանջում մահվան մահձում գտնվող Հայկին. «Զարմացած սառնասրտությամբ Հայկն իր հաշիվներն էր փակում կյանքի հետ: Փորձեց ինքն իրեն համոզել, որ ոչինչ, այնքան էլ վատ չի ապրել, ամեն բան էլ կարծես ունեցել է: Տուն-տեղ, կին, երեխաներ, ընկերություն, քեֆ-որախություն... Եղել են, հա, դժգոհ չի: Ուրիշ էլ ինչ էր լինելու: Դե, կյանք է, էլի, մի օր լավ, մի օր վատ, ապրել է էլի՝ տասից վատ, հարյուրից լավ, ինչն էր պակաս»<sup>5</sup> («Վերջը»):

Սակայն Հայկին մի բան էր նեղում, «մի մեծ, մի սարսափելի բաց ծանրանում-քրտնում էր նրա սրտում»: Ցավալի է, որ ինքն ապրել է «Ճիշտ այնպես, ինչպես ապրել են Սաքոն, Երեմը, Արոն, Սերոժը, իր բոլոր ընկերները, Պողոսը, Պետրոսը և իրենց կենսագրություններում հստակ անուններից բացի համարյա էլ ոչ մի տարբերություն չկա» («Վերջը»):

Ոչ միայն մի լավ բան վերցնել կյանքից, այլև մի լավ բան տալ,- սա է Վ.Սարգսյանի հերոսների ապրելու նշանաբանը:

Արդեն իր առաջին ստեղծագործություններում Վ.Սարգսյանը փորձում է ներկայացնել աշխարհընկալման իր սկզբունքները, ուրվագծել

<sup>2</sup> Մաթևոսյան Հր., Վազգենը, Խաղը, Երևան, 2000, էջ 4:

<sup>3</sup> Թամրազյան Հր., Միլիտոնյան Էդ., Խաղը, էջ 5:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Սարգսյան Վ., Խաղը, էջ 10:

պատմվածքի ու վիպակի իր մոդելը: Կողմնորոշման չափանիշը Հր.Մաթևոսյանի արձակն էր՝ անհատի դրաման ներկայացնելու իր խորաթափանցությամբ, հոգևոր ոլորտների նուրբ ներսուզումներով, կենսագրական փաստերը խոր ընդհանրացումների հենք դարձնելու անկրկնելի վարպետությամբ:

Վ.Մարգարյանի համար նույնպես ամենակարևորը Հայրենիք-Մարդ հարաբերություններն են, որոնք նա փորձում է իմաստավորել ոչ թե հորիզոնական փովածքների, այլ ուղղահայաց ներթափանցումների ճանապարհով:

Տասնույթ տարի միասին են ապրել Հայկն ու Մարոն, երեխաներ են ունեցել, բայց Հայկը տարիների ընթացքում կարծես թե չէր զգացել Մարոյի գեղեցկությունն ու հմայքը: Բայց հիմա Հայկը մահվան մահճում էր, և «բազուկներում էլ ուժ չկար, նույնիսկ կին գրկելու ուժ չկար բազուկներում»: Մահվան մահճում Հայկն ապրում է երազների ու վերհուշների հեքիաթային աշխարհում. «Աշուն էր, ոսկե աշուն: Կուժկոտրուկների ձորում հնձվորները դեռ ամառվանից խոտը հնձել, դեզեր էին կապել ու հանձնել էին կարմիր-դեղին արևի տնօրինությանը: Մարոյի մարմնի բույրը խառնվել էր դեզի մեջ ներծծված արևի, քրտինքի, չոր խոտի ու ծաղկի բույրերին ու պտտեցնում էր Հայկի գլուխը:

- Կամաց, վայրենի,- շնչում էր Մարոն՝ նվաղելով Հայկի գրկում, ու նրա ասելու ձևից Հայկն զգում էր, որ կնոջը դուր է գալիս իր ուժը, ավելի էր նեղացնում բազուկների քցանք, և թպրտում էր կինն իր առնական գրկում»<sup>6</sup> («Վերջը»):

Վ.Մարգարյանի ստեղծագործություններն ունեն տարածական ընդգրկումների լայն շրջանակներ և աչքի են ընկնում հեղինակի՝ ժամանակի սրված զգացողությամբ:

Շատ մեծ գյուղ է Որձաքարը՝ նախկին Հազարին, որ «հազար տարուց ավելի դիմացել է, չի հանձնվել ջրհեղեղին ու երկրաշարժին, սովին ու համաճարակին կուլ չի գնացել, հազար տեսակ բարբարոս ցեղերի առաջ գլուխ չի խոնարհել, էլ ի՞նչ ուժ է լինելու, որի առաջ Որձաքարը երերա»<sup>7</sup> («Հացի փորձություն»):

Հազարցիների՝ յաթաղանից փրկված մի բուռ բեկորներին 1918թ. Որձաքար է հասցրել Անդրանիկ գորավարը, և հիմա Հազարին տեսած, Հազարին հիշող ծերունի ուսուցիչ Համբարձում Գալստյանը թղթակիցներին

<sup>6</sup> Մարգարյան Վ., Խաղը, էջ 13:

<sup>7</sup> Մարգարյան Վ., Խաղը, էջ 39:

պատմում է գյուղի անցյալի ու ներկայի մասին: Օտարերկրյա թղթակիցներ են, որոնց համար «Հայաստանը փլված վանք ու ջարդված խաչքար է»:

Հիշողությունները Համբարձում Գալստյանին տանում են դեպի եղեռնի ահասարսուտ օրերը. «Թշնամուն չգերվելու, չհանձնվելու համար կամովին գետը նետվեցին շատերու կարգին նաև Նազարյան Պայծառ, Նազարյան Յուդաբեր, Չաքարյան Սրբուհի, Չաքարյան Մաքրուհի, Չաքարյան Լուսամերիկ... Կամավոր թույն առին՝ Նազարյան Գոհար, Բեհեյան Աննա, Աղամյան Հայկանուշ...»<sup>8</sup> («Հացի փորձություն»):

Գործողությունները տեղի են ունենում անցյալ – ներկա – ապագա հարթության վրա:

Որձաքարում՝ երբեմնի Հազարիում, տոնակատարություն է, ու Մեծ հայրենականում հարյուր ինսունչորս զոհված համագյուղացիների «հուշայան դիմաց Գառնիկ Հունանյանն իրեն մեղավոր է զգում կենդանի մնալու համար, չմեռնելու համար մեղավոր էր զգում: Ու միտք էր անում Գառնիկ Հունանյանը, ահա արդեն քանի տարի է միտք է անում ու չի կարողանում որոշել, արդյոք պատերազմում զոհվելն է հեշտ, թե պատերազմից տուն դառնալը...»<sup>9</sup> («Հացի փորձություն»):

Նախկին հազարցիներից հիմա համարյա թե մարդ չի մնացել... 65 տարի է անցել Մեծ եղեռնից, և այդ ընթացքում Որձաքարը բազմաթիվ փորձությունների է ենթարկվել... Խորհրդային կարգերի հաստատում, կոլեկտիվացում, Հայրենական մեծ պատերազմը, «ձնհալի», լճացման ու վերակառուցման տարիներ, գյուղի քայքայում, արտագաղթ,- այս բոլորը ժամանակի տարբեր հատվածներում Վ.Մարգարյանը ներկայացնում է որպես միևնույն շղթայի օրգանապես միմյանց հետ կապված օղակներ: Ամենասարսափելին այն է, որ մարդն աստիճանաբար խորթանում է բնությունից, խաթարվում են դարերով արմատավորված մարդ – բնություն կապերը, մարդը կտրվում է հողից, բռնում ամերիկաների ճանապարհը: Մարդը հեռանում է մերձավորից, ինքն իրենից. «Չարմանալու բան է,- մտածում է Գառնիկ Հունանյանը,- մեզանից միլիոնավոր կիլոմետրեր հեռու մոլորակների վրա չեղած մարդկություն ենք փնտրում ու մեր կողքի հարազատին, բարեկամին շատ ժամանակ մոռանում ենք: Իր փեսա Արմենակը... Իր փեսա Արմենակն ուզում է ընտանիքն առած կորչի՝ Ամերիկա: Ինքը Վահրամիս ասաց, էդ գործի վրա մի կերպ քար գցի, ասաց ի՞նչ բարոյական իրավունքով: Իսկ ի՞նչ բարոյական իրավունքով են նրանք

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 42:

վեր կենում ու գնում: Ո՞վ է սպասում նրանց Ամերիկայում: Ասում է, որ ամբողջ օրը մատդ մատիդ չխփես ու լավ ուտես-խմես, լավ հագնես-կապես, լավ է...»<sup>10</sup>:

Ժամանակի սրված զգացողությունը որոշում է վիպակների ու պատմվածքների ֆաբուլան ու սյուժեն, լեզվական ատաղձը: Անցյալի դեպքերին Վ.Սարգսյանն անդրադառնում է մեր օրերի հետ ունեցած կապերի տեսանկյունից: Որձաքարցիները հաճախ են հիշում իրենց պապերի փառավոր անցյալը. բայց ցավալի է, որ հիշում են ճոխ սեղանների շուրջ, օտարերկրյա հյուրերին «պատիվ տալու ժամանակ»:

Ժամանակները փոփոխվում են, բայց կա մարդու մի տեսակ, ում վրա չի ազդում ոչ մի մթնոլորտային փոփոխություն: Նրանցից է Գառնիկ անունով այգեպանը, ով երկրի ջիղն է, ով երկրում ապրում է տիրոջ իրավունքով ու գենետիկ կապերով է կապված մայր հողին: Գառնիկ անունով այգեպանը Լևոն աղայի զարմից է, նրա զարմից են գյուղում մնացած հատուկենտ տարեցները, ովքեր Գառնիկ պապի պես են մտածում. «Իմացեք, որ եղեռնից ու ֆաշիզմից սարսափելի բան էլ կա՝ դա մարդու հոգու եղեռնն է, ոգու եղեռնը... Այ, հոգու այդ եղեռնից վախեցեք, էդ կարող է աշխարհ կործանել...»<sup>11</sup> («Հացի փորձություն»):

Վ.Սարգսյանի հերոսները բարոյականության բարձր չափանիշներով ապրող մարդիկ են, բայց նրանց կողքին կան նաև այնպիսիները, ովքեր նպատակին հասնելու համար խտրականություն չեն դնում միջոցների միջև: Դրանք բարձրաստիճան պաշտոնյաների բարեկամներ են, որոնց հրաշալի է բնութագրում Պողոս Սահակյանը. «Լավ ժամանակներում եք ապրում: Շատ եք առաջ գնացել՝ լավ եք արել: Մենակ թե բարձրացել, հողից կտրվել եք, հողին չեք ուզում տիրություն անել»: Կյանքի մասին Պողոս Սահակյանի պատկերացումները մոտավորապես այսպիսին են. «Եկեղեցին, որով աշխարհով մեկ հպարտանում ենք, պայթեցնում էին: Ոտքներս մեր տաք թոնիրների մեջ՝ եկեղեցին պայթեցնողներին անիծում ենք: Ղազարյան Յուլակը մեջքը դեմ տվեց եկեղեցուն, կանգնեց՝ ով տղամարդ է, թող եկեղեցուն մատով դիպչի: Եկեղեցին կանգուն մնաց: Որոշ ժամանակ անց Յուլակին տարան: Երբ մեջքը դեմ էր տալիս եկեղեցուն, Յուլակը գիտեր, որ իրեն կտանեն: Յուլակը աշխարհ եկավ, ճաք տվեց-անցավ, իսկ եկեղեցին կանգուն է: Կարող էր հակառակը լինել»<sup>12</sup> («Խաղը»):

<sup>10</sup> Սարգսյան Վ., Խաղը, էջ 87:

<sup>11</sup> Թամրազյան Հր., Միլիտոնյան Էդ., Խաղը, էջ 87:

<sup>12</sup> Սարգսյան Վ., Խաղը, էջ 88:

Յուրաքանչյուր մարդ վերջիվերջո պատասխան է տալու իր խղճի առաջ, որովհետև ոչինչ անպատիժ չի մնում աշխարհում,- սա է Վ.Սարգսյանի հերոսներից շատերի փիլիսոփայության հիմքը: Ավելին՝ պատասխան է տալու նաև սերունդներին:

Բազմաժանր է Վ.Սարգսյանի գրական ժառանգությունը, և թերթելով այն՝ կրկին համոզվում ես, թե որքան խորն ու ամբողջական է նրա ստեղծագործությունը, նրա գրողական նկարագիրը:

(շարունակելի)

ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ ԴՐԱՄԱՆ  
ԳՐԱԿԱՆ ԶՈՒԳԱՆՆԵՐՆԵՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** դրամա, Պերճ Զեյթունցյան, Լեոնիդ Անդրեև, Էնթոնի Բերջես, Նորման Մեյլեր, Սերգեյ Աղաջանյան, գրական զուգահեռներ, Հիսուս, Հուդա, կերպար, վեպ:

**Ключевые слова и выражения:** драма, Перч Зейтунцяян, Леонид Андреев, Энтони Берджесс, Норман Мейлер, Сергей Агаджанян, литературные параллели, Иисус, Иуда, образ, роман.

**Key words and expressions:** drama, Perch Zeituntsyan, Leonid Andreev, Anthony Burgess, Norman Mailer, Sergey Aghajanyan, Literary Parallels, Jesus, Judas, character, novel.

Մարդկությունը դեռևս վաղնջական շրջաններից հավատացել է հրաշքների ու անդուլորեն փնտրել դրանք՝ փորձելով գերբնական երևույթների միջոցով ստանալ սեփական հարցերի պատասխանը: Հեթանոսական շրջանի պատկերացումներին հետագայում փոխարինել են քրիստոնեական ժամանակաշրջանի «հրաշքները», և այժմ էլ՝ երրորդ հազարամյակում, մարդկությունը նույն զարմանալի եռանդով հավատում է նոր հրաշքների ու ակնկալում նորերը: Ցանկացած «հրաշքի» աղբյուրը, հարկավ, հավատն է առ Աստված և նրա Միածին Որդին:

Հիսուս Քրիստոսի մասին պատմությունների հիմքն ընդունված է համարել այն չորս Ավետարանները, որոնք վաղուց ի վեր հայտնի են քրիստոնյա աշխարհին, սակայն որոնց իրավացիությունը միշտ էլ հարցականի տակ է եղել: Այդ առումով էլ պատահական չէ, որ ի հայտ են եկել նաև ուրիշ Ավետարաններ, որոնք աստվածաշնչյան հայտնի պատմություններին տվել են այլ բովանդակություն, շեղվել են ընդունված ընթացքից ու ստացել «պարականոն» անվանումը: Երկրորդ դարի վերջում հույն քրիստոնյա գրող, աստվածաբան եպիսկոպոս Իրենեոսն այդ Ավետարանները համարում է «քրիստոնեությունն ուրացածների կեղծ գրվածքներ», որոնց նպատակն է «աղավաղել հիմար մարդկանց միտքը»: Սակայն միջնադարյան վանականների ջանքերի շնորհիվ պահպանվեցին այդ գրվածքները, իսկ 19-րդ դարում վերջիններիս հանդեպ հետաքրքրությունը նոր թափ ստացավ:

«Պարականոն» բառն ի սկզբանե ծագել է հունարենից, որ թարգմանաբար նշանակում էր «թաքցնել», բայց հետագայում այն վերածվեց «գրվածքների, որոնք չեն ընդգրկվել Աստվածաշնչի կանոնի մեջ»: Հայտնի են մի քանի պարականոն ավետարաններ. դրանք պատմում են Աստվածաշնչում տեղ չգտած այն դրվագների մասին, որոնք առնչվում են Քրիստոսին ու նրա ընտանիքին: Այսպես, օրինակ, «Մանկության Ավետարան ըստ Թովմասի» պարականոն Ավետարանը պատմում է 5-12 տարեկան Հիսուսի կյանքում կատարված դեպքերի մասին և Աստծո Որդուն ներկայացնում է որպես մի չարաճճի, քմահաճ, անզուսպ ու վրիժառու երեխայի, որն իր հրաշքներ գործելու կարողությունն օգտագործում էր ուսուցիչներից, հարևաններից ու երեխաներից վրեժ լուծելու համար. հաշմում ու կուրացնում էր նրանց... Իսկ «Պետրոսի Ավետարանը» պատմում է Հիսուսի մահվանն ու Հարությանն առնչվող դեպքերի մասին: Ըստ այս Ավետարանի՝ Պիղատոսն արդարացված է, իսկ Հիսուսի Հարությունը վերածվում է ինչ-որ անհասկանալի, գերբնական իրադարձության:

Առաջին հայացքից արտառոց թվացող այս ավետարանները, անտարակույս, չէին կարող չգրավել ժամանակակից գրողների ուշադրությունը, սակայն, ի տարբերություն այլ ժամանակաշրջանների, ներկայումս նրանցից շատերին հուզում է Քրիստոսի մարդկային կողմը, իսկ այս ավետարաններն էլ դիտարկվում են որպես Հուդայի անխուսափելի դավաճանության հավաստիացման աղբյուր: Այսինքն՝ Հուդան իրականում սոսկ կատարում է այն, ինչ ի վերուստ նախատեսված էր, ուստի իր զագրելի արարքով ինչ-որ տեղ նպաստում է Փրկչի առաքելության իրականացմանը:

Մարդկության՝ հավերժ «հրաշքներ» ակնկալելու շարքում առաջինը, անշուշտ, Փրկչի գալուստն է: Ժողովուրդն անհամբեր սպասում է իր իսկ ձեռքով խաչ բարձրացված Աստծո Միածին Որդու գալուստին և լիահույս է, որ այն կնախանշի դարեր շարունակ սպասված լուսավոր ապագայի սկիզբը: Սակայն որքանով է մարդկությունն արժանի նման պարզևի: Այս հարցի պատասխանը փորձում ենք գտնել հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և թարգմանիչ **Պերճ Զեյթունցյանի «Հիսուս Լագովրեցին և նրա երկրորդ աշակերտը»** երկու գործողությամբ դրամայում:

Պիեան սկսվում է մարդկանց հոժ բազմության նկարագրությամբ, մարդիկ, որոնք հավաքվել են Հիսուսի խաչելության վայրում և սպասում են Փրկչի գալուստին: Այդ բազմությունը տարաբնույթ է, որը, սակայն, ունի մի ինքնակամ «խոսնակ». նա չի վախենում բարձրաձայնել այն, ինչ դաժան իրողություն է: Այդ տղամարդու բերանով են հնչում հետևյալ դատապարտող խոսքերը. «Ձեզ եմ հարցնում, էլ ինչպե՛ս գա, էլ ինչու՛ գա, եթե քսան դար նույնն է մնացել, եթե երկու հազար տարում տասը

պատվիրան անգամ չենք կարողացել սովորել... Ամեն երկու հարյուր տարին գոնե մի պատվիրան...»<sup>1</sup> : Հիսուսի՝ երկրորդ գալստյանը չի հավատում անգամ նրա հավերժական թշնամին՝ սատանան, որը Փրկչի խաչելության պահին խորհում է. «Ասում ես կգա՞ս նորից... Չես գա, չէ ... Գաս ի՞նչ անես... Առանց նոր ասելիքի ի՞նչ իմաստ կունենա քո երկրորդ գալուստը: Ինքդ էլ գիտես, որ աշխարհը մագաչափ իսկ չի փոխվի, մարդկային արատները չեն վերանա, մեղքն անդադար նորանոր սահմաններ կնվաճի»<sup>2</sup>: Սակայն, եթե մարդկությունը կորցնի հավատն առ Փրկիչը, ապա կդադարի պայքարելուց, որը գոյատևման հիմքն է: Հետևաբար դրամայի ավարտին նույն տղամարդու բերանով հեղինակն արտաբերում է ամբողջ մարդկության հավատի բանաձևը: Ի տես լույս աշխարհ եկող նորածին երեխայի՝ նա խորհում է. «Գուցե հենց այս նորածին մանուկի համար նա գա...», ու ծնկաչոք արտասանում է տերունական աղոթքը: Այսինքն՝ դրամատուրգի տեսակետից մաքրամաքուր նորածինները միայն կարող են հասու լինել Հիսուսի պատվիրաններին և իրենց անմեղությամբ վերստին երկիր կանչել Բարձրյալի Որդուն: Երեխաներն են մարդկության փրկության հույսը: Հետևաբար հայ դրամատուրգի համար մարդկության փրկության ճամփան անմեղության մեջ է:

Պերճ Զեյթունցյանի դրամայի գաղափարական կարևոր առանձնահատկությունը, անշուշտ, Հուդայի կերպարի կերտումն է: Հիսուսի երկրորդ աշակերտը նույն ինքը՝ Հուդա Իսկարիոտացին է, որն իր իսկ խոստովանմամբ հայտնվել է Քրիստոսի կողքին, որպեսզի վերջինս թողություն տա նրա մեղքին: Իսկ Հուդայի մեղքը ծանրագույններից մեկն է: Ինքը՝ Հուդան, մարմնավաճառուհուն պատում է սեփական ծագման պատմությունն ու հայտարարում, որ «գաղտնիքը պետք է քեզ հետ իջնի գերեզման, այն իր ծննդյան պահից արդեն պետք է մեռած լինի»<sup>3</sup>: Իսկ այդ գաղտնիքը Հուդային նմանեցնում է հունական դիցաբանությունից հայտնի Էդիպ արքային. Հուդան ևս անգիտակցաբար սպանել էր հորն ու ամուսնացել սեփական մոր հետ: Այդ ամենը կատարվել էր Պիղատոսի թեթև ձեռքով, որի մոտ ծառայել էր Հուդան, սակայն բնավ ոչ գիտակցված իմացությամբ: Հետևաբար Պիղատոսն ակամա մեղավոր է նաև Հուդայի ողբերգության համար. ճակատագրի հեզնանքով նույն Պիղատոսը դարձյալ ակամա մահվան է դատապարտում և Փրկչին: Իսկ Հուդայի հանդեպ նրա

<sup>1</sup> Զեյթունցյան Պերճ, «Հիսուս Նագովրեցին և նրա երկրորդ աշակերտը», Երևան, «Հայաստան» հրատ., 2001, էջ 8:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 12:

գործած անգիտակից մեղքը ծնում է չգիտակցված հանցագործի: Այդ սարսափելի գաղտնիքի բացահայտումն ստիպում է Հուդային փախչել ու հալածական կյանք վարել, իսկ թողության հույսը նրան բերում է Հիսուսի մոտ: Հուդան վերածվում է դառնացած հոգով հավերժական մի փախստականի, որը կյանքում գոյատևելու համար որդեգրում է թվացյալ ամբարտավանության վարքագիծը: Նա ներքուստ հավերժաբար հռչոտում է ինքն իրեն և շրջապատին ազդարարում. «Ինձ դուր չի գալիս, երբ ինձ շատ են սիրում: Ինձ պետք է քիչ սիրել, կամ բնավ չսիրել, նույնիսկ ատել, որպեսզի չթուլանամ, չկորցնեմ զգոնությունս»<sup>4</sup>: Նա իր մեղսալից ծննդյան ականա գոհն է և Փրկչին էլ դավաճանում է ոչ թե ինչ-որ ակնկալիքներով, այլ պարզապես Ուսուցչի պատվիրանները խախտելու անմիտ մղումով: Ասել է թե՛ համաձայն պարականոն Ավետարանի սկզբունքների՝ Հուդան իրականացնում է անխուսափելին: Այս տեսակետից ուշագրավ է Պերճ Զեյթունցյանի դրամայի հերոսի և ռուս նշանավոր գրող Լեոնիդ Անդրեևի կերտած Հուդայի միջև եղած առնչակցությունը:

**Լեոնիդ Անդրեևը** ռուս գրականության «արծաթյա ժամանակաշրջանի» ներկայացուցիչ է: Ժամանակագրական առումով այդ դարաշրջանը, որն իր անվանումն ստացել է ռուս վտարանդիների շնորհիվ, համապատասխանում է 20-րդ դարավերջին և համընկնում է մոդեռնիզմի հետ: Լ. Անդրեևը նաև ռուսական էքսպրեսիոնիզմի հիմնադիրն է: Նա իր «**Հուդա Իսկարիովտացին**» վիպակը գրել է 1906-ին, երբ կնոջ՝ Ալեքսանդրա Միխայլովնա Անդրեևնայի մահից հետո մեկնում է Գապրի, որտեղ էլ հանդիպում է Մաքսիմ Գորկուն ու վերջինիս հայտնում դավաճանության վերաբերյալ երկ գրելու իր մտահղացման մասին:

Վիպակը լույս է տեսնում 1907-ին և տեղիք տալիս իրարամերժ կարծիքների: Հետագայում Մ. Գորկին բարձր է գնահատում այն ու նկատում, որ այդ երկը «քչերը կհասկանան, և այն մեծ աղմուկ կբարձրացնի»<sup>5</sup>: Ալեքսանդր Բլոկը ևս մեծապես արժևորում է Լ. Անդրեևի վիպակը՝ այն անվանելով «հեղինակի հոգին, ուր առկա է կենդանի վերք»<sup>6</sup>: Ա. Ս. Գլինկան, սակայն, քննադատում է հիշյալ վիպակը՝ նկատելով. «Այստեղ Հարության հրաշքի սպասումների կողքին դիակի հոտ է զգացվում»<sup>7</sup>:

Լեոնիդ Անդրեևը «Հուդա Իսկարիովտացին» վիպակը գրելուց առաջ նախապես ընթերցել է Ռենանի և Շտրաուսի «Հիսուսի կյանքը»: Այս

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>5</sup> Архив А. М. Горького, т. IX, М., Гослитиздат, 1966, с. 23.

<sup>6</sup> “Живая жизнь”, 1907, N 1, с. 26-27.

<sup>7</sup> Նույն տեղում:

ստեղծագործության առանձնահատկությունը «դավաճանության հոգեբանության» արտացոլումն է: Ինչպես և Պ. Ջեյթունցյանի Հուդան, այստեղ ևս դավաճանության դրդապատճառը խոցված սերն է: Սակայն, եթե առաջին դեպքում Հուդան խոցված է առաջին հերթին սեփական ծնողներից, որոնք լքել են նրան իր իսկ ծննդյան պահից և պատճառ դարձել հետագա ողբերգական իրադարձությունների ծավալման համար, ապա անդրեյան Հուդան այդ քայլին դիմում է՝ ապացուցելու համար Քրիստոսի ուսմունքի հզորությունը, նրա աշակերտների վախկոտությունն ու Փրկչին հետևող ոգեշնչված ամբոխի չնչինությունը: Հուդային մատնության է մղում Հովհաննեսի հանդեպ Հիսուսի սերը: Այս քայլով մատնիչը նաև Հիսուսի աստվածային լինելու ապացույցն է փնտրում: Ըստ Հուդայի՝ եթե ժողովուրդն ականատես լինի Քրիստոսի տանջանքներին, ապա կըմբուտանա և կփրկի նրան ու կգնա նրա հետևից, իսկ եթե ոչ, ապա Հիսուսն իրեն զոհում է հանուն վեհերոտ արարածների, որոնք պատրաստ են ցանկացած պահի լքելու նրան: Հուդայական այս յուրօրինակ փիլիսոփայությունն իրեն չի արդարացնում, և մատնիչի հոգում սաստկանում է անպատասխան սիրուց ծնված վրեժխնդրության ծարավը: Նա բռնում է դավաճանության ուղին, սակայն քիչ անց ապրում է գոջման դաժան պահեր: Այս երկվությունն էլ ստիպում է Հուդային ինքնասպան լինել, որովհետև նա անկարող է ապրել առանց այն սիրո, որ տաժում է դեպի Փրկիչը: Ըստ Անդրեյի՝ ինքնասպանությունը բանական էլք է, քանի որ Հուդան փորձում է հավասարավել Հիսուսին, իսկ Քրիստոսն Աստծո զավակն է, և ոչ մի մահկանացու չի կարող կանգնել նրա հետ միևնույն նժարի վրա: Ինքնասպանության համար Հուդան ընտրում է այն ծառը, որը բարձր էր և նայում էր ամբողջ Երուսաղեմին: Այսինքն՝ դավաճանը կախվում է ի տես ամենքի, որպեսզի նրանց հիշեցնի մի պարզ փաստ. ողջ մնացածներն ավելի վատն են, քան Հուդան, որովհետև նա իր կյանքի զոհողությամբ փորձում է հասնել Ուսուցչին, իսկ ապրողները լքում են Փրկչին, խաչում ու մոռանում, ոտնահարում նրա պատգամները և ուրանում նրանից ստացած հոգեկան անաղարտությունը:

Ինքնասպանությունից առաջ Հուդան դիմում է բացակա Փրկչին. «Դու լսում ես, Հիսուս: Հիմա կհավատա՞ս ինձ: Ես քեզ մոտ եմ գալիս: Ինձ քնքշությամբ ընդունիր, ես հոգնել եմ: Ես շատ եմ հոգնել: Հետո մենք կգրկենք միմյանց, ինչպես եղբայրներ, ու կվերադառնանք երկիր: Լավ՞վ»<sup>8</sup>: Ի

<sup>8</sup> Андреев Леонид, "Иуда Искариот", Собрание сочинений, т. второй, Москва, "Худ. лит.", 1990, с. 263.

տարբերություն Պ. Ջեյթունցյանի կերտած կերպարի՝ անդրեկյան Հուդան չի պատմում սեփական կյանքի պատմությունը, նա իսկապես հավատարիմ է Փրկչին ու լիովին հասկանում է նրան, իսկ մյուսները, այդ թվում նաև առաքյալները, անմասն են այդ ամենից:

Հայ դրամատուրգի ստեղծած Հուդան ինքնահաստատման մեծագույն խնդիր ունի և այդ պատճառով սկզբում մարմնավաճառուի հետ արատավոր կապի մեջ է մտնում, որպեսզի խախտի Հիսուսի պատգամն ու նման արարքի հավաստիացումն ընկալի իբրև սեփական հաղթանակ: Անգամ դավաճանության քայլին նա դիմում է՝ հենց նույն ինքնահաստատման մղումից դրդված: Քահանայապետ Կայափային ուղղված խոսքերում ընթերցողը տեսնում է իսկական Հուդային. «Իսկ ես գիտեմ մարդ մնալու ճանապարհը: Ես գիտեմ մեղք գործելու արգելված սահմանն անցնելու հնարը: Ես ծառից պոկելու եմ պտուղը և ոչ ոք ի տարբերություն թուլամորթ Ադամի, ինձ չի դրդել դրան: Այլ՝ ես, ե՛ս, միայն ի՛մ կամքով, միայն ի՛մ խելքով: Ես ստուգում եմ ինձ, Կայափա: Պիտի վերջ ի վերջո իմանա՞մ, թե ով եմ ես»<sup>9</sup>:

Այստեղ տեղին է մեկ այլ հեղինակի՝ անգլիացի գրող, գրականագետ, կոմպոզիտոր, թարգմանիչ և լրագրող **Էնթոնի Բերջեզի** (Ջոն Էնթոնի Բերջեզ Ուիլսոն)՝ 1979-ին լույս տեսած «Մարդը Նազարեթից» վեպի հիշատակումը: Այս գրողը իտալացի ռեժիսոր Ֆրանկո Ջեֆիրելլիի պատվերով 1977-ին գրում է համանուն ֆիլմի սցենարը, սակայն երկու տարի անց հեղինակն այն վերածում է ընդարձակ երկի: Է. Բերջեզի գրական գործունեության վրա մեծ ազդեցություն են ունեցել իռլանդացի նշանավոր գրող Ջեյմս Ջոյսի երկերն ու սեփական կաթոլիկական հայացքները:

Անգլիացի գրողի տեսանկյունից Հուդան դավաճանությունը կատարում է սկամա. նա փորձում է փրկել Հիսուսին, որն անընդհատ իր աշակերտներին հիշեցնում էր սեփական մոտալուտ մահվան մասին: Հուդան այդ առիթով իր մտահոգություններն է կիսում երբեմնի համադասարանցու՝ այժմ քահանա Ջառայի հետ, որն առանց վարանելու օգտագործում է ընկերոջ միամտությունն ու ստիպում նրան հայտնել Հիսուսի գաղտնի բնակավայրի տեղը: Նա մատնիչին հավաստիացնում է, որ Փրկչին պարզապես տեղափոխելու են մի ապահով վայր, ուր նա այլևս չի խորհի մահվան մասին: Ահա թե ինչպես է Հիսուսի ձերբակալման պահին Հուդային բնութագրում այդ իրական դավաճանը.

---

<sup>9</sup> Ջեյթունցյան Պերճ, Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը՝ էջ 24:

«- Ինչպես լսել եմ, Հիսուս՝ ս Նազովրեցի, դու մաքրություն ես ուսուցանել: Հանձին իմ նախկին համադասարանցու՝ դու ընդունակ աշակերտ ես գտել. նա միշտ պատրաստ է սովորել: Մի ժամանակ վարժ ուսանեց հունարեն, այժմ վարժ ուսանեց միամտություն: Միամտությունը մի անձի, ով ուզում էր տեսնել աշխարհի փրկությունը:

Նա կտրուկ դիմեց Հուդային.

- Դե՛, բարեկամ, փախի՛ր այստեղից: Վազի՛ր»<sup>10</sup>:

Երբ Հուդան գիտակցում է, որ ակամա դարձել է խաբեության զոհ և սեփական ձեռքով մահվան դատապարտել իր սիրելի Ուսուցչին, նա ընտրում է ինքնասպանության ուղին, որպեսզի ազատվի վաղեմի ընկերոջ ստորագույն արարքի շնորհիվ իրեն անարդարացիորեն բաժին ընկած դավաճանի խարանից:

Ի տարբերություն այս երկու հեղինակների կերտած Հուդայի՝ Լ. Անդրենի վիպակում նա ունի անգամ արտաքին մանրակրկիտ նկարագրություն, որը կարծես ընթերցողին նախապատրաստում է գալիք գործողություններին և առավելագույնս ընդգծում Հիսուսի ու Հուդայի բևեռային հակադրությունը: Հուդայի գլուխը, թվում է, բաժանված է չորս մասի, և դեմքն անգամ պառակտված է. մի մասը սև է, սուր, շարժուն հայացքով, մյուսը՝ անթափանց ու հարթ: Հուդան տկար է և հիվանդոտ է ձևանում, ու ձայնն անգամ մեկ առնական է, մեկ՝ ճղճղան: Նա մարդկանց մեջ տարօրինակ ցանկություն է առաջացնում. նրան «ցանկանում ես դուրս քաշել ականջից, ինչպես թարախակալած կոպիտ բեկոր»<sup>11</sup>, որն անընդհատ խանգարում է: Ուշագրավ է նաև Պետրոսի՝ Հուդային տված նկարագիրը, որը կարծես լիովին բնութագրում է նրա թե՛ արտաքին և թե՛ ներքին ծայրահեղ հակասական ու երկդիմի կերպարը. «Իսկ դու, Հուդա՛, նման ես ութոտնուկի, միայն թե մեկ հատվածով»<sup>12</sup>: Հուդան մատնում է Հիսուսին, իսկ վերադարձին նրա հանդեպ ցուցաբերում անբավ հոգացողություն, գթառատ մոր նման խանդաղատանքով պարուրում նրան: Ուսուցչի ձերբակալությունից հետո նա պատուհանից դիտում է Փրկչի տանջանքները, և թվում է՝ ուրախանում է՝ նրա տառապանքներին ականատես լինելով, սակայն քիչ անց տանջվում է հենց այդ տեսարանի թողած կեղեքող տպավորությունից. գնում է քահանայապետի մոտ՝

<sup>10</sup> Берджес Энтони, "Человек из Назарета", перевод В. Бублик, в серии "Классика", М., 2000.

<sup>11</sup> Андреев Леонид, "Иуда Искариот", с. 212.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 213:

հավաստելու Հիսուսի անմեղությունը, և վերջինիս դեմքին է նետում դավաճանության համար իր ստացած վարձավճարը:

Լ. Անդրենի վիպակի ամբողջ գաղափարախոսությունն ամփոփված է դավաճանության տեսարանում, երբ Հուդան համբուրելով մատնում է Ուսուցչին: Ի պատասխան Հիսուսի այն հարցին, թե համբուրո՞վ է նա մատնում իրեն, Հուդան արձագանքում է. «Այո՛: Մի՞րո համբուրով դավաճանեցի՞ք քեզ: Մի՞րո համբուրով ենք քեզ մատնում անարգանքի, խոշտանգումների, մահվան: Մի՞րո ձայնով կանչում ենք դահիճներին իրենց մութ որջերից ու խաչ ենք դնում և մութ երկրի վրա սիրով խաչ ենք հանում խաչված սերը»<sup>13</sup>: Հետևաբար, Անդրենի տեսակետի համաձայն, սիրո պատգամներ սովող Փրկչին ուրանում են անպատասխան սիրուց ծնված խանդի պատճառով: Իսկ Ջեյթունցյանի ստեղծած Հուդան հրճվանք է ապրում Հիսուսի տանջանքներից, քանի որ վերջապես կարողանում է լիարժեք ըմբռնել նրա հանդեպ իր տածած սերը. «Նա այնքան հարագատ էր ինձ իր տառապանքի մեջ... Այնքան համակրելի էր՝ ինձ ու քեզ նմանվելով... Ես նորից սիրեցի նրան: Որովհետև նա վերջապես ինձ թույլ տվեց իրեն խղճալ... Ես նրան խլեցի Աստծուց և մեզ վերադարձրի... Նրա մեջ այլևս ոչ մի առեղծված չկար... Ես կարոտ տեսա նրա աչքերում... Ինձ էր կարոտել, իմ նմաններին... Իր մորն ու եղբայրներին էր կարոտել... Նա իմ եղբայրն էր այդ պահին...»<sup>14</sup>:

Հուդայի դավաճանության մեկնաբանությանն ենք հանդիպում նաև մեկ այլ հայ գրողի՝ Մերգեյ Աղաջանյանի «Ես Հուդան եմ» վիպակում, որը լույս է տեսել 2002-ին: Այստեղ Հուդան այդ ոճիրն իրականացնում է, որպեսզի հավաստիանա Քրիստոսի աստվածային էության իսկության մեջ: Ահա թե ինչպես է դավաճանը բացատրում իր գարշելի արարքը. «Իմ ուզածը նրա մահը չէր, - իր անկեղծ ցավը խոստովանեց Հուդան: - Իսկ ուրացա, որովհետև չէի հավատում նրա կիսատ-պռատ, երկիմաստ խոսքերին, որովհետև ճանաչել էի ուզում նրան»<sup>15</sup>: Հոգեբանորեն պատճառաբանված է նաև ինքնասպանության քայլը: Հիսուսի հարությունից հետո Հուդան հանդիպում է նրան ու խնդրում. «Թե դու Աստված ես կամ Աստծո որդի, աղաչում եմ քեզ, վերադարձրո՛ւ ինձ իմ մեղքը, ասա, որ ես իմ կամքն եմ կայացրել, կյանքն եմ ապրել, թեկուզ մեղսաշատ»<sup>16</sup>: Իսկ Հիսուսի մերժումը թողնում է միայն մեկ ընտրություն, և Հուդան քայլերն ուղղում է դեպի Ենովմի ձորը՝ «այնտեղ ուր

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 247:

<sup>14</sup> Ջեյթունցյան Պերճ, «Հիսուս Նագովրեցին և նրա երկրորդ աշակերտը», էջ 33:

<sup>15</sup> Աղաջանյան Մերգեյ, «Ես Հուդան եմ», Երևան, «Զանգակ» հրատ., 2002, էջ 73:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 90:

նախնի հրեաներն առաջնեկ որդիներին էին մատաղում իրենց ամենագոր Աստծուն»<sup>17</sup>: Այսինքն՝ իր այս ընտրությամբ արդեն Հուդան ընդունում է Հիսուսի ամենագոր լինելու փաստը:

Հուդայի և նրա կատարած դավաճանության թեման արծարածվել է նաև ամերիկացի վիպասան **Նորման Քինգսլի Մեյլերի** «Ավետարան ըստ Որդու» վեպում, ուր Հուդան Հիսուսի ամենասիրելի ու վստահելի աշակերտն է, որից նա ինչ-որ չարագուշակ զգացումներ է ունենում, բայց և վստահում է իր նվիրական զգացումներն ու անսում նրա խորհուրդներին: Ահա թե ինչպես է Քրիստոսի հետ գրույցի ժամանակ Հուդան բացատրում սեփական վերաբերմունքը Ուսուցչի հանդեպ. «Ճշմարտությունը, սիրելի Իեշուա՛, այն է, որ ես չեմ հավատում, թե դու մեզ դեպի փրկություն կտանես: Սակայն քո ասածների ընթացքում աղքատները համարձակվում են իրենց հարուստներին հավասար զգալ: Սա ինձ երջանկացնում է»<sup>18</sup>: Ասել է թե՛ այստեղ ևս դավաճանությունը բխում է Հիսուսի գաղափարների հետ անհամաձայնությունից:

Վերոհիշյալ գրողները, անշուշտ, Հուդայի կերպարին առընթեր և հենց այդ կերպարի միջոցով կերտել են նաև Հիսուսի գրական պատկերը: Պերճ Ջեյթունցյանի Հիսուսը աստվածաշնչյան կերպարն է, որն անընդհատ քարոզում է և սպասում մարգարեների գուշակությունների իրականացմանը: Նա բազմիցս նայում է Հուդային ու խորհրդավոր ժպիտով ակնարկում ժամանակի զալստյան մասին: Թատերագիրն ընդգծում է, որ նույնիսկ երկրային կյանքի իր վերջին ընթրիքի ժամանակ նա «/Երկար նայում է և ժպտում Հուդային, կամաց/- Ահա և ժամանակը եկավ... Հուդա... հիմա ինչ-որ անելու ես, իսկույն արա »<sup>19</sup>: Իսկ հեռացող Հուդայի հետևից հոգացողությամբ ձայն է տալիս. «Կռչիկներդ, տղաս... Անձրև է դրսում »<sup>20</sup>: Այսպես, դրամատուրգն այս փոքրիկ դրվագում բացահայտում է Հիսուսի խորապես մարդկային հոգին. նա գիտեր իր ճակատագիրը, սակայն անհանգիստ էր մատնիչի համար: Երկինքն էլ արտասվում է, որովհետև մարդկային ստորության դրսևորումն անգամ բնությանն է ցնցում:

Լեոնիդ Անդրեևի Հիսուսը պարուրված է կյանքով. նրա կողքին մշտապես ներկա են առաքյալները, որոնք անընդհատ աղմկում են ու զանազան զրույցներով շրջապատում Ուսուցչին: Վերջինս, սակայն,

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>18</sup> Mailer Norman, 'The Gospel According to the Son', Ballantine Books, New York, 1997, p 138

<sup>19</sup> **Ջեյթունցյան Պերճ**, «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը», էջ 30:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 30:

լռակյաց է. թվում է՝ կյանքին անհաղորդ է ու հավերժ մտամուլոր: Անդրենյան Քրիստոսը զարմանալիորեն նուրբ է ու հնազանդ:

Ի հակադրություն այս հեղինակների՝ անգլիացի և ամերիկացի վիպասանները կերտել են Հիսուսի խորապես մարդկային կերպարը՝ ընդգծելով նրա նաև հասարակ հրեուհու՝ Մարիամի որդին լինելու փաստը:

Պերճ Զեյթունցյանի «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը» դրաման առանձնահատուկ է նաև երկու յուրօրինակ դրվագների նկարագրությամբ՝ Հիսուսի և Հուդայի հանդիպումը սատանայի հետ:

Հիսուսը սատանային հանդիպում է անապատում, թեպետ նախքան այդ նա, կերպարանափոխված, որպես հաճելի երիտասարդ, ներկա է Քրիստոսի քարոզներից մեկի ժամանակ և հարցեր է ուղղում վերջինիս ու բարձրաձայնում ամբողջ մարդկության թաքուն երազանքը. «Դու ոչ թե դրախտի ճամփան մատնացույց արա, այլ երկրի վրա ապրելու հնարը հուշիր: Կարո՞ղ ես»<sup>21</sup>: Ապա հորդորում է նրան մարդուն ազատ ընտրության հնարավորություն տալ, իսկ այդ ամենին ի պատասխան՝ Վարդապետը պատասխանում է Աստվածաշնչից մեզ քաջածանոթ բառերով: Այսինքն՝ կերպարանափոխված սատանան իրականացնում է առաջին փորձությունը, սակայն, ի տարբերություն բուն Աստվածաշնչյան իրողությունը, կատարվում է Հիսուսի արդեն հասուն տարիքում: Երկրորդ հանդիպումը տեղի է ունենում արդեն անապատում, ուր սատանան հավաստիացնում է Հիսուսին, որ իրենք հավերժ միասին են, քանի որ չարն ու բարին անբաժանելի են. «Ոչ, ես ու դու ապրելու ենք նրանց մեջ: Եվ այն էլ ոչ թե առանձին-առանձին, այլ նույն մարդու մեջ՝ միասին»<sup>22</sup>: Սատանան կատարում է նաև բավական արտառոց խոստովանություն. «Գիտե՞ս ինչու եմ սիրում քեզ... Որովհետև միակն ես, որի վրա իշխանություն չունեմ...»<sup>23</sup>: Ապա դրամատորգն ավարտին է հասցնում չարի մասին իր սեփական պատկերացումներն ու սատանայի բերանով հայտարարում. «Հանգիստ եղիր, ինձ քո հայրը չի ստեղծել, ինձ մարդիկ են ստեղծել՝ ըստ իրենց պատկերի և նմանության: Ստեղծել են, որ ենթարկվեն ինձ, որովհետև, ի տարբերություն քեզ, հեշտ է ինձ ենթարկվելը»<sup>24</sup>: Ասել է թե՛ մարդուն բնորոշ է չարիքը, և հենց այդ պատճառով էլ նրանք խաչ են բարձրացնում համամարդկային սիրո պատգամաբերին՝ Հիսուսին:

<sup>21</sup> Զեյթունցյան Պերճ, «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը», էջ 16:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 21:

Սատանայի և Հիսուսի հանդիպման բավական մանրակրկիտ նկարագրությանն ենք հանդիպում նաև Նորման Մեյլերի վեպում: Այստեղ ընթերցողի աչքի առջև կանգնած է երիտասարդ Հիսուսը, որն իր առաքելությունն սկսելուց առաջ Երկնային հոր հրամանով պետք է անցնէր գայթակղության փորձության միջով: Ինչպես և հայ դրամատուրգի մոտ, ամերիկացի վիպասանը ևս սատանային նկարագրում է որպես բավական գեղեցիկ արարած: Պասից ուժասպառ Քրիստոսի աչքի առջև հառնում է մի բավական գեղեցիկ այցելու՝ վզից կախված ոսկյա նախշով և թավշյա խալաթով: Հեղինակը նրա արտաքինը համեմատում է արքայազնի հետ, իսկ Հիսուսի գլխում փայլատակում է հետևյալ միտքը. «Սատանան աստծո երբևէ ստեղծած ամենագեղեցիկ արարածն է»<sup>25</sup>: Ապա հետևում է սատանայի առավել խոսուն նկարագիրը. «Նրա աչքերը սև մարմար էին, բայց ներսում լույս կար»<sup>26</sup>: Գայթակղությունն անասելի գեղեցիկ է, իսկ սև աչքերը մարդկությանը դեպի կործանում տանող մթին ճանապարհն են, նրանցում առկայծող լույսն էլ այն առեղծվածայինն է, որ հրապուրում ու տանում է ավերումի աղետաբեր ուղիով:

Պերճ Զեյթունցյանի դրամայում բավական ուշագրավ է սատանայի և Հուդայի հանդիպումը: Դա տեղի է ունենում Հիսուսի մատնությունից հետո, երբ սատանան ինքնակամ այցելում է Հուդային: Նրա ուշացած այցելության հարցին ի պատասխան՝ Հուդան ազդարարում է. «Հուդաները շատ են, իսկ դու մի հոգի ես: Երևի չես հասցնում»<sup>27</sup>: Սակայն անգամ դժոխքի տիրակալն է ընդունում Աստծո Միածին Որդու հաղթանակն ու մատնիչին պատասխանում է. «Բայց Հիսուսն ինձ համար եզակի է, ուրեմն՝ եզակի ես նաև դու »<sup>28</sup>: Այսինքն՝ ոչ թե մատնիչներն են եզակի, այլ դավաճանության միջոցով անասանան սիրո հավաստումն է արտառոց: Իսկ Հուդան խայթվում է նման համեմատությունից, քանի որ փորձում է տարփողել իր ինքնուրույնությունը: Սատանան նրան այցելում է որպես վերջինիս խղճի դատավոր, և թեպետ ինքն էլ, լինելով չարիքի մարմնացում, դատապարտում է նրա ճղճիմ դավաճանությունը, քանի որ նման քայլն անընդունելի է անգամ չարիքներից մեծագույնի համար: Սատանայի բառերում հնչում է և՛ մեղադրանք, և՛ մարդկային բնույթի տկարության հավաստումը: Նա հայտարարում է. «Զզվում եմ մարդ արարածից... Ո՞նց եք դիմանում այս տանջանքներին... Ո՞նց չեք խելագարվում... Եվ դուք իմ

<sup>25</sup> Mailer Norman, 'The Gospel According to the Son', p. 45

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>27</sup> Զեյթունցյան Պերճ, 'Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը', էջ 41:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 41:

հպատակներն ըն եք, այսքան ողորմելի՞, այսքան թու՞յլ»<sup>29</sup> : Հենց մարդկային թուլությունն է, որ ստիպում է նրանց խաչ բարձրացնել իրենց Փրկչին, քանի որ նրա մեծագույն պատգամն ամենադժվար իրականանալին է: Քրիստոսն ինքն էլ հայտարարում է. «Ես սիրո համար եմ եկել աշխարհ: Պիտի մարդկանց սիրել սովորեցնեմ: Մա է իմ ամենամեծ պատվիրանը»<sup>30</sup>: Իսկ մարդիկ այդ մեծագույն պարգևն ընդունում են մերկ սրերով ու մահվան դատապարտում սիրո սուրհանդակին:

Հատկանշական է, որ Հուդայի՝ իբրև դավաճանի բնութագիրը տալիս է հենց ինքը՝ Սատանան. «Խաղալիք, Հուդա... խաղալիք... Իսկ քեզ թվացել էր, թե գերմարդ ես դու... Ճիշտ էր քո Տերը, դու այլևս անելիք չունես...»<sup>31</sup>: Ուստի միակ ճանապարհը մնում է ֆիզիկական ոչնչացումը, որը և Հուդան իրականացնում է:

Սատանայի բերանով Պ. Ջեյթունցյանը նաև տալիս է մարդկության գոյության գաղտնիքի բանաձևը. «Վե՛րջ, Հուդա՛, վե՛րջ... Կա Աստված. կա Հուդա և կա Սատանա »<sup>32</sup>: Նա նախանձախնդիր է այդ դասավորության խնդրում և բարկանում է, երբ Հուդան փորձում է մարդ արարածին տեղափոխել. այսինքն՝ աշխարհի արարումից ի վեր կան և ընդմիջտ կմնան բարին ու չարը, և նրանց մեջտեղում՝ ալիքներին հանձնված, խաղալիքի վերածված մարդ արարածը:

Ինքնասպանության ճանապարհին Հուդան զրուցում է ինքն իր հետ. իր չստացված կյանքի հանրագումարը տալով՝ կեղեքում է սեփական հոգին, մտորում այլ ճակատագիր ունենալու հնարավորության մասին, ապա հայտարարում, որ պատմության կերտողները նախապես որոշել էին ամեն ինչ, իսկ «դու մի տաշեղ էիր՝ հոսանքին հանձնված»<sup>33</sup>:

Բավական պերճախոս և խորը հոգեբանական տեսարան է Պ. Ջեյթունցյանի դրաման ավարտող դրվագը. խաչ բարձրացված Հիսուսի մոտ իրենց մտքերն են հայտնում նրան շրջապատող և նրա պատվիրաններին ականջալուր դարձած գործող անձինք: Դրանցից առաջինը սատանան է, որը հևիհև հասնում է խաչելության մոտ և, ի տարբերություն մեյլերյան սատանայի, որը Հիսուսին Աստծուն ուրանալու և իրեն ծառայելու դիմաց փրկություն էր առաջարկում, թախանձանքով դիմում է Փրկչին. «Իսկ ես չգիտեմ Հուդա՞ն էր գործիք, թե ե՞ս էի տիեզերքի անսահմանության մեջ

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 52:

թավալվող մի խաղալիք... Ասա, Յեշուա, պատասխան տուր ինձ, քանի կենդանի ես դեռ... Աղերսում եմ քեզ... Տեսնում ես, ինչպես եմ աղաչում, առաջին անգամ իմ գոյության ընթացքում... Չե՞ որ մինչև օրս չզգիտեի, թե ինչպես են թախանձում... Չզգիտեի, չզգիտեի, իսկ հիմա զգույժ, Յեշուա, զգույժ, հիմա իմացա... Դուք ինձ սովորեցրիք, դու և քո Հայրը... Դրա համար էլ երբեք չեմ ների ձեզ»<sup>34</sup>: Իսկ այն, որ սատանան մարդկության հավերժական ուղեկիցն է, հավաստվում է մի պարզ, բայց խորիմաստ դրվագով. սատանան տեսնում է կախված Հուդայի ոտնամանները, հանում է նրա ոտքերից ու ինքն է հագնում:

Հանուն անարժան մարդկության խաչելության վրա իր վերջին վայրկյաններն ապրող Հիսուսին նախատում է անգամ ավագակ Բարաբան, որի կյանքը ժողովուրդն իր փրկության գոհաստեղանին դրված Քրիստոսի կյանքից առավել թանկ էր գնահատել: Նա նայում է անլուր տառապանքներ կրող Հիսուսին ու ասում. «Լսի՛ր, դու բան հասկացա՞ր այս աշխարհից... Որ չհասկացար, էլ ինչու՞ ես ուզում աշխարհը փոխել... Բա արժե՞ն սրանք, եթե ավագակին նախընտրում են սրբից... Սրանք ի՞նչ մարդ են... Ճիշտ է, ես երկնքից մինչև գետին շնորհակալ եմ նրանց, բայց մեկ է, մարդ չեն...»<sup>35</sup>:

«Հիսուս Նագովրեցին և նրա երկրորդ աշակերտը» դրամայի հոգեցունց պատկերը, անշուշտ, խաչելության վրա իր հոգին ավանդող ուշակորույս Հիսուսի շուրթերից պոկված մեկ հատիկ բառն է՝ «Մա՛յր», որը լիարժեք բացահայտում է Քրիստոսի մարդկային կողմը. խաչի վրա իր հոգին ավանդում էր ոչ թե Աստծո Որդին, այլ հասարակ կնոջ հասարակ զավակը: Այս տեսարանն առավել հուզիչ ու ազդեցիկ է դառնում Մարիամի արցունքախառն դեմքի փայլատակող երջանկության պատկերումով. մայրը անսահման երջանիկ էր, որ վերագտել էր որդուն՝ իր զավակին, այլ ոչ Աստծո ընտրյալին, որն ի վերջո ընդունել էր իրեն կյանք պարգևողին: Մարիամը Հիսուսին հիշեցնում է նրա անհոգ մանկության դրվագներն ու տալիս է մայրական վերջին խորիմաստ հորդորը. «Բոլորին մի՛ սիրիր, մեկ առ մեկ սիրիր, զավա կա...»<sup>36</sup>:

Մեյլերյան Քրիստոսը ևս կյանքի վերջին պահին անհանգիստ է միայն մոր ճակատագրի համար և նրա հոգացողությունը հանձնում է իր սիրելի աշակերտին՝ Տիմոթեոսին: Էնթոնի Բերջեզի հավաստմամբ էլ Հիսուսի ամենամիլրված աշակերտը եղել է Հովհաննեսը, որը և ստանձնում է

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>36</sup> Նույն տեղում:

Մարիամի խնամակալությունը: Ուշարժանը, սակայն, այն է, որ նշյալ հեղինակներից և ոչ մեկի երկում վերջին պահին Մարիամը չի գրուցում որդու հետ, այլ սուկ արտասվում է ու լուռ տառապում:

Պ. Ջեյթունցյանի դրամայի ավարտին խաչելության ճամփան բռնած Հիսուսը վերջին անգամ դիմում է իրեն հետևողներին. «Ահա ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը: Միքեցեք միմյանց, ինչպես և ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, և կմնաք իմ սիրո մեջ, եթե պահեք իմ պատվիրանները: Մնացե՛ք իմ մեջ և ես՝ ձեր մեջ»<sup>37</sup>: Իսկ մեյլերյան Փրկիչը մարդկության փրկությունը տեսնում է հույսի մեջ. «Մերը հաստատուն արահետ չէ, որը կտանի մեզ դեպի լավ վախճան, այլ պարզ և, որ ստանում ենք մեր կյանքի օրերի դաժան ճանապարհի ավարտին: Այսպիսով, ես հաճախ մտորում եմ հույսի մասին, որը թաքնված է թշվառների դեմքերին: Այդ ժամանակ իմ վշտի խորքերից հառնում է մի հարատև մխիթարություն, և ես կրկին կամենում եմ ապրել ու ուրախանալ»<sup>38</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայ դրամատուրգի պիեսի ավարտը ևս թեմատիկայի առումով դրսևորում է թե՛ խոր աղերսներ և թե՛ զգալի ինքնօրինակություններ օտար հեղինակների գրական գուգահեռներում. բոլոր դեպքերում անբաժան են Հիսուսն ու Հուդան, ինչպես սերն ու դավաճանությունը, և միահյուսված են նաև գլխավոր պատգամի բաղադրիչները՝ սերն ու հույսը:

Հայկանուշ Շարուրյան

### Ամփոփում

«Պերճ Ջեյթունցյանի դրաման գրական գուգահեռներում» հոդվածը նվիրված է Պերճ Ջեյթունցյանի «Հիսուս Լագովրեցին և նրա երկրորդ աշակերտը» երկու գործողությամբ դրամայի ուսումնասիրությանը համաշխարհային գրականության համատեքստում: Վերլուծության ընթացքում նկատվել են զանազան աղերսներ, մասնավորապես ռուս վիպասան Լեոնիդ Անդրեևի «Հուդա Իսկարիովտացին» վիպակի, անգլիացի գրող Էնթոնի Բերջեսի «Մարդը Լագարեթից», ամերիկացի վիպասան Նորման Մեյլերի «Ավետարան ըստ Որդու» վեպերի, ինչպես նաև հայ գրող Սերգեյ Աղաջանյանի «Ես Հուդան եմ» վիպակի հետ: Այս բոլոր

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 57-58:

<sup>38</sup> **Mailer Norman**, 'The Gospel According to the Son', p. 22

հեղինակները կերտել են ոչ միայն Հուդայի զեղարվեստական կերպարը՝ փորձելով բացահայտել նրա դավաճանության դրդապատճառները, այլև նաև Հիսուսի գրական կերպարը: Սույն հոդվածում փորձ է արվել բացահայտել այն բոլոր նմանություններն ու տարբերությունները, որոնք առկա են այս երկերում:

**Haikanush A. Sharuryan**

**Summary**

This article which is entitled "Drama by Perch Zeituntsyan in Literary Parallels" touches upon his two acted play named "Jesus of Nazareth and his Second Disciple" which is studied in parallel with world literature, namely Russian novelist Leonid Andreiv's" novel Judas Iscariot ", English writer Anthony Burgess's novel "Man of Nazareth", american novelist norman Mailer's novel "The Gospel according to the Son", as well as another Armenian writer Sergej Aghajanyan's novel "I am Judas". All these writers have created the literary character of Judas trying to reveal the causes of his treachery. By doing so, they have by all means also depicted the nature of Jesus. In this article we have tried to expose all the similarities and differences of those literary works.

**Айкануш Шарурян**

**Аннотация**

Статья “Драма Перча Зейтунцяна в литературных параллелях” посвящена анализу драмы в двух действиях Перча Зейтунцяна и выявлению связи последней с образцами всемирной литературы. В частности, были исследованы повесть русского писателя Леонида Андреева “Иуда Искариот”, романы “Человек из Назарета” английского писателя Энтони Берджеса и “Евангелие от Сына” американского романиста Нормана Мейлера, а также повесть “Я – Иуда” армянского писателя Сергея Агаджаняна. Эти писатели создали литературный образ Иуды, пытаюсь объяснить мотивы его предательства. С помощью Иуды они создали также литературный образ Иисуса.

В статье делается попытка выявления сходств и различий, присутствующих в произведениях вышеотмеченных авторов.

ԱՐՑԱԽԸ ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

**Բանալի բառեր.** Արցախ, պատմություն, մշակույթ, լեզվամտածողություն, տարեգրություն, ազատամարտ, հայրենասիրություն, տառապանք, հաղթանակ, միասնություն:

**Ключевые слова:** Арцах, история, культура, язык, летопис, борьба за свободу, патриотизм, страдание, победа, единство.

**Key words:** Artsakh, history, culture, language, chronology, freedom struggle, patriotism, suffering, victory, unity.

20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը նշանավորվում են իրադարձություններով, որոնք ճակատագրական էին հայ ժողովրդի պատմության համար: Իրադարձություններից կարևորագույնը Արցախյան պատերազմն էր՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական էջերից մեկը, դարավոր պայքարի այլ դրվագների շարունակությունը: Արցախը ոտքի է կանգնում Հայաստանին միավորվելու պահանջով: «Արցախահայությունը, իր թիկունքին զգալով արյունակից եղբայրների և քույրերի ուժն ու նվիրվածությունը, պարզեց նորօրյա Թուր Կեծակին և նետվեց մարտի: Կամքը մեկն էր՝ կովել, վճիռը մեկն էր՝ հաղթանակել հանուն ավանդական օջախի պահպանման, իր անկախության, ազատության նվաճման»,- գրում է Ս. Խանյանը<sup>1</sup>: Պատերազմն իր հետքն է թողնում ժողովրդի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի վրա: Հատկապես գրականության զարգացման այդ փուլը արժևորվում է հերոսամարտի գաղափարախոսությամբ: Շատ գրողներ անմիջական մասնակցությունն են ունենում այդ պատերազմին, շատերը չեն մասնակցում, բայց յուրովի են արձագանքում իրադարձություններին: Առանձնացնենք Ս. Կապուտիկյանին, Ս. Խանյանին, Զ. Բալայանին, Հ. Մաթևոսյանին և ուրիշներին<sup>2</sup>: Նրանցից յուրաքանչյուրն իր ինքնատիպ կնիքն է թողնում Արցախի հարուստ ու բազմաշերտ, հաճախ կնճռոտ հարցերի պարզաբանման բարդ գործընթացի վրա: Ստեղծվում է մի ընդհանուր շղթա, որի ամուր

<sup>1</sup> Խանյան Ս., Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում, Ստեփանակերտ, 2005, էջ 6:

<sup>2</sup> Խանյան Ս., Արցախյան պատերազմը և հայ պոեզիան, Ստեփանակերտ, 1998, էջ 5:

օղակներից մեկն է դառնում Բ. Ուլուբաբյանը՝ ինքնատիպ ոճ և ստեղծագործական ուրույն համակարգ ունեցող մի գրող, որի համար Արցախը զարկերակ էր, ապրեցնող կենարար աղբյուր: Նրա ստեղծագործությունը հատկապես Արցախյան հերոսամարտի տարիներին, ինչպես նաև դրանից հետո և առաջ այդ պայքարի կերտման հանրագումարն է դառնում: Խոսքը ոչ միայն պատերազմի անմիջական նկարագրության, այլև Արցախի հերոսական անցյալի, պատմական անցած ճանապարհի պատկերման մասին է: Ահա ինչու Բ. Ուլուբաբյանին գնահատելիս քիչ է օգտագործել գրող բառը, նա պատմաբան է, հրապարակախոս, վավերագրող: Ընդգծենք, որ նրա թողած պատմագիտական, գեղարվեստական, միևնույն ժամանակ վավերագրական ժառանգությունը աղբյուրագիտական արժեք ունի: Այսօր այն շատերի կողմից օգտագործվում է որպես ուսումնասիրությունների հիմք: Կան մի քանի կարևոր գործոններ, որոնք առանձնացնում են Բ. Ուլուբաբյանի ստեղծագործությունը ժամանակաշրջանի գրական ընդհանուր դաշտում:

1. Ստեղծագործությունների մեջ Արցախը ներկայացված է ժամանակային ամբողջության մեջ, տարանջատված չեն նրա անցյալն ու ներկան: Եթե անգամ արտաքին հայացքից սահման կա այս երկու հասկացությունների միջև, ապա ներքին կառուցվածքով դրանք փոխկապակցված են, ներկայացված են ընդհանուր շրթայով:
2. Արցախի պատմությունը առանձնացված չէ Հայաստանի ընդհանուր պատմությունից: Սա շատ կարևոր փաստ է, որը պետք էր ընդգծել հատկապես 1988թ.-ից հետո, երբ սկսվել էր պատերազմը հանուն միասնության, և կարիք կար պատմական փաստերը ի տես աշխարհի ներկայացնելու:
3. Պատմական այս կամ այն շրջանը ներկայացնելիս ընդգրկված են համապատասխան շրջանի պատմիչների աշխատությունները: Ընդգծված է ասելիքի պատմական պատճառաբանվածությունը, նյութը հստակ և հավաստի է:
4. Արցախի պայքարը նա ներկայացնում է որպես մաքառման խռովք: Ազատամարտի պատմական ակունքները գրողը տեսնում է հայ ժողովրդի առասպելական ժամանակների, Վարդանանց պատերազմի և հետագա դարերի պայքարի մեջ: Սա հնարավորություն է տալիս միահյուսել բոլոր ժամանակները, ակնառու դարձնել այն փաստը, որ յուրաքանչյուր հայ պետք է ունենա պատասխանատվության զգացում երկրի, ժողովրդի հանդեպ: Նա պատմությունը դիտում է որպես ժառանգափոխության անընդհատ

ընթացք: Ըստ գրողի՝ անցյալը թանգարանային նմուշ չէ, այն ապրում է ներկայի մեջ:

Բ. Ուլուբաբյանի ստեղծագործական ուղին բավական երկար է, սակայն այն որակական փոփոխությունների է ենթարկվում 1980-ական թվականներին, երբ ստեղծվում են պատմագրական արժեք ունեցող գրական երկեր: Այս տարիներից սկսած գեղարվեստական մտահղացումներն իրենց տեղը զիջում են պատմագիտական ուսումնասիրություններին, որոնք հատկապես պահանջված են դառնում 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին: Պատճառը սոցիալ-քաղաքական իրադարձություններ էին, որոնք սկզբում գաղտնի, հետո բացահայտ ժողովրդին տանում են դեպի բաղձալի ազատության գաղափարախոսություն: 20-րդ դարի վերջին տեղի են ունենում մի շարք իրադարձություններ, որոնք որակական փոփոխությունների են ենթարկում իրականությունը: Ավերիչ երկրաշարժ, Արցախյան պատերազմ, պայքար հանուն անկախության, ազգային զարթոնք... Քաղաքական անցքերն իրենց հետքն են թողնում ժամանակաշրջանի հոգևոր կյանքի վրա: Գրական կյանքը չի խուսափում այդ ամենից: Աստիճանաբար փոխվում է աշխարհայացքը, երևույթների և իրադարձությունների ընկալման գեղագիտական համակարգը: Գրականությունը ստանձնում է իրականությունը իմաստավորելու առաքելությունը<sup>3</sup>: Նշենք, որ 1990-ական թվականներին այդ պայքարն այնքան էլ լիարժեք չէր արտացոլվում գրականության մեջ: Այսօր անդրադարձներն ավելի խորքային են: Երբ նոր էր սկսվել պայքարը, գրողները չէին հասցնում «մարսել» իրականությունը: Դեպքերն արագ հաջորդում էին իրար, և ժամանակ էր պետք դրանք ընկալելու համար: Ահա ինչու այսօր, երբ ժամանակատարածային հեռավորություն կա, Արցախյան հերոսամարտը գրականության մեջ արտացոլվում է խորքային հենքի վրա:

Բ. Ուլուբաբյանն առաջիններից էր, որ զինվորագրվում է ազգային պայքարի գաղափարին և իր գրիչը ծառայեցնում նրա շահերին: 1980-ական թվականներին իրար ետևից լույս են տեսնում «Գանձասար», «Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության V-VII դարեր», «Զրուցարան», «Սարդարապատ» գրքերը: Նրանցից երկուսը՝ «Զրուցարան» և «Սարդարապատ» վերահրատարակվում են 1991թ.: 1990-ական թվականներին ստեղծվում են գրքեր, որոնք նմիրված էին Արցախյան գոյապայքարին՝ «Արցախյան գոյապայքար», «Արցախի

<sup>3</sup> Քալանթարյան Ժ., Ուրվագծեր արդի հայ գրականության, Ո., 2006, էջ 29;

պատմությունը սկզբից մինչև մեր օրերը>>,<<Արցախի գոյապայքարի տարեգրություն>>,<<Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը>>: Այս գրքերից յուրաքանչյուրն ինքնատիպ է իր ոճի և կառուցվածքի մեջ: Յուրաքանչյուրի մեջ ներկայացվում է պատմական փաստի մի օղակը, իսկ բոլորը միասին ստեղծում են Արցախ աշխարհի պատմության ընդլայնված պատկերը: Քանի որ հողվածի նեղ սահմանների մեջ հնարավոր չէ ներկայացնել այս բոլոր գրքերի առանձնահատկությունները, ուշադրությունը կենտրոնացնենք <<Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը>> ուշագրավ աշխատության վրա:

Բ. Ուլուբաբյանի <<Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը>> պատմագիտական աշխատությունը լույս է տեսել 1994թ. և նվիրված է Արցախի պատմությանն ու մշակույթին: Այն գիտական և տրամաբանական հենքի վրա ստեղծված մի ամբողջական ուսումնասիրություն է՝ պատմականի և գեղարվեստականի զուգահեռումով: Գիրքն ընդգրկում է Արցախի ողջ պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հրատարակությունից հետո գնահատականներն անմիջապես ի հայտ են գալիս մամուլում: Առանձնացնենք Ռ. Դալլաբյանի կարծիքը. <<380 էջանոց այդ գիրքը հեղինակի բազմամյա եռանդուն աշխատանքի արդյունքն է: Բ. Ուլուբաբյանն առաջինն էր, որ իր նոր երկում ընդգրկում էր Արցախ աշխարհի ողջ պատմությունը և գիտականորեն ներկայացնում ու քննարկում ազգային տեսանկյունից ինչպես համեմատաբար հայտնի, այնպես էլ ցարդ պատմության սովերում ու մութ անկյուններում մնացած շատ հարցեր: Արցախը Պատմական Հայաստանի այն նահանգներից է, որի պատմության տարբեր կողմերին շատ են անդրադարձել հնագույն ու նոր, օտար և հայրենի բազմաթիվ հեղինակներ: Բայց լիովին չեն պարզաբանել Արցախի հարուստ և կնճռոտ պատմության բոլոր հարցերը, նրա պատմական ճանապարհի բոլոր անցուղարձերը: Իրավացի է հեղինակը, երբ գրախոսվող գրքի 8-րդ էջում ասում է, թե Արցախը, սկսած 5-րդ դարից, դրանից առաջ շատ ավելի քան մեկ հազարամյակ գտնվել է Հայոց միասնական պետության կազմության, բաժանել է նրա ընդհանրական ճակատագիրը: 5-րդ դարից՝ Մեծ Հայքի միասնական թագավորության բարձրացումից հետո, Արցախ աշխարհը դարձավ ամբողջովին պոկված ու իր առանձին, հազար ու մի փորձությունները հաղթահարող միավոր: Եվ ահա հետագա ավելի քան մեկ ու կես հազարամյակի Արցախի կենսագրությունն է, որ կազմում է գրախոսվող աշխատության նյութը, նրա հիմքն ու առանցքը>><sup>4</sup>:

<sup>4</sup> Դալլաբյան Ռ., Բ. Ուլուբաբյանի նոր գիրքը, -Ազգ. Ե., 1995, 9 դեկտեմբերի, էջ 4:

Հավելենք ևս մի կարծիք. «Ընկերային ներկա իրավիճակում, երբ կյանքի համար անհրաժեշտ պայմաններն իսկ բացակայում են, յուրաքանչյուր գիրք, նկար մի յուրօրինակ հաղթանակ է: Կայսերապետության ու ժողովուրդների կեղծ եղբայրության տարիներին հայ գիտնականը զուրկ էր անցյալը ճշգրիտ վերարտադրելու ու վերլուծելու հնարավորությունից: Եվ հիմա, երբ թվում է, թե հասունացել է պահը՝ այդ բացը լրացնելու ու չկա խոչընդոտ հանդիսացող արտաքին ճնշումը, պարզվում է, որ իբրև պետություն դեռ այդքան չենք հասունացել, որ գիտակցենք ազգային մշակույթի ու պատմության ուսումնասիրությունը պետական հոգածությամբ պարուրելու ժամանակի թելադրանքը: Օրերս ընթերցողին հասավ Բագրատ Ուլուբաբյանի «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» գիրքը: Աննախադեպ մի երևույթ, շնորհակալ ու ողջունելի մի գործ: Ուսումնասիրությունը սկսվում է պատմաշխարհագրական ակնարկով: Այնուհետև հեղինակը ներկայացնում է միջնադարյան Արցախ-Խաչենի պատմությունը: Մեր ուշադրությունը գրավեց հեղինակի՝ գրաբարից աշխարհաբար կատարած թարգմանությունը, որի կապակցությամբ կցանկանայինք նշել միայն, թե գրվածքի մի մասը չափածո է՝ 9-րդ դարի համար կարևոր և հիշատակելի մի փաստ.

Եթե ինչպես, որ ասացի,  
Ինձնից հեռանաս, կլինի  
Խաղաղություն,  
Իսկ եթե ոչ՝ պատերազմ,  
Կռիվ ու ճակատամարտ,  
Դու՝ կդառնաս թիրախ, իսկ  
Աղեղն իմ խոցող,  
Դու՝ ախոյան և  
Մարտիկներն իմ՝ հաղթանակող,  
Դու՝ ոսոխ, իսկ իմ գորքը՝  
Քեզ դատապարտողներ,  
Պատերազմը քոնը կլինի, և հաղթանակը՝ մերը...

Նույնիսկ հաշվի առնելով մանր ու անխուսափելի թերությունները, պետք է ընդունենք, որ Բագրատ Ուլուբաբյանը անհրաժեշտ գործ է կատարել»<sup>5</sup>:

<sup>5</sup> Պետրոսյան Ա., «Պատերազմը քոնն է, հաղթանակը՝ մերը», - Երկիր, Ե., 1994, , 24 նոյեմբերի, էջ 6:

Գրքի մեջ հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Արցախի պատմական զարգացման հետևյալ կետերին.

1. Արցախի աշխարհագրական դիրքը: Բ. Ուլուբաբյանը շեշտում է մի կարևոր փաստ՝ Արցախը Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից կամ աշխարհներից մեկն էր, որը հին հայկական պետություն էր, մասամբ եզրափակվում էր արևելյան սահմաններում՝ ընդգրկելով բավական ընդարձակ մի տարածություն: Այն արևմուտքում հասնում էր մինչև Սևանի արևելյան ափը, արևելքում բռնում էր Մուխանք դաշտի մի զգալի մասը, հարավից սահման ուներ Երասխ գետին, հյուսիսից՝ Արցախյան լեռնաշղթան, որը Սևանի ափից ձգվում է դեպի արևելք՝ ավարտվելով Մուխանքի դաշտաբերանում: Աշխարհագրական դիրքի ընդգծումը կարևոր է պատմական զարգացման հետագիծը ներկայացնելու համար: Սահմանային բնորոշումից հետո հողինակը առանձնացնում է Արցախին տրված անունները՝ մեկնաբանելով դրանց իմաստը: Օրինակ՝ Արցախի <<Ծավդեից>> անունը նահանգի իշխանական- նախարարական տան նստավայր Ծավդ-Ծող անվան անունից էր, <<Խաչենքը>>՝ նստավայր Խաչեն բերդավանի անունից: Իսկ Ղարաբաղ կոչվել է պարսկալեզու և թուրքալեզու եկվորների կողմից<sup>6</sup>:

2. Արցախի լեզվական ատաղձը: Լեզուն արտահայտում է իրենով խոսող ժողովրդի պատմության ու հոգևոր կերպարի կարևորագույն առանձնահատկությունները: Բարբառը նույն առաքելությունն ունի իրենով խոսող ազգի մի հատվածի համար: Արցախյան բարբառի ուսումնասիրությունը խիստ կարևոր է այնտեղ բնակվող ժողովրդի պատմությունն ու մշակույթը հասկանալու համար: Ըստ գրողի՝ այդ բարբառն աչքի է ընկնում ոչ միայն ընդգրկած բնակչության քանակով, այլև նրանով, որ հայ ամենահարուստ ու ամենաճկուն, ամենակենսունակ ու ամենահամառ բարբառներից մեկն է: <<Արցախյան բարբառը պահպանվել է ոչ միայն բնաշխարհում, այլև ամենուր, որտեղ ոտք է դրել, իր ծուխն է երկինք հանել նրանով խոսող թեկուզ մեկ ընտանիք: Այստեղ մեր խոսքը միակողմանի է, քանի որ ոչ միայն խոսողն է պահել ու պաշտպանել իր բարբառը, այլև բարբառն է պահել ու պահպանել իրենով խոսողին>><sup>7</sup>: Գրքում ընթերցողը ծանոթանում է արցախյան բարբառի սահմաններին, հասկանում նրա դերն ու նշանակությունը ազգապահպանության գործում: Հեղինակը մեզ է ներկայացնում մի ուշագրավ փաստ. Ղարաբաղի բարբառում պահպանվել

<sup>6</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 18:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 20:

են նաև գրաբարյան մի շարք հոլովաձևեր: Նա լեզուն կապում է հավատի հետ. ինչպես բարբառը, այնպես էլ հավատը, այն հզոր զենքն է, որով ժողովուրդը կարողացել է կռվել ու պահպանել իր ինքնությունը: Ե՛վ խաղաղության ժամանակ, և՛ պատերազմի պահին քրիստոնեական հավատը հայի համար այն հիմնասյուններից մեկն է, որի վրա կառուցվել է հաղթանակը: Պատահական չէ, որ Բ. Ուլուբաբյանն իր գրքում անդրադառնում է քրիստոնեության դարձին: Ահա ինչու առանձնահատուկ տեղ է հատկացրել այն գրավոր աղբյուրներին ու ժողովրդական ավանդություններին, որոնք ներառում են հավաստի տեղեկություններ երկու առաքյալների՝ Բարդուղիմեոսի և Թադեոսի, վերջինիս աշակերտ Եղիշեի մասին, ով իր քարոզչությունն սկսելով Արևելյան Անդրկովկասի հյուսիսային եզրից՝ հասնում է Ուտիքի և Արցախի սահմանազուխ՝ Գիս կոչված վայրը, որը համարվում է քրիստոնեության դարձի ծննդավայր, կառուցում եկեղեցի: Արձակագիրն անդրադառնում է նաև Գրիգոր Լուսավորչին, որի հայրապետական գործունեության մեջ մեծ տեղ էր բռնում Արցախ աշխարհը, ուր շրջել ու անձամբ ավարտին է հասցրել նա բնակչության քրիստոնեացման անհետաձգելի գործը:

3. Արցախի պատմության առանցքային կետերը: Բ.Ուլուբաբյանն անդրադառնում է Արցախի Առանշահիկ թագավորության ստեղծմանը ու այդ թագավորության ստեղծողին՝ Առանշահիկ Վաչագանին: Ինչպես նշում է գրողը. «<Կենտրոնական Հայաստանում դրության տեր դարձան Մամիկոնյան և Բագրատունյաց նախարարական տների իշխանները և ջանացին օգնել երկրի ինքնուրույն զարգացմանը, քանի որ պայմանագրի համաձայն՝ Պարսից արքունիքն այդ տոհմերի ներկայացուցիչներին էր վստահում իր կուսակալությունը: Իսկ Աղվանից մարզպետության ներսում, Արցախի տեր Առանշահիկները, օգտվելով համեմատական ազատությունից, ձեռք բերեցին քաղաքական ու մշակութային անկախություն և ստեղծեցին մի վարչություն, որը պատմական աղբյուրներում հայտնի է թագավորություն անունով>>: Իսկ Վաչագանի մասին գրում է. «<Վաչագան Բարեպաշտը Հայոց արևելից կողմանց Առանշահիկ տերերի լավագույն ներկայացուցիչն էր, այն քաջամիտ ու հայրենասեր իշխողը, որը կարողացավ երկրի ազգային ոգին աննախընթաց բարձրության հասցնել՝ ըստ ամենայնի օգտվելով և՛ նախարարների թողած ավանդներից, և՛ իր ժամանակի բարենպաստ պայմաններից>>»<sup>8</sup>: Պատմական զարգացման հետագիծը ներկայացնելիս պատմաբան Բ.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 29-35:

Ուլուբաբյանը հենվում է պատմիչների թողած վկայությունների վրա՝ շեշտելով սեփական մոտեցումն ու դիրքորոշումը: Պատմական փաստերի բացակայությունը երբեմն նրան կանգնեցնում են փակուղու առաջ: Օրինակ՝ երբ խոսքը վեցերորդ դարի մասին է, նա չի կարողանում ամբողջացնել ասելիքը, քանի որ այս շրջանը ոչ միայն Արցախ աշխարհի, այլև ամբողջ հայ ժողովրդի կենսագրության ամենամշուշոտ շրջաններից մեկն է: Չկան այս դարում ստեղծված ժամանակագրական ծավալուն երկեր, վավերական նյութեր: Հիմնականում պահպանվել են հետագա դարերի պատմիչների վկայությունները՝ հենված հիմնականում հիշողությունների ու բանավոր խոսքի վրա: Անդրադառնալով VII, VIII, IX դարերում Արցախում տիրող իրավիճակին՝ Բ. Ուլուբաբյանը իր գրիչը ծառայեցնում է հարազատ ժողովրդի պայքարի նկարագրության վրա գրելով. «Պատմությունն ունի իր անդիմադրելի տրամաբանությունը. հավերժական բռնակալ չկա: Նվաճումների ու անսանձ կեղեքումների վրա հիմնված տիրակալությունը վաղ թե ուշ կործանվում է, քանի որ, առաջին հերթին, այն ինքն է ստեղծում ու սնում իր իսկ բունը կրծող գեռունները: IX դարի կեսին հայկական համատարած շարժումներն ու խիզախ ինքնապաշտպանությունը հիմնովին սասանել էին բռնակալների տիրապետությունը»<sup>9</sup>: Ժողովուրդը թոթափում է արաբական բռնակալների լուծը: Բայց առջևում համատ պայքարն էր ընդդեմ թուրք-սելջուկյան հրոսակախմբերի: Ինչպես նշում է Բ. Ուլուբաբյանը, ծանր էր հատկապես Արցախ-Խաչենի դրությունը, քանզի այս երկրամասին հասած աննախադեպ չարիքներին գումարվում է 1199 թվականի ահավոր երկրաշարժը: Այս մասին արժեքավոր տեղեկություն է տալիս նաև Կիրակոս Գանձակեցին<sup>10</sup>: Բ. Ուլուբաբյանն այս գրքում ներկայացնում է XIIդ. կեսին Հայաստանի և Անդրկովկասի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային աննախադեպ ցնցումները, որոնք պայմանավորված էին մի կողմից՝ սելջուկ-թուրքերի կենտրոնական իշխանության խարխլումով, մյուս կողմից՝ վրաց-հայկական ռազմաքաղաքական դաշնության ստեղծումով: Հեղինակը ներկայացնում է նաև Զաքարյան իշխանության օրոք Արցախ-Խաչենի երեք իշխանությունները՝ Ներքին Խաչենը, Միջնարցախը և Վերին Խաչենը:

Պատմական փաստերի որոնման ընթացքում պատմաբանը ուշադրությունն ավելի շատ բնեռում է ազգային-ազատագրական պայքարի

<sup>9</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 48:

<sup>10</sup> Կ. Գանձակեցին իր «Հայոց պատմության» մեջ ներկայացնում է Արցախի պատմության այս հատվածը: Տես Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1961, էջ 117:

գաղափարախոսության վրա՝ ներկայացնելով Արցախ-Ղարաբաղի դերը Հայոց աշխարհի ընդհանուր պատմության հոլովոյթում: Այս հարցում նա ընդգծում է Լեոի կարծիքը. «Հյուսիս-արևելքից և արևելքից Արցախ-Ղարաբաղը ներկայացնում է մի հսկայական միջնաբերդ, որի ճակատը դարձրած է կուր-արաքսյան և մերձկասպյան անհուն տափաստաններին՝ բնությունից կոչում ստացած լինելով պաշտպանել Հայկական բարձրավանդակն այս տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ: ... Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները գալիս, ընդհատվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում էին ու ետ դառնում: Այսպիսով, առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից»<sup>11</sup>: Ազգային-ազատագրական պայքարի ենթատեքստում պետք է որոնել քաղաքական գործոնը, որը չէր կարող վրիպել Բ. Ուլուբաբյանի տեսադաշտից: Նա ընդգծում է ռուսական կայսրության քաղաքականությունը՝ այն համարելով գաղութակալական, քանզի ցարական Ռուսաստանն Անդրկովկասի նվաճումով ոչ միայն մեկընդմիջտ մոռանում է հայերին խոստացած ինքնավարության, հայկական հողերը միավորելու և նման ուրիշ խոստումները, մանավանդ Ղարաբաղի մելիքներին տրված բարեկամությունը, այլև ամեն միջոց գործադրում է՝ բաժան-բաժան անելու Արևելահայաստանի տարածքը: Բ. Ուլուբաբյանը գրում է. «Արցախի գյուղացիության վիճակն այդքան ծանր չէ եղել երբեք, որքան ռուսական տիրապետության հաստատումից հետո ասպարեզում հայտնված ինքնակոչ թուրք բեկերի ու աղալարների օրոք: Խանի հարազատներն ու մերձավորները կաշառքով ռուս իշխանավորներից իրավունք էին ստացել տեր դառնալ հայ գյուղերում և, ժամանակավոր տիրությունից առավելագույն օգուտը քաղելու համար, կատարում էին ամենայն վայրագություն: Մելիքության շրջանում գյուղացին ենթարկվում էր միայն իր մելիքի կարգ ու կանոններին և պաշտպանված էր ուրիշ ամեն տեսակ ճնշումից: Մելիքն էլ շահագրգռված էր սեփական շինականների բարեկեցությամբ, նրանց տնտեսական հզորությամբ, որովհետև ստեղծված էր նահապետական մի կենցաղավարություն, որով մելիքն իր գավառի ոչ միայն տերն էր, այլև հոգատար հայրը»<sup>12</sup>: Գրողն անդրադառնում է Արցախի կենտրոն Շուշիի ծաղկմանը, բարգավաճմանը և ողբերգական վախճանին,

<sup>11</sup> Լեո, Երկերի ժողովածու, հտ. 3, Ե., 1976, էջ 10:

<sup>12</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 181-182:

նան հայ- թաթարական կոտորածներին ու նշում, որ այդ կոտորածներին նպաստել են ցարական կառավարության ներկայացուցիչները, ովքեր թաթարներին հուշել են, թե հայերի հարցը լուծելու ամենահարմար պահն է: Այդ մասին վկայությունները շատ են. առանձնացնենք միայն Մ. Վարանդյանի կարծիքը. «Բաքվի թուրքերի մեջ արդեն իսկ տարածված էր այն չարաշուք համոզումը, որ կարող են անպատիժ թալանել ու կոտորել հայերին, և որ կառավարությունն իրենց կողմն է»<sup>13</sup>:

Գրողի պատմական վելուծական ուղին հասնում է մինչև իր օրերը՝ ընդգծելով Հայաստանի Հանրապետության ձևավորման և Արցախի ազատագրական պայքարի կարևորագույն փաստը: Նշենք, որ գրքի մեջ հատկապես պատմական փաստերի համադրումն արված է մանրակրկիտ ձևով, ինչը խոսում է գրող-պատմաբանի հետաքրքրությունների մասին:

4. Ներկայացնելով Արցախի պատմությունը ու նկարագրելով Արցախ աշխարհը՝ հեղինակն ընդգծված վերաբերմունք է ցույց տալիս մշակույթի նկատմամբ. «Երկրի տերերի բարեհաճ հոգատարությամբ ծաղկեցին վանական համալիրները, սերտորեն կապվեցին իրար հետ, և մշակութային բոլոր բնագավառներն էլ, մեկմեկուց շունչ ու կենսունակություն ստանալով, այնպես առաջ գնացին, ստեղծեցին այնպիսի գործեր, որոնք համահայկական նշանակություն ունեն: Հիշենք գրական-մատենագրական այն կոթողները, որոնք այս շրջանում ստեղծվեցին, այն էլ այստեղ՝ Արցախում կամ Արցախի քաղաքական կյանքի ազդեցության ոլորտում՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», ժամանակագրությունը, առակները, Վանական Վարդապետի՝ մեզ չհասած, սակայն ժամանակակիցների անխառն փառաբանությանն արժանացած մատենագրական երկը, Կիրակոսի «Հայոց պատմությունը», Վարդան Արևելցու «Տիեզերական պատմություն»-ը և շատ ուրիշներ»<sup>14</sup>: Գրողն իր գրքում խոսում է նաև հայ ճարտարապետության ժառանգություն հանդիսացող Գանձասար վանական համալիրի մասին: Հեղինակը, փաստելով այդ կոթողների, մատյանների բացառիկ տեղը մեր ազգային մշակույթի բազմադարյան պատմության մեջ, ցավով պետք է նշի. «Ցավն այն է, որ այդ շրջանն իսկապես փակվեց՝ չունենալով արժանի շարունակություն, որովհետև դրանից հետո գալու էին նոր թուրքերի՝ օղուգ կոչվածների ահավոր, անցյալ պատմության մեջ չեղած-չտեսնված խժոժությունները, և տեղաբնիկների համար գոյապահպանական

<sup>13</sup> Վարանդյան Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմություն, հտ. 1, Փարիզ, 1932, էջ 361-362:

<sup>14</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 105:

մաքառումների մեջ համարյա անհնարին էր դառնալու մշակութային առաջընթացի ամեն մի քայլ>><sup>15</sup>:

Որպես ամփոփում՝ ընդգծենք, որ գրող, հրապարակախոս, տարեգիր, պատմաբան Բ.Ուլուբաբյանի գրքերը հեղինակի մաքառումներով լի կյանքի արգասիքն են՝ միտված սերունդներին կրթելու ու դաստիարակելու՝ որպես ազգի պատմությանը քաջատեղյակ զավակներ, ազգի ազատության համար պայքարող անհատականություններ: Նա նվիրվել էր Արցախի ուսումնասիրությանը: Այդ նվիրումը պատահական և ինքնանպատակ չէր: Փոխշաղկապված են անցյալն ու ներկան: Անցյալի կարևորագույն փաստերը զուգադրված են ներկայի հրատապ խնդիրներին: Նման մոտեցմամբ գրողն Արցախի ամբողջ պատմությունը ներկայացրել է կուռ ամբողջության մեջ ստեղծելով պատմական շրջապտույտի տեսլականը: Եվ ամենակարևորը՝ Արցախի պատմությունը սերտորեն միրահյուսված է հայոց պատմությանը: Սա շատ կարևոր մոտեցում է՝ միջազգային հանրությանը ցույց տալու, որ Արցախը միշտ էլ Հայաստանի մի մասն է եղել, և պատմական այդ փաստը ժխտել հնարավոր չէ: Գրողը շրջանառության մեջ է դրել պատմության ամենակնճռոտ հարցերը, որոնց պատասխանները փնտրել ու գտել է պատմության խորքերում:

Գրիգորյան Մայա

Արցախը Բագրատ Ուլուբաբյանի ստեղծագործության մեջ

Ամփոփում

Գրող, հրապարակախոս, պատմաբան Բ.Ուլուբաբյանի գրքերը միտված են դաստիարակելու սերունդներին՝ որպես ազգի պատմությանը քաջատեղյակ զավակներ, ազատության համար պայքարող անհատականություններ: Գրողը նվիրվում է Արցախի ուսումնասիրությանը, և այդ նվիրումը պատահական ու ինքնանպատակ չէ: Փոխշաղկապված են անցյալն ու ներկան: Անցյալի կարևորագույն փաստերը զուգադրված են ներկայի հրատապ խնդիրներին: Նման մոտեցմամբ գրողն Արցախի ամբողջ պատմությունը ներկայացնում է կուռ ամբողջության մեջ՝ ստեղծելով պատմական շրջապտույտի տեսլականը: Հետաքրքրիչ է այն փաստը, որ Արցախի պատմությունը սերտորեն միրահյուսված է հայոց ընդհանուր պատմությանը: Սա շատ կարևոր մոտեցում է՝ միջազգային հանրությանը ցույց տալու, որ Արցախը միշտ էլ Հայաստանի մի մասն է եղել, և պատմական այդ փաստը ժխտել հնարավոր

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 113:

չէ: Գրողը շրջանառության մեջ է դրել պատմության ամենակնճռոտ հարցերը, որոնց պատասխանները փնտրել ու գտել է պատմության խորքերում:

Григорян Мая

Арцах в произведениях Б. Улубабяна

Резюме

Книги писателя, публициста, летописца, историка Б. Улубабяна – направлены на воспитание поколений, которые знают историю собственной нации, борются за его свободу, ценят мир. Писатель посвятился изучению Арцаха, что не было случайностью. Есть взаимосвязь прошлого и будущего. Прошедшие факты параллельны сегодняшним проблемам. Всю историю Арцаха писатель представляет во всеобщем плотности – создавая круговорот истории. Важен тот факт, что история Арцаха плотно вплетена в армянскую историю, означающая перед международным сообществом, что Арцах всегда был частью Армении. Исторический этот факт нельзя протестовать. Поставив круговорот морщинистые вопросы истории, писатель искал, и нашел на них ответы в глубинах истории.

Grigoryan Maya

Artsakh in the works of B. Ulubabyan

As a summary is worth noting that the writer, annalist, historian and author B. Ulubabyan's books are the products of his struggle-filled life. His aim and desire was to educate and nurture a generation as an individuals fighting for the freedom and peace, who know the history of their own nation. The writer devoted to the study of Artsakh. This commitment was not an end in itself. There is a relationship of the past and the present. The most important facts of past are parallel to urgent problems. With this approachment writer has presented the whole solid story of Artsakh, creating a vision of a historical cycle. Important is the fact that the history of Artsakh tightly woven into the Armenian history. The main idea is to show the international community that Artsakh has always been a part of Armenia and this historical fact can not be denied. Putting into circulation the wrinkled questions of history, the writer was looking for, and found the answers in the depths of history.

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ» ՊՈԵՄԸ  
(տիպաբանական վերլուծության փորձ)

**Բանալի բառեր.** ժանր, կառուցվածք, այլաբանություն, խորհրդանշան, բանահյուսություն:

**Ключевые слова:** жанр, структура, образ, аллегория, символ, фольклор.

**Key words:** genre, structure, image, allegory, symbol, folklore.

Ժանրային առումով «Ամբոխները խելագարված» պոեմը էպիկական է: Սակայն նրա հյուսվածքի մեջ վճռական դեր է խաղում քնարական տարրը, թեև հեղինակը ոչ մի տեղ հանդես չի գալիս իր եսի անունից, պոեմի համառատ նախերգանքից բացի: Բայց հենց այդ նախերգանքն էլ պայմանավորում է պոեմի քնարական շաղախը.

Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին - աշխարհներին, արևներին,-

Հրբանման հոգիներին:-

Բոլո՛ր նրանաց, ում որ հոգին վառվում է վառ,-

Բոլո՛ր քնրանց հոգիներին արևավառ,-

Կյանքի՛, մահի այս ամեհի աղջամուղջում՝

Ողջակիզվող հոգիներին – ոգջո՛ւյն, ողջո՛ւյն:-

Խորքային էներգիայով եռացող այս տողերը միանագամից շառաչուն ընթացք են հաղորդում պոեմին: Մյուս կողմից հակիրճ նախերգանքը, որի մեջ արդեն զգացվում է Չարենցի ապագա ռադիոպոեմների շունչը, կամուրջ է հեղինակի, ընթերցողի և պոեմի հերոսների միջև. ջնջվում է սահմանը, և նրանք հավասարապես մասնակից են դառնում ծավալվող իրադարձություններին: Գործողությունների էպիկական ընթացքի մեջ հենց սկզբից ձևավորվում է քնարական մի ենթաշերտ, որտեղ մշտապես զգացվում է հեղինակի եսը: Յուրաքանչյուր տողի հետևում ներկա է անհանգիստ բանաստեղծը: Նա մերթ մոլեգնում է իր հորոսների նման, մերթ երգում ոգևորված, մերթ տխրում է նրանց հետ: Եվ այս իրողության գեղագիտական ներգործությունը շատ ավելի ուժեղ է, քան եթե հեղինակը հանդես գար ուղղակի իր անունից: Բայց և այնպես Չարենցի պոեմը չի կարելի միանշանակորեն դիտարկել լիրոէպիկական ժանրի շրջանակներում, այն ինչ-որ միջին որակ է երկու ժանրերի սահմանագծում:

«Ամբոխները խելագարված» պոեմը ռոմանտիկական տարերքի ստեղծագործություն է: Բանաստեղծի անսանձ երևակայությունը ստեղծում է շլացուցիչ պատկերներ, որոնք արտասովոր ուժով կերպավորում են հակամարտ բևեռների բախման դրամատիկ լարվածությունը:

Ներածությունից անմիջապես հետո էպիկական հանդարտությամբ բացվում է վարագույրը, բայց բեմը դեռ դատարկ է.

Իրիկուն էր, հրակարմիր մի իրկիկուն:

Արևը բորբ մայր էր մտնում արևմուտքում:

Դաշտի վրա փովել էր մուժ արյունամած՝

Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած:

Արևը, թե՛ մայր էր մտնում արևմուտքում ...

Սակայն ծավալվող մայրամուտի հանդարտությունը երևութական է: Բնապատկերի մեջ ներխուժում են երանգներ, որոնք ներսից լարված դինամիկա են հաղորդում իրիկնային անդորրին. իրիկունը հրակարմիր է, արևը բորբ է, թե՛ իրիկնային մուժը արյունամած է, բորբ արևի սրտից քամած թույն ... Գույների այս փոթորկուն տեղատարափն ուղեկցվում է հնչեղ բառերի ձայնախաղով: Ամբողջ պոեմը հիշեցնում է գունաձայնային համանվագ, որ սկսվում է նախերգանքի հատու նախանվագով, ապա հեռվից մոտենում է հանդարտ մեղեդին, գնալով միահյուսվում է նորանոր շառաչուն հենչերանգների հետ, ուժգնանում է և դառնում հնչյունների ու գունախաղերի մի հաղթական արշավ՝ ավարտվելով վերջերգի արևային գնգոցով...

Պոեմի կենտրոնում ժողովրդի հավաքական կերպարն է, որ հետևողականորեն զարգանում է գործողության մեջ: Այդ հազարագլուխ կերպարն ունի իր որոշակի կենսագրությունը: Դա գյուղի և քաղաքի, հողի և հանքի, գործարանների ու անձայրածիր տափաստանների բոլոր զավակների հավաքական կենսագրությունն է, որ հատկանշվում է նպատակի ընդհանրությամբ: Միակամ ու միահողի այդ զանգվածի ընդերքում կան անսպառ ուժեր: Եվ երբ այդ ուժերը դրվում են կազմակերպված ու գիտակցական ուղու վրա, դառնում են ամենահաղթ, որովհետև աճում են մայր հողից ու հենվում են մայր հողի վրա: Չկա երկիր առանց ժողովրդի, չկա ժողովուրդ առանց երկրի: Իսկ երբ այդ երկուսը միասնական են, անպարտելի են:

Սակայն պոեմի հազարագլուխ հերոսը կուրացած չէ իր ուժով: Նա զգում է, որ ուժեղ ու վտանգավոր է նաև թշնամին, որ հեշտությամբ անձնատուր չի լինելու նա, և շատերին հարկ կլինի զոհաբերել իրենց: Բայց նա կովում է, որովհետև դա ազատության կռիվ է, կովում է երգելով, առանց խորամանկելու և նենգելու, բաց ճակատով: Ժողովրդի բնավորության մեջ

չկա նենգություն, նա սովոր է հարգելու ճշմարտությունը և ուղիղ նայելու թշամու աչքերին: Իր հավաքական կերպարի այս գծերը ավելի շեշտելու համար Չարենցն ստեղծում է սուր հակադրություն: Խելագարված ամբոխները երգելով ու ամբողջ հասակով են գնում մահին ընդառաջ, մինչդեռ թշնամին նենգությամբ է դիմավորում նրան, եթե ամբոխների կռիվը երգ է, ապա թշնամին՝

Մտել է ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած՝  
Կրակում է գաղտագողի, նենգ ձեռքերով արյունոտած:

*Ջերմ* բառի մեջ անհուն սեր կա մայր հողի նկատմամբ, մինչդեռ «նենգ ձեռքերով արյունոտած» թշնամին ընդհանուր բան չունի մայր հողի հետ: Ժողովրդի համար հողը կյանքի աղբյուր է, իսկ թշնամու համար՝ միայն նենգության դարան:

Այս հակադրությունը պոեմում արտահայտված է բազմաթիվ խորհրդանշական կամ այլաբանական պատկերների միջոցով: Այս տիպի հակադրությունները բնորոշ են ժողովրդական բանահյուսության, մասնավորապես «Մասնա ծռեր» էպոսի համար: Ուստի բացառված չեն Չարենցի պոեմի ինչ-ինչ աղերսներ մեր հերոսական վեպի հետ:

Հայտնի է, որ «Մասնա ծռեր» էպոսի պատկերային համակարգը կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր հիպերբոլիկ պատկեր ձևավորվում է նախորդի հիմքի վրա՝ ինքն էլ իր յերթին պայմանավորելով հաջորդի բնույթը: Այսպիսով չափազանցությունները համոզիչ հավանականության կերպ են ստանում: Պատկերավորման նման մի սկզբունք գործում է նաև Չարենցի պոեմում: Երբ արդեն հայտնի է ամբոխների ուժի աղբյուրը և այդ ուժը գործադրելու շարժառիթը, այլևս հավանական ու համոզիչ է թվում հեղինակի հիպերբոլիկ եզրակացությունը, թե՛ ...

Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի,-  
Եթե ուզոն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի...  
Եթե ուզեն՝ արեգակներ կշարտեն երկինքն ի վեր.  
Եթե ուզեն՝ վար կբերեն երկինքներից արեգակներ...  
Եթե ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված –  
Ինչէ՛ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

Չափազանցությունները պոեմում հետևողական շղթա են կազմում: Այսպես 3-րդ գլխում պատմվում է ամբոխների կենսագրությունը, որտեղից հայտնի է դառնում այն հսկայական ուժի աղբյուրը, որ կուտակված է այդ հոծ զանգվածների ընդերքում: Դրանից հետո դադարում է չափազանցություն թվալ, թե նրանք պիտի այրեն ամբողջ քաղաքը, մոխրի պիտի վերածեն ու մոխիրն էլ այրեն նորից: Եվ այսպես գլուխ առ գլուխ բանաստեղծը ընթերցողին ներշնչում է այն համոզմունքը, թե, իսկապես,

ամբոխները, եթե ուզեն, երկինքներից արեգակներ վար կբերեն և արեգակներ կշարտեն երկինքն ի վեր... Ամբոխների հավաքական կերպարի հետևողական զարգացումը հենց այսպիսի եզարկացության պիտի հանգեցնե: Հիպերբոլան արդեն դադարում է չափազանցություն լինելուց, ձեռք է բերում բնական հավաստիության կերպարանք:

Պոեմի հիմնական գաղափարական գիծը բացահայտվում է այլաբանությունների միջոցով, որոնք նույնպես բանահյուսական սկիզբ ունեն: Սա պայմանավորված է այս ինքնատիպ ստեղծագործության ժանրային բնույթով՝ նվազագույն ծավալի և սյուժետային պարզ կառուցվածքի միջոցով լուծել գաղափարական ու գեղարվեստական տարողունակ խնդիրներ: Իսկ դրա համար այլաբանությունները մեծ հնարավորություն են տալիս: Չարենցյան այլաբանությունները պարզ ու հասկանալի են, հաճախ սիմվոլի նշանակությամբ և միշտ հեռու խրթնաբանությունից:

Այլաբանական պատկերները առկա են պոեմի սկզբից մինչև վերջը և զարգանաում են որոշակի հետևողականությամբ ու փոխկապակցվածությամբ: Այսինքն՝ պոեմի սյուժեն զարգանում է երկու գուգահեռ ուղղություններով՝ ուղղակի և այլաբանական, որոնք լրացնում են միմյանց:

Նախերգանքից անմիջապես հետո պոեմն սկսվում է պերճախոս այլաբանական պատկերով: Իրիկուն էր, երբ ամբոխները կռվում էին կայարանը գրավելու համար. «արևը, բոբբ՝ մայր էր մտնում արևմուտքում» և «արնավառ փայլ էր փռում դաշտի վրա»: Արևի մայր մտնելը խորհրդանշում է հին աշխարհի մայրամուտը, որ տեղի էր ունենում արյունալի գոտեմարտի պայմաններում: Ահա թե ինչու ամբողջ դաշտը ներկված էր արնագույն, և արևն անգամ «թույն էր թքում»: Արևն ամբոխների պայքարի ամբողջ ընթացքում ուղեկցում է նրանց՝ մերթ խորհրդանշելով հին աշխարհի հոգեվարքը, մերթ՝ նոր կյանքի արշալույսը: Հին աշխարհի խորհրդանիշ քաղաքը դաշտի արևելյան կողմում է՝ դեպի արևը գնացող ամբոխների և նոր աշխարհի լուսաբացը խորհրդանշող արևի ճանապարհին: Նոր կյանքի արևավառ ավերին հասնելու համար պետք է կործանել քաղաքը: Երեկոյան մայր է մտնում հոգնած ու ուժասպառ մի արև, իսկ լուսաբացին «կարմրածուփ հորիզոնում հրաշուշան» կարմիր վառվում է բոլորովին նոր մի արև՝ «որպես կովի ազդանշան»: Մայրամուտի արնագույն արևը հին աշխարհի վերջին ժամն է խորհրդանշում, իսկ լուսաբացի բոբբ արևը խորհրդանիշն է ապագայի, որ իր արշալույսն է սպրում դեռ.

Աչքերն հառած հեռո՛ւ-հեռո՛ւն կարմիր վառվող արեգակին՝

Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.  
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝  
Դեպի Արևն էին գնում Ամբոխները խելագարված...

Այսպիսով՝ արևը դառնում է իրադարձությունների գործուն մասնակից, մի յուրօրինակ ռոմանտիկական, «գաղափարատիպ», որ հաճախակի երանգափոխումներով մշտապես գունագարդում է կովող ամբոխների ուղին:

Միմվոլիկ-այլաբանական է նաև պոեմի կառուցվածքը: Ամբոխները կռվով գրավում են կայարանը, որ ապագայի նախադրուհն է, այսինքն մեծ պայքարի սկիզբը: Մեծագույն բախումները առջևում են դեռ: Ոգեշնչված ամբոխները դեռ պետք է գրավեն քաղաքը: Պոեմն ավարտվում է մի պատկերով, երբ ամբոխները արևածագին դուրս են նետվում կայարանից, որ գրոհեն քաղաքը: Նրանց այդ վերջին կովին կոչում է հեռու հորիզոնում բացկլտացող նորածին արեգակը: Այսինքն կոփվր դեռ շարունակվելու է, ապագան նվաճվելու է տևական մաքառումներով...

Պոեմի 13-րդ գլխում կա մի խոսուհն այլաբանակ պատկեր.

Մութ է դեմը, ու խավարում, որ բացվել է որպես անդունդ՝  
Երևում է հեռու լ-հեռու ն կարմիր լույսով վառվող մի գունդ:  
Գիշերի մեջ - կարմիր, կարմիր, տազնապալից վառվում է նա՝  
Գիշերի մեջ վառել են, որ գորքը պատրաստ, արթուն մնա:  
Անծայրածիր մթնում հեռվի կարծես կարմիր գլուխ է շան -  
Վառել են այն, որպես կովի ու տազնապալի ազդանշան:

Սա թշնամու բանակում է: Ամբոխների ուղին մշտապես լուսավորում է արևը, իսկ երբ գիշեր է, նրանք իրենց ճանապարհը լուսավորում են սեփական հոգու կրակով: Մինչդեռ թշնամին չունի ոգու զորություն, չունի նպատակ, չկա մի փարոս. որ լուսավորի նրա ճանապարհը: Ուստի նրանք արհեստական կրակով են արթուն պահում իրենց գորքին, կրակով, որ ոչ թե ոգևորում է մարդկանց, այլ միայն «տազնապալի ազդանշան» է... Քաղաքը պոեմում ներկայացված է ահռելի պատկերներով, որոնք ոչ միայն տեսողական տպավորություն են ստեղծում, այլև լիցքավորված են սուր հակակրանք, ասելություն արտահայտող հոգեբանական լիցքերով:

Պոեմի կառուցվածքը հստակ բացատրելի է էպիկական ժանրի բնույթով: Երկրորդ գլուխը նախադրությունն է, որտեղ բանաստեղծը նպատակային շեշտադրումներով ներկայացնում է գործողության բեմը: Դա մի ընդարձակ դաշտավայր է՝ լուսավորված իրիկնային արևի՝ «արևավառ փայլով»: Մի կողմից դաշտի հոգեզմայլ գեղեցկությունն է՝ ալեծածան արտերով, որ հրդեհված են մայր մտնող արևի կարմրացողքով, մյուս կողմից «արյունամած մուժն» է, որ «թույն է կարծես բորբ արևի սրտից քամած». մի

կողմից կյանքի հոյակապ ժպիտն է փռված դաշտերի վրա, մյուս կողմից մահն է իր արյունոտ թևերը փռել այնտեղ: Սուր հակադրությունը հենց սկզբից լարում է իրադրության դրամատիզմը: Այնուհետև գլուխ առ գլուխ գործողությունը զարգանում է ավելի ու ավելի արագ ու հախուռն: Պոեմի ճիշտ մեջտեղում՝ իններորդ գլխում (ամբոխների հուզիչ ու առնական երգը) գործողության ներքին դրամատիզմը հասնում է առավելագույն լարման: Դա բարձրակետն է՝ կուլիմինացիան: Դրանից հետո, ըստ էության, աստիճանաբար կամ միանգամից պետք է լուծվեր հանգույցը: Սակայն Չարենցի պոեմը կառուցվածքի իր տրամաբանությունն ունի, որ ենթարկված է կանխադիր գաղափարին: Ամբոխները գրավում են կայարանը, և կարծես դրասնով էլ պիտի ավարտվեր պոեմը: Բայց դա միայն մասնակի չափով է թուլացնում գործողության լարվածությունը, որպեսզի այն հետո ավելի ուժեղանա: Եվ այդպես էլ լինում է: Ամբոխները դեռ չեն հասել գլխավոր նպատակին. նրանք դեռ պետք է գրավեն քաղաքը: Գործողությունը նորից դառնում է դինամիկ, ավելի սուր, քան առաջ, և պոեմի վերջին գլխում հասնում է առավելագույն լարվածության. ոգևորված ամբոխները դուրս են նետվում կայարանից ու գնում են քաղաքի վրա... Հանգուցալուծման պահը տեսանելի չէ, բայց հեռանկարում իրոք մահանգամայն հավաստի է...

Ստացվում է առաջին հայացքից տարօրինակ երևույթ. փոքրածավալ էպիկական կառույցի մեջ կա երկու հանգույց և երկու հանգուցալուծում: Բայց դա բխում է պոեմի բովանդակությունից, հեղինակի գաղափարական կանխադրությից և տեղին ու բնական է թեկուզ հենց այլաբանական իմաստով. ամբոխները հաղթանակ են տարել հին աշխարհի նկատմամբ (առաջին լուծում), բայց դեռ պետք է վերջնականապես հաղթահարեն հնի դիմադրությունը, պահպանեն ձեռք բերածը (երկրորդ լուծում): Պոեմի նման կառուցվածքը արտահայտում է առկա իրականությունը, եթե նկատի ունենանք գրության ժամանակը...

Պոեմի կոնֆլիկտը բացահայտվում է ենթատեքստում, հիմնական գործողությունների հետևում: Բախվում են երկու հակադիր աշխարհներ: Բայց եթե ամբոխները իրենց զրնգուն արշավով տեսանելի են պոեմի սկզբից մինչև վերջ, ապա թշնամին երևում է «հազարամյա զանգվածի» քաղաքի մութ այլաբանությամբ և նրան շան նման հսկող կայարանի խորհրդանիշով: Այդ մռայլ ու մութ անշարժությունը կենդանության ոչ մի նշան ցույց չի տալիս: Այսինքն՝ աշխարհը շարժման մեջ դնող վճռական ուժը ժողովուրդն է՝ պատմության իրական կերտողը, իսկ իշխողների գորությունը ուրվականի պես վաղ թե ուշ պիտի չքանա... Չարենցի պոեմը, իրոք, իր փոթորկուն ժամանակի էպոսն է: Եվ ինչպես ժողովրդական էպոսները,

հյուսվելով իրական պատմական դեպքերի հիշողությունից, հայտնաբերում ու վավերացնում են մարդկային կեցության հավիտենական օրենքներ, այնպես էլ «Ամբոխները խելագարված» պոեմը, հայտնի իրադարձությունների անմիջական արձագանքը լիելով հանդերձ, ընկալվում է նաև որպես աշխարհում հնի և նորի, ազատության ու բռնության, ստի ու ճշմարտի, վերջապես՝ չարի ու բարու մշտագո հակադրության ու պայքարի գեղարվեստական վավերագրություն և չի կարող հնանալ, ինչպես չեն հնանում էպոսները...

Պատկերների առատությունն ու ճոխությունը «Ամբոխները խելագարված» պոեմում առաջին պահ շփոթեցնում են ընթերցողին: Այդպես երբ մարդ հանկարծակի ընկնում է իր համար անծանոթ ու գեղեցիկ մի վայր, միանգամից չի կարողանում ընկալել ամեն ինչ և մնում է շվարած: Բայց երբ ընտելանում է միջավայրին, հետզհետե բացահայտվում է առանձին մանրամասների արժեքը ընդհանուր գեղեցկության մեջ, ավելի հասկանալի է դառնում ինքը՝ ընդհանուրը: Ճիշտ այդ վիճակում է հայտնվում ընթերցողը պոեմն առաջին անգամ ընթերցելիս: Թվում է, թե պատկերները թափվում են անկապակից տարերայնությամբ: Բայց հետզհետե ընտելանալով Չարենցի բանաստեղծական լեզվին՝ ընթերցողն սկսում է նշմարել մի ներդաշնակ ու կարգավորված ընդհանրություն, ուր ամեն մի պատկեր, արտահայտություն, գունային ու հնչյունային երանգախաղ իր անփոխարինելի տեղն ու դերն ունի:

Առաջին հերթին աչքի է զարնում չարենցյան էպիտետների անսպասելիությունն ու դիպուկությունը: Բանաստեղծը յուրաքանչյուր էպիտետ գործածում է երևույթի ներքին էությունը բացահայտելու, որոշակի մտածական ու զգացմունքային հակադրեցություն առաջացնելու նպատակով: Ահա մի օրինակ.

Կռվում էին: Սուրում էր մի իրիկնային մարմանդ քամի:

*Սուրալ* և *մարմանդ* բառերը միանգամայն հակադիր իմաստ ունեն: Առաջինը ստեղծում է շարժման, արագության տպավորություն, երկրորդը հանդարտության ու խաղաղության մտապատկեր է ստեղծում: Կարծես տրամաբանական հակասություն է. եթե քամին սուրում է, ապա մարմանդ չէ, եթե մարմանդ է, չի կարող սուրալ: Մինչդեռ այդ երկու բառերի համատեղ գործածությունը ներգործության որոշակի ուժ է հաղորդում տողին: *Մարմանդ*-ը տրամադրում է դեպի խաղաղ ու անդորր իրիկունը, բայց սուրում էր արտահայտության միջոցով հեղինակը հիշեցնում է, որ այդ գեղեցիկ բնության մեջ ահեղ կոթիվ է գնում, որ կյանքն ու մահը գոտեմարտի են բռնված այնտեղ: Հականիշ բառերը պատկերի միասնական հյուսվածքում նոր իմաստ են ստացել:

Մի քանի օրինակներ ևս.

Եվ երգելով կովում էր նա՝ *լուսածայիտ ու ահարկու*:

*Լուսածայիտ* բառը խորհրդանշում է բարձր տրամադրություն, հոգու խաղաղություն, մինչդեռ *ահարկու*-ն ենթադրում է զայրույթ, կործանելու վճռականություն: Հակադիր էպիտետները միավորվելով արտահայտում են ազնիվ կովի մեջ մաքառող մարդու հոգեվիճակը: Նա լուսածայիտ է, որովհետև կովում է արդար գործի համար, ահարկու է, որովհետև անողորք ու անզիջում է պայքարը:

«Շարժվում է խավարը թեն» արտահայտության մեջ *թեն* (թաց, խոնավ) մակդիրը նյութականորեն շոշափելի թանձրություն է տալիս խավարին, որ նաև շարժուն գոյավիճակ է ստանում *շարժվում է* բայով:

Ամենավերացական հասկացությունները Չարենցը կարողանում է դարձնել շոշափելիության աստիճանի որոշ: Պոեմի յուրաքանչյուր տողը մյուս տողերի հետ տրամաբանական ու ենթատեքստային հարաբերությունների մեջ լինելով հանդորձ՝ նաև վառ արտահայտված ինքնուրույն պատկերային միավոր է, որ անմիջապես տպավորվում է ընթերցողի երևակայության ու հիշողության մեջ: Կասկածն, օրինակ, նյութականորեն անշոշափելի հոգեվիճակ է, մարդկային ներաշխարհի անտեսանելի իրողություն: Բայց ահա ինչպես է առարկայացել ու կենդանացել բանաստեղծի գրչի տակ.

Դաշուն է դեմը՝ անձիր, անձայր մի զանգրված խավարամուր,

Ուր նստել է անաչք, անլույս, խորհրդավոր կասկածը մուր,

Շնթռել է, որպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի,-

Շնթռել է թանձր մուժում, որպես անտես մի թշնամի:

Մուր նստել է կասկածը հին ու աչքերով խավարամած

Նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց:

Սա սպասման այն լարված պահն է, երբ մարդ կանգնած է սպառնալից անհայտության առջև: Գիշերային խավարի մեջ երևում է հազարամյա թշնամու՝ քաղաքի սևագույն զանգվածը: Ամբոխները ուր որ է պիտի գրավեն քաղաքը: Բայց ի՞նչ անակնկալներ են սպասում նրանց, ո՞ւմ է վիճակված ողջ դուրս գալու աշխարհացունց այդ կովից: Սյուպիսի պահերին մարդու ամենավտանգավոր թշնամին կասկածն է, որ «շնթռել է, որպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի»: Իրոք անսպասելի ու շեշտակի համեմատություն: Ապա մի ուրիշ պատկեր:

Շարժվում է մուրը կարծես ու խավարով իր աչքերի

Նայում է նա լուրթ աչքերին խելագարված ամբոխների:

Անհուն մթությունը դառնում է մարմնավոր էակ, կանգնում է ամբոխների դեմ-հանդիման և նայում է նրանց աչքերին «խավարով իր

աչքերի» Ոչ թե խավար աչքերով է նայում մուրթը, այլ աչքերի խավարով: Տարբերությունը մեծ է: Առաջին դեպքում խավար մակդիրը սովորական կլիներ (մութի աչքերը իրոք խավար են), մինչդեռ երկրորդ դեպքում *խավար*-ը ստանում է ներգործուն մեծ ուժ, դառնում է առարկայական-նյութական: Առաջին դեպքում գործողությունը կատարում են աչքերը, իսկ խավար մակդիրը միայն օժանդակ դեր է կատարում, երկրորդ դեպքում գործողության «սուբյեկտը» խավարն է: Շարժվող մութի աչքերի խավարը հակադրված է «լուրթ աչքերին ամբոխների»:

Խավարի ու լույսի ավանդական հակադրությունը, որ բանահյուսական ծագում ունի, գործառում է պոեմի տարբեր մասերում՝ ամեն անգամ ձեռք բերելով իմաստային նոր երանգ: Խավարի պատկերը հանդիպում է նաև ոգևորված ամբոխների հոգեվիճակի բնութագրումներում, ինչպես օրինակ ...

Գիշերի դեմ գիշեր է մութ խավարամած նրանց հոգին,

Որ կարոտով մի կրակոտ սպասում է առավոտին:

Խավար է մեծ սիրտը նոցա, բայց խավարում անծայրածիր –

Երկինքներ կան կապուտաչա, հորիզոնն է՛ր՝ անծա յր, անծի՛ր:

Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել է գիշերը մութ –

Հազար բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ:

Կայարանի, քաղաքի գիշերային հեռապատկերում խավարը չարագույժ ու տագնապալի է, մինչդեռ նույն խավարը ամբոխների հոգում հին ծանր կյանքի հուշ-թանձրացումն է, որ, սակայն, փարատվում է լուսավոր առավոտի սպասումով, կապույտ աչքերի բողբոջ կրակներով, անծայր ու անծիր նոր հորիզոններով:

Իսկ ինչի՞ հետ է համեմատվում կրակը, որ վառել էին հակառակորդի բանակում՝ զորքը արթուն պահելու համար.

Ու կրակը այդ կարմակեզ - ահանշան ու վիթխարի –

Մի արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի:

Անսպասելի ու հնչեղ համեմատություն: Ահից խելագարված թշնամին բոլոր տեսակի միջոցներով ուզում է հաղթահարել ահը: Նա վառել է այդ կրակը, որովհետև վախենում է սեփական ներկայությունից, կրակը, որ կարծես սևեռուն զաղափար է խելագարի ուղեղում:

Ամեն ինչ խորհրդավոր է, անսովոր, գիշերային տագնապներով ու կասկածելի սպասումներով լեցուն այդ դաշտավայրում: Երբ սուլում է շոգեքարշը, թվում է, թե այնտեղ մորթում էին «խելագարված մի անասուն», իսկ կայարանը «ցցված է ուղիների խաչակնքման սեղմ հանգույցում՝ «որպես մի հարց, որպես հսկա մի քարացում»: Այդ զարհուրելի դաշտում «քրքջում է մահը», «զրնգում է հրանոթը», իսկ արևը մերթ, «թույն է թքում»,

մերթ «երգ է կարծես»: Ամեն անգամ հանկարծակիի բերող պատկերների այս տարափը ստեղծում է իրական մարտի պատրանք: Տողերի ռիթմի, պատկերների գունախաղի, շեշտերի հնչեղության մեջ կարծես թե լսվում է գենքերի շառաչը, մեռնողների ճիչը, երևում է վերքերից ծորացող արյունը...

Պոեմի պատկերավորման համակարգում կենտրոնական տեղ ունի բնությունը, որ հանդես է գալիս իբրև վիթխարի թատերաբեմ, ուր խաղացվում է արյունալի մի գործողություն: Բայց դա այնպիսի բեմ է, որ ամենին անտարբեր չէ իր վրա կատարվող իրադարձությունների հանդեպ: Այդ բեմը մերթ դառնում է ցասումնալից ու մոռալ, մերթ որոտընդոստ ու մոլեգին, մերթ էլ լուսավոր ու շոյող: Որքան մոռալ է բնությունը պոեմի սկզբում և տագնապներով լեցուն այն գիշերը, երբ ամբոխները անհամբեր սպասում են առավոտին: Անցնում է գիշերը, բացվում է ոսկեդեղն առավոտը: Դուրս է գալիս շողշողուն արեգակը՝ բաղձալի ապագայի խորհրդանշանը: Ու թեև անողոք մարտեր կան դեռ առջևում, բայց կոլոդները գիտեն, որ ազատության ճանապարհը բաց է արդեն: Ցնծում է նաև բնությունը: Կարծես մայր երկիրն էլ բռնված է նույն ոգևորությամբ ու տենդով:

Պոեմի տաղաչափությունը համարյա միատարր է. սկզբից մինչև վերջ իշխում է յամբ-անապեստյան 14-16 վանկանի տողաչափը: Սակայն դա տաղտկալի միօրինակություն չի առաջացնում պոեմում՝ շնորհիվ գործողությունների լարված ընթացքի և բազմերանգ պատկերախաղերի: Մյուս կողմից այդ չափը Չարենցի պոեմը մերձեցնում է էպիկական հերոսավեպերի կառուցվածքին:

Պոեմի լեզուն, դիտված անցյալ դարի 10-ական թվականների գրական հայերենի ընդհանուր համապատկերում, հետաքրքիր հարցադրումների տեղիք է տալիս, որ ուսումնասիրության առանձին թեմա կարող է լինել: Այստեղ միայն մի երկու դիտարկում պոեմի բառապաշարի մասին, որտեղ առանցքային տեղ ունեն տենդագին շարժում ու պայքարի բուռն պայթուս արտահայտող բառերն ու արտահայտությունները: Չարենցը, իր արտահայտությամբ ասած, «անօրինակ թափի» բանաստեղծ է: Նրա զգացմունքների հախուռն հեղեղը սահմաններ չի ճանաչում և դժվարությամբ է տեղավորվում մեր լեզվի բառապաշարի սահմաններում: Ուստի բանաստեղծը առատորեն օգտագործում է ինքնաստեղծ բառեր, որոնք ստեղծագործական երևակայության ծնունդ են և լիովին ենթարկված նրա պատկերամտածողության և հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններին: Օրինակ՝ կարմրածուփ, հրաշուշան, խավարամուրթ, խավարակուռ, արևական, կարմրակեզ, ահանջան և այլն:

«Ամբոխները խելագարված» պոեմն այն եզակի ստեղծագործություններից է, որոնք ժամանակի ընթացքում չեն գունաթափվում, չեն

կորցնում իրենց գեղարվեստական հմայքն ու արդիական նշանակությունը: Երիտասարդ Չարենցի ստեղծագործական պոռթկումի այդ անօրինակ պտուղը ամեն մի նոր սերնդի համար կարող է բացվել նոր խորհրդով ու խորքով, քանի դեռ աշխարհում կա բնություն ու ճնշում, ազատության տենչ ու երազանք...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԱՍԲՈՒՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ» ՊՈԵՄԸ

(տիպաբանական վերլուծության փոր)

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում տիպաբանական վերլուծության ենթարկել Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը, մասնավորապես՝ պոեմի ժանրային տիպը, կառուցվածքը, պատկերային համակարգը, բանաստեղծական լեզվամտածողության յուրահատկությունները, այլաբանական ու խորհրդանշական շերտերը, տիպաբանական աղերսները ժողովրդաէպիկական բանահյուսության հետ:

ПОЕМА ЕГИ Ш Е ЧАРЕНЦА «НЕИС ТОВЫЕ Т ОЛПЫ»

(попытка типологического анализа)

РЕЗЮМЕ

В статье делается попытка типологического анализа поэмы Е. Чаренца «Неистовые толпы», в частности жанровый тип поэмы, структура, образная система, особенности поэтического мышления, языковая фактура, аллегорические и символические пласты, типологические связи с хародно-эпическими традициями.

**Yeghishe Charents "The Crowds Gone Crazy" Poem**

**(An attempt of typological research)**

**RESUME**

In this article the author makes an attempt of typological research of Yeghishe Charents's "The Crowds Gone Crazy" poem. Especially takes into consideration of the type of poem's genre, structure, image system, the poetic and linguistic typicalities, allegoric and symbolic stripes, typological touches with folklore.

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՄՅԱՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի  
և գրականության ամբիոնի դասախոս

ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** նեոռոմանտիզմ, ռոմանտիզմ, գրական – գեղարվեստական հոսանք, ազգային գրականություն, սիմվոլիզմ, հողված, հնդկական Վեդաներ, կյանքի փիլիսոփայություն, հեթանոս գրական շարժում, գրականագիտական – փիլիսոփայական հերմենևտիկայի մեթոդ:

**Ключевые слова и выражения:** Неоромантизм, романтизм, литературно – художественное течение, национальная литература, символизм, статья, индийские Веды, философия жизни, языческое литературное движение, метод литературоведческой – философской герменевтики.

**Key words and expressions:** Neoromanticism, Romanticism, literary – artistic flow, national literature, Symbolism, article, Indian Vedas, philosophy of life, pagan literary movement, literary - philosophical hermeneutics method.

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրականության բարդ և բազմանշանակ երևույթներից է նեոռոմանտիզմը, որի շուրջ ծավալված բանավեճերն ու հակասությունները մինչ օրս էլ վերջնական լուծում չեն գտել: Այս իրողությունը խոսում է երևույթի ներքին, ոչ սովորական «կառուցվածքի» մասին: Միաժամանակ պետք է կարևորել օրինաչափ դարձած այն խառնաշփոթ «կարգավիճակը», որ շարունակ «հետապնդում» է պարզաբանման կարոտ տեսական դրույթներին: Հիշյալ հասկացությունը ևս, ինչպես առհասարակ եվրոպական գրականության ուղղություններ և հոսանքներ անվանող շատ եզրույթներ, շարունակ սահմանվել է, վերասահմանվել և վիճարկվել: Երրորդ կարևոր գործոնը ազգային առանձնահատկությունները չըջանցելու պայմանն է: Նեոռոմանտիզմը՝ իբրև եվրոպական ակունքներից սկզբնավորված գրական-գեղարվեստական հոսանք, պետք է դիտել և գնահատել ազգային գրականության պարույրներում՝ ըստ ազգային կյանքի թելադրած պահանջների, քանզի, եթե ընդհանրապես վեր կանգնենք նշված հասկացության շրջանակներից, ցանկացած երևույթ, ինչպիսին էլ լինի՝ հասարակական, մշակութային թե գուտ գրական-գեղարվեստական,

տարբեր ազգային միջավայրերում, որպես կանոն, ունենում է տարաբնույթ դրսևորումներ: Այս առումով, ըստ էության, պետք է դիտարկել ամերիկացի տեսաբանների այն միտքը, թե «Եվրոպայի ժամանակակից մեծ գրական շարժումները և ոճերը (Վերածնունդ, Բարոկկո, նեոկլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ) դուրս են գալիս մեկ ազգի սահմաններից, թեև այդ ոճերի մշակումների մարզում կան ազգային էական տարբերություններ: ...Խնդիրները տարբեր կլինեն տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում. հավանաբար անկարելի է գտնել ընդհանուր օրենքներ»<sup>1</sup>: Շեշտելով հանդերձ «համընդհանուր և ազգային գրականությունների ներհյուսման» և տարբեր ազգերի գրական համապատկերում «եվրոպական ընդհանուր գեղարվեստական մտածողության կերպափոխման» փաստը՝ հիշյալ վերլուծաբանները որոշիչ դեր են հատկացնում առանձին ստեղծագործողների ուրույն մտահղացումներին և ոճին. «...առանձին երկրներում կան սեփական ձգողական կենտրոններ և կենտրոնախույս ու անհատապես մեծ արվեստագետներ, որոնք շեշտում են մի ազգային ավանդույթի տարբերությունը մյուսից»<sup>2</sup>:

Ջարմանալի չէ, ուրեմն, որ հայ գրականության մեջ ևս նեոռոմանտիզմի տարբերակման հարցը մնում է անկախ. հայկական նեոռոմանտիզմի էությունը քննելիս պետք է հաշվի առնել այդ հոսանքի ինչպես համաեվրոպական միտումները, այնպես էլ ազգային-գրական կյանքի ներքին բնույթով պայմանավորված յուրահատկությունները:

Այս դիտանկյունից ուշագրավ է անվանի գրականագետ Էդ. Ջրբաշյանի մոտեցումը հարցի վերաբերյալ: Իր մի շարք հոդվածներում և տեսական ուսումնասիրություններում նա անդրադառնում է այդ հարցին: Տեսաբանը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական ուղղությունների և հոսանքների բազմաձուփ խառնարանում հիշատակում է նաև նեոռոմանտիզմի մասին՝ այն հատկանշական համարելով Իսահակյանի, Միամանթոյի, Վարուժանի պոեմների և բանաստեղծությունների, Տերյանի և Մեծարենցի քնարական գրվածքների, Շանթի արձակի և դրամատուրգիայի, երիտասարդ Չարենցի վաղ շրջանի երկերի համար:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս դեպքում Ջրբաշյանը նեոռոմանտիզմի շղարշը տարածում է և այնպիսի մի գրողի վրա, որը ժամանակին գերազանցապես մերժողական դիրքորոշում էր ցուցաբերել 20-րդ դարի առաջին տասնամյակներին գրական հորիզոնները ողողած

<sup>1</sup> Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 69, 400:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 72:

տարատեսակ «իզմ»-երի ու «նեո...»-ների նկատմամբ: Խոսքը, իհարկե, իր գրական ըմբռնումներով ու կեցվածքով ամենահակասական մտավորականներից մեկի և նորագույն շրջանի հայ գրականության ամենախրոխտ ու կորովի ներկայացուցչի՝ Եղիշե Չարենցի մասին է: Այս մասին, սակայն, մի փոքր հանգամանալից: 1923 թ. ապրիլին գրած «Արդի ռուսական պոեզիան» վերտառությամբ իր մի հոդվածում Չարենցը, ներթափանցելով ժամանակակից ռուսական քնարերգության դաշտը, ընդհանուր ակնարկ է նետում առկա մեծաթիվ հոսանքների և ուղղությունների խոռոներամ պատկերին՝ ֆուտուրիզմ, սիմվոլիզմ, իմաժինիզմ, նեոկլասիցիզմ, նեոռոմանտիզմ, ակմեիզմ, նիչևոկներ<sup>3</sup> և այլն... Գրողն անվարան այն համոզմունքն է հայտնում, թե թվարկված «իզմ»-երից շատերը ծնվում և մեռնում են՝ գրականության մեջ չնչին հետք անգամ չթողնելով, որովհետև զուրկ են հասարակական հնչեղությունից: Նրա համար, այսպիսով, ելակետ են դառնում «հասարակական այս կամ այն խավի սոցիալական բովանդակությունն» արտացոլելու և, հետևաբար, գրական մշակույթի զարգացմանն այս կամ այն չափով նպաստելու հատկանիշները:

Ինչպես տեսնում ենք, Չարենցն անբարեհաճորեն և նույնիսկ քամահրանքով է վերաբերվում անցանկալի «իզմ»-երի և հատկապես «նեո...»-ների հոսքին՝ դրանց վերագրելով էպիգոնություն, անցյալի արժեքների ձևախախտում. «...Վերոհիշյալ<sup>4</sup> «իզմերի» ջատագովները և հատուկենտ ներկայացուցիչները բոլորն էլ էպիգոններ են, այսինքն՝ հասարակական անցյալ **ֆորմացիայից** ելած անհատներ, որոնք մի կողմից ձգտում են ռեստավրացիայի («**նեո**-իզմերը»), մյուս կողմից՝ գրական **եղած** ձևերի այլանդակացման ու խեղաթյուրման («նիչևոկ»-ները և այլն)»<sup>5</sup>:

Ինչ խոսք, գրողի դժգոհությունն ուներ հիմնավոր պատճառներ. ժամանակի գրական հորիզոնը պաշարած բազմաթիվ ուղղություններից շատերն իսկապես անարժեք ու անմիտ, երբեմն նույնիսկ անհեթեթ գաղափարների ու ձևակերպումների կծիկ էին ներկայացնում:

Կարծում ենք՝ բոլոր «**նեո**...իզմ»-երի, այդ թվում՝ և նեոռոմանտիզմի հանդեպ Չարենցի բացասական վերաբերմունքի և նրան իր

<sup>3</sup> Նիչևոկներ – 1920 թ. Մոսկվայում սկզբնավորված գրական ձևապաշտական խմբակցություն, որը գեղարվեստական ստեղծագործության գերագույն նպատակը համարում էր ոչինչը. այստեղից էլ՝ նրա անունը՝ ռուսերեն «ничего»՝ «ոչինչ» բառից:

<sup>4</sup> Այս շրջանակից, ըստ էության, դուրս են մնում Չարենցի ուշադրությանն արժանացած հոսանքները՝ ֆուտուրիզմ, սիմվոլիզմ, պրոլետարական պոեզիա...

<sup>5</sup> Ե. Չարենց, Երկ. ժող., հ. 6, Եր., 1967, էջ 49:

ստեղծագործական վաղ շրջանում նեոռոմանտիկ դիտող Ջրբաշյանի մոտեցման թվացյալ հակասությունը բխում է նեոռոմանտիզմ կոչվող երևույթի տարբեր ընկալումներից: Չանտեսենք այն կարևոր հանգամանքը, որ նեոռոմանտիկական հոսանքի՝ հստակ սահմանագատման չտրվելու իրողությունը զգալիորեն խոչընդոտում էր նրա մասին պարզորոշ և լիաբուն կարծիք կազմելուն: Չարենցը, ըստ էության, սեղմ եզրագծերի մեջ էր հոսանքը դիտում՝ իբրև բազմաթիվ «նեո...»-ներից հերթականը՝ անշուք ու արհեստաձին, շարքային մի բան՝ այն առանձնացնելով սիմվոլիզմից և համաժամանակյա գրական-գեղարվեստական այլ դրսևորումներից, մինչդեռ, ինչպես հետագա ուսումնասիրությունների ընթացքը ցույց տվեց, այն շատ ավելի տարողունակ և ընդգրկուն տիրույթ էր, քան կարելի էր ենթադրել, և հայ իրականության մեջ հանդես եկավ բավականին ինքնօրինակ ու բարդ համադրությամբ: Եվս մեկ հանգամանք. շարժման կամ հոսանքի ուրվագիծն առավել անորոշ ու տարտամ էր չարենցյան վերոհիշյալ հողվածի գրության ժամանակահատվածում՝ 20-ական թվականների սկզբներին, քան, օրինակ, կես դար անց: Իր հողվածի ժամանակագրությամբ Չարենցն ավելի մոտ էր հոսանքի ծագման ժամանակային ակունքներին, քան տասնամյակների հեռավորությունից այն դիտարկող Ջրբաշյանը, և, բնականաբար, պիտի տարբերվեին երևույթի ծավալային ու խորքային ընկալումները:

Ջրբաշյանի համոզմամբ՝ հայ նեոռոմանտիկներից յուրաքանչյուրի ստեղծագործական կենսամատյանում նեոռոմանտիզմն ունեցավ տարակերպ, չկրկնվող նկարագիր: Հայկական նեոռոմանտիզմի էական առանձնահատկությունը պայմանավորելով դարասկզբի զանազան հոսանքների՝ գերազանցապես սիմվոլիզմի ներգործությամբ, բայց և ռոմանտիկական սկզբունքների որոշակի արտացոլմամբ՝ գրականագետը եզրակացնում է. «Դա մի յուրօրինակ **նեոռոմանտիզմ** էր, որը ծնվեց դասական ռոմանտիզմի ավանդույթների և սիմվոլիզմի խաչաձևումից»<sup>6</sup>:

Վերոնշյալ երկու գծերն իբրև առանձին գրական հոսանքներ դիտելու թեականությունը հիմնավորվում է այն ակնառու հանգամանքով, որ դասական ռոմանտիզմի որոշ հատկանիշների դարասկզբյան վերածնունդը և սիմվոլիզմի նկատելի ազդեցությունները «ինքնագուլիս», անջրպետված երևակումներ չէին, այլ՝ նոր հոսանքն ամբողջացնող հիմնագծեր՝ փոխներթափանցված և փոխպայմանավորված: Ահա թե ինչու Ջրբաշյանը հակված է երևույթը քննելու «մեկ լայն և ընդհանուր «նեոռոմանտիկական-

<sup>6</sup> Էդ. Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, Եր., 2011, էջ 374:

սիմվոլիստական հոսանքի» շրջագծում՝ իր ներկառուցվածքային բազմազան տարբերություններով հանդերձ: Այստեղից էլ՝ վերոհիշյալ իրողությունից բխող հաջորդ դիտարկումը. «Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ դարասկզբի մեր գրականության մեջ չկա ո՛չ «մաքուր ռոմանտիզմ», ո՛չ էլ «մաքուր սիմվոլիզմ»... Այդ պատճառով էլ հայ գրականության մեջ, ի տարբերություն արևմտաեվրոպականի և ռուսականի, դժվար է խոսել ինչպես գրողների որևէ խմբի ստեղծագործության մեջ սիմվոլիզմի ամբողջական դրսևորման, այնպես էլ նրանց կազմակերպական համախմբման մասին»<sup>7</sup>:

Ռոմանտիկական–սիմվոլիստական համադրությամբ ընդհանրացած հոսանքին հարող գրողների գեղարվեստական կոնկրետ դիրքորոշումը որոշվում է երկու միտումներից մեկի գերակայությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է տվյալ ստեղծագործողի գրական նախասիրություններով, ներքին էությանբ, երբեմն՝ հասարակական – քաղաքական պայմաններով:

Հայ գրականագիտության ակնավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ս. Սարինյանը, իր «Հայկական ռոմանտիզմ» (Երևան, 1966) արժեքավոր աշխատության մեջ հիշատակում է նեոռոմանտիզմի մասին, սակայն ոչ իբրև դասական ռոմանտիզմին հավասարաթեք երևույթի, այլ իբրև հաջորդող դարաշրջանի բազմաբնույթ հեղաբեկումներով պայմանավորված ռոմանտիկական մտահայեցության նորօրյա վերածաղկման: Միննույն ժամանակ գրականագետը 20-րդ դարասկզբին հայկական նեոռոմանտիզմի ձևավորման շրջափուլը բնորոշում է իբրև «հայ գրականության ամենահակասական, ամենաբարդ և, ընդամին, ամենահետաքրքրական շրջանը»<sup>8</sup>: Նա ևս նշում է հայկական նեոռոմանտիզմի էական գծերից մեկը՝ հաճախ սիմվոլիզմի հետ միախառնված հանդես գալու առանձնահատկությունը: Բնականաբար, նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները տրամաբանական և մեկնելի են. սոցիալ-քաղաքական սուր և ողբերգական եղելությունների և համընդհանուր հիասթափության ալիքը պիտի հարուցեր գրական-գեղարվեստական այն նորօրինակ արձագանքը, որ ստացավ «նեոռոմանտիզմ» անվանումը:

Իսկապես, դարձյալ անխուսափելի է դառնում ծանրաշուք, ոչինչ չխոստացող իրականության և լուսեղեն, փրկարար հանգրվաններ գտնելու մտայնության բախումը: Այս մասին է վկայում և գոհրապյան հանճարեղ

<sup>7</sup> Էդ. Ջրբաշյան, Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 250-251:

<sup>8</sup> Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Եր., 1966, էջ 523:

բնորոշումը: 1898-ի թվակիր հողվածներից մեկում («Տարեդարձ մը») հռչակավոր հրապարակագիրը դիպուկ ու տպավորիչ մի ասույթով բնութագրել է երկու դարերի սահմանագծին դեգերող իր սերնդի մտավոր ներուժն ու շքեղ պատրանքները. «Հաշիւի ու Նիւթի դարու մը մէջ կ'ապրինք եւ Երագի ու Մտքի դարու գաւակներն ենք»<sup>9</sup>:

Այս դեպքում էլ դեռևս ռոմանտիկներին «ոգեշնչած» համաշխարհային թախծի ուրվականը պիտի սողոսկեր քաղաքական մղձավանջի ծնունդ ծանր տեսիլների, դարասկզբյան տագնապների և անմարմին ակնկալումների թոհուրոհը, «վերամարմնավորվեր» հայկական իրականության մէջ. «Նորից համաշխարհային թախծ, նորից տիեզերական առեղծվածներ, նորից տրտմագին էլեգիա, նորից անկում, նորից փախուստ, նորից տրոհում, բայց և հզոր անհատի և հեթանոսական ուժեղ աստվածների որոնում: ...Հայկական նեոռոմանտիզմը կոչվեց համաշխարհային թախծ կարդալու ազգային ողբերգության սարսափների մէջ»<sup>10</sup>: Մարինյանը ստվերագծում է հայկական նեոռոմանտիզմի ազգային յուրակերպությունը, իրատեսութեն գնահատում այս նոր ռոմանտիզմի անցնելիք ճանապարհը, նրա «հեռանկարայնությունը». այն դատապարտված էր վաղանցուկ գոյության. «Երգի մուսաներն այլևս անկարող էին XIX դարի ռոմանտիկների լեզվով հնչեցնելու ազատությունը, հերոսությունն ու հայրենիքը: Նեոռոմանտիզմը, իր բոլոր ճիգերով հանդերձ, չկարողացավ գեթ որոշ չափով ժառանգել XIX դարի գաղափարների մեծությունը, ազատագրական ծրագրերի ուժն ու հավատը. նա դարձավ սենտիմենտալ, լավագին, ողբասացական, նա պոռթկաց կործանման ահավոր ճիչը, ցավի դառնադետ սարսուռը»<sup>11</sup>: Մարինյանն իր խոսքը եզրափակում է հանրածանոթ իրողության հիշատակմամբ. քաղաքականապես հզոր և պաշտպանված հայրենիքի վերածնման միամիտ տենչերն իրենց տեղը զիջում են ոգեղեն, հոգևոր Հայաստանի՝ Նաիրի երկրի մտապատրանքին:

Հայկական նեոռոմանտիզմի գաղափարաբանությունը գեղագիտական դիտանկյունից մեկնաբանելուն և արժևորելուն են միտված գրականագետ Ստ. Թոփչյանի դիտարկումները: Գեղագետը վերլուծում է հայկական նեոռոմանտիզմի գլխավոր ներկայացուցիչների տեսական-գեղագիտական ժառանգության մի քանի հիմնակետեր: Նա վերհանում և շեշտում է Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Լ. Շանթի և Ռ. Սևակի ստեղծագործության նեոռոմանտիկական «կոլմանները», հանդիպադրում

<sup>9</sup> Գրիգոր Զօհրապ, Երկ. Ժող. չորս հատորով, հ. Գ, Եր., 2002, էջ 276:

<sup>10</sup> Ս. Մարինյան, Հայկական ռոմանտիզմ, էջ 523-524:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 524:

համանմանությունները՝ չանտեսելով դասական ռոմանտիզմին կամրջված լինելու իրողությունը, բայց և առանձնացնելով զուտ նեոռոմանտիկական նրբագծերը: Տեսաբանը կարևորում է այն հիմնորոշ առանձնահատկությունը, որ հիշյալ գրողների գեղարվեստական-գեղագիտական հայացքների, փիլիսոփայական ըմբռնումների վրա նկատելի ներգործություն են ունեցել հին հնդկական փիլիսոփայությունը (մասնավորապես ընդգծվում է Դ. Վարուժանի՝ հին հնդկական վեդաների հոյակապ իմացությունը), հունական դիցաբանությունն իր գեղեցիկ, զարմանահրաշ աստվածների բանաստեղծական հմայքով, գերմանացի փիլիսոփաներ Ա. Շոպենհաուերի և Ֆ. Նիցշեի փիլիսոփայական դրույթները: Դիտելի և ողջունելի է, սակայն, որ Նիցշեից և Շոպենհաուերից նրանք վերցրել են ոչ թե հոռետեսական ու ժխտող ոգին, նրանց փիլիսոփայության մուտք գույները, այլ գեղագիտական-զգացական ատաղձը: «...Հայ գրողները առանց այն էլ հակասական Նիցշեին ընկալում էին էմոցիոնալ մակարդակի վրա՝ ավելի շուտ բանաստեղծորեն, քան փիլիսոփայորեն՝ շատ հաճախ չխորանալով նրա փիլիսոփայական պատկերների, աֆորիզմների, իդեաների, բուն քաղաքական - գաղափարական բովանդակության մեջ...»<sup>12</sup>, - նշում է տեսաբանը:

Թուփչյանը հայկական նեոռոմանտիզմի գեղագիտական ծրագրի հիմնարար կետերից է համարում գեղեցիկի, ուժի և ազատության փոխկապակցման հիմնավորումը. լիարյուն և ցանկալի գեղեցիկը կարող է հասու լինել միմիայն ազատության պայմաններում, քանզի լոկ ֆիզիկապես և ոգով ազատ ժողովրդի գեղարվեստը կարող է տալ գեղեցիկի առողջ և ներդաշն ըմբռնումը: Գրականագետն արժևորում է «տառապանքի և հաճույքի գեղեցկության» նրբիմաստները՝ «հաճույքի գեղեցկությունը» տարբերանշելով իբրև կյանքի հաստատման, իսկ «տառապանքի գեղեցկությունն» իբրև գեղարվեստի հաստատման սկզբունք:

Բնության և հողի արգասավորության, զարնանային հորդազեղ փթթումի խորհուրդը կրող գեղեցիկը հայ նեոռոմանտիկների՝ մասնավորապես Սիամանթոյի և Դ. Վարուժանի քերթվածներում միահյուսվում է «բնության հախուռն տարերքի՝ սիրո» և նրանից արտաբխող սքանչելի արարումի՝ մայրության հետ:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ գեղեցիկի «նեոռոմանտիկական» պատկերացումը այերային ոլորտներում թևածող

<sup>12</sup> Ստ. Թուփչյան, Հայկական նեոռոմանտիզմի էսթետիկայի ուրվագիծ // Հայ էսթետիկական մտքի պատմությունից, հետազոտությունների ժողովածու, գիրք 1, Եր., 1974, էջ 195:

վերացական և նվաղուն խաբկանք չէր, այլ ուներ կենսաբուխ, կենսահաստատ լիցքեր, վառ ու համարձակ գույներ:

Գեղեցիկի ակնհայտ, բայց իմաստավորված պաշտամունքը հայ նեոռոմանտիկների ստեղծագործական յուրահատկություններից է:

Թուփչյանն անդրադառնում է նաև վերածնության գաղափարին: Դա ռենեսանսի չափանիշներով հատկանշվող հանրաժանութ կադապարը չէր: Այս դեպքում ևս հայ նեոռոմանտիկները դրսևորում են ազգային կեցությանը պայմանավորված մոտեցում՝ այն դիտելով իբրև ազգային զարթոնքի և ազատագրական-հերոսական ազնիվ պայքարով նվաճվելիք նոր կյանքի ուղենիշ:

Հայկական նեոռոմանտիզմի գեղագիտության վերաբերյալ Մտ. Թուփչյանի հայացքները այդ տեսության առանցքային դրույթները բացահայտելու ուշադրավ և գնահատելի փորձ են:

Նեոռոմանտիզմին նվիրված բառահոդված է ընդգրկում համահեղինակներ Մելս և Արեն Սանթոյանների՝ վերջին տարիների լույս տեսած «Գրականագիտական բառարան»-ը (Երևան, 2006), որտեղ գիտաբառին տրված սահմանումն առավելապես ընդհանրական բնույթ ունի:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրական կյանքում նեոռոմանտիզմի դրսևորումը նորովի՝ գրականագիտական-փիլիսոփայական հերմենևտիկայի մեթոդով է փորձում մեկնաբանել մերօրյա տեսաբաններից մեկը՝ Մ. Շուլինյանը: Որպես նշված ժամանակահատվածի հայ գրականության գաղափարագեղարվեստական միջուկի վերծանման ելակետ՝ նա ընդունում է Շոպենհաուերի և Նիցշեի՝ կյանքի փիլիսոփայության տեսությունը՝ իր հիմնական դրույթներով: Ըստ վերլուծաբանի՝ այդ հիմնահարցերը սփռված են հիշյալ դարավուրյին պատկանող հայ գրողներից շատերի՝ Մեծարենցի, Տերյանի, Չարենցի, Թեքեյանի, Իստրայի և այլոց ստեղծագործություններում:

Շուլինյանը նեոռոմանտիզմի սնուցիչ ակունք է համարում Նիցշեի Զրադաշտի գաղափարները: Նեոռոմանտիզմը, ի թիվս այլ ճյուղավորումների, ընկալվում է իբրև սիմվոլիզմի ենթաճյուղ, իբրև մի մեծ ընդհանուրի մասնավոր, նեղ դրսևորում. «Ե՛վ եվրոպական, և՛ ռուս, և՛ հայ սիմվոլիզմը հաճախ հանդես է գալիս իր դիվերգենցիաների ամբողջությամբ՝ էսթետիզմ, գիտակցության հոսք, իմպրեսիոնիզմ, «հեթանոսական» գրական շարժում, նեոռոմանտիզմ, ապաբարոյապաշ-

տության գրականություն...»<sup>13</sup>: Տեսաբանի կարծիքով՝ վերոհիշյալ տարբեր դպրոցների կամ մեթոդների համադրությունը բնականոն պատճառահետևանքային կապի արդյունք է:

«Միմլոլիզմ հանրագումարը՝ որպես պատճառ, բխեցրեց ևս երկու հետևանքներ՝ **նեոռոմանտիզմ** գրական ուղղությունը (կամ դպրոցը) և **հեթանոսական** գրական շարժումը: Ե՛վ նեոռոմանտիզմը, և՛ հեթանոսական գրական շարժումը կրկին համաեվրոպական սիմվոլիզմի դիվերգենցիաներից էին»<sup>14</sup>:

Հեթանոսականություն (հեթանոսապաշտություն) հասկացությունը մեկնաբանելիս Շոլիսյանն առաջնորդվում է ընդունված տեսակետով՝ այն անմիջականորեն առնչելով նեոռոմանտիկական աշխարհայացքին, սակայն հիմնածին ատաղձ համարելով Ֆ. Նիցշեի «հեթանոսապաշտության» գաղափարը կամ կյանքի փիլիսոփայությունը: Ճիշտ է, տեսաբանը չի շրջանցում ազգային յուրահատկության գործոնը, բայց որպես գլխավոր կողմնորոշիչ միտում՝ դարձյալ հանդես են գալիս եվրոպական հանրահայտ ակունքները: Այս հարցում մենք համակարծիք ենք գրականագետ Խ. Վարդանյանին, որը նրբամիտ ուսումնասիրողի դիտողականությամբ քննում է երևույթը՝ թերի համարելով ուսումնասիրողներից շատերի՝ «հեթանոս շարժումը» կամ ինքնագո և մեկուսի իրողություն դիտարկելու, կամ էլ «միայն եվրոպական գրական առնչությունների ոլորտում» գնահատելու փորձերը. գրականագետն իրավացիորեն ընդգծում է «ուսումնասիրվող երևույթը հայրենի մշակույթի անցած ուղու և ստեղծած արժեքների համադրությամբ դիտելու» անհրաժեշտությունը<sup>15</sup>: Եվ պատահական չէ, որ նա խոր հայացք է նետում 20-րդ դարասկզբին ծավալված և գեղագիտական հզոր լիցքերով բողբոջած այս աննախադեպ երևույթի՝ ազգային մշակույթի նախընթաց հիմնաշերտերում ձգված արմատներին, իսկ այդ շերտերի և 19-րդ դարավերջի - 20-րդ դարասկզբի կյանքի փիլիսոփայության գաղափարների միջև ժամանակագրական տեսանկյունից ընկած էր երկար դարերի պատկանելի մի հեռավորություն...

Հայկական նեոռոմանտիզմի «ոդիսականը», անշուշտ, ասվածով չի սահմանափակվում. հողվածում դիտարկվեցին հայ գրականագիտական մտքին պատկանող հիմնական տեսական արծարծումները հարցի շուրջ:

<sup>13</sup> Մ. Շոլիսյան, «Կյանքի փիլիսոփայությունը» և XIX դարավերջի – XX դարասկզբի հայ գրականությունը, Եր., 2006, էջ 196:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 231:

<sup>15</sup> Խ. Վարդանյան, Դանիել Վարուժանը և «գրական հեթանոսությունը», Եր., 2006, էջ 9:

Սա, բնականաբար, եզրակետ չէ: Միաժամանակ չանտեսենք այն կարևոր նախապայմանը, որ հայկական նեոռոմանտիզմի գիտական ըմբռնումն անհնար է պատկերացնել առանց այդ երևույթի գրական-գեղարվեստական մարմնավորման՝ ստեղծագործ անհատների երկերի քննության, իսկ դա արդեն սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակից դուրս խնդիր է:

**Արմինե Ադամյան**

**Նեոռոմանտիզմի ըմբռնումը հայ գրականագիտության մեջ**

Ամփոփում

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական գրական – գեղարվեստական հոսանքներից մեկը՝ նեոռոմանտիզմը, յուրահատուկ կերպով դրսևորվեց հայ իրականության մեջ: 20-րդ դարասկզբի գրական ուղղությունների և հոսանքների համապատկերում հայկական նեոռոմանտիզմի որոշման և տարբերակման հարցն այն բարդ և ուշագրավ խնդիրներից է, որը մինչ օրս հետաքրքրում է հայ գրականագետներին:

Հոդվածում դիտարկված են հայկական նեոռոմանտիզմի վերաբերյալ հինգ զգալի տեսակետները (Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Ստ. Թովչյան, Ս. Շուրինյան) հայ գրականագիտության մեջ:

**Армине Аргамовна Адамян**

**Восприятие неоромантизма в армянском литературоведении**

Резюме

Одно из европейских литературно – художественных течений конца 19-ого и начала 20-ого века – неоромантизм, в армянской действительности проявился по-своему. Проблема определения и дифференциации армянского неоромантизма в панораме литературных направлений и течений начала 20-ого века одна из сложных и примечательных, которая до сих пор интересует армянских литературоведов.

В статье рассматриваются основные взгляды армянских литературоведов (Эд. Джрбашяна, С. Сариняна, С. Топчяна, М. Шолиняна) относительно армянского неоромантизма.

**Armine Argam Adamyan**

**The Perception of Neoromanticism in Armenian Literary Criticism**

Summary

One of the European literary art directions at the end of the 19<sup>th</sup> and at the beginning of the 20<sup>th</sup> century – Neoromanticism, was originally displayed in Armenian reality. In the panorama of the literary directions and flows at the

beginning of the 20<sup>th</sup> century, the problem of definition and distinction of Armenian Neoromanticism is one of the complicated and remarkable problems which interests the Armenian literary critics.

Aroused main aspects about Armenian Neoromanticism in Armenian literary criticism (Ed. Jrbashyan, S. Sarinyan, S. Topchyan, M. holinyan) are observed in the article.

«ԱՆԻ» ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Մփյուռք, քաղաքական դիրքորոշում, հայապահպանման գործընթաց, հայալեզու գրականության զարգացում, լիբանանահայ գրական մամուլ, <<Անի>> ամսագիր, մամուլի համապատկեր, գրական միջակություններ, գրական չափանիշներ, Հայաստանի գրողների երկրորդ համագումար, գրական քաղաքականություն:

**Ключевые слова и выражения** Диаспора, политическая ориентация, процесс <<армяносохранения>>, развитие армяноязычной литературы, ливано-армянская литературная пресса, журнал <<Ани>>, литературные средности, литературные стандарты, Второй съезд писателей Армении, литературная политика.

**Key words and expressions:** Diaspora, political position, preserving process, Armenian language development literature, Lebanese-Armenian literary press, Journal <<Ani >>, literary mediocrity, literary exaggeration , Second congress of Armenia writers, literary politics.

Հայ մամուլի պատմությունը, իբրև մեկնակետ ունենալով Հարություն Շմավոնյանի՝ 1794 թվականին լույս տեսած <<Ազդարարը>>, արդեն ավելի քան երկդարյա պատմություն ունի: Այդ ընթացքում հրատարակվել են հազարավոր անուն թերթեր, ամսագրեր, հանդեսներ ու տարաբնույթ պարբերականներ, որոնցից շատերը նշանակալի հետք են թողել հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային կյանքում:

Մեծ եղեռնից հետո ստեղծված հասարակական-քաղաքական կացությունը, գլխավորապես հայկական բազմաթիվ գաղթօջախների ձևավորումը աշխարհի այլևայլ երկրներում, Մփյուռքի գոյավորումը հայալեզու առանց այն էլ բազմանուն մամուլը դարձրին ուղղակի անհաշվելի: <<Օտար ավերում սփռված հայությունը...>>- գրում է գրականագետ Վազգեն Գաբրիելյանը,-...լցված ծննդավայրի ու հայրենիքի զգացողությամբ, իր

սրտի խորքում փայփայելով վերադարձի հույսը, մշտապես ձգտել է ոչ միայն գոյատևել, այլև ապրել հայրեն>><sup>1</sup>: Եվ այդ գոյատևումի, <<հայրեն>> ապրելու հիմնական միջոցներից մեկն էլ, ըստ Վազգեն Գաբրիելյանի, մամուլն է<sup>2</sup>:

Ահա թե ինչու Սփյուռքում լույս տեսած յուրաքանչյուր թերթ ու ամսագիր, անկախ իր քաղաքական դիրքորոշումից, կարևորվել է: Դրանք բոլորն էլ յուրովի նպաստել են Սփյուռքում հայապահպանման գործընթացին: <<...մեր թերթերը մեր պատմութիւնն են ամէն տեղ>>,- չափազանց դիպուկ ու տարողունակ է Մինաս Թէօլէօլեանի այս նկատում-բանաձևումը<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, պետք է առանձնացնել գրական մամուլը, որը հայապահպանման գաղափարն իրականացնում էր առավել համապարփակ ու հեռագնա բնույթով՝ ապահովելով նաև հայալեզու գրականության զարգացումը:

Լիբանանահայ գրական մամուլն իր հերթին բազմաթիվ անուններով է հատկանշվում<sup>4</sup>, և դրանցից յուրաքանչյուրն էլ որոշակի նպաստ է բերել գրական ընթացքի զարգացմանը՝ անկախ քաղաքական և այլ կողմնորոշումներից: Փաստ է այն, որ Լիբանանը, մասնավորապես՝ մայրաքաղաք Բեյրութը, աստիճանաբար դարձավ սփյուռքահայ գրականության կենտրոն. <<Պէյրութ շարունակեց մնալ կեդրօնը Սփիւռքի հրատարակչական եւ գրական ճիգին, ոչ միայն հասաւ Լիբանանի գրական կարիքներուն, այլև լայնօրէն գոհացուց նաեւ արտասահմանը: Ամերիկա, Ֆրանսա կամ Պարսկաստան ապրող տասնեակ մը հեղինակներ, մեկ կողմէ աշխատակցեցան պէյրութահայ գրական մամուլին, միւս կողմէ առանձին հատորներ մեր քաղաքին մէջ: ...Պէյրութ դարձաւ նաեւ Սփիւռքի գրականութեան գնահատող միտքը>><sup>5</sup>, - մի առիթով նկատում է Գրիգոր Շահինյանը:

Վահե-Վահյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ Բեյրութում 1946-1955 թվականների ընթացքում հրատարակված <<Անի>> ամսագիրը կամ խմբագրության բնորոշմամբ՝ <<ամսագիր գրականութեան եւ

<sup>1</sup> Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 8:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Թէօլէօլեան Մ., Դար մը գրականութիւն, հատոր Բ., 1920-1980, Նիւ Եորք, Ոսկետառ, 1982, էջ 100:

<sup>4</sup> Դանիէլեան Ժ., Բանասիրութեան բաւիղներուն մէջ (Երեւան, Մուղնի, 2011) գրքում, էջ 87-146:

<sup>5</sup> Շահինեան Գ., Գրական հաշվեկշիռ, Ահեկան, Պէյրութ, 1968, թիւ 3-4:

արուեստի>>, լիբանանահայ ու ընդհանրապես Սփյուռքի մամուլի պարագծում իր ուրույն տեղն ունի: <<1946-ին, գրող, մանկավարժ եւ խմբագիր Վահե-Վահեանը Պեյրուֆի մէջ լոյս ընծայեց <<Անի>> գրական ամսագիրը. սոյն հանդէսը հրատարակուեցաւ մինչեւ 1955, եւ իր գոյութեան տարիներուն ընթացքին յաջողեցաւ գրական անփոխարինելի միջավայր ու մթնոլորտ պատրաստել գրականութեան համար>><sup>6</sup>, գրում է Մանվել Աղամյանը:

Իր հերթին Արմեն Դարյանը, փոքր-ինչ չափազանցնելով, այսպէս է արժուորում <<Անի>> ամսագրի դերն ու տեղը սփյուռքահայ հատկապէս գրական մամուլի համապատկերում, <<Թէ՛ <<Անի>>էն առաջ եւ <<Անի>>էն ետք կային, եղան ու դեռ պիտի ըլլան գրական հանդէսներ... Բայց ոչ մէկ կասկած... թէ այդ նոր ու նորակերտ Անիին անկումէն ետք, հակառակ Պեյրուֆի, Բարիզի կամ Ամերիկայի մէջ լոյս տեսնող բազմանուն մեր հանդէսներուն, չունեցանք եւ պիտի չունենանք ալ, դժբախտաբար, անոր ծանրութեամբ եւ տարողութեամբ գրական այլ հանդէս մը...>><sup>7</sup>:

Հատկապէս 1945 թվականի ընթացքում թե՛ սփյուռքահայ, թե՛ հայաստանյան գրողներին ու մտավորականներին Վահե-Վահեանի գրած նամակներից պարզ է դառնում, որ <<Անի>> ամսագրի հրատարակության նախաձեռնությունն ու նյութերի հավաքագրումն ավելի վաղ էր սկսվել, քան ամսագրի բուն հրատարակությունը: Համենայն դեպս Արսեն Երկաթին ուղղված 17 հոկտեմբեր 1945 թվակիր նամակի՝ <<Հատորին (նկատի ունի ամսագիրը – Տ. Ա.) հրատարակումը պիտի յապաղի քիչ մը, հեռաւոր երկիրներէ ակնկալուած աշխատակցութիւններու սպասումով>><sup>8</sup> պատճառաբանությունը, գրեթէ նույնությամբ առկա է նաև հետագա օրերին Արշակ Չոպանյանին, Ավետիք Իսահակյանին, Բենիամին Նուրիկյանին, Նիկողոս Սարաֆյանին, Բյուզանդ Թովալյանին և այլ ականավոր գրագետներին գրված նամակներում<sup>9</sup>:

Ամսագրի համար <<Անի>> անունն արդէն իսկ գեղագիտական առաջադրույթի արժեք ուներ և ծրագրային էր. <<Երկիրդածութեամբ ու հաւատաւոր խանդաւառութեամբ յարդարեցինք հիմերը՝ հոգեկան ու

<sup>6</sup> **Աղամյան Մ.**, Գրական մամուլը Հայաստանի եւ Սփյուռքի մէջ, ԱԶԳ օրաթերթ - Մշակույթ, 2010, 24 հուլիս, թիվ 11:

<sup>7</sup> **Դարեան Ա.**, Բանաստեղծը եւ իր գործը, տե՛ս Վահե-Վահեան, Հատընտիր (Պեյրուֆ, 1986) գրքում, էջ 15:

<sup>8</sup> **Վահե-Վահեան**, Բանաստեղծին սիրտը. նամակներ, կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Արամ Սեփեթճեան, Պեյրուֆ, Սիփան հրատ., 2012, էջ 97:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 97-107:

իմացական կառույցի մը գոր <<Անի>> կը յորջորջենք, *նզեկոչելով աւելի փառահեղորեն կրկնելի անցեալի մը ուժեղ թելադրանքները*>><sup>10</sup> (ընդգծումը մերն է – Տ. Ա.): Մյուս կողմից՝ հստակ է արժեքայնության, գեղարվեստական բարձր չափանիշների պահպանման խնդիրը, որը, թերևս, օրախնդիր էր թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում:

Սփյուռքում իրադրության թելադրանքով հայերենով գրող յուրաքանչյուր ստեղծագործողի արարք հերոսության պես էր ընկալվում, որովհետև այդ կերպ ապահովվում էր դիմագրավումը համատարած ուժացումին, և այդ պայմաններում փոքր-ինչ դժվար էր առանձնացնել իրական արժեքները: <<Իհարկէ, սփյուռքահայ գրականության քանակական կշռին միշտ չէ, որ համապատասխանում է որակական կշիռը>>,- այս առումով նկատում է Գեղամ Սևանը և հավելում, որ սփյուռքահայ գրականությունն ասվածի տակ հատկապես այդ շրջանում մտնում էին <<միայն սնափառությունից մեկնած ու սեփական փողի հաշվին, տարբեր գրական դավանանքի, ոճերի և ժանրային ձևերի պատկանող և ամենատարբեր գեղարվեստական մակարդակն ունեցող երկեր, չասելու համար, երևի, ոչ մի մակարդակ չներկայացնող, պարզապես ապշեցնող և զարմանահարույց <<գործեր>><sup>11</sup>:

Իրական արժեքների առանձնացման կարիքը իսկապես կար, որովհետև լեզվապահպանման խնդրին զուգահեռ կար նաև բարձր արժեհամակարգ ու հեռագնա գաղափարաբանություն ապահովելու խնդիրը:

Ահա այս նպատակադրումով է <<Անի>> ամսագիրն իր առաջին համարի <<Սեմին վրայ>> վերնագրով առաջնորդողում հայտարարում. <<<<Անին>>... հիմնովին կը մերժէ մանր փառասիրութիւններ շքեղագարդելու կոչում մը, որ շատ յաճախ եղած է ապերջանիկ շարժառիթը՝ Սփիւռքի իմացական պիտակով ձեռնարկներուն>><sup>12</sup>: Նույն խնդրին է անդրադառնում Վահե-Վահյանը Բենիամին Նուրիկյանին գրած նամակներից մեկում. <<Նորերը ոտքի կեցնելու, իրենց վարանտո քայլերուն վստահութիւն ներշնչելու գործը շատ կարևոր պարտականութիւն մըն է անշուշտ. բայց գրական հանդէս մը իր այդ առաքելութեան համար իսկ, կը

<sup>10</sup> Անի ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուօ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

<sup>11</sup> Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 1997, էջ 27:

<sup>12</sup> Անի ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուօ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

կարօտի ներկայությունը նախ՝ ապացուցուած շուք ու շնորհ ունեցող դէմքերու»<sup>13</sup>:

Մինչդէռ Հայաստանում պատկերը նույնպէս հուսադրող չէր: 1930-ականների կեսերից Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Վահան Թոթովենցի մահը, Գուրգեն Մահարու և մյուսների աքսորն ու գրական գործունեության, ըստ էության, արգելակումը, լայն ասպարեզ էին բացել գրական միջակությունների ու ներբողագիր աշուղների առջև: Գաղափարական, այսպէս կոչված, «պատվերը» հայ գրականությունից ուղղակի դուրս էր մղում ազգային խնդիրները: Գաղափարականացված գրականության պարագայում արժեքայնության գործոնը թելադրվում էր «վերններից», և գրական ընթացքը ոչ այնքան հստակ օրինաչափություններ ու խոստումնալից անուններ էր երևան բերում:

Այդ առումով՝ Սփյուռքի հայության ու մասնավորապէս մտավորականների համար դժվար էր կողմնորոշվել հայաստանյան գրականության գնահատման գործում: Մասնավանդ որ ԽՍՀՄ-ը «փակ» երկիր էր և նրաներսում կատարվող շատ քիչ երևույթներ էին ինչպէս հարկն է ներկայացվում դրսում:

Թեպէտ գրականագետ Վազգեն Գաբրիելյանը պնդում է, թէ «...գոյություն ունեցող հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ սեր ու հավատ ներշնչելու (երբեմն էլ՝ Հայաստանում համահավաքի) մեջ էին տեսնում գրեթէ բոլոր գրողները»<sup>14</sup> իրենց առաջնային խնդիրը, այնուամենայնիվ, հատկապէս 1920-30-ական թվականներին, ընդհուպ 1940-ականների սկիզբը, Խորհրդային Հայաստանի ու այնտեղ ստեղծվող հայ գրականության հանդէպ վերաբերմունքը Սփյուռքի՝ հատկապէս ազգային կուսակցություններին անդամակցող գրողների ու մտավորականների շրջանում գրեթէ թշնամական էր: Իրավացի է գրականագետ Սուրեն Դանիելյանը ամրագրելով հետևյալ իրողությունը. «Սփյուռքահայ գրամշակութային գծին վրայ պէտք է նկատի ունենալ ասանդական կուսակցությունների, քաղաքական-ընկերային շարժումների ու հոսանքների խաղացած էական դերը՝ նոյնիսկ միտումի, կողմնորոշումի՝ երբեմն ծայրայեղութեան հասնող դրսևորումներով յանդերձ: ...յատկապէս

<sup>13</sup> Վահէ-Վահեան, Բանաստեղծին սիրտը. նամակներ, Պէրյոթ, Սիփան հրատ., 2012, էջ 184 :

<sup>14</sup> Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 17:

ձեւաորման շրջանում *սփիւոքահայ գրականությունը նկատելիորէն գաղափարացած է*<sup>15</sup>:

Ուսումնասիրողները առանձնացնում են Սփյուռքի՝ Խորհրդային Հայաստանի հանդէպ ունեցած վերաբերմունքի երկու կերպընկալում.

ա. Մերժում և քննադատություն, որը հիմնականում պայմանավորված էր Հայաստանի խորհրդայնացման փաստով: Այս կերպընկալումը հոռետեսական երանգներ էր պարունակում, քանզի հայության հավատը սահմանափակվում էր Սփյուռքի պարագծում իշխող դրական մտայնություններով, իսկ այստեղ վիճակն այնքան էլ բարվոք չէր, և դրա վկայությունը <<նահանջի>> գրականություն տարագումն ստացած գրականիքողությունն է՝ իր թեկուզև բարձրարվեստ գեղարվեստական իրացումներով:

բ. Ընդունում և ներբողում, որը պայմանավորված էր հայության փրկված բեկորներն ապահով տեսնելու մտահոգությամբ>><sup>16</sup>:

Ընդ որում՝ Հայաստանի հանդէպ վերաբերմունքից, ստեղծագործություններում պատկերվածի հատկապէս գաղափարական բնույթից է կախված եղել, թե այդ գրողը կներկայացվի՝ հայաստանյան ընթերցողին, թե՛ ոչ, կամ՝ ինչպէ՛ս կներկայացվի՝ մամուլային հրապարակումներով, ինչ-որ ժողովածուների մէջ, թե՛ առանձին գրքերով: Այս հանգամանքը, բնականաբար, Սփյուռքի գրականության մասին թյուր ու ոչ լիարժեք պատկերացում էր ձևավորում Խորհրդային Հայաստանում: Այս առումով Գրիգոր Հակոբյանն իր <<Դարձ>> հոդվածում նկատում է. <<...խորհրդային շրջանում Սփյուռքի գրականության հրատարակության չափանիշը միշտ չէ, որ արվեստի հրամայականն էր, բազմաթիվ հեղինակներ ու գրքեր էին տպագրվում արտագեղարվեստական պատճառներով և դեռ փորձում էին հրամցնել իբրև ներկայանալի գրականություն, արտերկրի մշակույթի այցեքարտ: Միտալները տարբեր դահլիճներում փառաբանվում էին, իսկ Հակոբ Օշականն ու Նիկողոս Սարաֆյանը, Ծավարշ Նարդունին ու Կոստան Զարյանը, Արամ Հայկազն ու Էդուարդ Պոյաճյանը, Նշան Պեշիկթաշյանը, Անտոն Մելոյանը, Կարապետ Փոլատյանը, Ահարոն Տատուրյանը և շատ-շատերը արգելված էին, մոռաց-

<sup>15</sup> Դանիէլեան Ս., Միջուկի տրոհումը: Սփիւոքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1. Ներածութիւն, Եր., Զանգակ-97, 2011, էջ 58-59:

<sup>16</sup> Տե՛ս **Սարիբեկյան Հ., Նիկողոսյան Ա.**, Հայաստանի՝ իբրև հայկական ինքնության առանց-քի ընկալումը սփյուռքահայ արդի գրականության համապատկերում, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Արեւյանի անվան գրականության ինստիտուտ, 2010, էջ 4:

ված, և, որ ամենաահավորն ու նողկալին է, ընթերցողի փոխարեն որոշել էին, որ կարդալու, հրատարակելու չեն»<sup>17</sup>:

Անունների ու երևույթների նման «<ըրջունությունն>> ու հստակ չափանիշների բացակայությունն առկա էր նաև հայաստանյան գրականությունը Սփյուռքում ներկայացնելու պարագայում: Ճիշտ է, անհատի պաշտամունքի՝ դրսևորման մեջ գազաթնակետին հասած տարիներին Հայաստանում խոսք չէր կարող լինել խորհրդային կարգերը բացահայտորեն քննադատող գրողների մասին, որոնք իրենց հերթին ջերմ ընդունելության արժանանային Սփյուռքի հակախորհրդային վերաբերմունք ունեցող գրական շրջանակների կողմից, իսկ ահա դրական վերաբերմունք ունեցողներին էլ մեծ մասամբ հրամցվում էր Հայաստանում ստեղծվող գրական-գաղափարական խոտանը:

Գալով «<Անի>> հանդեսի՝ այդ իրարամերժ վերաբերմունքների մեջ կողմնորոշումների խնդրին՝ ընդգծենք այն կարևոր պարագան, որ ամսագրի առաջին համարը լոյս տեսավ 1946 թվականի ապրիլին: Տարեթիվ, որ նախ ընկալվում է բազմահազար սփյուռքահայերի Խորհրդային Հայաստան ներգաղթով: Մյուս կողմից՝ 1946 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը տեղի ունեցավ Խորհրդային Հայաստանի գրողների երկրորդ համագումարը, որի նիստերին մասնակցելու համար հրավիրված էին նաև որոշ սփյուռքահայ գրողներ, այդ թվում՝ «<Անի>> ամսագրի խմբագիր Վահե-Վահյանը, և որտեղ հատուկ անդրադարձ կատարվեց սփյուռքահայ գրականությանը: Այդ առթիվ, ի դեպ, ամսագրի «<Վարչական>> վերտառությամբ ծանուցման մեջ կարդում ենք. «<<Անի>>ի խմբագիրը հրաւիրուած է Սովետ. Հայաստան մասնակցելու համար Հայաստանի Սովետական Գրողներու Երկրորդ Համագումարին, որ տեղի պիտի ունենայ այս Սեպտեմբերին, Երեւանի մէջ»<sup>18</sup>: Որքան էլ տեղեկատվությունը ներկայացվում է ինչ-ինչ պարզաբանումների նպատակով («<Խմբագիրին բացակայութեան հետեւանքով՝ «<Անի>>ի Ջ. Թիւր լոյս պիտի տեսնէ յապաղումով>>, նույն տեղում), այդուհանդերձ կարծում ենք, որ այս ծանուցման նպատակը ոչ այնքան արդարացում է ամսագրի հերթական համարի ուշացման համար, որքան մայր հայրենիքում գրողների համագումարին հրավիրված լինելու փաստի ընդգծումը:

<sup>17</sup> **Հակոբյան Գ.**, Հողվածներ և ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռի հրատ. 2007, էջ 492:

<sup>18</sup> Տե՛ս Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրուօ, 1946, Ա. տարի, օգոստոս, թիւ 5, էջ 282:

Այդ համագումարում հիշատակվեց հատկապես Ավետիք Իսահակյանի ելույթը, որտեղ բանաստեղծը կարևորեց արևելահայ գրականության շուրջ մեկ միասնական գրականություն ճանաչելու գաղափարը, ինչպես նաև Սփյուռքում Խորհրդային Հայաստանի՝ իբրև <<բոլոր հայերի հայրենիքի>> գիտակցության արթնացումը: <<Մեր գրչակիցները...,- շեշտում է Ավ. Իսահակյանը,- պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելությունը: Բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությանը այլասերումից>><sup>19</sup>: Եվ ապա՝ <<Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի, որ ավելի սերտանան ու մտերմանան փոխադարձ հարաբերությունները մայր հայրենիքի և սփյուռքի գրականությունների միջև>><sup>20</sup>:

Եվ վերջապես, պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ յուրաքանչյուր բախտորոշ ժամանակաշրջանի ու իրադարձության դեպքում սփյուռքահայ ու գրական շրջանակներում Խորհրդային Հայաստանի հանդեպ վերաբերմունքի փոփոխություն է նկատվել դեպի դրականը: Իսկ 1946 թվականին նախորդել էր Հայրենական մեծ պատերազմի փաստը, որի հնարավոր զարգացումներից մեկը հայության համար Հայաստանի վերջնական չգոյությունն էր, ինչը, բարեբախտաբար, տեղի չունեցավ:

Վերը նշված բոլոր պարագաներով ու հանգամանքներով էլ պայմանավորված են <<Անի>> ամսագրում ուղենշվող՝ հիմնադրման, գրական քաղաքականության կազմակերպման ու գաղափարական դիրքորոշման յուրահատկությունները:

Հենց առաջին համարից պարզ է դառնում, որ <<Անի>>-ն, ի տարբերություն որոշ այլ գրական ու ոչ գրական պարբերականների, միասնական գրական ընթացքի քաղաքականություն է որդեգրում: Այլ կերպ չես բացատրի հեղինակների այն համամասնությունը, որն առկա է ամսագրի առաջին իսկ համարում: Մի կողմից՝ Բյուզանդ Թոփալյան, Զարեհ Որբունի, Արսեն Երկաթ և ուրիշ սփյուռքահայ գրագետներ, մյուս կողմից՝ Միլվա Կապուտիկյան, Հովհաննես Շիրազ, Գեղամ Մարյան, Աղավնի ու Աշոտ Գրաշի: Այդ կապակցությամբ առաջին համարի առաջնորդողում հստակ ամրագրված է. <<<<Անի>>ն ինքն իրեն արտօնած է

<sup>19</sup> Բացման խոսք Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ Ավ Իսահակյանի, Անի, ամսագիր գրականութեան և արուեստի, Պէրյութ, 1946, Ա. տարի, հոկտեմբեր, թիւ 7, էջ 342:

<sup>20</sup> Բացման խոսք Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահ Ավ Իսահակյանի, Անի, ամսագիր գրականութեան և արուեստի, Պէրյութ, 1946, Ա. տարի, հոկտեմբեր, թիւ 7, էջ 342:

փառասիրութիւնը՝ հանդիսանալու հանգրուանային այն ոստանը, ուր, կարօտագին սրտազեղումով մը, իրարու ձեռք պիտի տան մարդկային եղբայրութեան ու հայ հոգիի փառքին հաւատավորները, Խորհրդային Հայաստանէն եւ Սփիւռքի բոլոր կեդրոններէն, Իրան-Իրագէն մինչեւ Սուրիա-Լիբանան, Եգիպտոսէն մինչեւ Նոր Աշխարհ, Պալքաններէն մինչեւ Ֆրանսա»<sup>21</sup>:

<<Անի>>-ն միացավ Սփյուռքի այն պարբերականներին ու հանդէսներին, որոնց դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի հանդէպ դրական էր: <<<<Անի>> կը յենի համոզումի մը, որ հաւատքի նուիրականութիւնն է ո՛ր յժ է ստացած,- կարդում ենք ամսագրի առաջին համարի առաջնորդողում:- Եւ այդ հաւատքը կը դաւանի, թէ 1920-ին՝ նահատակ հայ ժողովուրդի կեանքին մէջ պատահեցաւ դէպք մը, ուր երջանկաբաղձ զանգուածներու տարերային ուժերը բռնեցին մեր Պատմութեան սայլը թաւալող ցուերուն եղջիւններէն, շրջեցի՛ն այդ սայլին անիւները, ու նգովքը վերածեցին օրհնութեան»<sup>22</sup>:

Կարելի է ասել, որ ամսագրի կարճատև կենսագրությունը, ավելի ստույգ՝ տասը տարին, եղել է առաջին համարում ամրագրված հանգանակային այս ձևակերպումների իրականացման կայուն ընթացք:

Օգտագործված գրականություն

1. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2008:
2. Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը: Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1., Եր., <<Զանգակ-97>>, 2011:
3. Դանիելեան Շ., Բանասիրութեան բավիղներուն մէջ, <<Մուղնի>>, 2011:
4. Դարեան Ա., Բանաստեղծը եւ իր գործը, տե՛ս Վահէ-Վահեան, Հասընտիր, Պէյրութ, 1938:
5. Թէօլէօլեան Ս., Դար մը գրականութիւն, հատոր Բ., 1920-1980, Նիւ Եորք, <<Ոսկետառ>>, 1982:
6. Հակոբյան Գ., Հոլովածներ և ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2007:

<sup>21</sup> Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

<sup>22</sup> Անի, ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

7. Շահինեան Գ., Գրական հաշվեկշիռ, «Ահեկան», Պէյրուօ, 1968, թիւ 3-4:
8. Վահէ-Վահեան, Բանաստեղծին սիրտը. նամակներ, կազմեց, խմբագրեց եւ ծանօթացրեց Արամ Մեփեթճեան, Պէյրուօ, «Սիփան» հրատ., 2012:
9. Սևան Գ., Մփյոռքահայ գրականության պատմության ու վազձեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997:
10. Սարիբեկյան Հ., Նիկողոսյան Ա., Հայաստանի իբրև հայկական ինքնության առանցքի ընկալումը սփյուռքահայ արդի գրականության համապատկերում, Եր., 2010:
11. Աղամեան Մ., Գրական մամուլը Հայաստանի եւ Մփիոքի մէջ, «Ազգ» օրաթերթ-«Մշակույթ», 2010:
12. «Անի», ամսագիր գրականության եւ արուեստի, Պէյրուօ, 1946, Ա. տարի, ապրիլ, թիւ 1:

**ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ**

«ԱՆԻ» ԱՄՄԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում ներկայացված է «Անի» հանդեսի ստեղծման և հետագա զարգացման ընթացքի պատմությունը, որի գլխավոր խմբագիրն էր սփյուռքահայ ավագ սերնդի գրող, քննադատ և հրապարակախոս Վահէ-Վահայնը: Գաղթաշխարհի իրականության մէջ հրատարակվող հանդեսների և պարբերակների շարքում «Անի»-ն ունեցավ իր դիրքորոշումն ու հստակ դիմագիծը, ինչպէս նաև գաղափարաբանությունն ու ծրագրային ուղղվածությունը: Հրատարակման շուրջ տասը տարիների ընթացքում այն հետևողականորեն ներկայացրեց ինչպէս սփյուռքահայ, այնպէս էլ հայրենական գրողներին և արվեստագետներին: Ի տարբերություն սփյուռքահայ այլ ամսագրերի ու թերթերի՝ «Անի»-ի հիմնադիրները հենց սկզբից որդեգրեցին դրական վերաբերմունք խորհրդային կարգերի, հետևաբար նաև Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

ТАТЕВИК АШЧЯН

ОСОБЕННОСТИ ОСНОВАНИЯ И ОРГАНИЗАЦИИ  
ЛИТЕРАТУРНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ЖУРНАЛА <<АНИ>>  
РЕЗЮМЕ

В статье представлена история создания и дальнейшее развитие журнала <<Ани>>, созданного представителем старшего поколения армянской диаспоры, писателем и публицистом Ваэ-Вайяном. В действительности армянской диаспоры издается множество газет и периодических изданий, в этом перечне <<Ани>> имеет свою позицию и черты, праграмное направление и идейность. Журнал, издаваемый почти десять лет (1946-1955гг.), последовательно представлял писателей и искусствоведов не только диаспоры, но также и отечественных, становясь особым мостом между родиной и диаспорой. В отличие от ряда других периодических изданий, издаваемых диаспорой, основатели журнала <<Ани>> симпатизировали советскому строю и имели положительную ориентацию по отношению к родине.

TATEVIK ASHCHYAN

SPEISIFICS OF FOUNDATION AND LITERARY MANAGEMENT  
OF JOURNAL <<ANI>>

Summary

The process of creation and further development of the journal <<Ani>> revised by the representative of the senior generation of the Armenian diaspora, writer, publicist Vahe Vahyan presented in the article. Among many newspapers and periodicals <<Ani>> had its unique place. As it was characterized by the editorial staff the periodical consistently preseted not only Lebanese-armenian writers but also other Armenian writers and artists serving as a kind of bridge between diaspora and Motherland. In contrast to other periodicals published abroad <<Ani>> sympathized with the Soviet regime.

ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՈՒԺԵՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Ռ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ  
«ԾԻՐԱՆԻ ԾԱՌԵՐԻ ՏԱԿ» ՎԵՊՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ** Քաղաքացիական հասարակություն, ուժեղ անհատներ, ուժեղ պետություն, հեղափոխություններ, հակասություններ և հակադրություններ, բնական ընտրությունից հեռացում, քաղաքակրթություն, հակասությունների գործընթաց, իշխանավոր:

**Ключевые слова и выражения:** Гражданское общество, сильные личности, сильная страна, революции, противоречия и контрасты, отдаление от естественного отбора, цивилизация, процесс противоречий, чиновник.

**Key words and expressions:** civil society, strong personality, powerful state, revolutions, contradiction and opposition, moving away from natural choice, civilization, contradiction process, ruler.

Ռուբեն Հովսեփյանը հայ նորագույն գրականության ինքնատիպ դեմքերից է, ում ստեղծագործությունները հիրավի արժանի են ուշադրության, համակողմանի վերլուծության ու արժևորման: Նրա գեղարվեստական արձակը՝ բազմաժանր ուղղվածությամբ ու թեմատիկ հարցադրումներով, մարդկային կերպարների հոգեբանության բացահայտման, ներաշխարհի փիլիսոփայական ընկալումներով, ազգային կոլորիտի ընդգրկումն ու խորքային մատուցմամբ ոչ միայն քննություն են բռնել ժամանակի մեջ, այլև արժանացել հասարակության լայն շերտերի բարձր գնահատականին:

ՀՀ անկախության և նրան նախորդած տարիները մարդկային շատ արժեքներ փոխեցին, աղավաղեցին տարիներով բյուրեղացած ազգային ու համամարդկային գրված ու չգրված իրողությունները, ինչն էլ Ռ. Հովսեփյանը դարձրել է «Ծիրանի ծառերի տակ» վեպի հիմնական թեմա:

Վեպում ընդգծվում է այն միտքը, որ հակասություններն ու հակադրությունները ոչ թե հասարակության, այլ մարդկանց մեջ պետք է փնտրել: Թեև հասարակարգեր են փոխվում, գաղափարախոսություններ ձևավորվում, հեղափոխություններ իրագործվում՝ ամենը խաբկանք է,

որովհետև շարժումն արգելում են, չեն նպաստում, որ շարժումը թռիչքի համար անհրաժեշտ արագացում ձեռք բերի...

«Հիմա ինձ ամենաշատը հուզում է մեր քաղաքացիական հասարակության կայացման խնդիրը: Այլևս հույս չեմ կապում իշխանությունների և գործող կուսակցությունների հետ: Իմ ցանկությունը պայմանավորված է քաղաքացիական հասարակության կայացմամբ, ինչն էլ կարող է պարտադրել իշխանություններին ու կուսակցություններին՝ վերանայելու մեր ապրելակերպը: Քաղաքացիական հասարակության զարգացումը պիտի թարմացնի վաղուց ի վեր սեփականաշնորհված իշխանությունը և կուսակցություններին: Թարմություն է պետք թե՛ մտածողության, թե՛ կադրային, թե՛ գաղափարական ճահիճը պիտի վերացվի», - իր մտահոգությունն է հայտնում գրողը<sup>1</sup>:

Վեպում արքտրականի որդուն՝ Ավետիքին, հեղինակը կատարել է փիլիսոփայական քայլ՝ կապ ստեղծելով սերունդների կյանքերի միջև: Աքտրականի որդու՝ Ավետիքի հիշողությունների միջոցով Ռ. Հովսեփյանը ներկայացնում է իր մոտեցումները ժամանակի տարբեր իրողություններին, որոնք անդառնալիորեն փոխում են մարդու կյանքի ընթացքը՝ դարձնելով նրան երջանիկ կամ դժբախտ:

«Օիրանի ծառերի տակ» վեպում ես փորձել եմ կապակցել հեռավոր ու մոտ անցյալն ու ներկան, որպեսզի ուրվագծվի մեր ապագան»<sup>2</sup>, - ասում է:

Որքան էլ որ Ռ. Հովսեփյանը անդրադառնում է անցյալին՝ այնտեղ տեսնելով այսօրվա կյանքի արմատները, այնուամենայնիվ, վեպը մեր ապագայի ուրվագիծն է՝ անցյալի իրականությամբ, դասերով ու այդ իրականությունից դասեր քաղելու անհրաժեշտությամբ ապագային ուղղված նոր հայացքով, նոր փիլիսոփայությամբ ու տեսլականով:

«Օիրանի ծառերի տակ» վեպի գրելու առիթի մասին խոսելիս գրողը ցավով նկատում է, որ մեր հեռավոր ու մոտ պատմությունը չէր ձևակերպվել որպես ձեռնարկ կամ դասագիրք, «իսկական, ճշմարիտ, անընդմեջ ու շարունակական պատմության ծարավ է մնացել»<sup>3</sup>:

Ռուբեն Հովսեփյանը որպես հերոսներ ընտրել է պարզ, բարի, իմաստուն, աստվածային պատգամներով ապրող մարդկանց: «Օիրանի ծառերի տակ» վեպում իր սայլակով մրգաչիր և այլ ապրանքներ շուկա բերող Ավետիքի և շուկայում առնող-ծախող Շերեփուկի

<sup>1</sup> «Գրական թերթ», 2013, 04 ապրիլ:

<sup>2</sup> «Գրական թերթ», 2009, 25 դեկտեմբերի:

<sup>3</sup> Նույն տեղում:

երկխոսությունների միջոցով «ջրի երես են հանվում» իրականությունն ավերող երկրի բարքերը. լրտեսները հետևում են սայլապանին, նրա տղային Գոռին, իսկ ակամա գործակալները սովորական մարդիկ են՝ Շերեփուկն ու մյուսները, որոնց հետ հերոսներն անընդհատ փոխշփումների մեջ են:

Դեպքերի զարգացումների ընթացքում, հայրենիքի, պատվի ու խղճի մասին խոսելիս Շերեփուկը հաստատում է, որ հայրենիքը ոչ այլ ինչ է, քան սար, ձոր, անտառ, լիճ, հանք, ջուր...որոնք բոլորն էլ վաճառվում են, մանավանդ, եթե դրանց համար աներևակայելի բարձր գին է առաջարկվում: Քայլ առ քայլ հասունացնելով ասելիքը՝ գրողը մեր առջև բացահայտում է հասարակության տարբեր շերտերում թաքնված հարաբերությունները, որոնց վրա է հենված կյանքի ամենօրյա ռիթմը: Աստիճանաբար, ժամանակային բոլոր իրադարձություններն ու մարդկային հարաբերություններն ընդգծում են ուժեղ, քաղաքացիական հասարակական անհրաժեշտությունը, որն ի գորու կլինի վերացնել մարդկանց և բարոյական արժեքների միջև օրեցօր սեպի պես խրվող անջրպետը:

Ավետիքը ծիրանի այգու հատումից մնացած մի կոճղ էր քաղաք բերել՝ փայտագործ Վարոսի համար, ճանապարհին էլ ձևակերպել ասելիքը. «Վարպետ, երբ սիրտն ու ուղեղը հաշտ չեն, ավելի լավ է մեռնես ու չտեսնես երկուսի էլ պարտությունը... Գեղեցությունը՝ գեղեցկություն, վայելքը՝ վայելք, բայց ծառը նաև բերք պիտի տա, չէ՞...»: Թեև ծառերը թուլացել են և չեն կարողանում դիմադրել հիվանդությանը, բայց վեպի հերոսը մտատանջվում է. «Ծառը որ թուլացավ, որդը ներսից էլ կծնվի»<sup>4</sup>: Սա կարելի է ընկալել որպես փոխաբերական միտք, որը հասարակության և իշխանության աղերսների տիրույթում է...Ուժեղ հասարակություն է պետք, որպեսզի կարողանա դիմակայել ներսից կազմալուծելու յուրաքանչյուր փորձին, որպեսզի մեր ներսի որդը գլուխ չբարձրացնի ու խարխլի գոյություն ունեցող մարդկային բարոյականության հիմքերը, - եզրակացնում է հեղինակը:

Վեպում գրողը ցավով նկատում է, որ հին օրենքները չեն գործում, նորն էլ չկա: Իսկ հեղափոխականները միշտ վարկաբեկել են հեղափոխությունները: «Որևէ մեկն ընկալում է այդ շարժումը՝ որպես

<sup>4</sup> Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, էջ 40:

հակադրությունների միասնական գործընթաց, որպես նյութի շարժման մի ձևի թռիչքանման, հեղափոխական անցում մի այլ ձևի»<sup>5</sup>:

Միրվարդ Ասրյան

### Ամփոփում

ՀՀ անկախության և նրան նախորդած տարիները մարդկային շատ արժեքներ փոխեցին, աղավաղեցին տարիներով բյուրեղացած ազգային ու համամարդկային գրված ու չգրված իրողություններ: Մենք փորձել ենք դիտարկել Ռուբեն Հովսեփյանի «Ծիրանի ծառերի տակ» վեպը՝ հիմնավորելով, որ նրանում արծարծված խնդիրները ժամանակային հստակ վավերագրության արտացոլումներ են և միտված են խթանելու հասարակական կյանքի բարելավման ընթացքը, զարգացումն ու առաջընթացը:

Ռուբեն Հովսեփյանի վեպում ընդգծվում է այն տեսակետը, որ հակասություններն ու հակադրությունները ոչ թե հասարակության, այլ մարդկանց մեջ են: Այս տեսանկյունից գրողը կարևորում է ուժեղ անհատներ ունեցող բարձր քաղաքացիական գիտակցությամբ հասարակություն ունենալու խնդիրը:

Сирвард Асрян

### Резюме

Обретение независимости и последующие годы изменили многие ценности, исказили выкристаллизованные в течении многих лет писанные и неписанные, национальные и общечеловеческие реалии. Мы попытались проанализировать роман <<Под абрикосовыми деревьями>> в том ракурсе, который позволит раскрыть проблемы поднятые в романе и отобразит конкретные исторические документации, направленные на развитие, прогресс и улучшение социальной жизни.

В романе Рубен Овсепян подчеркивает ту точку зрения, которая указывает на то, что противоположности и противостояния находятся не в обществе, а в людях. С этой точки зрения писатель подчеркивает важность проблемы существования сильных личностей в обществе с высоким гражданским самосознанием.

---

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 80:

Summery

Many human values changed during the years of Independence of the Armenian republic and preceding years; some written and unwritten facts of national and universal importance which had already become stable in course of time, were distorted. Trying to consider Rouben Hovsepian's novel "Under apricot trees" we state that the raised problems are precise reflections of that time and are aimed at promoting the process of improvement, development and progress of social life.

In his novel Rouben Hovsepian emphasizes the viewpoint that contradictions and conflicts are not embedded in the society: they are found in people. From this perspective the author highlights the problem of developing a society with high civil consciousness and strong individuals.

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՑԱՆ

ԻՎ.Արքայանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԲԱՐՔԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՓՈՐՁԸ ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. Հակոբ Օշական, Հովհաննես Թումանյան, պատմվածք, տառապանք, բարք, ժողովածու, մեղք, խոնարհ:

**Ключевые слова:** Акоб Ошакан, Оганес Туманян, рассказ, страдание, нрав, сборник, вина, покорние.

**Key words:** Hakob Oshakan, Hovhannes Tumanyan, story, misery, manner, digest, blame, humble.

Հ. Օշականի առաջին ժողովածուն՝ «Խոնարհները», լույս տեսավ 1921 թ., Պոլսում: Այն ընդգրկում էր ընդամենը հինգ պատմվածք՝ «Տոգսանը»<sup>1</sup>, «Տոպիձը»<sup>2</sup>, «Պաղտոն»<sup>3</sup>, «Խենթ Սողմեն»<sup>4</sup> և «Երկինքեն ինկող կինը»<sup>5</sup>: Իսկ ահա 1958 թ. տպագրված ընդհանուր ժողովածուում, «Խոնարհները» խորագրի ներքո հավաքված տասնյակ պատմվածքների կողքին, տեղ գտավ նաև «Շահպազը»<sup>6</sup> վիպակը՝ գրված 1924 թ.: «Խոնարհներ»ի հերոսները գյուղի սովորական մարդիկ էին՝ առօրյա հոգերով, զրկանքներով, սակայն խոր հոգեաշխարհով՝ ընդունակ մեծ հուզումների, տառապանքների ու նաև ընդվզումների, անձնական ու ընկերային ներհակ բախումների: Ճիշտ է, խոնարհները ճակատագրականորեն ողբերգական մարդիկ են, սակայն նրանց կյանքի պատմությունը իմաստավորվում է հոգեբանական պահերի վերլուծումով: Հակադրություն կա նրանց կեցության և զգացումների միջև. կյանքի հատակում հայտնված այդ մարդկանց մեծ դրամային և կործանմանը նպաստում են նրանց կյանք անակնկալ ներխուժած սերերն ու կրքերը: Զգացական նման ըմբռնումը Հ. Օշականը տարածում է նաև իր

<sup>1</sup> «Տոգսանը» առաջին անգամ լույս տեսավ «Ազատամարտ»ում, Կ. Պոլիս, 1910 թ.:

<sup>2</sup> «Տոպիձը» առաջին անգամ լույս տեսավ «Ազատամարտ»ում, 1911 թ.:

<sup>3</sup> «Պաղտոն»՝ «Ազատամարտ»ում, 1911 թ.:

<sup>4</sup> «Երկինքեն ինկող կինը»՝ «Հայ գրականություն» հանդեսում, Իզմիր, 1913 թ.:

<sup>5</sup> «Խենթ Սողմենը»՝ «Ոստան»ում, Կ. Պոլիս, 1920 թ.:

<sup>6</sup> «Շահպազը» լույս տեսավ «Հայրենիք ամսագիր»ում, Բոստոն, 1924 թ.

ճանաչողության վրա, թե ինքը «... կը ճանչնայ իր ժողովուրդը, իր մտքն աւելի, իր ջիղերովը»<sup>7</sup>:

Առօրյա պատմությունների ու ներթաքույց ապրումների միջոցով գրողը բերում է բարձր փորձելով հայտնաբերել ոչ միայն մարդկայինը, ընդհանրականը, այլև այն, ինչ առանձնացնում և բնութագրում է հային: Եվ սա Հ. Օշականի հավատարմությունն է իր ակունքին, նրա կարևոր հանձնառություններից: Հատկանիշ, որը արժևորել է հատկապես Հ. Թումանյանին տված իր գնահատականներից մեկում. «Պ. Թումանյան մեր օրերուն գեղեցիկ երեսոյթ մըն է: Ոչ մէկը մեր բանաստեղծներէն կրցաւ անոր չափ բազմաձեւ եղանակով մը բացատրել մեր հոգին, ըսել կ'ուզեմ՝ հայ հոգին»<sup>8</sup>, որը Հ. Օշականը հուշում էր փնտրել «մեր պատաններուն մեջ»<sup>9</sup>: Նույնիսկ Հ. Թումանյանի «Ամենանուաստ պատար, որ հազիւ կ'երեւայ ու նկարուած ըլլալէ աւելի՝ ուրուագծուած է, իր անիծելու, թելադրելու եղանակովը կը մնայ հայ»<sup>10</sup>:

Հ. Օշական քննադատը նաև հանձնառություն է ստանձնում հիմնավորել քոքորի կերպարի՝ գրականության մեջ մուտք գործելու անհրաժեշտությունը: Ի՞նչ շահ ունեցավ քոքորներից հայ գրականությունը, և ինչքանով է հետաքրքրական նրա կերպարի շուրջ ծավալված ողբերգությունը մեզ համար. «Մեր լման ծնածները սպառած էին իրենց ողբերգութիւնները: Բայց «Խոնարհները» միայն այդ մարդերը իբրև գերան չտնկեց մեր դիմաց: Անոնց քովն ի վեր այդ պատմուածքներու շարքը մեզի բերաւ բարքի, մտայնութեան, մարդկեղէն տագնապի երբեմն, յուզիչ, միշտ շահեկան փշրանքներ»<sup>11</sup>:

Հարցի պատասխանը փորձել են որոնել նաև գրականագետները: Հ. Օշականի բերած նորությունների առումով մեզ գրավում է Գուրգեն Մխիթարյանի նկատառումը. «Մինչև այդ՝ ունէինք գաւառը մեր գրականութեան էջերուն: Ունէինք Հրանդին (իմա՝ Հրանտ Ասատուր -Ա.Վ.) պանդուխտները: Թլկատենցիին լուռ ու սուր ցաւերու կծիկները, Զարդարեանի հեքեթները, Գեղամին (իմա՝ Գեղամ Տեր-Կարապետյան - Ա.Վ.) Մուշէն բերած հծծիւնները»<sup>12</sup>: Շարունակելով միտքը՝ գրականագետը

<sup>7</sup> Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Անթիլիաս, 1982, հ. 10, էջ 50:

<sup>8</sup> Նույնը, Արեւելահայ դէմքեր, Պէրոյթ, 1999թ., էջ 129:

<sup>9</sup> «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1928, թիւ 11, էջ 332:

<sup>10</sup> Օշական Յ., Արեւելահայ դէմքեր, էջ 120:

<sup>11</sup> Նույնը, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 111:

<sup>12</sup> Մխիթարեան Գ., Քառորդ դար գրականութիւն, Գահիրէ, 1946, էջ 160:

արձանագրում է, որ այդ հեղինակներից ոչ ոք չմտավ գյուղացու հոգեաշխարհը, չնայեց պատուհանից ներս: Հ. Օշականն է, որ կարողացավ նրանց համախմբել ու նետել իր «հոգետունը»<sup>13</sup>: Մեկ այլ գրականագետի՝ Գր. Պըլտյանի գնահատմամբ օշականյան գյուղաշխարհը մրցակցության որևէ հնարավորություն չի թողնում. «Խոնարհները դիմանկարներու շարք մըն է, պզտիկ կառուցումներու՝ ուր Օշական – Քիւֆէճեան կը հետապնդէ սեռը, հայ գիւղին սեռային, այսինքն՝ հոգեկան կառոյցին քննութիւնն ու վերլուծումը կ'ընէ: Ինչ որ անշուշտ անօրինակ նորութիւն էր այն օրերուն ու կը մնայ ալ մինչեւ մեր օրերը, այնքան Օշականով պեղուածը եղաւ հազուագիւտ»<sup>14</sup>:

Հ. Օշականի և նախորդների գյուղական կերպարների տարբերությունների վրա ծանրանալով՝ անցյալ դարակեսին Էդ. Բոյաջյանը գրում է. «Իրմէ առաջ բերեր էին ու խառներ Պոլտոյ իրապաշտութեան գաւառի դէմք, գաւառի բարքեր ու քանի մը հեքիաթ: Օշական բերաւ գաւառին խորը աճող կեանքեր, ողբերգութիւն, հոգի: Միբոյ, կիրքի, երազի ու խոր տառապանքի մթին կեանք մը»<sup>15</sup>: Այդ կերպարները ազգային լինելուց, «ցեղի հոգիին բազմաբաւիղ ցանցը»<sup>16</sup> ներկայացնելուց գատ համամարդկային երակ էին բերում, որովհետև նրանց վարքի ու հոգեբանական անցումների դրդապատճառը կիրքն ու սեռականությունն է, այն, ինչ ընդհանրական է բոլորի համար:

Խոնարհների, «քոքուրներ» ճակատագիրը թեն գրեթէ միշտ ողբերգական ավարտ ունի, հեղինակի հոգեբանական քննության եղանակները իմաստավորում են հերոսների՝ տառապալից, երկրորդական թվացող կյանքի պատմությունները: Ապրած զգայություններն ու կրքերը կարծես արագացնում են այդ խեղճ մարդկանց կյանքի դրամատիկ հանգուցալուծումները, ինչը Հ. Օշականը բացում է նրանց առօրյայի, ներթաքույց ապրումների ընդհատ անցումներով: Մա առաջին հերթին ամբողջական բարքագրություն էր՝ շաղախված կենցաղով, վերաբերմունքով, բարոյական նախապաշարումներով, հայացքի խտությամբ, այն ամենը, ինչ ներկայացնում էր կերպարի մեջ մարդկային ավագանը՝ անգամ ազգային շրջանակից այն կողմ:

<sup>13</sup> Օշական Յ. Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 51:

<sup>14</sup> Պըլտեան Գ., Մարտ, Անթիլիաս, 1997, էջ 67:

<sup>15</sup> «Բագին», Պէյրուօ, 1964, Գ տարի, դեկտեմբեր, թիւ 12, էջ 16 (տես Եդ. Պոյաճեանի «Վիպագիրը» հոդվածը):

<sup>16</sup> Մայրիներու շուքին տակ, (Գրական գրոյց Յ. Օշականի հետ) Գրի առաւ՝ Բ. Թաշեան, Պէյրուօ, 1983, էջ 137:

Հ. Օշականը զգուշությամբ էր մոտենում գյուղացու ներաշխարհին, քննում նրան, տեսնում հուզմունք ու զգայություն, ներանձնական կարոտ, բացում տան «անկյուններում» պահված առեղծվածներ, վաղամեռիկ սերերի անվերջանալի պատմություններ, մարդկանց «խոնարհ» ապրումներ, սեռի և կրքի բախում: Նրա գրականության մեջ տիրական էին նախապաշարումների բարքը շրջանցել փորձող հերոսները, որոնց ներապրումի կենսական փոթորկումները դառնում էին ողբերգական ընկալումների նախադուռ: Դա վերաբերում է Պաղտոյին, Տոգսանին, Տոպիճին, Մաղաքին, Համարին՝ համանուն պատմվածքներից. նրանց ապրած ու վերապրած սիրո, կրքի, երազի ու տառապանքի մեծությամբ:

Ինչպես առաջին պատմվածքը՝ «Առաջին արցունքը», այնպես էլ «Պառավին անեծքը» ունեն ենթախորագիր՝ «Գեղի կեանքեն»: Ըստ գրականագետ Գրիգոր Պըլտյանի՝ «Այս կրկնությունը բացայայտ ակնարկություն մըն է գրութեան ոչ այնքան տեղագրութեան, որքան անոր գեղագիտական շրջանակին»<sup>17</sup>, այսինքն՝ գրողը ենթախորագրի միջոցով ևս մեկ անգամ ճշտում է իր՝ գրականություն բերած միջավայրի նախընտրությունից ավելի գրականության ուղղվածության հարցը:

Ժողովրդի կենսակերպի, սովորույթների արտացոլման համար Հ. Օշականը դիմում է ժողովրդախոսակցական լեզվի հարստություններին, այս դեպքում՝ անեծքին: Գյուղական մեղմ, երազային հովվերգության դիմաց հեղինակը արտահայտում է հերոսների բողոքի ձայնը, որը «հայ մամիկի» շուրթերին վերածվում է անեծքի: Այդ դժգոհությունը արդյունք է նաև գավառական կենցաղի անխուսափելի այլակերպումի, մշակութային արժեքների անհետացումի: Հոգեբանական վերլուծությունների մեջ Հ. Օշականը բարքագիր է: Եվ չնայած դժգոհության ու տառապանքի շերտերին, անիծելու պահին անգամ տարաբախտ պառավի վերջին ապավենը հավատն է.

«-Կապուտաւոր, դուն հախէն եկուր: Զուկիս արեւուն դուն դատաւոր եղիր: ... Քիթէն-պինչէն գայ, աղ, աղ-ջուր վազէ, թելուկ- թելուկ քակուի...»<sup>18</sup>:

Անձնական կյանք չունեցող Տուրիկ ապլայի ուսերին է ընկած ընտանիքի հոգսը: Խորհրդավորություն կա նաև նրա ճակատագրի մեջ, ինչին հասու չէ. «Մինչեւ հիմա չէ կրցած հասկնալ, թէ ինչու տունմնայ եղած է: Մնացեալ լը... Մի հարցնէք. գիտնալ ալ մի ուզէք. ամուրիներու

<sup>17</sup> Պըլտեան Գ., Մարտ, էջ 86:

<sup>18</sup> Օշական Յ., Երկեր, Խոնարհները, Խորհուրդներու մեհեանը, Երբ պատանի են, Անթիլիաս, 1988, էջ 25:

զաղտնիքները խորունկ կ'ըլլան. անոնց արցունքը խոշոր»<sup>19</sup>: Եվ այս առումով գրողը նույնպես մեկնություններ չի տալիս:

Տուրիկ ապլայի կյանքն իմաստ է ստանում եղբոր տղային խնամելու և մեծացնելու պատասխանատվությամբ: Հիվանդացած Մարկոսին փրկելու համար պատավը խաբեության գոհ է դառնում և իր ապրուստի վերջին միջոցից գրկվում: Վերջնական հարվածը, սակայն, Մարկոսի կորուստն էր:

Բարքագրական տարրեր են ներառված «Երբ պատանի են» վիպակում<sup>20</sup> և «Հինեն ու նորեն» շարքում, որոնցում գրողը գյուղի համապատկերի խորքի վրա, սիրային պատմությունների միջոցով տեսանելի է դարձնում հայրենի եզերքի գեղեցկությունները, բայց միաժամանակ նաև անհատի տառապանքն ու չգիտակցված մեղքի պատիժը:

Հ. Օշականը այս ամենի կողքին չի մոռանում պատկերել նաև ազգային ավանդույթները՝ Տեառն Ընդ Առաջ, Ծաղկազարդ, Զատիկ, Կանաչ Կիրակիներ, Ծննդի և Կաղանդի հեքիաթներ, որոնք հնարավորություն են տալիս բացել գյուղաշխարհի բարքագրական ինչ-ինչ տարրեր: Այս կերպարների համոզականության առումով բնութագրական է Վահե Օշականի գնահատականը: «Գիւղացի էր, իբրև զգացում, իբրև հաւատք ու կեանքի ոճ: Արեան ձայնը, ճակտի գիրը, ժառանգական գիծը, ցեղային յատկանիշը, ոճիրն ու իր հմայքը եւ պատիժը, նախապաշարումներ, անէծքի ուժը, մահուան նախագագացումը - այս բոլորին կը հաւատար Օշական»<sup>21</sup>:

Այս է պատճառը, որ նախապաշարումներով «հարուստ» գյուղը իր «չգրված օրենքներով», թեկուզ «աշխարհին» կերպարների զոհողության գնով, Հ. Օշականի մոտ մնում է անխաթար: Ըստ մանկության ընկեր Գևորգ Չագրրյանի՝ «Գիւղացի տղան (խոսքը Հակոբ Օշականի մասին է - Ա.Վ.) չկրցաւ հեռանալ ո՛ւղիղմէն ու իր պաշտած ծառը, լիճը, հունձքը, քօքուրները, խոնարհները միշտ իրեն մօտիկը ապրեցան»<sup>22</sup>:

Հ. Օշականը բարքագրության տարրերին հավատարմություն է ցուցաբերում նաև վիպական գործերում, ինչպես օրինակ «Ծակ-պտուկը» և «Մաթիկ Մելիքիսայանը»-ը: Վերջինի առիթով բնութագրական է հենց

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>20</sup> Իրականում այն պատմվածքների շարք է: Վիպակ բնորոշումը հեղինակինն է, որին հետևել են նաև օշականագետները (տես Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, էջ 117):

<sup>21</sup> «Հայրենիք»/ օրաթերթ, Պոսթըն, Յունուար 13, 1979:

<sup>22</sup> «Հայրենիք ամսագիր», Պոսթըն, 1950, թիւ 12, էջ 45: /տես Գևորգ Չագրրյան «Յակոբ Օշական (իր կեանքն ու իր գրականությունը)» հոդվածը/:

հեղինակի խոսքը. «Կը յամենամ այս ամենուն վրայ, վասնզի կը հաւատամ, թէ կեանքեն ամեն վկայութիւն փշրանք մը հոգի է, զոր պարտաւոր ենք փրկել կորուստէ: Մարդ, բարք, ոճիր, նախապաշարում, աղօթք,- բոլորը իրաւունքը ունին պատմութեան դամբարանին»<sup>23</sup>:

Ի դեպ, բարքագրութեան առումով հետաքրքրական են Հակոբ Օշական - Հովհաննէս Թումանյան զուգահեռները: Նրանց միավորիչ, ընդհանրական հատկանիշներին անդրադարձել է գրականագետ Սուրեն Դանիելյանը. «... Ազգային գրական երկու տիրակալներին՝ Յովհ. Թումանեանին ու Յ. Օշականին միաւորում էր բարքագրութեան սուր հակուածութիւնը, որոնց հետաքրքրութիւնների կենտրոնում էին գիւղը, մարդը, միջավայրը, բախումների հոգեբանական եւ պատմաճանաչողական ենթահողը...»<sup>24</sup>:

Ահա հարցադրումների այս շրջանակն էլ կազմել է մեր գիտական հետաքրքրությունների առանցքը:

#### Ամփոփում

Հակոբ Օշականի հերոսները գյուղի սովորական մարդիկ էին իրենց հոգերով ու զրկանքներով: Առաջին երկու պատմվածքներն ունեն խորագիր՝ «Գեղի կեանքեն»: Եվ չնայած դժգոհության ու տառապանքի շերտերին, անիծելու պահին անգամ տարաբախտ պառավի վերջին ապավենը հավատն է:

#### Опыт нравоописательного изображения человека в рассказах Акопа Ошакана

Акоп Ошакан описывает нравы людей, и тех, кто своей жизнью пытается эти нравы обойти. Его первые два рассказа озаглавлены “Из жужни села”. Герой нравописца А. Ошакана, даже несмотря на свое недовольство и страдания, проклиная, тем не мене в последний момент уповает на веру.

---

<sup>23</sup> Օշական Յ., Մաթիկ Մելիքիսանեան, Պէյրուք, 2009, էջ 33:

<sup>24</sup> Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը, Եր., 2011, էջ 64:

Summary

The experience of human welfare character in Hakob Oshakan's stories

Hakob Oshakan represents welfare and confusion of that welfare lives. His heroes bear the unwritten law of the village. His first and second stories have "the life of the village" headline. The hero of Hakob Oshakan even at the moment of damn his bulwark is the hope in spite of the edge of disphasure and suffering.

ՆԵԼԼԻ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՀՆԻ ԵՒ ՆՈՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐՕՏԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳՈՅՆԵՐՈՒՄ  
(ՀԱՄԱՍՏԵՂ ԵՒ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ)

**Բանալի բառեր և արտահայտություններ.** սփիւռքահայ գրականություն, Կարօտի գրականություն, Համաստեղ, Վազգեն Շուշանեան, անցեալի վերակերտում, հնի եւ նորի յարաբերակցություն:

**Ключевые слова и выражения:** литература армянской Диаспоры, литература Памяти, Амастег, Вазген Шушанян, воссоздание прошлого, соотношения старого и нового.

**Key words and expressions:** literature of Armenian Diaspora, literature of Remembrance, Hamastegh, Vazgen Shushanian, recreation of past, correlation of the old and the new.

Կորցրած հայրենիքի վերյուշը դարձաւ սփիւռքահայ գրականութեան առանցքային թեմաներից: 1920-ական թթ. ծննդավայրը կորցրած եւ օտարութեան մէջ յայտնուած սերունդը փորձեց վերակենդանացնել բնաշխարհը, միջավայրը: Կարօտի գրականութիւնը հայեացք էր դէպի անցեալ, դէպի հին արժէքները: Անցեալին վերադառնալը ինքնանպատակ չէր. ետեղեմնեան սերունդը այդպիսով փորձում էր բորբոք պահել վերադարձի յոյսը: Միւս կողմից նոր միջավայրը նոր արժէքներ էր իր հետ բերում, եւ այս սերունդը, բնականօրէն իր մէջ կրելով անցեալի ազգային հիմքերը, յայտնուել էր նորի ու հնի սահմանագծում: Այստեղից էլ հենց ծնում է երկուութիւնը. Ի՞նչ անել՝ ամուր փակել լ դռները աշխարհի առջեւ՝ փորձելով կառչած մնալ երազին, թէ՞ գնալ անսովորին ու անճանաչին ընդառաջ:

Կարօտի գրականութեան ասանդոյթը կապուում է Համաստեղի անուան հետ, ով «Գիւղը» (1924) եւ «Անձրեւ» (1929) պատմուածքների ժողովածուներով բերում էր կորսուած եզերքի պատկերներ՝ անցեալն ընդունելով որպէս ժամանակային «անշարժ» թիրախ:

Սակայն միաժամանակ պէտք է ընդունել, որ կորսուած բնաշխարհի անվերապահ պաշտպանութիւնը բացարձակ յանձնառութիւն չէ Կարօտի գրականութեան ներկայացուցիչների համար: Այդ շարժման սահմանագծում յայտնուած մէկ այլ հեղինակ՝ Վազգեն Շուշանեանը, որի ստեղծագործական համակարգում անցեալի գեղարուեստական

վերակերտումը յենասին է դառնում, բոլորովին այլ դիրքորոշում է որդեգրում հնի եւ նորի ընկալման հարցում: Վ. Շուշանեանը, գնահատելով հինը, տեսնում եւ պաշտպանում է նաեւ նորի իրատունքը, որը նրա համար դէպի քաղաքակրթութիւն տանող ճանապարհ էր եւ չէր առնչուում ազգային դիմագիծը կորցնելու հիմնահարցին:

Համաստեղի եւ Վ. Շուշանեանի ստեղծագործական համակարգում հնի եւ նորի հարցադրումներին անդրադարձել է գրականագէտ Ս. Դանիէլեանը՝ ընդգծելով երկու գրողների սկզբունքօրէն տարբեր մօտեցումները. «Համաստեղը հնի՝ պաշտպանն էր...: Եթէ ընդունում էր անգամ նորի առաւելութիւնները, ելնում էր այն ճանաչողութիւնից, որ նորը չի բախում ազգային նկարագրին... Մեր «անցելատոյզ» գրողը (իմա՝ Վազգէն Շուշանեանը – Ն.Թ.) անսքող կերպով կանգնած է նորի դիրքերին: ...Եւրոպական նիստուկացը ներխուժում է Ռոդոպօ եւ արժանանում հեղինակի անվերապահ պաշտպանութեանը»<sup>1</sup>:

Ամբողջ կեանքում, անգամ հեռաւոր Խաղաղականի ավերին, Համաստեղը չի դադարում իր գիւղի՝ Փերչենճի մասին գրել ու երագել: Գիւղը Համաստեղի համար դրախտի մշուշ էր: Աւելին, հեղինակը գտնում է, թէ սուրբերը «գիւղի սահմաններէն ներս կ'ապրէին»<sup>2</sup>:

Այսպէս, օրինակ, «Համբոյրը» պատմութեան հերոս Կարօ Մարտուպը լեզուակռօի է բռնուում երիտասարդ հարսի հետ՝ պասմայով շալվար ու կապերով կօշիկ հագնելու յանդգնութեան համար: Կարօ Մարտուպի աչքում նման «ալաֆրանկա» բաները աններելի էին ու ուղիղ ճանապարհով տանում էին ազգային բարքի փլուզման. «Հա՛, էդ էր պակաս. պասմայով շալվար, քաղքենի կօշիկ, ինչո՞ւ չէ, վաղն ալ շալվարին վրայ թո՛ղ չանչուլ շարէ: Աստուած վկայ, որ էսպէս երթայ՝ էս գէղը կը փլի, կը փլի, - կը խօսէր Կարօ Մարտուպ ինքնիրեն»<sup>3</sup>:

Համաստեղի համար ւանդոյթները առաջնային են, եթէ անգամ խօսքը սիրոյ մասին է: Զգացմունքը եւս պէտք է «տեղաւորուի» ւանդականի սահմաններում, հակառակ դէպքում կ'արժանանայ հրապարակային պարսաւանքի: Մարուշի եւ Մուրադի համբոյրը «անամօթ» քայլ էր Կարօ Մարտուպի համար. նա ոչ միայն խափանում է մօտակապ հարսանիքը, այլեւ զատում է արտաքին աշխարհից, չի կարողանում ոչ ոքի երեսին շիտակ նայել այլեւս:

<sup>1</sup> Շուշանեան Վ., Ընտրանի, Եր., «Զանգակ 97», 2010, էջ 26:

<sup>2</sup> Համաստեղ, Երկեր Ա. / Գիւղը եւ Անձրեւ, Պէյրուօ, «Համազգային մատենաշար», 1966, էջ ԺԳ:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 294:

Բոլորովին այլ է մօտեցումը Վ. Շուշանեանի «Ճերմակ Վարսենիկ» վեպում: Այն աւարտում է գլխաւոր հերոսների «օրինակելի» համբոյրով: Արձակագրի համար առաջնայինը զգացումնքն է, մարդկային յոյզը եւ կրքի ձեւաւորումի խորհուրդը:

Ինչ մնում է Համաստեղին, նոյնքան ծայրայեղ դիրքորոշում ունեն նորի մուտքի հանդէպ նաեւ ամերիկեան միջավայրում յայտնուած հերոսները, որոնք ոչ մի կերպ չեն ուզում «բացուել» նոր աշխարհին: Գրականագէտ Գր. Շահինեանը բնական է համարում գրողի «փախուստը» դէպի իր ենթակեղերը, քանի որ խորթ միջավայրում հեղինակի համար «լաւագոյն» լուծումը հայ հերոսի ինքնամեկուսացումն է. «Իր բնական միջավայրէն անջատուած եւ նոր ու խորթ աշխարհի մը մէջ յայտնուած որք հոգի մըն է ան՝ ինքն իր վրայ կծկուած եւ նոր իրականութեան հանդէպ վանումի զգացումով համակուած»<sup>4</sup>:

«Երանոս աղբարը» պատմուածքի համանուն հերոսը ամերիկեան միջավայրում չի կարողացել յաղթահարել Երկրի երազը: Անգամ չի ցանկացել ամուսնանալ. Ամերիկայում ապրող հայ կնոջ հետ. ամուսնութիւնն էլ որոշ չափով «դաւաճանութիւն» է: Աշխատանքի խորհուրդն է նահանջել. «Անոր երեւակայութեան մէջ կնիկ մարդը գլխին լաչակ ուներ, լաչակը ծածկած էր ականջները, բերանը, մինչեւ ծայրը քթին: Անոր մազերը հիւսուած, կոնակին ետեւ ձգուած էին: ...**Կիները Ամերիկայի մէջ, աւելի ճիշդ մեղրամումէ շինծու ձեւեր են մարմնի, որ քրտինք չունին**»<sup>5</sup>:

Համաստեղը, ազգայինը պահելու համար փորք-ինչ ծայրայեղ է մօտենում նաեւ հայ եւ օտար մշակոյթների յարաբերութեանը: Ինքնութեան պաշտպանութեան ճանապարհին նա որոշ, ոչ արդարացուած վերապահումներ է դրսեւորում օտար արուեստի նկատմամբ: Վերը նշուած «Երանոս աղբարը» պատմուածքում Չոբան Աստուրի սրինգի հնչիւնների հետ պարզ համեմատութեան մէջ փորձում է մերժել ռուս հռչակաւոր կոմպոզիտոր Սերգէյ Ռախմանինովի երաժշտութիւնը. «Էնոր պէս դավալ բռնող աշխարհի վրայ նէ եկեր, նէ՛ ալ պիտի գայ: ...Էսպէս էր մեր չոբան Աստուրը: Ձեր Խարմանինովին բերնէն ինկեր է, որ ծարուրցած, երեք օր աղ լգած ոչխարները ջուրին քով կեցնէ մէկէն»<sup>6</sup>:

Համաստեղի վերաբերմունքի մէջ, ի հա՛րկէ, ծայրայեղութիւնը բխում է հայօրէն գոյատեւելու ջանքից, որը նպատակ է, իսկ ամէն մի «կողմնակի»

<sup>4</sup> «Համաստեղ» / Միջազգային գիտաժողովի նիւթեր, Եր., 2008, էջ 128:

<sup>5</sup> «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1946, ԻԴ տարի, Թիւ 3 (254) Մայիս-Յունիս, էջ 8: - Ընդգծումը մերն է - Ն.Թ.:

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 10-12:

թեկուզ փոքր հանգամանք, հակադարձութեան առիթ է դառնում, խանգարում հեղինակին իր յետահայեաց (retro) որոնումների ճանապարհին:

Նորի նկատմամբ սկզբունքօրէն այլ դիրքորոշում ունի Վազգէն Շուշանեանը: «Ճերմակ Վարսենիկ» վէպում, օրինակ, նրա համար քաղաքակրթութեան ու առաջադիմութեան մուտքը բոլորովին էլ չի «խանգարում» հիւսել ծննդավայրի հովուերգութիւնը. հեղինակը բաց է պահում պատուհանը նորի մուտքի դիմաց:

Եթէ Համաստեղը արհամարհանքով կարող էր խօսել Ռախմանինովի մասին եւ նախապատուութիւնը տալ հովուի սրինգին, ապա Վ. Շուշանեանի համար իսկական արուեստը ազգութիւն չի ճանաչում: Ըստ Շուշանեանի՝ համաշխարհային մշակոյթի հետ առնչուելը հարստութիւն է. «Գեղջուկ մը յանցաւոր չէ միայն իր տոհմիկ երգերը սիրելուն համար: Բայց երբ նո՛յն գեղջուկը կը յանդգնի արհամարհիլ Պէթովէնի օրինակ Իններորդ Համանուագը յանուն իր եղէգին սոյլերուն,- ցոյց կուտայ միայն իր տգիտութիւնը»<sup>7</sup>:

Հենց այս դիրքորոշման շնորհիւ է, որ գիւղական նոր մտաւորականութեան ներկայացուցիչ Հայրապետ աղան սրճարանում հաճոյքով լսում է Եւրոպայում յայտնի հիթ դարձած «Մատամ Անկօ»-ից հատուած: Հոգ չէ թէ որոշ փոփոխութիւններով, թուրքերէն մեկնաբանութեամբ: Կարելորդ գիւղաքաղաքում քաղաքակրթութեան նոր տարրի առկայութիւնն է: Իսկ Վարսենիկի հնչեցրած Յոհան Շթրաուսի «Գեղեցիկ, Կապոյտ Դանուբը» պարզապէս հերոսուհու ստացած լաւ կրթութեան եւ զարգացման բարձր աստիճանի մասին է վկայում եւ բոլորովին էլ օտարամոլութեան նշան չէ:

Եւրոպական ու պոլսական մշակոյթի եւ նորաձեւութեան ազդեցութիւնը գալիս է տեղ բռնելու հայկական սովորոյթների կողքին, ինչպէս հարսանեկան ծիսակարգը, «դաշնակին, ջութակին կողքին... արեւելեան ինճէ-սագը, թէֆը» եւայլն: Ի տարբերութիւն Համաստեղի պահպանողական մօտեցման՝ Վազգէն Շուշանեանը բերում է կնոջական գեղեցկութեան նոր բանաձեւեր, որտեղ «օտար» ազդեցութիւնները գալիս են ամբողջացնելու հայ կնոջ կերպարը, եւ դրական իմաստով. «Յետոյ Պոլսէն եկած հարսեր կային, իրենց լայնեզր գլխարկներով, իրենց շնորհալի

---

<sup>7</sup> Շուշանեան Վ., Ալեկոծ տարիներ, ԳԱԹ, էջ 474-475:

արդուզարդերով: Անշուշտ կիները կը շարունակէին տան գուլպաները հիւսել՝ բայց տղամարդոց եւ տղոց համար»<sup>8</sup>:

Հեղինակը ապացուցում է, որ նորը իր հետ դրական փոփոխութիւն է բերում, հենց թէկուզ պարզ, կենցաղային օգտապաշտութեան տեսանկիւնից: Այսպէս օրինակ. «Մաքուր հագուիլը թէ՛ հաճոյք կը պատճառէ մարդուս եւ թէ՛ առողջապահական է: Շիտակը եթէ կուզէք՝ քաղքի մեր աղջիկները առաջուն չափ պարկեշտ են: Միակ տարբերութիւնը ան է, որ հիմա քիչ մը աւելի լաւ կը հագուին: Աղէկ ալ կընեն, աւելցուց: Մեր ժողովուրդը քիչ մը բացուելու, կրթուելու պէտք ունի...»<sup>9</sup>, - «բացատրում» է Երուանդը:

Իր հերոսներին օժտելով բարձր իմացականութեամբ՝ գրողը, սակայն, նրանց չի կտրում հայրենի միջավայրից. թէ՛ Հայրապետ աղան, թէ՛ Երուանդը, թէ՛ Վարսենիկը, չնայած ընդառաջ են գնում նորին, միեւնոյն ժամանակ ամուր կառչած են հին ու առողջ արժէքներին: Այսպիսով, նորն ու հինը խաղաղ գոյակցութիւն են հաստատում՝ ապահովելով կեանքի համաչափ ընթացք:

Եթէ ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ չնայած ւաւանդականի ու նորի հարցադրումների մէջ Համաստեղն ու Վ. Շուշանեանը տարբեր մօտեցումներ են ցուցաբերում, նրանց երկուսին միաւորողը ազգային նկարագրի պահպանման սուր ընկալումն է:

Հնի և նորի պայքարը կարօտի գրական հանգոյցներում  
(Համաստեղ և Վ. Շուշանեան)  
Ամփոփում

Յօդուածը նուիրուած է Կարօտի գրականութեանը, նրա ներկայացուցիչներ Համաստեղին եւ Վ. Շուշանեանին: Մասնաւորապէս քննութեան են առնուած այդ գրականութեան մէջ հնի եւ նորի յարաբերակցութեան խնդիրներն ու երկու հեղինակների մօտեցումներում հանդէս եկող տարբերութիւնները:

---

<sup>8</sup> Շուշանեան Վ., Ճերմակ Վարսենիկ, Պէրոյթ, 1960, էջ 45-46:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 158:

"The struggle of the old and the new in the literature of Remembrance  
(Hamastegh and Vazgen Shushanian)"

Summary

The article is devoted to the literature of Remembrance, its representatives Hamastegh and Vazgen Shushanian. Particularly are taken into consideration the problem of correlation of the old and the new in that literature, the differences that are come up with the two authors' approaches.

Борьба старого и нового в литературе Памяти  
(Амастер и Вазген Шушанян)

Резюме

Статья посвящена литературы Памяти, ее представителей Амастера и Вазгена Шушаняна. Особенно учитываются проблемы соотношения старого и нового в этом литературе, различия, которые приходят с подходов двух авторов.

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Արեղյանի անվան  
գրականության ինստիտուտի հայցորդ

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ԴԺՈՒՔ ԵՎ ԴՐԱԽՏ»-Ը՝ ՈՐՊԵՍ ԱՐՅԱԽՅԱՆ  
ԳՈՅԱՄԱՐՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

**Բանալի բառեր.** հուշագրություն, տարեգրություն, պանթյուրքիզմ, տոլստոյականություն:

**Ключевые слова:** мемуары, летописи, пантюркизм, толстовство.

**Key-words:** Memoirs, Chronicles, Panturkism, Tolstoyism.

Արցախյան շարժման և գոյամարտի, հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցերը մշտապես եղել են գրող, հրապարակախոս Զորի Բալայանի ստեղծագործության առանցքային թեմաներից, հատկապես 1980-ական թվականներից ի վեր: Մինչ 1988 թվականը և առավել ևս՝ այդուհետ, գրողը միութենական և հանրապետական տարբեր հարթակներից բարձրաձայնում էր ազգային խնդիրների մասին՝ միաժամանակ տպագրելով բազմաթիվ հոդվածներ ու գրքեր, որոնցում նախանշում է այդ խնդիրների լուծման ուղիները: Լինելով ազգային վերածնության ժամանակաշրջանի իրադարձությունների կիզակետումանմիջական մասնակիցն ու ակնատեսը, տարեգիրն ու լուսաբանողը՝ Բալայանը 1995 թվականին հրատարակում է Արցախյան շարժման և ազատամարտի տարեգրությունը՝ «խրամատներում գրված» (Զ. Բալայան) «Դժոխք և դրախտ» գիրքը: Այստեղ գրողը մի առանցքի շուրջ է համախմբել հայրենիքի, տվյալ դեպքում մարմնացած Արցախի մեջ, զաղափարը՝ պատմությամբ, աշխարհագրությամբ, նյութական և հոգևոր արժեքներով: «Դժոխք և դրախտ» գրքում ժողովրդի քաջ զավակների՝ «վասն հաւատոյ և հայրենեաց» (Եղիշե) նահատակվելու պատրաստականությունը, ոգու ամրությունը Բալայանը յուրովի է արտացոլել:

Ի տարբերություն Արցախյան շարժման մասին պատմող նախորդ գործերի՝ «Դժոխք և դրախտ» գրքում Շարժումն ու ազատամարտը ներկայացված են իրենց նախապատմությամբ: «Դժոխք և դրախտ»-ը Արցախյան պատերազմի պատմության լուրջ տեղեկատու է, որից ընթերցողը տեղեկանում է ռազմական գործողությունների պատճառների և հետևանքների, հայ ժողովրդի նվիրյալ զավակների հայրենասիրության տարբեր դրսևորումների և այլնի մասին: Սա օրագրառումների ժողովածու է

ապրված իրադարձությունների մասին, որոնք Բալայանը հմտորեն միահյուսել է գրքի պատումին:

<<Դժոխք և դրախտ>>-ն առանձնահատուկ է և ժանրային առումով, և կառուցվածքային:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը գրքի կառուցվածքի մասին գրում է. <<Դժոխք և դրախտ>>-ը բարդ կառուցվածք ունի: Ըստ ձևի՝ նոթագրություն է Ղարաբաղյան շարժման մասին: Բայց դա ժամանակագրություն չէ ուղղակի իմաստով, այլ խոհագրություն համապարփակ ըմբռնմամբ: ... գրեթե անհնար է <<սյուժեով>> համակարգել գրքի բովանդակությունը և բնութագրել այն ազատ վերարտադրությամբ>><sup>1</sup>:

Բալայանը <<Դժոխք և դրախտ>> գրքում գտել է պատումի կոմպոզիցիոն այն ձևը, որն ընդունակ է համադրելու ասելիքի բազմազանությունը՝ ապահովելով ստեղծագործության սյուժեի տրամաբանությունը: Գրքում նկարագրվող իրադարձությունները, հերոսները, հեղինակի խոհերը ժամանակային տիրույթում անընդհատ շարժման մեջ են անցյալից ներկա և հակառակը: Թեև սյուժետային գիծն արտաքուստ հաճախ ընդհատվում է՝ ժամանակային տարուբերումների պատճառով, բայց մտքի առումով որևէ խախտում չկա. դրանք հեղինակի մտորումներն են Ղարաբաղյան շարժման, հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ:

Գրքում դեպքերի պատմական հաջորդականությունը շատ հաճախ միտումնավոր խախտված է՝ գերակայությունը տալով իրադարձությունների վերլուծությանը: Գրողը դա հետևյալ կերպ է մեկնաբանում. <<... ժամանակակից ընթերցողն առանց ինձ էլ գիտի, թե ինչ է կատարվել երեկ և ինչ է կատարվում հիմա: Նրա համար շատ ավելի հետաքրքիր է, որ հեղինակն իր հետ կիսի սեփական խորհրդածությունները, այս կամ այն դեպքի մասին իր գնահատականը, պատմական զուգահեռներ անցկացնելու իր փորձերն այնպես, որ կանխվի սխալների կրկնությունը>><sup>2</sup>:

Բալայանի <<Դժոխք և դրախտ>> գիրքը՝ որպես տարեգրություն, առանձնանում է պատմական վկայությունների հավաստիությամբ և ընդհանրացումների մասշտաբայնությամբ, թեմաների ընդգրկունությամբ: Մեծ հմտություն է պահանջվում, որ գրողը պատմությունը մատուցի ոչ թե պատմաբանի, այլ խորաթափանց գրողի աչքերով՝ ներդաշնակելով

---

<sup>1</sup> Սարինյան Ս., Շարունակվող լեզենդ, Ե., 2008, էջ 68:

<sup>2</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 300:

պատմականն ու գեղարվեստականը: Արցախյան հարցի լուծումը՝ որպես Հայ դատի անքակտելի մաս, Բալայանի ստեղծագործություններում դառնում է կյանքի խտացված գեղարվեստական ճշմարտություն: Գրողը ճշմարտացիորեն նկատում է, որ Արցախյան շարժումը <<բարձրացրեց ծնկած ազգը>> (Զ. Բալայան), ստիպեց հասկանալ, որ հայ ժողովուրդը ոչ թե պարզապես հող է կորցրել, այլ իր նախնիների աճյունը, որին միախառնվեցին նաև Արցախյան գոյամարտում իրենց արյունը թափած հայորդիները: Այն կոչում է հայ ժողովրդին չչեղվել ազատագրության ճշմարիտ ուղուց<sup>3</sup>:

Հեղինակը գիրքը նախապես որոշել էր անվանել <<Ծիածան>>: Ծիածանը յոթ գույների համապատասխան հաջորդականությունն է, և եթե նրանցից որևէ մեկը պակասի, հնարավոր է, որ առաջին հայացքից չնկատվի. <<Բայց դա արդեն ծիածան չի լինի: Կլինի վեց գույն, որն այլևս ամբողջություն չի կազմի: Այնպես որ բանակը, ժողովուրդը, ոգին, հոգին, պատմական հիշողությունը, նախնիների կանչը, սերունդների ճակատագրի համար անհանգստության զգացումը՝ այս ամենն ամբողջությամբ վերցրած ծիածանն է: Աստված չանի, որ Ղարաբաղի ծիածանը բաժան-բաժան լինի>><sup>4</sup>:

Մինչ գրքի ամբողջական տպագրությունը, Բալայանը ապագա գրքից հատվածներ էր տպագրում հանրապետական թերթերում, հետևում ընթերցողների արձագանքին: Հետագայում Բալայանը փոխում է գրքի վերնագիրը: Դժվար չէ կռահել, որ գրքի նոր խորագիրը՝ <<Դժոխք և դրախտ>>-ը, ներկայացնում է դժոխային պայմաններում հայտնված դրախտային անկյունում՝ Արցախում տիրող իրավիճակը, դժոխքի և դրախտի սահմանագծում հայտնված հային: Ռուսերեն տարբերակում այն վերտառված է <<Դժոխքի և դրախտի միջև>>, իսկ անգլերեն տարբերակում՝ <<Ղարաբաղի դժոխքը և դրախտը>>, որը 1996 թվականին լույս է տեսել Լոնդոնում: <<Դժոխք և դրախտ>> գրքի անգլերեն տարբերակի համար Բալայանը գրել է ևս մի քանի գլուխ, որոնք չեն մտել հայերեն և ռուսերեն հրատարակությունների մեջ: Դրանք տպագրվել են ռուսալեզու <<Ուրարտու>> շաբաթաթերթի 12 (162) համարում (1996 թ.): Այդ գլուխներում հեղինակն ավելացրել է մի քանի կերպարներ, ովքեր նույնպես իրական անձնավորություններ են (ինչպես Բալայանի գրքի բոլոր

<sup>3</sup> <<Առանց քեզ ժողովուրդը լրիվ չէ>>, գրույց Զորի Բալայանի հետ, Հայ զինվոր, N 36 (901), 15.09.2011-21.09.2011:

<sup>4</sup> Բալայան Զ. Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 13:

հերոսները) և բարոնուհի Քոքսի հետ տարբեր ժամանակներում այցելել են մարտնչող Արցախ:

Բալայանի համար ավանդույթ է դարձել սեփական գրքերի նկարագրողումը: Այդպես է եղել «Օջախ», «Հարկավոր է տղամարդու խոսակցություն» և այլ գրքեր հրատարակելիս: «Դժոխք և դրախտ» գրքում նկարագրողումները լրացնում, ամբողջացնում են տարեգրությունը: Դրանք գրողի գաղափարների, մտքի շարունակությունն են գրաֆիկայի ոլորտում՝ հաճախ հապճեպ արված՝ հնարավորությունն տալով պահպանելու «պատկերի իրական շունչը»<sup>5</sup>:

«Դժոխք և դրախտ» գրքի ութերորդ էջում «Գառնաքար» կոչվող խաչքարի գծանկարն է արված հեղինակի ձեռքով: «Վանդալը» ջարդել է խաչքարը, այն երեք կտոր է եղել: Հեղինակի համար այդ երեք բեկորներից յուրաքանչյուրը հայրենիքի մի մասն է խորհրդանշում՝ Հայաստանի Հանրապետությունը, Սփյուռքը, Արցախը: Բալայանը, սակայն հավատացած է, որ տարիներ անց «Գառնաքարի» խորունկ վերքերը միաձուլվելու են, սպիանալու:

«Դժոխք և դրախտ»-ը Արցախյան գոյամարտին նվիրված այն գրքերից է, որում գոյամարտը քննված է և ռազմական, և պատմական, և քաղաքական, և տնտեսական, և սոցիալ-հոգեբանական ելակետերով: Հեղինակը գրքում հանգամանորեն նկարագրում է Շարժման պատճառները, նշում միաժամանակ մի քանիսը, ներկայացնում Շարժման սկզբի ժամանակային տիրույթի իր տեսակետը: Նա առաջ է քաշում Շարժման համատեքստում պատմականության սկզբունքը: Բալայանը առանձնապես անդրադառնում է Շարժման պատճառներին՝ ցույց տալու համար, որ Շարժումն անսպասելի չէր սկսվել այն հասունացել էր տասնամյակների ընթացքում, և հայ ժողովրդի յուրաքանչյուր սերունդ իր ներդրումն է ունեցել դրա նախապատրաստման գործում: Շարժման սկզբի հետ կապված մտորումները հեղինակի խոսքում բացահայտում են նաև այն մարդկանց, ովքեր կանգնած են եղել Շարժման ակունքներում:

Բալայանը յուրովի է իմաստավորում Արցախյան շարժման սկիզբը: Շատերի համար այն թվագրվում է 1988-ին, սակայն Բալայանը նայում է իրողությանը պատմաբան-փիլիսոփայի հայացքով: Խորամուխ լինելով պատմության քառուղիներում՝ Բալայանը Արցախյան շարժման սկիզբը կապում է այն պատմական իրադարձության հետ, որը նաև ճակատագրական դեր ունեցավ Արցախի հետագա պատկանելության

---

<sup>5</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե. 1995, էջ 7:

հարցի հետ կապված: Այս հարցում Բալայանը համամիտ է պատմաբան Բ. Ուլուբաբյանի հետ, ով Արցախյան շարժման սկիզբը տանում է 1918 թվական. «Ուրեմն. 88-ի փետրվարն սկսվել է 1918-ի մայիսից, երբ Այսրկովկասի արևելյան մասում ստեղծվեց մինչ այդ երբեք գոյություն չունեցած Ադրբեջան. և սա էլ իր նպատակը դարձրեց տիրանալ Արցախ-Ղարաբաղ հայկական մարզին: Արցախը ոտքի ելավ, նետվեց գոյապայքարի, որը շարունակվեց տասնամյակներ, մինչև 1988-ի փետրվարը: Այս կետում այն պայթեց իբրև համազգային վճռի, հանուր հայության ընդվզումի աննախադեպ ու արդար պոռթկում, որը չէր կարող չպսակվել հաղթանակով»<sup>5</sup>:

Փորձելով որոշակիացնել Արցախյան շարժման պատճառները՝ գրողը ցավով մտորում է. «Գուցե դա սկսվեց այն նույն օրը, երբ ազերի վանդալները բուլդոզերով ոչնչացրին Մեծ հայրենականում գոհված իմ հայրենակից զինվորների հուշարձանը, որ կանգնեցված էր Դաշքեսանի շրջանի հայկական Բանանց գյուղում: Իսկ գուցե սկսվեց, երբ գլխին հասցված կացնի հարվածով ուղղակի ակոսի մեջ սպանեցին ութսունամյա հողագործին: Գուցե այն օրը, երբ Ղարաբաղցի ազերի ուսուցիչը և նրա համախոհները գլխին մեխեր գամելով ու աչքերը հանելով տանջամահ արին ութամյա տղային... Ղարաբաղյան շարժման հորդառատ հոսանքը շատ ակունքներ ու վտակներ ուներ: Եվ դրանք միշտ եղել են բռնություն»<sup>6</sup>: Բալայանը Արցախյան շարժման սկսվելու պատճառների թվարկումը ինքնանպատակ չի անում. գրողը ևս մեկ անգամ փորձում է ցույց տալ, որ արցախահայության պայքարը արդար է:

«Դժոխք և դրախտ» գրքում ուշագրավ է նաև պանթուրքիզմի վերաբերյալ գրողի մտորումները: Այս անգամ Բալայանն առանձնապես մատնանշում է ժողովրդագրական պատկերի փոփոխումը Հայաստանում: Նոր ժամանակներում Թալեաթի պանթուրքիստ հետևորդները «...գնացին մշակված ճանապարհով, որը պակաս արդյունավետ չէր, քան յաթաղանը: Դա ժողովրդագրությունն էր»<sup>7</sup>:

Արցախյան շարժումը կասեցրեց ժողովրդագրական պատկերի փոփոխումը՝ Հայաստանը մաքրելով ադրբեջանական տարրից: Ըստ Բալայանի՝ հայ ժողովրդի դատապարտվածությունը նրա երկրի աշխարհագրական դիրքի մեջ է, քանի որ խանգարում է «համայն թուրքերի միավորման»՝ ծրագրի իրականացմանը: Եվ գրողը զարմանում է, որ

<sup>5</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Ե., 1997, էջ 9:

<sup>6</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 10:

<sup>7</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 51-52:

Հայաստանը, դարերի ընթացքում իր վրա ընդունելով «ճակատագրի կործանարար հարվածները», դեռ մի բան էլ «պարտք է մնում նրանց առաջ, ովքեր օգտագործեցին մեր տարածքները, մեր ուժերն ու միջոցները, հասնելու համար իրենց գեոազմավարական նպատակներին»<sup>8</sup>: Ու հավելում այդ ամենի՝ Ալ. Սոլժենիցինը հայտարարում է, որ Ռուսաստանը սխալ է գործել խառնվելով Հայաստանի ու Վրաստանի և նրանց հարևանների վեճերին:

Ինչ վերաբերում է ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ իր հարաբերություններին, Բալայանը ցուցաբերում է պետականության բարձր զգացում. «Գոյություն ունի նախագահ, և դրանով ամեն ինչ ասված է: Հարկավոր է հաշվի առնել դա, ինչպես պետք է հաշվի առնել, որ արևմտյան կիսագնդում գոյություն ունի Ամերիկա մայր ցամաք: Նախագահին ժողովուրդն է ընտրել, և նրա հրամանները պետք է ընդունվեն նորմալ, այդ թվում և նրանց կողմից, ովքեր քվեարկել են դեմ»<sup>9</sup>: Նա քաջ գիտակցում է, որ Հայաստանի առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ իրենց տարաձայնությունների վերհանումը կարող է լինել միայն հոգուտ թշնամուն: Իսկ այդ տարաձայնությունների մեջ առանցքային դեր ունեն պանթուրքիզմի վտանգավորության հարցը, զանազան «նիվանագիտական խաղերը» կապված Ղարաբաղի հեռանկարի և տեղի, «տխրահոջակ» ինքնավարության, ինքնախաբեության հասնող ինքնավար հանրապետության մակարդակի կարգավիճակի բարձրացման հետ: Արցախի հարցի ազգային ինքնորոշման սկզբունքով լուծման հարցում ևս Ջորի Բալայանը հակադրվում է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ով ասում էր, թե «...պատմականության փոխարեն իրականությունը կդառնա մեր ազգային գաղափարախոսության հիմքը»<sup>10</sup>: Ջորի Բալայանի համար գոյություն չունի Ղարաբաղը ճանաչելու կամ չճանաչելու «տխրահոջակ» հարցը: Եվ դրա դեմ ժամանակն էլ է անգոր. «Ոչ այն ժամանակ, երբ իմ հայրենիքը, Ստալինի որոշած սահմաններով ԽՍՀՄ սահմանադրության համաձայն կոչվում էր Ղարաբաղի մարզ, ոչ էլ հիմա, երբ ի պատասխան ԽՍՀՄ-ի կազմից Ադրբեջանական ԽՍՀ-ի պաշտոնական դուրս գալուն, մենք հոջակեցինք Լեոնային Ղարաբաղի անկախ հանրապետություն»<sup>11</sup>:

<sup>8</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 533:

<sup>9</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 119:

<sup>10</sup> Լևոն Տեր-Պետրոսյանի էլոյթը ՀՀՇ 5-րդ համագումարում, 27 հունիսի, 1993 թ.: Տես [w.w.old.payqar.org/am/107](http://www.old.payqar.org/am/107):

<sup>11</sup> Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 292:

Թեև կասկածի տեղիք չի տալիս այն փաստը, որ Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է, Ջորի Բալայանն առաջ է քաշում պատմականության գործոնը: Նա նշում է հատկապես այն փաստը, որ բուն Հայաստանում 1045-ին, իսկ այնուհետև Կիլիկիայում հայկական թագավորությունների անկումից հետո (1375) միայն Արցախն էր պահպանում ինքնիշխանությունը, այնտեղ էին հայոց պետականությունը կրողները, ովքեր պահպանեցին երկրի հոգևոր, պետական և նույնիսկ իրավական ինքնությունը հայ ժողովրդի համար դժվարաշատ տարիներին: Հատկանշական է այն, որ հենց Արցախի մելիքները դիմեցին Ռուսաստանի կայսր Պետրոս Մեծին: Մատնանշելով արցախյան մելիքների ինքնավարության հանգամանքը, 1813 թվականի Գյուլիստանի հայտնի պայմանագիրը՝ որպես պատմական իրողություն՝ Բալայանը գրում է, որ երբ Արցախը մտնում էր ցարական Ռուսաստանի կազմի մեջ որևէ հիշատակություն չկար «Ադրբեջան» կոչվող պետության կամ երկրամասի մասին: Արցախի այդ կարգավիճակը պահպանվել է մինչև XX դարի սկիզբ, երբ Ստալինը և Լենինը, Թուրքիային հաճոյանալու նպատակով երկրամասը բռնակցեցին արհեստականորեն ստեղծված նոր պետական կազմավորմանը՝ Ադրբեջանին:

Գրքի առանցքային հարցերից է նաև Փոլ Գոբլի տխրահռչակ ծրագիրը, ըստ որի առաջարկվում էր Մեդրու տարածքը փոխանակել Արցախը բուն Հայաստանին կապող տարածքի հետ՝ վեց հազար քառակուսի կիլոմետրը վեց հազար քառակուսու հետ: Եթե փոխանակումն իրականություն դառնար, Հայաստանը հայտնվում էր գոյատևման հետ անհամատեղելի դիրքում՝ թուրքական շրջապատման մեջ՝ հաշվի առնելով նաև Վրաստանի Մաոնեուլի շրջանի՝ ադրբեջանցիներով բնակեցված լինելու հանգամանքը:

Բալայանը չէր կարող չանդրադառնալ Գոբլի ծրագրին՝ վեր հանելով դրա հակահայկական ուղղվածությունը և մատնացույց անելով մեծ տերությունների հետապնդած շահերը: Բալայանին չի էլ զարմացնում այն հանգամանքը, որ Գոբլին չէր հետաքրքրում, թե դարերով ով է ապրել այդ հողի վրա, ինչպիսի պատմական և մշակույթի հուշարձաններ է ստեղծել այդ հողի վրա ապրող ժողովուրդը:

«Դժոխք և դրախտ» գրքում հաճախ է հղում կատարում ռուս կրոնական փիլիսոփա, «Իդեալիզմի խնդիրները», «Վեխի» (1909), «Խորքից» ժողովածուների համահեղինակ Նիկոլայ Բերոյանին և ռուս մտավորականության ու նրա դերի վերաբերյալ հոդվածների «Վեխի» լեզենդար ժողովածուին: Հետևելով նրանց՝ Ջ. Բալայանը ներկայացնում է «հայկական տոլստոյականության» իր տարբերակը: Հաճախ է կրկնում, որ խորհրդային իշխանության տարիներին հենց այդ նույն

<<տուլստոյականությունն>> էր քարոզվում: Նա գրում է, որ Արցախյան գոյամարտից առաջ հայերն արդեն նման չէին իրենց նախնիներին: Հայ մարդը չէր զգում իրավունքի և պարտականության միջև գտնվող անխախտելի կապը: Խորհրդային տարիներին հայ մարդը (և ոչ միայն հայը) <<մանկության տարիներից խեղդվում էր անպատասխանատու կոլեկտիվիզմի մեջ... Հայը դժվարությամբ էր զգում, որ ինքն է իր ճակատագրի դարբինը: Մենք հասկանում էինք, որ առաջին հերթին պետք է ձեռքագտնվել...հայկական տուլստոյականությունից, պետք է սպանել նիհիլիստին և ստրուկին>><sup>12</sup>:

Բալայանը նորովի է մոտենում ազգային երևույթներին՝ դիտարկելով դրանք բոլորովին այլ լույսի ներքո: Նա մերժում է ազգային խեղճությունը, քաղաքական անընդունակությունը, սնահավատությունը: Բալայանը, հետևելով ռուս մեծ մտածող Ն. Բերդյասևին, գրում է. <<Հայաստանը շատ պատերազմներ ու ճակատամարտեր է տանուլ տվել այն պատճառով, որ նրա մեջ իշխել է պատերազմի տուլստոյական գնահատականը: Հայ ժողովրդին պայքարի ահեղ ժամին թուլացրել են, դավաճանությունից ու անասնական էգոիզմից բացի, հենց այդ նույն տուլստոյական բարոյական գնահատականները: Այդ բարոյախոսությունը զինաթափ է արել Հայաստանին ու նրան հանձնել թշնամու ձեռքը>><sup>13</sup>:

<<Դժոխք և դրախտ>> գրքում Բալայանը անդրադառնում է նաև Խոջալուի աղմկահարույց դեպքերին՝ մասնավորապես գրքում տեղադրելով 1992 թվականին ռուսական <<Նեգավիսիմայա գազետային>> տված՝ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հարցազրույցից հատվածներ<sup>14</sup>:

Գրքի ամենաուժեղ հատվածներից է Շուշիի ազատագրման նկարագրությունը: Հայրենիքի պատկերը վերարտադրվում ու գնահատվում է հիացմունքով ու սիրով՝ անցնելով անձնական ընկալումների, ապրումների, տրամադրությունների միջով. <<Ոչ մի տեղ այնպես մութ երկինք ու պայծառ աստղեր չկան, ինչպես Ղարաբաղում>><sup>15</sup>:

Գրքի հիմնական խնդիրը լուծելիս Բալայանը ելնում է այն համոզմունքից, որ չարը ամենագոր չէ և նրան կարելի է հաղթել: Չարը դժոխքն է, որը պետք է մեռցնել՝ փրկելով դրախտը: Շուշիի գրավումը

<sup>12</sup> Возрадать дух и мужество-интервью Зория Балаяна, Азг, 11.09.2008.

<sup>13</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 60:

<sup>14</sup> Տե՛ս Я гуманист в душе. Интервью президента А. Муталибова, Независимая газета, 02.04.1992.

<sup>15</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 141:

դժոխքի կործանման սկիզբն է: Շուշիի գրավումը հենց դժոխքը մեռցնելն է: Բայց Բալայանը Շուշիի գրավումը վերջնական հաղթանակ չի համարում: <<Ավելի շուտ դա սեփական ժողովրդի արժանապատվության խնդիր էր>><sup>16</sup>: Բալայանը չի այրում կամուրջները երկու ժողովուրդների միջև. <<...ամեն մի բռնապետության, լինի դա պանթյուրքիզմ, ֆաշիզմ, թե ստալինյան <<սոցիալիզմ>>, գոհ է դառնում նաև սեփական ժողովուրդը: Եվ հենց այն օրվանից, երբ Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ որոշեց պատմական Հայաստանի, Լեզգիստանի և այլ երկրների տարածքում, իսկ իրավաբանորեն՝ Ռուսաստանի տարածքում, ստեղծել թուրքական հանրապետություն, անվանելով այն Ադրբեջանական Սոցիալիստական Հանրապետություն, այդ ժամանակից ի վեր արդեն պարզ էր, որ գոհ են դառնալու ոչ միայն հայերն ու լեզգիները, ռուսներն ու պարսիկները, այլև կովկասյան թաթարները՝ այսինքն թուրքերը, որոնց հետագայում վերանվանեցին ադրբեջանցիներ: Դե ուրեմն ես ո՞նց կարող եմ դեմ լինել մի ժողովրդի, որն ինքը գոհ է դարձել: Ավելին, ես հավատում եմ, որ երբևէ հայ և թուրք ժողովուրդները կգտնեն իրար մոտ տանող ճանապարհները: Դրա համար ընդամենը հարկ կլինի դատապարտել ցեղասպանությունը, որը որպես հանցագործություն՝ վաղեմության ժամկետ չունի, դատապարտել <<Սումգայիթը>><sup>17</sup>:

Բալայանը առաջադրում է նաև ազգի գոյատևման, զարգացման հեռանկարի իր տարբերակը՝ ճապոնական ժողովրդի օրինակով, որը կարողացավ ոչ ասել: <<...Ժողովուրդը, որն ասում է <<այո>>, երբ նրան շահավետ է ասել <<ոչ>>, ապագա չունի: Ամեն ոք չէ, որ կարող է վճռական պահին ասել <<ոչ>>: Որովհետև <<ոչը>> ինքնանպատակ չէ>><sup>18</sup>:

Ժողովրդի գոյատևման հեռանկարը պահանջում է մշակել զարգացման ծրագիր այն ուղղություններով, որը բխում է այդ ժողովրդի յուրահատկություններից, որը նրան անկախացնում է արտաքին ուժերից՝ ժողովուրդների շարքում իր գոյությունը հպարտությամբ շարունակելու համար, այլապես. <<մենք միշտ, գլուխներս կախելով, ասես սպասելով դատավճռի, ստորաքարշությամբ պետք է արտասանենք ուրիշներին շահավետ այոն>><sup>19</sup>:

Բալայանի գիրքը Արցախյան շարժման յուրատեսակ հանրագիտարան է. իրար հաջորդող դեպքեր և դեմքեր, հանդիպումներ ու

<sup>16</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 155:

<sup>17</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 214:

<sup>18</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 548:

<sup>19</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, էջ 548:

ճակատագրեր, որոնց բոլորին միավորում է Արցախյան շարժումն ու ազատամարտը: Գրքի ժանրային նկարագիրը նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ չկա սյուժե՝ որպես այդպիսին, ոչ էլ ավարտուն կերպարներ: Կերպարները իրական, պատմական անձինք են, ովքեր հանդիպում են հեղինակին խրամատներում, նկուղներում՝ թաքնվելով արկերից, հիվանդանոցներում, ճանապարհին... Բալայանի գեղարվեստական պատկերման ուժը հենց այդ կերպարների ներկայացումն է մի քանի վրձնահարվածներով, որոնք ներկայացնում են կերպարների բնորոշ կողմերը:

#### Օգտագործված գրականություն

1. Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Ե., 1995, 589 էջ :
2. Սարինյան Ս., Շարունակվող լեզենդ, Ե., 2008, 332 էջ:
3. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Ե., 1997, 851 էջ:
4. Հայ զինվոր, <<Առանց քեզ ժողովուրդը լրիվ չէ>>, գրույց Ջորի Բալայանի հետ, N 36 (901), 15.09.2011-21.09.2011:
5. "Независимая газета", Я гуманист в душе. Интервью президента А. Муталибова, 02.04.1992.
6. Азг, Возрадать дух и мужество-интервью Зория Балаяна, 11.09.2008.
7. w.w.w.old.payqar.org/am/107: Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը ՀՀՇ 5-րդ համագումարում, 27 հունիսի, 1993 թ.:

Ջորի Բալայանի «Դժոխք և դրախտ»-ը՝ որպես արցախյան  
Գոյամարտի տարեգրություն  
Ամփոփում

Ջորի Բալայանի «Դժոխք և դրախտ» գիրքը հուշագրություն է Արցախյան գոյամարտի մասին, որում Արցախյան շարժման պատճառների և ազատամարտի մասին խոհերին զուգահեռ գրողը խորհրդածում է հայ ժողովրդի պատմական առաքելության ու նրա խաղաղ ապագային սպառնացող վտանգների մասին:

Книга Зория Балаяна "Ад и Рай" как летопись Арцахской борьбы за  
существование  
Резюме

Книга Зория Балаяна "Ад и Рай" -это мемуары о борьбе за существование Арцаха, в котором писатель параллельно с думами об Арцахском освободительном движении и причинах его возникновения, размышляет так же исторической миссии Армянского народа и об опасностях угрожающих его мирному будущему.

The Book "Hell and Paradise" by Zori Balayan as Annals of Artsakh Struggle for  
Survival.  
Resume

The book "Hell and Paradise" by Zori Balayan is memoirs about Artsakh struggle for survival where the writer parallel to the reasons of Artsakh movement and the thoughts about the struggle for survival thinks about the historical mission of the Armenian nation and the dangers threatening its future.

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՔ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** ստեղծագործական գործընթաց, պատմավեպ, ճակատամարտ, քննադատություն, մտահղացում, տարբերակներ, վերամշակում, դրդապատճառ, պատմիչ, գլուխգործոց

**Ключевые слова и выражения:** творческий процесс, исторический роман, битва, критика, замытель, переработка, варианты, повествователь, повод, шедевр.

**Key words and expressions:** historical novel, battle, criticism, creation process, idea, versions, reediting, motive, historian, masterpiece.

Շատ հաճախ ենք խոսում գրական ստեղծագործությունների, նրա դրական ու բացասական կողմերի, թերությունների ու առավելությունների մասին՝ երբեմն մոռանալով ամենակարևորի՝ տվյալ երկի ստեղծագործական գործընթացի մասին: Գրեթե նույնն է տեղի ունեցել նաև Դեմիրճյանի «Վարդանանքի» դեպքում:

Մեծ աշխատանք է կատարվել Դեմիրճյանի ստեղծագործության ուղղությամբ: Քննադատությանը հետաքրքրել է հատկապես գրողի և նրա ստեղծագործության ամբողջական բնութագրի հարցը և միայն մասնակիորեն է խոսվել գրողի ստեղծագործական լաբորատորիայի մասին, ինչը հնարավորություն է ընձեռում նրա գեղարվեստական մտածողությունը դիտել իբրև ստեղծագործական պրոցես: Այս ամենն ի նկատի ունենալով՝ դեռ 1941 թ. Դեմիրճյանը գրել է. «Քննադատությունը առհասարակ իր տեսական պահանջները դնելիս՝ շատ քիչ է մտածում անդրադառնալ այդ խնդիրների լաբորատորիական կողմի վրա, այն է՝ մտնել գրողի աշխատանոցը»<sup>1</sup>:

Ստեղծագործական գործընթացը՝ Դեմիրճյանի բնութագրմամբ ունի հետևյալ փուլերը՝ մտահղացում, նախապատրաստություն և շարադրանք:

Հայրենասիրական կրակը պատանի Դեմիրճյանի սրտում վառել են նրա հորեղբոր տղաները: Դեռ 1910-ական թվականներին Վարդանանց

<sup>1</sup> Դեմիրճյան Դ., Երկերի ժողովածու, հ. 8, էջ 257:

պատերազմի թեմային անդրադառնալով՝ նա ընտրում է դրամայի ժանրը և գրում է «Վասակը», իսկ 1943 թ. այդ մտահղացման համար ընտրում է վեպի ժանրը՝ կերտելով «Վարդանանքը»:

Մտահղացման փուլում հեղինակը նյութի մեծ պաշար է «պահեստավորում» տվյալ դարաշրջանի կյանքի, մարդկանց, կենցաղի ու բարքերի մասին: Այնուհետև պլանավորում է հետագա անելիքը, որպեսզի խուսափի ավելորդություններից ու թերություններից:

Դեմիքձյանը գտնում էր, որ առանց ստեղծագործական պլանի չի կարելի գործողություն զարգացնել. պլանը սյուժեի ընթացքն է, ծավալումը և զարգացումը:

Նրա մտերիմները հավաստում են, թե որքան երկար ժամանակ է հատկացրել գրելիքի պլանի վրա: Ցավոք, մեզ չի հաջողվել գրողի արխիվում գտնել վեպի ամբողջական պլանը, որը կներկայացնեի սյուժետային բոլոր գծերի զարգացումը և նպատակահարմար ընթացքը: Արխիվում առկա են միայն երկերի առանձին տեսարաններ, գլուխներ և այլ բնույթի պատառիկներ:

Մտահղացմանը հաջորդում է նյութի ուսումնասիրությունը, թեև այս պարագայում էլ են ծնվում նոր մտահղացումներ: Մտահղացումը գեղարվեստական իրականացման, առարկայական տեսքի բերելու համար Դեմիքձյանը երկար ժամանակ աշխատել է գործի պլան-կոնսպեկտի վրա, որ մեզ չի հասել:

Դեմիքձյանն իր գրառումներում նկատել է, որ «Վարդանանքը» գրելու դրդապատճառներից մեկն էլ հետևյալն էր. « «Վարդանանք» պատմավեպը ես գրեցի Հայրենական պատերազմի ժամանակ: Այն արտակարգ, ժողովրդական ուժերի գերազանց լարման օրերին, կամ լավ է ասել այն օրերին, երբ վճռվում էր մեր հայրենիքի լինել-չլինելու ճակատագրական խնդիրը: Ես զգացի, որ «Վարդանանքը» օղի մեջ է ... ես գիտակցում էի, որ պատերազմը հայրենական է, այսինքն համաժողովրդական, երբ զանգվածները վեր են կենում պաշտպանելու հայրենիքը, նրա հողը, նրա կյանքը, և կռիվը կյանքի-մահի կռիվ է: Ես հիշեցի հինգերորդ դարը, հայ ժողովրդի կյանքի-մահի կռիվը պարսից բռնակալության դեմ, և քանի որ մեր ժողովուրդը դուրս էր եկել հայրենական պատերազմի՝ ես կամեցա հիշեցնել նրան, որ հնում շատ է

ունեցել հայրենիքի պաշտպանության պատերազմներ, որոնց մեջ ամենամեծը Վարդանանց պատերազմն էր»<sup>2</sup>:

Դեմիքճյանի գեղարվեստական մտածողության ինքնատիպությունը համոզիչ վկայությունն է այն բանի, թե գաղափարական ինչպիսի ազնիվ սկզբունքներով է հղացել «Վարդանանք» պատմավեպը:

«Վարդանանքի» վրա Դեմիքճյանն սկսել է աշխատել 1943 թ. փետրվար ամսից, և նույն թվականի նոյեմբերին վեպի առաջին հատորն արդեն պատրաստ էր:

Սկզբում հեղինակը մտածում էր վեպը վերնագրել «Հոսանքի հակառակ», ապա «Վարդան Մամիկոնյան», բայց ի վերջո, կանգ առավ իր մտահղացումը լիարժեքորեն արտահայտող «Վարդանանք» վերնագրի վրա, չնայած որ, չէր ուզում կրկնել 1916 թ. լույս տեսած Լեոյի «Վարդանանք» դրամայի խորագիրը:

Վեպի վրա Դեմիքճյանը աշխատել է լարված և միևնույն ժամանակ մեծ ներշնչումով:

Ռ. Զարյանը հիշում է. «Վարդանանքը» գրելու տարին Դեմիքճյանի մոտ հաճախ էի լինում: Պատերազմական ահեղ օրեր էին: Դեմիքճյանը տանից դուրս էր գալիս հազվադեպ: Նստած գրում էր օրնիբուն: Սեղանի մոտ նստելու սովորություն չունեի: Մի մեծ գիրք էր դնում ծնկանը վրան թուղթ ու գրում տենդորեն: Գրում էր մատիտով: Պետք էր տեսնել, թե ինչ աներևակայելի արագությամբ: Էջեր էր, որ լցնում էր: Ամեն ինչ գլխի մեջ պատրաստ՝ հանձնում էր թղթին ...

Մի օր հարցրի, թե ապա ե՞րբ է մտածում, ե՞րբ է խորհում գրելիքը: Ասաց՝ գիշերը, երբ բոլորը քնած են, երբ շուրջը խաղաղ է, մտքի մեջ կառուցում է ամեն ինչ՝ դեպքերի հաջորդականություն, հերոսի վարքագիծ, հոգեբանության զարգացում, և առավոտյան դեմ, կանուխ ժամերից մեկին, նստում է գրելու: Իրեն թվում է, թե մեկը թելադրում է, ինքը շարադրում: Թելադրում է այնպես փութաջան, որ ինքը հազիվ է հասցնում գրի առնել»<sup>3</sup>:

Դեմիքճյանը մի առիթով նշել է, որ վեպը գրել է մի շնչով: Հենց սա էլ պատճառ է հանդիսացել, որ գրականագետների մի մասը (Ս. Արզումանյան, Ա. Բաղդասարյան) կարծի, թե Դեմիքճյանը վեպի առաջին հատորը գրել է երկու կամ երեք ամսում: Սա պարզապես թյուրիմացություն է, որովհետև ինչքան էլ մի շնչով գրեր հեղինակը, չէր կարող այդպիսի մեծածավալ վեպի,

<sup>2</sup> «Սովետական Հայաստան» ամսագիր, Դեմիքճյան Դ., Վարդանանքի մասին, 1952, N10, էջ 34:

<sup>3</sup> «Սովետական գրականություն» ամսագիր, Զարյան Ռ., Դեմիքճյանի հետ, 1962, N12, էջ 72:

թեկուզ առաջին հատորը ավարտեր այդքան որակով՝ չնայած հապճեպության դրոշմն առկա է վեպի վրա:

Գրողի ձեռագրերի, օրագրերի, նամակների ու սևագրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Դեմիրճյանը «Վարդանանքի» առաջին գրքի վրա աշխատել է 9 ամիս: Սա ևս կարճ ժամանակահատված է այսպիսի մեծածավալ վեպի համար, սակայն արագ ավարտելու պատճառները մեզ արդեն հայտնի են:

Դեմիրճյանը հիանալի գիտեր տվյալ ժամանակշրջանի երկու հիմնական աղբյուրների՝ Եղիշեի և Փարպեցու պատմությունները: Եվ ոչ միայն վերջիններին, այլև բոլոր նրանց, ովքեր քիչ թե շատ անդրադարձել են Վարդանանց թեմային (Մեբեռու, Հովհան Կաթողիկոս, Թովմա Արծրունի, Ասողիկ, Շնորհալի, Կիրակոս Գանձակեցի և այլն): Սակայն Դեմիրճյանի ընկալմամբ՝ Եղիշեն ստույգ է, ճշմարտապատում, ակնաստես ու փաստացի:

«Մեր ժողովուրդը Եղիշեի պատմության մեջ տեսել է իր կյանքն ու իդեալները և նրա մեջ տեսնում է իր թշնամուն և հերոսին: Եղիշեն կորովի գրչով, բանաստեղծական խանդավառությամբ տվեց այդպիսի մի սյուժե ու գաղափար, և ժողովուրդը հաստատեց՝ «ընդ իսկականին՝ ճիշտ է»<sup>4</sup>:

Դեմիրճյանի «Վարդանանց պատերազմը» ուսումնասիրությունը, որը տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրի 1943 թ. 3-րդ և 4-5-րդ համարներում, հավաստումն է այն հսկայական աշխատանքի, որ կատարել է հեղինակը վեպը ստեղծելիս: Այս ուսումնասիրությանը զուգահեռ՝ Դեմիրճյանը ձեռնամուխ է լինում «Վարդանանք» պատմավեպի ստեղծմանը:

«Վարդանանքին» վերաբերող հարուստ գրական ժառանգությունը, որ պահվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Դեմիրճյանի ֆոնդում, մեզ շատ է օգնում բացահայտելու գրողի ստեղծագործական աշխատանքի ընթացքը:

Դեմիրճյանը պետք է իր մտահղացումը իրագործեր եռագրությամբ՝ «Մեսրոպ Մաշտոց», «Վարդանանք» և «Վահանանց պատերազմ» խորագրերով: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, Հայրենական Մեծ պատերազմը պատճառ դարձավ, որ գրվեր «Վարդանանքը»:

Ռեզումեդաշտից հեղինակը ստանում էր բազմաթիվ նամակներ, շնորհակալագրեր, գիրք ուղարկելու բազմաթիվ խնդրանքներ, որոնք էլ

<sup>4</sup> «Սովետական գրականություն» ամսագիր, Դեմիրճյան Դ., Վարդանանց պատերազմը, 1943, N3, էջ 121:

ավելի էին ոգևորում կյանքի մայրամուտին մոտեցող մեծ գրողին: Պատերազմից հետո զինվորներից մեկը հայտնել է, որ «Վարդանանքը» պատերազմի ժամանակ կարդացել է երեք ամսում: «Երբ մի հինգ թույն ժամանակ էի գտնում՝ կարդում էի, փոխանակ հանգստանալու: Կարդում էի մարտի ժամանակ եղած ընդմիջումներում: Ես որ դժվարանում էի ռումբը կրել, այդ ծանր գիրքը երեք ամիս ման անեցի վրաս»<sup>5</sup>: «Սա բավական է ինձ ...» նամակի վրա՝ փակագծերում, նշում է Դեմիրճյանը:

Դ. Դեմիրճյանը ցանկանում էր վեպն ավարտել կարճ ժամանակահատվածում, սակայն հիվանդության պատճառով այն ուշանում էր: Վեպի՝ այդքան սպասված ավարտը տեղի ունեցավ 1946 թ. մայիսի 14-ին:

Դ. Դեմիրճյանը հաշվի է առել քննադատների բոլոր կարծիքները: Այդ իսկ պատճառով վեպը մշակել ու վերամշակել է, և իր կենդանության օրոք վեպը լույս է տեսել չորս անգամ: Վերամշակումներից հետո «Վարդանանքը» դարձավ ավելի կոռ, ամբողջական և կատարյալ:

«Վարդանանքի» հայերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել երկու գրքով. Ա գիրքը՝ 1943 թ., Բ գիրքը՝ 1946 թ.: Երկրորդ հրատարակությունը համընկավ Ավարայրի ճակատամարտի 1500-ամյակին: Կարելի է ասել, որ սա հոբելյանական հրատարակություն էր: Այն պատկերազարդված էր նկարիչ Էդ. Իսաբեկյանի նկարներով:

Երրորդ հրատարակությունը լույս է տեսել 1954 թ., մեկ գրքով, իսկ չորրորդ հրատարակությունը լույս է տեսել 1956 թ., երկու գրքով, Դեմիրճյանի երկերի ժողովածուի ութհատորյակում (3-րդ և 4-րդ հատորներ):

Այսպիսով, «Վարդանանքի» ստեղծագործական պատմությունն ուսումնասիրելով, տեսնում ենք, որ վեպի վրա աշխատելիս Դեմիրճյանն ստեղծել է երեք խմբագրություններ, տարբերակներ, որոնք իրարից զգալիորեն տարբերվում են և՛ գաղափարապես, և՛ գեղարվեստորեն:

Ինչպես նշեցինք, Դեմիրճյանը հաշվի է նստել բոլոր քննադատների հետ: «Վարդանանք» վեպի առաջին հրատարակության առիթով դիտողություն է արվել հեղինակին, թե նա անտեսել կամ բավարար չափով չի շոշափել սոցիալական և դասկարգային հասարակությունների հարցերը, թե նա չափազանցել է կրոնի դերը և այլն: Թեև այս նկատողությունների մեջ առկա են ճշմարտության նշույլներ, սակայն չի կարելի ընդունել Ա. Կարապետյանի այն անհեթեթ տեսակետը, թե, իբր, արձակագիր Դ.

<sup>5</sup> ԳԱԹ, ԴԴՖ, N 844:

Դեմիրճյանը լուս ընծայեց եկեղեցին գովերգող «Վարդանանք» երկհատոր վեպը<sup>6</sup>:

Դ. Դեմիրճյանի «Վարդանանց պատերազմը» ուսումնասիրությունը մեծապես բացահայտում է «Վարդանանք» պատմավեպի գաղափարական և գեղարվեստական սկզբունքները: Դեմիրճյանին առանձնապես հուզել է պատերազմի բնույթի հարցը: 451 թ. Վարդանանց պատերազմը, նրա ըմբռնմամբ, հայրենական պատերազմ էր, որի «ներքին իմաստը կուլտուրայի և ազգային ինքնությունության պաշտպանությունն էր: Ավանդաբար այն համարվել է կրոնական պատերազմ, այնինչ՝ «Ո՛չ պարսից կառավարությունը, ո՛չ էլ հայ նախարարական դասը տոգորված չէին կրոնականությամբ, այնքան որ՝ այդ դարձնեին պատերազմի և արյունահեղության հիմք: Նրանք պետական խնդիրներ էին վճռում: Ժողովուրդը ոտքի էր կանգնել իր ազգային ինքնությունը պաշտպանելու համար: «Առանց հայ ժողովրդի ըմբոստացման՝ ո՛չ հայ հոգևորականությունը և ո՛չ էլ իշխանական դասը կարող էին հայրենական պատերազմ սկսել պարսից դեմ»<sup>7</sup>:

451 թվականի պատերազմի բնույթի հարցը, որպես «Վարդանանքի» գաղափարական ու գեղարվեստական ամենահիմնական խնդիրներից մեկը, Դեմիրճյանին հուզել է վեպի ստեղծման ու վերամշակման ամբողջ ընթացքում: Եվ նա այդ հարցին անդրադարձել է բազմիցս:

Վերամշակումից հետո, արդեն երկրորդ հրատարակության մեջ տեսնում ենք, որ պատերազմը դեպի կրոնականության տանող հատվածները կրճատված են՝ նման թյուրիմացություններից խուսափելու նպատակով:

Այս երեք տարբերակներում առկա են նոր կերպարներ, սյուժետային նոր գծեր, ենթազույգումների մասնակի տեղափոխություններ, բովանդակային նոր երանգներ:

Գրողի ստեղծագործական աշխատանքը մարդկային մտավոր գործունեության խիստ յուրօրինակ ու առավել հետաքրքրական ձևերից մեկն է:

Գրչի աշխատավորը, մտավոր մշակը փայլուն հաղթանակ տարավ գրասեղանի առջև՝ կերտելով հայ գրականության փառահեղ գլուխգործոցներից մեկը, որ դեռ երկար ժամանակ կմնա հաղթանակի պսակով ու կշարունակի, սերունդներ կրթելով, երկար ճանապարհ անցնել:

<sup>6</sup> «Գրական թերթ», 1948, N 29:

<sup>7</sup> «Մովետական գրականություն» ամսագիր, Դեմիրճյան Դ., Վարդանանց պատերազմը, N 3, էջ 125:

Դ. ԴԵՄԻՐՉՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՔ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Այս փոքրիկ հոդվածում փորձում ենք ներկայացնել «Վարդանանք» պատմավեպի ստեղծագործական պատմությունը: Քանզի գրաքննադատությանը հետաքրքրում է արդեն ավարտված, պատրաստի գրական ստեղծագործությունը՝ իր բովանդակությամբ և գաղափարով:

Շատ քիչ է խոսվում այն հսկայական աշխատանքի մասին, որ կատարում է հեղինակը մինչև երկի ստեղծումը: Ահա հենց այս պատճառով էլ անդրադառնում ենք «Վարդանանքի» ստեղծագործական գործընթացին՝ մտահղացումից մինչև կանոնիկ տեքստի ստեղծումը:

Анна Мовсисян

Первое и второе издание исторического романа Д.Демирчяна  
“Вардананк” в свете текстологии.

Варианты являются текстовыми целостными проявлениями одного и того же произведения, которые появляются при создании основного текста, но в которых еще не выражены окончательные желания автора. В этой статье мы касаемся оригиналов первого и второго вариантов. В вариантах имеются многочисленные различия. Каждое изменение имеет свое объяснение, что мы и попытались сделать, Эти изменения были произведены автором. Благодаря этому исследованию мы стали очевидцами создания и совершенствования шедевра Д.,Демирчяна.

ANNA MOVSISYAN

The Creative Process of the Historical Novel “Vardananq” by Derenik  
Demirchyan

In this short article we are trying to represent the creative history of the historical novel Vardananq by D. Demirchyan. As the literary criticism is interested in completed literary work with its meaning and content.

Very little is spoken about the efforts that the author makes until the novel is created. For this reason we refer to the creative process of “Vardananq” from the scheme to the creation of the main text.

**ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉՍՏՑՅԱՆ**

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ԱՇՈՏ ՇԱՅԲՈՆԸ ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՖԱՆՏԱՍՏ ԳՐՈՂ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գիտաֆանտաստիկ գրականություն, տիեզերք, ֆանտաստ գրող, ապագայի կռահումներ, ֆանտաստիկական աշխարհ, ֆանտաստ գրողի առաքելություն, ֆուտուրիստական բանաստեղծություններ, պատանեկան գրականություն, Երկիր մոլորակի գաղտնիքները, երևակայություն, հնարավորություն, զարգացում:

**Ключевые слова и выражения:** научно-фантастическая литература, космос, писатель-фантаст, догадки будущего, фантастический мир, миссия писателя-фантаста, футуристические стихотворения, юношеская литература, тайны Планеты Земля, воображение, возможность, развитие.

**Key words and phrases:** science fiction literature, Space, fantastic literature writer, future prediction, fantastic writer's writer mission, futuristical poem, children's literature, mysteries of Earth, imagination, opportunity, development.

Գիտաֆանտաստիկ գրականությունը գեղարվեստական գրականության մի առանձին տեսակ է, որտեղ գեղարվեստական մտահղացումը հենվում է գրական որևէ վարկածի վրա՝ տեղ տալով երևակայությանը, ապագայի կռահումներին: Գիտաֆանտաստիկ գրականության սկզբնավորողը համարվում է Ֆ.Բեկոնը:

Գրող-ֆանտաստը, ֆանտաստիկական ընթերցողը, ինքը՝ ֆանտաստիկական, ծառայում են մարդկությանը: Մեփական ֆանտաստիկական աշխարհ ստեղծելը ֆանտաստ գրողի գեղարվեստականության բարձրագույն չափանիշն է:

20-դարի գիտաֆանտաստիկական գրականության ներկայացուցիչներից են Ս.Լենը, Ա.Ազիմովը, Ռ.Բրեդերին, Քոբո Աբեն: Գիտաֆանտաստիկական երկերով հարուստ է նաև խորհրդային գրականությունը (Վ.Օբրուչև, Ա.Տոլստոյ, Ա.Բեյսն, Ս.Բեյլան, Գ.Ադամով և ուրիշներ):

Հայ գրականության մեջ այս ժանրով է ստեղծագործել Աշոտ Շայբոնը, որը և համարվում է այդ ժանրի հիմնադիրը:

1920-ական թվականների սկզբներին Թիֆլիսի Հայարտունը իր վրա է վերցնում գրական նոր սերնդի աճեցման ու զարգացման գործը:

Հայարտան կազմակերպած դասախոսություններին ու ասուլիսներին ուշադիր հետևում են և՛ վրացահայ, և՛ Արևմտյան Հայաստանի գավառներից գաղթած գրասեր պատանիները, որոնց այն ժամանակ անվանել են «գրական ծիլեր»։ Հայարտան սաների մեջ է եղել նաև Մուշեց գաղթած հացթուխ Գասպարի որդի Աշոտ Գասպարյանը՝ հանդուգն ու վառ երազանքներով, արկածասեր մի պատանի, որ առաջին գրական փորձերով արժանանում է գրական մեծերի ուշադրությանը։ «Շայբոնը գրականություն եկավ իր հետ բերելով իր բնավորությունը, խորհրդավոր աշխարհի երազանքը, երևակայության ճախրանքը։ Նա հայ երիտասարդ գրողների այն խմբի մեջ էր, որ առանց տատանումների ընդառաջ գնաց նոր արվեստին՝ կինոյին՝ դառնալով համամիութենական կինոստուդիայի ուսանող», -կարդում ենք «Գրական թերթ»-ում<sup>1</sup>։

Աշոտ Շայբոնը (Աշոտ Գասպարի Գասպարյան) եղել է բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, ԽՍՀՄ գրողների միության անդամ 1934 թվականից։ Հենց առաջին գրքույկի վրա հեղինակն իրեն կոչել է Շայբոն, որն ստեղծել է Արևմտյան Հայաստանի Կորդվաց աշխարհի Շեյ և Բոտան տեղանունների յուրօրինակ հապավումից։ Այս առիթով տեղին է մեջբերել Շայբոնի և իր պապի խոսկությունը, որին Դբլոշ էին անվանում. «-Տղա, լաօ,-ասաց,-եսա Շայբոն ո՞րն է։

-Այդէս եմ, պապի,-պատասխանում է Շայբոնը,-Շեյն ու Բոտանը այն հեռավոր գավառներն են ուր դու գործել ես և քեզ Դբլոշ կոչել։ Ես էլ այդ տառերից գրական անուն եմ ստեղծել ինձ համար»<sup>2</sup>։ Երբ ծնվել է Շայբոնը, Դբլոշ պապը երազել է, որ նա շուտ մեծանա, որպեսզի վերցնի խանչալը և կովի թշնամու դեմ, բայց Շայբոնը ոչ թե խանչալ, այլ գրիչ է առնում «ուր ձեռ»։ «Այս է իմ խանչալը,-ասաց նա պապին,-ես սրանով պիտի կովեմ դուշմանների դեմ»<sup>3</sup>։

Աշոտ Շայբոնը ծնվել է 1905 թվականի հունվարի 26-ին, Թիֆլիսում։ 1924-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Այնուհետև երկու տարի սովորել է Երևանի համալսարանում, ապա մեկնել է Մոսկվա և 1936-ին ավարտել է կինեմոտոգրաֆիայի ինստիտուտը։ Շայբոնը մինչև 1930 թվականը զբաղվել է մանկավարժությամբ։ 1936-1941-ին ծառայել է խորհրդային բանակում և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին։ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը և Հայաստանի շրջանային մի շարք թատրոններ բեմադրել են նրա «Մուվորականներ», «Խանգարիչ

<sup>1</sup> «Գրական թերթ», Երևան, 1975, № 5, էջ 3։

<sup>2</sup> «Արև», Գահիրե, 1965, № 14.169, էջ 1։

<sup>3</sup> Նույն տեղում։

հանգամանք», «Երջանիկ սերունդ» և ուրիշ պիեսներ: Նրա սցենարով են նկարահանվել «Մևանի ձկնորսները» և «Հայաստանի 25 ամյակը» կինոնկարները: Ռուսերեն լույս է տեսել «Մթության հաղթողները» («Սպիտակ սավերների աշխարհում») գիրքը:

Շայբոնը մահացել է 1982-ի հունվարի 16-ին՝ Երևանում, երբ հասցրել էր անցնել «Լյանքի համալսարանները»: Կյանքից ստացած բազմաթիվ տպավորություններով Աշոտ Շայբոնը ոտք է դնում Թիֆլիսի այն գրական միջավայրը, որտեղ Հ. Հակոբյանի «ղարբնոցը դարբնում» էր պրովետ գրողներին, «Մարտակոչը» պայքարի էր հրավիրում հնության դեմ, իսկ Մամբրե Մատեճյանը Ներսիսյան դպրոցում սաներին շլացնում էր իր պերճախոսությամբ, Արշավիր Մելիքյանն ու Հարություն Սուրխությունը քննարկում էին նոր գրականության ստեղծման ուղիները: Թիֆլիսի Հայարտանը գործել է «Գալիք» անունով գրական խմբակը, որի ակտիվ մասնակիցն է եղել Աշոտ Շայբոնը: Երիտասարդ գրողը տրվում է «օրերի պահանջին»՝ գրելով ֆուտուրիստական բանաստեղծություններ, որոնք հրապարակ եկան «Դինամո նվագ», «Նաիրի-քուչա» և էլի ուրիշ նման զարմանալի անուններով: Մի որոշ ժամանակ Լոռվա գյուղերում ուսուցչություն անելուց հետո, երբ 30-ական թվականների սկզբներին հաստատվում է Երևանում, նա ծանոթանում է Չարենցի հետ, որի խմբագրությամբ տպագրվում են Շայբոնի «Բանաստեղծություններ» և «Լիրիկա» գրքուկները: Այդ տարիներին Շայբոնը չափածոյին առնթեր գրում է նաև արձակ, լույս է տեսնում նրա «Զրահավոր գարուն» վիպակը՝ կոլտնտեսային շինարարության մասին: Վիպակի նյութն առնված է սոցիալական խռոչը հանգույցներ ու բախումներ ունեցող շրջանից: Այդ կոլեկտիվացման առաջին կազմակերպչական շրջանն է: Շայբոնը վարպետորեն է նկարագրում գյուղը. «Գյուղն իր գորշ խրճիթներով բազմել էր սարալանջին: Խորշումներով ծածկված տնակների արտաքինը ասում էր, որ գյուղը դեռ նահապետական ձևերով է ապրում: Շատ իդիլիկ էր դառնում գարնան այդ գյուղը, որտեղ ապրում էին մարդիկ, որտեղ կովում էին մարդիկ, խնդում ու հիանում բնության մեջ, բնության հետ միասին: Ճնճողուկները գարնանն այնպես լա՛վ էին երգում այդ գյուղում»<sup>4</sup>:

Պատերազմի տարիներին Շայբոնը գրում է «Գիշերային ծիածան» գիտաֆանտաստիկ վեպը, որով էլ հիմք է դնում ֆանտաստիկ ժանրին հայ գրականության մեջ: «Գիշերային ծիածանը» Շայբոնի

<sup>4</sup> Աշոտ Շայբոն, Զրահավոր գարուն, Երևան, 1931, էջ 3:

ստեղծագործության մեծագույն նվաճումն է և նրա կողմից մեր գրականությանը, հատկապես պատանեկան գրականությունը մատուցած թանկագին նվերը: Այդ էր պատճառը, որ նրա վեպը արժանացավ մրցանակի և հազարավոր օրինակներ տարածվեց մեր ընթերցող մասսայի մեջ: Ընթերցողներից ոմանք ասում էին, որ ծնվել է <<հայկական Ժուլ Վեռնը>>: Առաջին անգամ այդ գրքում էր խոսվում ատոմային հզոր սուզանավի մասին, որը կարող էր ազատորեն լողալ անառիկ թվացող սառույցների տակով և մինչև այդ չտեսնված հրաշքներ գործել: Հյուսային բևեռը նվաճելու գիտական արշավներին նվիրված այս առաջին գիրքը լայն արձագանք գտավ և վերահրատարակվեց: Վեպի գլխավոր հերոսը պատանի գիտնական Ադրիանն է, որի նախատիպը, ինչպես նշում է գրողը, հայ անվանի աստղագետ Վիկտոր Համբարձումյանն է. <<Մի օր իմ ուսուցիչը ինձ տարավ Թիֆլիս Լերմոնտովի փողոցի վրա գտնվող կանանց հայկական գիմնազիան, որտեղ տեղի էր ունենալու դասախոսություն: Հետզհետե դահլիճում հավաքվեցին նշանավոր մարդիկ՝ գրողներ, մանկավարժներ, Թիֆլիսի հայ մտավորականությունը: Եկան Արտվին, Մադաթ Պետրոսյանը, Հակոբ Հակոբյանը: Ամբիոնին մոտեցավ 13-14 տարեկան մի պատանի և սկսեց զեկուցում կարդալ...տիեզերքի մասին: Դահլիճը քարացել էր: Տիեզերական գալակտիկայի մասին պատանու զեկուցումը այնքան հետաքրքիր էր, որ ինձ թվաց, թե իմ հասակակից պատանին հենց նոր է իջել տիեզերքից: Դասախոսության վերջում իմացա, որ այդ արտակարգ խելոք պատանին Վիկտոր Համբարձումյանն է: Տարիներ անց, երբ ձեռնարկեցի գրելու իմ առաջին գիտաֆանտաստիկ վեպը՝ <<Գիշերային ծիածանը>> գլխավոր հերոսի կերպարը ստեղծելիս նկատի ունեցա հենց նրան՝ խաժ աչքերով, խելոք պատանուն>><sup>5</sup>:

1951 թվականին հրապարակ եկավ Շայբոնի 2-րդ գիտաֆանտաստիկ վեպը՝ <<Սպիտակ սովերների աշխարհում>>, որը նույնպես շատ է սիրվել ընթերցողի կողմից, այն հրատարակվեց նաև ռուսերեն լեզվով: Մա մի կարևոր ու վճռական քայլ էր <<Գիշերային ծիածանի>> համեմատությամբ: Եթե Շայբոնի առաջին գիտաֆանտաստիկ վեպում խոսքը վերաբերում է սոսկ ատոմային մի սուզանավի, որը հասնում էր Երկիր մոլորակի հյուսիսային բևեռին, ապա երկրորդում Շայբոնը զարմանալի մանրամասնությամբ նկարագրում է <<Օկտեաբրիդ>> քաղաքը, որ ատոմի ուժով կարող է լողալ ինչպես սովորական շոգենավերը, միաժամանակ

<sup>5</sup> «Գրական թերթ», Երևան, 1976, № 1976, էջ 3:

սուզվել օվկիանոսների ամենախոր հատակները, մինչև իսկ թռչել ինչպես ինքնաթիռ, և այդպիսով ճամփորդել հյուսիսային բևեռ մինչև Անտարկտիդա:

Չորս տարի հետո ընթերցողները ստացան Աշոտ Շայբունի 3-րդ գիտաֆանտաստիկ վեպը՝ «Տիեզերական օվկիանոսի կապիտանները», որտեղ գիտնականները իրենց գիտական գործողությունները ծավալում են ոչ թե երկրի, այլ Լուսնի վրա: Գրական ֆանտազիայի առումով հատկանշական է Շայբունի կառուցած «Գրիմալդի» քաղաքը՝ Լուսնի վրա, անօդ տարածության մեջ: Խորհրդային գիտնականները այդ նոր միջավայրը օգտագործում էին երկրում չհաղթահարված հիվանդությունները բուժելու համար: Հեքիաթային այդ նոր քաղաքը ուսումնաստեղի են դարձնում՝ այնտեղից թռչելու դեպի աստղային հեռավոր աշխարհներ:

1960 թվականին լույս է տեսնում գրողի չորրորդ ֆանտաստիկ վեպը՝ «Երկիր մոլորակի գաղտնիքները», որն ավելի արժեքավոր ներդրում եղավ գիտաֆանտաստիկ գրականության մեջ: Թեև գործողության հիմնական վայրը Հարավային բևեռում Շայբունի «ստեղծած» Միրնի քաղաքն է, այնուամենայնիվ շատ ավելի լայն են տարածվում այդ գործողության շրջանակները: Դրանք սկսվում են երկրի միջուկից և ձգնվում, տարածվում, հասնում մինչև տիեզերքի հեռաստաններին: Այս վեպում, ինչպես նախորդներում, գիտությունը, լուսավոր ուժերը բախվում են մույթ ուժերի հետ և հաղթանակ տանում: Այդ մահասարսուռ բախումների մեջ լուսավոր ուժերին ոգեշնչում է նրանց նպատակը՝ երկիր մոլորակը դարձնել մարդկային երջանկություն ամենակատարյալ վայրը ամբողջ տիեզերքում:

Նկատում ենք մի հետաքրքիր երևույթ Շայբունի գիտաֆանտաստիկ վեպերում. այսպես՝ «Գիշերային ծիածանի» հերոսը հայ նշանավոր ֆիզիկոս Ադրիանն է, «Սպիտակ սովերների աշխարհում» վեպում հանդես է գալիս նրա ազգակից, ատոմազեո-ֆիզիկոս Աբել Ադենցը, «Տիեզերական օվկիանոսի կապիտանները» վեպում՝ Աբելի որդին՝ Գրիգորի Ադենցը, «Երկիր մոլորակի գացոնիքները» վեպում հանդես է գալիս վերջինիս որդի Քսերքս Ադենցը: Հետևողականորեն պահպանելով այս գիծը Շայբունը կարծեք ուզում է շեշտել հայ ազգի փոքր, բայց ամենուր կարևոր լինելը: Ուշագրավ է Աշոտ Շայբունի վիպագրության մի այլ կողմ ևս: Իր և վեպերի մեջ հեղինակը կարմիր թելի պես անց է կացնում մի ընդհանուր գիծ: Դա հայ գիտական մտքի փառաբանություն, նրան հավատալու, ապավինելու և նրանով իրեն հպարտ զգալու Շայբունական գիծն է:

Հայ գրականության մեջ մյուս ֆանտաստ գրողը Կարեն Միմոնյանն է, որը հետևել է Շայբոնին. «< Ես,-գրում է Կարեն Միմոնյանը,-Շայբոնի ֆանտաստիկ վեպերով հրապուրվել եմ դեռ պատանության տարիներին: Նրա ստեղծագործությունները թևավոր երևակայությամբ ընթերցողին տեղափոխում են մերթ Հյուսիսային բևեռի ցրտաշունչ սառցադաշտերը, մերթ Թայմիր թերակղզում կառուցած Օկոյաբբ քաղաքը, մերթ հեռավոր Անտարկտիդ մայրցամաքը: Եվ այդ հետաքրքիր ու գրավիչ ճանապարհորդության ընթացքում ամեն քայլափոխի ընթերցողի հետ են Շայբոնի հերոսները: Շայբոնի վեպերը գեղարվեստական շատ արժանիքներից բացի ունեն նաև ճանաչողական նշանակություն»<sup>6</sup>:

Շայբոնը առաջինը եղավ հայ իրականության մեջ, որ ստեղծագործեց այս ժանրով, այսինքն՝ համարձակ քայլ կատարեց և հայ գրականության մեջ արմատավորեց գեղարվեստական գրականության մի տեսակ, որը մինչ այդ չկար: Կանխագուշակել ապագան և գրել այդ ապագայի անունից, որպեսզի շուտ գա այդ երանելի օրը- ահա ֆանտաստ գրողի առաքելությունը: Սեփական ֆանտաստիկական աշխարհի ստեղծումը ֆանտաստ գրողի գեղարվեստական բարձրագույն չափանիշն է, և այդ աշխարհի հիմքում իրական աշխարհի մոդելի ներդրումը՝ որպես նախահիմք՝ նրա վարպետության չափանիշը:

Հայ գրականության մեջ համարյա բացակայում են կամ շատ քիչ են գիտաֆանտաստիկ վեպերը: Ինչպես նշեցինք, Շայբոնին հետևել է Կարեն Միմոնյանը, այլ հետևորդներ չի ունեցել: Այսինքն՝ այս ժանրը չի զարգացել իրեն համապատասխան ընդգրկումներով: Ճիշտ է հիմնադրվեց հայ գրականության մեջ որպես գրական տեսակ, բայց մինչև վերջ, կարծում ենք, չսասց իր խոսքը, լուրջ քննության առարկա չդարձավ, մինչդեռ ամենախոհուն ու բարդ քննությունն էր պահանջում: Կցանկանայինք, որ հայ գրականության մեջ շարունակվեր գիտաֆանտաստիկ ժանրի զարգացումը, եկող սերունդը ստեղծագործեր նաև այս ժանրով, որովհետև այն պարտադիր կերպով նպաստում, օժանդակում է պատանիների երևակայական մտքի, ֆանտազիայի զարգացմանը, հետևաբար երկրի գիտական մտքի զարգացմանը մեծ հնարավորություն է ընձեռում:

---

<sup>6</sup> «Գրական թերթ», Երևան, 1976, № 33, էջ 3:

Օվսաննա Խաչատրյան

Աշոտ Շայբոնը հայ առաջին ֆանտաստ գրող  
Անփոփում

Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ Աշոտ Գասպարի Գասպարյանը(Շայբոնը) համարվում է հայ ֆանտաստիկ գրականության հիմնադիրը:

Շայբոնի առաջին գիտաֆանտաստիկ վեպը համարվում է «Գիշերային ծիածանը»(1944թ.), որով էլ հիմք է դնում ֆանտաստիկ ժանրին հայ գրականության մեջ: Այնուհետև շարունակում է ժանրի զարգացումը հաջորդաբար լույս ընծայելով «Սպիտակ սովերների աշխարհում», «Տիեզերական օվկիանոսի կապիտանները», «Երկիր մոլորակի գաղտնիքները» գիտաֆանտաստիկ վեպերը:

Սույն հոդվածում ներկայացված են Աշոտ Շայբոնի կյանքի և ստեղծագործության կարևոր մանրամասները՝ շեշտը դնելով վերը նշված գիտաֆանտաստիկ վեպերի գրականագիտական մեկնաբանման վրա:

Овсанна Хачатрян

Ашот Шайбон- первый армянский писатель-фантаст

Резюме

Поэт, прозаик, драматург Ашот Гаспарович Гаспарян (Шайбон) является основателем армянской фантастической литературы.

“Ночная радуга” (1942г.) считается первым научно-фантастическим романом Шайбона, именно это произведение становится основой фантастического жанра в армянской литературе. Далее жанр развивается, и автор публикует научно-фантастические романы “В мире белых теней”, “Капитаны космического океана”, “Тайны планеты Земля”.

В данной статье представлены важные сведения о жизни и творчестве Ашота Шайбона, где акцент ставится на литературные обозрения вышеупомянутых научно-фантастических романов.

### Summary

Ashot Shaybon the first Armenian science fiction writer

Poet, Prose writer, Playwright-Ashot Gaspar Gasparyan (Shaybon) considered to be the founder of Armenian science fiction.

Shaybon's first science fiction novel is "Night Rainbaw" (1942), and the base of fantastic(fiction) genre of Armenian literature. Then development of this genre continues, concequetively "In the World of White World", "Captains of Space Ocean", "Mystery of Planet-Earth" science fiction novels were published.

In this article important details about Ashot Shaybon's life and works are represented, taking the base the disscussion of sciencefiction novels mentioned above.

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՊՈԵԶԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ  
(Վ. Դավթյան, Գ. Էմին, Պ. Միքայելյան)

**Բանալի բառեր և արտահայտություններ.** տեքստ, բնագիր, թարգմանություն, հեղինակի անհատականություն, թարգմանչի անհատականություն:

**Ключевые слова и выражения:** текст, оригинал, перевод, индивидуальность автора, индивидуальность переводчика

**Key words and expressions:** text, original, translation, individuality author, individuality translathor

Լերմոնտովի հայերեն թարգմանությունների պատմությունն սկսվում է 19-րդ դարի 40-ական թվականներից և անցնելով զարգացման մի քանի աստիճաններ՝ խորհրդային տարիներին քանակական ու որակական առումով թևակոխում է մի նոր ավելի բարձր շրջափուլ: Իրականացվում են ռուս բանաստեղծի գրեթե ողջ ստեղծագործության հայերեն բազմահատոր հրատարակություններ, հրապարակ են գալիս նոր թարգմանիչներ: Շարունակելով այդ բնագավառում կուտակված դարավոր փորձը՝ նրանք կարողանում են ստեղծել թարգմանական նոր մշակույթ, որ փորձում ենք ցույց տալ Վ. Դավթյանի, Գ. Էմինի, Պ. Միքայելյանի թարգմանությունների օրինակով:

Վ. Դավթյանը քնարական խառնվածքի բանաստեղծ է: Նրա բանաստեղծական անհատականության ամենացայտուն որոշիչը չափածոյի միայն իրեն հատուկ լեզուն է, ուր հայերենը բաց է անում իր հնարավորությունները՝ գույնի, գծի, հնչողության պճնագեղ համադրության ամբողջ փայլով:

Ձևական առումով՝ դա համատեղելի չէ Լերմոնտովյան «железный стих»- 3, Դավթյանի թարգմանությամբ՝ երկաթե երգի հետ: Ոչ էլ հայ բանաստեղծի համեմատաբար խաղաղ ներաշխարհն է համատեղելի Լերմոնտովյան բարդ, հակասական, բուռն բախումներով եռացող հուզաշխարհի հետ: Այնուամենայնիվ, Վ. Դավթյանի լավագույն թարգմանություններում ստեղծագործական ենթագիտակցությունը կարողանում է հաղթահարել այդ անհամատեղելիությունը:

Բերենք երկու ութնյակ «1831-го июня 11 дня» ծավալուն բանաստեղծությունից.

Есть время – леденеет быстрый ум;  
Есть сумерки души, когда предмет  
Желаний мрачен, усыпление дум;  
Меж радостью и горем полусвет;  
Душа сама собою стеснена,  
Жизнь ненавистна, но и смерть страшна.  
Находишь корень мук в себе самом  
И небо обвинить нельзя ни в чем.

. . . . .  
Я предузнал мой жребий, мой конец,  
И грусти ранняя на мне печать;  
И как я мучусь, знает лишь творец;  
Но равнодушный мир не должен узнать.  
И не забыт умру я. Смерть моя  
Ужасна будет; чуждые края  
Ей удивятся, а в родной стране  
Все проклянут и память обо мне.

Ինչպես ամբողջ բանաստեղծության մեջ, այնպես էլ այս ութնյակներում ռուս բանաստեղծը պատանեկան անմիջականությամբ ու բանաստեղծական կրքով արտահայտում է իր հոգու տառապանքները մարգարեաբար գուշակելով նաև իր տխուր վախճանը: Այստեղ ևս, ինչպես առհասարակ լերմոնտովյան չափածոյում, խոսքը կտրուկ է, դարձվածքի, տողի արտակարգ իմաստային խտությունը ավելորդ է դարձնում ձևի արտաքին գունագարդումը:

Ահա և Վ. Դավթյանի թարգմանությունը.

Ժամ կա- սրընթաց մտքերդ են սառչում,  
Կա հոգու ժանգառք, երբ ամեն մի տենչ  
Դառնում է մռայլ, խոհերդ են ննջում,  
Եվ կիսալույս կա խինդ ու ցավիդ մեջ,  
Նեղվում է հոգիդ ինքը իրենից,  
Կյանքն ատելի է, բայց մահն ահալից:  
Քո մեջ են ցավի արմատները խոր,  
Եվ երկինքը չէ այստեղ մեղավոր:

. . . . .

Ես նախագգացի վախճանն իմ բախտի,  
 Եվ կնքել է ինձ տխրությունը վաղ,  
 Ինչպես եմ տանջվել լոկ տերը գիտի,  
 Բայց թող չիմանա աշխարհը այս պաղ:  
 Անհայտ չեմ մեռնի: Մահն իմ ահավոր  
 Ջարմանք կշարժի ավերում բոլոր,  
 Եվ միայն, միայն հողում հայրենի  
 Անեծքը պիտի բաժինն իմ լինի:

Բնագրում *թրթռացող հոգու հետ* Վ. Չուկովսկու արտահայտությամբ՝ համակեցության («общежительство») հասնելու համար թարգմանիչը հրաժարվել է սեփական լեզվամտածողության ինչ-ինչ հատկանիշներից, մասնավորապես գունային ու ձայնային արդուգարդից: Բնագրի կուռ լեզվախմաստային դաշնությունը պահպանվում է մերթ քառացի ճշգրտությամբ, մերթ ձևախմաստային ամբողջական միավորի հայերեն վերստեղծմամբ: Եթե մտքի «быстрый» որոշիչը թարգմանության մեջ դարձել է *արընթաց*, «сумерки души»-ն՝ հոգու ժանգառք, «меж радости и горем» կապակցությունը՝ *խինդ ու ցավի մեջ*, ապա դրանից բանաստեղծական պատկերի ամբողջական տեսանելի ուրվագիծը հայ ընթերցողի ընկալմամբ ավելի է հստականում, մանավանդ երբ «И как я мучусь, знет лишь творец» տողի վերջին բառը թարգմանվել է ոչ թե *ստեղծող* կամ *արարիչ*, այլ՝ *տեր...* Իսկ երկրորդ ութնյակի նախավերջին տողում *միայն* վերաբերականի կրկնակի հավելումը թարգմանական գյուտ է, որ կիզակետի է բերում պատանի բանաստեղծի հոգին ծվատող բոլոր դառնությունները՝ հայրենիքում անեծքով հիշվելու գիտակցությունը:

Այնուամենայնիվ, ամբողջ թարգմանության վրա որոշակիորեն զգացվում է թարգմանչի անհատական լեզվամտածողության կնիքը՝ գրական հայերենի ազատ ու բնական հնչողությունը, թարգմանական լեզվի բառապաշարի պատշաճ ընտրությունը, չափածոյի սահուն ռիթմիկան, ոճի թեթևությունը...

Գևորգ Էմինը բանաստեղծական ձեռագրով տարբեր է Վ. Դավթյանից: Նրա քնարերգության մեջ զգալի են 20-րդ դարի ինտելեկտուալ պոեզիայի նստվածքները, որոնք և պայմանավորում են նրա ոճի ու լեզվամտածողության կերպը: Խոսքի արտաքին պաճուռանքների բանաստեղծը գերադասում է իմաստային հագեցվածությունը, որ «մերկ» բառը կրում է ինքնին և ուրիշ բառերի հետ հարաբերակցության մեջ: Էմինը սիրում է խոսքը կառուցել բառերի անսովոր համադրությամբ, անակնկալ դարձվածքներով, իմաստակից բառերի ու դարձվածքների հակադրության ու

համադրության խաղով: Էմինի ոճին հատուկ է նաև հեգնանքը, իզուր չէ, որ քանաստեղծը հաճախ է դիմում պարողիայի և շարժի գրական ժանրերին:

Այս ամենը վկայում է, որ Էմինը իր ոճով ու լեզվամտածողությամբ քավական մոտ է ռուս քանաստեղծին: Եվ անահասկանալի է, թե ինչու համաշխարհային ու ռուս դասական և ժամանակակից պոեզիայից այնքան շատ թարգմանությունների հեղինակը այսքան քիչ է թարգմանել Լերմոնտովից՝ ընդամենը 8-9 քանաստեղծություն: Բայց այդ քիչն էլ վկայում է թարգմանչի արհեստավարժ հմտության մասին: Օրինակ՝ «Պատգամ» («Наедине с тобой, брат...») քանաստեղծության թարգմանությունը:

Բերենք քնազրից երկու ութնյակ.Наедине с тобою, брат,

Хотел я побыть:

На свете мало, говорят,

Мне остается жить!

Поедишь скоро ты домой:

Смотри ж... Да что? Моей судьбой,

Сказать по правде, очень

Никто не озабочен.

. . . . .

Отца и мать мою едва ль

Застанешь ты живых...

Признаться, право, было б жаль

Мне опечалить их;

И если кто из них и жив

Скажи, что я писать ленив,

Что полк в поход послали,

И чтоб меня не ждали.

Սա քանաստեղծության այն տեսակից է, որի մասին թարգմանության տեսաբան Ե. Էտկինդը գրում է, թե «քնազրի կարևորագույն գիծը կենդանի և անմիջական խոսակցական հնչերանգն է»<sup>1</sup>: Մահացու վիրավոր ռուս զինվորը սիրտն է բացում զինակից ընկերոջ առջև և խնդրում տուն վերադառնալիս կատարել իր վերջին կամքը: Այդ խնդրանքը նաև մենախոսություն է ինքն իր հետ, ուր հայրենի խոսքաշխարհի մոռացված բառ ու բանը, խոսքն ու խոսվածքը վերազարթնում են և մեռնողի վերջին գրույցին հաղորդում բոլոր պայմանականություններից զերծ ջերմ անմիջականություն: Թարգմանչից

<sup>1</sup> Е. Эткинд, Поэзия и перевод, М.-Л., 1963, стр. 39:

պահանջվում է այլալեզու ընթերցողին հասցնել հենց այդ ոճական յուրահատկությունը: Էմիլը հմտորեն է լուծել այդ խնդիրը:

Ահա և նրա թարգմանությունը.

Կուզեի, եղբայր, քեզ հետ գրուցել.  
Բացել լ սիրտս քեզ.  
Ասում են, թե ինձ քիչ է մնացել  
Եվ մեռնում եմ ես.  
Դու տո՛ւն կդառնաս շուտով, բարեկա՛մ,  
Տես հա՛... Բայց ո՞ւմ ինչ, ես կա՛մ. թե չկա՛մ,  
Չէ՞ որ, ի՛նչ էլ որ ինձ հետ պատահի,  
Ոչ ոք չի՛ հուզվի, սիրտը չի՛ ցավի:

Դժվա՛ր թե հիմա կենդանի լինեն  
Ծնո՛ղքն իմ սիրած,  
Ճիշտն ասած, հոգուս մեղք էլ կլինեք  
Վշտացնե՛լ նրանց:  
Բայց թե նրանցից մեկը հարց տա քեզ,  
Ասա՛ գրելում մի քիչ ծո՛ւլ եմ ես,  
Ասա, որ գունդը ճակատ ճամփեցին  
Եվ թող... չսպասեն իմ վերադարձին...

Թարգմանիչը լավ է հասկացել, որ բնագրի բառապաշարի, դարձվածաբանության, շարահյուսական կառույցի նույնական պատճենումը կարող էր հանգեցնել ոչ միայն բնագրի բովանդակության, այլև թարգմանության աղավաղման, քանի որ բնարում տեղին ու հասկանալի հնչող շատ լեզվական միավորներ անտեղի ու անհասկանալի կարող էին հնչել թարգմանության լեզվում: Այսպես՝ առաջին ութնյակի առաջին երկու տողերի բառացի թարգմանությունը (Կուզեի, եղբայր, քեզ հետ առանձնանալ կամ՝ առանձին մնալ) մտերմիկ խոսակցական լեզվամթնոլորտի մեջ կարող էր խիստ գրական-պաշտոնական անպատշաճ երանգ մտցնել, ուստի և երկտողը թարգմանվել է հոգեբանական պահին համարժեք հայերեն լեզվակառույցով.

Կուզեի, եղբա՛յր, քեզ հետ գրուցել,  
Բացել սիրտս քեզ...

Առաջին ութնյակի վերջին եռատողի թարգմանությունը բնագրից բավական հեռացել է, բայց բուն հայերեն լեզվամտածողությամբ ճշգրտորեն վերարտադրում է եռատողի իմաստային ողջ տարողությունը: Նույն կերպ՝ մյուս ութնյակի «было б жалъ» արտահայտությունը, որ բնականորեն ձուլվում է ռուսերեն խոսքային միջավայրին, բառացի թարգմանությամբ

(շատ կափսոսայի կամ չէի ուզենա) անհարիր կլիներ թարգմանության լեզվական միջավայրին. թարգմանիչը գտել է քնագրին համարժեք հայերեն դարձվածային արտահայտությունը՝ հոգու մե դք կլիներ... Սա այն դեպքն է, որի մասին տեսաբանները հաճախ են գրում, թե քնագրից «ձևային, բառային հեռացվածությունը հանգեցնում է մոտիկության՝ ըստ էության, բանաստեղծական մոտիկության»<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է թարգմանչի ստեղծագործական անհատականությանը, ապա թարգմանության վրա դրա որոշակի կնիքն ակնհայտ է. խոսակցական լեզվի ոճական հատկանիշների դրսևորումները ընդհանրապես բնորոշ են էմինի բանաստեղծական լեզվին:

Լերմոնտովի հորեյանական եռհատորյակի խմբագիրը ճանաչված թարգմանիչ Պարույր Միքայելյանն է: Նա արդեն հայտնի էր գերմաներեն քնագրից Գյոթեի «Ֆաուստի» թարգմանությամբ, որ բարձր գնահատականի էր արժանացել քննադատության կողմից և որ վկայում էր թարգմանչի մասնագիտակլան հմտության մասին:

Եռահատորյակում Պ. Միքայելյանը ներկա է նաև տասը բանաստեղծությունների և չորս պոեմների թարգմանություններով: Դրանցով ևս նա հաստատում է իր արժանի տեղը խորհրդային շրջանի հայ թարգմանական դպրոցի անվանի ներկայացուցիչների շարքում:

Պ. Միքայելյանը թարգմանությունների մեջ ներկայանում է որոշակի բանաստեղծական նկարագրով և թարգմանչական ձեռագրով: Նա կարողանում է որսալ քնագրի գեղարվեստական կառույցը ձևավորող բաղադրիչ տարրերի հարաբերակցության կշռաչափը, առանձնացնել հիմնական, կարևորագույն բաղադրիչը և թարգմանության մեջ տեսանելի դարձնել հենց դա:

Որպես օրինակ՝ դիտարկենք տասնչորսամյա պատանի բանաստեղծի «Սրինգ» («Цевниц а») բանաստեղծության թարգմանությունը: Այդ բանաստեղծության մասին Լերմոնտովի երկերի քառահատոր ակադեմիական հրատարակության ծանոթագրություններում ասված է. «Մուսա, գրացիաներ, զեփյուռ, սրինգ - սրանք դասական պոեզիայի ավանդական պատկերներ են: Այդ պատկերներին դիմելը և լեզվի որոշ հնաբույր որակը պատանի Լերմոնտովի տուրքն է գրական այն դպրոցին, որ ներկայացնում էին պանսիոնի ուսուցիչներ Ա. Ֆ. Մերզլակովը և Ս. Ե. Ռիչը»<sup>3</sup>: Սակայն բանաստեղծության մեջ ամենաէականը, տրամադրություն ստեղծողը

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>3</sup> М. Ю. Лермонтов, Собрание сочинений в четырех томах, т. 1, 1958, ст 8. 611

Թարգմանիչն իրավացիորեն համարել է ոչ թե դա, այլ անցածի հանդեպ կարոտի պատանեկան անմիջականությունը և վարակիչ քնարականությունը: Թարգմանության մկշ շեշտված է բնագրի հենց այդ կողմը:

Ահա բնագրից մի հատված.

На склоне гор, близ вод, прохожий, знал ли ты  
Беседку тайную, где грустные мечты  
Сидят задумавшись? Над ними свод акаций:  
Там некогда стоял алтарь и муз и граций,  
И куст прелестных роз, взлелеянных весной.  
Там некогда, кругом черемухи млечной  
Струя свой аромат, шумя, с прибрежной ивой  
Шутил подчас зефир и резвый и игривый.  
Там некогда моя последняя любовь  
Питала сердце мне и волновала кровь!..  
Сокрылось все теперь...

Եվ Պ. Միքայելյանի թարգմանությունը.

Լեռնալանջին, աղբյուրի մոտ, արոյոք տեսե՞լ էս անցորդ,  
Խորհրդավոր մի տաղավար. ուր երագներ կան թախծոտ՝  
Լուռ ծվարած ակացիայի կամարի տակ անշշուկ.  
Այնտեղ մի օր մուսաների սրբարանն էր վեհաշուք:  
Գարնան ձեռքով ջերմ փայփայված վարդերի թո՛ւփ կար փարթամ,  
Չորս կողմ ծաղկած թխկիների բույրն էր ծփում կաթնահամ,  
Առվի ափին, ջրին թեքված ուռիների հետ խոհուն  
Խաղ էր անում զեփյուռը միշտ, անհոգ խաղում օրն ի բուն:  
Ահա այնտեղ օրեր առաջ սե՛րը, սե՛րը իմ վերջին  
Ողջ արյունս էր ալեկոծում և կյանք տալիս իմ սրտին:  
Չի մնացել հիմա ոչինչ...

Առանց տեքստային մանրամասների մեջ խորանալու էլ աչքի է զարնում թարգմանության հարազատությունը բնագրին՝ հատկապես տիրապետող տրամադրությամբ, քնարական ապրումի շեշտադրությամբ, լեզվական մթնոլորտի ցայտուն բանաստեղծականությամբ: Եթե բնագրից բառացի շեղումներ, բացթողումներ, հավելումներ էլ կան, ապա դրանք բացառապես ստեղծագործական բնույթի են և որևէ կերպ չեն խախտում բանաստեղծական պատկերի իմաստային ու ռճական ամբողջականությունը: Այսպես՝ «стоял алтарь и муз и граций» թարգմանված է՝ «մուսաների սրբարանն էր վեհաշուք», որտեղ վեհաշուք սրբարանը իր մեջ կրում և արտահայտում է զոհասեղանի, մուսաների, գրացիաների հավաքական

իմաստը, «близ вод» բառակապակցությունը թարգմանված է «աղբյուրի մոտ» ավելի բանաստեղծական կապակցությամբ, «с прибрежной ивой шутит подчас зефир и резвый и игривый» նախադասությունը թարգմանված է հայկական բնապատկեր հիշեցնող կոլորիտային երկտողով.

Առվի ափին, ջրին թեքված ուռիների հետ խոհուն

Խաղ էր անում զեփյուռը միշտ, անհոգ խայտում օրն ի բուն:

Բնագրի տասվանկանի տողաչափը փոխարինված է տասներկուվանկանիով՝ նույն յամբական ոտքերով, որ յուրաքանչյուր տողավերջում ընդմիջվում է մեկ անապեստով: Այս վերջինը թարգմանության լեզվին հաղորդում է հաճելի մեղեդայնություն:

Պ. Միքայելյանի թարգմանությունը բավարարում է նաև մի այլ կարևոր պայման, որ ռուս թարգմանիչ Նիկոլայ Ջաբալոցկին սահմանում է այսպես. «Եթե օտար լեզվից թարգմանությունը չի կարդացվում որպես լավ ռուսերեն ստեղծագործություն, ապա այդ թարգմանությունը կամ միջակ է, կամ անհաջող»<sup>4</sup>: Պ. Միքայելյանի այս և Լերմոնտովից կատարած թարգմանություններից լավագույնները իրոք կարդացվում են որպես լավ հայերեն ստեղծագործություններ: Դա վերաբերում է նաև պոեմների թարգմանություններին: Օրինակի համար դիտարկենք մի հատված «Боярин Орша» պոեմի թարգմանությունից:

Ռուս գրականության պատմությունը Լերմոնտովի այս պոեմը դիտում է նրա այնպիսի ստեղծագործությունների շարքում, ինչպիսիք են «Պոետի մահը», «Խոհը», «Կալաշնիկովի երգը», «Մծիրին»: Միաժամանակ ընդգծում է, որ այդ գաղափարը դրսևորվում է բարդ փիլիսոփայական ու հոգեբանական հանգույցներով, որը և պայմանավորում է պոեմի բանաստեղծական մթնոլորտի լարվածությունը<sup>5</sup>: Հեղինակը այդ լարվածությունը մշտապես լիցքավորված է պահում մերթ պատմական ժամանակի կոլորիտային կենդանագրումով, մերթ մարդկային ապրումների ու շրջապատող միջավայրի արագ ու հանակարծական կերպափոխումներով, և այս բոլորը բանաստեղծի նախասիրած ութվանկանի յամբական տողերի աշխույժ ընթացքով... Բելինսկին Լերմոնտովի այս պոեմը բնութագրել է որպես «սարսափելի հզոր ստեղծագործություն»<sup>6</sup>:

Թարգմանչի խնդիրն այս դեպքում ավելի բարդ է, քան դիտված բանաստեղծության պարագայում: «Հայերեն լավ ստեղծագործություն»

<sup>4</sup> Քաղվածքն ըստ՝ К. Чуковский, Высокое искусство, М., 1988, стр. 39.

<sup>5</sup> Ст'ю История русской литературы, Л., 1981, ст8. 433-434:

<sup>6</sup> В. Г. Белинский, Собрание сочинений, в тринадцати томах, т, XII, М. 1965, стр. 115.

կերտելու պահանջին զումարվում է նաև բնագրի բանաստեղծական բովանդակության ամենաէական կողմերի ճշմարտացի վերարտադրության, հեղինակի դիմանկարի անադարտության, ոճական հատկանիշների պահպանման և դրանց հետ կապված այլ խնդիրներ: Ինչպես է լուծում այդ խնդիրները թարգմանիչը՝ փորձենք ցույց տալ պոեմի մի հատվածի ու թարգմանության համեմատությամբ: Վերցնենք վանականների դատի ժամանակ Արսենիի խոսքերից մի կտոր, որ գրեթե նույնությամբ, առկա է նաև «Մծիրիի» մեջ<sup>7</sup>.

Меня могила не страшит:  
Там, говорят, страданье спит  
В холодной, вечной тишине,  
Но с жизнью жаль расстаться мне!  
Я молод, молод – знал ли ты,  
Что значит молодость, мечты?  
Или не знал? Или забыл,  
Как ненавидел и любил?  
Как сердце билось живей  
При виде солнца и полей  
С высокой башни угловой,  
Где воздух свеж, а где порой  
В глубокой трещине стены,  
Дитя неведомой страны,  
Прижавшись, голубь молодой  
Сидит, испуганный грозой?  
Пускай теперь прекрасный свет  
Тебе постыл... ты слеп, ты сед,  
И от желаний ты отвык...  
Что за нужда? Ты жил, старик;  
Тебе есть в мире что забыть,  
Ты жил – я также мог бы жить!

Եվ Պ. Միքայելյանի թարգմանությունը.

Գերեզմանից ես չեմ սուկում.

---

<sup>7</sup> Այս մասին տե՛ս՝ М.Ю. Лермонтов, Собрание сочинений в четырех томах, т. 2, стр 677.

Ասում են, թե հողի խորքում,  
 Պաղ անդորրում հավերժական,  
 Վիշտն է նիրհում խաղա՛ դ այնքան:  
 Բայց կյանքից դա ո՞ն է բաժանվել,  
 Ջահել էմ ես, ջահե՛լ, ջահ՛ել:  
 Գիտե՞ս արդյոք, թե ինչ է սեր,  
 Մատաղ հասակ ու երագներ:  
 Թե՞ մոռացել ես հավիտյան  
 Հույզը սիրո, ազատության,  
 Այն հրճվանքն ու խինդը, երբ դեռ  
 Տեսնում էիր արև, դաշտեր՝  
 Աշտարակում կանգնած ուրախ,  
 Ուր օդն է թարմ, և ուր հաճախ  
 Քարե պատի ճեղքի մեջ խոր  
 Անհայտ երկրի որդին մուր՝  
 Աղավնին է նստում լռին,  
 Ահով նայում ամպրոպներին...  
 Չքնաղ աշխարհն այսօր գուցե  
 Մատչե հոգուդ... դու կո՛ւյր ես, ծեր,  
 Չունես էլ ոչ մի ցանկություն...  
 Ի՞նչ փույթ, ծերո՛ւկ, ապրել ես դու,  
 Մոռանալու շատ բան ունես...  
 Կարող էի ապրել և ես...

Այս հատվածը «Մծիրիում» միայն երեք տողի մասնակի փոփոխություն է կրել. «Что значит молодость, мечты»- ն դարձել է «Разгульной юности мечты», «В глубокой трещине стены»-ն «В глубокой скважине стены», «ты слеп, ты сед»- ը՝ «ты слаб, ты сед»: Այս փոփոխություններից միայն մի բառն է որոշ չափով այլ երանգ հաղորդել հատվածին. «Մծիրիում» վանահայրը ակեհեր է ու թույլ, «Բոյար Օրշայում» նաև կույր է: Բացի դրանից, եթե «Մծիրիի» երիտասարդ արեղան իր կենսաբաղձ հոգու ցավն ու կարոտը արտահայտում է իբրև խոստովանություն և հնազանդ է կրելու իր ճակատագրի խաչը, ապա «Բոյար Օրշայի» Արսենին ճաշակել է իրական սիրո քաղցրությունը, ներքնապես եռում է ակտիվ պայքարի կրակով, ուստի և նրա դիմումը կույր վանական դատավորին ոչ թե խոստովանություն է, այլ ըմբոստ մարտահրավեր:

Երկու պոեմների հոգեբանական հիմքերի այս տարբերությունը զգացվում է նաև բերված հատվածի՝ Հովհ. Թումանյանի և Պ. Միքայելյանի թարգմանություններում: Սա հաստատում է նաև այն իրողությունը, թե

ինչպես բառացիորեն նույն բանաստեղծական կառույցները տարբեր կոնտեքստերում կարող են հնչել այլ բովանդակությամբ ու երանգով: Թումանյանի թարգմանության մեջ Մծիբիի խոսքը շաղախված է թախծի, կարոտի, կենսասիրության ու ավստասանքի խառը զգացողությամբ և կրում է պոեմի հոգեբանական դաշտի ընդհանուր տոնայնությունը: Պ. Միքայելյանի թարգմանության մեջ նույն խոսքը հնչում է զգացմունքային այլ երանգավորմամբ, որովհետև խոսողը ուրիշ հոգեբանության կրող է, ուրիշ է նաև իրադրությունը, միջավայրը:

Երկու թարգմանությունների այս տարբերությունն զգացվում է թարգմանական բնագրի բոլոր մակարդակներում՝ տողաչափի, տաղաչափության, բառակազմի, բանաստեղծական խոսքի շարահյուսության, հնչերանգի... Թումանյանը բնագրի ութվանկանի չափը փոխարինել է տասվանկանիով՝ դանդաղեցնելով լերմոնովյան ոտանավորի խաղացկուն ընթացքը, որին նպաստում է նաև պարզ յամբական չափը և հարուստ հանգավորումը: Դրա փոխարեն յամբ-անապեստյան երկանդամ տողը թարգմանական բնագրին հաղորդում է մեղեդային երաժշտականություն, որ միանգամայն համահունչ է հերոսի տրամադրությանը: Պ. Միքայելյանը պահպանել է բնագրի ութվանկանի պարզ յամբական տողաչափը լերմոնտովյան ոտանավորին բնորոշ ռիթմիկան՝ հարուստ հանգավորմամբ: Զգացվում է, որ խոսողը այլ հոգեբանության կրող է, այլ կերպ է տրամադրված:

Թումանյանի բանաստեղծական անահատականությունը նրան հուշում է բառընտրության որոշակի նախասիրություն, բառակապակցության, դարձվածքի, նախադասության, բանատողի կառուցման որոշակի եղանակ ու ոճ: Պ. Միքայելյանը աշխատում է պահպանել լերմոնտովյան «մերկ» բառի հնչողությունը նաև թարգմանական բնագրում, իմացականի և զգացականի այն յուրահատուկ համադրությունը, որ անբացատրելի բանաստեղծական շուք է հաղորդում լերմոնտովյան «անգարդ» ոտանավորին: Բոլոր դեպքերում թարգմանիչը չի մոռանում, որ գրում է հայ ընթերցողի համար, ուստի հայերենը պետք է հնչի անբռնազբոս ու դյուրընթեռնելի:

Ահա բնագրի «Или забыл, или не знал» սկսվածքով հնգատողի թումանյանական թարգմանությունը.

Դու չես ունեցել կամ չես հիշում էլ,  
Թե ոնց ես մի օր ատել ու սիրել,  
Ինչպես է սիրտդ բաբախել ուժգին  
Կանաչ դաշտերին, վառ արեգակին  
Անկյունի բարձր բուրգից նայելիս...

Բնագրից բառացի շեղումներ չկան, կան միայն մի քանի բառ-հավելումներ, որոնք անհատականության գույն են տալիս թումանյանական թարգմանությանը: «Как ненавидел и любил» տողի թարգմանության մեջ ավելացվել է *մի օր* կապակցությունը: Թվում է, թե հավելումը կատարվել է տողի պահանջվող վանկաքանակը ապահովելու համար: Իրականում այդ հավելումով իրեն զգալ է տալիս անցածի անդարձության թախիծը, որ մշտապես առկա է Թումանյանի բանաստեղծական ենթագիտակցության մեջ: Այդ երանգը, առանց որոշակի բառային արտահայտության, կա նաև ռուսերեն բնագրում: Այնուհետև, լերմոնտովյան բնագրում դաշտերը և արևը մակդիրային բնութագրում չունեն: *Կանաչ և* պայծառ սովորական որոշիչների հավելումով Թումանյանը որոշակի հոգեբանական լիցքավորում է հաղորդել պատկերին, այսինքն՝ ազատության կարոտ մահամերձ երիտասարդի երևակայության մեջ դաշտերի *կանաչությունը* և արևի *պայծառությունը* իմաստային հատուկ հնչողություն են ձեռք բերում, մանավանդ *պայծառ*-ը Թումանյանի բառապաշարում հանդիպում է ամենատարբեր կապակցություններում:

Մեջբերված հատվածում դիտարկենք նաև նույն տողերի Պ. Միքայելյանի թարգմանությունները: Այստեղ բնագրից բառացի շեղումները նկատելի են. «Или забыл, как ненавидел и любил?» թարգմանված է

Թե՞ մոռացել ես հավիտյան

Հույզը սիրո, ատելության...

*Հավիտյան* հավելումը այստեղ ևս ակնարկում է անցածի անդարձության բնագրային թաքուն մոտիվը, նախադասության լրացում բաղադրիչը թարգմանված է հոմանիշ կապակցությամբ, որ թեև արհեստականության որոշ երանգ է տալիս հայերենին, բայց դրա փոխարեն շեշտում է սիրո և ատելության մոռացված զգացմունքի երբեմնի կենդանի հուզական թրթիռը: «Или забыл... как сердц е билось живей?» թարգմանված է *Թե՞ մոռացել ես... այն հրճվանքն ու խինդը*: Սրտի կենդանի տրոփը և *հրճվանքն ու խինդը* նույն հոգեվիճակի հոմանիշ բառային արտահայտություններն են: *Դեռ* մակբայի հավելումը *տեսնում էիր* բայի կողքին ակնարկում է, որ ծերունին միշտ կույր չի եղել... Իսկ վաղուց կուրացած ծերունու հիշողությունից *դաշտն* ու *արևը* արդեն իսկապես ջնջած պիտի լինեին իրենց գունային ու ձևային պատկերը... Ստացվում է, որ թարգմանությունը. հեռանալով բնագրի տառից, մոտեցել է նրան թարգմանական բնագրի իմաստային ու հնչական ամբողջականությամբ...

Այստեղ իմաստ չունի հարցը դնել այնպես, թե երկու թարգմանություններից որն է նախընտրելի. չպետք է մոռանալ, որ այս նույն հատվածը երկու տարբեր պոեմների համատեքստում հնչում է տարբեր

իմաստային շեշտադրությամբ: Թումանյանը հավանաբար տեղյակ էլ չի եղել, որ այդ հատվածը «Մծիրիի» տեքստ է բերվել ուրիշ պոեմից: Իսկ Պ. Միքայելյանի ձեռքի տակ էին և՛ Լերմոնտովի երկու պոեմները, և «Մծիրիի» մի քանի թարգմանությունները: Վերջապես պետք է նկատի ունենալ նաև երկու թարգմանությունների ժամանակը, գրական ու լեզվական այն միջավայրը, որտեղ ստեղծագործում էին երկու թարգմանիչները...

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՊՈԵՉԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ  
ԲԱՆԱՍՏՏԵՂԾՆԵՐԻ ԹԱՍՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ  
(Վ. Դավթյան, Գ. Էմին, Պ. Միքայելյան)  
ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում թարգմանությունները դիտարկվում են հիմնականում երկու տեսանկյունով, թե այդ թարգմանությունները որքանով են հարազատ բնագրի ոգուն և հեղինակի անհատականությանը, ինչ չափով են դրանք կրում թարգմանչի անհատականության կնիքը, ինչպես է անդրադարձել երկու անհատականությունների հարաբերակցությունը թարգմանության որակի վրա: Դա ցույց է տրվում բնագրի և թարգմանության համեմատական վերլուծություններով:

ПОЭЗИЯ М.Ю. ЛЕРМОНТОВА В ПЕРЕВОДЕ АРМЯНСКИХ  
ПЕРЕВОДЧИКОВ  
СОВЕТСКОГО ПЕРИОДА  
(В.Давтян, Г.Эмин, П.Микаелян)  
РЕЗЮМЕ

В статье переводы рассматриваются с двух точек зрения. Во-первых, насколько эти переводы созвучны духу оригинала и отражают индивидуальность автора, а во-вторых, качество перевода, созданного в процессе творческого взаимодействия автора и переводчика. В статье проводится сравнительный анализ оригинала и перевода.

M. YU. LERMONTOV'S POETRY IN TRANSLATION OF THE ARMENIAN  
TRANSLATORS OF THE SOVIET PERIOD

(V. Davtyan, G. Emin, P. Mikayelyan)

SUMMARY

In article the translations are considered from two points of view. First, as far as these translations are conformable to spirit of the original and reflect identity of the author, and secondly, the translation quality created in the course of creative interaction of the author and the translator. In article the comparative analysis of the original and the translation is mad

**ՈՒՅՄԱՆԱ ԿՈՍՏԱՆՑԱՆ**

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի հայցորդ

**ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ-ՎԱՍԻԼԻ ՇՈՒԿՇԻՆ ԳՐԱԿԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հրանտ Մաթևոսյան, Վասիլի Շուկշին, գյուղագրական արձակ, գրականություն, գյուղ, գյուղի կյանք, ավանդական, փոփոխություններ, դարավոր ավանդույթներ, քաղաքային կյանք, կենսակերպ

**Ключевые слова и выражения:** Грант Матевосян, Василий Шукшин, деревенская проза, литература, деревня, деревенская жизнь, традиционный, изменения, городская жизнь, уклад жизни, вековые традиции

**Key words and expressions:** Hrant Matevosyan, Vasily Shukshin, village prose, literature, village, rural life, traditional, changes, centuries, old traditions, urban life, lifestyle

Մաթևոսյանի և Շուկշինի գեղարվեստական արձակի հիմնական թեման անցյալ դարի 60-ական թվականների գյուղն է, գյուղում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերն ու փոփոխությունները, գյուղական ու քաղաքային կյանքի օտարոտի սերտաճումները: Այս դրսևորումները իրենց ընդգծված հետքը թողեցին գյուղաշխարհի ու սոցիալական հոգեբանության վրա: Կարևոր պատճառներից մեկն էլ այն էր, որ սկիզբ էր առել գյուղի քայքայման պրոցես, փախուստը գյուղից դեպի քաղաք: Գյուղագրության նոր սերնդի արձակագիրները մշակեցին նորօրյա կյանքի պատկերման նոր եղանակներ:

Մաթևոսյանը և Շուկշինը երբևէ չեն իդեալականացնում գյուղը կամ գյուղացիներին, մաթևոսյանական կամ շուկշինյան կերպարները զուրկ չեն նաև թերություններից:

Նրանց գրեթե բոլոր ստեղծագործությունների առանցքը մարդն է՝ հասարակության, պատմության, ազգային արմատների, բնության հետ ունեցած բազմաթիվ կապերով ու փոխհարաբերություններով: Նրանց հերոսները հաճախ դժվար բնավորություն ունեցող մարդիկ են, որոնք իրենք դժվար են ապրում և դժվարացնում են իրենց կողքի մարդկանց, անգամ հարազատների կյանքը: Բայց նրանք ծանր աշխատանքի մարդիկ են, նրանց աշխատանքով է երկիրը շենանում: Նրանց կյանքի դառն օրերը շատ շատ են, ուրախ օրերը քիչ, բայց գյուղի մարդը շատ համառ է, չի

կոտրվում և առաջ է տանում իր դժվար գործը՝ մեծացնում է իր երեխաներին, ստեղծում է իր տնտեսությունը և արհամարանքով նայում այն մարդկանց, ովքեր թույլ են ու նվնվան: Առհասարակ, աշխատանքի հանդեպ վերաբերմուքը դառնում է այն չափանիշը, որով ստուգվում են հերոսների մարդկային արժանիքները: Նրազ գործերում չեն սիրում այն մարդկանց, որոնք լքում են քայքայվող գյուղը և փախչում քաղաք՝ թեթև կյանք փնտրելու, անտեր թողնելով իրենց հայրական տունը, դարերի իրենց ժառանգությունը:

Բարձր գնահատելով Մաթևոսյանի գրական վարպետությունն ու լեզվական արվեստ՝ պրոֆեսոր Լ. Եզեկյանը գրում է. Իր մտածողությամբ Հր. Մաթևոսյանը իսկական հայ գրող է, հարազատ իր բնաշխարհին, այդ միջավայրի հայ մարդկանց ու նրանց հոգեբանությանը, բարքերին ու կենցաղին, և այս ամենի յուրաքանչյուր «մանրուքի» նկարագրությունը չի վրիպում տաղանդավոր գրողի տեսողությունից: Նա սիրով ու անկեղծությամբ է նկարագրում այս միջավայրը. Իր հերոսների կենցաղը, յուրաքանչյուր կերպարի ներկայացնում իր առօրյա աշխատանքով ու հոգսերով. Իր վարք ու բարքով, մտածողությամբ ու հոգեվիճակով»<sup>1</sup>:

Հրանտ Մաթևոսյանի արձակը մեր հին ու նոր գրականության ամենաինքնատիպ ու անանախաղեպ դրսևորումներից մեկն է: Նրա ստեղծագործությունների առանցքը հազար թելերով աշխարհին կապված գյուղն է, հերոսները՝ ճշմարտությունն ու սերը:

Մարդու և հողի խաթարվող բարեկամության և դրանից բխող հետևությունների կանխատեսումն էլ գրողի խոսքին հաղորդում է զայրույթ ու ցավ, որ ոմանք ընդունեցին իբրև պատերազմ քաղաքի և քաղաքակրթության դեմ: Հողի ու մարդու միջև սերնդից սերունդ բարեկամության խաթարումը ակամայից ճեղքվածք է առաջացնում և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, մարդկային առաքինությունների, ավանդների, ընդհանրապես բարոյական սկզբունքների մեջ:

Մաթևոսյանն առաջադրում է բուն, խորապես մարդկային խնդիր, որ չունի տարածքային սահմանափակում: Կարևորն այստեղ ընդհանրական երևույթի մասնավորումն է, փոքրի մեջ մեծը, ժամանակի համար բնութագրականը տեսնելու, գտնելու ստեղծագործական դիտողականությունն ու վարպետությունը:

<sup>1</sup> Եզեկյան Լ., Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 3:

Անուրանալի է ավանդույթների դերն ու նշանակությունը գրականության զարգացման գործում, սակայն միայն ավանդույթներով գրականություն չի ստեղծվում: Եվ ճշմարտությունն այն է, որ ժամանակակից գյուղական արձակը գրականություն եկավ ոչ թե նախորդների «տրորված արահետներով», այլ իր ճանապարհով և իր ժամանակին, իր հարցադրումներով ու մտահոգություններով:

Մաթևոսյանի արծարծած թեմատիկան և գաղափարները ժամանակահունչ են: Հին ու բարի ծմակուտի այս աշխարհի կորստյան տագնապն է Մաթևոսյանին տանում դեպի ժողովրդի նախահիմքերը՝ այնտեղ որոնելու գեղեցիկը, մաքուրն ու անաղարտը: Գաղափարական այս հարցադրումը ամենից առաջ մարդու և բնության միասնությունը պահպանելու հրատապ պահանջներին: Գրողը տագնապում է, որ բնությունից կտրվելը կարող է մարդուն հասցնել «մարդկայինի ինքադճատմանը»:

Ճիշտ է նկատել, որ «Մաթևոսյանը շատ բան ուզելով հանդերձ, ի վերջո մի բան է ուզում, որ իր լեռնաշխարհում երբևէ չխզվի հողի ու մարդու բարեկամությունը»<sup>2</sup>:

Հրանտ Մաթևոսյանի խոսքը դարձել է գեղարվեստական փաստ ամենից առաջ շնորհիվ բնատուր, իսկական ներշնչանքի և գրողական արվեստի: Ստեղծագործական մի շարք յուրահատկություններով է պայմանավորվել Մաթևոսյանի ստեղծագործությունների հաջողությունը: Ամենի առաջ ինքնատիպությունը: «Գյուտ արած չեք լինի, եթե ասենք, որ Մաթևոսյանի արձակի անբաժան հատկանիշը ինքնատիպությունն է»<sup>3</sup>:

Հ. Թամրազյանը գրել է. «Գրողը, բնականաբար, մյուսներից տարբերվում է հենց նրանով, որ խոսում է կյանքի լեզվով, գեղարվեստական պատկերների միջոցով բերում է հոգեկան այն գեղեցկությունը, ուր այս կամ այն չափով արտացոլվել և արձագանք են գտել դարերի հատկանիշները»<sup>4</sup>:

Շուկշինին հուզում է գյուղի ճակատագիրը, ապագան, քանի որ գյուղացին իր ապագան չի տեսնում իր հայրենի հողում, երիտասարդները առանց սրտի կսկիծ զգալու անվերադարձ հեռանում են լքում են իրենց հարազատ տունը: Շուկշինի ստեղծագործությունների հերոսները

---

<sup>2</sup> Արիստակեսյան Ա., Արձակի աշխարհը դառնում է մերը, «Մովեստական գրականություն», Եր., 1968, հ. 4:

<sup>3</sup> Հախվերդյան Լ., Մաթևոսյանի արձակը ինչպես որ մեզ ներկայացնում է, «Գարուն», Եր., 1968, հ. 6, էջ 45:

<sup>4</sup> Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, Հոդվածներ, Եր., 1998, էջ 164:

հասարակ գյուղացին է, գյուղական կյանքը, բնությունը, գյուղը իր ապրելակերպով ու վարքուբարքով:

Շատ հետազոտողներ կարծում են, որ Շուկշինի արձակի հերոսը մեկն է՝ խենթ ու տարօրինակ հերոսը, որը բացահայտվում է տարբեր ձևերով, այսինքն՝ կա մի կերպար, որ դիտարկվում է տարբեր տեսանկյուններից: Մակայն դասյդպես չէ: Ընդհանուր հատկանիշներով օժտված կերպարները նույնաբնույթ չեն: Շուկշինի ստեղծած «խենթուկ» կերպարները միանգամայն տարբեր են: Այդպիսով՝ Շուկշինը անհատի բնորոշման, նրա կյանքի արտացոլման նոր հնարավորություններ ու եղանակներ առաջ բերեց<sup>5</sup>:

Գյուղական արձակը արտացոլում է ռուս մարդու ազգային բնավորությունը, նկարագրելով հերոսներին, դրանով իսկ վեր է հանում այն յուրահատկությունը, որը բնորոշ է ռուս մարդու ազգային մտածելակերպին: Ցույց է տալիս ռուս կնոջ տոկունությունը, կամքի ուժը: Երկու գրողներին մերձեցնող առաջին գործոնը այն մեծ սերն էր, որ նրանք տածում էին գյուղի և գյուղացի մարդու, բնության, անարատ ու մաքուր աշխարհի հանդեպ: Երկուսն էլ ցավով են արձանագրում գյուղի դատարկվելը, ամայնալը, գյուղի՝ եթե ոչ վերացումը, ապա լիակատար վերափոխումը, թեպետ հնացած, բայց անչար ու անվնաս ավանդների մոռացումը, ինչը հղի էր բազում վտանգներով, մարդկային, բարոյական արժեքների նվազմամբ կամ կորստյամբ: Երկուսն էլ լավ են ճանաչում իրենց հերոսներին, այնքան խորն են ընկալում նրանց մտածողությունը, աշխարհահայացքը, որ, Մաթևոսյանի խոսքով ասած, ոչ թե պատմում են նրանց մասին, այլ խոսում են նրանց ներսից:

Այս հերոսները լինեն հայկական լեռներում, ձորերում, թե սիբիրյան դաշտ-տափաստաններում, ունեն բազմազան նմանություններ: Նախ արտաքին ընդհանրությունները. նրանք ապրում են միևնույն երկրում՝ Խորհրդային Միությունում:

Շուկշինի և Մաթևոսյանի ստեղծագործությունների ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ գրողների ստեղծած կերպարները երևութական կամ հորինված կերպարներ չեն. նրանք իրական են՝ համահունչ ժամանակակից կյանքին ու իրականությանը: Ինչպես նշվում է, «արվեստը պայմանավորված է մարդու գործունեությամբ ու կենցաղով: Ստեղծագործական արվեստը

---

<sup>5</sup> Грон В., Василий Шукшин, Личност книги, Барнаул, 1990, стр. 46.

ստեղծվում է, երբ մարդու, հայրենիքի կյանքում ու ճակատագրում ինչ-որ տեղաշարժեր են լինում, ինչ – բան է պատահում»<sup>6</sup>:

Ամեն ինչ և ամեն բան նպատակաուղղված է ճշմարտության հաստատման ու վերագտմանը: Ըստ գրողի՝ «պետք է միայն խոսել միայն կյանքի ճշմարտության մասին», այլ կերպ հնարավոր չէ անել, քանի որ ճշմարտության բացահայտումը արվեստագետի սուրբ պարտականությունն է<sup>7</sup>:

Գյուղը, գյուղում անցկացրած կյանքն ու գյուղացիների հետ կապված հիշողությունները մեծ դեր են ունեցել գրողների ստեղծագործական սկզբունքների ձևավորման հարցում: Հիշողությունները նրանց տարան դեպի գյուղ, և նրանք մարդկային կյանքի խնդիրները արծարծեցին գյուղական կյանքի շրջանակներում: Մաթևոսյանի և Շուշկինի պատմվածքների ժողովրդականությունը նախ և առաջ պայմանավորված է արծարծված թեմայով և կերպարներով, ժողովրդի խառնվածքով ու հոգևոր էությամբ: Այս ամենն իր արտացոլումը ստացել է գրողների ինքնատիպ մտածողության շնորհիվ:

Հետևելով հայ և ռուս դասական գրականության ավանդույթներին՝ Մաթևոսյանն ու Շուշկինը դարձան ազգային գրականության խոսքի մեծ վարպետներ: Նրանց ստեղծագործություններն արտացոլում են սոցիալական և հոգևոր արժեքների փոփոխություններ, տալիս են ազգային բնավորության ու խառնվածքի իրական նկարագիրը:

#### Օգտագործված գրականություն

1. Արիստակեսյան Ա., արձակագրի աշխարհը դառնում է մերը, Սովետական գրականություն, Երևան, 1968, հ. 4:
2. Եզեկյան Լ. Կ., Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր,
3. Երևան, 1986:
4. Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ. Հոդվածներ, Երևան, 1998:
5. Հախվերդյան Լ., Մաթևոսյանի արձակը ինչպես որ մեզ ներկայացնում է. Գարուն, Երևան, 1968, հ. 6:
6. Горн В., Василий Шукшин. Личност книги, Барнаул, 1990.

<sup>6</sup> В. Корпова, Василий Шукшин – прозаик, Москва, 1986, стр. 224.

<sup>7</sup> Ершов Л. Ф., Муромский В. П., Русская советская литературная критика (1956-1983), стр. 226.

7. Ершов Л. Ф., Муромский В. П., Русская советская литературная критика (1956 - 1983).
8. Корпова В., Василий Шукшин – прозаик, Москва, 1986.

Շոստանյան Ուլյանա

1960-ական թվականներին, պատմական նոր իրադրության պայմաններում սո-վետական գրականության գրեթե բոլոր հորիզոնականներում ձևավորվեց գրական մի հոսանք, որինտրվում էր «գյուղագրական արձակ» պայմանական անունը: Գլոբալտեղաշարժերն արդենթափանցել էին կյանքի բոլոր ոլորտները, գիտատեխնիկական հեղափոխությունը մուտք էր գործել նաև դարեր շարունակ որոշակիորեն իր կայունությունն ու անդորրը պահպանող գյուղ:

Մաթևոսյանի և Շուկշինի գեղարվեստական արձակի հիմնական թեման անցյալ դարի 60-ական թվականների գյուղն է, գյուղում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերն ու փոփոխությունները, գյուղական ու քաղաքային կյանքի օտարոտի սերտաճումները:

Քաղաքակրթությունն ու ուրբանիզացիան անհամեմատելի փոփոխություններ բերեցին, որոնց դեմ անգոր էր նույնիսկ մինչև այդ ավանդույթներով ապրող գյուղը: Ուրբանիզացիան ուղեկցվում էր ոչ միայն ձեռքբերումներով: Կորստյան ռեալ վտանգ էր սպառնում հարյուրամյակների պատմություն ունեցող շատ արժեքներին, որոնք անմիջականորեն կապված էին գյուղաշխարհին:

Костанян Ульяна

В начале шестидесятых годов в употреблении термина «деревенская проза» начинает уже чувствоваться некий акцент, некий специальный смысл, который заключается пока лишь в том, что «деревенская» литература начинает противопоставляться литературе городской.

В деревенских повестях и рассказах Г. Матевосяна и В. Шукшина исследовались такие явления, которые были результатом закономерного процесса перестройки традиционного деревенского уклада под влиянием широкого проникновения элементов городской культуры.

Цивилизация и урбанизация несли с собой несравнимые с прежними изменения, перед которыми была бессильна даже жившая до этого незабываемыми традициями деревня. Была тревога за судьбы вековых

традиций . В этих условиях был неизбежен духовный возврат к родным истокам.

В сопоставлении деревенской и городской жизни, была тревога за судьбы вековых традиций деревенской жизни.

Kostanyan Ulyana

In the early sixties in the use of the term "village prose" is already beginning to be felt kind of accent, some special meaning, which is still only in the fact that the rural literature begins opposed to urban literature.

Native and exciting topics for Matevosian and Shukshin was a village, nature and people. The changes that have taken place in the village, lifestyle, psychology. Two writers aspired to become a chroniclers of village. In their works is reflected village, life and the villager who is forced to leave their homeland and move to the city. This comparison of urban and rural life was concern for the fate of centuries-old traditions of rural life.

ԱՐԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի հայցորդ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՍՏԻԿԱՆ. ՄԻԱՄԱՆԹՈ

**Բանալի բառեր.** Ուժ, Գեղեցկություն, Հույս, Իդեա, Ազատություն, Լույս, Հող, Տեսիլք, Վրեժ, Հաղթանակ:

**Ключевые слова:** сила, Красота, Надежда, Идея, Свобода, Свет, Земля, Видение, Месть, Победа.

**Key words:** strength, Beauty, Hope, Idea, Freedom, Light, Earth, Vision, Revenge, Victory.

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Արևմուտքի բանարվեստը, պահպանելով քնարերգության տոհմիկ կենսագրությունը, հայտնագործում էր աշխարհընկալման նոր մոտեցումներ:

Իրապաշտական արվեստի բուն ընդերքում վերափոխվում էին կանոնիկ դարձած սկզբունքները: Ռուս և Արևմուտքի բանաստեղծները փարվում էին Այնաշխարհայինի կարոտներին և ակնթարթային փոխակերպություններին, գերակայում խորհրդանշան – պատկերի այլաբանությունը: Աշխարհն ընկալվում էր անիմանալի, անըմբռնելի խորհրդավորության մեջ: Ռուս խորհրդապաշտ Մերեժկովսկին, ժխտելով արվեստի ամեն կարգ ու զարգացում, ավետարան է հռչակում՝ «երրորդ արքայության» սեփական տեսությունը: Մետերլինկը սպասում էր լռության մեջ՝ ներանձնյա ապրումներում ճանաչելով Բնության հավերժական խորհուրդները. «Լռության մեջ սպասենք, թերևս կարողանանք զանազանել աստվածների շշուռը»<sup>1</sup>:

Հայ խորհրդապաշտների քնարերգության մեջ նույնպես «արտահայտվում է ողբերգական իրականությունից վերժամանակյա, վերհրական ոլորտներ հեռանալու, նախորդ դարերի քաղաքակրթությունների ու մշակույթների մեջ հանգրվանելու ձգտումը»<sup>2</sup>:

Անհունի հավերժալուռ երկինքների, օդանույշների խղիպարի՝ հոգիների էթերային անրջանքի, Երազի անդադրում ճամփաների ու

<sup>1</sup> История зарубежной литературы конца XIX – начала XX века, Москва, “Высшая школа”, стр.130.

<sup>2</sup> 20-րդ դարի ռուսական բանաստեղծություն, Երևանի պետական համալսարան, Երևան, 1982, էջ 511:

անապատային լռության փոխարեն՝ արևմտահայ իրականության մեջ Միամանթոն, Դ. Վարուժանը, Ռ. Մնակը իրենց լուսաբաղձ քերթվածներում դարերի համար Ուժն ու Գեղեցկությունն էին քանդակում՝ հոգևոր լույսն առնելով դյուցազնական դարերից. ուրիշ երգ էր պետք, ապրված, զգացված կյանքի երգը, կործանման եզրին կանգնած հայության համար ուժեղ գրականություն էր պետք, որովհետև «Եթե Եվրոպան է, որ կհնչեցնե այլասերումի ահագանգը, մի՛ մոռանաք, որ այդ սարսափելի ախտը ամենեն առաջ մե՛ր ցեղին կսպառնա, իբրև հին ցեղի մը»<sup>3</sup>:

1902 թվականին լույս է տեսնում Միամանթոյի «Դյուցազնորեն» քերթվածների առաջին ժողովածուն:

Հայ հանճարի մշտանորոգ, կենսունակ, արիական ոգին էր վեր հանում բանաստեղծական նոր ձևերի մեջ:

Գրաքննադատությունն անմիջապես արձագանքում է բանաստեղծի մուտքը: «Առաջին շրջանի բոլոր արտադրությանց մեջ Մեթերլինքի և Վերհարընի ազդեցությունը ծայրահեղորեն տիրական էր. այս հատորին մեջ, Յարճանյան ի վեր կհանե ներշնչում մը բացարձակապես անձնական, և իր արտահայտության ձևին մեջ է միայն, որ իր երկու սիրած վարպետները կշարունակեն պահել իրենց խորունկ դրոշմը»<sup>4</sup>:

Միամանթոյի գրական աշխարհայացքը ձևավորվում է Փարիզում: Մորթոնի համալսարանում ուսանելու տարիներին է, ուր և հաղորդակցվում է ժամանակի գրական հոսանքներին, ներգգայում Մ.Մետերլինկի, Է.Վերհարնի, Հանրի դը Ռենյեի, Տրիստան Կոբբիերի, Ժոզե-Մարիա դը Հերեդիայի, Ա.Ռեմբոյի պոետական ստեղծումների ներշնչանքը: «Հետո Փարիզն էր, որ կլիմորեր իր հոգին. կը կազմվեր իր մեջ արաբական նուրբ նժույզը փրփրերախ: Առհավական Ոստանը իր մեծագոռո հուզումներով կ'ազդեր քերթողին վրա՝ ազդելու համար հետո իր խուճապորեն գեղեցիկ արվեստին վրա»<sup>5</sup>, - գրում է Դ.Վարուժանը:

«Անիծված պոետներ»՝ այսպես անվանեցին իրենց առաջին ֆրանսիական խորհրդապաշտները: Ի տարբերություն պառնասականների՝ նրանք չէին պատրաստվում հեռանալ արդիականությունից, չէին փակում իրենց աչքերը արտաշխարհի իրողության դեմ. նրանք հեղափոխականներ էին, և նրանց ըմբոստացումը ուղղված էր և՛ արվեստի, և՛ կյանքի դեմ:

<sup>3</sup> Մնակ Ռ, Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 11:

<sup>4</sup> Չոպանյան Ա., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 655:

<sup>5</sup> Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 156:

Մեծ ողբերգակ պատնասականը՝ Բողլերը, 1848 թվականին կովում էր բարիկաղներում և հրատարակում հեղափոխական մամուլ: Արթյուր Ռեմբոն՝ որպես հրաձիգ, 1871 թվականին կոմունարների շարքերում էր: Անգամ նուրբ լիրիկ Վերլենը, որ չինովնիկի համեստ պաշտոն էր վարում Փարիզի մագիստրատուրայում, Փարիզյան կոմունայի ահեղ օրերին աշխատակցում էր հեղափոխական թերթերին: Միամանթոն նրանցից վերցրեց ընդվզման և ըմբոստացման ոգին և հնչեցրեց իր քնարը «ամպրոպային շեփորով» (Դ.Վարուժան):

Տարտամ, անորոշ մենության, ցնորական անուրջների, կապույտում հավվող եթերային, անշոշափելի կարոտների, անձրևի միալար երգի փոխարեն հնչում էր խորապես ազգային, ավիշով լեցուն մի գրականություն:

Միամանթոյի քերթողական արվեստը մարդերգության, արևերգության նորովի ընկալումն էր, աստվածաբնակ դարերի, Ուժի և Գեղեցկության տարփողումը:

«Իբրև միստիք» - գրում է Դ.Վարուժանը, - Միամանթո գրեց Հեղափոխության Նարեկը և Հովհաննու Հայտնությունը: Հոգևորականները բազմակոչ ծովում և լեռան փոթորիկներուն մեջեն ընդնշմարել կարծեցին Եհովային լուսահեղ դեմքը, մեր քերթողը գրեթե նույնը ըրավ»:

Դ.Վարուժանի այս տողերը հիշեցնում են ֆրանսիացի խորհրդապաշտ Պոլ Կլոդելի գնահատականը Արթյուր Ռեմբոյին. «Արթյուր Ռեմբոն միստիկ եղավ վայրի վիճակի մեջ, կորուսյալ մի աղբյուր, որ վերստին բխում է հագեցած հողից»<sup>7</sup>:

Միամանթոյի առաջին քերթվածները երևացին «Անահիտ», «Բանբեր», «Ազատամարտ», «Հայրենիք» և այլ պարբերականների էջերում: Տազնապահույզ իրականության մեջ, ուր «արյան ծփանքների» և «հրդեհվող ցորյանների» մեջ մաքառում էր արիական մի ժողովուրդ, կույր հանճարն էր՝ տենդագին որոնումների մեջ: «Դյուցազնորեն» շարքում հավերժական Տեսանողն է ու Երագողը: Կարծես զինով, խելահեղ անձկությամբ ու սրբազան հուզումով Միամանթոն նվաճում է բառ-պատկերի հնարավոր, նաև անհնարին սահմանները: Բոլոր քերթվածները սկսվում են ցածր տոնից և տող առ տող բարձրանում, ծավալվում, ահագնանում զգացողությունների բազմակերպության մեջ:

«Դյուցազնորեն» շարքը զարգանում է երկու գծով: Մի կողմից՝ արյունոտ մայրամուտները՝ երազների եղերական վախճանով, մյուս կողմից՝ երկինքների անդորրական կապույտը, վերհառնումի տաճարը՝

<sup>7</sup> Ռեմբո Ա., Բանաստեղծություններ, «Ապոլոն» հրատարակչ., էջ 5:

Ազատության քուրմերով, և հավերժական Երազողը, որն անցնում է «փրկության ոգումներեն շնչավորված»: Մերթ լուսացիր սփռումով Նա փարվում է լուսանյութ Տեսիլքին, մերթ վահագնաբոց կրակի հետքերով հեռանում դեպի հին, աստվածաբնակ դարերը՝ հնչեցնելով ամպրոպային շեփորը, վրեժի կանչով ոգեկոչելով ըմբոստացողների շարքերը:

Քերթողը «Դյուցազնորեն»-ում հասնում է միստիկ պաշտամունքի՝ անընդհատ բարձրացող, հրաձուփ օվկիանի ալիքների նման անվախճանորեն օղակ-օղակ հյուսվող ոգորումների խենթ թվերգությամբ, երբեք չընդհատվող փառաբանումով արիական մի Ցեղի Անմահության:

Ինքնին ուշագրավ են Սիամանթոյի գրական մեթոդի վերաբերյալ բնորոշումները: «Սիամանթոյի պոեզիայում առկա հասարակական մտիվները,- գրում է Ե.Պետրոսյանը,- մեզ որոշակի հիմք են տալիս ժխտելու նրան սիմվոլիստ հռչակելու այն ընդհանուր տենդենցը, որ արտահայտվել է մեր նախահոկտեմբերյան շրջանի քննադատության մեջ»<sup>8</sup>: Գրեթե նույն տեսակետին է նաև Հ. Ռշտունին:

Սիամանթոյի բանաստեղծական անհատականությանն այլ գեղագիտական գնահատական է տալիս Ս. Սարիկյանը. «Երբ 80-ականների գրական սերունդը սահմանազատվում էր ռոմանտիզմի գաղափարական և գեղագիտական չափանիշներից, երևի չէր ենթադրում, որ տասնամյակ հետո հայ իրականությունը կարիք պիտի զգար Աբովյանի, Ալիշանի, Բաֆֆու և Պատկանյանի ազատագրական – հայրենասիրական ավանդների նորոգության, այս անգամ արդեն ներհյուսված գրական մի նոր ուղղության՝ սիմվոլիզմի հետ: Հայ գրականության գեղարվեստական որոնումների այս հանգույցում ձևավորվեց Յարճանյանի բանաստեղծական անհատականությունը»<sup>9</sup>:

Անգամ խիստ բնապաշտական (նատուրալիզմ) պատկերներում Սիամանթոն անցնում է Տեսիլքի, վերիբրականի, տարապայմանի, ծայրահեղի և խորհրդավորի այն բարդ հանգույցներով, որ բնորոշ էր միայն և միայն միստիկ խորհրդապաշտ բանաստեղծին: Ա.Չոպանյանը, անդրադառնալով «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ին, գրում է. «Յարճանյանի այս հատորին այն հոյակապ էջերը, որ կտիտղոսվին «Արյուն», «Ափ մը մոխիր, հայրենի տուն», «Հիշատակ» «Գթություն», «Արյուն է որ կտեսնեմ», «Հայրենի աղբյուրը», «Արցունքներս», «Խավար», «Ծարավ», «Ես երգելով

<sup>8</sup> Սիամանթո, Ընտիր երկեր, Հայպետհրատ., Երևան, 1957, էջ 14:

<sup>9</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979, էջ 471:

կուգեմ մեռնիլ», «Սուրիս կայծերուն առջև», «Ասպետին երգը», ինչպես և «Դյուցազնորեն»- ին և «Հայորդիներ»-ուն գեղեցկագույն կտորները Արևելքի քնարերգության ուղն ու ծունծն իսկ կկրեն եվրոպական ճաշակի քուրային մեջ գտված, բայց իր ինքնությունը հզորապես պահպանելով<sup>10</sup>: Այնուհետև, շարունակելով միտքը, գրականագետը հասնում է այն համոզման, որ Միամանթոն իր երևակայությամբ և զգայնությամբ խորապես «արևելքցի» է՝ բանաստեղծական ճաշակը Արևմուտքի բանաստեղծներից «կերտած»՝ դիտելով, թե նա ուղղակիորեն սերում է «այն հին երգիչներին, որ Վեստաները, կամ Աստվածաշունչը երգեցին»<sup>11</sup>:

Դեպի նախագո քաղաքակրթությունները հեռանալը խորհրդապաշտների հիմնական թեմաներից էր, և այս իմաստով Մետերլինկը, Վերհառնը, Ժոզե Մարիա դը Հերեդիան, Ֆրեդերիկ Միսթրալը, Ա.Ռեմբոն շատ մոտ են Արևելքի բանարվեստին: Ահա մի հատված Ա.Ռեմբոյի ներաշխարհային պայծառացումներից. «... ես տեսնում եմ իմ անձկությունների պատճառը. ես բավական ուշ գլխի ընկա, որ ապրում ենք Արևմուտքում. Արևմտյան ճահիճներ: Ոչ թե կարծում եմ, թե լույսն աղճատված է, ձևը՝ խեղված, իսկ շարժումը՝ խոտորված... Դե լա՛վ, այժմ իմ միտքն անպայման ուզում է ծանրաբեռնվել բոլոր այն դաժան ձեռքբերումներով, որ ունեցել է գիտակցությունը Արևելքի վախճանից ի վեր... Բանականության իմ երկու գրոշը սպառվե՛ց: - Միտքը տիրակալ է, նա ուզում է, որ ես Արևմուտքում մնամ: Ուզածիս հասնելու համար նրան լռեցնել էր պետք: Ես գրողի ծոցն էի ուղարկում մարտիրոսների դափնիները, արվեստի ճաճանչները, հնարամիտների գոռոզությունը, թալանչիների եռանդը, ես վերադառնում էի Արևելք՝ նախագո և հավերժական իմաստությունը...»<sup>12</sup>:

Համադրական զուգահեռների այս շղթայում է բացահայտվում Միամանթոյի ստեղծագործական ակունքները; Երբեք չօտարվելով ազգային, դասական բանարվեստից՝ քերթողը քայլում էր ժամանակի գրականության հետ՝ պահպանելով բանաստեղծական ինքնության իր որակները: Արևելքը, Վեդաների քրմային լեզուն, ընտրյալ բառերը մոգական վերթևումներով են համադրվում նարեկացիական լուսաբուխ աղոթքների համանվագին:

<sup>10</sup> Չոպանյան Ա., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1988, էջ 663:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 663:

<sup>12</sup> Ռեմբո Ա, Բանաստեղծություններ, «Ապոլոն» հրատ., Երևան, 1991, Գարուն, էջ 105: Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, ԳԱ հրատ., Երևան, 1979, էջ 472:

«Դյուցազնորեն» շարքը բացվում է Ռիզ-Վեդայից առնված բնաբան-տողով՝ «Այնքա՛ն արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած»: «Դա պայքարի ու սթափումի նշանաբանն էր, - գրում է Ս.Մարինյանը, - որ բանաստեղծը ավանդում էր ժամանակակիցներին՝ իմաստավորելով այն պատմության՝ ողի առած ուրվականների պատգամախոսությամբ»<sup>13</sup>:

Ընդամենը վեց քերթված՝ շարունակաբար միմյանց լրացնող, ամբողջական մի վիպերգություն, «գոր բռնության դեմ ցցվող հայ ընդվզումը կազդե մտավորական երազանքներու մեջ գինովցած, բայց և գործել չկրնալեն տառապող իր պատանի հոգիին»<sup>14</sup>:

Բոլոր քերթվածների հերոսը Տեսանողն է ու Երագողը, որ միանում է, ձուլվում հորիզոնում ուրվագծված ըմբոստացողների ամբոխին:

«Հույսին ճամփան» առաջին քերթվածում «Սրբազան նպատակի» համար ոտքի ելած «հսկայաձև ռահվիրաններն մարմարեղեն Հույսին» իսելահեղորեն առաջանում են դեպի բախումները: Միամանթոյի հոգիացած, տեսլական պատկերներում դիմում են Երագողին, որ, վճռական փոթորկումներին անտարբեր, շրթունքները դեպի Ցավն է կարկառել:

Անշարժ, անտարբեր, բազուկները հոգնածորեն միշտ դեպի վեր, սակայն վերք դարձած նայվածքներով Տեսանողը լսում է ըմբոստացողների աղաղակը («Հույսին ճամփան» էջ 3)

Օ՛, նախ քո փորված բիբերդ անհուն,  
Մեր պաշտամունքի ջահերուն դարձու՛ր,  
Ու մտածումովդ մեզի ունկնդրե,  
Գիտենք, որ դուն երագող մըն ես ու այլուրներեն  
սթափեցուր...»<sup>15</sup>:

«Հույսին ճամփան» քերթվածը երկխոսություն է Երագողի և սպագայի «Ազատության բացաստանները» նվաճելու ելած ռահվիրանների միջև, ովքեր «երջանկորեն, կենդանաբար Արեգակին ծննդյանը կսպասեն»:

Քերթվածն ավարտվում է Երագողի և մոլեգին դյուցազունների ճանաչումով: Աստղերի մաքրության ներքո խաչաձևվում են սրերը: Հույսի ճամփան երդումների երդումն է՝ Միաբանությունը՝ Ազգի Երագը:

<sup>13</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, ԳԱ հրատ., Երևան, 1979, էջ 472: Ա.Չոպանյան, Երկեր, Ատոմ Յարճանյան, Երևան, «Մովեստական գրող», 1988, էջ 655:

<sup>14</sup> Ա.Չոպանյան, Երկեր, Ատոմ Յարճանյան, Երևան, «Մովեստական գրող», 1988, էջ 655:

<sup>15</sup> Միամանթո, Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ., 1957, էջ 3: Մեջբերումներն այսուհետ նույն հրատարակությունից:

Երկրորդ քերթվածը՝ «Աստվածացումը», պատգամն է Ազատության: Տեսիլները նվաճում են հորիզոնները, նրանք հզոր են, դաժանորեն սպառազեն: Երկու Ձևեր՝ զարհուրանք տարածող, կործանված տաճարի խաչքարերի վրա նահատակների փառքի աստվածացումն են ունկնդրում: Ու անցնում են տեսիլների քարավանները՝ «Ազատարար խոյանքներով» «Իդեալի ոսկի գագաթներեն»՝ մտքերն ու աչքերը անընկճելի Հույսին կարկառած:

Աստվածացումը՝ շղթայագերծման ահազանգն է, հավատքի գերբնական փայլակները, անձնագոհումների եղերական ժամը: Աստվածացումը վաղվա Ազատության խարույկն է, Վրեժից սառած արյունը, որ դեպի հաղթանակ է տանում: «Աստվածացում» քերթվածի պատկերային համակարգը հիշեցնում է «Աստվածաշունչ» մատյանի Հայտնության տեսիլքը:

Բոլոր պատկերները՝ հոգիացած, տեսլական, վերիբրական, Անկարելիի, Անիմանալիի, խորհուրդն են կրում, ինչպես Հայտնության Տեսիլքում: «Երկու Ձևեր»՝ անդեմ, անմարմին, անշոշափելի, և ձայներ՝ հրամայող, առաջնորդող, որ Արդարություն և Ճշմարտություն են օրհներգում («Աստվածացում»):

Հանկարծ երկու Ձևեր, դաժանորեն սպառազեն,  
Իրենց սուրերը արեգակին՝ ու ծանրադեմ մեզի ըսին.  
Եղբայրն է ր, այսօր օրերուն օրն է, ու գիտենք որ պատրաստ եք  
դուք Արհավիրքին,  
Բայց մեր երկաթե դաստակներն անոր կուրծքին աղեղել է առաջ,  
Սա՛ կործանված տաճարին խաչքարերուն վրա,  
Հոն, ուր Անոնց ոսկերտտին կը հավերժանա,  
Փառքերու աստվածացումին ունկնդրեցեք...

Ահա Հովհաննես առաքյալի Հայտնության ԺԹ գլխի այս հատվածը. «Եվ տեսա երկինքը բացված, և ահա մի սպիտակ ձի, և նա, որ նորա վրա նստած էր, կոչվում էր «Հավատարհիս» և «Ճշմարիտ», և արդարությունով է դատաստան անում և պատերազմում»<sup>16</sup>: «Հավատարհիս» և «Ճշմարիտ»՝ երկու Ձևեր, երկու գաղափար, որ կրում են Աստվածայինի խորհուրդը:

Սիամանթոն «Աստվածացում» քերթվածի ենթատեքստում Հայտնության Տեսիլքի ա՛յս գաղափարն է արծարծել:

<sup>16</sup> Աստվածաշունչ, գլ. ԺԹ, էջ 1420, Ֆրանսիայի Հայ Ավետարանչ. ընկերակցություն 1990: Այսուհետ բոլոր մեջբերումները նույն գրքից:

«Արշալույսներ» քերթվածում շարունակվում է Հայտնության Տեսիլքը: Ապառաժուտ բուրների տակից «մեռելները» տարածում են իրենց մերկ բազուկները՝ ըմբոստացումի կոչերով: «Եվ տեսա մեռելները՝ մեծ և փոքր կանգնած աթոռի առաջին...» (Աստվածաշունչ):

Ծավալվում է արևագալի պատարագը՝ «վերեն հորդող լույսերուն տակ»: Հարություն առածների երգն է՝ մղձավանջային ու երկյուղած՝ ուղղված «վաղվան դյուցազուններին»: Երգը օրհնության ավետիս է, որ ծիածանի նման պիտի լուսավորե մութ ու անողորմ ճամփան անցնող ըմբոստների, որ «առավոտին խորը մխրճելով»՝ քայլում են դեպի Նպատակը սրբազան:

Հայտնության Տեսիլքում Հովհաննես առաքյալը վկայում է. «Եվ ձայն լսեցի Երկնքիցը՝ շատ ջրերի ձայնի պես և մեծ որոտմունքների ձայնի պես. եվ քնար ածողների ձայնի պես լսեցի, որ իրանց քնարներն ածում էին: Եվ երգում էին մի նոր երգաթոռի առաջին և չորս կենդանիների առաջին և երեցների առաջին. և ոչ ոք չէր կարող ուսանել այն երգը, բացի այն հարյուր քառասունչորս հազարներից, որ երկրից փրկվել էին» (Աստվածաշունչ, Հայտնություն, գլ. ԺԴ):

Հայտնության ԺԵ գլխում «զազանի» հաղթողների երգն է. «Եվ տեսայ իբրև ապակեղեն ծով՝ կրակով խառնված. և նորանց, որ յաղթում են զազանին և նորա անունի թիվին, որ կանգնած էին ապակեղեն ծովի վերայ, և Աստուծոյ, քնարներն ունեին: Եվ երգում էին Աստուծոյ ծառայ Մովսեսի երգը՝ ասելով. «մեծ և զարմանալի են քո գործերը, Տեր Աստված Ամենակալ, արդար և ճշմարիտ են քո ճանապարհները, ով սուրբերի Թագավոր»: (Աստվածաշունչ, Հայտնություն):

Աստված առաջին «հեղափոխականն» էր, որ Արդարության հասավ Վրեժի և Ցասումի սրով: Աստծո արդար բարկության երրորդ սկավառակը թափվեց գետերի և ջրերի աղբյուրների մեջ. արյամբ և սրով հաստատվեց Ազատությունն ու Արդարությունը: Եվ ձայն լսվեց մաքրագործող ջրերի հրեշտակից. «Արդար ես Տեր և Սուրբ, որ այս դատաստաններն արիք»: (Աստվածաշունչ, գլ. ԺԶ):

Միամանթոյի դյուցազնածին մայրերն էլ օվսաննաներով օրհներգեցին աղամանդ արշալույսները և հայրերի փառքը:

Երգի սիմվոլը Միամանթոյի քնարերգության գեղարվեստական համակարգում սկիզբ է առնում հայ ժողովրդի աղոթքներից ու շարականներից:

Թեպետ հայ եկեղեցականությունն ու աշխարհականությունը իրարից բաժանված էին, այնուամենայնիվ մաքառման քաղաքականությունը ընդհանուր էր երկուսի համար: «Չոգևոր երգն էլ, - գրում է Մ.Աբեղյանը,-

վերջին հաշվով նույն մաքառման միջոցներից մեկն էր: Նա ժողովրդի մեջ գորացնում էր քրիստոնեությունը՝ ոչ հավատացող այլազգիների հանդեպ»<sup>17</sup>: Աբեղյանը գտնում է, որ մեր հոգևոր «երգերն իրենց նյութն առնում են Աստվածաշնչից, և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին»<sup>18</sup>:

«Արշալույսներ» քերթվածին հաջորդում է «Ճակատամարտը»: Տեսանողը ռազմերգու է, որ միանում է ըմբոստացողների Խնեթությանը: Պայքարից առաջ հառնում է վաղնջական օրերի հայ քաջի Ուրվականը, որն առաջնորդում է դյուցազուններին: Արդար է պայքարը, Ցեղի արյունն է եռում անհուն ցասումից: Կործանված Անմահությունը խոտով է պատվել, սակայն Անցյալի Հրեղեն տեսիլքը Վրեժ է երգում:

Ցեղն ապրել է ուզում, շղթաներից ազատվել, ստեղծել և վերածնվել է ուզում: Ցեղը նախահայր է Ուժի, Գեղեցկության, Նվաճումի և Արարման: Ցեղը հպարտ է իր անցյալի, իր փառքի, իր Մտքի հիշողությամբ: Եվ նա վերստին ուզում է ապրել, գեղեցկանալ, իրականանալ («Որբերու ճակատագրեն»):

Արբշիռ երևակայությամբ «արծաթյա առավոտի» լույսերի մեջ Երագողը տեսնում է ապագայի պայքարն ու Հաղթանակը: «...Դյուցազներգակ մը չէ Յարճանյան, դյուցազուններ երգելով հանդերձ, - գրում է Դ.Վարուժանը: - Ան հեղափոխության ոգեկոչող երգիչ է, ռազմերգու մըն է: Իր հերոսները քաջությունը քաջության համար չեն պայքարի, ինչպես հիները կ'ընեին ընդհանրապես...»

...Այս դյուցազուններուն համար կոիվը պարտականություն մըն է՝ բնության իրավակարգեն և հայրենիքեն պարտադրված...»<sup>19</sup>:

«Հաղթանակեն հետո» քերթվածում թաղումն է քաջորդիների: Տազնապները կարծես մեղմացել են, խավարներից ծնված, հաղթանակի հուրերով աղամանդված արշալույսը Հաղթանակ է արարել: Երագողն ականատեսն է դառնում «փառքերու փառքին»: Միանում են հարություն առածի ու վաղվան դյուցազունների արյունոտ դաստակները. մեր վաղնջական հողի համար սրբորեն քանդակվել էր դարերի Իդեալը՝ Ազատությունը: Մուրը զոհ չգնաց, այլ մասնատվեց դյուցազունների ոգու մեջ, սուրը պահապան դարձավ Ինքնության, Ցեղի տեսակի հարատևման ու

<sup>17</sup> Աբեղյան Մ., Հայոց հին գրական պատմություն, հատ. Ա, Հայկ. ՄՍՀԳԱ հրատ., Երևան, էջ 474:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 475:

<sup>19</sup> Վարուժան Դ., հատոր 3, Յարճանյանի քերթողությունը, ԳԱ հրատարակչ., Երևան, 1987, էջ 159:

սրբազան Հոդի: Բոլոր քերթվածներում երևում է սուրի սիմվոլը՝ խորհրդանիշը Արդարության, ինչպես Հայտնության Տեսիլքում. Եվ նորա քերանիցը դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. և ինքը հովվում է նորանց երկաթե գավազանով...» (Աստվածաշունչ, Հայտնություն): Սուրը հեսանվել է արդար վրեժի համար, ոգիացել, սուրը նահատակների, արդարակյացների ու սրբերի մասունքները կրող տապան է դարձել: Սուրի արդար պողպատին պարտքի պատվիրաններ և աղոթքի խոսքեր են նշմարվում, սուրն Արդարության ու Ճշմարտության պատարագ է՝ ընդդեմ բռնության ու Եղեռնի: Սուրը սրբագործվեց տաճարներում և անվանվեց Խորհուրդի մեջ մկրտություն, իսկ Սրի ոգին անցավ ընծայման կրակների միջով: Այն հուրհրատում է աջի մեջ Սերովբեի, որպես պատժող, որպես վրեժխնդիր խորհրդանիշը երկրային սիրո: Միամանթոյի Սուրի սիմվոլն ահա այս ոգին է կրում՝ վերերկրային, այնաշխարհային մի խորհուրդ:

Քերթվածն ավարտվում է մի հոյակապ տեսիլքով: Կարծես հին, դյուցազնական օրերն են վերադառնում՝ տեսնելու երկրպագությունը նահատակ ասպետների. ադամանդյա արշալույսների մեջ ճառագայթվում են բյուրավոր սուրեր՝ սուզվելով կուրծքը սրբազան Հոդի՝ որպես հաստատում վաղվա Ազատության («Հաղթանակեն հետո»).

Ու մեր ձեռքերեն խելահեղաբար արձակված սուրերը բյուրավոր,

Հեռավոր հողին վրա շանթերու պես հանկարծողեն խորասուզվեցին:

Վերջին քերթվածում՝ «Հանգրվանը և վաղորդայնը», ազատության մարտիկների հաղթական տունդարձն է: Վճռական ու համառ՝ նրանք քայլում են այն ուղիով, որի վրա «ուրիշ նոր ու մեծ Երազներ իրենց թևերը կը բանան»: Այդ նոր ու մեծ Երազի՝ ճամփին լայն ու արգավանդ առավոտի նման մայրերի տեսիլքն է հայտնվում: Կրկին ծավալվում է երգը: Նրանք՝ որպես վաղնջական ու մաքրակրոն քրմուհիներ, արծաթյա սրբազան խնկամաններով իրենց պաշտամունքն են արտաբուրում՝ նախնիների և զավակների աստվածացման համար:

Հինավուրց հնձանների աստվածային ու անապակ գինին և ողջակեզը աննվաճ ցուլերի, ավետարանական ցորյանը, արգասավոր դաշտերի անսահման տարածումը և վաղվա սերմնացանները - ահա հատուցումը ոգեղեն պայքարի: Քերթվածը երկրպագություն է Արարատներին՝ «դարերու անձայն սուզեն հետո», ազատության Հոդին, արշալույսներին: Եվ պայծառակերպված, աստվածացած՝ հեռանում են Երագողն ու ապագայի դյուցազունները դեպի «հավիտենական ու ճշմարիտ Ոստանները» («Հանգրվանը և վաղորդայնը»).

Առավոտ մը նորեն, նույն զավակները նույն իդեատանջ ու դարավոր ցեղին,  
Բոլորս մեկ պայծառորեն մեկնեցանք հանգրվանեն,  
Մինչդեռ մեր երիտասարդի երկաթի ուսերը կը լայննային...  
Արդարության և Ձորության և Լույսի վաղորդայնին՝  
Գրանիտե հավիտենական ու ճշմարիտ Ոստաններուն  
Աստվածադիր հիմնաքարերը կարենալ կրելու համար...

«Դյուցազնորենը, - գրում է Ա.Չոպանյանը, ամենեն հզոր տեսիլքներեն մին է, զոր հայ միտք մը հղացած ու պղնձի մեջ քանդակած ըլլա»<sup>20</sup>:

«Դյուցազնորեն» շարքն ավարտվում է ադամանդյալ արշալույսների երազանքով: Ծավալվում է ազատության Հողի համազանգը՝ հնչեցնելով նոր առավոտների երկունքը «Նույն իդեատանջ ու դարավոր ցեղին» զավակների:

«Դյուցազնորենը» թե՛ իր պատկերային համակարգով, թե՛ խորհրդանիշերով, թե՛ ոգեղենությամբ մոտենում է Հայտնության Տեսիլքին: Միամանթոյի միստիկ գեղագիտությունը բացահայտվում է «Աստվածաշունչ» մատյանով:

Աստված և ապագայի դյուցազունները Սրբազան Հեղափոխության կրողներն են: Մարգարեական ներքնատեսությամբ Միամանթոն հաղորդակցվեց թե՛ Անդրաշխարհի և թե՛ Այսաշխարհի գոյությունների հետ: Որպես Հաղթանակի ու Ցեղի գոյատևման պատարագ՝ «Դյուցազնորեն» անկրկնելի է իր ձևի և կշռույթի մեջ:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Միամանթոն հայ քնարերգությունը նորոգեց բանաստեղծական հաստատ ճարտարապետությամբ: Նրա անսանձ երևակայությունը ստեղծեց հզոր պատկերներ: Բանաստեղծությունների ներշնչումն ու ազնիվ խոռվքները պայմանավորված են ծավալվող մտածողության ներքին խորությամբ և ընդգրկման լայնությամբ:

Արևմուտքի բանաստեղծների Մ.Մետերլինկի, Է. Վերհառնի, Ժոզե Մարիա դը Հերեդիայի համադրական զուգահեռների շղթայում բացահայտվում է Միամանթոյի ստեղծագործական ակունքները: Երբեք

<sup>20</sup> Չոպանյան Ա., Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, էջ 659-660:

չօտարվելով ազգային դասական բանավեստից՝ բանաստեղծը քայլում էր ժամանակի գրականության հետ՝ պահպանելով բանաստեղծական ինքնության իր որակները:

### РЕЗЮМЕ

Сиаманто с поэтическим искусством восстановил армянскую лирическую поэзию. Его неукротимое воображение создавало великие образы. Вдохновение и благородные эмоции стихотворения обусловлены внутренней глубиной вечного размышления и шириной инклюзии.

Проводится сравнительная параллель с поэтами Запада М. Метерлинком, Э. Вергарном, Жозе Мария де Гередиа – и раскрываются творческие источники Сиаманто.

Никогда не расходясь с национальной классической поэзией, поэт не отрывается от современной литературы, сохраняя свое собственное качество поэтической личности.

### Summary

Siamanto renewed Armenian lyric with poetic constant architecture. His tameless imagination created great images. The inspirations and noble emotions of the poems are conditioned by the inner depth of ongoing thinking and width of inclusion.

With the help of drawing comparative parallels with poets of the West, such as Meterlink, E. Verharni, Josi-Maria de Heredia, Siamanto's creative sources are disclosed. Never separating from national classical poetry, the poet walked side by side with contemporary literature preserving his own qualities of poetic identity.

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** թատրոն, դրամատուրգիա, կլասիցիզմ, ռոմանտիզմ, գեղագիտություն, զգացմունքային, ստեղծագործական մոտեցում, սյուժե, պատմական, պիեսներ:

**Ключевые слова и выражения:** театр, драматургия, классицизм, романтицизм, эстетика, эмоциональный, творческий подход, сюжет, отличная, исторический, пьесы.

**Key words and expressions :** theater, dramaturgy, classicism, romanticism, aesthetics, emotional, creative approach, plot, feelings, historical plays.

Իր բացառիկ տաղանդի և օժտվածության շնորհիվ Մկրտիչ Պեշիկթաշյանը պատկառելի ներդրում է ունեցել արևմտահայ գրական-մշակութային կյանքի զարգացման գործում: Լինելով առաջադեմ մտավորական՝ նա մեծ կարևորություն է տվել թատրոնին՝ այն համարելով հասարակական կյանքի զարգացվածությունն ապահովող կարևոր օղակ:

Մ. Պեշիկթաշյանը 1856 թվականին կազմակերպեց արևմտահայ թատրոնի հիմնադրումը՝ նոր փուլ բացելով հայոց թատրոնի պատմության մեջ: Այդ ասպարեզում նա և՛ բեմադրվող պիեսների հեղինակ էր, և՛ թարգմանիչ, և՛ դերասան: «...Ուրիշ տեղ մը զայն կտեսնենք բեմին վրա, իր սեփական ճիգերովն ու ձեռքերովը կանգնված բեմին: Առավոտը թատերգություններ կը գրե և երեկոյին ինք անձամբ կը խաղա զանոնք՝ իր հավաքած խումբին հետ»<sup>1</sup>, - այսպես է պատմում Դանիել Վարուժանը դրամատուրգի՝ թատերական գործին ներգրավվածության մասին:

Մ. Պեշիկթաշյանի պիեսները հայ դրամատուրգիայի արժեքավոր երկերից են: Նա իր գրական գործունեության երկրորդ շրջանում (1850-1860-ականներ) մեկը մյուսի հետևից գրում է «Կոռնակ», «Արշակ», «Վահան», «Վահե» դրամաները: Թատերագիրն անդրադառնում է հայ ժողովրդի պատմական անցյալին՝ հստակ գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ ազգային ինքնագիտակցություն արթնացնելու համար գրականությունը կարող է լավագույն ուղին հարթել, իսկ թատրոնը՝ նպաստել դրա տարածմանը: Հանդիսատեսի ուշադրությունը գրավելու համար նա իր

<sup>1</sup> Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, Երևան, 1987, էջ 184:

ողբերգությունների նյութը վերցնում է պատմական անցյալից, երբ երկպառակությունն ու մատնությունն էին վճռում հայոց տխուր վիճակը:

Մ. Պեշիկթաշյանի դրամաների առանձնահատկություններից է այն, որ դրանք գրված են աշխարհաբարով: Եթե պատմական ողբերգությունների լեզուն գրաբարն էր, ինչն ապահովում էր այդ ժանրի համար անհրաժեշտ վսեմ ոճը, ապա աշխարհաբարը քանդեց այն պատնեշը, որ կար ընթերցողի և ստեղծագործության, հանդիսականի ու թատրոնի միջև:

Մ. Պեշիկթաշյանի դրամատուրգիայում տիրապետող է պատմական թեմատիկան: Դրամատուրգն անդրադարձել է 4-րդ դարի դեպքերին՝ ստեղծագործաբար մոտենալով պատմական նյութին: Հեղինակը չի մնում պատմության քարացած անունների և դեպքերի կաղապարված շրջանակում: Իսկ պատմական նյութի վերաբերյալ նման մոտեցումը հատուկ է ռոմանտիզմի գեղագիտությանը:

«Կոռնակ» դրաման գրվել է ստեղծագործական բռնկման շրջանում՝ չորս օրվա ընթացքում: Այս դրամայի գրությունն ու բեմադրությունը շրջադարձային եղավ հայ գրականության և թատրոնի համար: Տպավորիչ երկխոսությունները բացահայտում են հերոսների հուզաշխարհը: Դրամայում հեղինակի գաղափարական հերոսը Ներսեսն է, ով անձնագոհ հայրենասերի տիպական կերպար է: Մանավազան Ներսես իշխանի հակապատկերն է Կոռնակը: Այս երկու հակադիր հերոսների փոխադարձ թշնամանքից բխող պայքարը դառնում է գործողությունների և բախման զարգացման հիմնական շարժիչ ուժը:

Կոռնակի և Ջավենի տևական գրույցներում բացահայտվում է դժբախտ հոր ներքին դրաման. «Գիտես, որ գահասիրության փափագով վառված՝ մերժեր է հայրս աթոռեն, որ սրտին ցավեն աչվները կուրցած՝ Ներսեսին քով ապավիներ էր. ես խնդրեցի Նեսեսեն, որ չընդունի զինքը, անիկա, գիտես, որ մտիկ չըրավ, ու ակնե բռնկեցան մեր թշնամությունները, ու մեկ հատիկ սիրական զավակս պատերազմի սուրը հնձեց ծաղիկ հասակին մեջ»<sup>2</sup>: Դրամատուրգը պատմական իրողություններին տվել է արդիական կառուցումներ: Կոռնակի համար հայրենիքն ունի առաջնային նշանակություն, սակայն նա առաջնորդվում է զգացմունքներով՝ անտեսելով բանականության կարևորությունը:

Եթե կլասիցիստական ստեղծագործության մեջ բանականության սկզբունքներին հետևելը գեղագիտական հիմնադրույթ էր, ապա, անշուշտ,

<sup>2</sup> Մկրտիչ Պեշիկթաշյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 155:

վերոնշյալը ռոմանտիզմի դրսևորում է, երբ զգացմունքները դառնում են գերիշխող:

Թվում է՝ Կոռնակի գործողությունները միանգամայն արդարացված են. նրա հոգին կրծում է որդեկորույս հոր վրեժը, որը դառնում է ամեն վատ արարքի պատճառաբանությունը: Ջավենի հետ զրույցում նա կարծես զղջում է Կամսարական տոհմին բնաջինջ անելու և իր եղբորորդի Վասակին սպանելու համար: Սակայն նրա չարագործությունները դրանով չեն սահմանափակվում: Երբ նրա հայրը՝ Տրդատը, փորձում է դարձի բերել իր մոլորյալ զավակին՝ խրատելով անդունդից հեռու պահել յուր ազգը, Կոռնակը դառնում է հայրասպան:

Կոռնակի կերպարի ստեղծումը արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի պահանջն էր: Նրա նախատիպը ազգային վերածնության ու զարթոնքի համար ստեղծված «Համազգյաց» ընկերության քաղաքական հակառակորդ Անտոն Հասունյանն էր՝ կաթոլիկ հայոց տիրահոշակ պատրիարքը: Դրամայի բեմադրության ժամանակ Մ. Պեշիկթաշլյանը մարմնավորում էր Ներսեսին: Բեմի վրա հեղինակը փոխել է դրամայի «Բայց հիմա ալ կ'ըսեմ քեզի, վախցի՛ր, սուկացի՛ր Կոռնակ. դուն, որ չարության մեջ քարացեր, պնդացեր ես, ու նենգությամբ խարդախ հնարքներով և անհաշտ ատելությամբ իրավանց և արդարության դեմ ու կը պատերազմիս, ու ժպիռի ձեռքովդ թոյն կսերմանես ազգիդ մեջ, մի՛ պարծիր անարգ հաղթանակովդ»<sup>3</sup> հատվածը՝ ասելով. «Դուն, որ չարության մեջ հասունցեր ես...»:

Կոռնակի խարդախությունները հանգուցալուծում են դրաման, երբ նա հաշտության խնճույքի ժամանակ թոյն է լցնում Ներսեսի և նրա որդիների բաժակների մեջ: Ներսեսի երկու որդիները՝ Հեզիկն ու Յուլակը, մահանում են, իսկ Ներսեսի բաժակը Կոռնակին է բաժին հասնում:

«Արշակ» դրաման 4-րդ դարի հայոց պատմության դեպքերի արձագանքն է: Ազգային կյանքի բարդ և աղետալի վիճակի նկարագրությամբ է սկսվում դրաման: Նպատ լեռան ստորոտում հայոց արքա Արշակն ու նրա որդի Միսակը խոսում են պարսիկների առաջխաղացման մասին: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ հայոց Արշակ թագավորն ունեցել է մի որդի՝ Պապ անունով, որ թագավորել է հորից հետո: Դրամայի սկզբում Միսակը թռուցիկ խոսում է իր ավագ եղբոր՝ Պապի մասին, ով Պոլսում պանդխտության մեջ տառապում է:

<sup>3</sup> Ա. Չոպանյան, Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքը և գործը, Փարիզ, 1907, էջ 202:

Միանգամայն ակնհայտ է, որ Միսակը Մ. Պեշկեթաշյանի երևակայությամբ ստեղծված հերոս է և պատմական նախատիպ չունի:

Հայոց Արշակ արքան ծայրաստիճան հայրենասեր է. նա գերադասում է մեռնել, քան տեսնել, թե ինչպես է Հայաստանն իր սեփական ձեռքերով կործանվում: Այդ օրհասական պահին հայոց հոգևոր առաջնորդ Ներսեսը կոչ է անում ապավինել Աստծու ողորմածությանը:

Հատկապես տպավորիչ են Շապուհի և Արշակի զրույցները, որտեղ հայոց արքան խիզախությամբ ասում է. «Բախտես ու կատաղութենեղ մեծ է իմ արիությունս. անարգ շղթաներով կապած են ձեռքերս, բայց մոռացած չեմ, որ արքունի գավազան կը կրեին ատենով»<sup>4</sup>: Նույնպիսի ջերմությամբ ու հանդիսավոր կերպով հնչում է Միսակի խոսքը, երբ Շապուհը նրան բանտարկել է տալիս. «Գեղեցիկ ես, հայրենիքդ իմ, պայծառ ու ծիծաղկոտ է քու արևդ, որ կը շողա ավերակացդ ու գերեզմաններուդ վրա, մինակ բախտդ տխուր ու սև է: Ալ չտեսնամ պիտի Հայաստանին երկինքն ու ցանկալի հողը, հոս երիտասարդ հասակս պիտի թռումի, վասնզի հայրենյաց արևուն ճառագայթները չեն ծագիր իմ վրաս»<sup>5</sup>: Միսակը կովի ժամանակ փրկում է պարսից արքայորդի Որմիզդի կյանքը, և, ի նշան բարեկամության, նրանք փոխանակում են իրենց սրերը:

Անհուշ բերդում շղթայակապված Արշակ արքան իրեն է մեղադրում ստեղծված վիճակի համար: Նա հայրենիքի վիշտը դարձնում է անձնական ողբերգության և տառապանքի պատճառ: Զղջումն ու ապաշխարանքը դառնում են ինքնախարազանման պատճառ: Դրամայում Արշակի կերպարն առավելապես զգացմունքային հագեցվածություն ունի:

Որմիզդը Միսակին ազատում է բանտից, բայց երբ նա հասնում է Անհուշ բերդ, Արշակն արդեն անձնասպան է լինում: Ինքն իրեն չներելու փաստը Արշակին դրդում է ինքնասպանության, ինչն էլ վերջ է դնում հայոց արքայի տանջանքներին: Նա մահանում է սիրատուն որդու գրկում՝ խոր վիշտ պատճառելով նրան: Ներսեսի՝ հայոց ապագայի և հայկյան երիտասարդության պանծալի ապագայի սպասումով է ավարտվում դրաման. «Տե՛ր, Արշակին վրա գոհ ըլլա արդարությունդ. քեզմով մխիթարվի զորանա նոր Հայաստանը և Հայկյան երիտասարդությունը»<sup>6</sup>:

«Վահան» դրաման հայրենասիրության և մարդկային զգացմունքների նրբին հագեցվածություն ունի:

---

<sup>4</sup> Մ. Պեշկեթաշյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 208:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 217:

<sup>6</sup> Մ. Պեշկեթաշյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 208:

Վահանը խոսում է հայոց երկրի աննախանձելի վիճակի մասին և ավելացնում, որ մեր ժողովրդին միշտ ուղեկցել են մատնիչներն ու դավաճանները. «...ո վ դժբախտ Հայաստան, քո ամեն ժողովքներուդ մեջ, ուրեմն, միշտ մատնիչք ու դավաճանք պակաս պիտի չըլլան վսեմ ու մեծամեծ խորհրդոց հակառակելու, սիրո և միության կապերը քակելու. վաթսուն հազար հայոց քաջերու սուրերը եթե չի կրցան պարսից լուծը թոթափել տալ, քեզի պես անօրենի մը չարությունը եղավ արգելք, ու նգովելի Վասակ մը մեծին Վարդանա բախտին անիվը կոտրեց...<sup>7</sup>: Սակայն այս դրամայում ինդիքը միայն հայրենասիրությունը չէ. Վահան Մամիկոնյանի որդիներից Սուրենը սիրահարվել է պարսկուհի Ասթինեին և անձնատուր եղել՝ բնակություն հաստատելով այնտեղ: Դրամայում գործողությունների առաջնիչ ուժը սերն է, որից էլ բխում է հերոսների զգացմունքայնությունը: Վահանի համար անընդունելի էր, որ իր որդին սիրում էր թշնամի ազգի զավակ Ասթինեին: Նա անզիջում էր այդ հարցում և անողոք իր բնութագրումներում. «Արժանի է իմ անմահ աստելությանս այդ կախարդ աղջիկը, որ մոռացնել տվավ քեզի քու ամեն սուրբ պարտքերդ ու ամոթապարտ ճամփու վրա սահեցուց քեզ. ու դուն դեռ զինքը կը հիշես, դեռ սրտիդ մեջ...»<sup>8</sup>:

Սուրենը հայրենադավ հերոս է, բայց միաժամանակ սիրում է իր հայրենիքն ու հպարտանում դրանով. «Նվաճյալ է Հայաստան, բայց ո՛չ երբեք հաղթված, ազգանվեր մատնիչներու հայրենիք է, բայց ավելի շատ՝ առաքինի ու անպարտելի դյուցազնաց»<sup>9</sup>:

Բավական ինքնատիպ սյուժեով առանձնանում է «Վահե» դրաման: Այստեղ պատմական իրադարձություններն ու հերոսների զգացմունքները միասնաբար են հանդես գալիս: Դրամայի գործողությունները զարգանում են հայոց թագավորի դստեր՝ Արուսյակի սիրո շուրջ, թեպետ որպես հերոսուհի նրան դրամայում չենք տեսնում: Նրա բոցավառ սերը հայրենյաց թշվառության և դավաճանության պատճառ է դառնում: Հոգեբանական բարդություններն ստեղծվում են անձնական երջանկության և քաղաքական բախումների հետևանքով:

Ազատության և ինքնիշխանության վեհ գիտակցումը ընդգծված կերպով արտահայտված է Վահեի կերպարում. «Ազատությունը նախ և առաջ մեր ամնատույց լեռներուն մեջ ապաստան մը գտավ, և հայերը անոր

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 233:

<sup>8</sup> Մ. Պեշկյաշյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 237:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 241:

անդրանիկ ծնունդներն են: Վահե չի կրնար մատնիչ ըլլալ յուր ազգին բախտին ու փառացը. ազատության կործանումը տակ կը ճմլի, բայց ճակատը չի խոնարհեցնէր հարստահար բռնության դիմաց»:<sup>10</sup> Վահեն և Արտավազը դառնում են գաղափարական հակառակորդներ: Եթե առաջինի համար կարևոր է երկրի քաղաքական վիճակը, ապա Արտավազի համար ճշմարիտ ու ամբիժ սերը վեր է ամեն ինչից: Այս հերոսների բախումից էլ ծնվում է երկուստեք ողբերգություն, որ դառնում է երիտասարդ Արտավազի և Արուսյակի ճակատագրերի կործանման պատճառ:

Արտավազը, վրեժխնդրության ծարավով տարված, ամեն հնարավորն անում է Վահեին թշնամու ճիրանները գցելու համար: Տպավորիչ են երկու հերոսների զրույցները, որոնցով բացահայտվում են նրանց նկրտումները: Դրամայում անհատի զգացմունքներ ու ապրումները կարևոր են և փոխապայմանավորված:

Դրամայի հերոսներից Ջարմայրը՝ Վահեի որդին, առանձնակի ջերմությամբ և կարեկցանքով է խոսում Արուսյակի մասին. «...հայրենիք և սեր իրարու հետ մենամարտեցան մահացու հարվածներով սրտին մեջ ու արյունլվա ըրին գայն. գոհվեց ինքը սերը և անոր հետ մեկտեղ յուր կենաց երջանկությունը հայրենյաց սեղանին վրա ու նետահար թռչնո մը պես ինկավ Սոսյաց անտառին սրբազան ստվերացը մեջ՝ երկու սիրելի անուններ միշտ բերին մեջ մրմնջելով. Վահե և Արտավազ»:<sup>11</sup>:

Դրամայի վերջում Վահեն ցավ է ապրում Արուսյակի թշվառ ճակատագրի համար, ով Սոսյաց անտառում մենաստանում անցկացնում է իր կյանիք տխուր օրերը:

Մկրտիչ Պեշիկթաշլյանի պիեսները հայ դրամատուրգիայի առանցքային նշանակություն ունեցող երկերից են: Կերտելով խորապես հայկական միջավայր՝ հեղինակը պատմական դրամատիկ կյանքից ծնունդ առած դեպքերը դարձրեց մտահոգության խնդիր: Իր դրամաներում նա արձարձեց արդիական հնչեղություն ունեցող թեմաներ, որոնք նպատակ էին հետապնդում անհանդուրժողականություն դրսևորել արատավոր բարքերի ու ազգային կյանքի բնականոն ընթացքը խաթարող երևույթների դեմ:

---

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 267:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 260:

Մկրտիչ Պեշիկթաշյանի դրամատուրգիան  
Ամփոփում

Հոդվածը նվիրված է Մկրտիչ Պեշիկթաշյանի դրամատուրգիային: Հիմնականում ուշադրություն է դարձվել «Կոռնակ», «Արշակ», «Վահան», «Վահե» դրամաներին, ընդգծվել են հեղինակի՝ կլասիցիզմից ռոմանտիզմին անցնող փոխակերպումները՝ կաղապարագերծ կերպավորումը, անձնական հույզերի առատությունը, վերամբարձ, պաթետիկ ոճը, աշխարհաբար լեզուն և հայոց հեռավոր անցյալի նկատմամբ հեղինակի ստեղծագործական մոտեցումները:

Драматургия Мкртыча Пешикташляна  
Резюме

Статья посвящена драматургии Мкртыча Пешикташляна. В основном внимание было уделено на исторические драмы “Корнак”, “Аршак”, “Вагани” “Ваге”, были подчеркнуты перевоплощения, переходящие от классицизма к романтизму, изобилие личных переживаний, высокий, патетический стиль, современный язык и творческий подход автора к армянскому далёкому прошлому.

Mkrtich Peshiktashlyan's dramaturgy  
Summery

The article is devoted to Mkrtich Peshiktashlyan's dramaturgy. We paid a particular attention to historical dramas “Kornak”, “Arshak”, “Vahan” and “Vahe”. We underlined the transformations from classicism to romanticism made by the author, the creation of nonconventional characters, the abundance of private emotions, lofty and pathetic style, the application of modern language (ashkharhabar), and the author's creative approaches to the distant past of Armenia.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ,  
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՖԻ ԹՈՂԳՈՍՅԱՆ

մանկ. գիտ. թեկն., ասիստենտ

ՌՈՒԶԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ

բան. գիտ. թեկն., ասիստենտ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ

**Բանալի բառեր.** բայ, բայիմաստ, բայ-ստորոգյալ, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիր, ալգորիթմ, էտաֆետ, դասագիրք, բնագրային օրինակ, ծրագիր, մեթոդ, հակադրություն, շարահյուսական հոմանիշ, Վենի դիագրամ, բառ, բառաձև, բառակապակցություն, դերբայական դարձված, աղյուսակ, երկրորդական նախադասություն:


**Ключевые слова:** глагол, значение глагола, глагольное сказуемое, прямое дополнение, косвенное дополнение, алгоритм, эстафета, учебник, текстуральный образец, прогамма, метод, противопоставление, синтаксические синонимы, диаграм Венна, слово, форма слово, словосочетание, деепричастный оборот, таблица, придаточное предложение.

**Key Words:** verb, verb meaning, predicate verb, direct object, indirect object, algorithm, relay language, textbook, original copy, program, method, contrast, syntax synonym, Venn diagram, word, word form, phrase, participial phrase, table, subordinate clause.

Դասը կառուցողական գործընթաց է, ուստի նրա փուլային զարգացումն ապահովելու, խնդիր լրացումների վերաբերյալ ունեցած գիտելիքները վերհիշելու, ակտիվացնելու նպատակով աշակերտներին կառուցել ենք տալիս *ուղղորդված պրիզմայի պարզունակ օրինակ*<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, էջ 72:



Պրիզմայից ակնառու է դառնում առարկայանիշ բառի (խնդրի) կապը բային՝ գերադաս անդամին: Ըստ Հ. Հարությունյանի՝ «...շարահյուսական կառույցի միջև առկա իմաստային հարաբերության ( խորքային կառուցվածք) կառավարումն արտահայտվում է իբրև **խնդրատություն** (ուտել հաց, գրել նամակ, մոտենալ սեղանին, հեռանալ սեղանից, գրել գրիչով), **պարագատություն** (ապրել Երեվանում, գնալ տուն, ցրտից դողալ, կանգնել հատակին, ազատվել ըստ հրամանի...), ստորոգատություն (մարդ կոչել, ուսանող դառնալ)>><sup>2</sup>:

Սովորողների համար մտածական գործողությունների դիրքորոշման կարևոր և կողմնորոշիչ հայեցակետ է դառնում բայիմաստը, որպեսզի գլխավորը ուշադրությունից դուրս չմնա:

<sup>2</sup> Հ. Հարությունյան , Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 41:

Խնդիրների մեխանիկական սերտումից խուսափելու նպատակով ճիշտ է ուղիղ և անուղղակի խնդիրների ուսուցումը հիմնավորապես կապել գործողության և եղելության հասկացության հետ: Ուսուցման առաջին քայլը սվյալ փուլում բայիմաստի դաշտի ներքին իմաստային խմբերի տարբերակումն է: <<Բայիմաստի վերհիշումը կարևոր է ճանաչողական առումով. սովորողները վերհիշում են բայ խոսքի մասը կազմող բառերի քերականական իմաստները (ֆիզիկական, մտավոր, հոգեկան գործողություններ, գործողության դրություն, վիճակ, գործողության ընթացք), բայ-բառային իմաստային առանձնահատկությունները, տարբերակում են գործողության և եղելության հասկացությունները>><sup>3</sup>: Բայիմաստի կրկնությունը նպաստում է ոչ միայն սովորողների բառապաշարի հարստացմանը, այլև շարահյուսական կապակցություններ կառուցելու, խնդրառությամբ կամ կառավարմամբ արտահայտված նախադասության անդամները տարբերակելու, նաև խնդրառական կարգի սխալներից խուսափելու որոշակի հմտություններ է մշակում:

### **Ներգործող անուղղակի խնդիր**

Այս և հաջորդ խնդիրների ուսուցումը գերազանցապես կառուցվում է մտածական գործողությունների փուլային հաջորդականությամբ:

Հիմնական դպրոցի նոր դասագրքում /էջ 107-108/ այս խնդրի ուսուցումն իրավացիորեն հաջորդում է ուղիղ խնդրի ուսուցմանը / նույն է նաև ավագ դպրոցի դասագրքում/<sup>4</sup>. ներգործող անուղղակի խնդիրը քերականական հակադրություն է ստեղծում ուղիղ խնդրի հետ՝ առաջացնելով իմաստային փոխանակներ՝ քերականական տարբերակներ: Ուղիղ խնդրի և ներգործող անուղղակի խնդրի հակադրությունը իրացվում է նույն բայի ներգործական և կրավորական սեռերի հակադրության միջոցով. նախադասությունների փոփոխակներում՝ ներգործաձև և կրավորաձև կառուցներում գործում են նույն ակտիվ գործողություն ցույց տվող բայերը՝ ձևավորելով **սեռի խնդիրներ**:

Ուղիղ խնդիր և ներգործող անուղղակի խնդիր լրացում ունեցող նախադասությունները շարահյուսական հոմանիշներ են՝ փոխակերպման տարբերակներ: Աշակերտները դիտարկում են բնագրային օրինակները,

---


<sup>3</sup> Ս. Թորգոմյան, Բայի ուսուցումը հիմնական դպրոցում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2012, էջ 48:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Լ. Եզեկյան, Ա. Մարգարյան, Ռ. Մաքապետոյան, Հայոց լեզու (Ընդհանուր և բնագիտական հոսքեր) դասագիրք 12-րդ դաս., Երևան, 2011, էջ 124:

կազմում են դրանց ներգործածն կառույցները և հանդիպադրումից ի հայտ եկած փոփոխությունների հիման վրա կազմում են Վեննի դիագրամ: Օրինակ՝ <<...Մի դժբախտ օր Շաքրոն անակնկալի եկավ. կիրճի մեջ շրջապատվեց թշնամու խմբերից>> /ԱԻ/: <<...Թրջված էի անձրևից և մրսում էի>> /ԱԻ/:

**Ուղիղ խնդիր**

**Ներգործող անուղղակի խնդիր**



Սշակերտների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ ներգործող անուղղակի խնդիրները կրավորական սեռի բայերի լրացումներն են և արտահայտվում են բացառական, սակավ դեպքերում էլ՝ գործիական հոլովաձևերով, կապական կառույցներով:

Ներգործող անուղղակի խնդիրն արտահայտվում է բացառական հոլովով, երբ կատարման ներգործությունն ուժեղ է, օրինակ՝ ««Օադիկները՝ մոտիկ ու հեռու, ռիթմիկ ծղրտում էին բարակ հովից»> /ԱԻ/:

Ներգործող անուղղակի խնդիրն արտահայտվում է գործիական հոլովաձևով, երբ կատարման ներգործությունը անմիջական չէ կամ թույլ է, օրինակ՝ ««Մենյակը ողողվել է արևի լույսով»>:

Ներգործող անուղղակի խնդիրն արտահայտվում է նաև սեռական հոլովաձև+կողմից, ձեռքով /ձեռքից/ կապական կառույցով, երբ կատարման ներգործությունն անձի կողմից է, օրինակ՝

«« Մեր ավագ ընկերը՝ Սուրբատը, հարգված էր քսան-քսանմեկ պատանի ընկերների կողմից»>

/ԱԻ/: ««Քանի ձեռքից եմ վառվել, Վառվել ու հուր եմ դառել...»> /ՀԹ/:

««...Ներգործող անուղղակի խնդիրը սովորաբար արտահայտվում է կողմից կապական բառով...Բացասական երանգ ունի ձեռքով կապական բառի գործածությունը...»><sup>5</sup>, օրինակ՝ ««Իմ որդին սպանվեց մեր կառավարության գինվորների ձեռքով մի բանվորական գործադուլի ժամանակ»> /ԱԻ/:

Ներգործող անուղղակի խնդրի բացառական հոլովաձևը երբեմն շփոթվում է պատճառի պարագայի, իսկ գործիական հոլովաձևը՝ միջոցի անուղղակի խնդրի հետ: Համապատասխան խնդիր և պարագա լրացումներն ուսումնասիրելիս այդ տարբերությունները դարձյալ կարելի է ներկայացնել տալ Վեննի դիագրամի միջոցով:

Ամփոփման համար աշակերտները գրատախտակին գծում են եռաթև աղյուսակ և յուրաքանչյուր թևում առանձնացնում ներգործող անուղղակի խնդրի արտահայտությունը /նախօրոք տրվում են համապատասխան օրինակները/.

Բառաձև	Կապական կառույց	Երկրորդական նախադասություն

<sup>5</sup> Գ. Ջահուկյան, Ֆ. Խլիաթյան, Հայոց լեզու / դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար /, Ե., 1997, էջ 98-99:


**1. Հանգման անուղղակի խնդիր**

Բնչպես ներգործող խնդիրների ուսուցման, այնպես էլ հանգման անուղղակի խնդրի ուսուցման դեպքում նրա արտահայտած իմաստն ընդգծելու նպատակով դարձյալ անդրադառնում ենք այն հիմնական բայերին, որոնք իմաստի պահանջով ստանում են հանգման անուղղակի խնդիր լրացումներ.

Բայ	Հարց		Արտահայտություն
	ո՞ւմ /ո՞ւմ վրա/	ինչի՞ն	
մոտենալ բախվել դիպչել ընդհարվել այցելել հանդիպել -----			

Դիտարկվող շարքի բայերը հիմնականում պասիվ գործողություն են արտահայտում և պահանջում են այնպիսի լրացումներ, որոնց հանգում է ենթակայի կատարած գործողությունը: Այս բայերի պահանջով հանգման իմաստը կարող է արտահայտվել բառաձևերով, բառակապակցություններով և երկրորդական նախադասություններով:

Գծապատկերի միջոցով սովորողները ներկայացնում են հանգման անուղղակի խնդիր լրացումների արտահայտությունները:



Աշակերտները վերհիշում են, որ հանգման անուղղակի խնդիրն արտահայտվում է գերազանցապես տրական հոլովով և ընտրված բնագրային օրինակները գրում են գրատախտակին:

<< Թե տիրես, մե՛ծ շահ, դու նրա պրտին, Հանգիստ կըտիրես և Թմուկ բերդին...>> /ՀԹ/

<<Ձեռքը մեկնեց մեծատուններին, և կոշտացած ափի վրա դրին անարգանքի թուրը>> / ԱԲ/:

Այնուհետև անդրադառնում են հանգման խնդրի հոլովական այլ արտահայտություններին՝ շեշտելով բայիմաստը. կան բայեր, որոնք, ըստ իմաստի, պահանջում են բացառական հոլովով հանգման անուղղակի խնդիր, ինչպես՝ <<կառչել>>, <<կպչել>>, օրինակ՝ <<...սա գետափի թփերից, խոտերից է կպչում>> /ՀԹ/:

Ոճական առումով հազվադեպ հանդիպում է հանգման անուղղակի խնդրի գործիական հոլովով արտահայտություն, ինչը բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին, օրինակ՝ <<Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նստել բույնի մեջ՝ նրա կողքին, կտուցները քնքշորեն քսում էին նրա պարանոցով>> /ՀԹ/:

Հանգման անուղղակի խնդիր լրացման իմաստը և արտահայտությունները հստակ պատկերացնելու և յուրացումը ստուգելու նպատակով շահեկան է կիրառել Էստաֆետի մեթոդը՝ մասնակի փոփոխություններով: Դասարանը բաժանվում է 3-4 խմբի, խմբերը համարակալվում են, յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ ծրար, որի վրա գրված է հարցը, իսկ ներսում՝ բնագրային օրինակները: Աշխատանքը կատարվում է ոչ թե տեղում՝ խմբի ներսում, այլ՝ գրատախտակին:

**1-ին խմբի** օրինակներ՝

ա) <<Ես նայեցի նրան, նա նայեց ինձ, և մեր հայացքները գրկեցին իրար>>

/ԱԲ/: բ) <<Մարին ուշադիր լսեց յուրաքանչյուրին, բայց երևի նրանցից ոչ մեկը չգրավեց նրա սիրտը>> /ԱԲ/:

**Հարց** -Որոշե՛ք հանգման անուղղակի խնդիրների արտահայտության առանձնահատկությունները /խոսքի մասը, հոլովը/:

**2-րդ խմբի** օրինակներ՝

ա) <<Սրտատրոփ անհանգստությամբ սպասում էին խաղաղ գիշերին>>

/ՀԹ/: բ) <<Խորշումած ճակատը սեղմեց չոր ծնկներին, մաշված ձեռքերը հյուսեց մրկածե՛ծ գլխի վրա և սպապսեց դռան բացվելուն>> / ԱԲ/:

**Հարց** - Որոշե՛ք հանգման անուղղակի խնդիրների արտահայտությունը,բառակապակցության տեսակն ըստ գերադաս

անդամի խոսքիմասային պատկանելության և ըստ կազմիչ անդամների շարահյուսական հարաբերության:

**3-րդ խմբի օրինակներ՝**

ա) <<Նայում է Բայրամ Ալին իրեն դավաճանածին, ու ծնկները ծալ են ընկնում >> / ԱԻ /: ք) <<Արշակը մոտեցավ ծառայողների ճաշերից մնացած ավելցուկները հավաքողներին >> / ԱԻ /:

**Հարց** - Որոշե՛ք հանգման անուղղակի խնդիրների արտահայտությունը, կատարե՛ք փոխակերպումներ:

**4-րդ խմբի օրինակներ՝**

ա) <<Էրնել նրան, ով իր գործով կապրի անվերջ, անդադար>> /ՀԹ/: ք) <<...Բայց հայրիկս չի համաձայնի, որ ես ուսանելու գնամ, հին մարդ է>> /ԱԻ /:

**Հարց** - Որոշե՛ք հանգման անուղղակի խնդիրների արտահայտությունը և կապակցման միջոցները. հանգման անուղղակի խնդիրները ներկայացրե՛ք շարահյուսական հոմանիշներով՝ /փոխակերպում/:

Ամփոփման ժամանակ հատկացվում է 2-3 թույլ, որի ընթացքում հանձնարարված ծրարներում գրառված օրինակների և հարցերի տակ աշակերտների խմբերը ինքնուրույն գրի են առնում բոլոր պատասխանները, որոնք հնչել են բանավոր: Ուսուցիչը հավաքում, խմբավորում և գնահատում է պատասխանները:

Ներկայացնում ենք օրինակներ, որտեղ անձանիշ բառերով արտահայտված (գոյական դերանուններ) ուղիղ և հանգման անուղղակի խնդիրները ձևով համընկնում են, նույնանում են: Ուղղում ենք հետևյալ հարցը՝ ինչո՞վ է սա պայմանավորված (մի դեպքում՝ բայ լրացյալի սեռով, մյուս դեպքում՝ արտահայտած իմաստով): Օրինակ՝

Ուղիղ խնդիր	Հանգման անուղղակի խնդիր
<< Ես սիրում էի <u>նրան</u> >>/ԱԻ/:	<< Այսպիսով ավելի մոտենում, մտերմանում էինք <u>նրան</u> >>/ԱԻ/:

**2. Անջատման անուղղակի խնդիր**

Այս խնդրի ուսուցումը կառուցիկ դառննելու նպատակով ուսուցիչը դիմում է մտազրոհի մեթոդին՝ պահանջելով աշակերտներից, որ աղյուսակով ներկայացնեն այն հիմնական բայերը, որոնք իմաստի պահանջով ստանում են անջատման անուղղակի խնդիր լրացումներ:

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

Բայ	Հարց		Արտահայտություն
	ումի՞ց	ինչի՞ց	
անջատվել զատել ..... .....			

Այս բայերի պահանջով անջատման անուղղակի խնդիր լրացումներն արտահայտվում են հիմնականում բառաձևերով, դերբայական դարձվածով, երկրորդական նախադասությամբ:

Ուսուցչի պահանջով աշակերտները դիմում են շարահյուսական վերլուծությունների. բնագրային օրինակներում գտնում են անջատման անուղղակի խնդիրները, որոշում դրանց արտահայտությունները և համապատասխանաբար տեղադրում եռաթև աղյուսակի բաժանումներում:

Բառաձև	Բառակապակցություն	Երկրորդական նախադասություն

Քանի որ անջատման և ներգործող անուղղակի խնդիրներն ունեն հոլովական նույն արտահայտությունը՝ ձևով նույնանում են (արտահայտվում են բացառական հոլովով), ապա չջիռթելու համար ուսուցչի պահանջով դրանց տարբերությունը սովորողները ներկայացնում են Վեննի դիագրամով: Օրինակներ՝

*Ներգործող անուղղակի խնդիր*

*Անջատման անուղղակի խնդիր*

1. <<Լուսաթաթախ ու կենսաթրթիռ այս մեծափարթամ մայրաքաղաքում ցրտից և անձրևից, քաղցից և հոգնածությունից արդեն սպառվել էին ընչագուրկները>> /ԱԻ/:

1. <<Արշակն իր բոլոր անտարբերությամբ դեմքը շուռ տվեց այդ շաչող ավտոյից>> /ԱԻ/:

2. << Ես ինձ խաբված էի զգում դավաճան Երվանդի կողմից>>/ԱԻ/:

3. << Ես ընկա սրտախոց նրանից, ով ուզում էր քեզ տանել>> /ԱԻ/:

2. << Ես չբաժանվեցի քո մարմնից, իմ նվիրակա՛ն սեր>> /ԱԻ/:

3. << Հափշտակված, աչքերս նրա մթին աչքերին հառած՝ ժամերով չէի կտրվում նրանից, ով իր կախարհող շուրթերով պատմում էր աշուղի հեքիաթը>> /ԱԻ/:

**Միջոցի անուղղակի խնդիր**

Այս խնդիրը արտահայտվում է *գործիական հոլո*

*վով կամ սեռական հոլ. + միջոցով, ձեռքով կապական կառույցով, օրինակ՝* <<Հարուստները ոսկի շոթայով կապեցին-կաշկանդեցին Իտալիան և իրենց ծանր թաթը դրին Իտալիայի չարքաշ ժողովրդի սրտին>> /ԱԻ/:

<<...Երբեք չեղավ, որ մի չնչին խոսքով կամ մի աննշան արարքով իրար վիրավորած լինեինք>> /ԱԻ/:

Աշակերտներին պետք է հիշեցնել, որ միջոցի անուղղակի խնդիրը հոլովական արտահայտությամբ հաճախ նմանվում է ձևի պարագային և շփոթվում նրա հետ: Տարբերակումը պետք է կատարել՝ հենվելով բայիմաստի և համապատասխան հարցերի վրա:


**3. Վերաբերության անուղղակի խնդիր**

Վերաբերության անուղղակի խնդրի ուսուցումը անցած խնդիրների օրինակով սովորողները կառուցում են նույն քայլաշարային հաջորդականությամբ /ալգորիթմներով/՝ ընտրելով ասացական, մտածական բայ-լրացյալներ.

Բայ	Հարց	Արտահայտություն	
		հոլով	կապական կառույց
խոսել պատմել խորհել զեկուցել վիճել վերաբերել մտածել -----	ումի՞ց ինչի՞ց ինչի՞ մասին	բացառական	

<<Գիտական քերականության մեջ վերաբերության խնդիր է կոչվում նաև մի շարք զգացական բայերի մոտ դրվող այն լրացումը, որը ցույց է տալիս ենթակայի վերաբերմունքը տվյալ առարկայի նկատմամբ: Այս կարգի բայերից են՝ *վարվել, վերաբերվել, տրամադրվել, տաճել, համակվել, ներողամիտ լինել, զիջող լինել, անաչառ լինել, խստապահանջ լինել, բարի լինել* և այլն, որոնց հետ *հոլովված անուն իոսքի մաս + նկատմամբ, դեպի, վերաբերմամբ, հանդեպ կապեր* կապական կառույցի միջոցով իրացվում է վերաբերության խնդրի հարաբերությունը>><sup>6</sup>:

Վերհիշում են, որ վերաբերության անուղղակի խնդիրը արտահայտվում է *բացառական հոլովով կամ սեռական հոլով + վերաբերության իմաստ ունեցող կապ* կապական կառույցով: Վերաբերության իմաստ ունեցող կապերը սերտելու նպատակով ուսուցչի օգնությամբ վերհիշում են և գծապատկերով ներկայացնում վերաբերության խնդիր ձևավորող կապերը՝ կարմիր նշագրիչով առանձնացնելով ասացական և մտածական բայերին լրացնողները, իսկ կանաչ նշագրիչով՝ զգացական / հոգեկան գործողություններ ցույց տվող / բայերին լրացնողները:




Վերաբերության անուղղակի խնդրի արտահայտությունը դիտարկելու և շարահյուսական վերլուծություններում հմտացնելու

<sup>6</sup> Ն. Պառնասյան, Շարահյուսական հումանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 240:

նպատակով հանձնարարվում է առաջարկված բնագրային օրինակներից ընտրել բացառական հոլովով և կապական կառույցներով արտահայտված վերաբերության անուղղակի խնդիրները և լրացնել եռաթև աղյուսակի համապատասխան սյունակներում:

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է քերականական մեկ այլ ուշագրավ իրողության վրա. ասացական, մտածական գործողություն ցույց տվող մի շարք բայեր ստանում են կամ կարող են ստանալ և՛ ուղիղ, և՛ վերաբերության կամ այլ խնդիր, նաև պարագա լրացումներ. «Հաճախ միևնույն նախադասության մեջ իմացություն և հիշողություն ցույց տվող մի շարք բայեր միաժամանակ ստանում են երկու խնդիր՝ ուղիղ և վերաբերության, առաջինը՝ սեռի, երկրորդը՝ իմաստի թելադրանքով: Այդ բայերի կրկնակի խնդրառությունը պայմանավորված է նախադասության կառուցվածքով, հաղորդման նպատակով, ինֆորմացիոն բնույթով և այլ հանգամանքներով»<sup>7</sup>:

Ուշագրավ աշխատանք կարելի է հանձնարարել այնպիսի բայերի շուրջ, որոնք կարող են հանդես գալ միաժամանակ մի քանի արժույթով(երկարժույթ, եռարժույթ կամ բազմարժույթ )՝ստանալով ոչ միայն խնդիր, այլև պարագա լրացումներ, օրինակ՝



<sup>7</sup> Օհանյան Հ., Մտածական բայերի խնդրառության մի քանի հարցեր, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Ե., 1984, N 3, էջ 54:

Ամփոփելու նպատակով առաջարկում ենք հետևյալ աշխատանքը:

Տրված նմուշօրինակով ընդարձակեք վերը բերված կառույցները (նախադասությունները)՝ ստանալով ծավալուն կապակցություններ՝ բայերին համապատասխանաբար ավելացնելով խնդիր և պարագա լրացումներ, որոշեք դրանց արտահայտությունը, իմաստային հարաբերությունը:

ա) <<Իմացա տեղեկություն>>: բ) <<Հանրագիտարանից իմացա տեղեկություն Ուրարտական թագավորության մասին>>:

### 6. Միասնության անուղղակի խնդիր

Միասնության անուղղակի խնդիրն արտահայտվում է *գործիական հոլովով* կամ *սեռական հոլով + հետ. միասին կապական կառույցով*: Արտահայտվում է նաև *գործիական հոլով+հանդերձ կապ կառույցով*: Օր.՝ <<Հանդի ու դաշտի ծղրիդն է երգում իր անթիվ ու անհամար քնկերներով>> /ՀԹ/:

<<Եղջերուն աղոտ հիշում էր, որ արածում էր իր հորթուկի հետ>> /ՀԹ/:

### Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, մաս 2-րդ, Երևան, 1975:
2. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, 2-րդ հ., Երևան, 1973, 4-րդ հ., Երևան, 1979:
3. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, Դասագիրք 8-րդ դասարանի համար, Ե., 2012:
4. Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետյան Ռ., Հայոց լեզու (ընդհանուր և բնագիտամաթե մատիկական հոսքեր), դասագիրք 12-րդ դասարանների համար, Ե., 2011 :
5. Հայոց լեզու և հայ գրականություն, Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագրեր, Բացատրագիր, Եր., ԾԻԳ, 2009:
6. Հանրակրթության պետական կրթակարգ, Եր., 2004:
7. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983:
8. Պառնասյան Ն., Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970 :
9. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008:

10. Օհանյան Հ., Մտածական բայերի խնդրառության մի քանի հարցեր, <<Հայոց լեռն և գրականությունը դպրոցում>>, Ե., 1984, N 3:
11. Крившенко Л. П., Технология поэтапного формирования умственных действий, Педагогика.-М.: Проспект, 200

### **Անուղղակի խնդիրների ուսուցումն ավագ դպրոցում տեխնոլոգիական մոտեցմամբ**

Սույն աշխատանքի նպատակն է բայական անդամի անուղղակի խնդիր լրացումների ուսուցումը ներկայացնել մտածական գործողությունների փուլային ձևավորման տեխնոլոգիայով՝ որոշակի մշակված քայլաշարերով, հաջորդական, տրամաբանական անցումներով ձևավորելով շարահյուսական մակարդակի համակարգային գիտելիքներ, ցույց տալ թե ինչպես է լեզվական նյութի բաղադրամասերի գումարը վերաճում ուսուցման տեխնոլոգիական համակարգի, նպաստել սովորողների լեզվամտածողության, մտածական գործողությունների ակտիվության զարգացմանը:

### **Обучение косвенных дополнения глагола в старшей школе с помощью педагогической технологии**

В данной статье сделана попытка представить обучение косвенных дополнений глагола с помощью технологии поэтапного формирования умственных действий: имея в виду наш личный педагогический опыт и восприятие, а также инновационный подход к традиционной системе обучения. На примере обучения косвенных дополнение глагола представлены те концептуальные позиции, последовательность алгоритмов, с помощью которых обучение языкового материала становится реалистичным. Как концептуальные точки опоры мы выделили смысл глагола и формы выражения дополнения.

**Teaching Indirect Object at High School by Pedagogical Technology**

This article is an attempt to present indirect object teaching at high school by the technology of systematic formation of mental actions taking into consideration our individual teaching experience and perception as well as the innovative approach to traditional education. On the example of indirect object teaching are presented such conceptual points and consecutive steps, that make teaching of linguistic material realistic. As the basic concepts, verbal meaning and object expressing models have been emphasized.

ՌՈՒԲԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Մանկ. գիտ. թեկն., ասիստենտ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ  
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հիմնական դպրոց, ուսուցում, տրամաբանական մտածողության զարգացում, դերբայական դարձված (ԴԴ), շարահյուսական գործառույթ, շարադասություն, կետադրություն, վարժություններ, ավանդական մեթոդ, ժամանակակից մեթոդ:

**Ключевые слова и выражения:** основная школа, обучения, развитие рассудительного мышления, деепричастный оборот, синтаксические роли, порядок слов, пунктуация, упражнение, традиционный метод, современный метод.

**Key words and expressions:** basic school, education, the development of logical thinking, participle phrase (PP), syntax function, punctuation, word order, exercises, traditional method, modern method.

Շարահյուսության դասընթացին առնչվող լեզվական գիտելիքները տեղաբաշխված են հանրակրթական դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանների դասագրքերում: Քերականության այս բաժնի ուսուցման ընթացքում աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման խթանը տեսականի և գործնականի զուգակցումն է, ինչպես նաև նախորդ դասարանում քերականության մյուս բաժնի՝ ձևաբանության գործնական ուսուցման ապահովումը՝ որպես լավագույն հիմք:

Շարահյուսական իրողությունների շարքում որոշակի դժվարություն է հարուցում դերբայական դարձվածի (համառոտ՝ ԴԴ) ուսուցումը՝ կապված նախադասության մեջ վերջինիս սահմանները որոշելու, կետադրության՝ որպես գրավոր խոսքի անհրաժեշտ բաղադրիչի, նաև ԴԴ-երկրորդական նախադասություն շարահյուսական հոմանիշների և դրանց փոխակերպման առանձնահատկությունների (այս իրողությունը ուսուցանվում է հանրակրթության ավագ դպրոցում) հետ: ԴԴ թեմայի հանգամանակից ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ վերջինիս առնչվող առաջադրանքները հաճախ են ներառվում քննական տարբեր հարցաթերթիկներում:

Ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված նոր ծրագրի՝ ԴԴ թեման ներառված է հիմնական դպրոցի 9-րդ դասարանի դասագրքում<sup>1</sup>: Առարկայական ծրագրի եռաբաժան աղյուսակը արտացոլում է ուսուցանվող նյութը, ուսումնական նպատակը և ուսումնական գործունեության տեսակները: Դասագրքի հեղինակների կողմից առաջարկված ուսուցչի ձեռնարկում ներկայացված է 9-րդ դասարանի ծրագիրը, ժամաքանակը, ընդհանուր մեթոդական կողմնորոշումներ՝ նշված թեմայի ուսումնական գործունեության մեթոդներն ու եղանակները թողնելով ուսուցչի ընտրությանը: Գործող ծրագրի համաձայն առանձնացվում են ԴԴ-ի հետ առնչվող հետևյալ հաջորդականությունները՝

1. ԴԴ-ի ձևավորումը,
2. ԴԴ-ի շարահյուսական պաշտոնը նախադասության մեջ,
3. ԴԴ-ի շարադասությունը և կետադրությունը:

Դասի ընթացքը պլանավորելիս նպատակահարմար է կիրառել սովորողների մտածողության որակների խթանումն ապահովող ԽԻԿ (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) համակարգը՝ դասավանդման տարաբնույթ մեթոդների և մեթոդական հնարների (ինչպես ավանդական՝ խոսքային, զննական, գործնական, համեմատություն, վերլուծություն, հակադրում, այնպես էլ ժամանակակից՝ համագործակցային աշխատանք, «Ձևագնդի», T-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, մտազրոհ, «մանկավարժական դեսանտ», «ԳՈՒՍ»)՝ Սենք ևս, չչեղվելով դասագրքի հեղինակների որդեգրած «քայլ առ քայլ առաջ, բայց միշտ անցած նյութին ձեռք մեկնած»<sup>3</sup> սկզբունքից, քայլաշարային եղանակով (կատարելիք քայլերի որոշակի հաջորդականությամբ) կփորձենք ներկայացնել ԴԴ-ի ուսուցման գործընթացը առաջնային պայման համարելով ուսուցման արդյունավետությունը ապահովող հետևյալ սկզբունքները՝ գործնականություն, գիտակցականություն, մատչելիություն, համակարգայնություն, զննականություն:

<sup>1</sup> Հայոց լեզու, Հ.Բարսեղյան, Փ.Մեյթիխանյան, Եր., «Աստղիկ» գրատուն, 2013, էջ 19-27:

<sup>2</sup> Ժամանակակից մեթոդների մասին տե՛ս ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008, էջ 17, 23, 12, 8, 69, 80: Սարգսյան Ռ., Ուսուցման ինտերակտիվ մեթոդ, «Մանկավարժական միտք» հանդես, Եր., 2001 (№ 2), էջ 61-64:

<sup>3</sup> Հայոց լեզու, 7-9-րդ դասարաններ, Ուսուցչի ձեռնարկ, Փ.Գ.Մեյթիխանյան, Եր., «Աստղիկ» գրատուն, 2011, էջ 9:

**Քայլ 1 – ԴԴ հասկացության ուսուցումը**

Այստեղ անհրաժեշտ է ուսուցման հարթություն բերել հետևյալ պնդումներն ու սահմանումները:

1. Բայական այն բառակապակցությունը, որն արտահայտված է ինքնուրույն շարահյուսական կիրառություն ունեցող որևէ դերբայով և այդ դերբայի հետ քերականորեն կապված լրացումներով, կոչվում է դերբայական դարձված:

2. ԴԴ-ն լինում է երկանդամ և բազմանդամ:

3. ԴԴ են կազմում անկախ դերբայները՝ դառնալով կապակցության գերադաս անդամ:

4. ԴԴ-ն՝ որպես ծավալուն անդամ, կարող է նախադասության մեջ կատարել ենթակայի, ստորոգյալի և ցանկացած լրացման դեր:

5. Դերբայի լրացումները կոչվում են կողմնակի անդամեր (լրացումներ)<sup>4</sup>:

ԴԴ հասկացության գործընթացն իրականացվում է գործնական ճանապարհով՝ ի մի բերելով աշակերտների գիտելիքները *դերբայ* թեմայի վերաբերյալ («Դերբայ» թեման ուսուցանվում է «Ձևաբանություն» դասընթացում): Նախ և առաջ անհրաժեշտ է, որ աշակերտները ԴԴ-ի կառուցվածքային տարրերը կարողանան գիտակցաբար ըմբռնել: Քանի որ ԴԴ-ն ձևավորվում է հայերենի անկախ դերբայներով, ուստի այստեղից էլ պետք է սկսել ուսուցման գործընթացի I քայլը: Անկախ դերբայների առանձնահատկությունների (կազմություն, իմաստ, շարահյուսական գործառույթ) գործնական իմացությունը խթան է ԴԴ-ի ուսուցման հաջորդ քայլերը՝ ԴԴ հասկացությունը, ԴԴ-ի սահմանները, շարահյուսական գործառույթը, այնուհետև շարահյուսական հոմանիշ-երկրորդական

---


<sup>4</sup> Արտ. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատ., 2003, էջ 173-196: Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Ե., 1976, Գ. Պապոյան, Դերբայական դարձվածի և նրա կառուցվածքի քննությունը հայ քերականագիտության մեջ (սեղմագիր), Եր., 1926: Ա.Մարության, Ժամանակակից հայերենի շարահյուսության հարցեր, Ե., 2003 էջ 31:

Նախադասության պաշտոնը, ինչպես նաև դրանց փոխակերպման օրինաչափությունները ճիշտ ընկալելու համար:

Դասի **խթանման փուլը** սկսվում է մտքերի տարափի միջոցով: Մտագրոհի առարկա կարող է դառնալ ուսուցչի կողմից տրված հարցը կամ առաջադրանքը, ինչի միջոցով ի մի են բերվում աշակերտների գիտելիքները և կապակցվում յուրացվելիք նյութին: Նախ T-աձև աղյուսակով առանձնացվում են անկախ դերբայներն ու ձևաբայերը (կախյալ դերբայները) և ճեպահարցման (բլից հարցում) միջոցով վերհիշվում տարբերությունը

Նախադասության մեջ կարող է հանդես գալ առանց օժանդակ բայի՝ կատարելով տարբեր պաշտոններ	<b>անորոշ ենթակայական համակատար հարակատար</b>	<b>անկատար ապակատար վաղակատար ժխտական</b>	Նախադասության մեջ կիրառվում է միայն օժանդակ բայի հետ և դառնում պարզ ստորոգյալ
-------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------	-------------------------------------------	-------------------------------------------------------------------------------

Այնուհետև աշակերտների ուշադրությունը կենտրոնացվում է անկախ դերբայների վրա և համապատասխան հարցուպատասանի (գրույցի մեթոդ) և բառ-օրինակների միջոցով ի մի բերվում գիտելիքները վերջիններիս վերաբերյալ (կազմություն, իմաստ, գործառույթ): Կամ կարելի է, օրինակ, աշակերտների միջոցով դիտարկել հետևյալ Վենի դիագրամը:



Հանձնարարվում է զույգերով աշխատանք՝ հոլովել, օրինակ, գրել, կարդացած, վագող (վերջին 2-ը նաև հոգնակի թվով) անկախ դերբայները:

Այսպես, կիրառելով վերլուծական-համադրական մեթոդը՝ փորձում ենք ուսուցման գործընթացը դարձնել առավել աշակերտակենտրոն և մակաձական եղանակով (մասնակիից-ընդհանրացում) շարունակելով այն՝ աշակերտներին ոչ թե պատրաստի է ներկայացվում լեզվաբանական գիտելիքը, այլ իրենք են վարժությունների կատարման ճանապարհով հանգում է ընդհանրացումների, սահմանումների:

**Իմաստի ընկալման փուլում** առաջին խնդիրը ԴԴ-ի սահմանները որոշելն է: Աշակերտները պետք է կարողանան նախադասության մեջ գտնել անկախ դերբայը և հարցերի միջոցով այն անդամը (անդամները), որը լրացնում է դերբային: Աշակերտների ուշադրությանն են ներկայացվում դերբայական անդամով (անկախ դերբայով), այնուհետև դրանով ձևավորված նախ՝ երկանդամ, ապա՝ բազմանդամ ԴԴ-ով նախադասություններ: Այս դեպքում ավելի շահեկան է, որ ուսուցիչն ընտրի կամ ինքնուրույն կազմի առավել դյուրընկալ նախադասություններ, որտեղ ԴԴ-ն ակներև կլինի և հազեցած ԴԴ-ին առնչվող լրացումներով:

№	Ա	Բ (երկանդամ ԴԴ)	Գ (բազմանդամ ԴԴ)
1.	Նա քայլում է <i>ժպտալով</i> :	Նա քայլում է՝ <i>ուրախ ժպտալով</i> :	Նա քայլում է՝ <i>ուրախ ժպտալով անցորդներին</i> :
2.	Փայլող արևը կյանք է ներշնչում:	<i>Երկնքում փայլող</i> արևը կյանք է ներշնչում:	<i>Կապույտ երկնքում փայլող</i> արևը կյանք է ներշնչում:
3.	Գրելիս նրա սիրտը լցվում էր խինդով:	<i>Մանկության մասին գրելիս</i> նրա սիրտը լցվում էր խինդով:	<i>Իր մանկության մասին հուշեր</i> գրելիս նրա սիրտը լցվում էր խինդով:
4.	Հովը սատնություն էր բերում <i>խանձված</i> դաշտերին:	Հովը սատնություն էր բերում <i>շոգից խանձված</i> դաշտերին:	Հովը սատնություն էր բերում <i>ցերեկվա շոգից խանձված</i> դաշտերին:

Հանձնարարվում է գույգերով աշխատանք: Յուրաքանչյուր գույգի տրվում է հորիզոնական գույգադրված նախադասությունների մեկ օրինակ և հանձնարարվում է կատարել առաջադրանք՝ որոշակի հաջորդական հրահանգներով:

Առաջադրանքի նմուշօրինակ:

1. Հովը սառնություն է բերում *խանձված* դաշտերին:
2. Հովը սառնություն է բերում *շոգից խանձված* դաշտերին:
3. Հովը սառնություն է բերում *ցերեկվա շոգից խանձված* դաշտերին (ԱԲ, 129):

1. Տրված նախադասություններում ընդգծել անկախ դերբայը, որոշել տեսակը: Աշակերտները չեն դժվարանա ընդգծել *խանձված* հարակատար դերբայը:

2. 1-ին նախադասությունը ենթարկել շարահյուսական վերլուծության. ուշադրություն դարձնել *խանձված* հարակատար դերբայի կատարած շարահյուսական պաշտոնին (ԴԴ ուսուցանվում է պարզ նախադասությունն անցնելու հետո, և աշակերտները գործնականորեն ճանաչում են նախադասության անդամները):

*Պատասխան՝ Հովը* - ենթակա, *բերում է* - ստորոցյալ, *սառնություն* - ուղիղ խնդիր, դաշտերին-հանգման անուղղակի խնդիր, *խանձված* - որոշիչ (ո՞ր դաշտերին): ԴԴ-ի սահմանները որոշելու համար շատ կարևոր է, որ աշակերտները կարողանան ճիշտ գտնել լրացում-լրացյալը:

3. Դիտարկել 2-րդ նախադասությունը և որոշել *խանձված* դերբային անմիջականորեն ո՞ր բառն է լրացնում և ի՞նչ պաշտոն է կատարում:

*Պատասխան՝ շոգից* բառը անմիջականորեն լրացնում է *խանձված* դերբային և կատարում ներգործման անուղղակի խնդրի պաշտոն (ինչի՞ց *խանձված* (կրավորական սեռի բայ) դաշտերին. Շոգը խանձել է դաշտերը):

4. 2-րդ նախադասության մեջ կա՞րողոք որևէ այլ բառ, բացի *շոգից*-ը, որն անմիջականորեն լրացնում է նշված դերբային:

*Պատասխան՝ խանձված* դերբային անմիջականորեն լրացնող միակ բառը *շոգից* ներգործման անուղղակի խնդիրն է:

5. Ընդգծել դերբայ+լրացում ստացված բառակապակցությունը և որոշել՝ երկանդամ է, թե՞ բազմանդամ: Ո՞րն է գերադաս անդամը:

Պատասխան՝ շոգից խանձված բառակապակցությունը երկանդամ է՝ մեկ լրացում + մեկ լրացյալ: Գերադաս անդամն է խանձված դերբայը:

6. Դիտարկել 3-րդ նախադասությունը և որոշել՝ *ցերեկվա* հատկացուցիչը ո՞ր բառին է լրացնում:

Պատասխան՝ *ցերեկվա* հատկացուցիչը լրացնում է *շոգից* բառին (ցերեկվա շոգից՝ հատկացուցիչ-հատկացյալ): *Շոգից* բառն էլ իր հերթին լրացնում է *խանձված* դերբային, այսպես՝ *ցերեկվա շոգից խանձված*:

7. Ընդգծել ստացված բառակապակցությունը և որոշել՝ երկանդամ է, թե՞ բազմանդամ: Ո՞րն է գերադաս անդամը. այն ուղիղ ձևով է, թե՞ թեք (խանձված, խանձվածի, խանձվածից, խանձվածով):

8. 3-րդ նախադասության մեջ սև գրիչով ընդգծել դերբայը և նրան անմիջականորեն լրացնող բառը, իսկ կարմիր գրիչով՝ դերբայը, նրան անմիջականորեն լրացնող բառը և այն բառը, որը լրացնում է դերբային լրացնող բառին:

Հիշե՛լ: Բայական անդամի (այս դեպքում՝ դերբայի) լրացում դառնում են նախադասության ո՞ր անդամները՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը, թե՞ խնդիրներն ու պարագաները:

Այսպես, յուրաքանչյուր առաջադրանք աշակերտներին մղում է մտածելու, որոնելու, եզրահանգումներ անելու: Արդյունքում (ուսուցչի օգնությամբ) ունենում ենք դերբայն իր լրացումներով և լրացման լրացումներով սխեմատիկ նախադասությունների նախնական տարբերակներ

1. Հովը սառնություն է բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին:  
ԴԴ (հարակատար դերբայ – որոշիչ)

2. Կայույտ երկնքում փայլող արևը կյանք է ներշնչում:  
ԴԴ (ենթայակայական դերբայ – որոշիչ)

3. *Իր մանկության մասին հուշեր գրելիս* նրա սիրտը լցվում էր խինդով:  
ԴԴ (համակատար դերբայ – ժամ. պարագա)
4. Նա քայլում էր՝ *ուրախ ժպտալով անցորդներին:*  
ԴԴ (անորոշ դերբայի գործ. հոլով – ձևի պարագա)

Աշխատանքն ավարտելուց հետո զույգերը փոխանակում են վերջնարդյունք սխեմատիկ նախադասությունները և դրանց միջոցով կատարում եզրահանգումներ: Երբ ուսուցիչը համոզվում է, որ աշակերտները կարողանում են որոշել ԴԴ-ի սահմանները և առանձնացնել ԴԴ-ի կառուցվածքային տարրերը, նրան մնում է ձևակերպել կանոնը:

**Ղերբայն իր լրացման կամ լրացումների, ինչպես նաև լրացման լրացումների հետ կոչվում է ղերբայական դարձված:** Տեսականը տեսանելի դարձնելու համար կարելի է ԴԴ կառույցի սեղմ բնութագրումը ներկայանել բանաձևով՝ ԴԴ=անկախ ղերբայ+լրացումներ:

Ի մի են բերվում առաջադրանքում արտացոլված գիտական բնորոշումները:

Աշակերտները համոզվում են, որ ԴԴ-ն ըստ էության բայական բառակապակցություն է, որի գերադաս անդամը ղերբայ է՝ ուղիղ կամ թեք ձևով. այն չի պարունակում որևէ հաղորդում, զուրկ է ստորոգումից:

Ուսուցիչը պետք է հետևողական լինի, որ նախադասությունը վերլուծելիս աշակերտները սխալմամբ ԴԴ-ն՝ նախադասություն, իսկ ղերբայը ստորոգյալ չհամարեն: Այս սխալը բխում է նրանից, որ աշակերտները երբեմն նախադասության բնորոշման սահմանը համարում են բառերով արտահայտված յուրաքանչյուր առանձին միտք: Ուստի աշակերտներին պետք է ուղղորդել՝ միտքը նախադասության բովանդակությունն է. միտքը նախադասություն է դառնում, եթե ձևավորվում է որոշակի քերականական առանձնահատկություններով՝ ստորոգում, հնչերանգային ավարտվածություն: Նախադասության սահմանը որոշելու համար աշակերտները պետք է առանձնացնեն ստորոգում ունեցող միավորները, այսինքն՝ խոնարհված բայով կապակցությունները: Այնուհետև ուսուցիչն աշակերտներին բացատրում է,

որ «դարձված» բառը նշանակում է բառերի խումբ: Ուրեմն, ԴԴ ասելով հասկանում ենք դերբայ և նրան լրացնող առնվազն մեկ անդամ էլ. այս դեպքում ԴԴ-ն երկանդամ է, իսկ եթե կան լրացումներ և լրացման լրացումներ, ԴԴ-ն բազմանդամ է (տե՛ս առաջադրանք 5,7,8): Միայնակ դերբայը դեռ դարձված չէ: Եթե կան լրացումներ և լրացման լրացումներ, դրանք մտնում են ԴԴ-ի կազմի մեջ: Այստեղ կարևոր է մի հանգամանք. աշակերտները ԴԴ-ն չպետք է շփոթեն դերբայով արտահայտված նախադասության բազմակի անդամների, հարադիր բայի թեք ձևերի և դերբայ+կապ շարահյուսական միավորի հետ: Բացատրությունը իրականացվում է համապատասխան օրինակների դիտարկմամբ:

որոշիչ                      որոշիչ  
Կահավորված և գարդարված հյուրասրահը գրավեց  
դերբայ                      դերբայ  
բոլորի ուշադրությունը:

Թանկարժեք իրերով կահավորված հյուրասենյակը գրավեց  
ԴԴ որոշիչ  
բոլորի ուշադրությունը:  
ձևի պ.

Ժողովուրդը գլուխ տալով ողջունում էր բանաստեղծին:

Ժողովուրդը հարգալից գլուխ տալով ողջունում էր բանաստեղծին:  
ԴԴ ձևի պ.

Նա առանց բացատրելու հեռացավ:  
ձևի պ.

Երբ աշակերտները հստակ պատկերացում են կազմում այդ հասկացության վերաբերյալ, կարելի է լրացուցիչ տեղեկություն հաղորդել դարձվածք տերմինի վերաբերյալ, ինչը, կարծում ենք, որոշակիորեն կնպաստի աշակերտների կողմից դարձվածի (շարահյուսական տերմին)<sup>5</sup> և դարձվածքի (բառագիտական տերմին) տարբերակմանը (մեր դասավանդման փորձը ցույց է տալիս, որ աշակերտները հաճախ են դրանք

<sup>5</sup> «Դերբայական դարձված» տերմինը առաջին անգամ գործածել է Գ. Սևակը «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական դասագրքում, Եր., 1964, էջ 135:

շփոթում): *Դարձվածք* տերմինը պարզաբանված է հետևյալ սահմանման մեջ. «Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերախմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր»<sup>6</sup>: Բացատրությունը յուրացվում է համապատասխան օրինակներով՝ կոկորդիլոսի արցունքներ, կրիայի քայլերով, ծոխ թևով, խաղաղության աղավնի և այլն:

Անդրադառնալով ԴԴ-ի կազմում երկրորդային վերլուծությամբ վերլուծվող անդամներին՝ ուսուցիչը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է նմուշօրինակներով նախադասություններում սև գրիչով ընդգծված կապակցություններին՝ դերբայ+անմիջականորեն լրացնող անդամ և ձևակերպում է կանոնը:

Ի տարբերություն նախադասության սովորական անդամների՝ դերբային անմիջականորեն լրացնող անդամները կոչվում են *կողմնակի անդամներ*:

Առաջադրանքի հերթական հարցին պատասխանելիս աշակերտներն արդեն վերհիշել են, որ որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը դերբայի (բայական անդամ) լրացում չեն կարող լինել: Ուրեմն, շարունակում է ուսուցիչը՝ վերջիններս կողմնակի չեն կարող լինել:

Աշակերտները նմուշ-օրինակ նախադասություններում հստակեցնում են կողմնակի անդամները՝ միաժամանակ նշելով նրանց պաշտոնը:

(կողմնակի ձևի պարագա)      (կողմնակի հանգման անուղղակի խնդիր)

Նա քայլում էր՝ **ուրախ** *ժպտալով անցորդներին:*

ԴԴ

<sup>6</sup> Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալս. հրատ., Եր, 1999, էջ 296:

Աշակերտները հաճախ շփութում են կողմնակի ենթական, հատկացուցիչը և սակավ դեպքերում կիրառվող սեռական հոլովով դրված կողմնակի ուղիղ խնդիրը: Տարբերակումը ակնառու է դառնում համապատասխան նախադասությունների համեմատությամբ և աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելով այն հարցի վրա, թե սեռական հոլովով դրված գոյականը կամ դերանունը դերբայի՞ն է լրացնում, թե՞ գոյականական անդամին. I դեպքում այն կողմնակի ենթակա է, II դեպքում՝ հատկացուցիչ, իսկ սակավ դեպքերում կիրառվող սեռականով արտահայտված կողմնակի ուղիղ խնդիրը որոշելու համար պարզապես այն պետք է բերել սովորական ձևի. այդ դեպքում ԴԴ կապակցությունը չի աղավաղվում, այսպես՝

1. *Որդու (նրա) լավ սովորելը*  
ուրախացնում է մորը: (կողմնակի ենթակա)
  2. Դիլան դային փախցրել էր *նրա գարկած* միրհավը:  
(ԱԲ, ) (կողմնակի ենթակա)
  3. *Որդու (նրա) ընկերոջ հայտնվելը*  
ոգևորեց մորը: (հատկացուցիչ)
  4. Նրա ուշադրությունը գրավեց  
*թռչունների՝ երկնքում սավառնող երասը*: (հեռացած հատկացուցիչ)
  5. Նա մեծ բավականություն էր ստանում առավոտյան իր *այգու*  
*ծառերի՝ պարբերաբար խնամելուց* //
- Նա մեծ բավականություն էր ստանում
- առավոտյան իր այգու ծառերը պարբերաբար խնամելուց*:
- (կողմնակի ուղիղ խնդիր)

Նույն ձևով՝ ծաղիկների ջրելը = ծաղիկներ ջրելը, գրքի կարդալուց – գիրք(ը) կարդալուց, առաջադրանքի կատարելը = առաջադրանք կատարելը:

Այսպես, որոշակի հարցերին պատասխանելու, նաև համապատասխան առաջադրանքի կատարման արդյունքում աշակերտները պետք է գան այն համոզման, որ ԴԴ-ի գերադաս անդամը՝ անկախ դերբայը, ունենում է իր հետ անխզելիորեն կապված 4 կարգի լրացում՝ ենթակա, ստորոգելի, խնդիր, պարագա: Իսկ ԴԴ-ի կազմի մեջ մտնող այն անդամները, որոնք անմիջականորեն չեն լրացնում դերբային, կողմնակի չեն կոչվում:

Աշակերտներն ինքնուրույնաբար կողմնորոշվում են՝

Կապույտ երկնքում փայլող արևը կյանք է ներշնչում:

Նշված օրինակում այդպիսի անդամ է *կապույտ* լրացումը. այն որոշիչ է և ոչ թե կողմնակի որոշիչ:

ԴԴ-ն իր կազմում կարող է ունենալ բաղադրիչ ԴԴ, ինչպես նաև երկրորդական նախադասություն: Այս իրողությունները, քանի որ համեմատաբար բարդ են, նպատակահարմար է ուսուցանել միայն բացատրության մեթոդով՝ համապատասխան սխեմատիկ նախադասությունների ցուցադրմամբ:

ԴԴ – որոշիչ

1. Աչքերն *հառած հեռու-հեռու* (կարմիր) փառվող արեգակին՝  
ԴԴ ձևի պարագա

Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին (ԵԶ, ՀԴԳ, 155):

ԴԴ – պատճառի պ.

2. Ընթուսացած, խելագարված, չտանելով հին կյանքը էլ՝

Անծիր դաշտում – այդ *հավաքված*՝ նրանք կռվի էին եկել (ԵԶ, ՀԴԳ, 148):

ԴԴ – ձևի պարագա

3. ...Արդյո՞ք Սոնան պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝  
ԴԴ – ձևի պարագա

մտածելով, որ ներսն էլ ամայի է (ԱԲ, 75):

**Քայլ 2 – ԴԴ-ի շարահյուսական կիրառության ուսուցում**

Այստեղ ուսուցման հարթություն են բերվում հետևյալ սահմանումներն ու պնդումները

1. ԴԴ –ը նախադասության մեջ մեկ անդամ է:
2. ԴԴ՝ որպես ծավալուն անդամ, նախադասության մեջ կատարում է ենթակայի, ստորոգելիի, գոյականական և բայական անդամի լրացումների պաշտոններ:

Սովորաբար ԴԴ-ն ճանաչել տալուց հետո ուսուցանվում են նրա շարահյուսական առանձնահատկությունները, այնուհետև՝ կողմնակի անդամները: Ընդհանրապես ԴԴ-ով նախադասությունները նախ ենթարկվում են *առաջին աստիճանի վերլուծության*՝ նշվում են գլխավոր և երկրորդական անդամները, ԴԴ-ն որպես նախադասության մեկ անդամ, այնուհետև՝ *երկրորդ աստիճանի վերլուծության*՝ շարահյուսորեն վերլուծվում է ԴԴ-ն: Ըստ էության, ԴԴ-ի ուսուցման առաջին փուլում հանձնարարված առաջադրանքի կատարումը (տրված նախադասությունը ենթարկել շարահյուսական վերլուծության, ուշադրություն դարձնել անկախ դերբայի շարահյուսական պաշտոնին, ... որոշակի խթան է միաժամանակ ուսուցման նշված քայլը իրականացնելու համար:

Հարց ու պատասխանի (գրույցի մեթոդ) միջոցով աշակերտները մտաբերում են հանձնարարված նախադասություններում ԴԴ-ն և այն բառը, որին լրացնում է ԴԴ-ի գերադաս անդամը՝ դերբայը: Նախադասությունները գրվում են գրատախտակին: Այս աշխատանքը կարևոր է, եթե աշակերտները կարողանում են հմտորեն որոշել՝ 1) ԴԴ-ի սահմանները, 2) առանձնացնել ԴԴ-ի գերադաս անդամը (անկախ դերբայը) և այն կապելով իր եզրացյալի հետ՝ որոշել վերջինս պաշտոնը, ուրեմն ԴԴ-ի շարահյուսական պաշտոնի ուսուցման հիմքը ապահովված է, այսպես՝

որոշիչ

Կապույտ երկնքում *փայլող* արևը կյանք է ներշնչում:

ԴԴ որոշիչ

Ժ. պ.

Մա՛յր իմ, մի մագո էլ սպիտակեյիս

ԴԴ ժ.պ.

Իմ սրտի բոլոր լարերն են լալիս (ՀՇ, էջ 80):

Ուսուցչին մնում է հիշեցնել, որ նախադասության անդամը կարող է արտահայտվել ինչպես առանձին բառով (*գեղեցիկ* աղջիկը....), այնպես էլ բառակապակցությամբ (*սև* մագերով աղջիկը....): ԴԴ-ն էլ, քանի որ բառակապակցություն է, դառնում է նախադասության մեկ անդամ և կատարում տարբեր պաշտոններ՝ ենթակայի, ստորոգելիի, գոյականական և բայական անդամների լրացումների: Հայտնի է, որ ԴԴ-ն կարող է հանդես գալ նաև որպես կոչական, միջանկյալ խոսք, անդեմ նախադասություն, սակայն այս իրողությունները միջին դպրոցի ուսումնական ծրագրում ներառված չեն:

Աշակերտները պետք է ըմբռնեն, որ ըստ էության, ԴԴ-ն կատարում է այն նույն պաշտոնը, ինչ որ նրա գերադաս անդամը՝ անկախ դերբայը: Այստեղ կարևոր է նաև աշակերտների՝ ԴԴ-ին ուղղված հարցադրման կարողությունը:


ԴԴ-ի շարահյուսական տարբեր պաշտոնների քննարկումը կարելի կազմակերպել խմբային աշխատանքով: Ուսուցչի միջամտությամբ ձևավորվում են համագործակցային խմբերը: Յուրաքանչյուր երկու կամ երեք խմբի (2-4-հոգանոց) տրվում է նույն հանձնարարությունը: Այնուհետև նույն հանձնարարությունը կատարած խմբերը հերթով միավորվում են, համատեղում արդյունքները, ուսուցչի օգնությամբ կատարում ճշգրտումներ և վերջնարդյունքը ներկայացնում մյուս հանձնարարությունը կատարած խմբերին: Այս մեթոդը պայմանականորեն կրում է «Ձևագնդի» անվանումը:

*Առաջադրանք:* Տրված նախադասություններում ընդգծել ԴԴ-ն և որոշել պաշտոնը:

I և II խմբերը քննարում են՝ ա) ենթակա և ստորոգելի ԴԴ-ով նախադասությունները, բ) գոյականական անդամի լրացումով ԴԴ-ով նախադասությունները: III և IV խմբերը քննարկում են բայական անդամի լրացում (խնդիր և պարագա) ԴԴ-ով նախադասությունները

Կարելի է աշակերտներին ուղղորդել «մանկավարժական դեսանտի» դեր կատարող հետևյալ սխեմաների և հուշումների օգնությամբ: Հուշող թերթիկները բաժանվում են համագործակցային խմբերին:

- 1) Նախադասության գլխավոր անդամներ
  - ենթակա
  - ստորոգյալ
    - պարզ
    - բաղադրյալ
- 2) Գոյականական անդամի լրացումներ
  - որոշիչ
  - հատկագուցի
  - բացահայտիչ
- 3)



5) ԴԴ-ն լրացյալին կարող է միանալ նաև կապի միջոցով՝ ... **գրելուց հետո**....

6) ԴԴ-ով կարող են արտահայտվել նախադասության բազմակի անդամները, որոնք կատարում են միևնույն պաշտոնը և պատասխանում են նույն հարցին:

Նախադասություններն ընտրվում են գեղարվեստական գրականությունից կամ պատմության, աշխարհագրության, կենսաբանության դպրոցական դասագրքերից՝ ԴԴ-ի շարահյուսական տարբեր կիրառություններով:

1. Մորս անունը Աստղիկ է անմար՝  
*Աստղից ծնվածը անբիծ չմնար...* (ՀՇ, 101):
2. Նրա համար ամենից մեծ հաճույքը *այգին ու արտերը ջրելն էր* (ԱԲ, 127):

3. *Բուրմունքից արքած* մի բզեզ քնել էր առեջների մեջ (ԱԲ, 143):
4. Հեովից *ճյուղի կոտրվելու* ձայն լսվեց (ԱԲ, 31):
5. Անագորույն կայարը դժնյա մի պատիժ սահմանեց՝ *մերկացնել հանդուզն գորավարին* և *նետել կրկեսի ամեհի գազանների առաջ* (ՍԶ, ):
6. Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ *կնոջ դեմքի կարմրելը* (ԱԲ, 113):
7. Հա՛յր իմ, *Բնձ մի կյանք տվողին*  
Յոթը կյանք էլ տայի՝ քիչ էր (ՀՇ, 277):
8. Ճիշտ են ասում...  
Քո տարիքի մարդիկ արդեն  
  
Ձեռ են քաշել  
  
*Պարսպ-սարսպ թափառելուց* (ՀՍ, 68):
9. *Առվով ջուր կապելիս* նա ջրի հետ էլ գնում էր, մինչև ջուրը այգուն հասներ (ԱԲ, 127):
10. *Ջուրը ծառերի տակ կապելուց հետո* Լառ-Մարգարը պառկում էր ծառի շվաքի տակ (ԱԲ, 127):
11. Լառ-Մարգարը, *գիշերվա ջրտուքից բեզարած*, պառկում էր բարդիների տակ... (ԱԲ, 129):
12. Ձիերը, *անգղների կոնչոցից վախեցած*, խլշեցին ականջները (ԱԲ, 137)
13. Մի անմահություն շահելու համար,  
Արժե՞ր, որ այդքան կորուստներ տայիր (ՀՍ, 59):
14. Մայրիկիս մեջ ողջ մայրերին ես կզգամ,  
Նրանց կերգեմ՝ *երգելով մորն իմ անգին* (ՀՇ, 5):
15. *Հոգնած աչքերս փակելով,*  
*Փափագելով օրերն անդարձ՝*  
  
Կանգնել էի լեռան գլխին՝  
  
*Խոռվքներով ու պարտքերով*  
  
*Հարստացած* (ՀՍ, 60):

16. Օրենքով թույլտվություն ստանալու դեպքում կշարունակվեն շինարարական աշխատանքները:

17. *Չնայած հորդառատ անձրև տեղայուն, զբոսաշրջիկները շարունակեցին ճանապարհը:*

Աշակերտների տրամաբանությունը, ինքնուրույն եզրակացություններ անելու ունակությունները զարգացնելու առումով ուսուցման յուրաքանչյուր քայլին առավել նպատակային է նրանց ներգրավել դասագործընթացների մեջ. այս եղանակով զարգանում է նրանց ինդուկտիվ մտանգում կատարելու կարողությունները:

Դասի **կշռադաստման փուլում** ամփոփվում են ողջ դասի ընթացքում կատարած բոլոր գործողությունները, եզրահանգումները:

Թեմայի յուրացումն իրականացվում է հարցերի և առաջադրանքների միջոցով (ԴԴ-ի շարադասությունը և կետադրությունը ուսուցանվում է առանձին դասագործընթացով):

1. Բնորոշել ԴԴ հասկացությունը:
2. Ո՞րն է ԴԴ-ի գերադաս անդամը:
3. Թվարկել այն անկախ դերբայները, որոնցով ձևավորվում է ԴԴ-ն:
4. Շարահյուսական ի՞նչ միավոր է ԴԴ-ն (բառ, բառակապակցություն, նախադասություն):
5. Որպես նախադասության մեկ անդամ ի՞նչ պաշտոն կարող է կատարել ԴԴ-ն:
6. Ի՞նչ է կոչվում դերբային անմիջականորեն առնչվող անդամը:
7. Դասագրքից կարդալ «Դերբայական դարձված» թեման և գույգերով քննարկել:
8. Ինքնագնահատման աղյուսակում (ԳՈԻՍ) կատարել գրառումներ (գիտեմ-ուզում եմ իմանալ-սովորեցի):
9. Տրված տեքստից դուրս գրել ԴԴ-ն. ա) յուրաքանչյուրի կազմում առանձնացնել գերադաս անդամը, բ) որոշել կողնակի անդամների պաշտոնները, գ) որոշել ԴԴ-ի պաշտոնը:

*Խոսքի զարգացման համար տրվող առաջադրանքներ:*

1. Տրված նախադասություններում դերբային ավելացնել լրացումներ:
2. Տրված տեքստը հարստացնել ԴԴ-ով:
3. Կիրառելով ԴԴ՝ գրել ստեղծագործական շարադրություն:

Համառոտագրություններ

ԱԲ – Ակսել Բակունց, Հայ դասականների գրադարան, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1986:

ՀՇ – Հովհաննես Շիրազ, Հուշարձան մայրիկիս, «Հայաստան» հրատ., 1972:

ՀՍ – Համո Սահյան, Կանչե կռունկ, Ընտիր բանաստեղծություններ, «Հայաստան»

հրատ., Եր., 1973:

ԵԶ – Եղիշե Չարենց, Հայ դասականների գրադարան, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր.:

Ռուբինա Հարությունյան

Սովորողների տրամաբանական մտածողության զարգացումը միջին դպրոցում դերբայական դարձվածն ուսուցանելիս  
Ամփոփում

Հոդվածում ներկայացված է ԴԴ-ի ուսուցումը հանրակրթության հիմնական դպրոցի 9-րդ դասարանում: Նշված թեմայի ուսուցման գործընթացում կարևորվում են.

1. ԴԴ-ի ձևավորումը
2. ԴԴ-ի շարահյուսական պաշտոնը նախադասության մեջ
3. ԴԴ-ի շարահասությունը և կետադրությունը:

Թեմայի ուսուցումը ներկայացվում է ավանդական և ժամանակակից մեթոդների համադրմամբ, որոնք զուգակցվում են սարաբնույթ վարժություններով:

Առաջադրանքների կատարման ճանապարհով աշակերտներն իրենք են հանգում ընդհանրացումների, սահմանումների:

Рубина Арутюнян

Развитие рассудительного мышления обучающихся в средней школе  
в процессе обучения деепричастного оборота

Резюме

В статье предсавлен процесс обучения деепричастного оборота в девятом классе. В процессе изучения данной темы пристальное внимание уделяется на

1. формирование деепричастного оборота,

2. разных синтаксических ролях деепричатного оборота в предложениях,
3. порядок слов и пунктуации.

Обучение данной темы осуществляется как традиционными, так к современными методами, которые сопоставлены различными упражнениями путем выполнения упражнений, ученики сами приходят к определению различных правил.

### **The development of the logical thinking of students in secondary school in the scope of the study of Participle Phrases .**

In the learning process of aforementioned topic the following points are important The article presents the PL study in secondary education in basic school, mainly in the 9th grade.

1. the formulation of PP
2. the role of syntax in PP
3. the place of PP in the sentence and its punctuation.

The study of the topic is presented with the combination of traditional and modern methods, which are combined with various exercises.

The process of carrying out the tasks eventually leads the students to generalizations and definitions.

**ՎԱՐԴԻԹԵՐ ՄԻՍՈՆՑԱՆ**

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

**ԳՐԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՅՐԵՆԻԻ  
ԴԱՍԸՆԹԱՅՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրական գիտելիքներ, ընթերցողական կարողություն, բնագիր, թեմա, կերպար, ենթատեքստ, գաղափար, բացատրական ընթերցանություն:

**Ключевые слова и выражения:** литературные знания, читательские навыки, тема, образ, контекст, идея, объяснительное чтение.

**Key words and phrases:** literary skills, reading ability, autograph, theme, character, subtext, idea, explanatory reading.

Կարդացած ստեղծագործության վերլուծության աշակերտի կարողությունը և տպավորությունների զգացմունքային ամբողջականությունը բնագրի հասկացման գործընթացի հիմքն են. բնագրի հասկանալը ընթերցողական կարողության գլխավոր բաղադրիչն է, իսկ կարդացածը հասկանալու ճանապարհը՝ բնագրի վերլուծությունը: Իսկ ի՞նչ է նշանակում բնագիրը, որո՞նք են այդ գործընթացի բաղադրիչները, ինչպե՞ս և ինչի՞ց սկսել կարդացած բնագրի վերլուծությունը տարրական դպրոցում, որպեսզի սկսնակ ընթերցողը դառնա հասկացող ընթերցող: «Ինչի՞ց սկսել կարդացած բնագրի վերլուծությունը, ի՞նչ է նշանակում գրական ստեղծագործությունը վերլուծել: Դրա համար առաջին հերթին աշակերտներին պիտի սովորեցնել տեքստում հաջորդաբար առանձնացնել բանալի հատվածները, կերպարները և այն բառերը, որոնք արտահայտում են ստեղծագործության հերոսների գործողությունների հիմնական դրդապատճառները, գաղափարները, հեղինակի նպատակադրումները, հերոսների երկխոսություններն ու մենախոսությունները, որոնց միջոցով բացահայտվում է հերոսի հոգում կուտակված, նրանց բնավորության մեջ առկա շատ կարևոր մի բան»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Գյուլամիրյան Ջ.Հ., «Ընթերցողական հետաքրքրության ձևավորման և զարգացման հիմնախնդիրը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ»,

Ուսումնասիրությունները ցույց են տվել (Выготский Л.С., Педагогическая психология, М., 1991), որ կրտսեր դպրոցական տարիքում արդեն ձևավորված են կարդացած ստեղծագործության մեջ ներկայացված դեպքերի, երկխոսությունների, հարաբերությունների ամբողջական ընկալման նախադրյալները: Որքան էլ զարմանալի է, բայց հենց այդ տարիքում է փոքրիկ ընթերցողը կարողանում թափանցել գեղարվեստական ստեղծագործության մեջ, մտածել դրանց շուրջ, խորհել լավի և բարու, ճշտի և սխալի, արդարի և անարդարի շուրջ և այլն:

Կարդացած ստեղծագործության բովանդակությունը վերլուծելու կարողության ձևավորումն ու զարգացումն ուսուցչի նպատակն է, սակայն խնդիրը չի լուծվի, եթե հաշվի չառնվի աշակերտական դասանպատակը. կարողալ հաճելի ստեղծագործություններ, ծանոթանալ իր համար արժեք ներկայացնող մարդկանց հետ, մասնակից լինել իրեն ծանոթ, հասկանալի և ապրված դեպքերի, այսինքն, բավարարել սեփական հետաքրքրությունները, իրականացնել սեփական նպատակները: Ուրեմն, ստեղծագործության վերլուծության լավագույն մեթոդն այն է, որը նպաստում է ոչ թե պարզապես կարդալուն, այլ համապատասխանում է աշակերտական նպատակին: «...ուսուցման մեթոդն այն հնարների համակարգն է, որով ուսուցիչն առաջացնում է իր նախատեսած ուսումնական գործունեությունը աշակերտական նպատակով հանդերձ և կառավարում այն մինչև մանկավարժական և աշակերտական նպատակներին հասնելը»<sup>2</sup>:

Այս համատեքստում դիտարկելով մեր ուսումնասիրության հիմնախնդիրը՝ մենք աշխատանքային վարկածը կառուցելիս կարևորել ենք գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդների՝ աշակերտների հետաքրքրությունների, կարդալու նկատմամբ նրանց ձգտման, մոտակա և հեռա-հար նպատակների հաշվառմամբ ընտրությունը և կիրառումը: Այսինքն, առաջնությունը տվել ենք ընթերցողական ցանկությանը և կարդալու գործընթացի իրականացման աշակերտական նպատակներին:

---

«Մանկավարժական և հոգեբանական հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, ՀՊՄՀ, 2012, N 3, էջ 59 (44-50):

<sup>2</sup> Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց: Ուսումնական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., Զանգակ-97, 2005, էջ 467, 560 էջ:

«Դասի նպատակը որոշելիս չի՛ կարելի մոռանալ, որ այդ նպատակը ուսուցիչն ու աշակերտը դիտում են տարբեր տեսանկյուններից: Որոշելով դասի նպատակը՝ ուսուցիչը պետք է աշակերտներին այն ներկայացնի նրանց համար ընդունելի ու հասկանալի ձևակերպումով»<sup>3</sup>:

Մեր հետազոտության հիմնախնդրի շուրջ կատարած ուսումնասիրությունները և տարրական դասարաններում մայրենիի դասալսումները, ինչպես նաև ուսուցիչների հետ մեր հարցազրույցները մեզ բերեցին այն համոզման, որ կարդացած բնագրի հասկացման արդյունավետությունը մեծապես ապահովում են գրականագիտական հասկացություններն ըմբռնելու, դրանց օգնությամբ բնագրի ենթաշերտերի մեջ թափանցելու աշակերտների կարողությունները, որոնք ևս ընթերցողական ունակությունը հասցնում են ընթերցողական հմտության մակարդակի, աշակերտների համար կարդացած ստեղծագործության շուրջ տարվող վերլուծական-համադրական աշխատանքը դարձնում են կյանքը կարդացած նյութի օգնությամբ ճանաչելու նպատակային գործունեություն:

Բացատրական ընթերցողության ողջ բազմաբաղադրիչ և բարդ գործընթացի գերխնդիրը մայրենիի դասագրքերում զետեղված բնագրի շուրջ տարվող վերլուծական համադրական աշխատանքն է՝ մայրենիի ուսումնասիրման տարրական դասընթացի նյութական հիմքը: Ահա թե ինչու մայրենիի դասի կառուցվածքում ծանրակշիռ հատվածը հատկացվում է ընթերցանությունը:

Կարդացած բնագրի շուրջ աշխատանքային քայլերի համակարգի ձևավորման մեթոդական սկզբունքները պայմանավորված են տարրական դպրոցում մայրենիի դասի ինքնատիպությամբ. ընթերցանության նյութի բառային-խոսքային յուրահատկությունը և բարոյական-եղագիտական կողմի՝ միայն բառերի միջոցով ընկալման և վերարտադրման հնարավորությունը, ձեռք բերած գիտելիքների և կարողությունների, կենսափորձի վրա հենվելու պարտադիրությունը հաղորդակցության մեջ ներգրավելու նպատակով սովորողներին տարաբնույթ խոսքային գործունեություն և այլն: Այս ամենը խոսում է այն մասին, որ մայրենիի դասընթացի՝ ընթերցանության բաղադրիչի հիմնական նպատակը նրա ընթերցողական կարողության ձևավորումն է, իսկ ընթերցողական կարողության ձևավորման գլխավոր ուղին կարդացած ստեղծագործության մեթոդապես ճիշտ վերլուծելու կարողության ձևավորմանը միտված ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունն է:

---

<sup>3</sup> Пассов Е.М. Урок иностранного языка, М., 1988, с. 35.

«Կարդացած ստեղծագործությունների մեթոդապես ճիշտ վերլուծությունը նպաստում է, որ ընթերցողը փորձի այդ ճանապարհով ճանաչել ինքն իրեն, հաղթահարել իր մեջ ծագած խնդիրները և չենթարկվել դրանց իշխանությանը, այսինքն՝ դիպվածները չեն որոշի նրա վարքը, արարքները»<sup>4</sup>:

Ներկայցնենք մեր կողմից մշակված գրական տարրական գիտելիքների սահմանները և այդ գիտելիքների ձեռքբերման, դրանք կարողությունների վերածման մեթոդիկական հանրակրթական դպրոցի II-IV-րդ դասարաններում մայրենիի դասագործընթացում:

Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է մայրենիի դասի ընթերցանության փուլում՝ կարդացած բնագրի շուրջ տարվող աշխատանքի ընթացքում: Այս խնդիրն առավել արդյունավետ լուծելու կարդացած ստեղծագործության նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բորբոքելու, գիտակից ընթերցող ձևավորելու համար մենք գրական գիտելիքների ձեռքբերման գործընթացն առաջարկում են իրականացնել երկու փուլով.

ա) գրական նախնական գիտելիքների ձեռքբերում

բ) գրական տարրական գիտելիքների ձեռքբերում:

Նշված փուլերի բովանդակությունն ու հաջորդականությունը որոշելիս հաշվի ենք առել կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, կարդալու կարողությունների մակարդակը, ճանաչողական հետաքրքրությունների սահմանները, կենսափորձը և մայրենիի դասի հնարավորությունները: Գրական նախնական գիտելիքների մեջ մտնում են՝ վերնագրի, բառի գեղարվեստական արժեքի, տեքստի և թեմայի մասին գաղափարի ու դրանց հետ կապված կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Գրական տարրական գիտելիքների մեջ մտնում են՝ հիմնական մտքի՝ գաղափարի, ենթատեքստի, գործող անձանց՝ կերպարների մասին գաղափարի ու դրանց հետ կապված կարողությունների ձևավորումն ու զարգացումը դասարանից դասարան:

Կարդացած բնագրի շուրջ իրականացվող աշխատանքի ժամանակ աշակերտները ձեռք են բերում նաև գիտելիքներ համեմատության, փոխաբերության, այլաբանության, դարձվածքների, առածների,

---

<sup>4</sup> Գյուլամիրյան Ջ.Հ., «Ընթերցողական հետաքրքրության ձևավորման և զարգացման հիմնախնդիրը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ», «Մանկավարժական և հոգեբանական հիմնախնդիրներ», ՀՊՄՀ, 2012, N 3, էջ 59:

ասացվածքների և գրական ժանրերի մասին: Այս ամենի մասին տարրական պատկերացումները և դրանք գործնականում տարբերելու կարողությունը նպաստում են հասկանալով ընթերցողի ձևավորմանը, ընթերցողական կարողության ամբողջացմանը: Այսինքն, հասկանալ, պատկերացնել, «տեսնել», «ճանաչել» նաև այն կերպարները, որոնց հաճախ հնարավոր չէ պատկերացնել տեսողությամբ: Դրանք չոշակավոր, բայց ազդեցիկ երևույթներ են՝ ապրումները, զգացումները, վախը, անհանգստությունը, որոնք պիտի զգան ընթերցողները և կարողանան զգացմունքային դրսևորումներով արտահայտեն իրենց վերաբերմունքը այն ամենի նկատմամբ, որ զգում են գեղարվեստական կերպարները: Ուսուցչի խնդիրն է՝ օգնել կրտսեր դպրոցականներին՝ իրենց երևակայության միջոցով ամբողջացնել հեղինակի մտահղացումները: «Հենց այդ նրբագագ, ստեղծագործական երևակայություն ունեցող ընթերցողի վրա է հույսը դնում հեղինակը, երբ իր ողջ ուժերը լարում է՝ ճշգրիտ կերպարը, գործողությունների ճիշտ ընթացքը, դիպուկ բառը տնելու համար», - նշում է Ս.Մարշակը՝ ամփոփելով, որ տաղանդավոր գրողը չի կարող կայանալ առանց տաղանդավոր ընթերցողի: Իսկ ընթերցողը տաղանդավոր է և կարող է հասկանալ գրողի՝ արվեստագետի երևակայությունը, եթե գրողն էլ իր հերթին է փորձում ըմբռնել իր ընթերցողի պահանջմունքները, կենսափորձի մակարդակը. հանգամանքներ, որոնք մեծապես պայմանավորված են ոչ միայն կյանքի հանգամանքների ըստ ամենայնի ճանաչմանը, այլև այդ կյանքն ապրող ընթերցողի հետաքրքրություններով, կարիքներով: «Իրականում արվեստագետի երևակայությունը միշտ սնվում է կյանքի, մարդկային հարաբերությունների և հոգեբանության խոր և բազմակողմանի ճանաչողությամբ, իսկ նրա էական և անփոխարինելի խնդիրը հանգում է այդ նույն մարդկային կապերի, արաքների ու զգացմունքների ճշմարիտ վերարտադրությանը: Որքան գրողը լավ է ճանաչում կյանքը, մարդկանց, այնքան ավելի հեշտությամբ նա կտեսնի ու կբացահայտի տվյալ երևույթի մեջ պարփակված հասարակական և հոգեբանական բովանդակությունը, այնքան նրա երևակայությամբ ստեղծված պատկերներն ավելի կենդանի, համոզիչ, ճշմարտացի կլինեն»<sup>5</sup>:

<sup>5</sup> Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Եր., Երևանի համալս. հրատ., 1980, էջ 161, 496 էջ:

Օգտագործված գրականություն

1. Գյուլամիրյան Ջ.Հ., «Ընթերցողական հետաքրքրության ձևավորման և զարգացման հիմնախնդիրը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ», «Մանկավարժական և հոգեբանական հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսուրցիումի գիտական հանդես, ՀՊՄՀ, 2012, N 3, էջ 59 Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց: Ուսումնական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր. Զանգակ-97, 2005, էջ 467, էջ 560:
2. Գյուլամիրյան Ջ.Հ., «Ընթերցողական հետաքրքրության ձևավորման և զարգացման հիմնախնդիրը բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ», «Մանկավարժական և հոգեբանական հիմնախնդիրներ», ՀՊՄՀ, 2012, N 3, էջ 59:
3. Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Եր., Երևանի համալս. հրատ., 1980. էջ 161, էջ 496:
4. Выготский Л.С. Педагогическая психология, М.1991.
5. Пасс Е.М. Урок иностранного языка, М., 1988, с 35

Վ. Սիմոնյան

Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման առանձնահատկությունները տարրական դպրոցի մայրենիի դասընթացում  
Ամփոփում

Հեղինակը հիմնավորում է տարրական դպրոցում գրական գիտելիքների ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ որպես ընթերցողական կարողության ձևավորման գործոն: Առաջարկվում է նշված գիտելիքներն ուսումնասիրել երկու փուլով՝ ապահովելու համար ուսուցման մատչելիության և շարունակականության սզբունքները: Տարրական դպրոցում մայրենիի դասի ծրագրային խնդիրներից է ընթերցողական կարողության ձևավորումը: Հեղինակն այդ կարողության ձեռքբերման արդյունավետությունը պայմանավորում է կրտսեր դպրոցականների ունեցած գրական գիտելիքներով:

Simonyan V.

**Investigation characteristics of literary elementary knowledge during  
the national lessons of elementary schools**

Resume

The author substantiates the necessity of studying literary as a factor of reading ability formulation knowledge in elementary school. It is suggested to investigate the following knowledge in two phases in order to assure the principles of teaching availability and continuity.

Formulation of reading ability is the program issues of elementary school's native classes. Efficiency of acquiring that ability author connects to the literary knowledge of the junior school students.

Симонян В.

**Особенности изучения начальных литературных данных  
на курсе родного языка начальной школы.**

Резюме

Автор обосновывает необходимость изучения литературных знаний в начальных школах как формирование факта читательского навыка. Предлагается 2 этапа изучения данных знаний, чтобы обеспечить доступность обучения и принципы продолжительности.

программной задачей урока родного языка в начальной школе является формирование читательского навыка. Результативность в приобретении данного навыка автор обуславливает литературными знаниями младших школьников.

ՄՈՒՇԵՂ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ  
գեղանկարչության ամբիոնի դասախոս

ԿՈՄՊՈԶԻՑԻԱ-ՀՈՐԻՆՎԱԾՔ, ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ  
ԼԵԶՎԻ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հորինվածք, գեղանկարչություն, լեզու, գեղարվեստական կերպար, գեղարվեստական ստեղծագործություն, ազգային, կենսունակ

**Ключевые слова и выражения:** композиция, живопись, язык, художественный образ, художественные произведения, национальный, жизненный

**Key words and phrases:** composition, painting, language, artistic images, piiese of art, national, vital.

Գեղանկարչական գրականության մեջ կա այն հաստատական կարծիքը, որ դիմանկարի այսպես կոչված կոմպոզիցիոն, իմա՝ հորինվածքային կատարումը, շատ բաներով տարբերվում է բնօրինակային կատարման առաջադրանքից, իբրև թե բնօրինակը նկարելու ընթացքում բուն հիմնախնդիրը հանդիսանում է ձևերի, մասերի, գույնի և բնութագրականի արտահայտումը, համամասնական կառուցումով և մասերի ներդաշնակությամբ, իսկ հորինվածքային դիմանկարի ստեղծման ժամանակ կարևորվում է գեղարվեստական կերպարի ստեղծումը (իսկ ի՞նչն է կարևորվում առաջինի դեպքում), մարդու հոգևոր հատկությունների արտահայտումը (առաջինի դեպքում սա միթե՞ կարևոր չէ նույնպես, կամ միթե՞ հնարավոր է առանց սրա), բնութագրական մասերի (աչք, քիթ, բերան) և ուրվապատկերների արտահայտչականության կենսունակացմամբ, (առաջինում կարող է և սա չլինե՞լ), ընդհանուր գունագեղության ընտրությամբ... Ոչ ավել, ոչ պակաս, բնօրինակային դիմանկարի դեպքում պարզվում է ոչ միայն (գունագեղության ընդհանուր ընտրություն պետք չէ (մի բան, որը դեռ աշխատանքը նախապատրաստության ժամանակ պետք է հաշվի առնել, փնտրել ու գտնել դրվածքի մեջ դեռևս), այլ երևի ընդհանրապես պետք չէ...

Սա ուղղակի բառախաղ է, ոչ ավել, ոչ պակաս, այն էլ խառնաշփոթությունից բացի ուրիշ ոչինչ չառաջացնող բառախաղ: Մի պահ համաձայնվելով, որ, իսկապես, երկու այդպիսի դեպք կա՝ բնօրինակից դիմանկարի կատարում և կոմպոզիցիոն-հորինվածքային դիմանկար, ապա

միթե՞ առաջինի պահանջները, բնականաբար, չեն ենթադրվում երկրորդի մեջ, պարագայում և հակառակը: Անշուշտ, ոչ միայն պետք է ենթադրվեն, այլև պարտադիր են, որովհետև խոսքը երկու դեպքում էլ դիմանկարի ստեղծագործական կատարման մասին է և ոչ թե լուսանկարչության (չնայած այս դեպքում նույնպես կատարված աշխատանքը միայն լուսանկարչական սարքի արդյունք չէ): Գեղարվեստը, որպես իրականության իմաստավորման և ճանաչման ձևերից մեկը, ձգտում է իրական աշխարհի ճշմարիտ արտացոլմանը, կյանքի ավելի բնորոշ և էական երևույթների պատկերմանը: Դրա հետ մեկտեղ, իրական գեղարվեստական ճշմարտությունը չի հանդուրժում կյանքի առանձին երևույթների անկենսունակ կրկնօրինակումը, իրականության անհոգի արձանագրումը, որը բերում է ուղղակի պարզ արտագրություն:՝ Երկու դեպքում էլ նկարչի գեղագիտական վերաբերմունքի մասին է խոսվում, նրա ինքնաարտահայտման մասին է, մի բան, որը կարող է դրսևորվել տարբեր խնդիրներով, բայց բոլոր դեպքերում դեպի դուրս և ոչ թե դեպի ներս: Անկախ այն բանից, մեկը բնօրինակից է արված, մյուսը՝ պատկերացմամբ: Չնայած յուրաքանչյուր պատկերացման հիմքում նույնպես ընկած է, առարկայական կամ ոչ առարկայական, բայց որոշակի մի զգացողություն: Սովորաբար օրենքները գրվում են դասական պատկերացումների հիման վրա և ոչ բնավ անձնային զգացողությունների, և որն ավելի ցավալի է, գրվում է նյութը և բուն խնդիրը չպատկերացնելով, կամ նրա նախապայմանի պարտադիր չլինելու պատճառով: Պետք է խորապես և ամեն ինչում հստակ սահմանագատվի, և դա հնարավոր է, ինքնուսույթունը՝ մասնագիտականությունից, և երբեք չպետք է ուղղակի անգիտությամբ կատարվածը որակվի որպես բնօրինակային նկարչություն: Քանի որ գեղանկարչության օրենքներից և կանոններից շեղվելը՝ հենց նշանակում է ինքնուսուցում, երբ որ այդ երկու՝ իբրև թե տարբերակումները, նույնն են ինքնուսուցի մոտ, նույնն են և մասնագետի մոտ, անշուշտ կատարման անհամատեղելի մակարդակներով:

«Գեղանկարչությունը չպետք է դառնա լուսանկարչություն: Մեզանում բազմաթիվ լուսանկարիչներ դարձան իսկական գեղարվեստագետներ, իսկ որոշ նկարիչներ, դժբախտաբար, դարձան լուսանկարիչներ: Բնօրինակի ճշմարիտ պատճենահանողի և իրական նկարիչ-ստեղծագործողի միջև ոչ մի կապ չկա: Իսկական արվեստը գալիս է միայն կյանքի ճշմարտացի ուսումնասիրությունից»:<sup>2</sup>

Այլ բան է գեղարվեստական ստեղծագործությունը և նրա փոխակերպումները, չնայած խնդիրը դրանից այնքան էլ չի փոխվի, քանի որ, եթե դա առանձին խնդիր չէ, ապա այն կենսականորեն գտնվում է

իրական գեղանկաչի ստեղծագործական գործընթացում և ենթարկվում է այդ նույն օրենքներին, ինչպես բնօրինակային նկարչության մեջ: Բոլոր դեպքերում, առաջնայինը գեղանկարչի անհատականությունն է, նրա կարողությունները՝ համընդանուրից, ընդհանուրի (որոշակիի) անջատումն է, որոշակի սահմաններով, անսահմանից սահմանահանումն է: Բազմաթիվ գոյերից, որոնք տեսակ են կազմում, մեկին կամ մի քանիսին առանձնացնելու կարողությունն է: Բոլոր դեպքերում, բանը պետք է դիտել այն հարթությունից, ուր կանգնած է նկարիչը, և ուր դրված է կտավը, բայց երբեք ոչ այն տեղից, թե որտեղ է դրված կտավը, և որտեղ է կանգնած նկարիչը: Անգամ հարթության փոփոխությունը, բանը խառնաշփոթության է վերածում, չխոսելով արդեն այն մասին, երբ գիտակցաբար հարթությունների համատեղում է կատարվում, ելնելով այն մեկ ընդհանրությունից, այն է՝ որպես հարթություն կոչվելուց, որով էլ սկզբնավորվում է բնօրինակային դիմանկար և հորինվածքային դիմանկար՝ անտրամաբանական արտահայտությունն ու բնականաբար, խառնաշփոթը՝ գեղանկարչական ընդհանուր օրենքի քմահաճորեն տարաբաժանումը: Նախ ի նչ սսել է կոմպոզիցիա... Մեզ հասանելի, մեր ձեռքի տակ եղած այն գրականությունը, որ կա կոմպոզիցիայի տեսության մասին, մեր համեստ կարողությունների սահմաններում ուսումնասիրելով, հանգել ենք մի եզրակացության. որն այս է, անշուշտ, դույզն իսկ չնսեմացնելով և չնվազեցնելու նրանց՝ հեղինակներին, և ոչ էլ նրանց կատարած աշխատանքը, որ թվաբանական պարզ գործողությունը սովորեցնելու համար (ինչու՞ չէ, նաև սովորելու), բոլորովին կարիք չկա բոլոր թվերը մեկ առ մեկ գումարել միմյանց, մի բան, որն ոչ միայն անհնարին է, այլև ուղղակի անհեթեթություն է: Ուղղակի պետք է մեկընդմիջտ սովորեցնել գործողության գործողությունը, գտնել համակարգը, գտնել այն, ինչն ամեն ինչ ենթադրում է և ունի իր մեջ: Այսինքն կարիք չկա ծովը խմել և դա հնարավոր էլ չէ, եթե նույնիսկ ցամաքեցվեն նրա մեջ թափվող գետերը, ոչ միայն կարիք չկա, այլ ուղղակի անշնորհակալ գործ է, որովհետև ծովի ինչքն իմանալու համար, անգամ մեկ բաժակն էլ բավական է, եթե ոչ կաթիլը... Հեղինակներից յուրաքանչյուրի մոտ, որ թույլ ենք տվել մեզ նկատելու, այդ հարցի քննության մեջ, այն հարցին, թե վերջապես ինչ՞ է կոմպոզիցիան, չկա որոշակի պատասխան, երբ որ ինքը՝ կոմպոզիցիան-հորինվածքը, բոլորովին որոշակիություն է: Նրանց՝ հեղինակների մոտ գլխավորապես իշխում է մի որոշակի մասնակիություն, այն է՝ խնդրի մեջ ունենում են որևէ մեկ որոշակի ստեղծագործություն՝ գրական, երաժշտական, ճարտարապետական, գեղանկարչական և այլն: Անգամ, եթե նշված չէ որ երկը, որ ստեղծագործությունը, որ կառույցը, որ կտավը, ապա

մինևույնն է, զգացվում է, որ նրանք այն ունեցել են աչքի տակ, պատկերացման մեջ: Այսպիսի մոտեցումը ճիշտ չէ, որովհետև սրանցից յուրաքանչյուրը՝ երկը, ստեղծագործությունը, կառույցը կտավը ամբողջի մասնիկը չէ, ինչպես ծովի մեկ կաթիլը, այլ արտահայտչամիջոց է, այսինքն մի անոթ, որով տեղափոխվել է կաթիլը, որով կաթիլը անջատվել է ընդհանուրից: Այստեղ կարող է շփոթություն առաջացնել առաջնության խնդիրը, երբ որը կարծում ենք իսպառ բացակայում է այստեղ, որովհետև ստեղծագործությունը ենթադրում է գեղանկարչական գործ, բայց հակառակը չի կարող լինել: Այստեղ խոսքը գեղարվեստական արժեքի մասին չէ, այլ բանը վերաբերվում է ձևին, ետընթացիության կիրառելիության խնդրին: Յորենի հատիկը իր մեջ ամփոփում է իր անցյալը, ներկան և անշուշտ, ապագան է պարունակում, բայց նա որպես այդպիսին, ոչ որպես սերմնահատիկ, ոչ անցյալ է, ոչ ներկա և ոչ էլ ապագա: Խնդիրը բոլորովին չի փոխվի, նույնիսկ, եթե մեկ հատիկի փոխարեն երեք հատիկ, չորսը, ամբողջ շտեմարանը, իմա՝ ամբողջ արվեստը վերցվի: Մինևույն է չկա, և չի էլ կարող լինել այդ հարցի պատասխանը՝ ինչ է կոմպոզիցիան, որովհետև ասելով կոմպոզիցիա-հորինվածք, այս բառը, մենք նրան սահմանում ենք, տալիս ենք որոշակիություն, մի բան, որը դադար է հավիտենական շարժման ընթացքում՝ հարաբերական դադարի պահ, այլապես կստացվի փակուղի, լաբիրինթ, որից դուրս գալը ոչ թե հարցադրումն է, ոչ գեղանկարչական, ճարտարապետական, երաժշտական, գրական ստեղծագործությունների վերլուծությունն է, երբեմն հաջողված, առավելապես անհաջող, այլ անցումն, չնկատելով այդ հարաբերական դադարները, որովհետև դրանցից յուրաքանչյուրը, ընդամենը կանգառներ են, որոնք ոչ մի կապ չունեն ճանապարհի հետ, որոնք կարող են լինել, կարող են և չլինել: Հատիկը, երբ սերմ է, ձև է, որն ենթադրում է ինչ որ բանի վերջ, որ հետո դառնա ինչ որ բանի սկիզբը ժամանակի և տարածության մեջ, ուր գուտ ձևի փոփոխությունը դուրս է և ժամանակից և տարածությունից, որպես երեք չափերի արտադրանք, որովհետև այն իր մեջ չի ներառում ժամանակը և ուղղվածությունը: Ինչ է կոմպոզիցիան, մեր համեստ կարծիքով, մինչ այժմ այդ մասին դատողություններ են արվել, բայց դա արել են ոչ թե ամբողջով, ոչ թե ամբողջի մասով, կամ մասերով, այլ նրա սովորով, որոշ դեպքերում էլ, ինչպես կոչված է ասել՝ կեղծ սովորով: Յուրաքանչյուր ստեղծագործություն կոմպոզիցիա-հորինվածքի կեղծ սովորն է, որովհետև նա իր մեջ կարող է ենթադրել օրենքը, բայց այն օրենքը չէ, որովհետև նա ամբողջը չէ: Ծովից վերցրած կաթիլն ունի ամբողջ ծովն իր մեջ, բայց այն, որպես որոշակիություն անջատված լինելով ամբողջից, ընդամենը կաթիլ է և ասենք, ահռելի չէ ծովի չափ և չունի նրա

այդ մեկ հատկանիշը գոնե, նա արդեն ծով չէ, ուրեմն և ծովի մասին նրանով դատողություն անելը, չնայած այն բոլոր եղած ընդհանրություններին, դատապարտված է անհաջողության: Այստեղ անջատվածությունը դառնում է կենսորոշ, սկիզբ տալով պայմանականության, իսկ այն օրենք է, բայց օրենսդիր չէ, միավոր է, բայց ոչ ամբողջ, արտահայտման ձև է, բայց ոչ սկիզբ... Գծի պրոյեկցիան կարող է կետ լինել, բայց կետը չի կարող ենթադրել գիծ իր պրոյեկցիայում, այնպես որ պետք է գտնել ամբողջը և ոչ միայն ամբողջը, այլ սկիզբը, որից առաջացել է պրոյեկցիան և անգամ կեղծ պրոյեկցիան: Ժամանակի մեջ սկիզբը ենթադրում է վերջ, յուրաքանչյուր սկիզբ իր մեջ կրում է վերջը և յուրաքանչյուր վերջ նշանակում է ինչ որ բանի սկիզբ: Կոմպոզիցիան հենց սա է: Սկիզբ, որը հայտնի է, որպես արարչագործություն: Հենց միայն սրա մեջ է, որ կա այն, ինչը որ պետք է լինի՝ համընթացություն, հավասարակշռություն, տրամաբանություն, զուգակցում, զուգորդում, հարաբերակցվածություն, հաստատականություն, խորություն, անսահմանություն, տեղադրվածություն, զգացմունքայնություն, դատապարտվածություն, լուսավորվածություն, պարզություն, զսպվածություն, հակադրություն, ամբողջականություն, ուրվագծություն, ներդաշնակություն, զունեղություն, ձև, հարթություն և մնացած այն բոլորը, ինչը որ ենթադրում է մեր միտքը, և կարող է ենթադրել, որի թվարկումը այդ նույնն է, ինչ ամբողջության մեջ բերվի որևէ լեզվական բառարան: Հայտնի է կոմպոզիցիա բառի ծագումը, նրա հին և նոր նշանակությունները և այլն...

Հայտնի է նաև, որ պայմանականություն է վաղուց ի վեր, բայց նա այնպիսի մի պայմանականություն է, որը նույնիսկ այդպիսին, տարողունակ չէ և չի ենթադրում իր մեջ մեր բոլոր զգացողությունները, որովհետև մենք ենք այն ստեղծել որպես այդպիսին, և չպետք է վեր դասվեր մեզանից: Մեզանից վեր արարչագործությունն է և այն է սկիզբը: Ասվեց եղիցի լույս և եղավ լույս, իսկ լույսը կարմիր, կապույտ և դեղին գույներն են, այսինքն սպիտակը, այն, ինչն անբիծ է - արարչագործությունը: Արդյոք նկարիչը վերցնելով լույսը որպես գույներ չի ձգտում վերարտադրել նորից լույսը, դեպի անհունը: Անշուշտ ձգտում է, և գեղանկարչությունը և ոչ միայն դա, ձգտման փորձեր են: Մեկին հաջողվում է, մյուսին՝ ոչ, մեկին հաջողվում է մոտենալ, իսկ մյուսը հեռանում է բոլորովին... Մարդը փորձում է կրկնել ՆՐԱՆ, որովհետև, ինքը ՆՐԱ կերպարանքով է ստեղծված... Իսկ կերպարանքը կերպար է նշանակում, էություն ամենից առաջ, և ինքն էլ է փորձում ասել՝ եղիցի լույս և դրա հիմքը էությունն է և ոչ մեկ այլ բան: Ինչ՞ է գեղանկարչությունը, ինչ՞ է գույնը, երանգը, ինչ՞ է ճարտարապետությունը, կամարը, սյունը, խոյակը, ինչ՞ է երաժշտությունը, ինչ՞ է սիմֆոնիան, սոնատը... Մրանք մի ամբողջություն են և այդ

ամբողջության հիմքում ընկած է էությունը և դրանք նրա արտահայտման ձևերն են և նրանով արտահայտված ձևերն են: Կոմպոզիցիան - հորինվածքը, ոչ այլ ինչ է, իր ունեցած նշանակությամբ և վերագրված նշանակությամբ, քան էության արտահայտման ձևերից մեկը և ոչ ավելին: Կոմպոզիցիա-հորինվածքը, նույնպես երևույթ է, օրենք է, բայց ոչ օրենսդիրը, բայց որպես այդպիսին հրամցվելով դարձել է շփոթությունների և մոլորությունների պատճառ... Որն՝ է ամենամեծ նկարը, անշուշտ այն, որի վրա բաժանված սպիտակը նորից ամբողջացել է կամ հասցված է ամբողջության:

Հայ կերպարվեստը, լայն առումով գեղանկարչությունը, ունենալով դարերի ու հազարամյակների պատմություն, վերընձյուղվել է ոչ միայն հայրենի հողի վրա, ճակատագրի բերումով նաև՝ օտար երկրներում, օտար ավերում:

Ձևի և բովանդակության առումով, ընդգրկման բազմազանությամբ հայկական, հայեցի դպրոցն ունենալով հանդերձ, որոշ ժամանակներում նկատվել են օտարամուտ տարրեր՝ եվրոպականացման հախուռն ձգտումով:

Այդպես էլ հայ գեղանկարչական լեզուն մասնավորապես մշակվում էր եվրոպական դպրոցներում: Դրա հետ մեկտեղ, ինչ խոսք, հայ արվեստագետի առաջ ինքնաբերաբար ծառանում էր մի խնդիր, թե ինչպես և ինչ չափով պիտի կարողանա իր ստեղծագործական լեզվին հաղորդել ազգային նկարագիր՝ համապատասխանեցնելով ազգային պատկանելիության ներքին բնածին պահանջին, ստեղծել համարժեք եզրույթներ, որ կարողանա ճիշտ արտացոլել սեփական մտածելակերպը մշակութային յուրահատուկ նշութավորումներով: Սակայն նույն նախանձախնդրությունը չունեցավ լեզվական իր դրսևորումը, և մեր լեզուն մուտք գործեցին բազմաթիվ օտար ու խորթ բառ-անվանումներ և բառակապակցություններ (մոլբերտ, պոլիտրա, պեյզաժ, նատյուրմորտ, կոմպոզիցիա, պորտրետ և այլն):

Կենդանի խոսքը ժամանակի ընթացքում և ժամանակի մեջ կրել ու կրում է օտար ազդեցություններ՝ փոխառյալ բառերի տեսքով: Գրական հայերենում կերպարվեստին վերաբերող բառաշերտի ամրակայման ուղղությամբ կատարվել են զգալի տեղաշարժեր՝ բնիկ հայերենով, բառապատճենումով և թարգմանաբար ստեղծել բառ-անվանումներ, կերպարվեստին բնորոշ եզրույթներ:

Սակայն այստեղ ևս դեռ կան բազմաթիվ վիճելի հարցեր, ոչ ճիշտ եզրույթներ, թերատ անվանումներ: Այսպես՝ մեկուկես տասնամյակ առաջ գործածական դարձավ կենդանագիր (կենդանագրական) բառը, որն ինչպես

հանկարծակի մտավ գործածության մեջ, այդպես էլ դուրս մղվեց, որովհետև այն սիրողական թարգմանության հայկական տրբերակ էր:

«Կենդանագիր» (живопись) բառը, որպես այդպիսին, վկայվում է հայ հին մատենագրության մեջ, ինչպես օրինակ «այս թուղթը բերեց Աբգարի սուրհանդակ Անանը և նրա հետ փրկչի (Հիսուս Քրիստոսի -Մ.Ս.) կենդանագիրը պատկերը, որ միչև այսօր գտնվում է եղեսացիների քաղաքում»<sup>3</sup>:

Կենդանագիր բառը գեղանկարչական արժեք ունի և վկայում է մշակույթի այս նուրբ ճյուղի՝ իբրև առանձին դպրոցի առկայությունը հին Հայաստանում, մանավանդ ցայսօր պահպանել է ելգրույթի իր արժեքը:

Նույն ճակատագիրն ունի պեյզաժ բառը: Դրա հայերեն միակ և հաջողված համարժեքը բնանկարն է և այդպես էլ թարգմանված է բառարաններում: Բնանկարը թերևս կարելի է հասկանալ նաև իբրև նատյուրմորտ բաղադրյալ բառը, որտեղ առկա են բնության + մեռած արմատները<sup>4</sup>:

Ինչևէ, սա այլ խնդիր է՝ այս հողվածի սահմաններից դուրս:

Հասկանալի է, որ հայերենը չի ունեցել նատյուրմորտ բառը, սակայն այս խնդրի լուսաբանմանը մեծապես կարող է օգնել Խորենացու՝ պալատական նկարիչ<sup>5</sup> վկայությունը, որ մի անգամ ևս փաստում է դեռևս 5-րդ դարում հայ գեղանկարչության որոշակի մակարդակը: Մեր փնտրտուքները նատյուրմորտի հայերեն համարժեքները հին մատենագրության մեջ հայտնաբերելու ուղղությամբ, ցավոք, որևէ արդյունք չեն տվել, թեև հայոց լեզուն տալիս է այդ հնարավորությունը, եթե ոչ պատահաբար վերականգնել, վերագտնել, այլ նոր բառ-համարժեք ստեղծելու հնարավորության միջոցը: Նատյուրմորտի նկարագրի և բաղադրամասերի վերլուծությունը մեզ բերում է այն եզրակացության, որ նկարիչը այդ դրվածքը կազմում է այնպիսի իրերով, որոնք ոչ թե մեռած բնության վավերացումներն են, այլ պատկերավորման բազմություն՝ խնձոր, սափոր, աթոռ, վրձին, ծաղիկներ: Ճիշտ կլիներկոչել՝ իրերի նկարչություն, իրանկարչություն, վերջնատեքստում, ինրև առարկայացած երևույթի՝ իրապատկեր, իսկ արարողը՝ իրանկարիչ, որը և համահունչ է բնանկարիչ, ծովանկարիչ, դիմանկարիչ նշանակություններին, և իրանկարը՝ ծովանկար, բնանկար, դիմանկար արժևորումների ցանկում:

Կոմպոզիցիա (կազմություն, հորինվածք, կառուցվածք)<sup>6</sup> հռոմեական իրավունքում նշանակել է «հաշտեցում», արենայում՝ «հակադրություն»:

«Հաշտեցում» և «հակադրություն»: Բայց արդյո՞ք կոմպոզիցիոն աշխատանքը հաշտեցում և հակադրություն է: Այո՛, ճիշտ են և՛ մեկը, և՛

մյուսը: Սովորաբար մասն է կոչվում ամբողջի անունով և շատ հազվադեպ՝ հակառակը:

Վերջապես ի՞նչ է նշանակում կոմպոզիցիա: Այս հարցում կան տարբեր բացատրություններ: Կոմպոզիցիան մեր պատկերցմամբ մի յուրահատուկ որոշություն է ներքին համակարգայնությամբ, հակադրամիասնության ներդաշնավորումով:

Կոմպոզիցիան ունի սկիզբ և չունի վախճան, կա վախճանը, որի մեջ գործում է սկիզբը, որը մարդու ոչ այնքան գիտակցական, որքան որ տրամաբանական չափանշման արդյունք է՝ որոշակի ընդգրկումով, այնուհետև դառնում է ավելի նյութական՝ ձեռք բերելով որոշակի ձևեր:

Արվեստագետն այնուամենայնիվ առաջնորդվում է որոշակի պայմանականությամբ, առանց որի չի կարելի որոշել, թե իրենից ի՞նչ է ներկայացնում կոմպոզիցիան՝ հակադրամիասնության տարատեսակը:

#### Գրականություն

1. Сарьян М. С., “Комсомольская Правда”, 1964, 5 мая.
2. Сарьян М. С., նույն տեղում
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 1981, էջ 178, տե՛ս նաև ծանոթագրությունը (Ս. Տ. Մալխասյան) էջ 159:
4. Անհաջող են նաև եղած թարգմանական տարբերակները. «Անկենդան բնություն, անկենդան բնության առարկաների խմբակներ», տե՛ս Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, էջ 550:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատարակչություն, էջ 178, ծանոթագրությունը Ս. Տ. Մալխասյանի, էջ 159:
6. Ա. Ս. Ղարիբյան Ռուս-հայերեն բառարան «Հայաստան» հրատ., 1968թ.:

Մուշեղ Սարգսյան

Կոմպոզիցիա-հորինվածք,  
գեղանկարչական լեզվի կենսունակ եզրույթներ

Մույն հոդվածի սահմաններում քննության են առնվել գեղանկարչական լեզվի դրսևորման սկզբունքներն ու ձևերը՝ շեշտելով ազգային լեզվական մտածելակերպի արժանիքները, նրանց կենսունակ եզրույթների օգտագործման մեջ:

Мушег Саргсян

Композиция-сочинение /построение/, продуктивные термины языка живописи

В статье рассматривается проблема формирования языка живописи с точки зрения менталистского, эстетического, исторического подходов. Выделяются те заимствования-термины, которые с одной стороны выступают как международные термины, с другой стороны, как национально-маркированная лексика. Подчеркивается, что перевод основных понятий живописи /мольберт, палитра, пейзаж, натюрморт, композиция, портрет и т.д./ не всегда отражает особенности национального менталитета.

Moushegh Sargsyan

Composition-composition /Construction/ productive Terms in the Language of Painting

The article deals with the problem of forming language of painting in terms of mentalist, aesthetic, historical approaches and shows that borrowings-terms on the one hand function as international terms, on the other hand, as a nationally marked vocabulary. It emphasizes that the translation of the basic concepts of painting/easel, palette, landscape, still life, composition, portrait etc/does not always reflect the peculiarities of national mentality.

ՀԱՅԿ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
սասլիքանտ, Մ.Մ. Մատենադարանի կրտսեր գիտաշխատող

«ԱՇԽԱՐՀԻԿ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՎԻՄԱԳԻՐ ՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** «միաբանել», նվիրատու,  
«Աշխարհիկ միաբանների» ինստիտուտ, «եղբայրներ», պարոնտեր:

**Ключевые слова и выражения:** “присоединиться”, дарители, институт  
“светских монахов”, “братья”, паронтер (феодалы-церковники).

**Key words and expressions:** to join the monastery community, presenting  
anything, institute of a “worldly monk”, status of a “brother”, “paronters”  
(clergymen-feudals).

«Միաբանել», «միայբանել», «միաբանեցայ», «միաբան եղա»  
արտահայտությունների շատ անգամ ենք հանդիպում վիմագիր ու  
մատենագիր (հիմնականում հիշատակարաններում) աղբյուրներում:  
Դրանք մեծ մասամբ նվիրատվական բնույթի հիշատակագրություններ են:  
Հաճախ նվիրատուները իրենց նվերների դիմաց ստանում էին պատարագ՝  
(դրամ, կայք՝ անշարժ ու շարժական գույք, ձեռագիր և այլն): Օրինակ՝  
Տաթևի վանքի սրահի երկրորդ և երրորդ մույթերը միացնող կամարի վրա  
կա 3 տողից բաղկացած հետևյալ արձանագրությունը. «ԵՍ ՏԻՐԱՑՈՒ  
ՔԱՀԱՆԱՅ ՄԻԱԲԱՆՆԵՅԱՅ **ՄԲ** ՈՒԽՏԻՍ, ՀԱԼԱԼ ԸՆԶԻՑ ԻՄՈՑ ԵՏՈՒ  
ԸՆԾԱՅՆ. ԱՌԱՋՆՈՐԴՔ ՈՒԽՏԻՍ Ի **ՄԲ** ԽԱԶԻ ՏԱԻԼՆԻՆ Գ ԺԱՍ ԵՏՈՒՆ  
ԻՆՁ ԱՄԷՆ ՏԱՐԻ...»<sup>1</sup>: Նմատիպ բազմաթիվ արձանագրություններ ու  
հիշատակարաններ կան, որտեղ նվիրատուն բանաձևված կերպով գրում է,  
որ «միաբանեցավ» ինչ-որ վանքի և ստացավ պատարագ<sup>2</sup>: Սակայն կան նաև

\* Պատարագի ժամանակ կատարվում էր (նաև՝ ներկայումս) մեղքերի թողության  
կամ ապաշխարության կարգը, որը նվիրատուներին ապահովում էր մեղքերից  
ազատում, հետևաբար՝ անդրշիրիմյան կյանքում դրախտային վայելքներին հասու  
լինելու հնարավորություն:

<sup>1</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ II, կազմեց Մ. Գ. Բարխուդարյան, Եր., 1960, էջ  
20, արձ. N 26:

\*\* Այս ուսումնասիրության ընթացքում մենք չհանդիպեցինք որևէ հիշատակության,  
որտեղ լիներ «միաբանեցայ» արտահայտությունը ու նվիրատուն չստանար  
պատարագ:

այնպիսի նվիրատվական վկայագրեր, որտեղ վանքին տրվում է ինչ-որ ընծա, ու նվիրատուն ստանում է պատարագ, բայց «միաբանել» կամ «միաբանեցայ» արտահայտությունը չկա, ինչպես օրինակ՝ Անիի Մայր տաճարի մի վիմագրում, որտեղ նվիրատուն (անունը եղծված է) իր այգին նվիրում է Սուրբ Կաթողիկեին, ու սպասավորներից ստանում պատարագ Վարդավառի տոնին<sup>2</sup>: Կամ Մատենադարանի 218 թվահամարի ձեռագիր Ավետարանի հիշատակարանում (ձեռագրում՝ էջ 78բ). «Ստեփաննոս արգելական եւ երջանիկ ճգնաւոր Քրիստոսի ստացաւ զսուրբ Աւետարանս յիւր աղքատութենէ՝ ի վայելումն կենաց եւ ի յիշատակ հոգւոյ եւ ծնողաց իւրոց, եւ յետ մահունն իւրոյ յով անկանի՝ իւր պատարագ առնէ Կ (60) ար: Ստացողի սորայ եւ կազմողի ողորմեցի Տէր Յիսուս Քրիստոս»<sup>3</sup>: Բնականաբար հարց է առաջանում, թե ինչ կարող են նշանակել «միաբանել», «միաբանեցայ», «միաբան եղա» արտահայտությունները:

«Միաբանել» բառը «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում բացատրվում է հետևյալ կերպ. «Միաբանիմ. եցայ.եա՛ց.իլ. (չէզոք): միաբան լինել. միաձայնիլ. ձայնակից լինել. հաղորդ և հաւան գտանիլ. միանալ. յարմարիլ, միաբան և եղբայր գրիլ վանաց, տալով ինչ հոգեբաժին»<sup>4</sup>: Հետաքրքրական է հատկապես «միաբան և եղբայր գրիլ վանաց, տալով ինչ հոգեբաժին» բառակապակցությունը: Մինչ այժմ հայտնի է, որ հայ առաքելական եկեղեցին իր պատմության ընթացքում պաշտոնապես չի ունեցել աշխարհիկ միաբանների ինստիտուտը: Այն ավելի շատ բնորոշ էր կաթողիկե եկեղեցուն, երբ աշխարհիկ անձը որևէ վանքի միաբան չլինելով, հոգևորական էր՝ վանքից ցանկացած պահի հեռանալու իրավունքով: Արդյո՞ք հայ առաքելական եկեղեցուն ևս բնորոշ էր դա: Այդ խնդիրը լուծելու համար հարկ է մեկ առ մեկ քննել մեզ հասած՝ խնդրին առնչվող արժեքավոր հիշատակագրությունները: Ինչպես «Բառգիրք Հայկազեան լեզուի»-ի, այնպես էլ Ստ. Մալխասյանցի բառարանում, իր 3-րդ իմաստով «միաբանել» նշանակում է «3.(Կրօն.) Վանքի միաբան դառնալ: Նա մեր վանքին միաբանեցաւ և բոլոր ունեցածը վանքին նուիրեց»<sup>5</sup>: Նույնիմաստ է

<sup>2</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 39, արձ. N 108:

<sup>3</sup> «Մայր Յուզակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի՝ Ա հատոր, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 1984, էջ 979-980:

<sup>4</sup> «Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. երկրորդ, 1846, ի Կոստանդնուպոլիս, էջ 259:

<sup>5</sup> «Հայերէն Բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հատ. երրորդ, Եր., 1944, էջ 320:

նան Նորայր Բիւզանդացու բացատրությունը. «Միաբանիմ, բ.չ., ոմկ. ոճով՝ միաբան եւ եղբայր գրիլ վանաց, տալով ինչ հոգեբաժին»<sup>6</sup>:

Ինչպես նշեցինք հռոմեակաթողիկ եկեղեցին ունեցել է աշխարհիկ միաբաններ ունենալու սովորույթը: Այդ մասին մենք իմանում ենք Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունից: Անդրադառնալով Լևոն Գ թագավորի որդի՝ ապագա Հեթում Բ թագավորի մասին՝ նա գրում է. «Հեթում թագաժառանգ արքայորդին կանուխէն ինքզինքը բարեպաշտական կենցաղի նուիրած էր, առաջնորդութեամբ Լատին կրօնաւորաց, որոնք հաստատուած ու տարածուած էին Կիլիկիոյ մեջ...»<sup>7</sup>:

Սակայն մենք գիտենք, որ կաթողիկների մոտ վանական միաբանության անդամները իրավունք չունեն վանքի տարածքից իրենց հայեցողությամբ դուրս գալու: Բայց Հեթում Բ-ի պարագայում, բնականաբար, այդ կանոնը խախտվում էր, քանի որ նա իրականացնում էր արքայի պարտականությունները, և իհարկե դա չէր կարող անել վանքի պարիսպներից ներս գտնվելով: Ուստի կրկին դիմում ենք Մաղաքիա Օրմանյանի փաստարկմանը, որն ավելի հավանական ու արժանահավատ է. «Կամ ինքն (*Հեթում Բ-ն – Հ.Հ.*) Երրորդական կոչուած դասակարգին կը պատկանէր, որով վանական կենցաղէ ու սքեմէ ազատ էր, եւ կամ միաբանութեան վարչութիւնն ու պապութիւնը իրեն համար բացառութիւն ըրած էին, որպէսզի անոր ձեռքով աւելի դիւրալ կարենան հայերու մէջ սողոսկիլ, եւ զանոնք հռոմէադաւանութեան եւ լատինականութեան վաստկիլ»<sup>8</sup>: «Երրորդական» կոչված դասակարգը, որի մասին հիշատակում է հեղինակը, ըստ էության միաբանի այն տարատեսակն էր, որը և՛ միաբան էր, այսինքն եղբայր էր տվյալ վանքի վանականներին, և՛ վանքից դուրս ապրելու իրավունք ուներ: Կարելի է ենթադրել, որ այդ մարդիկ սովորաբար բարձր խավի ներկայացուցիչներ էին, և հավանական է նաև՝ որ բարերարներ: Սակայն կաթողիկ եկեղեցու «երրորդական» դասակարգի ներկայացուցիչներից Հեթում Բ-ն ամուսնացած չէր, ու կուսակրոն էր, իսկ հայ առաքելականների շրջանում, բնականաբար, ամեն ինչ չէ, որ նման էր կաթողիկներիին, քանի որ նվիրատու-միաբանյալների թվում բազմաթիվ էին ամուսնացածները: Այսպես, Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփաննոս

<sup>6</sup> Նորայր Ն. Բիւզանդացի, Բաղգիրք ստորին հայերէնի ի մատենարութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնեւ, 2000, էջ 509:

<sup>7</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, Ս. Էջմիածին, Եր., 2001, էջ 1996:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 1997:

Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկի մեջ կա քննարկվող խնդրին առնչվող շատ կարևոր մի տեղեկություն, որտեղ խոսվում է Կիլիկիայի թագավոր Լևոն Գ-ի՝ Տաթևի վանքին միաբանելու մասին, այնինչ կասկածից վեր է, որ հայոց թագավորը ամուսանացած է եղել կինը Կեռան թագուհին, կամ kirie, հունարեն՝ տիկին, տիրուհի Աննան էր: Մյունյաց պատմիչը գրում է. «Եւ նորա (Լևոն Գ-ի – ՀՀ) ի վաղ ժամանակաց ցանկացող եղեալ միաբանութեան սուրբ և գերափառ ուխտին Տաթևոյ...»<sup>9</sup>: Ապա մեջբերում է հայոց արքայի խոսքը, որում Լևոն Գ-ն ասում է. «Եւ խոստովանող ուղիղ հաւատոյ համագոյ սուրբ Երրորդութեան, Յայս Աստուածընկալ սուրբ ուխտ խնդրեցի լինել միաբան...»<sup>10</sup>: Միաբանելով հայոց թագավորը բնականաբար մեծարժեք նվերներ է անում վանքին, որի դիմաց Տաթևի միաբանները պարտավորվում են. «Յաղագս այսր յուսոյ և սիրոյ աստուածագոր թագաւորին եղբայրութեամբս կարգեցաք զօր սրբոյ Զատկի Յարութեան միաշաբթուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան»<sup>11</sup>: Իհարկէ, այդ ամենը միայն Տաթևի վանականների հետ եղբայրանալու կամ միաբանելու նպատակ չուներ, և ինչպես նկատել է Մաղաքիա Օրմանյանը, «Լեւոն Եգիպտացոց հետ խաղաղութիւնը հաստատելէն ետքը, սկսաւ իր մտադրութիւնը դարձնել Հայաստանի կողմը, եւ այնտեղի հետ յարաբերութեանց առիթներ ստեղծել, հարկաւ միեւնոյն դիտումներով, զորս իր մեծ հայրն Լեւոն Բ ալ ունեցած էր, Կիլիկեան թագաւորութիւնը Հայաստանի վրայ ալ տարածել: Այդ ընծայաբերութեան բոլոր պարագաները՝ բնիկ Հայոց թագաւորի մը յիշատակը կը նորոգեն Տաթևի մէջ, եւ այս մեզ կը յորդորէ Լեւոնի գործին մէջ բարեպաշտութեան հետ, քաղաքական հեռաւոր տեսակէտ մըն ալ նկատել»<sup>12</sup>: Մատենագրական սկզբնաղբյուրներից մեկը, որը նույապես առնչվում է մեր խնդրին, Յովհաննէս Պլուզ-Երզնկացու «Յաղագս միաբանութեան խրատք...»-ի բնագրում «առկայ առանձին արտայայտութիւններ են, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել այդ եղբայրութեան, ինչպես եւ եղբայրութեան մէջ

<sup>9</sup> «Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց», Թիֆլիս, 1912, էջ 434:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 435:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 436:

<sup>12</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, էջ 1974: Լևոն Գ-ի վանքին հեռակա միաբանվելու խնդրին անդրադարձել է նաև Ա. Մանուչարյանը (տե՛ս Ա. Մանուչարյան, Վանքին հեռակա միաբանելու սովորույթ միջնադարյան Հայաստանում, էջ 84-91) Տարեգիրք, Եր., 2012:

մտնող տարբեր տարիքի ու տարասեռ մարդկանց գործունեության մասին: Բնագրից պարզ է դառնում, որ եղբայրության անդամներ են եղել երկսեռ երիտասարդներ, ծերեր ու մանուկներ: Հետևաբար, կասկածից վեր է, որ եղբայրության անդամներ եղել են ոչ միայն հոգեւոր, այլև աշխարհիկ անձեր ...»<sup>13</sup>: Այս փաստը հաստատում են նաև հիշատակարանները. մասնավորապես Ավագ և Հառիճա վանքերում արտագրված հետևյալ ձեռագրերինը. «... նաեւ որք համաւրէն միաբանեալ են սբոյ ուխտիս (իմա՛ Աւագ վանք -ՀՀ) ճգնաւորք եւ միանձունք, ծերք եւ երիտասարդք՝ հանդերձ դասու քահանայից»<sup>14</sup>, և «Հառիճ.Եւ գրեցաւ ի ՈԿԸ. (1219 թ.) թ[ուիս] Հայոց, ...[Ար]դ, աղ[ա]չեմ զամենեսեան յիշեցջիք ի սուրբ յաղաթս ձեր ... և զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս և զկրան[աւ]որսս, և զծ[երսս] և զերիտասարդսս [յիշե]ցեք յաղաթս ձեր: ...»<sup>15</sup>: Ինչպես երևում է վերոնշյալ առաջին հիշատակարանից վանքին միաբանվում են «ճգնաւորք եւ միանձունք, ծերք եւ երիտասարդք՝ հանդերձ դասու քահանայից», որից հստակ երևում է, որ միաբանների թվում են նաև աշխարհիկ անձինք, իսկ երկրորդ հիշատակարանում աղաչում են հավատացյալներին իրենց աղոթքում հիշել վանքի միաբաններին՝ «զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս և զկրան[աւ]որսս, և զծ[երսս] և զերիտասարդսս»: Այս հիշատակարանում նույնպես որպես միաբան եղբայրներ նշվում են լիովին աշխարհիկ մարդիկ: Հետաքրքրական է նաև այս հիշատակությունը. «Նազ՝ ծառայ Աստուծոյ, դուստր Մխիթարա և Շնֆոր տիկնա, գրեաց զինքն միաբան Սուրբ Նշանին, որ յամենայն տարի զայ առաջի Սուրբ Նշանին և բերէ զիւր ընծայն ոչխար ...: Ի թվ. ՉԽԴ. (1295 թ.)»<sup>16</sup>: Այս արձանագրությունից կարելի է ենթադրել, որ վանքին ընծա տալուց առաջ պետք էր միաբան գրվել, որպեսզի տեղի հոգևորականությունը թույլ տար դառնալու վանքի նվիրատուն: Հավանաբար, Թորոս խապազը նույնպես միաբանելուց հետո էր թույլտվություն ստացել դառնալու վանքի նվիրատուն. «... Թորոս խապազն, որ եղև միաբան Սուրբ Աստուածամարն:

<sup>13</sup> Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաք «Եղբարց միաբանության» կանոնադրությունը (1280), «Բանբեր Մատենադարանի» N 5, 1962, էջ 365-377; տե՛ս նաև Էդուարդ Բաղդասարեան, Յովհաննէս Պլուզ-Երզնկացու «Յաղագս միաբանության եղբարց խրատական թուղթը, էջ 456, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Զ, Եր., 1996:

<sup>14</sup> «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար», կազմեց Ա. Խ. Մաթևոսյանը, Եր., 1984, էջ 13:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 771:

Յամեն տարի Ո (600) մ[ոթ]\* հաց վանիցն պտղի ե»<sup>17</sup>: Կան բազմաթիվ վիմագրեր, որտեղ նվիրատուները իրենց ուղղակի անվանում են միաբաններ, ինչպես օրինակ՝ 1291 թ. գրված հետևյալ արձանագրությունը. «... ԵՍ ԽՈՒՇԻԹ, ..., ՄԻԱՅԲԱՆ ՈՒԽՏԻ ՍՈՒՐԲ ՄԱ | ՄԱՍԱՅ, ԵՏՈՒ ԶԻՍ | ՀԱՅՐԵՆԻՔՍ ... ՄԲՆԱՀԱՍԱԿԻՍ ...»<sup>18</sup>: Սակայն «միայբան» բառը այս արձանագրության մեջ միանշանակ հասկանալ չի կարելի: Նախ՝ Խուշիթ անձնանունը եկեղեցական չէ, հետևաբար Խուշիթը եկեղեցական լինել չի կարող: Խուշիթի անձի ու կարագավիճակի հարցում մեկ այլ վիմագիր ճշգրտումներ է կատարում: Պարզ է դառնում, որ Խուշիթը գոնե այդ թվականին եղել է աշխարհիկ, քանի որ Խուշիթի մասին մեզ տեղեկատվություն տվող մեկ այլ արձանագրության մեջ խոսվում է նրա կնոջ՝ Քիմախաթունի մասին (երկու արձանագրություններն էլ 1291 թվականի են). «ԵՍ ԽՈՒՇԻԹ ՈՒՐԱՆՇԱՀԻՆ ՈՐԴԻ, Ա | ՊՆԻՆ, ԿԱՆԿՆԵՅԻ Զ | ԽԱՉՍ ԶԱՅՍ | ԻՆՁ ԵՒ ԵՂԲԱՐԻ | ԻՍՈՅ ԴԱԻԹ ՔԱՀԱՆԱԻ ԵՎ | ԱՄՈՒՄԼՆՈ ԻՍՈ ՔԻՄԱԽԱԹՈՒՆԻՆ...»<sup>19</sup>: Ամենայն հավանականությամբ Խուշիթը եղել է.

- ա. աշխարհիկ, ապա իրեն նվիրել կրոնավորելուն կամ վանական կյանքին:
- բ. Խուշիթը եղել է աշխարհիկ, և որպեսզի իրեն թույլ տան դառնալ նվիրատու, նա ձևականորեն անդամագրվել է կամ միաբանվել է եկեղեցուն:
- գ. «միաբանել»-ը այստեղ գուտ նվիրատու լինելու նշանակություն ունի:
- դ. չի բացառվում, որ Խուշիթը եղել է շուշտակ՝ հոգևորական:

Որ վարկածն էլ լինի հավանական, միանշանակ է, որ «միաբանել» արտահայտությունը իր ենթատեքստում ունի նվիրատվական բնույթ: Այս առումով հետաքրքրական է նաև Դաշքենդ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հետևյալ վիմագիրը.

«... ՄԵՔ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔԻՍ ՈՀԱՆ ՈՒ ՍԱՐԳԻՍ, ՈՀԱՆԵՍ, ՍԱԻԱԼԱՆ, ԱԼԱՔԻՄԻՈՍԵՐ :Բ: ԱՄՈՒՍԻՆՔ ՄԵՐ ՄԱՄՏԻԿԻՆ, ՇԱՀՆԱՐԽԱԹՈՒՆ,

\* ՄՈԹ, 2 Մեծ և խոր փայտե պնակ; «Հայերեն Բացատրական Բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հատ. երրորդ, էջ 352:

<sup>17</sup> «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար», էջ 109:

<sup>18</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1967, էջ 172, N 526:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 172, № 527:

\*\* Շուշտակ հոգևորական են անվանում այն հոգևորականներին, որոնք մինչ հոգևոր ասպարեզ մտնելը եղել են ամուսնացած, վարել են աշխարհիկ կյանք և կողակցի մահից հետո միայն իրենց անձը նվիրել կրոնավորելուն:

ՄԱՍԽԱԹՈՒԽՆ, ԽԱՅՐ ՇԻՆԵՑԱՔ ԶԿԱԼԹՈՂԻԿԷՍ Ի | ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՄԵՐ»<sup>20</sup>:

Այստեղ նշվում են միաբան եղբայրները, որոնք ինչպես պարզվում է արձանագրությունից, ունեն կին: Այս համատեքստում տվյալ արձանագրության վերաբերյալ նույնպես կարելի առաջ քաշել վերը քննված արձանագրության վերաբերվող վարկածները<sup>21</sup>:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ «միաբանել» բառով նվիրագրերը հատկապես սկսում են շատանալ 13-15-րդ դարերում<sup>22</sup>: Ինչպես հայտնի է, այդ շրջանում լայնորեն սկսում է տարածում գտնել «պարոնտերության» երևույթը: Պատճառը հայ առևտրականների ու ազնվականների՝ եկեղեցու հովանավորությամբ օտար զավթիչներից իրենց ունեցվածքը փրկելու ցանկությունն էր: Հայ պետականության անկումից հետո, եկեղեցին հոգևոր գործառույթից բացի, իր վրա էր վերցրել նաև հայ ժողովրդի ներքին գործերը տնօրինելու պարտականությունը: Հաշվի առնելով այն, որ եկեղեցու պաշտոնյաներն ու նրանց կալվածքներն ազատված էին մի շարք հարկերից ու տուրքերից, հայ իշխանական տների ներկայացուցիչները վանքերի իրավասության տակ էին դնում իրենց անձնական կալվածքները՝ դրանց վրա կարգելով մերձավորների: Վերջիններս կրում էին «պարոնտեր» կոչումը, այսինքն՝ ն՛ պարոն էին (աշխարհիկ իշխան), ն՛ տեր (հոգևոր առաջնորդ)<sup>23</sup>: Հատկապես XIV-XV դդ. «պարոնտիրական» բազմաթիվ

<sup>20</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ V, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1973, N 1294, էջ 315: Այս արձանագրության թվագրման հարցում կա թյուրիմացություն: Հրատարակիչը գրում է, որ վիմագիրը արձանագրվել է 1287 թ. առաջ, ապա նշում է, որ արձանագրության մեջ հիշատակվող կաթողիկոսը 1293-1307 թթ. կառավարած Գրիգոր Անավարզեցին է: Հետևաբար արձանագրությունը պետք է գրված լինի կաթողիկոսի կառավարման տարիներին և ոչ 1287 թ.-ից առաջ:

<sup>21</sup> Այս բնույթի արձանագրություններ, որոնց մեջ հիշատակվող մարդիկ «միաբանել» են ինչ-որ վանքի, շատ են ու որևէ էական մանրամասն, որը կարող է հավելյալ ճշգրտում մտցնել քննվող հարցում, չունեն: Որպես այդպիսի նվիրագրերի օրինակ կարելի է համարել արձ. N 96 («Դիվան Հայ վիմագրության» պրակ V), կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հո. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 50), արձ. N 99 (նույն տեղում, էջ 51), արձ. N 130 (նույն տեղում, էջ 66), արձ. N 186 (նույն տեղում, էջ 89), արձ. N 249 (նույն տեղում, էջ 122):

<sup>22</sup> Է. Բաղդասարյան, Ակնարկ Հայոց եկեղեցու և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների, «Հայոց եկեղեցի և պետություն միջազգային գիտաժողովի նյութեր», Եր., 2000, էջ 100:

<sup>23</sup> Տե՛ս Շահե քահանա Հայրապետյան, 1441 թվականին կաթողիկոսական աթոռի փոխադրումը Վաղարշապատ, որպես Հայոց պետականության վերահաստատման

համակարգեր են ստեղծվում Սյունիքում, Երզնկայում, Վասպուրականում, Արցախում և այլուր: Ըստ պրոֆեսոր Է. Բաղդասարյանի՝ հայ եկեղեցու և Կիլիկյան հայկական թագավորության վերաբերմամբը «պարոնտիրության» նկատմամբ ընկալվում է իբրև «յուրօրինակ դաշինք հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև և միջոց է՝ ստեղծված պայմաններում ինչ-որ չափով պահպանելու հայ ավատատիրության իրավունքները»<sup>24</sup>: Աշխարհիկ ավատատերերը, չկարողանալով պահպանել իրենց տիրույթները, «... ընդունում էին հոգևոր աստիճան և տիրույթներն էլ ձևականորեն եկեղեցուն նվիրում: Մինչդեռ իրականում այդ տիրույթների հետ վարվում էին նախկին ավատատիրական իրավունքով»<sup>25</sup>: Ամենայն հավանականությամբ այդ է պատճառը, որ «միաբանել» բառով արձանագրությունները հատկապես շատ են Սյունիքում, Արցախում, Լոռիում, Տավուշում, որտեղ պահպանվել էին վերոնշյալ դարերում իշխանական-մելիքական տոհմերն իրենց իշխանություններով: Կարող է, իհարկե, հարց առաջանալ: Արդյո՞ք մեծ թիվ կազմող «միաբանեալ» կանայք նույնպես եղել են պարոնտերեր կամ իշխանական կարգավիճակ ունեցել: Այս դիտարկմանը ի պատասխան կարելի է բերել հետևյալ նվիրագիրը. «[ԱՆՈՒԱՄԲ ԲԱՐԵՐԱԲԻՆ ԴԱՆՏՐՈՆ ԽՄԹՈՒԽՆ՝ ՀԱՐՄՆ ԳԱՐԲԱՆԵՑԵԱՑ, ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ ՎԱՉԷ ԵՒ ԾԻԹԼԱԽՍԱՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ՆՈՒԻՐԵՑԻՆ ԸՆԾԱՅՍ ՄԲ ՆՇԱՆԻՍ...»<sup>26</sup>: Այստեղ հստակ երևում է, որ Խոշաքը կին է, նրան դիմել են պարոն տիրոջ սով, որով սովորաբար դիմում էին արական սեռի իշխանագույններին, և կնոջ՝ որպես իշխան հանդես գալու երևույթը այնքան էլ սակավադեպ չէր տվյալ դարաշրջանում: Մասնավորապես կարելի է հիշատակել աթաբեկ Իվանե Զաքարյանի տղա Ավագ Զաքարյանի դուստր՝ «պարոն» տիրոջսը կրող Խոշաքին<sup>27</sup>: Որպես վերը նշված տեսակետի հիմնավորում կարելի է բերել նաև Հոռեկա վանքի 13-րդ դարի երկրորդ կեսի հետևյալ արձանագրությունները.

պատմական նախապայման, «Հայոց եկեղեցի և պետություն միջազգային գիտաժողովի նյութեր», Եր., 2000, էջ 130-131:

<sup>24</sup> Բաղդասարյան Է., Ակնարկ Հայոց եկեղեցու և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների, էջ 102-103:

<sup>25</sup> Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Ս. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 25:

<sup>26</sup> «Դիվան Հայ վիմագրության» պրակ IX, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Եր., 2012, էջ 200, N 379:

<sup>27</sup> «Ձագավանքի ժողովը և իր կանոնքը», առաջաբանը և թարգմանությունը Ս. Մխիթարյանի, էջ 103, Հայ Աստվածաբան, Եր., 2013:

«ՁՄԻԱԲԱՆ ԵԿԵՂԵՅՈՅՍ ՉՍԱՐԳԻՍ ԶԻՇԽԱՆ ԼՆՄՅԵԼԱ ՈՐԴԻՆ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՄ. ԵՒ ՉԱՄՈՒՄԻՆ ԵՒ ՉՈՐԴԻՍՆ ԻԻՐ»<sup>28</sup>:

Հետաքրքիր վիճակ է նաև Գուշա վանքի արձանագրություններից մեկը, որի թվագրումը կարելի է կատարել Վրթանես վանահոր կառավարման 1240-50-ական թթ. տարիներով.

«Ես Ջերգամ և որդի իմ Ղարաք միաբանեցաք սուրբ ուխտիս.տեր Վրդանես իւր կամաւ զժամատունն ինձ երեստ և ես իմ հալալ արդիւնն ընձա բերի սուրբ աթոռոյս ...»<sup>29</sup>:

Արձանագրությունից պարզվում է, որ Ջերգամն իր որդի Ղարաքի հետ դարձել է միաբան-նվիրատու, ուստի Վրթանես վանահայրը նրան է տվել ժամատունը: «Զժամատունն ինձ երեստ» արտահայտությունը շատ հետաքրքրական է: Այն, ըստ մեզ, կարող է ունենալ հետևյալ բացատրությունը. նվիրատուն փաստորեն ստացել է եկեղեցու ժամատուն-գավթում թաղվելու իրավունք, որին, ինչպես գիտենք, արժանանում են միայն հոգևորականները, վանքին հովանավորող իշխանները, իշխան-պարոնտետերն ու երբեմնի հարուստ առևտրականները: Ինչպես արդեն նշել ենք, արձանագրությունը գրված է 1240-50-ական թթ., երբ արդեն տեղի էր ունեցել մոնղոլ-թաթարների արշավանքը, Չաքարյաններն ու իրենց վասալները բավականին թուլացել էին, որը, բնականաբար, պետք է հանգեցներ «պարոնտերության» երևույթի տարածմանը և եկեղեցական ու պետական պաշտոնեության սերտաճմանը: «Պարոնտերության» երևույթի ու «միաբանել» արտահայտության միջև առկա հնարավոր կապն է մատնացույց անում նաև Հաղարծինի վանքի 13-րդ դարավերջի հետևյալ վիճակագիրը.

«ՊԱՐՈՆՆ ՀԱՍԱՆ .... Ո ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻ ՄԵԾԱԻ ԱՐԴԵԱՍԲ .... ՄԻԱԲԱՆԵՑՄԻ ... ՈՐՊԷՍ ԵՒ ՆԱԽՆԻՔ ԻԻՐ ...»<sup>30</sup>:

Իհարկե, պարտադիր պայման չէ այն հանգամանքը, որ «միաբանել» բառն օգտագործողը պետք է անպայման լինի պարոնտեր, քանի որ շատ դեպքերում այն զուտ նվիրատու իմաստն է պարունակել, որ միաբանվողները երբեմն եղել են միայն նվիրատուներ, հիմավորվում է Գոշավանքի կամ Նոր Գետիկի վանքի հետևյալ վիճակագրից. «... ԵՍ ԳՈՀԱՐՄՈՒԹՈՒՆՍ ԸՆԴ ԱՌԱՋԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՆԵՐԻ ԵՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԵՒ

<sup>28</sup> «Դիվան Հայ վիճակագրության», պրակ V, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1982, էջ 103, N 324:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 183:

<sup>30</sup> «Դիվան Հայ վիճակագրության», պրակ V, էջ 50, N 97:

ՇԻՆԱԿԱՆ ՄԻ ԱԶՍՏ ...»<sup>31</sup>: Այստեղ շատ հստակ երևում է, որ Գոհարխաթունը նկատի ուներ իր առաջին նվիրատվությունը՝ ասելով. «ԵՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԵՒ ՇԻՆԱԿԱՆ ՄԻ ԱԶՍՏ»: Այդ տեսակետը հավելյալ հիմնավորում է նաև մյուս արձանագրությունը. «ՅԻՇԵԱԼ ԼԻՑԻՆ Ի ՏՐ ԱՌԻԱԶԻՆ ՄԻԱԲԱՆՔՆ ՄԵՐ՝ ԱԼՓԱՍԼԱՆ ԵՒ ԳՈՀԱՐ ԽԱԹՈՒՆՆ...»<sup>32</sup>: Այստեղ խոսվում է արձանագրության մեջ հիշատակված անձանց առաջին անգամ արված նվիրատվության մասին: Բայց հավանական է, հաշվի առնելով բազմաթիվ նվիրատվական արձանագրությունները, որոնք «միաբանել» բառը չունեն, որ միաբանվել կարող էին հիմնականում ազդեցիկ մարդիկ՝ իրենց ընտանիքի անդամներով (մայր, կին, եղբայր և այլն), նվիրատվությունը ստացող վանքի հովանավորները, որոնք հաճախ այդ վանքի պարոնտերերն էին: Այս առումով հետաքրքրական է նաև նույն Գոշավանքում Թաղարտերի թողած վկայագիրը, որում նա միաբանվում է իր տոհմի կողմից գնված՝ գանձագին հայրենի եկեղեցուն. «ԵՄ՝ ԹԱՂԱՐՏԷՐՍ, ՈՐԴԻ ՃԱՐԻՆ, ԹՈՌԻՆ ՊԱՐՈՆ ՈՒՄԵԿԻՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՄԲ ՈՒԽՏԻՆ ԳԵՏԿԱՅ՝ ՄԵՐ ԳԱՆԶԱՅԳԻՆ ՀԱՅՐԵՆԼԻ ԵԿԵՂԵՑՈՅՍ ...»<sup>33</sup>:

Մեր կողմից արծարծվող խնդրի շրջանակներում բավականին հետաքրքիր են նաև Գոշավանքի N 198 և N 208 արձանագրությունները, որոնցից առաջինում հիշատակվում է Հարբ՝ միաբանը, որը դարձել է նվիրատու ու ստացել պատարագ. «ԵՄ՝ ՀԱՐԲ ՄԻԱԲԱՆ ՄԲ ԱԾԱԾՆԻՍ ԷՏՈՒ ...»<sup>34</sup>, իսկ երկրորդում ունի Գրիգոր, ինչպես ինքն է նշում «ՄԻԱԲԱՆ ԱՅՍՍ ԵԿԵՂԵՑՈՅՑ», այսինքն այդ եկեղեցու միաբան, նույնպես կատարել է նվիրատվություն: Ապա նա գրում է. «ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ՀԱՐԲ ՈՂՈՐՄԵՐՑԱԻ ...»<sup>35</sup>: Ամենայն հավանականությամբ երկու արձանագրություններում էլ խոսվում է նույն Հարբի մասին (զուտ ժամանակային առումով ևս մոտ են՝ հաշվի առնելով 14-րդ դարի գրատեսակը), որը առաջին արձանագրության

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 76, N 151:

<sup>32</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ VI, էջ 77, N 153:

<sup>33</sup> Նույն տեղում, N 156, էջ 78, նմանատիպ է նաև արձ. N 177, էջ 85:

\* Հարբը եկեղեցական անուն չէ: Ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է արաբերենից ու նշանակում է կարիճ, քաջ: Հր. Աճառյան, Հայոց Անձնունների բառարան, հատ. Գ, Եր., 1946, էջ 62:

<sup>34</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ VI, էջ 92, N 198:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 96, N 208:



պաշտպան, պետ»<sup>37</sup>: Իսկ բրիտանական «Oxford» բառարանում՝ հովանավոր, գործատու, դեկավար<sup>38</sup>: Կարելի է ենթադրել, որ պատրոն ասելով հասկացել են նաև պարոնտեր: Այս խնդրի լուսաբանման հարցում կարևոր է N 214 վիմագիրը, որտեղ խոսվում է պատրոն Արտավազի՝ Նոր Գետիկի այդ ժամանակվա հովանավոր-իշխանի մասին<sup>39</sup>:

Այսպիսով, վերը ասվածից կարող ենք եզրակացնել.

ա. Որոշ դեպքերում «միաբանել» եզրը զուտ նվիրատու, վանքին օգտակար լինելու իմաստը ուներ:

բ. Մի շարք սկզբնաղբյուրներից հստակ երևում է, որ տվյալ վանքի վանահայրը, ինչ-որ կերպ իրավական տեսք է տվել այդ գործընթացին՝ նվիրատուներին «եղբայր», «միաբան» գրելով, որը անուղղակիորեն հիշեցնում է «աշխարհիկ միաբանների» երևույթը կաթոլիկ եկեղեցում: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ «միաբանեցայ» բառը վիմագրերում ու հիշատակարաններում վաղագույնը հանդիպում ենք Մորո Չորո վանքի N 263 վիմագրում՝ թվագրված 1197-1213 թթ.<sup>40</sup>: Այսինքն՝ այդ ժամանակ Բագրատունյաց թագավորությունը վաղուց գոյություն չունեի, Զաքարյանները թեև վերանվաճեցին Մեծ Հայքի զգալի հատվածը, բայց երկրի մի խոշոր մասը շարունակում էր մնալ մահմեդական տիրակալների իշխանության տակ: 12-15-րդ դարերում «միաբանեցայ» եզրով նվիրագրերը շատանում են: Հարկ է ասել, որ միանշանակ չի կարելի պնդել, որ «միաբանել» բառը օգտագործում էին միայն պարոնտերերը, բայց քննված վիմագրերից ելնելով կարելի է ենթադրել, այդ եզրույթի շատանալը վկայում է «պարոնտերության» ինստիտուտի ավելի զարգացած փուլ թևակոխելու մասին, ու այս համատեքստում «միաբանվող»-ներին կարելի է համարել միջանկյալ մի փուլի ներկայացուցիչ՝ դեպի պարոնտերություն գնացող:

<sup>37</sup> Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հատ. Դ, Եր., 1977, էջ 54:

<sup>38</sup> «The Oxford Dictionary of Byzantium», Alexander P. Kazhdan, Volum 3, New York. Oxford, Oxford University Press, 1911, s. 1602:

<sup>39</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ VI, էջ 98, N 214:

<sup>40</sup> «Դիվան Հայ վիմագրության», պրակ VI, էջ 140, N 263:

\* «Միաբանեալ» նվիրատուների երևույթը նկատել է պ.գ.թ. Գ. Սարգսյանը, ում առաջարկով էլ ձեռնամուխ ենք եղել սույն հոդվածի շարադրմանը:

Ամփոփում

«Միաբանել», «միայբանել», «միաբանեցայ», «միաբան եղա» արտահայտությունների շատ անգամ ենք հանդիպում վիմագիր ու մատենագիր (հիմնականում հիշատակարաններում) աղբյուրներում: Այդ երևույթը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ուստի մենք այս հոդվածում եկանք մի շարք եզրահանգումների:

ա. Որոշ դեպքերում «միաբանել» եզրը գուտ նվիրատու, վանքին օգտակար լինելու իմաստը ուներ:

բ. Մի շարք սկզբնաղբյուրներից հստակ երևում է, որ տվյալ վանքի վանահայրը, ինչ-որ կերպ իրավական տեսք է տվել այդ գործընթացին՝ նվիրատուներին «եղբայր», «միաբան» գրելով, որը անուղղակիորեն հիշեցնում է «աշխարհիկ միաբանների» երևույթը կաթոլիկ եկեղեցում: 12-15-րդ դարերում «միաբանեցայ» եզրով նվիրագրերը շատանում են: Հարկ է ասել, որ միանշանակ չի կարելի պնդել, որ «միաբանել» բառը օգտագործում էին միայն պարոնտերերը, բայց քննված վիմագրերից ելնելով կարելի է ենթադրել, այդ եզրույթի շատանալը վկայում է «պարոնտերության» ինստիտուտի ավելի զարգացած փուլ թևակոխելու մասին, ու այս համատեքստում «միաբանվող»-ներին կարելի է համարել միջանկյալ մի փուլի ներկայացուցիչ՝ դեպի պարոնտերություն գնացող:

Айк Акоюн

Резюме

Мы много раз встречаем такие выражения, как “присоединиться”, “стать членом братии” в эпиграфических и библиографических источниках. Это явление представляет большой интерес, в связи с чем мы пришли к нескольким выводам в этой статье:

а. В некоторых случаях данные выражения имели смысл “присоединения”, и были связаны с дарением, будущностью полезным монастырю.

в. В ряде источников четко видно, что очевидно, предстоятель монастыря неким образом давал правовой вид происходящему, записывая дарителей в “братья”, в “монахи”. Эти факты отдаленно напоминают институт “светских монахов” в католической церкви. в 12-15 веках количество дарственных надписей с термином “Стать членом братии” увеличивается. Надо сказать, что этот термин употребляли не только “паронтеры” (феодалы-церковники), но эпиграфический материал дает нам основание утверждать, что “паронтерство” в эту эпоху вступило в более развитый период, связи с чем

можно сказать, что институт этих "братьев" есть некая переходная стадия к приобретению "паронтерства".

**Hayk Hakobyan**

### **Summary**

Expressions like “*miabanel*” (“to join the monastery community”), “*miabanecay*”, “*miaban egha*” (“I joined” or “I became a member of monastery community”) often occur in epigraphic texts and manuscripts. This phenomenon is of great interest, and this article is an attempt to achieve some conclusions concerning this item:

- a. in some cases the notion of “*miabanel*” expresses meaning of presenting anything to a monastery, to be useful for it,
- b. it is obvious from some sources that probably the head-priest of the monastery in some way gave a legitimate status to the process of presenting, while presenters acquired the status of a “brother” or of a monk (“*miaban*”), which slightly reminds the institute of a “worldly monk” of the Catholic church:

In 12-15<sup>th</sup> centuries gift-inscriptions containing the term “*miabanecay*” become even more frequent. It is important to note that the word is not used exclusively by “*paronters*” (clergymen-feudals) but by ordinary people as well. Nevertheless, the examined sources witness that the institute of “*paronters*” in that period underwent evolution to a more complicated level and in this sense “*miaban*” may be considered as a representative of a medium stage leading to the status of a feudal.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ, ԹՎԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ  
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** ածականական բառակապակցություն, թվականական բառակապակցություն, մակբայական բառակապակցություն, արդի մեթոդ, ստորադաս անդամ, T- աձև աղյուսակ, դեբատ, խմբային աշխատանք, բանավեճ, պրիզմա:

**Ключевые слово и выражения:** адективные(прилагательные) словосочетание,наречные словосочетание, числительные словосочетание, современный метод, второстепенные члены, T- образная таблица,дебат, групповая работа, дискуссия, призма.

**Key words and expressions:** adjectivized combination, numeral combination, adverbial combination, modern method, subordinate member, T- shapetable, debate, team-work, discussion, prism.

*Ածականական բառակապակցությունների ուսուցումը*

Թեմայի ուսուցման գործընթացը կիրականացնենք քայլաշարային եղանակով՝ զուգակցված մեթոդամանկավարժական մի շարք սկզբունքներով: Թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը նպատակային է իրականացնել զրույցի, բացատրության մեթոդներով, իսկ թեմայի ամփոփման փուլում՝ արդի մեթոդների ու մեթոդական հնարների օգտագործմամբ (դեբատ, խմբային աշխատանք):

Քայլ 1. Նախորդ դասաժամից սովորողներն արդեն գիտեն բառակապակցության, զոյականական բառակապակցության բնորոշումը, ուստի ուսուցիչը սկսում է զրույցի, բացատրության մեթոդներով: Ուսուցիչն օրինակների միջոցով աշակերտներին բացատրում է, որ ածականական բառակապակցությունները դասակարգվում են ըստ լրացումների խոսքիմասային պատկանելության: Ինչպես՝

Տիգրանն անհապաղ իր մոտ կանչեց ժողովրդին հավատարիմ նախարարներին(ՀԽ, ՏՄ, 204):

Մա արդեն վարմունք է՝ **նգովքի արժանի** ( ՍՁ, ՀԲ, 205):

Արշակ **թագավորի հետ ծանոթ** էք երևում և գուշակում էք հավանաբար, թե ինչ նոր աղետ էր բերելու մեզ ( ՍՁ, ՀԲ, 23 ):

Աշակերտները գտնում են ածականական բառակապակցությունները և եզրակացնում, որ 1-ին և 2-րդ նախադասություններն արտահայտում են հանգման հարաբերություն, 3-րդը՝ փոխադարձ կապի հարաբերություն:

Բացատրությունն ամրակայվում է օրինակներով:

Քայլ 2. Ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ, որտեղ ածականը բացառական, գործիական և ներգոյական հոլովներով լրացումներ ունի, ինչպես՝

Ձեռքը մեկնեց քրոջը, որ ավարտել էր արտասանությունը, և որի դեմքն անսովոր **հաճույքից կարմիր** էր( ԱԲ, ԱՄ, 32 ):

Նկատելով նրա փափագը՝ Արշակը մտածում էր, թե նա հավանաբար **իրենից դժգոհ** է, որ իր հրավերով պատճառ եղավ Գնելի սպանության (ՍՁ, ՀԲ, 196 ):

Նա իր **կրթությամբ գոռոզ** ու **հպարտ** էր, նաև նրանով, որ հայրը պիտի լիներ թագավոր հայոց, եթե չմեռներ (ՍՁ, ՀԲ, 11 ):

Նրանք այնտեղ էին, ուր Ախուրյան ու Արաքս գետերը խառնվում են իրար, կազմում փարթամ **բուսականությամբ հարուստ** ու **պտղաբեր** այգիների մի հարթ թերակղզի (ՍՁ, ՀԲ, 11 ):

Հարցերի միջոցով աշակերտները գտնում են ածականական բառակապակցությունները, առանձնացնում գերադաս ու ստորադաս անդամները: Ուսուցիչը հավելում է, որ գործիական ու ներգոյական հոլովներով լրացումներ են ունենում սակավաթիվ ածականներ: Ածականները համեմատաբար ավելի շատ լրացումներ են ունենում կապերի, մակբայների միջոցով: Ուսուցչի օգնությամբ աշակերտները գեղարվեստական գրականությունից օրինակներ են բերում, ինչպես՝

Իմ տխուր ու ծանրացած **սրտի պես մռայլ** էին և՛ երկինքը, և՛ անցորդները, և՛ շեները (ՀՂ, ԱՊ, 41 ):

Դրանով նա ցանկացել է ցույց տալ, որ դու **Մասիսի չափ բարձր** ես ու **Մասիսի**

**պես անհասանելի** (ՀԽ, ՏՄ, 61):

Միայն նա է **հայոց աշխարհի համար հայրենադավ** (ՀԽ, ՏՄ, 107) :

Նա **չափազանց տխուր** էր, գունատ( ՀՂ, ԱՊ, 199) :

Ես մտածել եմ **շատ երկար**, և իմ բոլոր խոհերը եզրահանգում են այն բանին, որ պետք է դաշնակցեմ Եվպատորի հետ (ՀԽ, ՏՄ, 280) :

Օլիմպիան ուշիմ կին էր. գալով Հայոց աշխարհը հարս՝ նա իրեն զգում էր մենակ ու օտարության մեջ, ուստի և **միշտ զգաստ** ու **զգույշ** էր (ՍԶ, ՀԲ, 188) :

Քայլ 3. Ածականական բառակապակցությունների վերաբերյալ տեղեկատվությունն իրականացնելուց հետո կազմակերպվում է հարցման դասը: Սովորողների ճանաչողական հաղորդակցման հմտությունների ու կարողությունների զարգացման նպատակով նախորդ ժամին ձեռք բերած գիտելիքների յուրացումը կարելի է կազմակերպել փոքր խմբերով գործնական առաջադրանքների կատարմամբ, քննարկումների, բանավեճերի կազմակերպմամբ: Այս դեպքում << Ածականական բառակապակցությունները >> թեմայի վերաբերյալ քննարկումը կարելի է կազմակերպել <<**Դեբատի**>> միջոցով: Դեբատը քննարկման կամ բանավեճի մի տեսակ է, որը կառուցված է հակադիր մրցող խմբերի մասնակից – ներկայացուցիչների վաղօրոք ամրագրված թեմաների հիմքի վրա:

Ուսուցիչը դասարանը բաժանում է թիմերի: Թիմերում քննարկվում են ուսուցչի կողմից կազմված միևնույն հարցերը և կատարում վարժություններ:

1. Ի՞նչ սկզբունքով են դասակարգվում ածականական բառակապակցությունները:
2. Ի՞նչ խոսքի մասերով են արտահայտվում ածականական բառակապակցութ–յունների ստորադաս անդամները:
3. Լրացումներն ի՞նչ իմաստներ են արտահայտում:
4. Ածականը կարո՞ղ է ունենալ ածականով արտահայտված լրացում:
5. Բերել օրինակներ:

Քննարկումն անցկացվում է դեբատի համար նախատեսված ժամանակարգին համապատասխան, որի ընթացքում յուրաքանչյուր թիմի առաջնորդ իրենց փաստարկումներն է ներկայացնում, մյուս թիմերը հաստատում կամ մերժում են: Հաղթում է այն թիմը, որն ավելի համոզիչ փաստարկներով է հանդես գալիս և ճշգրիտ կատարում վարժությունները: Ուսուցման ընթացքում դեբատի օգտագործումը խթանում է սովորողների հետազոտական, ստեղծագործական, որոնողական գործունեությունը:

<< Ածականական բառակապակցությունները >> թեմայի ուսուցումը կարելի է ամփոփել նաև տարաբնույթ առաջադրանք – վարժություններով:

*Վարժություն 1:*

Գտնել ածականական բառակապակցությունները, որոշել ստորադաս անդամի խոսքիմասային պատկանելությունը:

Չպետք է թողնել դժբախտ թագուհուն մենակ. հարագատները բացակա են, և չունի ոչ մի մխիթար (ՍՁ, ՀԲ, 181): Աչքերը փայլում էին սարյակի փետուրների նման սև (ՍՁ, ՀԲ, 31): Ի՞նչ էր ասում. նրա համար դժվար էր, որ ես հեռանում էի Ձորագյուղից. Չ'է որ ինձ ոչինչ չէր ասել այդ խոնարհ աղջիկը (ԱԲ, ԱՄ, 34): Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ (ԱԲ, ԱՄ, 37): Հայերը կոշտ ու կոպիտ են իրենց լեռների նման, հայերը հպարտ ու անմատչելի են իրենց լեռների նման(ՀԽ, ՏՄ, 150): Հոր նման գեղեցիկ ու առնական էին երկու արքայագունները (ՀԽ, ՏՄ, 224): Նա խորհում է, իշխանի՛կ, թե որքան քիչ նախարար, այնքան լավ, բյուրապատիկ լավ(ՍՁ, ՀԲ, 32): Դուք շատ բարի եք, սակայն ճանապարհս ապահով է և անվտանգ (ՍՁ, ՀԲ, 40):

*Վարժություն 2:*

Հետևյալ ածականական բառակապակցություններով կազմել նախադասություններ՝ ժողովրդին կարելից ու հոգատար, բոլորին հայտնի, ուխտին հավատարիմ, հարգանքի արժանի, առաջվա պես աշխույժ ու հպարտ, շատ բարձր, կամփին հակառակ, ինձ համար հասկանալի, ֆիզիկապես առողջ, զարմանալի բարեսիրտ, քաջերից քաջ:

*Վարժություն 3:*

Դուրս գրել և ընդարձակել գոյական լրացումով ածականական բառակապակցությունները:

Միշտ նույն շշուկին հլու, Միշտ նույն կարոտի կակիճը պահած՝ Ես դուրս եմ գալիս նորից շրջելու (ՎՏ, 1, 196): Ու հավիտյան էլ մնացին քնած՝ դավին անտեղյակ, ցավին անտարբեր (ՀԹ, 1, 196): Թեև գալիս եք դուք ալիքների նման և աստղերի՝ Ձեր ճանապարհին, ձեր կոչումին, ձեր ընթացքին անգետ (Չ, 168): Աշխարհի չար ու բարուց անտեղյակ, միամիտ երեխաներ էինք (ԱԲ, 132): Սրտով խաղաղ եմ ես հիմա ու խոհերով հստակ, մաքուր (Չ, 112): Թե կարող ես, երգիր նրան՝ իր հույզերով մեծ ու մանրիկ (Չ, 116):

Վարժություն 4:

Դուրս գրել մակբայով ու կապական կառույցով արտահայտված լրացումներ ունեցող ածականական բառակապակցությունները:

Ու բարձր է, բարձր է կայանն իմ հոգու, Մասիսի նման բարձր է ու հաստատ, հզոր, ահարկու,... Ահա թե ինչու է իմ ձայնն այսօր Հավերժի նման համառ ու հաստատ (Չ, 270): Երբեք նրան այսօրվա նման անհանգիստ չեմ տեսել (Շիրվ., 2, 243): Հետո պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը (ԱԲ, 107): Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղն ադամանդի նման ջինջ լիճն էր (ԱԲ, 270): Ու ր է նրա կյանքի այն շարունակ քաղցր թմրությունը (ՆԴ, 2, 285): Ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը (ԱԲ, 193):

Վարժություն 5 :

Տրված բառերով կազմել ածականական բառակապակցություններ՝ արժանի, համակրելի, հմուտ, հավատարիմ, վայելուչ, ծանոթ, անհասանելի, սիրելի, հայտնի, քաջ:

*Թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումը*

Թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումն առաջարկում ենք կազմակերպել զրույց, բացատրություն, բանավեճ, պրիզմա մեթոդներով: Թվականական և մակբայական բառակապակցությունների տարբերակումը տեսանելի դարձնելու համար

ուսուցիչը գրատախտակին T-աձև աղյուսակով ներկայացնում է թվականական և մակբայական բառակապակցությունները:

առնվազն ութսուն ամբողջ հինգ ընդամենը տաս հազիվ քսանհինգ	ավելի արագ քիչ հետո այնքան հեռու ժամանակից շուտ
------------------------------------------------------------------	----------------------------------------------------------

Ուսուցիչը սովորողներին առաջարկում է կարդալ բառակապակցությունները, առանձնացնել գերադաս և ստորադաս բառերը: Առաջադրանքը կատարելով՝ աշակերտները գալիս են այն համոզման, որ առաջին շարքի բառակապակցությունները թվականական են, քանի որ բառակապակցությունների գերադաս անդամներն արտահայտված են թվականով, իսկ երկրորդ շարքի բառակապակցությունները՝ մակբայական:

Աշակերտները նկատում են, որ թվականի հետ բառակապակցություն են կազմում մի շարք ածականներ, դերանուններ, մակբայներ: Ուսուցիչն ավելացնում է, որ իմաստային տեսակետից թվականական բառակապակցությունները միասնական են, ինչպես՝

**Ամբողջ ութսուն** տարի աշխարհի վրա ապրած Մարդպետունին առաջին անգամ երջանկության զգացում ապրեց (ՀԽ, ՏՄ, 395):

Արտաշատը պաշարելու **ընդամենը տասն** օրից հետո ասպետը զգաց, որ Հրահատ Արշակունին հանգիստ չի զգում իրեն(ՀԽ, ՏՄ, 415) :

**Հազիվ տասնչորս** տարեկան էի այդ ժամանակ, ամրակազմ էի, արևից ու քամուց այրված դեմքով (ՀՂ, ԱՊ, 4):

Անդրադառնալով մակբայական բառակապակցություններին՝ ուսուցիչը նշում է, որ կան մակբայով, ածականով, ցուցական դերանունով, գոյականով և մակբայով, թվականով և այլ բառերով լրացում ունեցող մակբայական կապակցություններ, ինչպես՝

1. Ա՛յն, հայակեր պանդխտությամբ **այնքան շատ** էր կարոտել, Որ քիչ մնաց իր պաշտելի սարի փուշն էլ համբուրեր (ՀՇ, 3, 229):
2. Այդ **այնքան արագ** կատարվեց, որ գյուղացիներից շատերն իրենց աչքերին չհավատացին, թե այդ <<խեղձ>> գյուղացին Կոստանդ աղան է (ԱԲ, ԱՄ, 90):
3. **Ինչքան շատ** վազես աղբրիդ ետևից, Այնքան շուտ պիտի վառվես ծարավից(ՀՇ, 3, 114):

4. Իսկ այդ դաշտում **որքան արագ** են մահանում պարիսպները, երկաթե անիվները տրոբում են բրդոտ սարդերին, և արգավանդ կավը ուռճանում է նոր սերմերով(ԱԲ, ԱՄ, 140):
5. Նա հույս ուներ **Ժամանակից շուտ** զավթել հայրական իշխանությունը (ՀԽ, ՏՄ, 221-222):
6. Արշակ **թագավորից առաջ** հայոց այրուձին հասավ Կապուտանին (ՀԽ, ՏՄ, 103):
7. Վերջինս **յոթ տարի առաջ** մի աթենացի ստրուկ էր գնել, նրանից սովորել խոփ կռել և թողել հողագործի իր զբաղմունքը (ՀԽ, ՏՄ, 159):
8. **Մի տարի հետո** Սորանի ձորում ճանապարհից դուրս ծլեցին մի թուփ ընկուզենիներ (ԱԲ, ԱՄ, 176):

Սովորողները հարցերի միջոցով պարզում են , որ 1-ին և 2-րդ նախադասություններում մակբայի լրացում են դարձել ցուցական դերանունները, 3-րդ և 4-րդ նախադասություններում՝ հարցական և հարաբերական դերանունները, 5-րդ և 6-րդ նախադասություններում՝ գոյականի բացառական հոլովը, 7-րդ և 8-րդ նախադասություններում՝ թվականը:

Ուսուցչի պահանջով աշակերտներն են կազմում նախադասություններ կամ գեղարվեստական գրականությունից օրինակներ բերում:

**Ամենից շատ** շտապում է նա, ով շատ է ուշացել(ՀԽ, ՏՄ, 171) :

**Այնքան հեռու** են, որ գեթ մի վայրկյան հույս չկա անհաս բախտիս հասնելու (ՀՇ, 3, 73):

Ժիր երեխաներ էին բոց աչքերով, և **այնքան արագ** ընտելացանք իրար(ԱԲ, ԱՄ, 24):

Մելևկյանները Մային կանգնեցրել են այստեղ՝ **Ժամանակից շուտ** տերևաթափ դարձնելու սաղարթախիտ ծառերն ու գեղեցիկ թփերը (ՀԽ, ՏՄ, 225):

**Մի քանի տարի առաջ** նրանք թունավորեցին(ՀԽ, ՏՄ, 134):

<<Թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումը>> թեմայի ուսումնասիրման գործընթացի եզրափակիչ փուլում կարևոր առանցքային հարցերը նպատակային է ի մի բերել <<Պրիզմայի<sup>1</sup>>> միջոցով: <<Պրիզման>> մտածողության ընթացքը պատկերավոր դարձնելու պարզ ձև է, որի հիմնական նպատակը թեմայի վերաբերյալ գրանցումն ու հակադրումն է, որի արդյունքում ակնառու են դառնում թեմային առնչվող


---

<sup>1</sup> Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, «Վանատուր», Վանաձոր, 2008, էջ 71:

կարևոր գաղափարները: <<Պրիզման>> պետք է լինի ուղղորդված, քանի որ այն կառուցվում է դասի եզրափակիչ փուլում: Նախապես տրված հարցերին համառոտ պատասխան տալով ուսուցչի օգնությամբ սովորողներն աստիճանաբար կառուցում են պրիզման: Դրանով իսկ համակարգվում է թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքները:

Սկզբում հակադրվում են թեմայի վերաբերյալ մեկնաբաները, այնուհետև լրացվում են համապատասխան գաղափարները: Այսպես՝

1. թեմայի մեկնաբաները,
2. թվականական և մակբայական բառակապակցությունների ըմբռնումը,
3. ի՞նչ խոսքի մասերով է արտահայտվում թվականական բառակապակցության ստորադաս անդամը,
4. ի՞նչ խոսքի մասերով է արտահայտվում մակբայական բառակապակցության ստորադաս անդամը:
- 5.



Այնուհերև կարելի է կատարել բազմաբնույթ առաջադրանք – վարժություններ:

*Վարժություն 1:*

Տրված բառակապակցություններում ընդգծել գերադաս բառերը. բառակապակցություններն ինչո՞ւ են կոչվում թվականական՝ մի քանի հարյուր, տասնյակ հազար, հազիվ հիսուն, ուղիղ ժամը հինգին, առնվազն հինգ, ամբողջ երկու:

*Վարժություն 2:*

Գտնել թվականական և մակբայական բառակապակցությունները:

Մեր ուժերը վաթսուն հազարից չի անցնում, իսկ առավել մարտունակը՝ ընդամենը քառասուն հազար (ՀԽ, ՏՄ, 33): Ասպետ Բազարատը մի քանի քսան հազարանոց բանակով մեկնել է Կապուտան, իսկ գորապետ Մամիկը պալատական խորհրդատուի պես չի հեռանում ծերունի Տիգրանի մոտից (ՀԽ, ՏՄ, 436): Ես ամենից շատ ծաղիկներ եմ սիրում, իմ հելլեն ուսուցիչը միշտ հիշեցնում էր ինձ, որ եթե մարդ ապրի ծաղիկների մեջ, կարող է երկու դար քայլել այս աշխարհում (ՀԽ, ՏՄ, 140): Ձին նոր թափ առավ և քիչ հետո հասավ իր ընկերներին (ՀԽ, ՏՄ, 255): Միհարկանի այդ տունը նա թողել էր անավարտ և, ինչպես պատմում են, քաջի մահով է ընկել կովի դաշտում, երբ ես հազիվ մեկ տարեկան եմ եղել (ՀՂ, ԱՊ, 3): Ուղիղ ժամը երկուսն էր, դեռ ժամանակ կար տատիս տուն բերելու համար (ՀՂ, ԱՊ, 250): Նրան քաղաքի սահմանից դուրս ավելի հեշտ թվաց (ԱԲ, ԱՄ, 86): Ավելի հեռու հպատակների բազմությունն էր, որ ծովի նման ծփում էր (ԱԲ, ԱՄ, 84):

*Վարժություն 3:*

Տրված թվականական բառակապակցություններով կազմել նախադասություններ՝ ուղիղ ժամը յոթին, հազիվ հիսուն, մոտ քսան, ընդամենը չորս, առնվազն հինգ, տասնյակ հազար:

Օգտագործված գրականություն

1. Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, Ուսուցման մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

- ԱԲ, ԱՄ- Ա. Բակունց, Ալլաիական մանուշակ, Եր; 1969:  
ԱԶ, ՀԲ - Ստ. Զորյան, Հայոց բերդը, Եր., 1962:  
ՀԽ, ՏՄ - Հ. Խաչատրյան, Տիգրան Մեծ, Եր., 1990:  
ՀՂ, ԱՊ - Հ. Ղուկասյան, Անհանգիստ պատանեկություն, Եր., 1987:  
ՀԹ - Հ. Թումանյան, Երկհատորյակ, Եր., 1958:  
ՎՏ - Վ. Տերյան, Երկեր, հհ.1-3,Եր., 1960-1963:  
Շիրվ.-Ալ. Շիրվանզադե, Երկեր, Երևան, 1983:  
Չ. - Չարենց, Երկեր, Եր., 1954:  
ՆԴ - Նար - Դոս, Երկերի ժողովածու, Եր. , 1955:

Արմենուհի Խալաթյան

**Ածականական, թվականական, մակբայական բառակապակցությունի  
ուսուցումը**

Այս հոդվածում ներկայացված է ածականական, թվականական, մակբայական բառակապակցությունի ուսուցումը:

Թեմայի ուսուցման գործընթացն իրականացրել ենք քայլաշարային եղանակով՝ զուգակցված մեթոդամանկավարժական մի շարք սկզբունքներով: Թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը նպատակային է իրականացնել զրույցի, բացատրության մեթոդներով, իսկ թեմայի ամփոփման փուլում՝ արդի մեթոդների ու մեթոդական հնարների օգտագործմամբ (դեբատ, խմբային աշխատանք):

Թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումն առաջարկում ենք կազմակերպել զրույց, բացատրություն, քննարկ, պրիզմա մեթոդներով:

Арменуи Халатян

Резюме

**Изучение адъективных (прилагательных), наречных и числительных  
словосочетаний**

В этой статье представлено изучение адъективных (прилагательных), наречных и числительных словосочетаний.

Обучение адъективных (прилагательных) словосочетаний осуществили способом словарного ряда, сочетая рядом педагогических и методических принципов.

Сведение относящиеся к теме целесообразно существовать методами беседы, объяснения, а встали и обобщения темы современными методами и употреблением методических способов (дебаты, групповая работа).

При обучении наречных и числительных словосочетаний в основной средней школе предлагаем организовать беседу, объяснение и дискуссию методом призмы.

Armenuhi Khalatyan

Sammary

**The study of adjectivized, numeral and adverbial combination**

The study of adjectivized, numeral and adverbial combinations is represented in this article.

We have carried out the process of adjectivized combination study in a step – by – step way with a number of combined principle of pedagogical methods. It is purposeful to carry out the topic information with the help of conversation and explanation methods whereas the usage of modern methods and methodological approach and divice should be realizid in the final stage of the topic conclusion ( debate, team-work ).

We suggest organizing the study of numeral and adverbial combination using the following methods, discussion, conversation, explanation, prism.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱՐԴԻՆԱԼ  
ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ  
ՀԱՅՐԵՆԱՊԱՐԴԻ ՀԱՐՅՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հայրենադարձություն, ներգաղթ, Խորհրդային Հայաստան Հայ կաթողիկե եկեղեցի, կարդինալ Աղաջանյան:

**Ключевые слова и выражения:** репатриация, иммиграция, Советская Армения, Армянская Католическая Церковь, кардинал Агаджанян.

**Key words and expressions:** Repatriation, immigration, Armenian Catholic Church, Soviet Armenia, Cardinal Aghajanyan.

1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձությունը որպես ետպատերազմյան խորհրդային քաղաքականություն, իր բոլոր դրսևորումներով հանդերձ աննախադեպ, իրարամերժ ու հակասական ընկալումների տեղի տված մի երևույթ էր, որի արդյունքում Խորհրդային Հայաստան է ներգաղթել գրեթե 100 հազար մարդ: 1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձությունը հայ պատմագիտության մեջ անվանվում է նաև «Մեծ հայրենադարձ»:

Մեծ հայրենադարձի իրականացման ողջ գործընթացում, երբ Հայ առաքելական եկեղեցին՝ իր երկու կաթողիկոսական ու նվիրապետական աթոռներով և աշխարհասփյուռ թեմերով, նպաստում և օժանդակում էր հայրենադարձության կազմակերպմանը, ամենուրեք բարձրացնում էր հայկական տարածքները վերադարձնելու խնդիրը, ներգաղթի նկատմամբ միանգամայն այլ դիրքորոշում և վերաբերմունք է արտահայտում Հայ կաթողիկե եկեղեցին: Համայն աշխարհի կաթողիկե հայոց եկեղեցապետը՝ կաթողիկոս-պատրիարք կարդինալ Աղաջանյանը, հենց սկզբից հորդորում է ողջ կաթողիկահայությանը չներգաղթել Խորհրդային Հայաստան՝ նշելով, որ այնտեղ չկա կրոնական ազատություն:

1946 թ. հուլիսի 6-ին կարդինալ Աղաջանյանը հանդես է գալիս Հայ կաթոլիկ համայնքին ուղղված «Թուղթ Հովուական» շրջաբերականով, որտեղ բարձրաձայնում է նաև ներգաղթի և դրա նկատմամբ Հայ կաթողիկե պատրիարքության դիրքորոշման մասին:

Շրջաբերականում կարդինալը նախ խոսում է Հռոմի Պապ Պիոս 12-րդի՝ հայ ժողովրդի հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքի մասին, այնուհետև անդրադառնում է եկեղեցու, հայրենիքի ու հայրենասիրության

թեմաներին («Երկու սեր՝ Ս. Եկեղեցին եւ Հայրենիքը» հատվածում) և վերջապես՝ ներգաղթին ու Խորհրդային Հայաստանին:

Այժմ փորձենք հասկանալ կարդինալ Աղաջանյանի տեսակետն ու վերաբերմունքը ներգաղթի նկատմամբ՝ մեջբերելով որոշ կարևոր հատվածներ 1946 թ. շրջաբերականից:

«Ս. Եկողեցույ հանդէպ մեր ունենալիք հաւատքն ու սէրը - նոյները գորս կը պարտինք տածել Քրիստոսի մեր Աստուծոյն - բնաւ չեն նսեմացներ, չեն ջնջեր օրինաւոր յարումը եւ սէրը որ բնութիւնն իսկ կը դրոշմէ բոլորին սրտին մէջ Հայրենիքի եւ Ազգի հանդէպ:

Կաթողիկէ կրօնքը ոչ մէկ աստէն ուրացած է հայրենիքի եւ ազգութեան գաղափարականները: Ս. Թովմաս Ագուինացին դարեր առաջ տեսականօրէն պարզած է հայրենիքի քրիստոնէայ ըմբռնումը, խորունկ հիմերու վրայ հաստատուած (2. 2. ՃԱ. յօդ. 1)»<sup>1</sup>:

Այս տողերով կարդինալը փորձում է հասկացնել, որ կաթոլիկությունը երբեք չի հեռացել ազգային ու հայրենասիրական գաղափարներից և, իբրև իր այս խոսքերի ապացույց, մեջբերում է Հռոմի Պապի հետևյալ խոսքերը. «Կաթողիկէութիւնը աստուածային կրօնք մը պիտի չըլլար, եթէ թշնամական ըլլար հայրենիքի հանդէպ»<sup>2</sup>:

Կաթոլիկահայության առաջնորդը հանգամանորեն ներկայացնում է, որ Հայ կաթողիկէ եկեղեցին երբեք չի ժխտել ազգային գոյության իրավունքը, նրա յուրահատուկ մշակույթը, հայրենասիրությունը, ծեսերն ու ավանդությունները և որ, լինելով Հայ կաթողիկէ եկեղեցու անդամ, պետք է լինել ազգասեր և հայրենասեր հայ:

«Նուիրական է ուրեմն ամէն կաթողիկէի՝ հայրենիքի եւ ազգի սէրը: Երբ սակայն հանուն հայրենիքի կամ ո՛րեւէ ուրիշ ժամանակաւոր բարիքի համար կամ անուամբ կը պահանջուի հրաժարում կամ ուրացում Քրիստոսի, կամ ինչ որ նոյնն է, կը պարտադրուի Ս. Եկեղեցույ հրամանակարգ վարդապետութեանց մերժում կամ աստուածադիր կարգերու խզում, ճշմարիտ քրիստոնէայ մը չի կրնար վարանիլ իր բռնելիք ընթացքին եւ ճանապարհի նկատմամբ»<sup>3</sup>:

Այժմ անդրադառնանք Խորհրդային Հայաստանի նկատմամբ պատրիարք Աղաջանյանի վերաբերմունքին և նրա հակաաներգաղթյան դիրքորոշմանը:

<sup>1</sup> Կարդինալ Գրիգոր-Պետրոս Աղաճանեան, Ձայն Հովուական, Վենետիկ - Ս. Ղազար, 1967, էջ 14:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 16:

Իր շրջաբերականում կարդինալը ներկայացնում է, որ Հայ կաթողիկե պատրիարքարանը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել հայ ազգին, թեև դրանք երբեմն եղել են քողարկված: Ինչպես ամբողջ ազգը, Հայ կաթողիկե համայնքը ևս, բաժան-բաժան լինելով, ցիրուցան եղավ աշխարհով մեկ և հայրենիքի համազգային հանգանակություններին էլ պատասխանեց իր սիրահոժար մասնակցությամբ:

Հայր Աղաջանյանը, անդրադառնալով մարդկության և կրոնի կատարյալ ազատությանը, նշում է. «Ահաւոր պատերազմի ընթացքին, ուրեմն, երբ Դաշնակից Պետութիւնները կը յայտարարէին որ իրենց յաղթանակով պիտի ապահովուէր մարդկութեան, ի մէջ այլոց, Կրօնքի կատարեալ ազատութիւն, իրաւունքով եւ անձկանօք մենք ալ ակնդէտ կը մնայինք այդ օրուան, որ հնարաւորութիւնը պիտի տար մեզի, անխախտ պահելով մեր կրօնակցան համոզումներն ու կարգերը, երթալու Մայր Հայրենիք՝ մեր բաժինը բերելու անոր վերաշինութեան եւ բարոյական ու կրօնական վերելքին:

Բայց ոչ սակաւ եղաւ մեր յուսախաբութիւնը՝ երբ հայրենադարձի բանբերները եւ անոնց մունետիկները համազգային այս գործին յարանուանական շեշտուած բնույթ մը տուին, եւ Հայ Կաթողիկէութեան հանդէպ, որ Ձարերու բոնատիրական ժամանակ անգամ, կը վայելէր իր ազատ կազմակերպութիւնը հայրենի գաւառներու մէջ, կը զլացուէր արդար եւ լիովին արժանացած ազատամիտ վերաբերմունք մը:

Աւելին կայ. ըսուեցաւ, օրինակի համար, թէ պաշտօնական անձեր յայտարարած ըլլան, որ հայ կաթողիկե կղերը կրնայ երթալ Հայրենիք՝ պայմանաւ, որ խզէ հպատակութեան կապը Ս. Աթոռին հետ: Սակայն ո՞վ չ'ըմբռներ որ նման պարտադրանք մը հաւասար է կաթողիկե հաւատքի ուրացման: Եթէ առաջարկուէր խզել յարաբերութիւն կամ կապ որեւէ քաղաքական խմբակցութեան հետ, պիտի ընդունէինք զայն օրինաւոր եւ անկեղծ հպատակութեամբ: Բայց Հռոմայ Ս. Աթոռը քաղաքական բեւեռ մը չէ, այլ սոսկ կրօնական եւ այն ալ անփոխարինելի՝ Քրիստոսի կարգադրութեամբ: Ուստի հրաժարիլ Հռոմայ Ս. Գահի հպատակութենէն՝ համահաւասար է հրաժարման Ս. Եկեղեցիէն, Կաթողիկե կրօնքէն եւ Հաւատքէն, որով եւ մեզի կը մնայ կրկնել մեր Ս. Հայրերուն հետ. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք» (Եղիշէ, Վեճ. 1859, էջ 31):

Ուրեմն մեզի կը պարտադրուի տակաւին պանդխտութեան մէջ մնալ, որպէս զի անադարտ պահենք մեր Կաթողիկէ Ս. Հաւատքը»<sup>4</sup>:

Այնուհետև, ավարտելով իր խոսքը, կարդինալ Աղաջանյանը կարծես հայրենիքը սիրելու և նրա նկատմամբ դառնությամբ չլցվելու կոչ է ուղղում իր հոտին:

«Մեր սրտերուն մէջ անմեռ պիտի մնայ, սակայն, կարօտը հայրենի գաւառներուն, մեր հոգիներէն ներս բնաւ պիտի չթափանցէ դառնութեան շիթ մը անգամ Հայրենիքի դէմ. անոր բարգաւաճումը, ծաւալումը, մանաւանդ դարձը քրիստոնէական արշալոյսին եւ լուսատրչեան շրջաններու գեղեցկութեան, երբ «Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի» (Անդ, էջ 44), պիտի շարունակեն ըլլալ մեր մշտամրմունջ աղօթքին եւ կեանքին ու գործունէութեան առարկան:

Պիտի սպասենք յուսալից՝ թէ պիտի հնչէ Աստուծմէ որոշուած այդ ցանկալի ժամը. «Միտ թագաւորի ի ձեռս Աստուածոյ» (Առակ. ԻՍ. 1): Մինչ այն պիտի մնանք Սփիւռքի մէջ, վայելելով ազնիվ եւ լայնամիտ ասպնջականութիւնը գաղթավայրերու, մանաւանդ Մերձաւոր Արեւելքի մէջ, ու խղճի ճշմարիտ ազատութեան հետ, ունեցանք եւ ունինք հասարակական կեանքի եւ մշակոյթի ամէն դիւրութիւններ, եւ որոնց շնորհիւ այս գաղութները համեմատաբար քիչ ժամանակուայ մէջ հասան նախանձելի վիճակի:

Մենք վստահ ենք որ պիտի շարունակուի նոյն ազնիւ ու ազատամիտ վերաբերումը, որուն համար քաղցր է մեզի յայտնել մեր զգացումը սրտի խոր երախտագիտութիւնը այս երկիրներու Կառավարութեանց եւ Ժողովուրդներուն»<sup>5</sup>:

Բնական է, որ կարդինալ Աղաջանյանի այս դիրքորոշումը պիտի հարուցեր ներգաղթի կողմնակիցների ու աջակիցների խորը վրդովմունքը՝ լինի դա Հայ առաքելական եկեղեցին, թէ խորհրդամետ մյուս ուժերը: Ինքնին հասկանալի է, որ կաթոլիկահայության առաջնորդի այս շրջաբերականից հետո Աղաջանյան պատրիարքի հասցեին պիտի հնչէին տարբեր մեղադրանքներ ու զրպարտանքներ: Եվ իրոք, այս առթիվ հրապարակվում են քննադատական տարբեր ելույթներ, լոյս են տեսնում բազմաթիվ հողվածներ ու վերլուծություններ:

Ի պատասխան և ի քննադատություն կաթոլիկ պատրիարքի «Թուղթ հովուական» կոնդակի՝ Բեյրութում լոյս է տեսնում «Հայ կաթոլիկ

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 17-18:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 18-19:

պատրիարքարանի դիրքը Խորհրդ. Հայաստանին ներգաղթին և Հայկական դատին հանդեպ» վերնագրով Ասատուր Էլճանյանի հեղինակած գրքույկը, որտեղ հեղինակը Խորհրդային Միության պաշտպանի դիրքերից քննադատում է կարդինալին՝ նշելով, որ որևէ պարկեշտ հայ չի կարող ամտարբեր լինել այդ կոնդակի նկատմամբ, քանի որ այնտեղ շոշափվում են մեր լինել չլինելու հրատապ հարցերը այնպիսի վիճելի և բացասական ձևով ու կեցվածքով, որ հնարավոր չէր ակնկալել կարդինալի նման եկեղեցական բարձր հեղինակությունից և որոնք մեծապես շահագրգռում են ոչ միայն արտասահմանի մեկուկես միլիոն գաղութահայությանը, այլև նսեմացնում են պետության վարկն ու քաղաքականությունը<sup>6</sup>:

Ա. Էլճանյանը մանրակրկիտ անդրադառնում է պատրիարքի կոնդակի բոլոր հատվածներին՝ մեջբերելով կարդինալի մտքերը և ամեն կերպ փորձելով վարկաբեկել և նսեմացնել նրան:

«Աղաճանեան Պատրիարք ի գուր տեղը կը գրպարտէ Խորհրդ. Հայաստանի Պետութիւնը՝ երբ կոնդակով կը յայտարարէ թէ՛ Հայ Կաթոլիկ կղերին ներգաղթումին նախապայման դրուած է, խզել իր հպատակութեան կապը Հռովմի կրօնական առանցքէն և լուծարքի ենթարկել իր նուիրապետական կարգը: Անհիմն անբաստանութիւն մըն է նաեւ կոնդակագրի այն պնդումը, թէ Հայաստանի մէջ յարանուանական խտիր կայ և նախընտրութիւնը՝ Լուսաւորչական եկեղեցին»<sup>7</sup>:

Աբողջությամբ խորհրդային իրականությունից բխող քննադատություններ, որտեղ պարզ երևում է հեղինակի նպատակը՝ ամեն կերպ սևացնել կաթոլիկ պատրիարքին՝ համարելով նրան հակաազգային ու հակապետական գործիչ:

«Ներգաղթի և ընդհ. ազգահաւաքումի այս ճակատագրական օրերուն՝ առանց դոյզն խղճահարութեան, դաւանական, յարանուական, անձնական, պարագայական ու տեղական շահու ու փառքի, դիրքի ու պաշտօնի նկատումներով՝ հակապետական ու հակաազգային խաչակրութիւն շղթագերծել բարենիշ մը չ'ապահովեց Աղաճանեան հօր, ոչ միայն իր կաթոլիկ ծուխերուն, այլ նոյնինքն Վատիկանի կողմէն, որ առնւազն ձեռնարկը նկատեցին «քաղաքական խակութիւն»: Իսկ հայ ժողովուրդը կը դատապարտէ զայն, որովհետեւ ան լռելեայն կը ժխտէ հայկական դատն ու մեր հողային պահանջները, իւղ քսելով մեր թշնամիներու հացին: Արդարեւ

<sup>6</sup> Տե՛ս Ա. Էլճանեան, Հայ կաթոլիկ պատրիարքարանի դիրքը Խորհրդ. Հայաստանին, ներգաղթին և Հայկական դատին հանդեպ, «Կայծ» մատենաշար, թիւ 30, Պէրուս, 1947, էջ 5:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 28:

ներգադրը եղաւ ստուգանշողը մեր իրական հայրենասիրութեան չափին ու բարեխառնութեան: դժբախտաբար հայր Աղաճանեան ձախողեցաւ այս քննութեան մէջ»<sup>8</sup>:

Գրեթէ նույնաբովանդակ քննադատություններ է ներկայցնում նաև պատմաբան Հ. Մելիքսեթյանը՝ փորձելով համոզել, որ խորհրդային երկրում կարդինալ Աղաջանյանի մատնանշած կրոնի կատարյալ ազատությունը իրականում գոյություն ունի, և որ խորհրդային սահմանադրությամբ կրոնական պաշտամունքի ազատությունը վաղուց ի վեր ճանաչված էր բոլոր քաղաքացիների համար, և որ մայր հայրենիքում ոչ ոք չի բռնում ու հալածում անհատին իր կրոնական համոզմունքների համար<sup>9</sup>:

«Հայր Աղաջանյանը ճգնում էր բամբասանքներով վարկաբեկել Սովետական Հայաստանի ղեկավարներին, որ իբր «պաշտոնական անձեր հայտարարած» են, թե Հայաստան մեկնող կաթոլիկները պետք է հրաժարվեն իրենց հավատքից կամ հայրենիքում կաթոլիկության հանդեպ այլ վերաբերմունք գոյություն ունի, քան այլ դավանանքների հանդեպ: Թե էրբ, որտե՞ղ և ո՞ր «պաշտոնական անձերն» էին այդպիսի հայտարարություններ արել, այդ մասին հայր Աղաջանյանը խորհրդավոր լռություն էր պահպանում»<sup>10</sup>:

Հ. Մելիքսեթյանի տեղեկացմամբ սփյուռքահայ աշխատավորները, առաջադիմական բոլոր ուժերը միահամուռ կերպով հանդես եկան կարդինալ Աղաջանյանի «այդ հայրենադավ հորդորների դեմ, նրա առաջ քաշած «մենք կմնանք աքսորի մեջ, պահելու համար մեր կրոնքն ու հավատը» վնասակար թեզի դեմ»<sup>11</sup>:

«Կարդինալ Աղաջանյանի այս կոնդակի դեմ Եգիպտոսից «խումբ մը կաթոլիկ հայրենասերներ» ստորագրությամբ բողոքագրում հենց կաթոլիկ հավատացյալները գրում էին, որ դա փաստորեն նշանակում է ենթարկվել Վատիկանի քաղաքականությանը՝ դավաճանելով ազգային կենսական շահերին:

«Եթե կարտինալության ծիրանին կհարկադրե Վատիկանի քաղաքականության ենթարկվիլ,- գրում էին բողոքի հեղինակները,- բայց պետք է գիտենա ամենապատիվ կարտինալը, որ ինք զավակն է

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 35-36:

<sup>9</sup> Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1985, էջ 346:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 347:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 348:

բազմաչարչար ազգի մը, որ առանց կրոնական խտրության հայ անունին, հայ հայրենիքին համար աքսորվեցանք, կոտորվեցանք, թեև այն ատենները մեր կրոնավորներեն շատերը մեր միամտությունը օգտագործեցին համոզելու, թե կաթոլիկությունը բավարար միջոց մըն է հալածանքե և կոտորածե գերծ մնալու համար:

Մենք պարզ հավատացյալ կաթոլիկ հայերս, որ մեր հավատքին ու ազգին համար զոհվեցանք, կրկին պատրաստ ենք զոհվելու, այս անգամ, սակայն, հայրենիքի մեջ և անոր համար, բայց երբեք աքսորանքի՝ օտարության և օտարներու հաշվույն:

Մեր դարավոր երազը իրականացած է, ունինք հայրենիք: Ան, որ հայ է, պետք է վերադառնա, որովհետև հոն է միայն, ուր կարելի է հայը հայ պահել»<sup>12</sup>:

Հարկ է նկատել, որ ըստ Միրիայում Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի ներգաղթի լիագոր Ա. Հովհաննիսյանի 1947 թ. հայրենադարձության վերաբերյալ կազմած զեկուցագրի՝ հայ կաթոլիկ հոգևորականությունը կարդինալ Աղաջանյանի ղեկավարությամբ ծավալած հականերգաղթյան գործունեությամբ ոչնչով չէր զիջում դաշնակցականներին: Հայ կաթոլիկ հոգևորականությունը, բացի Սովետական Հայաստանի դեմ կատարվող զրպարտություններից, դաշնակցականների հետ ձեռք ձեռքի տված չարամիտ ազիտացիա էր մղում ներգաղթի դեմ: Դաշնակների հետ միասին նրանք իրենց արքեպիսկոպոսին ուղարկել էին Քեսապի շրջանի հայկական գյուղերը՝ ներգաղթը խանգարելու համար: Այդ արքեպիսկոպոսը գյուղացիներին փորձում էր համոզել, թե Հայաստանում կատարյալ սով է, չկա կրոնի ազատություն և այլն, որպեսզի նրանք ետ կանգնեին ներգաղթելու իրենց մտադրությունից<sup>13</sup>:

Բնական է, որ հայ կաթոլիկ հոգևորականությունը պետք է որդեգրեր նման գործելաճ և իր հոտին ներկայացներ Խորհրդային Հայաստանում տիրող ողջ իրականությունը՝ ինչքան էլ հակառակ կողմից հնչեին տաբեր մեղադրանքներ ու զրպարտություններ:

1946 թ. «Էջմիածին» ամսագրում տպագրվում է ծավալուն մի հոդված՝ «Թուղթ ընդդեմ Հայրենիքի և ներգաղթի» վերնագրով, որտեղ անխնա քննադատության է ենթարկվում կարդինալ Աղաջանյանը ու իր ծավալած գործունեությունը:

---

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 349:

«... Կարդինալական իր անդրանիկ շրջաբերականում Հռոմի պապ Պիոս ԺԲ-ի «հայրենասիրությունը» տարփողելուց զատ, Աղաճանյանը շոշափում է հայ ժողովրդի ազգահավաքման համար կենսական մեծ կարևորություն ներկայացնող ու չափազանց հրատապ մի խնդիր, այն է ներգաղթի խնդիրը: Սակայն իր հիմնական դիտավորություններն ու նպատակները սքողելու համար կարդինալ Աղաճանյանը ներգաղթի խնդիրը կապում է նախ կրոնի ազատության և ազգի ու հայրենիքի գաղափարների մշուշապատ բնորոշման հետ, որպեսզի կարողանա Սովետական Հայրենիքի ու ներգաղթի հանդեպ ունեցած իր թշնամական դիրքավորումն արդարացնել հերյուրանքներ շարահյուսելով և զրպարտությունների մեթոդին դիմելով:

Սովետական Հայրենիքում կրոնի ազատության չգոյության մասին մինչև ուղն ու ծուծը զրպարտություններով ներծծված այս շրկջաբերականը, որ կրում է «Թուղթ հովուական» խորագիրը, ամբողջությամբ ուղղված է ներգաղթի դեմ, այդ պատճառով էլ ավելի ճիշտ կլիներ կոչել այն «Թուղթ ընդդեմ Հայրենիքի և ներգաղթի»<sup>14</sup>:

Հոդվածում քննադատվում է կարդինալ Աղաջանյանի արտահայտած յուրաքանչյուր միտք: Խոսվում է, որ կարդինալը չի կարող իրազեկ չլինել հայրենիքում տիրող կարգերին, բայց նրան անհրաժեշտ է իրականությունը շրջված ներկայացնել, փաստերն աղավաղել, բամբասել, զրպարտել, որովհետև նպատակը արդարացնում է միջոցները<sup>15</sup>: Ըստ հոդվածի՝ «Կրօնքի լիակատար ազատութեան» չգոյության շուրջ հյուսված առասպելներով Կարդինալը ցանկանում է վախեցնել ոչ միայն իր հոտին, այլ ընդհանրապես հայ հավատացյալներին և մոայլ գույներով ներկայացնելով հայրենիքը՝ կասեցնել հայ տարագիր ժողովրդի ներգաղթը<sup>16</sup>:

«Կարդինալ Աղաճանյանի ներգաղթի դեմ զենքեր ճոճելը, պանդխտության մեջ մնալու հիստերիկ կոչերը և հայկական պահանջները ձախողելու փորձերը մի ընդհանուր ակունքից են բխում, և այդ ակունքը հանդիսանում է Վատիկանը. կարդինալ Աղաճանյանի հականերգաղթային այս գործունեությունը սերտ կերպով կապված է Վատիկանի քաղաքական գործունեության հետ, քաղաքական գործունեություն, որը բանադրվել է Հայ Եկեղեցու կողմից:

<sup>14</sup> «Էջմիածին», 1946 թ., օգոստոս - սեպտեմբեր - հոկտեմբեր, էջ 13:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 19:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում:

Իզուր է ճգնում կարդինալ Աղաճանյանը ամենայն զգուշությամբ թաքցնելու իրողությունը, որ «Հռոմայ Ս. Աթոռը քաղաքական բնեռ մը չէ, այլ սոսկ կրօնական» և որ ինքը քաղաքական նպատակներ չի հետապնդում, այլ սոսկ նկատի ունի «խղճի ազատութիւն», «կրօնական վերելք» և այլ շաղակրատանքներ»<sup>17</sup>:

Այնուհետև, ամփոփելով քննադատական նյութը՝ ուղղված Հայ կաթողիկե պատրիարքին, «Էջմիածին» ամսագիրը նշում է նաև, որ այս ամենը ուղղված չէ մեր կաթողիկե եղբայրների դեմ:

«Հայ Եկեղեցին թշնամության նշույլ անգամ չի տաձում կաթողիկե կամ բողոքական իր եղբայրների հանդեպ: Հայ Եկեղեցուն, հակառակ Հռոմի Եկեղեցու, խորթ են եղել կրոնական հալածանքները, անհամբերատարությունը կամ ուրիշներին իր գիրկը ներգրավելու ձգտումները. նա մյուս եկեղեցիներին համարել ու համարում է քույրեր: Ինչպես Գևորգ Չ Հայրապետն է ասում, «Հայոց Եկեղեցին ունի վերին աստիճանի ներողամիտ ոգի. նորա տարեգրությունների մեջ չի կարելի գտնել կրոնական հալածանք, ժողովուրդը ստրկացնելու ձգտում, աններողամտություն և անհամբերատարություն»:

Մենք համոզված ենք, որ կաթողիկե հայությունը չի բաժանում կարդինալ Աղաճանյանի տեսակետները ազգի, հայրենիքի և հատկապես Մովեստական Հայրենիքի նկատմամբ. այդ են վկայում Հայրենիք ներգաղթող կաթողիկե հայերի խմբերը և կաթողիկե հայերի ելույթները: Մենք չենք կարծում, որ կաթողիկե հայերի մեջ մեռած լինի հայրենասիրական ոգին, նույնչափ, որչափ կարդինալ Աղաճանյանի մոտ. հայրենասիրական զգացմունքերը համամարդկային են, ապա և նրանք խորթ չեն նաև մեր կաթողիկե եղբայրների համար»<sup>18</sup>:

Կարևոր է նշել, որ այս առթիվ իր դիրքորոշումն է արտահայտել նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Չ: Խոսելով հայրենադարձության հարցի մասին՝ Վեհափառ Հայրապետը անդրադառնում է նաև կարդինալ Աղաճանյանի դիրքորոշմանը՝ նշելով.

«Սրտառույ չէ նաև լատինադավան ազգայինների գործակցությունը համազգային խնդիրների արդարադատ լուծման համար: Հակառակ նոցա կրոնական պետերի դավադիր հորդորների, որոնք հայ դատի և հայրենադարձի դեմ ծառանակով կամենում են սիրաշահել Վատիկանի ռազմատենչ մենավորին և հաճոյանալ աշխարհակալական ախտով

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>18</sup> Նույն տեղում:

տառապող քաղաքական այն գործիչներին, որոնք ծրագրեր են մշակում՝ թնդանոթային մսի և աշխատանքի գաղութային ստրուկի վերածել իրավագուրկ տարաբնակ հայազուններին: Ի տրիտուր իր ազգադավ սև գործի՝ Վատիկանի հայտնի գործակալ Աղաջանյանը Կարդինալության աստիճանով վարձահատուցվեց: Սակայն մեծ է հայրենիքի սերը, ազգահավաքման ու ազգասիրության զգացմունքը նաև լատինադավան հարագատների հոգում: Անհանդուրժող ու ռազմամոլ Վատիկանի հայանուն գործակալներն անկարող են մարել կամ կորզել ազնիվ հայազունների հոգուց հայրենասիրության, ազգասիրության նվիրական զգացմունքները և նրանց զգալի մեծամասնությունը մայր հայրենիքի գրկում է, որ պիտի գտնեն իրենց հոգևոր մխիթարությունը և երջանիկ կյանքը»<sup>19</sup>:

Այս կապակցությամբ շատ կարևոր տեղեկությունների ենք հանդիպում 1949 թ. Գևորգ Զ կաթողիկոսի՝ «Հայ եկեղեցու գործունեության և առաջիկա ծրագրերի մասին» Ի. Ստալինին ուղղված խիստ գաղտնի նամակում, որտեղ կաթողիկոսը, ի թիվս այլ հարցերի, խնդրում է Ի. Ստալինի համաձայնությունը՝ Վատիկանի դեմ համատեղ պայքարի համար կապ հաստատել առաջադիմական ու խորհրդամետ եկեղեցականների հետ:

«Չնայած իր հոտի փոքրաթիվությանը և իր կազմակերպության ոչ համակողմանիությանը, Հայ եկեղեցին նկատելի կշիռ ունի և Ամերիկայի ու Եվրոպայի (ի բացառյալ Վատիկանն ու իր սպասավորները) եկեղեցական-քաղաքական շրջաններում ավանդաբար համակրանք է վայելում: Վատիկանի ներկայացուցիչները, հատկապես ԱՄՆ և արաբական Արևելքի երկրներում, հնարավորն են անում Հայ եկեղեցին վարկաբեկելու համար: Այդ գործում հատուկ գործունեություն է ցուցաբերում Կարդինալ Աղաջանյանը, որ ծնունդով Ախլցխայի հայ է և նախկին կաթողիկական տեղապահ Վրաստանում (1917-1921 թթ.): Կարդինալ Աղաջանյանը, օգտագործելով ոչ միայն Վատիկանի կազմակերպական և նյութական միջոցները, այլև քաղաքականապես ուժեղ ռեակցիոն շրջանների օգնությունը, եռանդուն սադրիչ քարոզչություն է կատարում ընդդեմ խորհրդային իշխանության, հայերի հայրենադարձության և այլն: Ընդ որում, Աղաջանյանի իրավասությունը տարածվում է ոչ միայն Միջին և Լիբանանի կաթողիկե հայերի, այլև արաբական Արևելքի ու Միջին Ասիայի բոլոր երկրների բոլոր կաթողիկների վրա: Մեր ներկայացուցիչները,

<sup>19</sup> Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ.), գիրք Զ, կազմող՝ Ս. Բեհբուդյան, Երևան 1999, էջ 355:

մասնավորապես, Կիլիկիո Կաթողիկոսը, Հայ եկեղեցու նվիրապետն ու ներհուն գիտնականը, մեծ աշխատանք է կատարում Աղաջանյանի քաղաքական սադրանքները չեզոքացնելու համար: Սակայն, թվում է, Վատիկանի խարդավանքներին հակազդելու համար ցանկալի էր շփումը մյուս ոչ կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Եթե ցանկալի կհամարեք, կարելի կլինի կապ հաստատել առաջադիմական և խորհրդամետ եկեղեցական շրջանների հետ՝ Վատիկանի դեմ համատեղ պայքարի համար»<sup>20</sup>:

Վեհափառը ձգտում է լինել և՛ տիրահաճ, և՛, միաժամանակ, օգուտ քաղել դավանանքային պայքարում՝ դրանով ևս մի անգամ համոզվելու և հավաստիանալու համար, թե արդյո՞ք խորհրդային իշխանությունը մեկ անգամ ընդմիջտ հանդուրժել ու գոյության տեղ է տվել հայ եկեղեցուն՝ ի դեմս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Չէ՞ որ եկեղեցու օգտագործման փուլն ավարտվել է Մեծ հայրենադարձի ավարտի հետ, ուստի հարկավոր էր փնտրել բռնապետի հետ համագործակցելու նոր եզրեր:

Կարդինալ Աղաջանյանը անպատասխան չի թողնում իր հասցեին հնչած մեղադրանքներն ու զրպարտությունները և հանգամանալից պարզաբանումներ է տալիս «Թուղթ հովուական» շրջաբերականում արտահայտած իր դիրքորոշման կապակցությամբ: 1947 թ. իր գահակալության տասնամյակի կապակցությամբ կաթոլիկահայության առաջնորդը հանդես է գալիս ընդարձակ վերլուծություններով, որտեղ անդրադառնում է նաև այդ ժամանակի կարևորագույն խնդրին՝ ազգահավաքին: Կարդինալը մեկ առ մեկ պատասխանում է բոլոր քննադատություններին, բերում բազմաթիվ փաստարկներ, որպեսզի ավելի ակնհայտ ու պարզորոշ լինի իր դիրքորոշումը:

«Ներգաղթը, յիբալի, ցկէտ մեր գրութեան, բնա՛ւ նպաստ չբերաւ Հայ դատին արդար լուծումին: Մանաւանդ ամիթ եղաւ որ Արեւմտեան Պետութիւններու կողմէ ան չնկատուէր այլեւս իբր ուրոյն սեպհական դատը Հայութեան, այլ նկատուէր իբր ուրիշ ազգի մը եւ խորշելի գաղափարաբանութեան մը տարածման միջոց»<sup>21</sup>: Իրոք, ճշգրիտ է ասված:

Կարդինալը նշում է նաև, որ եթե ներգաղթի իսկական նպատակն է օտարության մեջ ապրող հայությանը ազատել այլասերումից, անհրաժեշտ է, որ այն սկսվեր Ռուսաստանում ցրված հարյուր հազարավոր հայերից, որոնք կանգնած են ձուլման վտանգի առաջ ավելի, քան Միջին Արևելքի,

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 807, թ. 1-7:

<sup>21</sup> Կարդինալ Գրիգոր - Պետրոս Աղաճանեան, նշվ. աշխ., էջ 34:

Եվրոպայի, Ամերիկայի հայությունը, որ վայելում է հյուրընկալ երկրների ազատամիտ դրություն<sup>22</sup>: Այստեղ, հիրավի, ազգայինը հակադրված է խորհրդայինի հետ:

«Մեր պարտականությունը կը համարինք յայտարարելու թե մեր Ազգը իր ստուար մեծամասնությամբ - մանաւանդ արտասահմանի մէջ - հակառակ է համայնավարական կարգերուն եւ արժանի է որ վերահաստատուին անոր հանդէպ նախկին վստահութիւնն ու համարումը: Կոչ կ'ընենք բոլոր ազնիւ հիւրընկալ ժողովուրդներուն ու անոնց Պետերուն՝ որ նկատի առնուի այս մեր յայտարարութիւնը, եւ կը վստահեցնենք որ Հայութիւնը յաւերժօրէն երախտապարտ կը մնայ եւ հաւատարիմ՝ իր բնակած երկիրներուն, և կ'ուզէ շարունակել կողք կողքի բնիկ ժողովուրդներուն հետ միասին իր աշխատանքը՝ հասարակաց բարօրութեան եւ բարգաւաճումին համար:

Գիտենք որ վերոյիշեալ մեր մատնանշումները դժպիի պիտի գան ոմանց. մենք, սակայն, պարտք համարեցանք հրապարակել զանոնք ի սեր ճշմարտութեան եւ Հայ Հոգեւորականութեան պատիւը պահելու դիտումով:

Թող ապագայ պատմութիւնը չըսէ, թէ Հայութեան մէկ ճգնաժամային պահուն, Հայ Ազգին բովանդակ Եկեղեցականութիւնը - նաեւ ան՝ որ արտասահմանի ազատ շունչը կը վայելէր - լուռ մնաց անոր ցաւերուն ի տես եւ թէ չգիտցաւ կամ չունեցաւ քաջութիւն հրապարակելու դաւերը, որոնք իր ժողովուրդին ճշմարիտ շահերուն դէմ կը լարուէին նենգօրէն»<sup>23</sup>:

Այսպիսով, Հայր Աղաջանյանը բոլոր տեսանկյուններով փորձում է հիմնավորել իր դիրքորոշման իրավացիությունը: Չէ՞ որ նա քաջատեղյակ էր խորհրդային կարգերին և լավ հասկանում էր, որ այսպիսի պայմաններում կազմակերպվող ներգաղթը չի բխում Հայ կաթողիկէ եկեղեցու շահերից:

Հատկանշական է, որ մինչև կարդինալ Աղաջանյանի հայ կաթողիկներին ուղղված կոչը, կային բազմաթիվ կաթողիկներ, որ ցանկություն էին հայտնել ներգաղթել հայրենիք: Եվ միայն կարդինալի շրջաբերականից հետո է, որ շատերը փոխում էին իրենց որոշումները: Այս առումով կարևոր տեղեկություններ ենք գտնում այդ ժամանակ Հայ կաթողիկէ եկեղեցու Սիրիայի Բարձր Ձեզիրեի և Եփրատ նահանգների պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոս Ջոհրապյանի

---

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 35:

հուշերում, որտեղ կաթոլիկ եպիսկոպոսը նշում է, որ ինքը ևս կողմ է եղել ներգաղթին և անգամ ցուցակագրվել է ներգաղթելու համար:

«Պիտի խոստովանիմ, որ սրտիս մեջ զորավոր կերպով զգացի հայրենիքի կանչը եւ ես առաջինը եղայ որ ստորագրեցի դեպի Հայաստան ներգաղթելի խնդրագիրը: Հայ Կաթողիկէ Համայնքի բոլոր անդամները, բացառությամբ միայն մէկ ընտանիքի, հետեւեցան իմ օրինակիս: Քաղղեական<sup>24</sup> ծեսին պատկանող հարիւր ընտանիք փոխեցին իրենց ինքնութեան վկայագիրները եւ անդամագրուեցան ներգաղթողներու շարքերուն:

Այս բոլորի մասին տեղեկագիր մը դրկեցի մեր Պատրիարքին: Կը խնդրէի իր օրհնութիւնը, որովհետեւ որոշած էի Հայաստան տեղափոխուիլ, հոն օգտակար ըլլալու համար մեր ժողովուրդին, որ այլեւս առանց քահանաներու մնացած էր: Որպէս մարտիրոս արիւնս թափելու հաւանականութիւնը զիս չէր վախեցներ, որովհետեւ այդ պարագային՝ արիւնս հաւատքին աւելի պիտի ծառայէր՝ քան ինքնին կեանքս»<sup>25</sup>:

Սակայն պարզ էր, որ կարդինալ Աղաջանյանի շրջաբերականից հետո եպիսկոպոս Զոհրապյանի ներգաղթելու ցանկությունը կտրուկ փոխվելու էր, ինչը բնական էր. եպիսկոպոսը պիտի հնազանդվեր իր պատրիարքին:

«Ի վերջոյ, 1946 Յուլիս 16-ին, ստացանք Հոգեւոր Տիրոջ հովուական նամակը: Հոն նկարագրուած էր Հայաստանի Սովետական Հանրապետութեան իրական վիճակը. կրօնական ազատութեան բացարձակ բացակայութիւն, յատկապէս կաթողիկէներու համար, որոնց արգիլուած էր որեւէ հաղորդակցութիւն ունենալ Հռոմի հետ: Տրամաբանական էր, հետեւաբար, Պատրիարքին եզրակացութիւնը. չէինք կրնար գաղթել երկիր մը, ուր քրիստոնէութիւնը հալածուած էր»<sup>26</sup>:

Այնուհետս եպիսկոպոսը նշում է, որ պատրիարքի կոնդակից հետո ինքը հայտնվել էր դժվարին կացության մեջ: «Ի՞նչ պատասխան պիտի տայի իմ հաւատացիալներուս եւ քաղղեացիներուն: Ի՞նչ կըրնայի ընել: Հաւաքեցի ընտանիքներուն մեծերը եւ զոջացած մեղաւորի նման ծունկի եկած՝ ներողութիւն խնդրեցի կատարած սխալիս համար: Կարծած էի որ մեր սիրելի Հայրենիքը վերջ ի վերջոյ գտած էր ըղձալի խաղաղութիւնը եւ լուսաւոր ապագայի յոյսը: Ճշմարտութիւնը ա՛յլ էր, որ մեզի հաղորդած էր

<sup>24</sup> Քաղղեացիները հին Քաղղեայի բնակչներն են, բաբելացիները, ներկայումս՝ Իրաքի արաբ քրիստոնյա բնակչները:

<sup>25</sup> Կիրեղ Նպս. Զօհրապեան, Յուշեր (ինքնակենսագրութիւն), Վենետիկ – Ս. Ղազար, 2007, էջ 397:

<sup>26</sup> Նույն տեղում:

մեր Պատրիարքը: Մեր Հայրենիքին մեջ կրօնքը եւ քրիստոնէական բարոյականութիւնը հալածուած էին: Նման խոստովանանքս յուզեց իմ հաւատացեալներին, որոնք մէկը միւսին ետեւէն վտահեցուցին զիս, որ բոլորին ալ ակնյայտ էր որ սիսալս ակամայ էր եւ միամտութեանս արդիւնքն էր: «Եթէ Դուք պիտի չէրթաք Հայաստան», աւելացուցին, «մենք ալ չենք կրնար երթալ, որովհետեւ հոն պիտի չունենանք մէկը որ մեզ հովուէ»<sup>27</sup>:

Եվ իրոք, ըստ Չոհրապյան եպիսկոպոսի, իր թեմի հավատացյալներից և ոչ մէկը չի ներգաղթում Խորհրդային Հայաստան:

Եպիսկոպոս Չոհրապյանի հուշերում հանդիպում ենք նաև շատ հետաքրքիր մի տեղեկության, ըստ որի՝ այդ համայնքի Հայ առաքելական Եկեղեցու հոգևոր առաջնորդը սկզբնական շրջանում դեմ է եղել ներգաղթին և միայն Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին կաթողիկոսի հորդորով է փոխել իր դիրքորոշումը:

«... Բարոյեան Սրբազանը<sup>28</sup> հակառակ էր հայրենադարձութեան, որովհետեւ անզվիացիները հակառակ էին սովետական ծրագրին, այն աստիճան, որ աշխատանքէ կը հեռացնէին այն հայերը՝ որոնք Սուրիայէն գաղթելու խնդրագիր ներկայացուցած էին»<sup>29</sup>:

Մեկ այլ դրվագում, կրկին անդրադառնալով այս խնդրին, եպիսկոպոսը նշում է. «Իրավիճակը աւելի լաւ չէր Առաքելական Հայերուն քով: Բարոյեան Սրբազանը անձամբ հակառակ էր գաղթին, բայց Անթիլիասի Կաթողիկոսի հրահանգին հնազանդելով՝ սկսաւ կողմ արտայայտուիլ գաղթին, յատկապէս զիւղացիները քաջալերելով»<sup>30</sup>:

Կաթողիկ եպիսկոպոսի ներգաղթի նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխությունը ևս անհետևանք ու քննադատությունից զերծ չի մնում: Պատմաբան Հ. Մելիքսեթյանը նշում է, որ իբր եպիսկոպոս Չոհրապյանը հականերգաղթյան եռանդուն գործունեություն է ծավալել Ջեզիրեի շրջանի գյուղերում, և որ նա, համոզվելով իր քարոզների անհետևանք մնալու մեջ, հեռագրով խնդրում է սիրիական կառավարությանը՝ արգելել հայերի հայրենադարձությունը,

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 398:

<sup>28</sup> Խոսքը հայ Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Սիրիայի Ջեզիրեի շրջանի առաջնորդական փոխանորդ Խորեն Բարոյանի մասին է: Հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկո Կաթողիկոս Խորեն Ա (1963-1983):

<sup>29</sup> Կիլիկեղ Եպս. Չոհրապյեան, նշվ. աշխ., էջ 397:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 398:

պատճառաբանելով, թե իբր սովետական ներկայացուցիչների գործադրած ճնշման տակ են հայ գյուղացիները ցուցակագրվել ներգաղթելու համար<sup>31</sup>:

Հարկ է նկատել, որ եղան կաթոլիկներ, որ, այդուհանդերձ, ներգաղթեցին Խորհրդային Հայաստան: Օրինակ՝ Մաղաքիա Պապուճյանը նշում է, որ Սիրիայի Քեսապի շրջանից հայրենադարձվել են 2407 հոգի՝ 1435 առաքելական, 395 ավետարանական և 557 կաթոլիկ հայեր<sup>32</sup>:

Այսպիսով, ո՞րն էր պատճառը, որ կարդինալ Աղաջանյանը դեմ էր ներգաղթին: Մի թե խորհրդային Հայաստանում տիրող կրոնական անազատ մթնոլորտն էր միայն, որ կաթոլիկ առաջնորդը նման դիրքորոշում ուներ, թե՞ կար ավելի խորքային պատճառ:

Կարելի է կարծել, որ կարդինալ Աղաջանյանի համար հիմնական ու առանցքային պատճառը Հայ կաթողիկե եկեղեցու շահն էր, որին ներգաղթը ընդհանրապես հակացուցված էր: Հասկանալի է, որ կաթոլիկահայության զանգվածային ներգաղթի պարագայում կթուլանային Հայ կաթողիկե եկեղեցու դիրքերը, մանավանդ, որ Խորհրդային Հայաստանում կաթոլիկ համայնքի հետագա գոյությունը անհնար էր պատկերացնել խորհրդային հակակրոնական ու հակապապական թշնամանքի պայմաններում: Ուստի, որպեսզի Հայ կաթողիկե համայնքը չթուլանար և չկորցնեք իր հոգևոր կրոնական ողջ կառուցվածքը, Հայր Աղաջանյանը ծավալում է հականերգաղթյան այսպիսի գործունեություն:

Այնուամենայնիվ, երբ այսօր տարիների հեռվից փորձում ենք վերլուծել ներգաղթի վերաբերյալ Հայ կաթողիկե եկեղեցու դիրքորոշումը, պետք է ասել, որ այն ամբողջովին արդարացված տեսակետ էր, ուստի շատ իրատեսական ու փաստարկված էին կարդինալ Աղաջանյանի բոլոր կանխատեսումները, հատկապես, երբ այդ ներգաղթը դիտարկվում է Հայ կաթողիկե եկեղեցու շահերի տեսանկյունից:

---

<sup>31</sup> Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, նշվ. աշխ., էջ 349:

<sup>32</sup> Տե՛ս **Յ. Չոլաքեան**, Քեսապ, հատոր Գ, Հալեպ, 2004, էջ 331:

Հայկ Ենգիբարյան  
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԹ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ  
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ  
ՀԱՐՑՈՒՄ  
Ամփոփում

Ո՞րն էր պատճառը, որ կարդինալ Աղաջանյանը դեմ էր ներգաղթին: Մի՞թե խորհրդային Հայաստանում տիրող կրոնական անազատ մթնոլորտն էր միայն, որ կաթոլիկ առաջնորդը նման դիրքորոշում ունեւր, թե՞ կար ավելի խորքային պատճառ:

Կարելի է կարծել, որ կարդինալ Աղաջանյանի համար հիմնական ու առանցքային պատճառը Հայ կաթողիկե եկեղեցու շահն էր, որին ներգաղթը ընդհանրապէս հակացուցված էր: Հասկանալի է, որ կաթոլիկահայության զանգվածային ներգաղթի պարագայում կթուլանային Հայ կաթողիկե եկեղեցու դիրքերը, մանավանդ, որ Խորհրդային Հայաստանում կաթոլիկ համայնքի հետագա գոյությունը անհնար էր պատկերացնել խորհրդային հակակրոնական ու հակապապական թշնամանքի պայմաններում: Ուստի, որպէսզի Հայ կաթողիկե համայնքը չթուլանար և չկորցնէր իր հոգևոր կրոնական ողջ կառուցվածքը, Հայր Աղաջանյանը ծավալում է հականերգաղթյան այսպիսի գործունէություն:

**HAYK YENGIBARYAN**

**THE IDEOLOGICAL OPPOSITION OF PATRIARCH OF THE  
ARMENIAN CATHOLIC CHURCH, CARDINAL AGHAJANYAN TO THE GREAT  
REPATRIATION**

Throughout the entire process of the Great Repatriation, the Armenian Apostolic Church, with its Catholic and Hierarchical Sees and Dioceses supported and contributed to the organizing of repatriation, but the Armenian Catholic Church expressed a totally different position on and attitude towards immigration. Right from the beginning, the leader of the church of all Catholic Armenians, Catholicos-Patriarch Cardinal Aghajanyan urges all Catholic Armenians not to immigrate to Soviet Armenia, mentioning that there is no religious freedom there.

Naturally, Cardinal Aghajanyan's position was going to make the supporters of immigration feel very disappointed, be it supporters of the Armenian Apostolic Church, or other pro-Soviet forces. In itself it is clear that there were

going to be different types of defamation and different allegations against Patriarch Aghajanyan following the encyclic of the leader of Catholic Armenians. There were different critiques, as well as several articles and analyses.

**АЙК ЕНГИБАРЯН**

**ИДЕОЛОГИЧЕСКАЯ ОППОЗИЦИЯ КАРДИНАЛА АГАДЖАНЯНА  
К ВОПРОСУ РЕПАТРИАЦИИ АРМЯН ДИАСПОРЫ**

В процессе осуществления Великой репатриации армян диаспоры, когда Армянская апостольская церковь своими патриршими и иерархическими престолами, а также епархическими структурами содействовала организации репатриации армян, совершенно иную позицию и отношение проявляла Армянская католическая церковь к иммиграции. Глава всей Армянской католической церкви, католикос-патриарх, кардинал Агаджанян, с самого начала призывал всех армян-католиков не иммигрировать в Советскую Армению, с указанием отсутствия там религиозной свободы.

Само по себе понятно, что призывы кардинала Агаджаняна должна была вызвать глубокое негодование сторонников иммиграции, будь то Армянская апостольская церковь или просоветские силы: обвинения и клевета в адрес главы армян-католиков, критические отзывы и выступления о нем.

ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱԿՈՔՅԱՆ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՔԱՂԱՔԱԿԱՆ PR ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ  
ՀԵՌՈՒՍՏԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** քաղաքական Պր, նախընտրական քարոզարշավ, քաղաքական տեխնոլոգիաներ, հետընտրական զարգացումներ, ընտրական գործընթաց, թեկնածուներ, համակիրներ, հեռուստաընկերությունների լուսաբանում, քաղաքական բանավեճ:

**Ключевые слова и выражения:** политически ПР, предвыборная кампания, политические технологии, поствыборные события, процесс выборов, кандидаты, соратники (единомышленники), освещение СМИ, политические дебаты Аннотация.

Political PR, election campaign, political technologies, post-election development, electoral process, candidates, supporters, television coverage, political debate

Հանրության հետ փոխադարձ կապեր հաստատելը, անհրաժեշտ փոխըմբռնում ապահովելը և քաղաքական ծրագրերի շուրջ համագործակցությունը հիմնականում իմիտացիոն բնույթ են կրում: Այստեղ մեծ դեր են խաղում ՋԼՄ-ները, մասնավորապես համացանցն ու հեռուստատեսությունը: «Հեռուստատեսությունը ոչ միայն մեծ լսարան է ապահովում տեղեկատվական հոսքերի համար, այլև հոգեբանական ներգործության տեսանկյունից դեռևս ամենարդյունավետ լրատվամիջոցն է»<sup>1</sup>: Դիտարկենք ՀՀ նախագահի 2013թ-ի ընտրություններում քաղաքական գործիչների կիրառած քաղաքական PR տեխնոլոգիաները, մասնավորապես նախընտրական քարոզարշավի ժամանակ և հեռուստաընկերությունների լուսաբանման առանձնահատկությունները: Պետք է փաստել, որ ՀՀ նախագահի 2013թ-ի ընտրություններն աչքի ընկան մի շարք առանձնահատկություններով: Ընդհանուր պատկերը կարող ենք ստանալ թեկնածուների քարոզարշավի համեմատական վերլուծությամբ: Գործող նախագահին անցկացրեց դասական քարոզարշավ: Քարոզարշավից առաջ և հետո իրականացված սոցիոլոգիական հետազոտությունները գործող

<sup>1</sup> Королько В.Г. Основы публик пилейшнз. М., «Рефл-бук», 2000. практика. СПб., 1998, стр 185.

նախագահ Սերժ Մարգարյանին բարձր տոկոսներով հաղթանակ էին կանխատեսում, ինչն էլ կանխորոշեց նախագահի թեկնածուի նախընտրական շտաբի զուսպ մարտավարությունը: Նրա համար հիմնական մրցակիցներ համարվում էին Բաֆֆի Հովհաննիսյանը, Հրանտ Բագրատյանը և Պարույր Հայրիկյանը: Հայրիկյանը վարում էր պասիվ քարոզարշավ, որի կեսերին ենթարկվեց մահափոքրձի, այդ առիթով նրա վրա սևեռվեց հանրության ուշադրությունը, սակայն վարկանիշային պտուղներ նախագահի թեկնածուն դրանից առանձնապես չքաղեց: Հրանտ Բագրատյանն անցկացրեց ակտիվ քարոզարշավ, մարզային և մայրաքաղաքային հանդիպումներում նա իր քարոզարշավում շեշտը դնում էր տնտեսական բաղադրիչի վրա, բերում բազմաթիվ վիճակագրական տվյալներ, իշխանություններին և գործող կառավարությանը քննադատելով փորձում համոզիչ դարձնել իր տնտեսական քաղաքականության նպաստավոր լինելը բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում: Ի տարբերություն նրա, և մյուս բոլորի, Բաֆֆի Հովհաննիսյանը հատկապես շոսյլ էր իր խոստումներում բացառապես երկու ցուցանիշի վերաբերյալ. առանց տնտեսական հիմնավորումների խոստանում էր 250 միլիարդ դրամով ավելացնել բյուջեն ստվերի հաշվին, ինչպես նաև կրկնապատկել թոշակներն ու աշխատավարձերը: Միաժամանակ Բաֆֆի Հովհաննիսյանը, իր հանդիպումների ընթացքում, շատ ավելի շոսյլ էր մարդկանց հետ անմիջական շփումների հարցում: Մարդկանց ձեռքով բարևելը նոր տեխնոլոգիա չէր, նա դա կիրառել էր նաև խորհրդարանական ընտրարշավի ընթացքում, սակայն այս անգամ նա գերազանցեց ինքն իրեն՝ անակնկալ այցեր ու ձեռքսեղմումով որպիսություն հարցնելով վարսավիրանոցներում, հասարակական այլ օբյեկտներում: Ընտրարշավի արդյունավետությունից դատելով, ինչը մատնանշել են գրեթե բոլոր վերլուծաբանները, նրա բարձր արդյունքի վրա ազդել է ոչ միայն այդ մարտավարությունը, այլև իշխանություններին դեմ քվեարկողների ձայները ստանալու նրա կարողությունը: Վարդան Սեդրակյանը և Արման Մելիքյանը վարել են պասիվ քարոզարշավ, նրանցից առաջինն ընդհանրապես հանրության անձանոթ դեմք էր, և նրանք երկուսն էլ հավաքել են շատ քիչ թվով ձայներ: Այս ընտրությունների ամենանշանակալի տեխնոլոգիան թեկնածու Անդրիաս Ղուկասյանի ծայրահեղ միջոցի՝ հացադուլի դիմելն էր: Նա ամբողջ քարոզարշավի ընթացքում չդադարեցրեց հացադուլը իշխանության թեկնածուի մասնակցությունը բացառելու պահանջով: Եվ չնայած նա ոչնչի չհասավ, այդուհանդերձ, մեր ընտրական պատմության մեջ առաջին անգամ կիրառեց նման բացառիկ քայլ:

«Հանրային կապեր» հասկացությունը ձևավորման առաջին փուլում առնչվում էր քաղաքական ոլորտի հետ, քանի որ հասարակության լայն զանգվածների ուշադրությունը հրավիրելու, համոզելու գլխավոր պահանջարկ ունեին քաղաքական ինստիտուտները»<sup>2</sup>: Արդեն պարզ է, որ առանց ֆինանսական ռեսուրսների լայն քարոզարշավ կազմակերպել անհնարին է, և հույսը դնել մամուլի ակումբների հրավերների վրա, որտեղ, լրագրողների հարցերին պատասխանելով հնարավոր է ընտրագանգվածի համակրանքը շահել՝ միամտություն է, ինչը շարունակում են անել որոշ կուսակցություններ և դրանց առաջնորդներ: Մյուս կողմից զգալի ֆինանսական ռեսուրսները, դատելով աշխատառճից և արդյունքից, մեղմ սասած, ոչ միշտ են արդյունավետ ծախսվում, ինչն օրինակ շատ ավելի զգալի էր նախորդ նախագահական ընտրությունների ընթացքում, երբ միայն մեկ խանութի ցուցափեղկին կարելի էր տեսնել մեկ թեկնածուի մի քանի տասնյակ դիմանկար, կամ, ասենք, ընտրակաշառքի առկայությունը: Այս ընտրությունները, դատելով դրանց ընթացքից, շատ ավելի զուսպ էին, ի տարբերություն նախորդների հիմնականում զուրկ էին միմյանց հասցեին կոշտ գնահատականներից, «ցեխարձակումներից» և այլն: Կազմակերպվածությամբ աչքի ընկան ՀՀԿ-ն ու Ժառանգությունը, ինչը նկատելի էր ոչ միայն վերլուծաբանների կողմից, այլև քաղաքացիների:

Հեռուստատեսությունը, հատկապես Հանրայինի Առաջին լրատվականը ընտրությունները լուսաբանել է անաչառ և մեծ տեղ է հատկացրել բոլոր թեկնածուներին: Առաջին անգամ լուսաբանման ժամանակի ընդհանուր ծավալով իշխող թեկնածուի վերաբերյալ նյութերի ժամանակային հանրագումարը զիջել է ընդդիմության մի քանի թեկնածուների համանման ցուցանիշին: Բացառվել է թեկնածուներից որևէ մեկի հասցեին քննադատական, հեզնական կամ «սև PR»-ի որևէ դրսևորում: «Երկիր Մեդիա» հեռուստարձկերության առանձնահատկությունները դիտարկելիս, նկատում ենք, որ ԵԱՀԿ դիտորդական խմբի զեկույցներում հեռուստարձկերությունը լուսաբանել է բոլոր թեկնածուներին հավասարաչափ: Նկատում ենք, որ միայն «Երկիր Մեդիա» հեռուստարձկերությունը փորձել է հեռուստաբանավեճեր իրականացնել ինչպես համակիրների, այնպես էլ վստահված անձանց մեջ և հիմնական շեշտը նախընտրական ծրագրի վրա է դրել: Անցկացրած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ եթե մյուս հեռուստարձկերություններում երկու-երեք րոպեանոց լուսաբանում էր,

<sup>2</sup> Блэк С. Паблик пилейшнз: Что это такое?, М., 1989, стр 26.

հեռուստաընկերությունն ավելի աչքի է ընկել իր քննադատական սուր տեսանկյունով: Բավական հանգամանալի է ներկայացրել Պարույր Հայրիկյանի դեմ կատարված մահափորձը, Բաֆֆի Հովհաննիսյանի հանդիպումները՝ հեռուստադիտողին ընտրության լայն հնարավորություն տալով: «Մրցակցության սկզբունքները, «խաղի կանոնները» ու տրամաբանությունը գրեթե նույնն են. մրցակցության յուրաքանչյուր կողմի համար կարող է գոյություն ունենալ մեկ գերնպատակ՝ ամեն գնով հաղթել, զբաղեցնել ազդեցիկ դիրքեր,: Հենց այս տիրույթում հայտնվում է «ինչպես հաղթել» գերխնդիրը»<sup>3</sup>:

«ՀՀ» և «Կենտրոն» հեռուստաընկերությունները ևս լուսաբանել են ընտրություններն առանց կողմնակալության, առանց խտրական վերաբերմունքի՝ հետևելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը:

«Հասարակական կարծիքը շատ լուրջ, կարևոր ու ազդեցիկ լծակ է բոլոր ժամանակներում ու բոլոր երկրներում: Ստալինն անգամ գիտակցում էր PR մասնագետների անհրաժեշտությունը եւ իր կողքին 4-5 նման խորհրդատու էր պահում, որ իրեն ուղղություն ցույց տան»<sup>4</sup>: «Համեմատելով ՀՀ նախագահների PR արշավները՝ մասնագետներից շատերը նշում են, որ թեկնածուները ավելի շատ դիվանագետ էին, քան լիդեր: Մինչդեռ մեր հասարակությանը պետք են լիդերներ: Օրինակ, Պուտինը, կառավարության քննարկումներից մեկի ժամանակ, ելույթի կեսից միկրոֆոնը կտկտացրեց եւ խիստ նկատողություն արեց երկու նախարարների, որոնք իր խոսելու ժամանակ զրուցում էին: Նա կտրուկ ասաց՝ երբ ե՛ս եմ խոսում, պետք է լսել, եթե ոչ՝ դուրս եկեք»<sup>5</sup>:

Բաֆֆի Հովհաննիսյանն իր քարոզարշավի ժամանակ արտաքին քաղաքականության մասով նշում էր, որ Թուրքիայի հետ հարաբերությունները կսկսվեն կամ առանց նախապայմանների, կամ նախապայմաններ կառաջադրի Հայաստանը: Ռուսաստանի հետ կլինեն հավասար գործընկերային հարաբերություններ: Ինչ վերաբերում է ներքին քաղաքականությանը՝ Բ. Հովհաննիսյանը խոստացավ ավելացնել կենսաթոշակներն ու ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներին հատկացվող գումարները:

<sup>3</sup> Մելքոնյան Ն., Քաղաքական PR և իմիջմեյքինգ, Երևան, 2012, էջ 18:

<sup>4</sup> Բարսեղյան Գ., Հարությունյան Գ., Քաղաքական PR. նրա դրսևորման հայաստանյան առանձնահատկությունները, Երևան, «Գիտություն» հրատ., 2009, էջ 20:

<sup>5</sup> <http://www.aravot.am/2010/06/02/183589/>

Այս գործում նա կոչ էր անում միավորվել ու դառնալ պայքարակից: «Դեպի ապահով Հայաստան»: Մա ոչ միայն թեկնածու Մերժ Սարգսյանի նախընտրական կարգախոսն էր, այլ նաև այն երգի վերնագիրը, որի տեսահոլովակի շնորհադետով էլ տրվեց նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը: Հետաքրքրական էր, որ երգի հեղինակը ոչ երգիչ էր, ոչ էլ կոմպոզիտոր, այլ նախագահի աշխատակազմի անդամ: Շնորհադետը տեղի ունեցավ կառավարության նիստերի դահլիճում, որտեղ 24 տարի առաջ հռչակվեց Հայաստանի անկախությունը: Այնտեղ հավաքվածները հիմնականում Անկախության սերնդի ներկայացուցիչներ էին, որ կրում էին վզկապներ ու ձեռքին ունեին դրոշներ՝ «Դեպի ապահով Հայաստան» կարգախոսով: «Դեպի ապահով Հայաստան» վերնագրով երգն ուղեկցեց նախագահի թեկնածու Մերժ Սարգսյանին նախընտրական պայքարի ամբողջ ընթացքում: Խոսքն ու երաժշտությունը՝ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ Ալբերտ Աբգարյանինն էր, մարդ, որը պայքարելու եւ արարելու իր վճռականությամբ ու կամքով օրինակելի է շատերի համար: Ալբերտը գրեթե չի տեսնում, սակայն երեք բուհ է ավարտել եւ աշխատել սկզբում Ազգային ժողովում, այժմ էլ՝ նախագահի վերահսկողական ծառայությունում՝ որպես իրավաբան: Նրա հեղինակած երգը համարվեց լավագույնը եւ ընտրվեց որպես նախագահի թեկնածու Մերժ Սարգսյանի քարոզարշավի հիմնական երգ: Տեսահոլովակի շնորհանդետով և «մեր պայքարը որեւէ մեկի դեմ չէ» խոսքերով մեկնարկեց նախագահի թեկնածու Մերժ Սարգսյանի նախընտրական քարոզչությունը: Մա տեխնոլոգիա էր: Ինչպես և Նախագահի տիկնոջ մասնակցությամբ նկարահանված ֆիլմը, որը հետաքրքիր մոտեցում էր:

Ս. Սարգսյանն իր ծրագրի հիմնական արժանիք համարում էր բազմակողմանիությունը, որտեղ տրվում են համալիր լուծումներ:

Հրանտ Բագրատյանն աչքի ընկավ իր մասնագիտական բարձր որակներով: Քարոզարշավի հենց սկզբից թեկնածուն խոսեց նախընտրական ծրագրի տնտեսական բաղադրիչների մասին: Հրանտ Բագրատյանը կարևորում էր իր տնտեսական ծրագրի առանցքային դրույթը՝ գյուղատնտեսական կոոպերացիաների ստեղծումը: Նա առաջարկեց, որ յուրաքանչյուր մարզում ստեղծվի առնվազն մեկ մեծածախ գյուղատնտեսական շուկա, որպեսզի ոչ միայն ապակենտրոնացվի արտադրությունը, այլ նաև ապահովվի տարածաշրջանների համաչափ զարգացումը:

Վարդան Մեղրակյանը քարոզարշավի սկզբից հայտարարեց, որ չի շտապում ներկայացնել իր նախընտրական ծրագրերը: Նա քարոզարշավին կմիանա միայն տասն օրից, որպեսզի, իր խոսքով, այդ

ընթացքում մյուս թեկնածուները թափ հավաքեն: Էպոսագետի կարգախոսն էր՝ «Վերևում Աստված կա»: Քարոզարշավի սկզբից նա հայտնեց, որ հեռու է մնալու մեծ վահանակներով գովազդային պաստառներից, հանրահավաքներից ու հանդիպումներից: Թեկնածուն ևս մեկ անգամ վերահաստատեց որդեգրած մարտավարությունը քարոզչությունն անցկացնել հեռուստատեսային հարցազրույցների և ասուլիսների միջոցով, որոնք կտեղադրվեն նաև համացանցում:

Հացադուլը քաղաքական պայքարի միջոց էր՝ նշում էին շատ քաղաքագետներ ու վերլուծաբաններ, շատերը քննադատում էին նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանին, նախագահի մյուս թեկնածուները հորդորում էին հացադուլից հրաժարվել՝ պարբերաբար այցելելով նրան. սա PR տեխնոլոգիա էր:

Քաղաքական պրակտիկայում հացադուլի տարբերակն իր մաշկի վրա զգացած Բաֆֆի Հովհաննիսյանը փորձեց նրան համոզել և ոչ միայն Բաֆֆին, որ նա հրաժարվի այդ կերպ պայքարելու ձևից, բայց նախագահի թեկնածուն բոլորից համառ գտնվեց: Նա հայտարարեց, որ մտադիր չէ հրաժարվել իր որոշումից և շարունակելու է հացադուլն այնքան ժամանակ, քանի դեռ չի բավարարվել իշխող կուսակցության թեկնածուի թեկնածությունն անվավեր ճանաչելու՝ իր պահանջը: Հացադուլն արդյունք չտվեց:

Պարույր Հայրիկյանի կարգախոսն էր՝ «Անկախության առաջնորդը՝ անկախ Հայաստանի նախագահ»: Նախագահի թեկնածուի քարոզարշավի հիմնարար դրույթը քաղաքացու ինքնորոշման իրավունքի իրագործումն էր: Հայրիկյանը պատրաստակամություն հայտնեց այցելել բոլոր մարզեր: Պարույր Հայրիկյանը նոր, հետաքրքիր կարգավիճակ առաջարկեց նրանց, ովքեր կցանկանան աջակցել իրեն քարոզարշավի ընթացքում: «Նույնիսկ 5 թռուցիկ տարածողը կկոչվի Հայրիկյանի գործընկեր», - նշում էր նա: Հայրիկյանի գործընկերները քարոզարշավի երկրորդ օրն արդեն 20 հազար թռուցիկ, հիշեցում, կարգախոս ու խտասկավառակ հասցրեցին բաժանել: Հայրիկյանի պաստառներին սկզբում պատկերված էր Արարատի նկարը: Բայց այն գերադասեցին փոխել նախագահականի նկարով: Իհարկե սա ինքնանպատակ չէր: «Անկախության առաջնորդը անկախ Հայաստանի նախագահ», - սա էր պաստառի գրառումը:

Քարոզարշավի ընթացքը կասեցնելու մասին անսպասելի որոշում կայացրեց նախագահի թեկնածու Արման Մելիքյանը: Նա հենց սկզբից հայտարարեց, որ արդար ընտրություններ անցկացնելու նախադրյալներ չկան: Արման Մելիքյանը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրեց դիմում, որում նա պահանջում էր հրապարակել

Հայաստանից հեռացած ու վերջին տարիներին Հայաստանի քաղաքացիություն ստացած մարդկանց ցուցակները: ԿԸՀ-ն մերժել էր Արման Մելիքյանի դիմումը, ինչն էլ նախագահի թեկնածուին դրդեց գնալ ընտրությունների իրավաչափությունը ստուգելու քայլին:

«Մեղիայի մասնագետ, գերմանացի Ռայներ Պացլաֆը գրում է. «Երբ մտածում ես, թե որքան հզոր է ժամանակակից ժողովրդավարությունը՝ մաս-մեղիայի ազդեցության հնարավորություններն օգտագործելու դեպքում, և որքան մեծ դեր ունի հեռուստատեսությունն այդ հարցում, հարց է առաջանում. մենք չե՞նք ապրում արդյոք սուտ ժողովրդավարության ժամանակաշրջանում, որն աջակցում է միայն հանրության ինքնուրույնության պատրանքի ստեղծմանը և որն իրականում առաջացնում է իրական ինքնուրույնության կորուստ: Ժողովրդավարության գոյությունը կախված է նրանից, թե կկարողանանք մենք ազատվել հեռուստատեսության բացահայտ կախարդանքից՝ այն օգտագործելով գիտակցորեն»<sup>6</sup>:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «հանրային կապերը» գործնականում միախառնված է «քաղաքական հաղորդակցություն» հասկացությանը: Ամփոփելով կարելի է նշել, որ քաղաքական տեխնոլոգիաները բազմաթիվ են և բազմազան: Քանի որ մենք ապրում ենք ինֆորմացիոն դինամիկ հոսքի մեջ, տեխնոլոգիաներն, իրենց հերթին, նույնպես գտնվում են անընդհատ փոփոխման մեջ, և եթե դրանք արդյունավետ էին մեկ տարի առաջ, ապա այսօր կարող են դադարել այդպիսին լինել: Քաղաքական PR գործունեությունը ստեղծագործական գործընթաց է: Եվ ամեն անգամ կոնկրետ տեխնոլոգիական շղթայի նախագծումը պահանջում է յուրահատուկ, ստեղծագործ մոտեցում: 2013թ-ի ընտրություններում նախագահի թեկնածուներն, ութն էլ մեղիածածկույթի հնարավորություն ստացան, հավասարապես գտնվելով հանրային ուշադրության կենտրոնում: Կան դեպքեր այլ երկրներում, երբ թեկնածուները շատ են, բայց առաջին փուլում երկուսն են բանավիճում: Ամենացայտուն օրինակն ԱՄՆ-ն է, բայց այնտեղ փաստացի ավանդական երկկուսակցական քաղաքական համակարգ է, ու անկախ թեկնածուների քանակից՝ ակնհայտ է, որ հիմնական պայքարը գնում է դեմոկրատների և հանրապետականների միջև: Ցանկալի համակարգ, որին ձգտում են նաև Հայաստանի քաղաքական կուսակցությունները: Ցավոք, մինչև հիմա անցկացված ընտրությունների ժամանակ հեռուստատեսային PR-ը՝ որպես

<sup>6</sup> [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4646](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646)

հասարակական կարծիք ձևավորող և ընտրազանգվածի քաղաքական վարքագիծը կառավարող գործիք բավականաչափ արդյունավետ չի օգտագործվել: Լիարժեքորեն չի կիրառվել հեռուստատեսային բանավեճի ձևաչափը, ինչը խոսում է քաղաքական գործիչների կադապարված մտածելակերպի մասին, բացակայել է քաղաքական ուժերի և ոչ թե անձերի հետ մրցակցելու մշակույթը, ինչը վկայում է, որ ժողովրդավարական գործընթացները դեռ գտնվում են կայացման, ինստիտուցիոնալացման փուլում: Այս պայմաններում հեռուստաընկերությունները շարունակում էին տրամադրել բնեռացված մեկնաբանություններով տեղեկատվություն: Առաջացած անվստահության ֆոնին հասարակության համար ոչ համոզիչ էին հասարակական կազմակերպությունների, արվեստի, գիտության գործիչների հայտարարություններն ու կոչերը: Պետք է փաստել, որ հեռուստաընկերությունները զերծ են մնացել «սև PR»-ի դրսևորումներից, եթերում չեն հնչել բռնության կոչեր: Հետընտրական զարգացումները, նախագահի արդեն նախկին թեկնածուների կողմից կազմակերպված ասուլիսներն ու միջոցառումները եթերում լուսաբանվել են:

#### Օգտագործված գրականություն

1. Բարսեղյան Գ., Հարությունյան Գ., Քաղաքական PR. նրա դրսևորման հայաստանյան առանձնահատկությունները, Երևան, «Գիտություն» հրատ., 2009.
2. Մելքոնյան Ն., Քաղաքական PR և իմիջմեյքինգ, Երևան, 2012.
3. Королько В.Г. Основы публик пилейшнз. М., «Рефл-бук», 2000. практика. СПб., 1998.
4. Блэк С. Паблик пилейшнз: Что это такое?, М., 1989.
5. <http://www.aravot.am/2010/06/02/183589/>
6. <http://www.mamul.am/am/press>
7. [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4646](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646)

#### Ամփոփում

Փորձել ենք համակարգել հայաստանյան քաղաքական իրականության մեջ կիրառվող կառավարման տեխնոլոգիաները և վեր հանել տվյալ ոլորտում առկա զարգացման միտումներն ու գործող ավանդույթները: Ավելի պարզ և առարկայական ձևով ենք ներկայացրել

«Քաղաքական PR» գիտակարգի բարդ հասկացությունները, մեթոդներն ու տեխնոլոգիաները: Առաջադրված խնդիրը հասկանալու համար ուսումնասիրել ենք Հայաստանի չորս հեռուստաընկերությունների (Հ1, Հ2, Երկիր Մեդիա, Կենտրոն) եթերում առկա դրսևորումներն ու վեր հանել առանձնահատկություններն ու մատնանշել խնդիրները:

Աշխատանքի հիմքում Հայաստանում անցկացված 2013թ-ի նախագահի ընտրություններն են: Անդրադարձել թեկնածուներից յուրաքանչյուրի կողմից կիրառված քաղաքական տեխնոլոգիաներին, կարգախոսների ընտրությանը, քաղաքական գործիչների իմիջին: Անդրադարձել ենք քաղաքական PR գործիքներին, ընտրական գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու անհնարինության պայմաններում նախընտրական շրջանի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի փոփոխության դինամիկային, նախընտրական քարոզարշավի կազմակերպման առանձնահատկություններին և ձևավորման հիմնական օրինաչափություններին, ինչպես նաև՝ թեկնածուների նախընտրական ծրագրերին, կարգախոսներին, հեռուստատեսության դերին:

#### Резюме

В основе работы президентские выборы, прошедшие в Армении в 2013 году. Мы систематизировали технологии, которые применяются в управлении в политических реалиях Армении, выявили тенденции развития и существующие традиции в данной отрасли. Для того, чтобы понять вышеуказанный вопрос, мы изучили освещение политических событий в эфире четырех армянских телеканалов (Первый канал Армении, Второй канал Армении, Еркир Медия, Кентрон), выявили особенности и указали на проблемы. Мы изучили политические технологии, которые использовали кандидаты, изучили выбор слоганов, имидж политических деятелей, динамику изменения социально-психологической атмосферы во время предвыборного периода в условиях отсутствия возможности получения объективной информации о процессе выборов, а также организационные особенности предвыборной кампании и основные закономерности ее формирования.

#### Summary

We tried to coordinate the management technologies applied in Armenia political life and identify the development trends and viable traditions of the given

sector. We have presented the complex concepts, methods and technologies of the science branch entitled “The Political PR” in a clearer and substantial way. In order to fully understand the raised issues, we have made a thorough research of all the programs produced by four TV companies (H1, H2, Yerkir Media, Kentron) of Armenia and identified the peculiar features/issues. Our main focus was the presidential elections of the Republic of Armenia held in 2013, highlighting the political technologies applied by each of the candidates, the selection of slogans, public image, political PR tools, the provision of unbiased information about the political processes in unbearable conditions. We have touched upon such topics as the change dynamics of social-psychological environment in pre-selection period, the features and principles of the organization and development of the presidential campaign, as well as the pre-selection agenda and slogans of the candidates and the TV companies’ role in presentation of the above mentioned.

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ Հականշությունը գրաբարի բայական կայուն կապակցություններում	3
ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բարդ բառերի ածական // գոյական տարարժեքությունը գրաբարում	13
ԼԻԼԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ Գեղամ Սարյանի պոեմների ու բալլադների ստեղծագործական մշակումների լեզվաոճական քննություն	22
ՆԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ Լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման սկզբունքների հարցը	31
ՍԱԹԵՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Փոխառությունները Արիգ Ավագյանի արձակում	46
ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐՈՅԱՆ Որոշիչ շարադասությունը արևմտահայերենում	53
ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում	64
ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ Օտարաբանությունները և փոխառությունները Ռուբեն Սևակի ստեղծագործություններում	77
ԷՂԻՏԱ ԱՍՍՏՐՅԱՆ Գնահատողական վերաբերմունքի դրսևորման միջոցները	86
<b>ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b>	
ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ Վազգեն Սարգսյանի «Խաղը» ժողովածուն	94
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ Պերձ Զեյթունցյանի դրաման գրական զուգահեռներում	99
ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ Արցախը Բագրատ Ուլուբաբյանի ստեղծագործության մեջ	115
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը (տիպաբանական վերլուծության փորձ)	127

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ Նեոռոմանտիզմի ըմբռնումները հայ գրականագիտության մեջ	138
ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ «Անի» ամսագրի հիմնադրման և գրական քաղաքականության կազմակերպման յուրահատկությունները	149
ՄԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ Ուժեղ հասարակության խնդիրը Ռ. Հովսեփյանի «Ծիրանի ծառերի տակ» վեպում	160
ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ Մարդու բարքագրական նկարագրի փորձը Հակոբ Օշականի պատմվածքներում	165
ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Հնի և նորի պայքարը կարոտի գրական հանգույցներում (Համաստեղ և Վազգեն Շուշանյան)	172
ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ Զորի Բալայանի «Դժոխք և դրախտ»-ը՝ որպես Արցախյան գոյամարտի տարեգրություն	178
ԱՆՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի ստեղծագործական գործընթացը	189
ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ Աշոտ Շալբոնը հայ առաջին ֆանտաստ գրող	196
ԼՈՒԻԶԱ ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Յու. Լերմոնտովի պոեզիան խորհրդահայ բանաստեղծների թարգմանությամբ (Վ. Դավթյան, Գ. Էմին, Պ. Միքայելյան)	204
ՈՒԼՅԱՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ Հրանտ Մաթևոսյան-Վասիլի Շուկշին գրական առնչությունները	218
ԱԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հայ հեղափոխության միաստիկան. Միամանթո	225
ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ Մկրտիչ Պեշիկթաշյանի դրամատուրգիան	237
<b>ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>	
ՍՈՖԻ ԹՈՐԳՈՍՅԱՆ, ՌՈՒԶԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ Անուղղակի խնդիրների ուսուցումն ավագ դպրոցում տեխնոլոգիական մոտեցմամբ	244

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

<p><b>ՌՈՒԲԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b> Սովորողների տրամաբանական մտածողության զարգացումը միջին դպրոցում դերբայական դարձվածն ուսուցանելիս</p>	<b>259</b>
<p><b>ՎԱՐԴԻԹԵՐ ՄԻՄՈՆՅԱՆ</b> Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման առանձնահատկությունները տարրական դպրոցի մայրենիի դասընթացում</p>	<b>278</b>
<p><b>ՄՈՒՇԵՂ ՄԱՐԳՍՅԱՆ</b> Կոմպոզիցիա-հորինվածք, գեղանկարչական լեզվի կենսունակ եզրույթներ</p>	<b>285</b>
<p><b>ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ</b> «Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարյան Հայաստանում ըստ վիմագիր ու մատենագիր աղբյուրների</p>	<b>294</b>
<p><b>ԱՐՄԵՆՈՒԶԻ ԽԱԼԱԹՅԱՆ</b> Ածականական, թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումը</p>	<b>309</b>
<p><b>ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ</b> Հայ կաթողիկե եկեղեցու պատր0-իարք կարդինալ Աղաջանյանի գաղափարաբանական հակադրությունը Մեծ հայրենադարձի հարցում</p>	<b>319</b>
<p><b>ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ</b> Քաղաքական PR տեխնոլոգիաների կիրառումը հայաստանյան հեռուստարևկերություններում</p>	<b>336</b>